Գիրքը լուսապատճենվել և համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «Գրքամոլ»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.

รสพิมพ์ทิพย์

จากสกลนคร

รสมธุรส

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ՍԱՐԱՍԱՐԱՏՍ



ԵՐԵՎԱՆ
«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» 1989

ԳՄԴ 84Հ7
Ու380

Ուլուբաբյան Բ. Ա.
Ու 380 Սարդարապատ։ Վեպ.— Եր.։ Սովետ. գրող, 1988, 560 էջ

Փավստավավերական հարուստ հենքի վրա գրող-պատմաբանը վեպում պատկերում է այն համազգային հերոսական պայքարը, որ 1918 թ. մայիսին մղեց հայ ժողովուրդը իր համար այնքան բախտորոշ Սարդարապատի ճակատամարտում։

Վեպում լայնորեն արտացոլված են Ղարաբաղյան կամ Մահապարտների գնդի մարտական գործողությունները։

Գիրքը հրատարակվում է Սարդարապատի ճակատամարտի 70-ամյակի առթիվ։

Ու $\frac{4702080200\ (118)}{705\ (01)\ 88}$ 88 «Տ»
ISBN 5—550—00377—5

ԳՄԴ 84Հ7
Ար 2

© «Խորհրդային գրող»
հրատարակչություն, 1989

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մարդկային պատմության մեջ լինում են պահեր, ճակատագրակա՛ն պահեր, երբ իրար են գալիս պատմական փորձն ու անհնարադեպը, ժողովրդական-մարդկային իմաստությունն ու գերմարդկային խիզախումը, և անօրինակ այս կուտակումներով ստեղծված ահռելի լարումից, ինչպես խավարի մեջ պայթած կայծակի շառափից, լուսավորվում են ժամանակն ու տարածությունը: Այսպիսի պահերին են լուծվում սովորական պայմաններում անլուծելի թվացող հարցերը, մեկեն պարզվում-ընդգծվում է անսկիզբ ու անվախճան ճանապարհը՝ անցյալի, այսօրվա ու գալիքի ընդգրկումով:

Ստեղծային ժամեր են կոչվում այսօրինակ ճակատագրական պահերը: Մարդկային պատմության ստեղծա՞ին ժամեր:

Հայ ժողովրդի հազարամյա պատմության ստեղծային ժամը Սարդարապատի ճակատամարտն էր, 1918 թ. մայիսյան այն հրեղեն շաբաթը, որը կործանման եզրին հասած ազգի համար դարձավ գոյատևումի ու ազգապահպանության խարիսխ:

Սարդարապատի հերոսամարտի մասին արդեն բավական գրականություն է ստեղծվել՝ վավերագրական, պատմագիտական ու գրական-գեղարվեստական: Շնորհակալությո՞ւն ստեղծվածի հեղինակներին ու հրատարակիչներին: Եվ, այսուհանդերձ, ես համարձակվում եմ ասել իմ խոսքը հայ ժողովրդի ստեղծային ժամի մասին: Խոսք, որ ավելի շատ հոգու պարտք է, սրբազան խոստովանություն, քան հերթական մի գիրք, որը կարող էր գրվել կամ չգրվել:

Բանն այն է, որ իմ մանկությունն ու պատանեկությունն ան-

ցել են Սարդարապատի զինվորի ընտանիքում: Զինվորի, որի համար ևս այդ ճակատամարտը եղել էր աստեղային ժամ, դարձել էր նրա մտքերի, խոսքերի, երազների տիրակալը ու այդպես էլ մնաց մինչև օրերի վերջը: Հենց այդ պատճառով և իմ երջանիկ բախտով, Սարդարապատը դարձել է կազմավորվող էության կաթ-սնունդը, Սարդարապատի ոգին եղել է իմ ուղեկիցը և ուղեցույցը, մինչև որ ինքս էլ գրիչ եմ վերցրել իմ սեփական Սարդարապատը թղթին ու ընթերցողին հանձնելու համար:

Գրքիս ճակատին գրված է «վեպ»: Դա կարող է տարօրինակ թվալ բծախնդիր ընթերցողին, որը գուցե զարմանա բազմաթիվ էջերում սփռված «ո՛չ վիպական» տարրերի՝ պատմագիտական հետախուզումների, դիվանական չեղծված նյութերի, հեղինակային խորհրդածությունների, հերոսների օրագրային գրառումների և հատկապես գրական ոչ մի ժանրի ավանդական սահմանների մեջ չտեղավորվող ազատ շարադրանքի վրա: Սակայն նախ ասեմ, որ այս տարրերը վաղուց արդեն կազմում են ժամանակակից եվրոպական (և ո՛չ միայն եվրոպական) վեպի բաղկացուցիչները: Ապա՝ ես գրել եմ գիրք Սարդարապատի մասին, և նյութն ինքն է հուշել արտահայտության եղանակն ու ձևերը: Նյո՛ւթը, որի տիրապետությունը, ինչպես վերն ասացի, ինձ վրա է եղել ոչ միայն շարադրանքի ընթացքում, այլև նախընթացին, որ իմ ամբողջ գիտակցական կյանքն է:

Վեպի հերոսները, հատկապես գլխավորները, իրական-պատմական են և հանդես են գալիս իրենց անուն-ազգանուններով, իրենց կենսագրական տվյալներով, որոնք ըստ հնարավորին նշգրտված են առկա բազմատեսակ աղբյուրագիտական նյութերով (դիվանական փաստաթղթեր, ճակատամարտի մասնակիցների հուշեր, Հայկական կորպուսի ու Երևանյան գորամասի շտաբների օրագրերն ու գրագրությունները ևն): Այդ հերոսներին ես պատկերել եմ գլխավորապես այն դերերում, որ սրանք խաղացել են Սարդարապատի ճանապարհին ու Սարդարապատում: Հետագա նրանց կյանքը լի էր ցավալի անակնկալներով ու մխիթարական շրջադարձներով, որոնց անդրադառնալն ինձ հերոսն կտաներ: Հայտնի է, օրինակ, որ Սարդարապատի ռազմանակատի հրամանատար Դանիելբեկ Փիրումյանը հետագա բախտորոշ իրադարձություններում չկարողացավ կողմնորոշվել և թույլ տվեց

սխալներ, որոնք անհարիր են սարդարապատյան մեծագործությանը: Իսկ Բաթումի խորհրդաժողովի հայ պատգամավոր, ապա Հայաստանի դաշնակցական հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին, հետագա իրադարձությունների ցնցումների մեջ հրաժարվեց անցյալի ծանր բեռից, տուն դարձավ քաղաքական անհարկի դեգերումներից՝ նպատակ ունենալով իր ուժն ու կարողությունը նվիրելու վերածնված ժողովրդի նոր կյանքի կառուցմանը:

Այս ամենն ուրիշ գրույցի, թերևս նաև ուրիշ գրքի նյութ է, որը, չգիտեմ, ե՛ս կգրեմ թե մեկ ուրի՛շը, բայց կգրվի: Ավելի քան համոզված եմ, որ կգրվի, որովհետև Սարդարապատին հաջորդած փորձությունների միջով էր, որ հայ ժողովուրդը հասավ իր Նոյեմբերին, իր ազգային կյանքի այն վերածնդին ու վերակերտումի տասնամյակներին, որոնց արդյունքն ու պսակն այսօրվա Հայաստանն է, խորհրդային իրավահավասար հանրապետությունների հզոր ընտանիքի անդամը:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Իրիկնամուտ էր հին Սուրմարիի դաշտում։ Գարնան համատարած կանաչությունը տեղ-տեղ խախտվում էր աշնանացան գարու արտերի գորշավուն կարկատաններով։ Արծաթափոշու բծերով իրենց մատնում էին ճամփեզրերին ու արտերի մեջ կկված փշատենիները։ Եվ այս բոլորի վրա մայր մտնող արևն արնագույն մի հրանգ էր ավելացրել։ Իսկ այնտեղ՝ արևմուտքում ծգված լեռնապարներին բարդ-բարդ նստել էին ամպերը, որոնք սահս արնաներկ էին։ Արնագույնով էին ցոլցլում նաև Արարատի ձյունամած գագաթները, որոնցից այն կողմ իրիկնադեմի մուժն էր նստած և վայրկյան առ վայրկյան թանձրանում էր ու սևանում։

Դաշտի բաց հեռաստանները բռնված էին դեպի հյուսիս շարժվող գաղթական կարավաններով։ Եվ նրանց ընթացքն այնպես դանդաղ էր, համաչափ ու միապաղաղ, որ հեռվից նայողին կարող էր թվալ, թե դաշտն է, որ այնպես շարժվում է տեղահան։

Արտամիջյան կածանով, գաղթական կարավաններին զուգահեռ, դեպի հյուսիս էր ընթանում հեծյալ բարձրաստիճան մի զորական, որի ճերմակաթույր նժույգը, կարծես տիրոջ տրամադրությունը հասկանալով, դանդաղեցրել էր ընթացքը, քայլում էր հոգնած, գլուխը տարտամորեն շարժելով։ Ետևից երիտասարդ համհարզն էր՝ շիկակարմիր ձիու վրա։ Նա ակնապիշ հետևում էր պետին, որի զորավարական հագուստը մեկ անհետանում, մեկ հայտնվում էր արտի անեզրության վրա։ Երիտասարդն ան-

հանգստանում էր զորավարի համար. երբ ձիերը վարգով էին գնում, մտածում էր, թե ահա շուտով կհասնեն, և նա մի բան կուտի, կհանգստանա երկու օրվա լարված ու անոթի այս շրջագայությունից հետո։ Իսկ հիմա դանդաղեցրել էր ընթացքը և, հայացքը գաղթի կարավանների վրա, երևի թե շուտով տեղ հասնելու մասին չէր էլ մտածում։

Ձիու սանձը բաց թողած, հայացքը դաշտի վրա ու դաշտը եզերող լեռնային հեռաստաններին՝ զորավարը տխուր մտածումների մեջ էր։ Հայացքի դեմ հեռու-մոտիկ գյուղերն էին փռված կղմինդրե ու ծղոտե տանիքներով, որոնք լուռ, անծուխ ու անկենդան սպասում էին իրենց օրհասին։ Այգիներում մարդ չէր երևում։ Իսկ արտերը,— ի՜նչ արտեր էին, ի՜նչ բերք էին խոստանում, ի՜նչ լիություն,— այդ արտերը չէին հնձվելու։ Նրանք նախ պետք է տնքային իրենց տերերի ոտքերի տակ, բնավեր դարձած, գաղթի ճամփան բռնած տերերի՛, ապա վերջնականապես տրորվեին սև հեղեղի պես առաջ շարժվող թուրք բանակների մահաբեր շնչից։ Զորավարի հայացքի մշուշը թանձրանում էր լեռնալանջերի ու բլրակների վրա կանգնած վանքերի ու եկեղեցիների տեսքից։ Նրանց զանգերն այլևս հնչեցնող չունեին։ Ո՛չ աղոթող, ո՛չ խնկարկող։ Ջանգակատներում միայն վայրի աղավնիների ու տատրակների ղունղունոցը պիտի հնչեր՝ իբրև ժանգոտ սղոցի ձայն։

Նահանջի ճամփաներին կամ այն վայրերում, ուր մեկ անգամ արդեն թուրքի ոտքն էր առել, զորավարը տեսել էր աշխարհի ամենաթանձր վշտի հուշարձանները՝ կոդոպտված վանքեր, որոնց աղոթարաններն ու գավիթները ծածկված էին եղել արնաթաթախ մարմիններով, իսկ եթե այդ մարմինների տերերը հասցրել էին փախչել, ապա՝ հոշոտված ձեռագիր գրքերով։ Գիրքնահատակներ էին դրանք՝ թրատված ու կոխկրտված, արնոտ սմբակների հետքերով, ցանուցիր էջերով, որոնցից ասես հոսում էր որդանկարմիրի արնագույնը, և զարմացած նայում էին անմեղ հրեշտակներն ու իմաստուն մարգարեները։

Սուրմարիի դաշտում թեթև քամի էր բարձրացել, և զորավարի ամառային վերարկուի փեշերը փոփոխում էին։ Կարմրագույն էր վերարկուի աստառը։ Քամին խաղ էր անում այդ կարմիրի հետ՝ փեշերը վերուվար անելով նժույգի ճիպ-ճերմակության վրա։

Համհարզ Գուրգենը, երեսնամյա մի զորական, որ զինվորական ծառայության իր տասը տարիներին բախտ ու դժբախտություն էր ունեցել լավ և վատ հրամանատարների հետ գործելու, այս մեկին հանդիպելու առաջին իսկ օրը դեմքին ծանր վերք ստացավ։ Էրզրումի ճակատում էր, Թուրքերը նեղում էին հրետանային ու գնդացրային կրակով։ Զորապետն իր միավորմանը կարգադրեց կայծակի արագությամբ նետվել առաջ, գործել թրով ու սվինով։ Տեղից շարժվող չկար։ Եվ այն ժամանակ գնդապետն ինքը՝ մի ձեռքում թուր, մյուսում ատրճանակ, խոյացավ թշնամու վրա։ Նրա ետևից բարձրացած զորամասի ձեռնամարտից շշմեցին Թուրքերը։ Փորձում էին պաշտպանվել սվինամարտով, սակայն դրա համար պատրաստ չէին և կոտորվում էին խուճապահար։ Զորապետը Համհարզի ու մի քանի զինվորի հետ մխրճվել էր փախչողների մեջ և ծանր թրի յուրաքանչյուր հարվածն իջեցնում էր մոնչոցով։ Մեկ էլ թփի ետևից բուսավ հսկա մի Թուրք, սվինը մեկնեց դեպի զորապետը։ Համհարզն այն է հիշում միայն, որ հարվածն իր վրա ընդունելու համար իրեն գցեց զորապետի ու Թուրքի արանքը... Դաշտային լազարեթում ուշքի գալով՝ կողքին տեսավ զորապետի մտահոգ, տանջահար դեմքը և ուրախացավ նրա համար։ Այո՛, նախ և առաջ նրա՛ համար, որովհետև ճակատամարտում թշնամու սառն ու տաք զենքերն անվրեպ են լինում նմանների հանդեպ։

— Փա՜ռք աստծո,— տխուր ժպտաց զորապետը,— հիմա լավ կլինես։— Եվ տեսնելով, որ Համհարզը փորձում է շարժվել, խոսել, ձեռքը դրեց փաթաթաններով ծանրացած գլխին։— Հանդիստ կաց, ծնոտիդ ոսկորն է մի քիչ վնասվել։ Կանցնի, լավ կլինես։— Նորից ժպտաց, այս անգամ ոչ այնքան թախծոտ։— Միրուք կպահես, ոչինչ էլ չի երևա։

Վերքն արագ բուժվեց, և ծնոտի ձախակողմին մնաց նեղ ու երկար մի սպի, որի մասին զորապետը հետո կատակով ասաց.

— Սպիներն առհասարակ զարդարում են զորականին։ Սակայն լավ է, երբ մարդ ունենում է իր սեփական վերքերի սպիները։ Իսկ դա իմն է, դո՛ւ խլեցիր Թուրքի ձեռքից, երբ նա ուզում էր պարգևել ինձ։

...Հիմա լուռ էր զորապետը։ Ճերմակի բնազդին հանձնելով ճանապարհն ընտրելու իրավունքը, ինքը մտորում էր նահանջող զորքի, գաղթող ժողովրդի, կորստյան մատնվող երկրի ճակա-

տագրի վրա։ Ի՞նչ պիտի լինի այս բոլորի վերջը։ Թե՞ հենց սա էլ վերջն է. զորքն այլևս ի վիճակի չէ կռվելու, ժողովրդի մի մասը երեք տարի առաջ զոհ է գնացել Թուրքի յաթաղանին, գաղթի ու տարագրության տառապանքներին, մյուս մասն էլ հիմա է գաղթում և քաղցից, սովից, ուծացումից պիտի սպառվի օտար հողերի վրա, օտար երկինքների ներքո։ Իսկ հետո, շատ ժամանակ հետո աշխարհը կմոռանա, որ գոյություն է ունեցել այսպիսի մի ժողովուրդ, կամ կգտնվեն արդարամիտ պատմաբաններ, որոնք բարի կլինեն գրելու, թե ժուկով-ժամանակով եղել է, ապրել է այդ ժողովուրդը։ Հայ է եղել նրա անունը։ Ապրում էր նա ավանդական իր հայրենիքում, որը փռված էր Միջագետքից մինչև Կուրի հոսանքը և Սև ծովի ափերից մինչև Մուխանքն ու Փայտակարանը արևելյան սահմանում։ Այս ամբողջ տարածքը հինավուրց ժամանակներից ի վեր կոչվում էր Հայկական բարձրավանդակ, որովհետև այդ հայ ժողովուրդն է եղել նրա առաջին բնակիչը, նրա լայներում ստեղծված պետական կազմավորումների տերը, քաղաքակրթության, նյութական ու հոգևոր մշակութային արժեքների հեղինակը... Սակայն եկավ օսմանյան Թուրքը, բնավորվեց նրա տանը և ավանդական հարևան Բյուզանդիայի վրա, դարձավ երկու այդ հին ժողովուրդների և նրանց հարևանների, Եվրոպայի ու Ասիայի ազատաբաղձ ազգերի հոգեառը։

Եվ հայն այդպես իր տանը պիտի ապրեր իբրև օտարական, իբրև հեռուներից եկած ավարառուի ստրուկն ու կցորդը, եթե, իհարկե, Թուրքը կամենար։ Իսկ կկամենա՞ր։ Չէ՞ որ դրա համար արդեն նա պիտի չլիներ Թուրք։ Եվ որովհետև Թուրք էր, ստիպեց, որ հայը Թուրքանա։ Թուրքանա կամ վերանա՝ ազատելով այն հողը, որի վրա աչք է բացել և անցկացրել իր լավ ու վատ օրերը, իր ծաղկման ու բարգավաճման, անկման ու գոյատևումի հազարամյակները։ Եվ որովհետև հայը ոչ միայն չէր ուզում Թուրքանալ, այլև հաճախ ոտքի էր կանգնում, գլուխ էր բարձրացնում՝ պահանջելով իր հողն ու իրավունքները, Թուրքը կտրում էր նրա բարձրացրած գլուխը, կոտորում էր նրա խաղաղ աշխատավորներին, հալածում նրան իր տուն ու տեղից և մնացորդների երեսին շպրտում անարգական մի խոսք. «Դուք փոքրամասնություն եք, դուք պարտավոր եք ոչնչանալ»։ Եվ երբ տեսավ, որ չեն զիջում, սկսեց իր տանը փոքրամասնություն դար-

ձած տանտիրոջը բնաջնջել։ Այսպես էլ Արևմտյան Հայաստան կոչված հսկայական տարածքը հայաթափ եղավ։

Ապա այդ արդարամիտ պատմաբանները կգրեն, թե Արևմտյան Հայաստանի հայության հարցն ահա այսպես լուծելուց հետո Թուրքն արշավեց նաև Արևելյան Հայաստանի վրա...

Այս թախծալի մտորումը, անհեռանկար հեռանկարը և էլի նման բաներ պաշարել էին զորապետին։

Բայց մի՞թե չկա ոչ մի փրկություն։ Մի՞թե իսկապես վերջն է սա, որից դենը Հայոց երկրի, նրա ժողովրդի մասին պիտի խոսեն միայն իբրև պատմական անցյալում ծվարած երևույթների...

Երկու տարի առաջ Անիում պեղումներ էին կատարում Պետերբուրգից, Մոսկվայից, Թիֆլիսից ու Էջմիածնից եկած մի խումբ գիտնականներ։ Հռչակավոր անուններ կային այնտեղ. Նիկողայոս Մառն էր, Թորոս Թորամանյանը, Գարեգին Հովսեփյանը, երիտասարդ Հովսեփ Օրբելին և էլի ուրիշներ, որոնց ինքը քաջ ծանոթ էր, և մարդիկ, որոնց նոր պիտի ծանոթանար, ճանաչեր ու բարեկամանար։ Այնտեղ էր նաև իր ավագ որդին՝ Միքայելը, որի հետ Մառը գիտական լուրջ հույսեր էր կապում։ Մառը Միքայելին ուղարկել էր Կարսի կողմերում իր գնդով տեղակայված հոր մոտ՝ խնդրելով գնդի զինվորներից մի քանիսին օգնության ուղարկել հող փորելու համար։ Եվ ինքը ոչ թե մի քանի զինվոր, այլ մի ամբողջ դասակ ուղարկելուց հետո էլ հաճախ Անի էր գնում՝ տեսնելու պեղումներից բացված հնությունները, զրուցելու հին բարեկամների հետ, հիանալու ազգի անցյալ փառքի փշրանքներով։ Այն ժամանակ, արևմտահայության մեծ մղձավանջից հետո, բախտը կարծես պիտի գոնե կիսադեմով ժպտար հայությանը. Թուրքերը, ռուսաց հաղթական բանակների առաջ ճողոպրելով, թողել էին արևմտահայկական նահանգների զգալի մասը։ Զինադադար դեռ չէր կնքված, սակայն ռազմաճակատի գիծն անցնում էր Վանա լճի հարավային ափով, Մուշի մոտով, Երզնկայի տակով, և Սև ծովի ափին, Տրապիզոնում տիրաբար խարիսխ էին ձգել ռուսական նավերը։ Զանգվածային ջարդերից փրկված հայերն ու գաղթական խլյակները կարող էին վերադառնալ հարազատ եղերքները։ Նորից խաղաղ ծուխ պիտի ելներ հայրենի օջախներից։ Պիտի կենդանանային հինավուրց բնակա-

վայրերը, ծաղկեին, պտղավորվեին վայրենացող այգիներն ու դաշտերը։

Նիկողայոս Մառը, երազկոտ աչքերը հառած հարավի անհուն հեռուներին, պայծառ ծրագրեր էր գծում իր գործընկերների հետ և երազում այն օրը, երբ Անին՝ միջնադարյան Հայաստանի այդ շքեղաշուք ոստանը, պիտի վերականգնված լինի իր նախնական շուքով ու պերճությամբ։

— Դրա համար անհրաժեշտ կլինի մի հասարակ բան,— այդ գեղեցիկ խոսքերը հիացմունքով ունկնդրող Դանիելբեկ Փիրումյանին դառնալով՝ Մառը կես լուրջ-կես կատակ ասաց.— Որ դուք, սիրելի՛ գնդապետ, ազատագրած այս հողերը ձեռքից չտաք։

«Ձեռքից չտա՞ք»։ Եվ Դանիել Փիրումյա՞նը պիտի ձեռքից տար։ Նրա ծննդավայրում ասում են՝ կույրն ի՞նչ կուզի, երկու աչք, մեկը՝ ձախ, մեկն էլ՝ աջ։

Եվ գնդապետն էլ իր հերթին վրա բերեց.

— Երանի՜, թե այդ խոսքը լսեի ոչ թե որպես սիրելի գիտնականի բաղձանքի արտահայտություն, այլ իբրև կայսերական բանակների Գերագույն հրամանատարության անկասելի հրաման։

Մի տարի հետո Գերագույն հրամանատարության կարգադրությամբ Թուրքական ճակատից հեռանում էին ռուսական զորքերը։ Թուրքերի հնարավոր հարձակումներից անդրկովկասցիները պիտի պաշտպանվեին հիմնականում սեփական ուժերով։ Եվ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության համաձայնությամբ սկսեցին կազմվել ազգային զորամասեր։ Այդ ժամանակ էր, որ Միքայելը, Անիի պեղումները թողած, շտապեց ճակատում գտնվող հոր մոտ։

— Ես զինվորական ծառայությունից տուն էի դարձել պորուչիկի աստիճանով։ Բայց եթե այդ աստիճանի համար ձեր զորամասում տեղ չկա, ես կարող եմ կռվել իբրև շարքային զինվոր,— հոր հետ այսպես էր խոսել ավագ որդին։

— Այդպես միանգամի՞ց,— զարմացել էր հայրը։

— Որքան էլ մտածենք, հայրիկ, ուրիշ ճանապարհ չկա։ Վտանգված է մեր ազգը, և նրա յուրաքանչյուր անդամը պետք է պատրաստ լինի մեռնելու ազգի փրկության համար։

— Իսկ ես կարծում եմ, որ կա ազգին նվիրվելու առավել խելացի ձև։

— Ո՞րն է այդ ձևը, հայրիկ,— զարմացած հարցրել էր որդին։

— Ազգի համար կռվելը,— լրջորեն անհանգստացած պատասխանել էր գնդապետ հայրը։— Ես չեմ սիրում, որ մարդ կռվի է գնում մեռնելու համար։ Այդ մեր պատմիչներն են, որ հայ զինվորին նկարագրել են մեռնելու համար մեռնելիս, նահատակության լուսապսակը գլխին ճառագած։

— Բայց մի՞թե վատ է, երբ զինվորը պատրաստ է նահատակության։

— Զինվորը պետք է պատրաստ լինի կռվելու և հաղթելո՛ւ։ Իսկ նահատակությունը, տղաս, կգա նաև առանց մեր ցանկության ու հրավերի... Առհասարակ ես նահատակների մեջ խեղճություն եմ տեսնում։ Խեղճություն, որ գալիս է մեր դաժան ճակատագրից, մեր ստացած սխալ դաստիարակությունից, հատկապես մեր հավատի վարդապետությունից։— Տղան փորձեց հակաճառել, ինչ-որ ձևով արդարացնել այդ պահին իրեն պարուրած անձնազոհության սրբազան տրամադրությունը։ Հայրը վեճի վրա փակ դրեց.— Համենայն դեպս, լավ կլինի, որ այլևս դու ինձ հետ նահատակության մասին չխոսես։ Իսկ իմ զորամասում քեզ համար հենց այսօր էլ տեղ կա։

*

*

Մութը դեռ չէր ընկել, որ հանդիպեցին գաղթական խմբերից մեկին։ Կարող էին շրջանցել, սակայն զորապետն այս անգամ իր Ճերմակի սանձը քաշեց, ուղղություն տվեց, և նժույգը փոքրշատացնելով թեթևակի խրխնջաց՝ իբր, «հասկացա՛», և շուտ եկավ դեպի անկանոն շարժվող բազմությունը։

Երկու-երեք հարյուր հոգի էին, ծեր ու երեխա, կին ու տղամարդ։ Բեռնաբարձ գրաստներով ու սայլերով, մանր ու խոշոր անասուններն առաջներն արած, նրանք առաջ էին գնում այնպես հոգնած, այնպես դանդաղ, ասես ոչ թե քայլում, այլ սահում էին։ Կողքերից զինված պահակներ էին քայլում։ Զինվորնե՞ր էին, թե՞ համագյուղացի երիտասարդները, դժվար էր իմանալ։ Դրանց արտաքինի մեջ ոչ մի տարբերություն չկար, որով-

հետև նահանջող զորքի կողմից լքված պահեստներից հաճախ հագուստ ու զինամթերք էին թոցնում տեղական բնակիչները, և զորամասերին միացող աշխարհազորայիններն էլ զինվոր էին դառնում իրենց տներից բերած հագուստ-կապուստի մեջ։

Զինյալ այս տղամարդիկ դեռ հեռվից նկատել էին մոտեցող հեծյալներին և առաջինն իրենք ընդառաջ գնացին։ Մեկը մոտեցավ, զրուցեց, հանձնարարություն ստացավ, խոսեց իր ընկերների հետ, ապա կանոնավոր շարքով վերադարձան, բռնեցին պահակազորի իրենց տեղերը։

Հետո խմբից անջատվեց պառավ մի կին, կիսամերկ փոքրիկի ձեռքը բռնած մոտեցավ զորապետին։ Իրիկնամուտի աղջամուղջի մեջ երևում էին գլխաշորի տակից դուրս թափված ճերմակ մազերը։ Բարձր ու շիտակ հասակով կանգնեց նրա ձիու կողքին, համարձակորեն ձեռքը տարավ դեպի ասպանդակը, որի կողքից կախված էր գնդապետի արծաթափայլ թուրը։

— Թրիդ զուրբան էղնիմ,— խոսեց պառավը։— Գլխուդ զուրբան էղնիմ, էս ո՞ւր եք տանում էս խեղճ ու անճար ժողովրդին։

Զորապետն անխոս վար թռավ ձիուց, թուրը կողքին սեղմած՝ մոտեցավ պառավին, որի աջ ձեռքը ձիու ասպանդակին էր դեռ, ձախը՝ կողքի փոքրիկի գլխին։

— Մայրիկ ջան, սուրբ մայրիկ,— Փիրումյանը պառավի ձեռքերը խլելով, սեղմեց շուրթերին։ Երևի իր մոր տարիքին կլիներ, 85—90 տարեկան։ Ինչպե՞ս էլ նման էր նրան. բարձր ու շիտակ հասակ, ճերմակ-առատ մազեր, որ պատկառելի դեմքը պարուրել էին լուսապսակի նման։ Մի վայրկյան պատկերացրեց իր մորն այսպես գաղթի ճամփան բռնած, և սիրտը ճմլվեց անագորույն ցավից։— Ո՞ւր պիտի գնաք, մայրիկ։ Առջևում Արարատյան աշխարհն է, մեր երկրի սիրտը։

— Բա ի՞նչ պիտի անի մթթ-մինակ մնացած սիրտը՝ առանց ոտ ու ձեռի, առանց ամուր մարմնի, որ խլեցին, սաղ-սաղ թաղեցին մեր աչքի առաջ։ Թաղողի ձեռը չորանա,— անիծեց պառավը։

— Սիրտը պիտի պաշտպանենք-պահենք, մայրիկ,— զգացված խոսեց զորապետը։— Սիրտը որ անվնաս մնա, մարմնի մնացած մասերը կդարմանվեն... Ժամանակը կգա,— նա շրջվեց, որ փոքրիկին ցույց տա, տեսավ՝ խաղում է իր վերարկուի կարմիր աստառի հետ։ Շոյեց նրա գանգրահեր գլուխը։— Ա՛յ,

այս փոքրիկները, որոնց աչքի առաջ իրենց հայրերն ու պապերը նահանջում են արյուն տալով, ետ կխլեն կորցրածը, և նորից մեր երկիրը կապրի ոտ ու ձեռով, գլխով ու մարմնով, առողջ ու ամբողջական։

— Է՞, որդիս, հավատալո՞ւ է, կլինի՞ այդ օրը։

— Պետք է լինի, մայրիկ, պե՞տք է լինի,— երդվելու պես ասաց գնդապետը։

Գաղթախմբի ուղեկից զինվորներին նորից կարգադրություններ անելուց հետո զորապետ Դանիելբեկ Փիրումյանը բռնեց իր գնալիք ճանապարհը։ Մի անգամ էլ ետ նայեց. դեռ քայլում էին գաղթականները, չնայած արդեն մութն ընկնում էր, և ճանապարհը դառնում էր վտանգավոր։

Վերջին անգամ զորապետը ետ նայեց, երբ գաղթականների խումբը կուլ էր գնում տափաստանում թանձրացող խավարին։

Առջևում գարու փարթամ արտեր էին, որոնց միջով ձգվող կածանը միայն ձիու բնազդով կարելի էր շկորցնել։ Եվ գնդապետը նորից հանձնվեց իր ձերմակի կամքին։

Ճամփակիսին ձերմակը խրխնջաց ու ոտքով դոփեց գետինը։ Համհարզն խսկույն խթանեց իր ձիուն, արտամիջով առաջ անցավ և քիչ հետո վերադարձավ հուզված։

— Երկու հոգի էին, մեր հետախույզներից։ Մոլորվել են։ Ասացի՝ գնան, խառնվեն գաղթականների հետ, առավոտյան լույսը բարի է։

Հետո ձիերը քայլում էին հանգիստ, մեկ-մեկ ճամփեզրի արտից կանաչ փնջեր էին պոկում ու փոշտացնելով ուտում։

Դանիելբեկ Փիրումյանը՝ Երևանյան զորախմբի հրամանատար Մովսես Սիլիկյանի տեղակալը, ձիու վրա դեպի շտաբ էր գնում և ո՛չ քնած էր, ո՛չ արթուն։ Երկու օրվա անդադար պտույտը զորամասի տարբեր գնդերում, գնդերի տագնապալից վիճակը, տեղահանված ժողովրդի գաղթն ու զրկանքները նրան հանել էին հոգեկան հավասարակշռությունից։ Երեկ գիշեր նույնիսկ հնարավորություն կար քնելու։ Չորրորդ գնդի շտաբում պառկել էր խոտից սարքված թախտի վրա։ Սակայն աչքերի առաջ էին գաղթի սահմռկեցուցիչ տեսարանները։ Զորաջոկատներում կարգ ու կանոն չի մնացել։ Զորամասերի նահանջն ու տունդարձը տարափոխիկ ցավի պես բռնել են բոլոր միավորումներին, և զին-

վոր ու սպա հարմար առիթ են փնտրում ճակատը լքելու։ Ո՞վ պիտի ստեղծի ռազմական այն կարգապահությունը, որ ամեն մի բանակի մեծ կամ փոքր հաջողության առաջին պայմանն է։ Ո՞վ պիտի կասեցնի թուրքի առաջխաղացումը։ Չէ՞ որ անսահման չէ այս Հայաստան երկիրը։

Ամենացավալին, որ քրքրում էր զորապետի սիրտը, սպաների անտարբերությունն էր։ Կարծես հաշտվել են դատապարտվածության հետ և սպասում են, թե որտե՛ղ կկտրվի վերջին թելը։ Բոլորը միաբերան խոսում են հաշտությունից և ամենայն բծախնդրությամբ ծանրակշիռ պատճառներ հայթայթում անկանգ նահանջի բոլոր կետերում արդարացի երևալու համար։ Երկու ամսվա ընթացքում Բիթլիսից ու Երզնկայից հասել են Կարս։ Իսկ սա սովորական պայմաններում կարելի կլիներ կատարել միայն վազքով։ Մի՞թե անհնար էր որևէ կետում կանգնեցնել թշնամուն, գոնե խոր թիկունք տեղափոխել ճանապարհի մեծ քաղաքներում ու բերդերում կուտակված վիթխարի զինամթերքն ու սննդի պաշարները։ Ի՞նչ պատճառաբանություն կարող է ունենալ այսօրինակ անճարակությունը։

Իսկ ի՞նքդ, որ ուշացած դատաստան ես մտմտում ռազմաճակատի ցավալի ձախողանքների համար, ի՞նչ ես արել գոնե մեկ հատվածում դրությունը փրկելու համար,— ինքնազննումի տառապանքի մեջ մտորում էր զորապետը։— Մի՞թե էրզրումի պաշտպանության մի հաջող դրվագ բավական է, որպեսզի գլուխդ հանգիստ թողնեն հաջորդ խայտառակ պարտությունների համար։ Հետո՞ լ.նչ, որ դու ռազմաճակատի հրամանատարը չես, և ձախողանքների համար կան շատ ավելի պատասխանատու, անմեղ մեղավոր մարդիկ՝ հայկական զորքի ընդհանուր հրամանատար գեներալ Թոմաս Նազարբեկովը, նրա առանձնակի վստահությունն ու հովանավորությունը վայելող գեներալ Արեշևը, Հեռու չգնա՞նք, քո անմիջական հրամանատար գեներալ Սիլիկյանը և էլի՛ ուրիշներ։ Բայց այն ո՞ր ճշմարիտ հայրենասեր ու շրջահայաց զորականն է, որ, պատուհասյալ հայրենիքը փրկելու ելքը թողած, մեղավորներ է փնտրում։

Եվ, առհասարակ, ո՞րն է ելքը, կա՞ փրկության ճանապարհ։

Տեղի էր ունեցել ամենասարսափելին. հուսահատությունը բռնել էր բոլորին, ճակատի բարձր հրամանատարներից մինչև

շարքային զինվորները, գաղթող շինականներից մինչև նրանք, որոնցից դեռ հեռու է ճակատը։ Գաղթական խմբերը, սարերից գլորվող ձյունահյուսերի պես, իրենց հետ առնում-տանում էին դասալքության մղվող զինվորներին, ճակատից շատ հեռու գրտնվող գյուղերի բնակիչներին։ Եվ ամենուր տիրում էր գլուխ պրծացնելու խելահեղ մի եռուզեռ։

Այն, ինչ կարող է անել թույլ, ուժասպառ, սակայն սրտում դեռևս հույսի նշույլ ունեցող մարմինը, հաճախ անհնար է լինում ուժեղի համար, որին պարուրել է անհուսությունը։

Իսկ ինչպե՞ս է վիճակը մայր գետից այն կողմ։ Զորապետը վերջին օրերին կտրված է եղել Երևանից։ Իր շտաբի հետ ունեցած կցկտուր ռադիոկապով էլ անհնար էր ճշգրիտ պատկերացում կազմել ժողովրդի ու նրա խայտաբղետ ղեկավարության տրամադրությունից։ Ի՞նչ են մտածում Թիֆլիսում նստած հայ մեծերը։ Կովկասյան միացյալ կառավարության միջոցով նրանք պիտի կարողանա՞ն զորական նոր համալրումներ կատարել։ Չէ՞ որ ճակատում լոկ հայ զորքերն են մնացել՝ ռուս մի քանի տանյակ սպաների ու զինվորների հետ, և Անդրկովկասի վրա արշավող թուրքական բանակների դեմ բացված ճակատը փաստորեն միայն հայկական զորախմբերի վրա է ծանրացել։

Հին կադրային զինվորական էր Դանիելբեկ Փիրումյանը։ Սերված էր Արցախական աշխարհի Վարանդա գավառի Նախիջևանիկ գյուղի հռչակավոր Ասրիբեկյան-Փիրումյան տոհմից։ Շուշի քաղաքի թեմական դպրոցը հաջողությամբ ավարտելուց հետո ռազմական կրթություն էր ստացել Պետերբուրգում, մասնակցել էր ռուս-ճապոնական պատերազմին և ուրիշ մանր ու մեծ կռիվների՝ միշտ հուսալով, որ Ռուսաստանն իր հայացքը կդարձնի նաև դեպի հարավ, և ինքը հնարավորություն կունենա ծառայելու հարազատ ժողովրդի ազատագրման համար մղվելիք պատերազմին։ Եվ 1914-ից փոխադրված լինելով Կովկասյան ճակատը՝ չորս տարվա չընդմիջվող զորաշարժերի մեջ ապրում էր իր կյանքի մեծագույն պատերազմը, որը հարուստ էր սակավ մխիթարական հաջողություններով և ահռելի ողբերգությամբ։ Ողբերգություն էր ոչ միայն այդ պատերազմի տարիներին հայ ժողովրդի կրած անլուր տառապանքը, այլև հուսախաբությունը ցարական Ռուսաստանի և նրա դաշնակիցների քաղաքականության հանդեպ։ Ի՞նչ լուսավոր երազներով էր հասել Կովկաս-

յան ճակատ, ազգի փրկության ի՞նչ հեռանկարներ կային երազող հոգում։ Դեռ պատերազմը չսկսած, ցարական կառավարության հաճությամբ, հայկական կամավորական գնդեր էին կազմավորվել Ռուսաստանյան կայսրության բոլոր հայաշատ վայրերում։ Այդ գնդերին էին զինվորագրվել տեղացիներ ու դրսեկներ։ Նույնիսկ արտասահմանյան երկրների հայ գաղթավայրերից ժամանածներ։ Համազգային ցնծություն էր։ Կամավորական գնդերը կռվում էին ռուսական զորամասերի հետ և Ռուսաստանի դաշնակից Անգլիայի ու Ֆրանսիայի բանակներում։ Կռվում էին Թուրքիայի դեմ՝ Արևմտյան Հայաստանը փրկելու հույսով։ Ցարական կառավարության ու նրա բանակի բարձրաստիճան ներկայացուցիչները կամավորական գնդեր կազմակերպելու, Թուրքերի դեմ հայ ամբողջ ժողովրդին բորբոքելու համար տվել էին չնչին գումար և առատ խոստումներ, որոնց լույսի տակ երևում էր հայության մի պայծառ գալիք։ Ի՞նչ փույթ, որ այդ խոստումները պաշտոնական ձևակերպում չէին ստացել։ Մի՞թե ձևակերպումն է կարևոր, երբ Ռուսաստանը պիտի իր բանակները տաներ մինչև Բոսֆոր ու Միջերկրական, Միջագետք ու Պարսկական Ատրպատական, իսկ այս դեպքում աչքի առաջ էր Արևելյան Հայաստանի օրինակը՝ մեկ գարու ֆիզիկական գոյության ապահովությամբ։

Սակայն 1914-ին հետևեց դժնահիշատակ տասնհինգը։ Իրենք՝ ռուսական հզոր մարտակարգերը, կանգնած էին Սարիղամիշում ու Ալաշկերտում։ Սարիղամիշի ճակատագրական մարտերին և Թուրքական 90-հազարանոց բանակին ծնկի բերելուն իրենց հերոսական մասնակցությունը բերած հայերը՝ հրամանատարներ, զինվորներ, կամավորներ ու հասարակ մարդիկ և նրանց մեջ էլ գնդի հրամանատար Դանիելբեկ Փիրումյանը, հոգով ու սպասումներով Արաքսից այն կողմ էին, Թուրքական հալածանքներին, բռնի տեղահանությանն ու ջարդերին ենթակա հայրենակիցների հետ։ Ճակատի գծից այն կողմ թափվում էր անպաշտպան հայության արյունը։ Կողոպտվում ու ավերվում էին բնակավայրերը։ Աշխարհի բոլոր թերթերը լիքն էին հայոց Գողգոթայի սարսափների սրտակեղեք նկարագրությամբ։

Արաքսի ձախափնյակում հանդիստ կանգնած էր ցարական բանակը։ Հանգույցի լուծմանն էր սպասում, որպեսզի շարժվի դեպի հարավ և զբաղեցնի հայերից պարպված վիլայեթները։

* *
*

Այս անգամ տեղահանությունն ու գաղթը ծայր առան այն ժամանակ, երբ թուրքերը նվաճեցին Բաղեշ-Բիթլիսը, Մուշն ու Մամախաթունը։ Իսկ Էրզրումի անկումն արդեն ոչ մի հույս չբողեց արևմտյան Հայաստանի բնիկ հայության համար, որը մնացել էր թուրք ու քուրդ բարբարոսների դեմ հանդիման։ Գաղթականները հայրենի բնաշխարհից հեռանալու երկու ճանապարհ ունեին. մեկը Վասպուրականով դեպի Պարսկաստանի խորքերը, ուր, իբր թե, հնարավոր պիտի լիներ ապավինել անգլիական հովանավորությանը, կամ Ատրպատականով հեռանալու դեպի Արևելյան Հայաստանի համեմատաբար ապահով նահանգները՝ Արցախ, Սյունիք ու Գանձակի կողմերը։ Մյուս ճանապարհը Սարիղամիշի-Կարսի վրայով տանում էր դեպի Արարատյան երկիրը և նրա թիկունքում գտնվող անորոշ հեռուները։ Երկրորդ ճանապարհն էր, որ ապահով ճանաչվեց, և նույնիսկ Վասպուրականի, Տարոնի, Բայազետի ու Ալաշկերտի հայության մեծագույն մասն ընտրեց այս ճանապարհը։ Սակայն բոլորը չէին, որ հասկացան երկրորդ ճանապարհի ապահովությունը։ Տասնյակ հազարավոր տարագրյալների դեպի իրենց էին քաշում Պարսկաստանի խորքերը, ուր անգլիական բանակն էր գտնվում։ Պակաս գայթակղիչ չէր նաև արաբական երկրների կարծեցյալ ապահովությունը, մանավանդ որ նախընթաց տարագրություններից հատուկենտ բախտավորների հաջողվել էր ապահովություն գտնել այդ երկրներում։

Մեծ էր, սակայն, դեպի Արարատյան աշխարհը շարժվող գաղթականության բանակը։ Մեծ և հաջող կազմակերպված։ Իսկ դա իր պատճառն ուներ։ Դեռ չէին մոռացվել նախորդ տասնամյակներին թուրքաց բռնություններից տարագրության ճանապարհը բռնած խմբերի սարսափները։ Անցյալ դարի իննսունական թվականներից սկսած թուրքերը կոտորում էին հայերին նրանց ավանդական բնակավայրերում և չէին խնայում նաև այն ժամանակ, երբ մնացորդաց բեկորները բռնում էին գաղթի ճանապարհը։ Գաղթականների խլյակները զոհ էին գնում թուրք և քուրդ ավազակախմբերի վայրագություններին։ Եվ սա պետության ծրագրած քաղաքականությունն էր. Աբդուլ Համիդ սուլթանն իր ասկյարներին կարգադրել էր կոտորել մինչև վերջին գաղթականը, որով-

հետև հայն անհնազանդ է տեղում,— ասել էր այդ արնածարավ հրեշը,— իսկ արյան վրեժ ունի տեղահանումից հետո։ Ուրեմն, հային պետք է սպանել՝ ուր էլ որ լինի։

Աբդուլ Համիդի այս քաղաքականությունը ժառանգել էին նաև նրան գահընկեց արած երիտասարդ Թուրքերը։ Սրանք տասնհինգ թվականին հայերին կոտորում էին ամենուրեք, առանց խնայելու նույնիսկ մանուկներին։ Երիտասարդ Թուրքերի պարագլուխները հրովարտակ արձակեցին իրենց երկրով մեկ, կոչ անելով ոչնչացնել հայերին անխնա՝ մեծից փոքրը, կանանց ու ծերերին, փոքրերին հատկապես՝, որովհետև նրանք ավելի լավ են հիշում իրենց տեսածները և պիտի մեծանան իբրև վրիժառուներ։

Եվ հիմա նորից հայերը բռնել էին գաղթի ճամփաները։

1915-ի մեծ սպանդից փրկվածների, Արևմտյան Հայաստանի բնիկ հայության վերջին մնացորդների գաղթն էր դա, որի ապահովության համար Թուրքերի առաջխաղացումը կասեցնում էին բնաշխարհում կազմակերպված հայկական զորամասի գնդերը։ Ճանապարհը Թուրք, Թաթար ու քուրդ ավազակային խմբերից անվտանգ դարձնելու համար գաղթականների հոծ զանգվածներին ուղեկցում էին հայկական զորամասի առանձին շոկատներ։ Զինված էին նաև իրենք՝ գաղթականները։ Ռուսական լքված զինապահեստներից քիչ բան չէր հասել այն հայերին, որոնք պիտի ընտրեին գաղթի ճանապարհը։ Եվ այդ ճանապարհին նրանք քանի՛-քանի՛ անգամ ետ մղեցին զինված բաշիբոզուկների հարձակումները։

Գաղթականության թիկունքը պահում էին Վասպուրականի, Տարոնի, Խնուսի գնդերը։ Նրանց անձնազոհ ճակատումների շնորհիվ էր, որ գաղթի այդ երկար ճանապարհին Բիթլիսից ու Վանից կամ Երզնկայից, Կարնո գավառից մինչև Արարատյան դաշտ ընկած երկար ու դաժան ճանապարհներին տեղի ունեցած ընդհարումներից համարյա անվնաս դուրս եկան գաղթական բոլոր խմբերը։

Խնուսից, Մուշից և շրջականներից գաղթողները մի անգամ Ալաշկերտում հարձակման ենթարկվեցին տեղական Թուրք ու քուրդ հրոսակների կողմից, որոնց օգնում էին նրանց ցեղակից տեղաբնիկները։ Սակայն զինվորական խմբերը, զինյալ գաղթականների անձնազոհ աջակցությամբ, փախուստի մատնեցին

հրոսակներին, պատժեցին սրանց բարբարոս օգնականներին և մաքրած ճամփաներով շարժվեցին դեպի հյուսիս։

Հին Բայազետ հասած վասպուրականցիները, Նախիջևանի կողմերում դարանած մուսավաթական զորքերից զգուշանալով, ծովեցին դեպի հյուսիս-արևմուտք, Իգդիրում ու Սուրմարիում խառնվելով արևմտյան նահանգներից եկածներին, Արաքսն անցան և միացան Արարատյան դաշտում ցրված խմբերին։

Ապրիլի վերջերին և մայիսի սկզբին, ո՛չ ճշգրիտ հաշիվներով, Արաքսն անցել էին արդեն 250—300 հազար հայ գաղթականներ, որոնք իրենց փրկված էին համարում թուրքական յաթաղանից, սակայն անորոշ էր ապագան, որովհետև սպառվել էր իրենց հետ վերցրած պարենը, և Արարատյան աշխարհում նրանց սպասում էր ոչ միայն սովը, այլև տարափոխիկ հիվանդությունների աղետը, որին դիմադրելու համար զենքն ու կռվելու կամքը ո՛չ մի նշանակություն չունեին։

Գաղթականների հեղեղը շարժվում էր փրթած, անկանոն ու խայտաբղետ։ Տարբեր խմբերը փաթորկված ալիքների պես իրար էին գալիս, միանում, բաժանվում էին ու ցրվում, տարտղնում։ Այս ու այնտեղ խառնիճաղանջ ձայներ էին. հարազատների փնտրտուքի կանչեր, ոգեպնդումի ու հուսադրության կոչեր։ Հուսահատ ճիչ, լացուկոծ, աղմուկ, անասունների բառաչ, շների կաղկանձ։ Մի տարեց կին, գլխաբաց, շաղ տված մազերով, խենթորեն վազում էր առաջ, աջ ու ձախ նայելով, խմբից խումբ ընկնելով։ Ոչինչ չէր հարցնում, ոչ մի խոսք չէր ասում։ Իրենով էլ հետաքրքրվող չկար։ Այդպես սարսափն աչքերում, խելագար վազքով միայն որդեկորույս մայրն է պատեպատ զարկվում, ի՞նչ հարցնեին։ Ո՞ր մեկին հարցնեին...

Խմբեր էլ կային, երևի ամբողջ գյուղեր, տոհմիկ մեծ գերդաստաններ, որոնք բռունցքված էին ասես, միակամ ու միաձույլ։ Այդպիսիների գլուխ կանգնած էր լինում անպայման մեկը, գյուղապետ կամ տերտեր, տոհմի ազդեցիկ մեծը կամ ինքնակոչ մի առաջնորդ, որ թխսկանի պես թևերը տարածած հսկում էր իրեն հանձնված խմբի ապահովությունը։ Հույս ունեին, թե կա փրկության ափ, և գնում էին դեպի այդ երևակայական ափը։

Կարսա դաշտի Ագարակ գյուղի հասարակությունը, երկու հարյուրից ավելի մարդ,— առաջ էր շարժվում գյուղի քահանայի գլխավորությամբ։ Հովվի նման իր հոտն առաջն արած, ընտաշ

գավազանը ձեռքին, քահանան գնում էր մտախոհ և մեկ-մեկ աչք էր ածում շուրջը. չլինի ետ մնացող լինի։ Ճանապարհին կորուստներ էր տվել։ Մի ջահել կին ծննդի վրա վախճանվել էր Ալեքսանդրապոլ չհասած։ Երկու երեխա բարձր ջերմությամբ հիվանդ էին, հանկարծահաս մահով համբարձեցին հերկինս... Թաղեցին սովորական ծեսով, սուգով ու աղոթքով։ Քահանան թեատակին պինդ պահած ծխական գրքում գրանցել էր այդ կորուստները՝ մեկ առ մեկ, հանգամանորեն նշելով նաև գերեզմանների տեղերը, որպեսզի վերադառնալուց տուն բերել տա նաև կորցելոց մարմինները։ Հիմա Ներսոյենց պառավը մահամերձ վիճակում անվերջ աղաչում էր, որ իրեն թողնեն ճանապարհին։

— Թողեք հանգիստ մեռնեմ, ո՞ւր քարշ կուտաք։ Ինչի՞ ձեր շալակին ավելորդ բեռ լինեմ, թողեք, ա՛յ օրհնվածներ։

Սակայն քահանան անդրդվելի էր։

— Խելքդ գլխիդ պահիր, ա՛յ պառավ,— լեզուն անխափան բանող պառավին լռեցնում էր նա։— Մեր մեղքը քի՞չ է, որ ուզում ես աստծո զայրույթը բազմապատկել։

Տեր Սարգիսն ագարակցի տեր Մարուքեի որդին էր, քահանայական տոհմի ժառանգ և փոքրիկ, բայց ամուր գյուղի հոգևոր պետը, որին համագյուղացիներն ընդունում էին իբրև աստվածառաք հոր, որովհետև աչք էին բացել նրա ու հայր Մարուքեի, պապ Ղևոնդի, հորապապ Տիրայրի ու մյուս արժանահիշատակ նախնիների աղոթքներով։ Նրանցից էին սովորել հայոց գիրը, որ պարտադիր էր ամեն մի խելահաս երեխայի համար, նրանցից էին իմացել հայոց առաքելական հավատի սրբազան պատվիրանները և այդ պատվիրանների հարազատ ու անթերի կիրառությունը։

Երբ Օլթին, Կաղզվանն ու մյուս հարևանները տրաքված ելել էին իրենց ափերից և հոսում էին դեպի հյուսիս ու ճանապարհին էլ պատմում էին թուրքի թրքությունը, որից լսողի լեղին էր սառչում, գյուղապետ Գաբրիելը, գյուղի հետագա անելիքը որոշելու համար, Կարս գնաց, և երկու օր հետո գյուղ հասավ նրա գլուխը միայն։ Հետը գնացած երիտասարդն աղիողորմ լալով պատմում էր.

— Թուրքերը կապոտեցին մեզ, հետո էլ, թե՝ «Երկուսիցդ մեկի գլուխը պիտի կտրենք, ինքնե՛րդ որոշեցեք»։ Քյոխվա Գաբ-

բիելն իր վիզը դեմ արեց, թե՝ «Նա ջահել է, խնայեցե՛ք»... Հետո էլ... հետո էլ գլուխը ձեռքս տալով՝ ասացին. «Տար, ցույց տուր ձերոնց. բոլորիդ էլ այս օրն է սպասում, բոլորի՛դ»։

Եվ հիմա ամբողջ գյուղը գլուխն առած այդ օրից էր փախչում։

Տեր Սարգիսն այն գիշեր, իհարկե, հորել էր տվել գյուղի ունեցած-չունեցածը։ Ինքն էլ հորեց եկեղեցու սպասքն ու հարստությունը՝ գիրք ու արծաթեղեն, նույնիսկ հինավուրց այն խաչարձանը, որի վրա, ըստ ավանդության, զորավար Վարդան Մամիկոնյանի սրբազան արյունը կար շորացած։

Եվ հիմա մի գլուխ էր, որ յուրաքանչյուրը տանում էր իր վրա։ Տանում էր, որ թուրքի բաժին չդառնա։

Անտաշ փայտերից ու կարպետից սարքած պատգարակի վրա տանում էին պառավին, որն իր բախտն էր լալիս ու անիծում խլացած աշխարհը։

Նա հենց այդպես անեծքը շուրթերին էլ հանգավ։ Երիտասարդները պատգարակը ցած դրին ճանապարհի եզրին, բարձր ու փարթամ մի ծառի տակ, և քահանան մոտեցավ հանդիսավոր, հանեց ծոցի արծաթակազմ ավետարանը...

Երիտասարդները, հողագործ մարդիկ, արդեն փորել էին պառավի փոսը։ Ճերմակ պատանքի մեջ փաթաթած, հին հեթանոսական սովորությամբ իջեցրին և անլաց ու անարտասուք հողեցին, անտաշ քարեր շարեցին վրան, գլխատեղում էլ՝ մի մեծ ոռք։

Տեր Սարգիսը ծխական գրքում նկարագրեց գերեզմանատեղը, նորից աղոթք արեց, ապա, ավետարանը ծոցը դնելով, փարաջայի փեշերը հավաքեց, ձախ բազկին գցեց և, հոտին շարժվելու նշան անելով, հսկայամարմին առաջ ընկավ։

* *
*

Վաղարշապատի դաշտում, ճանապարհի եզրին, թփերի արանքում գաղթական Փանոսը կրակ էր վառել, որտեղի՛ց էլ հին գերաններ էր հավաքել, ծայրերը դրել կրակի կենտրոնին և խորոված էր անում։ Յոթ երեխաները, մեկը մյուսից մի տարով մեծ, երկուական ձեռքերով խորոված ճիպոտ-շամփուրները կրակի

վրա բռնած՝ շուռ ու մուռ էին տալիս։ Շամփուրների հետ աջ ու ձախ էին շրջում նաև երեսները, որովհետև կրակը թեժ էր, վառում էր անխնա։

Փանոսի մայրն ու կնիկը, արտասուքն աչքներին, հաջորդ շամփուրներն էին միս հագցնում և քթների տակ իրենց բախտը ողբում։

Փանոսը անկարգ ընթացող գաղթականներին մոտ էր հրավիրում, անհոգ թափառականի բացսրտությամբ լավաշի մեջ փաթաթած խորոված հրամցնում։ Թևատակին էլ օդիով լի կուպրուն կար, որի բերանից օղի էր լցնում, տալիս մոտեցողին։

— Խմեցե՛ք, կերե՛ք, ա՜յ հայեր, էս օրվա կենացը, սրանից վատ օր էլ է լինում,— իր բաժակը զարկում էր դիմացինի բաժակին, հետո օղին այնպես էր լցնում բերանը, ասես դեն էր շպրտում։

— Հեր օրհնած, տուն ու հայրենիք թողած՝ գաղթում ենք, սրանից վատ օ՞ր էլ կլինի,— զարմացած հարցրեց Փանոսի կանչի վրա եկած մարդկանցից մեկը։

Առանց երեսը բարձրացնելու նա պատասխանեց.

— Սրանից վատ օրն է՛ն է լինելու, որ խորոված ացու չունենանք,— ապա օղու բաժակը մեկնեց ձայնի ուղղությամբ և մի պահ մնաց քարացած։— Վա՜յ, էդ... դո՞ւ ես։

Ճանաչեցին իրար։ Նախանցյալ օրը Փանոսենք Կողբ գյուղի ծայրին, ընկուզենու տակ նստել էին հանգստանալու, կովը ճամփեզրի արտը մտավ։ Հանկարծ գյուղի վերջին տներից դուրս եկած մեկը, դագանակը ձեռքին, սրընթաց վրա հասավ, կովին այնքան ծեծեց, որ խեղճ անասունը մեկնվեց արտի մեջ ու էլ չէր կարողանում տեղից շարժվել։

Փանոսը խեղճ-խեղճ գնաց դեպի կովը։ Անգութ արտատերը, նոր միայն գիտակցելով իր արածի դաժանությունը, փորձեց արդարանալ, կարծում էր աժդահա կովատերը, որին սկզբից չէր տեսել, իրեն կբռնի, կխեղդի ուժասպառ ընկած կովի կողքին։

— Հե՜ր օրհնածներ, ձեր տուն ու տեղը թողած չհանդամվում եք, որոշել եք մեզ ի՞լ տնաքանդ անել։

— Սիրտդ հովացա՞վ, ապեր,— խեղճ-խեղճ հարցրեց Փանոսը։— Էդ գավազանով տուր ի՛մ գլխին, մեղավորը ես եմ, կովը՝ անլեզու-անխելք հայվան, ի՞նչ իմանար, թե քեզ նմանի արտն է ոտի տակ տալիս։

Արտատերը ետ-ետ գնաց կովին մոտեցող Փանոսի առաջ։ Նա այնպես էր մեղմացել, ասես քիչ առաջվա գազազած, անողորմ ծեծողը չէր։

Փանոսը մի ձեռքով բռնեց կովի պոչը, հետույքը բարձրացրեց, ոտքերն ուղղեց։ Սակայն առջևի ոտքերը չէին ուղղվում։

— Դե՛, բռնիր, բարձրացնե՛նք,— դղրդաց նա սրտակոտոր։— Հը՞, ի՞նչ ես էշացել։

Արտատերը վախվորած մոտեցավ, կովի կարճ պոչերից բռնած օգնեց, բարձրացրին։ Խեղճ անասունը ոտքերը չռած կանգնեց, և ծեծված մարմինը սարսռում, դողում էր։

— Բա սա հայ մարդու գո՞րծ էր, որ դու բռնեցիր,— կշտամբեց Փանոսը։

Արտատերն այդ վերաբերմունքից շշմած կանգնել էր ու շատ էլ չէր հասկանում, թե այդ հսկան ինչո՞ւ այդպես խեղճ է։

Իսկ Փանոսը, որ սպասում էր՝ կովն ուշքի գա, նոր միայն քշի, խոսեց ինքն իր հետ.

— Աստված որ ստեղծում է մարդուն, մեջն էլ բարու սերմն է գցում։ Հետո դևը գալիս, իր սև գործն է անում. այդ բարու կողքին դնում է չարի սերմը։ Եվ մարդը մեծանում է իր համար։ Թե որ ուժ է ունենում, իր մեջ խեղդում է չարությունը և ապրում աստծու պարգևած բարությամբ, թե չէ, չարությունը զորանում է, և ինքն է դառնում աստծու ստեղծածին ուղղություն տվողը։ Հասկացա՞ր։

Միայն այսքան բան։ Արտատերը, դազանակը դեպի արտի խորքը շպրտելով, հեռացավ։ Փանոսի երեխաները մոտեցան, սկսեցին շայել, գուրգուրել կովին։ Ականջների տակերն էին քորում, փորն ու կողերը։ Կովը փորձեց քայլել...

Կովը հազիվ էր շարժվում, և համագյուղացիներին կորցրեց Փանոսը։ Արաքսն անցան մի կերպ, իսկ Արմավիրի դաշտում անասունը պառկեց, գլուխը դրեց գետնին, ասաց. «Ես էլ տեղից շարժվողը չեմ»։

Փանոսն ստիպված եղավ մորթել կովը։ Մայրն ու կնիկն աղիողորմ լաց էին լինում։ Երեխաները պոռոշ արած սրտաճմլիկ դիտում էին, թե ինչպիսի ջղաձիգ, ուժեղ շարժումներ է անում մորթվող անասունը, որը դրանից առաջ երևի արդեն հրաժեշտ էր տվել աշխարհին։

Եվ հիմա Փանոսի դիմաց արտատերն է, որը գաղթական հե-

ղեղի բերանն ընկած գնում է, կամ, ինչպես ինքն էր ասել՝ ջհանդամվում է։

— Բոնի՛ր,— բաժակը մեկնած՝ առաջարկեց Փանոսը։— Մեծ աշխարհ է, ամեն ինչ կպատահի։ Սարն է, որ սարին չի հանդիպում...

— Չէ՛, ապեր, ես... խըմ-խմող չեմ,— կակազեց արտատերը։— Ասի, տեսնեմ՝ ինչ է պատահել...

— Է՜, ի՜նչ պիտի պատահի. թուրքը գալիս է, մենք էլ առջևից փախած գնում ենք։ Փախեփախին չամիչ չեն բաժանում...

— Թուրքի երեսը սև մնա,— կնկավարի անիծեց արտատերը,— որ մեզ սևերես է անում...

— Ա՛ռ, խմի՛ր,— երեսը նրանից դարձնելով՝ ստիպեց Փանոսը։— Մաղթիր, որ սրանից վատը չտեսնենք...

— Ա սուրբ երկնային, դու մեր հարային հասնես, սրանից էլ նեղ օր չի լինի,— երեսը դեպի երկինք դարձրած՝ խնդրեց արտատերը և ամոթից հեռացավ, խառնվեց ամբոխին։

* *
*

Արաքսի վրայից դեպի հյուսիս էին անցել շուրջ կես միլիոն գաղթականներ։ Նրանց փրկելու, տեղավորելու և պահելու հոգսերին լծվեցին 1917-ին ստեղծված Ազգային խորհուրդները, Ապահովության խորհուրդները, հասարակական-բարեգործական բազմատեսակ կազմակերպություններ, որոնք ամեն տեղ էին, բոլոր այն վայրերում, ուր հայեր էին ապրում, ուր գաղթականներ էին կուտակվում։ Կազմակերպությունները շատ, նրանց տված օգուտն այնքան քիչ, որ ավազի վրայով անցնող առվի պես ծծվում-կորչում էր՝ առանց նպատակին հասնելու։

Ճանապարհներին հյուծված սովալլուկ խլյակները, որոնք այլևս ուժ չունեին շարժվելու, կուտակվել էին Վաղարշապատում, Մայր տաճարի բակում ու շրջականներում։ Ցնցոտիների ու քըրձերի մեջ կուչ եկած խմբերը սփռվել էին նաև մերձակա ճանապարհների եզրերին, էջմիածնի դաշտում։ Դեռ կանաչ արտերը ոչնչանում էին ոտքի վրա։ Բանջարանոցները մերկացել էին, և մարդկային քաղցին կեր էր դառնում դաշտի կանաչ խոտը, որ չարիք է սովահարի համար։

Էջմիածնի հոգևորականներն ու ճեմարանականները շրջում էին դաշտերում և գաղթական անճարներին խորհուրդ էին տալիս, բացատրում ու զգուշացնում, որ չփորձեն կանաչով սպանել իրենց քաղցը։ Փորձողները սևանում, ուռչում ու մեռնում էին, սակայն դա էլ ահազանգ չէր դառնում ուրիշների համար։

Հետո ստիպված եղան տաք կերակրի այն համեստ բաժինները, որ բաշխում էին միայն Մայր տաճարի բակում, տանել նաև դաշտ։ Գայթակղիչ այս արարողությունը ղեկավարում էին հոգևորականները, և այդ սակավապետ արարածներն անգամ զարմանում էին, թե մարդիկ ինչպես պիտի ապրեն իրենց տվածով, որ եթե կերակուր է, ապա միայն բույրով։

Կերաբաշխ մի թափորի գլխավորն էր եպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը՝ Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսուչ-տնօրենն ու անվանի հայագետը, որն իր օգնականների բաժանած սննդի պակասը ջանում էր լրացնել սրտապարար, մխիթարական խոսքով և սրտագին աղոթքներ էր կարդում, հուսադրիչ խոսքեր էր ասում, ժամանակավոր ցավերն ու տառապանքները հաղթահարելու ոգի ներշնչում։ Փոքրամարմին, նիհար վանականի խոսքը լսում էին մի ինքնամոռաց երանությամբ։ Նրա բարի, միշտ մի փոքր կկոցած աչքերից կարծես հույս ու հավատ էին փոխանցվում ունկնդիրներին, և նրանք իրենց դաժան բախտի դեմ պայքարելիս Գարեգին սրբազանի խոսքին այնպես էին սպասում, ինչպես որ խղճուկ ճաշաբաժնին։

Մի անգամ էլ, երբ սրբազանն ավարտել էր իր հոգեշահ արարողությունը, նրան մոտեցավ պառավ մի կին և, ցույց տալով հեռու նստած մեկ ուրիշ աղետյալի, խնդրեց փրկել նրա կյանքը։

— Խեղճ է,— ասաց,— չի ուտում, ջուր էլ չի խմում, կմեռնի ոտքի վրա։ Թե զոռով մի բան տալիս եմ, ես եմ տալիս։ Ես էլ էսօր կամ, վաղը չեմ լինի. տեսնո՞ւմ ես վիճակս։

Իսկապես, հազիվ էր ոտքի վրա կանգնում։ Խոսելիս յուրաքանչյուր բառից հետո աղմուկով շունչ էր առնում, որպեսզի արտաբերի հաջորդ բառը։

Բերեց, ծանոթացրեց նաև հովանավորյալին։ Դատելով երեսկահատից՝ սրբազանը որոշեց, որ սա դեռատի հարս է, գուցե ունեցել է մեկ-երկու երեխա։ Մնացել են կաշին ու ոսկորը։ Սակայն այդքանի մեջ էլ դեռ շատ բան էր պահպանվում գեղջկական այն պարզ գեղեցկությունից, որն ավերվել էր քաղցից ու

հոգեկան ցնցումներից։ Հիմա նստած լինի, կանգնած թե քայլելիս, հայացքը հեռուներին հառած մունջ է։ Եթե դեմը կանգնած է մեկնումեկը, միևնույն է, այնպես է նայում, ասես դիմացինի միջով տեսնում է միայն իր համար հեռվում գտնվողը։ Խենթություն չկար այդ հայացքի մեջ։ Խենթերն ուրիշ տեսակ են լինում։ Նրանց աչքերի մեջ դիվային կրակ է վառվում։ Նրանց արյան ամբեն բջիջը խլրտում է, ցնցվում։ Իսկ սա շնչող քար է, շարժվող քար, կամ էլ կին, որ քարացել է հոգեկան անտանելի ցավից։

Եվ պառավ կինը սրբազանին պահ տվեց տխուր մի պատմություն, որը՝ ինչքան էլ ընդհանրական այն օրերի արևմտահայ կյանքի համար, իրեն թվում էր բացառիկ, որովհետև ուրիշ գյուղեր ու ավաններ իրենցից ելած-փախածների հետ կապրեն, կվերընձյուղեն, իսկ իրենց Շենիկը...

— Էս խեղճը պիտի ապրի՛, սրբազան, պիտի ապրի՛... Մեր շեն Շենիկից գոնե մեկը պիտի մնա՞ աշխարհում։

Կարսի ու Սարիղամիշի կողմերում Շենիկի պես հարուստ ու գեղեցիկ շեն չկար։ Նրա դաշտերով ու այգիներով անցնող օտարականն ա՛խ կքաշեր։ Հյուր եկողն էլ չէր ուզի թողնել-գնալ։ Գյուղը հա՛ մեծանում էր ու շենանում։ Հին-հին ժամանակներից մնացած եկեղեցու կողքին դպրոց էլ ուներ։ Եվ դպրոցում դաս էր տալիս Պոլսից եկած վարժապետը...

Սակայն վերջին տասը տարում թուրք ընտանիքներ եկան, բնակություն հաստատեցին Շենիկում։ Առաջին այդպիսի ընտանիքի տերը ներկայացել էր որպես իր ցեղակիցներից հալածված, որովհետև, իբր, բարեկամություն է ունեցել հայերի հետ։ Պոլսեցի վարժապետն զգուշացրեց, որ չընդունեն։ Ասաց. «Մի՛ հավատացեք, գլխներիդ չարիք է դառնալու»։ Քիչ մնաց քարկոծեն վարժապետին. ո՞նց չընդունենք հալածականին։ Մեր հավատից չէ, հո մեր կերպարա՞նքն ունի։ Մեր լեզվով չի խոսում, հո նույն հա՛ցն է ուտում և նույն ջրի՛ց է խմում։

Եկավ երկրորդ ընտանիքը, դարձյալ ընդունեցին սիրով։ Չընդունեին էլ, չէր լինի, քանի որ սա ներկայացել էր իբրև առաջինի ազգականը, որ, իբր, չի կարողանում ապրել իր մերձավոր ազգականից բաժան։

Երկրորդին հետևեց երրորդը։

Չորրորդ ու հինգերորդ ընտանիքները միասին եկան։

Հետո եկածների հաշիվը կորցրին շենիկցիները։ Սակայն դեռ ապրում էին հաշտ ու համերաշխ, փոխուտուրս էին անում։ Մինչև որ լուր եկավ, թե թուրքերն էրզրումն առել են և շարժվում են դեպի հյուսիս։ Այս լուրից հետո գյուղի թուրքերը ծածկամիտ ու ինքնափակ դարձան։ Խույս էին տալիս հայերի հետ հանդիպելուց, անսովոր հյուրեր էին ընդունում։

Եվ մի գիշեր նրանք հարձակվեցին հայերի վրա։

«Հարձակվեցին» այն բառը չէ։ Նրանք պարզապես մտան հայերի տները և նախապես մշակված անթերի ծրագրով կոտորեցին բոլորին։ Այդ ծրագրի համաձայն թուրքերի ամեն մի ընտանիք գիտեր, թե ո՞ր հայկական ընտանիքն է ոչնչացնելու, որպեսզի հետո էլ տեր դառնա նրա ունեցվածքին։ Եվ որովհետև այսպիսի բաժանումը նախապես էր կատարված եղել, թուրքերը հետևել էին, որպեսզի իրենց զոհերից ոչ մեկը չփրկվի արյան գիշերից։

Գյուղի դարբին Համբարձումի տունն էին մտել երկու երիտասարդ թուրքեր, որ եղբայրներ էին, և մեծը գնալ-գալ ուներ դարբնի մոտ։ Մի անգամ դարբնոցում տեսել էր նրա մանկամարդ կնոջը, կապվել խենթի պես, այլևս հանգիստ չէր տալիս։ Դարանում էր աղբյուրի ճանապարհին, սեր էր բացատրում։ «Ես քեզ տեսնելուց հետո էլ քուն ու հանգիստ չունեմ,— դողալով ասել էր թուրքը։— Դու իմ կինը պիտի դառնաս։ Ես սպանելու եմ քո մարդուն»։

Հայկանուշն, ամոթխած ու պարկեշտ հարս, ոչինչ չէր ասում տնեցիներին. ամուսնո՛ւն, որ թուրքին դաս կտար իր մուրճից ավելի ազդեցիկ բռունցքով (ասում են՝ մի անգամ բռունցքով տվել էր հարկահանի ուսին, և սրա ձեռքը հոդախախտ էր եղել), կպատմեր սկեսրոջը, որ վեր կկենար, կովի կգնար անպատկառ թուրքի տունը... Միայն թե այլևս աղբյուրը չէր գնում, և այդ էլ տնեցիներն սկսեցին բացատրել յուրովի. ծոցվոր էր, երկուհոգիս, թող պահի՞ իրեն։ Եվ տան ջուրը հոքուր Մանուշակն էր բերում, միայնակ ու հիվանդոտ մի կին, որ վերջին ժամանակները եկել, իրենց տանն էր ապրում և իր սեփական տունը ծախել էր թուրքին։

Հայկանուշը «սիրահար» թուրքի անունն էլ չգիտեր։ Գիշերվա կեսին, քնաթաթախ, իրենց տանը տեսնելով նրա չարագույժ

ուրվականը՝ մտածեց, որ եկել է ամուսնուն սպանելու, և իսկույն վերմակը քաշեց, ծածկեց ամուսնու գլուխը։ Թուրքը զինված էր երկու ատրճանակով։ Կռացավ, և մինչև հսկա դարբինը տեղից կշարժվեր, ատրճանակի գնդակներով վերմակը կարեց նրա վրա։

Դա գյուղում պայթած առաջին կրակոցն էր, որին հետևեցին ուրիշները՝ վերին թաղում, ներքին թաղում, ամենուրեք, ամեն տան ու դռան։ Եվ մի ժամվա մեջ Շենիկը դարձավ իր բնիկ հայերի գերեզմանոցը։

Երկու թուրք եղբայրները Հայկանուշի աչքերի դեմ կոտորեցին նրա սկեսրոջն ու զույգ տղաներին։ Հայկանուշին կապոտել էին պարանով և նրա աչքերի առաջ նախ սկեսրոջը մորթեցին, ապա զույգ տղաներին, որոնք ճիչ ու աղաղակով թափվել էին գլխատված տատի վրա և դեռ տեղյակ չէին իրենց հոր վիճակին։ Միայն «հոքուրն» էր աննկատ մնացել բակի հացատանը, որ նրա բնակարանն էր նաև։

Թուրք եղբայրները, շատ կարևոր առաջադրանքը հաջողությամբ իրականացրած մարդկանց նման, իրար նայեցին, ժպտացին, և «սիրահարը» գլխով հասկացրեց մյուսին, որ գնա։ Ապա մենակ մնալով՝ Հայկանուշի կապերը բաց թողեց։

— Ես ասել էի, չէ՞, որ իմը պիտի լինես,— շշնջաց նա մի այնպիսի հանգստությամբ, կարծես ոչինչ էլ չէր կատարվել, և ինքը դարձյալ ջրի ճամփի այն սիրավառ երիտասարդն էր, սիրածի համար պատրաստ կատարելու աշխարհի մեծագույն հերոսությունը։

Փորձեց գրկել Հայկանուշին, և սա, որ քարացած, անուժ նստած էր մահճակալի եզրին, շանթահար ծկլթաց ու վեր թռավ։ Թուրքը ձեռքերի արյունը մաքրեց պատահած շոր ու փալասներով՝ մթան մեջ հայացքը չհեռացնելով իր զոհից, որը, մեկ անգամ կենդանության նշան ցույց տալուց հետո, նորից նույն ապշածն ու քարացածն էր մնում։

Թուրքը կռացավ նրա առաջ, գրկեց ծնկները, փորձեց գուրգուրել... և Հայկանուշը հանկարծ յեշու առավ։

— Այստեղ անհարմար է,— ոչ իր ձայնով, խռպոտ առաց նա և վեր կացավ, հարբածի պես օրորվելով գնաց դեպի դուրս։

Թուրքը հետևեց նրան և մտածեց, որ իսկապես այդ կնոջ համար հիմա դժվար կլինի իր հարազատների կողքին տրվել ուրիշի, թեկուզ և այդ ուրիշն իր ապագա ամուսինը լինի։

Գյուղում այլևս կրակոցի ձայն չկար։ Սակայն իրարանցումը շարունակվում էր։ Թուրքը մտածեց, որ իր ցեղակիցներն արդեն գործն ավարտել են և հիմա տեղավորվում են հայերի տներում կամ կողոպուտով են զբաղված։ Իսկ ինքն այլևս ոչ մի անելիք չունի։ Հենց այստեղ էլ կմնա։ Եղբորն ասել էր. «Մեր տունը քեզ, ես էլ տեր կդառնամ այս խանումին ու իր տանը»։

Բակի ցախանոցում խոտ կար փռած։ Երբ հորթը շատ էր փոքր, այդ խոտի վրա էին պահում։ Հիմա երդիկից լուսնի շողերն ընկել էին կողքի պատին։ Հայկանուշը գիշերանոցով նստեց խոտին։ Մնկները գրկեց զույգ ձեռքով։ Թուրքն անպուսպ հարձակվեց նրա վրա։ Նա ետ հրեց.

— Հանվի՛ր... չենք փախչում։

Հանվեց հեալով և դողից շորերն աջ ու ձախ շպրտտելով։

Երբ մոտեցավ, ատամները զարկվում էին իրար։

— Այդպես դու չես կարող, թող ե՛ս,— նրան հանգստացրեց Հայկանուշը, դողացող ձեռքերը տարավ դեպի նրա շեքամեջը և երկու ափով սեղմեց՝ ինչքան ուժ ուներ։

Թուրքը «վա՜յ, նենե» կանչեց, ուշաթափ ընկավ։ Հայկանուշը դողահար վեր կացավ, ձեռքերը քսեց խոտերին։ Ցախատան անկյունից վերցրեց կացինը և, առանց վայրկյան կորցնելու, վրա բերեց ուղիղ Թուրքի ճակատին...

«Հոքուրը» նրան գտել էր մերկանդամ սատկած Թուրքից հեռու, ցախատան դռան մոտ երեսնիվայր ընկած մոնչալիս։ Ջուր ցանեց վրան, ուսերը ցնցելով, այտերը տրորելով մի կերպ ուշքի բերեց, և լուսադեմի աղջամուղջի միջով երկուսով փախան գյուղից։

* *
*

Երրորդ օրն էր, ինչ մանրակաթիլ, միապաղաղ անձրև էր տեղում գաղթականների հոգնած, հյուծված ու զանգվածներից շարքերի վրա։ Անանցանելի ցեխ էր ճանապարհներին, որոնցով շարժվում էին միայն ծանրաբեռ սայլերն ու գրաստները։ Մարդկային հեղեղը հոսում էր ճամփեզրերի կանաչ հողակտորներով։ Հոսում էր ծույլ-ծույլ, արդեն ամեն ինչի հանդեպ անտարբեր։ Եվ եթե պղտոր սելավի պես տարերայնորեն շարժվող այդ անձև մարմինը ժամանակ առ ժամանակ ցույց էր տալիս կենդանու-

թյան նշաններ, այդ էլ պատահում էր հույժ անսովոր պահերին. երբ շարքի մեջ ընկնող-մեռնող էր լինում, երբ ջահել մի կնոջ խելքին փչում էր ծնկել ճամփեզրի թփի տակ ու ծննդաբերել, կամ հեղեղին խառնվում էին տեղահանվող բնակչության նոր խմբեր...

Հանգիստ էին առնում այնտեղ, ուր գիշերը վրա էր հասնում։ Բախտավոր էին նրանք, ովքեր ցախ ու փայտ էին գտնում, չոր խոտ կամ չուլի կտոր՝ գետնին փռելու համար, որպեսզի հոգնատանջ մարմինները չճլիսպան ցեխի ու ջրի մեջ։ Գիշերը նոսրացնում էր շարժուն խլյակները։ Քանի՞-քանի՞ն անշարժ մնացին գիշերային քնից հետո։ Բախտավոր էին նրանք, որ մեռնելիս կողքին ունեցել էին հարազատ մի շունչ. հողին էին հանձնվում լուսաբացին։ Ի՞նչ փույթ, թե արտասուք չէր թափվում այդօրինակ մեռելների վրա...

Գիշերներին նոսրացած շարքերը ցերեկն էին համալրվում, երբ հեղեղն իր հետ էր առնում նոր բնակավայրերից տեղահանվածներին։

Եվ այսպես, մեկ անգամ ծայր էր առել հեղեղը, շարժվում էր գետնատարած։ Ծայրը հասել էր անորոշ ու անտես հեռուն, իսկ վերջը չէր երևում, չկար, չէր լինելու։

Արաքսի ափին, Մարգարայի կամուրջի վրա խցանվել էր անցումը։ Գետը վարարել էր, և կամուրջը միակ տեղն էր, որով կարելի էր փրկվել։ Իսկ թուրքի սրածությունից փախչողների համար այն օրերին փրկություն էր նշանակում Արաքսն անցնելը։ Չնայած Արաքսն անցածներն այդ կարծիքին չէին այլևս, որովհետև այստեղ էլ թուրքի սրի տեղ անպաշտպան ու անճար գաղթականներին սովն ու ցավերն էին հնձում։

Գաղթի կարավանի մեջ մեկն իր գերդաստանի ամբողջ հարստությունը բեռնել էր մի ավանակի, բեռան վրա էլ խուրջինն էր գցել՝ հակների մեջ երեխաներ, որոնք անհոգ ծիծաղում էին շրջապատի վրա, ուրախ բացականչություններ անում, կարծես ոչ թե գաղթի դժբախտ ճանապարհի վրա էին, այլ ուխտի էին գնում Մշո սուլթան սուրբ Կարապետ և այնտեղ մի ամբողջ շաբաթ ուրախ տոնախմբություններ էին մասնակցելու։

Արևոտ օր էր, և անձրև էր գալիս։ Դաշտերի համատարած կանաչությունից մինչև երկնքի անհուն կապույտը, անձրևափոշին շաղշողում էր փշրված ադամանդի կայծկլտումներով։ Ճամփ-

եղբերի ծառերն ու թփերը ծիրանագույնի ու վառ-դեղին կանաչի խաղեր էին անում։ Թևավոր երգիչների բազմաձայն ժխորից գժվել էին մանր ու մեծ առուները, պղտորած փախչում էին գեպի Արաքսի շամբուտները։

Արևի երեսն ստվերող ոչ մի ամպ չկար, և անհասկանալի էր, թե որտեղից էր թափվում այդ անվերջանալի թվացող անձրևը։

Գաղթականների խումբը շարժվում էր անձրևի տակ։ Ո՞րը ջվալն էր վեղարաձև առել գլխին, ո՞րը՝ կապերտի կտոր կամ խուրջինի հակ, և ոչ ոք չէր տրտնջում երկնքի տարօրինակ պաղից։ Նույնիսկ հաճելի էր այդպես։ Բայց ո՞վ էր մտածում հաճելիի կամ տհաճի մասին։ Մի պառավ կանգնեց, թաց գլխաշորը ետ գցելով՝ նայեց դեպի վեր, իր համար լսելի ասաց.

— Գել է ցնկնել։— Հետո տեսավ դիմացը մի թևով Արագածի փեշերին հենված կանաչ-կարմիրը, որի մյուս թևը գնում անէանում էր Եղվարդի դաշտի վրա, և մտածեց, թե ահա այս դժբախտ ժողովուրդը կգնա-կանցնի այդ յոթներանգ կամարի տակով, ու հետո կմեղմանա աստծու բարկությունը։ Երեսը խաչակնքեց ոսկրացած մատներով.— Զորությունդ շա՞տ, քեզ վրա է մեր հույսը։

Անձրևը մեղմացավ, և առավել պայծառացավ արևը, ճանապարհին այս ու այն բլրի վրա գծվեցին ծիածաններ, որոնք ահա կամար-կամար ճառագած Արագածոտն գավառում՝ թվում էին բազմախորան մի նկար, բազմակամար մի կամուրջ, որի հովանու ներքո առաջ էր շարժվում հայոց անպաշտպան, աստծուց մոռացված հոտը։

Անձրևը դարձավ անձրևափոշի, ապա այս փոշին էլ իջավ երկրի վրա, խառնվեց երկրի խաղացկուն գույներին։ Օդը տաքացավ։ Ճանապարհին, ասես միանդամից ու հանկարծակի, հայտնվեցին անձրևաորդերի ու խխունջների վտառները, որոնք այնքան դանդաղ էին շարժվում, որ ցեխին կառչել-մնացել էին։ Խխունջները, մանր ու համառ իշուկների նման, մեջքներին տանում էին իրենց բեռները։ Եվ գաղթականները նրանց ոտքի տակ չտալու համար ծռեցին ճանապարհը։

Հոգնած, անձրևաթաց ու դժբախտ շարքերի համար դժվար էր քայլել անհարթ տեղերով։ Սակայն ելան, հեռացան բանուկ ճանապարհից, քայլեցին լքված-անտեր մնացած խոտհարքներով,

մինչև խխունջ-իշուկներն իրենց ետանձրևյա զբոսանքը կատարին ու քաշվեն աչքից հեռու կացարանները։ «Աստծու ստեղծածներն են, թող ապրեն իրենց համար»,— մտածում էին նույն աստծու ստեղծած բանական արարածները, որոնք բնավեր ու հալածական գնում էին՝ իրենք էլ չիմանալով թե ուր։

* *
*

Իրիկնանում էր։ Արագածի թիկունքն էր անցնում արևը և ուր որ է վերջին շողերը պիտի հավաքեր Արարատի սպիտակափառ գագաթներից։ Ձորերն ու փոսորակները լցվում էին աղջամուղջով։ Արարատյան դաշտն այդ ժամին սովորաբար սկսում էր ետօրյա իր խոնջեանքը։ Բայց այդօր հանգիստ չկար. դաշտը եռում էր գաղթական խլյակների անկանոն երթից, տեղափոխվող անասունների խառնաձայն աղմուկից։

Գարեգին սրբազանը մանր աչքերը կկոցած՝ նայում էր դեպի Արարատը և նրանից հյուսիս ընկած տափարակը, ուր գաղթական խմբերն էին շարժվում։ Իրիկնամուժին արդեն դժվար էր նրանց մեջ տարբերակել մարդկանց, անասուններին... Պարզապես նշմարվում էին բաց տարածություններում շարժվող մութ կարկատաններ, որոնց աղմուկն էր միայն մատնում իրենց ինչ լինելը։

Ծանր, անմխիթարելի ապրումներ էին պաշարել սրբազանին, որի աչքերը խոնավ կսկծում էին, սիրտը լիքն էր քարացած հառաչանքներով, և միայն միտքն էր, որ թևածում էր այս երկրի հին ու նոր պատմության մռայլ քառուղիներում։ Նա կարծես այդ մտքի կայծակնաշառափի ներքո տեսնում էր ուրիշ մի այդպիսի երթ, որ տեղի էր ունեցել շատ հազարամյակներ առաջ։ Անիծյալ աշխարհը կործանող ջրհեղեղից հետո այս փառահեղ Արարատներն էին, որ իրենց ուսերին առան Նոյան տապանը՝ մարդկային ցեղի, բուսական ու կենդանական աշխարհների նորոգման աստվածապարգև փրկանավը։ Հետո տապանից ելնելով՝ Արարատների փեշերով դաշտ իջան Նոյան տոհմի պայազատները, անասունները, գազաններն ու թռչունները... Եվ հետո էլ ահա այսպես նրանք շարժվեցին, սփռվեցին չորս կողմ, գնացին նորոգելու աշխարհն ու մարդկությունը...

Իսկ հիմա նույն ճամփեքով, նույն Արարատների փեշերը ոտքի տակ տալով աշխատասեր ու բարեպաշտ մի ժողովուրդ, ինա-

վեր ու տեղահան, գնում է մեռնելու անորոշ հեռուներում՝ իր եղբայրակիցների աչքի առաջ, աշխարհի չարի ու բարվո արարիչ աստծու թողտվությամբ։

Սրբազանի սիրտը ծանրացել էր քարացած հառաչանքներով, իր պաշտած աստծու դեմ սլոութիկալիք հարցերով ու բողոքով։ Նա ուզում էր ցավից մոնչալ ու իր հեկեկոցով լցնել Արարատյան դաշտը, որ քանդված մրջնանոցի էր նման։ Ուզում էր ցավակցության կանչել Արարատ-Մասիսներին, երբ ցավագնորեն տեսավ, որ մշուշոտված աչքերի առաջ տարուբերվում են նրանք, շարժվում են իրիկնադեմի մուժ ու մշուշի մեջ։ Մեկ էլ հանկարծ անձրև սկսվեց, մեծակաթիլ ու տաք-տաք անձրև, որ սրբազանին թվաց արտասուք, տեղաշարժ երերացող, հայրաբար մորմոքացող Արարատի արտասուքը՝ հեղված իր տարաբախտ զավակների համար։

* *
*

Թիֆլիս հասած հայ գաղթականները փողոցներն ու հրապարակները լցված՝ իրենց սահմռկեցուցիչ երևույթով ամենատարբեր ազդեցություններ էին գործում տեղացիների վրա։ Հասարակ, աշխատավոր մարդիկ շատ էին կարեկից և ձեռքից եկած օգնությունն էին հասցնում՝ հաց ու ջուր տալով, հաճախ իրենց մառաններում ու ցախատներում ապաստանելով այն ծայրաստիճան անճարներին, որոնք չէին կարող շարունակել ճանապարհը դեպի հյուսիս, իսկ քաղաքի փողոցներն արդեն գերեզման էին դարձել քանի՜-քանի՜ հարյուրների համար։ Հարուստ կամ ունևոր Թիֆլիսեցու աչքին հոգեառների բանակ էր երևում գաղթականության ալիք տվող ծովը, որովհետև Հայոց ազգային խորհրդի ու Ապահովության խորհրդի ներկայացուցիչներն ամեն օր նրանց էին դիմում՝ օգնություն հասցնելու զանազան առաջարկներով, հաճախ էլ այդ օգնությունն ապահովում կտրական սպառնալիքներով, որոնք, ինչպես հայտնի է, ունեին անհապաղ իրականանալիք վճռի ուժ ու զորություն։ Անդրկովկասյան սեյմն ու նոր կառավարությունն էլ իրենց շուրջն էին հավաքել մուսավաթական գործիչների մի ահռելի քանակություն, որը երբեմն չէր թաքցնում իր գոհունակությունը։ Ասում են՝ նորաթուխ Սեյմի

հենց առաջին նիստում գաղթականության հոգսերը բավարարելու մասին հայ մի ճառախոսի առաջարկությունը «զարաֆաթի» է գցել մուսավաթական առաջնորդ Ռասուլզադեն՝ ասելով.

— Թող մնային իրենց տունուտեղերում, դրանց ո՞վ է հրավիրել։ Այսօր պատերազմ է, վաղն էլ խաղաղություն կլինի։ Ի՞նչ է պատահել, որ քաղցած ու տկլոր թափվել են մեզ վրա։ Դրանք վատ օրինակ են տալիս մեր ազգերին։ Վաղը-մյուս օրն էլ կռիվն այստեղ հասնի, տեղացիները վեր կկենան ու գլխապատառ կփախչեն։

Իսկ երբ Գանձակի ու Ղարաբաղի նահանգներից եկած ստույգ լուրերը հաստատեցին, որ այդ կողմերի հայերը չեն ընդունում մուսավաթի գերիշխանությունը և համառորեն պայքարում են քաղաքական անկախության համար, այն ժամանակ Ռասուլզադեի համախոհները գաղթական խմբերի աղետյալ վիճակին նայում էին մի թերատ բավականությամբ։ Ատամները կրճտացնելով նրանք մտածում էին, թե ինչո՞ւ իրենց հավատակիցները հանդուրժել են, որ դրանք այդպես ողջ-ողջ լքեն իրենց բնակավայրերը։

Գաղթականների գետն իր տարտամ հոսանքով բռնել էր Կովկասի բոլոր անկյունները և դեռ կանգ չէր առնում։ Արարատյան դաշտում, Լոռում ու Գանձակում ապահովություն չկար։ Թուրքի վտանգը նրանց հետապնդում էր այդ շրջաններում։ Եվ տեղացիների դժկամությունն էլ մյուս կողմից էր հալածում։ Երկփեղկվել էր նույն ժողովուրդը, բաժանվել երկու մասի. մեկը գաղթականությունն էր, որ տնավեր ու անհույս գնում էր անորոշ ուղղությամբ, մյուսը՝ տեղաբնիկները, որ թուրքավարի երլական էին կոչվում, գաղթականությունից տեսնում էին լոկ զրկանքներ ու նոր հոգսեր։ Եվ այս երկփեղկումն ամենուր էր, գյուղում ու քաղաքում, հասարակական կազմակերպություններում, նույնիսկ կուսակցական կյանքում։ Արևմտահայ դաշնակցականները, Հայաստանը լքած, Թիֆլիսում իրենց բյուրոն էին ստեղծել և իրենց արևելահայ կուսակիցների մասին խոսում ու գրում էին այնպիսի բաներ, որ միայն հակառակորդներն իրենց թույլ կտային։

Ո՞վ էր միավորելու ժողովրդին։ Ո՞վ էր նրա մի հատվածի ցավը բաժանելու մյուսի վրա, որ թեթևանա, որ հնարավոր լինի տանել ու դիմանալ։

Գնում էին գաղթականները՝ թուրքից հալածված, ազգակից-

ներից դժգոհ, և Թիֆլիսն ու Վրաստանի հայաբնակ շրջաններն էլ վերջին կայաններ չէին նրանց համար։ Մեծ լեռնաշղթայից այն կողմ հույսն այլևս նրանց չէր ժպտում հյուսիսափայլի նման։ Ինգուշների Ազգային խորհրդի նախագահ Զորագինը, երևի հայասեր կամ պարզապես մարդասեր մի գործիչ, մայիսի երկրորդ կեսին հեռագիրը հեռագրի հետևից հղելով Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ղեկավարներին՝ հաղորդում էր, որ կարգավորված է գաղթականների երթը Ռազմավիրական ճանապարհով, սակայն խնդրում էր դադարեցնել, որովհետև ավազակախմբերի հարձակումների կասեցումն արդեն դարձել է անհնար։ Նույն օրերին Գաղթականական գործի լիազոր Հայկ Բժշկյանը Վլադիկավկազից հեռագրով հայտնում էր, որ Թիֆլիսից մեկնած գաղթականներին Թերեքի շրջանում տեղաբաշխելու և տարափոխիկ հիվանդություններից փրկելու գործը կարգավորվում է։ Սակայն խնդրում էր նաև՝ օրական 400 հոգուց ավել չուղարկել։

Այսպես էր տարտղնվում մի ժողովուրդ, որը հաղարամյակներ անընդմեջ տերն էր եղել իր երկրի ու իր բախտի, բայց ահա բնավեր ցրվում էր գլուխը կորցրած։

Զորավար Անդրանիկը գնաց, Թիֆլիսի ժողովներից մեկում խնդրեց հասարակ օգնություն՝ գեղեցիկ ու դատարկ խոսքերի փոխարեն։ Եվ երբ գահլիճն ապշած ու անտարբեր մնաց օգնության աղաղակի հանդեպ, դառնացած զորավարը առանց խնայելու հայոց նորօրյա փափկասուն տիկնանց քնքուշ լսելիքը, զարմանահրաշ հիշողություններով նախշեց նրանց յոթ պորտը, վերադարձավ ճակատ։

Թիֆլիսի հայոց Ազգային խորհրդի ու ազգային կոչված, սակայն ազգի բնաշխարհից հեռու ծվարած, ականջը դինջ, սիրտն անտագնապ գոյություն քարշ տվող կազմակերպությունների շդադարող, ջրիկ նիստերում Արամ Մանուկյանը պահանջում էր, որ հայոց ազգային այդ կազմակերպությունները վեր կենան, գնան Հայաստան, ազգի ցավին դարման անեն։ Տեսան՝ այդ պահանջ-հորդորներից փրկություն չի լինելու, հենց իրեն՝ Արամ Մանուկյանին, ցույց տվին Երևանի ճամփան, ասացին՝ գնա՛, դու մենակ ու ինքնագլուխ տնօրինիր ազգի կյանքը։ Եվ, ի նշան, իբր թե, անսահմանափակ հարգանքի ու վստահության, նրան հռչակեցին դիկտատոր, Արարատյան երկրի արտակարգ ու ար-

ատասվոր կառավարիչ։ Ուղարկեցին՝ մտածելով, որ այդ Արամ Մանուկյանն իր պահանջներով այդպե՞ս միայն իրենց հանգիստ կթողնի, իսկ Երևանում էլ՝ կխրվի օրվա հոգսերի մեջ, և, այդպիսով, հա՞մ գլուխը կվերանա, հա՞մ գլխացավը։

Եվ Արամ Մանուկյանը՝ Արամ փաշան, Վանի պաշտպանության օրերից հայտնի գործիչը, Երևան հասնելով, այնտեղ գտավ համատարած մի խեղճություն, այդ խեղճության վրա բազմիշխանություն անող խմբերի ու խմբապետների տիրապետություն և ռազմաճակատից եկող ցավալի լուրեր։

* *
*

Համաշխարհային առաջին պատերազմը ծագել էր ոչ թե պատահաբար, անղեկ ուժերի բախումից, այլ խստորեն ծրագրված էր մեծ տերությունների կառավարողների կողմից, որոնցից յուրաքանչյուրն այդ արյան հեղեղի մեջ նախապես տեսնում էր իր անելիքը և ստանալիքի հեռանկարը։

Հայությունը, հատկապես նրա արևմտյան հատվածը, ծավալվող պատերազմի մեջ իր համար մխիթարական ոչինչ չէր կարող գտնել։ Կար մոտիկ անցյալի դառը փորձը, երբ ռուսական բանակների, նրանց շարքերում անձնազոհությամբ կռվող հայ զորահրամանատարների ու զորքերի հաղթական ճակատամարտերով փրկված Արևմտահայաստանը եվրոպական տերությունների խարդավանքներով վերստին դրեց թուրքական լծի տակ։ 1878-ի սկզբին հաղթանակած Ռուսաստանը, Պոլսի կողքի Սան-Ստեֆանո ավանում թելադրեց իր հաշտության պայմանագիրը, որի 16-րդ հոդվածով մեծ բարենորոգումներ պիտի կատարվեին արևմտահայկական նահանգներում։ Սակայն մի քանի ամիս անց եվրոպական տերությունները Սան-Ստեֆանոյի դաշնագիրը վերաքննության դրին Բեռլինի վեհաժողով կոչված խարդավարանում, և ցնծությամբ Եվրոպա գնացած հայ պատվիրակները տուն դարձան ոչ միայն ձեռնունայն, այլև ապագայի վրա ունեցած ամեն տեսակ հույսից զուրկ։ Անգլիայի ու մյուս նվաճող երկրների սադրանքներով հայկական 16-րդ հոդվածը շուտ եկավ. Բեռլինի պայմանագրում դարձավ 61, որով արևմտահայությունը

խլվում էր ռուսական ազդեցությունից և հանձնվում թուրքական կամայականությանը։

Եղան, իհարկե, լավատես քաղաքագետներ, որոնք միջազգային այս անազնիվ խաղի մեջ անգամ փորձեցին տեսնել մխիթարական մի բան. իբր, լավ է՝ գոնե հայկական հարցն այդպիսով մտավ միջազգային դիվանագիտական մթնոլորտը, և մեծ տերություններն սկսեցին զբաղվել նրանով։ Այս կարծիքի կողքին առկա էր նաև ժխտման ոգին, որի հեռատեսությունն ապացուցվեց հետագա տասնամյակներում։ Ժխտողներն ասում էին՝ թող չլինե՞ր այն օրը, երբ այդ հարցը նետվեց միջազգային ասպարեզ։ Բարոյական ո՛չ մի սրբություն չունեցող դիվանագետներն սկսեցին նրա հետ խաղալ՝ ամեն անգամ հարցի դիրքն ու լուծման սուտ հնարավորությունները հարմարեցնելով իրենց շահերին։ Իսկ Աբդուլ-Համիդը նրա լուծմանը ձեռնարկեց թուրքավարի. կոտորեց հայերին։

Առածներ են դարձել Բեռլինի վեհաժողովի հայկական պատվիրակության ղեկավար Մկրտիչ Խրիմյանի ասածները։ Արժանահիշատակ հոգևորականն ու խեղճ դիվանագետը կարծում էր՝ բավական է, որ գնա, Եվրոպայի առաջ լա, այսինքն՝ խոսի «լեզու մը, որ համաշխարհային է», որպեսզի Եվրոպան հասկանա հայի տառապանքը և տեղնուտեղը լուծի նրա ցավալի խնդիրը։ Իսկ երբ նրա տարած պատվիրակությանը մոտ էլ չթողին այն դռներին, որոնց ետևում հոլովվում ու կտցահարվում էր հայոց հարցը, նա իրեն վայել սրամտությամբ նկատեց, թե Բեռլինի վեհաժողովում հոգեճաշ հարիսա էին բաժանում, այն բաժին հասավ երկաթե շերեփներով ժամանածներին։ Ինքը գնացել էր լոկ թղթի կտորով. «այդ թղթի կտոր որչափ որ խոթեցի տաք հարիսայի մեջ, թուղթ թացացավ, լիկեցավ, մեջն ընկավ, ես ալ պարապ թողի, ետ եկա»։ Ետ գալուց հետո էր հասկացել, որ դիվանագիտական հարիսայի իրենց բաժնին միայն նրա՜նք են տիրանում, ովքեր ուժ ունեն և այդ ուժը գործադրելու խիզախություն։ Այս առթիվ էլ Խրիմյան Հայրիկն ասել է. «Մոռացա առաջուց մի քանի հատ զեյթունցի տանեի հետս. անոնք շերեփ ունեին, կարելի է ամանին տակեն, քովերեն բան մը փրցունեին»։

1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը և նրա հետևանքները դառը դաս դարձան արևմտահայության համար։ Այդ պատճառով էլ Առաջին համաշխարհային պատերազ-

մի նախօրեին դաշնակցականներն Էրզրումում հրավիրեցին հանդիսագումար, որը պիտի որոշեր, թե հայերն ի՞նչ դիրք բռնեն պայթելիք պատերազմում։ Դաշնակցության համագումարին ներկայացավ նաև երիտթուրքերի կառավարության պատգամախոսը և առաջարկեց միանալ գերմանաթուրքական կոալիցիային, կռվել ռուսների դեմ, ինչպես նաև ռուսական ինքնակալության դեմ ապստամբության հանել կովկասահայերին։ Այս «ծառայության» դիմաց թուրքն իր կառավարության անունից հայերին խոստանում էր ինքնավարության իրավունք Ռուսահայաստանի սահմաններում։

Համագումարը մերժեց թուրքի առաջարկը և որոշեց չեզոքություն պահպանել. թող կռվեն՝ ով ում հետ ուզում է, հայն այլևս ուրիշի համար թափելու արյուն չունի։

Երիտթուրքերը, սակայն, չէին հավատում այդ չեզոքությանը։ Ասենք, հավատալու կամ չհավատալու մեջ է՛լ չէր հարցը. նրանց բավական էր հենց այն, որ հայերը մերժել են իրենց առաջարկը։ Ուրեմն՝ իրենց հետ չեն, իրենց հե՞տ չեն, ուրեմն՝ իրենց կողքին, իրենց թիկունքում անհուսալի ու անհավատարիմ տա՞ր են, որին պետք է վնասազերծել, իսկ ավելի պարզ՝ ոչնչացնե՛լ։ Այս հարցում երիտթուրքերը նոր դիրք ու քաղաքականություն մշակելու կարիք չունեին։ Նրանք ժառանգել էին արյունոռուշտ սուլթան Համիդի քաղաքականությունը, որն իրենք էլ ժառանգություն պիտի թողնեին իրենց հաջորդին՝ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքին։

Պատերազմները խաղաքարտի վրա են դնում ժողովուրդների ճակատագրերը, երկրներ են վերաձևում ու վերաբաժանում։ Պատերազմներում մեծ ու հզոր տերությունները քայլում են դեպի իրենց ծավալապաշտական երազանքների իրական պատկերը, և փոքրերն ու անզորները, անմեղ թե մեղավոր, տրորվում են նրանց հաղթական երթերից։

Հայերը կարծում էին, թե այս անգամ վերջապես պետք է խախտվի դարերով հաստատված այս օրենքը, և իրենք պետք է օգտվեն մեծ տերությունների հաղթական երթից։ Չօգտվեն էլ, գոնե պիտի փրկվեն թուրքական բռնությունից ու ֆիզիկական ոչնչացման սպառնալիքից։ Չէ՞ որ Թուրքիայի դեմ ռազմերթի էին ելել աշխարհի հզորները՝ Ռուսաստանը, Անգլիան, Ֆրան-

սիան՝ իրենց մեծ ու փոքր արքայակներով։ Եվ, մանավանդ, այդ հզորները պատերազմի սկզբի՛ն իսկ հայոց դիվանագիտության անփորձ մանետիկներին կերակրել էին անուշ-անուշ խոստումներով։ Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարիչները պատմական Հայաստանն իր անհուն-անեզերք տարածություններով արդեն պարգևել էին նրանց միակ օրինական ու ավանդական տիրոջը՝ հայ ժողովրդին։ Եվ, ո՜վ երջանիկ միստություն, հայերը հավատում էին այդ խոստմանը. մտածում էին, որ արդեն ստանալիքն ստացել են, մնում է մի հասարակ ու ձևական բան՝ պատերազմով ձևակերպել ստացածը։

Ռուսական ցար Նիկոլայ Երկրորդը 1914 թվականի աշնանը ժամանել էր Էջմիածին։ Նա այնտեղ ուղիղ 15 րոպե, ամբողջ 15 րոպե՛, մտերիմ-խոստումնալից զրույց ունեցավ Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ։ Այդ զրույցի սկզբում հայոց հովվապետն իր հոտի անունից հավատարմության ու երախտագիտության խոսք ասաց մեծ տերության ինքնակալին և խնդրեց սկսված աշխարհամարտում քաղցր աչքով նայել ու հովանի լինել հայոց ազգին, որ երկու մասի էր բաժանված, ու մի մասը մեռնում էր մոլեռանդ թուրքերի ճիրաններում։ Այս պաղատագին խոսքին հետևեց պատասխան-խոստումը.

«Թագավոր.— Ձերդ սրբազնություն, կարող եմ Ձեզ հավատացնել, որ այն, ինչ Դուք եք ցանկանում, պիտի իրականանա, բայց պատերազմից հետո՛։ Ես լիովին հավատում եմ հայերի նվիրվածությանը և պիտի ասեմ, որ հայ ժողովրդին սպասում է լա՛վ ապագա։ Դուք ի՞նչ վայրերում կցանկանայիք անցկացնել նոր վարչությունը.

Կաթողիկոս.— Վեց վիլայեթներում (գալիս է թվարկումը) և Կիլիկիայում՝ մինչև Ալեքսանդրետ։ Երկաթգիծը Կաբսից կարելի է շարունակել և հասցնել մինչև Միջերկրական ծովը։

Թագավոր.— Ինչքա՞ն հայ կա այդ շրջաններում։ Շա՞տ են։

Կաթողիկոս.— Նոր սահմաններում բավականին հայ բնակչություն պիտի լինի, բայց երբ աստծու օգնությամբ և Ձերդ մեծափայլության կամքով ստեղծվի նոր, ազատ կառավարչությունը, Աբդուլ-Համիդի տիրապետության ազդեցությամբ և կոտորածների պատճառով հայրենիքը թողած շատ հայեր Ամերիկայից, Եգիպտոսից և ուրիշ տեղերից կվերադառնան իրենց հայրենիքը։

Թագավոր.— Ճի՛շտ է, ճի՛շտ է։

Կաթողիկոս.— Ձերդ մեծափայլություն, ես փոխարքային եմ հանձնել հավատարմագույն գրությունս սույն հարցի առթիվ, և փոխարքան խոստացել է զեկուցել։

Թագավոր.— Այո՛, ես հիմա կգնամ ու կկարդամ»։

Նիկոլայ թագավորը գնաց, իհարկե։ Բայց կարդա՞ց հայոց կաթողիկոսի հավատարմագույն գրությունը թե ոչ՝ աստծո՛ւն է հայտնի։ Հայոց ղեկավարները մտածում էին, թե կարդաց։ Ոչ միայն կարդաց, այլև իր դրածոներին էլ կարգադրեց երբեք չմոռանալ հայերի խնդրանքը, որովհետև դրածոները 1914-ին և 15-ի սկզբին անընդհատ կրկնում էին իրենց խոստումները և հայերին հրահրում պատերազմի մեջ ոչինչ չխնայել, այն պատերազմի, որը ծունկի պիտի բերեր թուրքերին և պիտի ամոքեր հայոց դարավոր ցավը։ Ցարական պաշտոնյաները հաստատ գիտեին, որ հայերն ունեն վճռական դեր իրենց կայսրության նոր ձեռնարկի մեջ՝ նվաճելու արևմտահայկական նահանգները, հեշտացնելու իրենց ելքը դեպի չսառչող Միջերկրականն ու Պարսից ծոցը։

Կար նաև մի ուրիշ, ո՛չ պակաս կարևոր հանգամանք. Թուրքիայի պանիսլամիստական, հատկապես պանթուրքիստական նըկրտումները քաջ հայտնի էին ցարական պետությանը։ Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ հնուց ի վեր օսմանյան բռնապետները նպատակ են ունեցել միասնական մեկ պետության մեջ առնելու Բալկաններից մինչև Հյուսիսային Կովկասն ու Միջին Ասիան ընկած հսկայական տարածքը և ձեռք ձգելու Ռուսաստանի հարավում բուն դրած ուշ-միջնադարյան խանությունների մարզերը։ Պանթուրքիստական այս զառանցանքի դեմ կանգնած էր, առաջին հերթին, Հայաստանը, որը սեպի պես խրված էր թուրքերի ու նրանց արևելյան ցեղակիցների արանքը։ Եթե թուրքերն իրենց ցեղակիցների հետ միավորվելու համար պետք է վերացնեին այդ սեպը, ապա ռուսները, ճիշտ հակառա՛կը, իրենց նպատակներն իրականացնելու համար կարիք ունեին ամրացնելու նույն այդ սեպը։

Ցարական արքունիքում կազմված մի փաստաթղթի մեջ հայոց հարցի այս երկվությունն իր հակիրճ, բայց շատ պերճախոս բացատրությունն է ստացել։ Այստեղ հիշվում է ցարական այդ

քաղաքանքի վաղեմությունը։ Ասում է. «Դեռևս Պետրոս Մեծի ժամանակներից սկսած Ռուսաստանի հիմնական խնդիրն է եղել Հզոտումը դեպի հարավային, չսառչող ծովի հեռաստանները»։ Եվ որովհետև այդ ձգտումը հիմնականում բախվել է Թուրքիայի տիրակալության շահերի հետ, Թուրքերի թշնամին պետք է լիներ նրա բարեկամը։ «Ռուսաստանը, հենց Թուրքիային թուլացնելու նպատակով, իր պետական խնդիրն է համարել հայերի պաշտպանությունը Թուրքիայում, և դրա Հորհիվ էլ, բարձրագույնի կամքով ռուսական դիվանագիտությունը, 1912-ից սկսած, ամենաեռանդուն քայլերն է ձեռնարկում Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ մտցնելու օգտին։ Ընդ որում՝ Ռուսաստանն արժանանում է ամենաբարեկամական մթնոլորտի Թուրքիայի հայերի կողմից և ամենայն աջակցության ռուսահպատակ հայերի կողմից, որոնք, ինչպես հայտնի է, շատ մեծ ազդեցություն ունեն Թուրքիայի իրենց հայրենակիցների վրա»։

Ի՞նչ բարյացակամություն իրենց պատմական հայրենիքի վրա հայերի ունեցած անկապտելի իրավունքների նկատմամբ. «Հայերն իրենց տարածքում ապրում են ավելի քան 3000 տարի...»։ Ապա. «Եթե գերմանացիներին ու Թուրքերին Հայաստանն անհրաժեշտ է առանց հայերի, եթե նրանց համար անհրաժեշտ է հայկական սեպի ոչնչացումը, եթե նրանք ուզում են ջարդել մեր մահմեդականների և Թուրքերի ու քրդերի միջև եղած անջրպետը, ապա Ռուսաստանի խնդիրն է, ի՞նչ գնով էլ լինի, վերականգնել հայկական այդ անջրպետը Թուրքերի ու քրդերի և մեր Թաթարների միջև։

«Հայկական բնակչության պահպանությունն անհետաձգելի խնդիր է։ Դրա համար էլ ամեն կերպ անհրաժեշտ է ձգտել նրան, որպեսզի մեր սահմաններում պաշտպանվեն դժբախտ այդ գաղթականները՝ պատերազմից հետո նրանց վերստին իրենց հայրենիքը վերադարձնելու համար»։

Սակայն կայսերական քաղաքականությունը հայկական հարցում առաջնորդվում էր ո՛չ ինքնակալի բանավոր խոստումով, ո՛չ էլ ինքնակալության ծավալապաշտական ձգտումների հիմքի վրա հորինված այս փաստաթղթի տրամադրությամբ։ Այդ քաղաքականության ստեղծողներն ու կիրառողները ցարի սատրապներն էին, որոնց ականջները խուլ էին հայերի օգնության աղաղակների հանդեպ և, եթե, հակառակ Թուրքերի ու գերմանա-

ցիների, Հայաստան էին ուզում ո՞չ առանց հայերի, ապա միայն մի՛ պայմանով՝ որպեսզի այնտեղ պահպանված հայերը քաղաքական ու մշակութային ինքնավարության պահանջ չներկայացնեն, այլ ծաղկեցնեն իրենց երկիրը՝ ի շահ նվաճողների։ Այս առթիվ էլ Արտաքին գործոց նախարար Սազոնովի և մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի միջև տեղի ունեցած գրագրությունն է, որ տալիս է սպառիչ ու աներկմիտ պատկերացում։ Սազոնովի համար հայոց հարցը միայն այնտեղ էր, ուր դեռևս ոտք չի դրել իր զինվորը։ Հենց որ ոտք դրեց, այդ հարցն ինքնին վերանում էր։ Սազոնովի հետ համամիտ էր նաև Նիկոլայ Նիկոլաևիչը, որի թույլ տված՝ հայերի համար միակ մխիթարական միջոցառումն այն պիտի լիներ, որպեսզի Ռուսաստանում տեղավորված գաղթական հայերն իրավունք ունենան վերադառնալու իրենց հայրենի եզերքները՝ Թուրքիայից նվաճված հայկական նահանգները, որպեսզի «նրանք վերստին ամրանան իրենց հայրենի հողերին, նշանակալից կերպով թեթևացնեն գաղթականների պարենի ծախսը և, դրա հետ միասին, կյանքի վերադարձնեն թուրքական Հայաստանի բերրի հողերը, մի բան, որ, անկասկած, լուրջ թեթևացում կբերի բանակի պարենային գործում»։

Ուրեմն, հայերի վերադարձը հայրենիք ո՞չ թե նրանց իսկ վերածաղկման ու զարգացման նպատակով, այլ ցարական բանակի պարենային բեռը թեթևացնելու համար։

Նվաճող պետության ախորժակը բացվում է պատերազմի, մանավանդ աջողակ պատերազմի ընթացքում։ Այնպես է բացվում, որ մոռանում է նախկին խոստումները, երդում-հավատի խոսքերը։ Նույնիսկ խոստումներից ամենահամա՛ստը։

1915-ի սկզբին, երբ ռուսական բանակն ու նրա հետ ուս-ուսի կռվող հայ զորամասերը, Արաքսն անցնելով, իրենց դեմ տեսան թուրքական զորքերի մոտալուտ պարտության հեռանկարը, երբ հայտնի դարձավ, որ արևմտահայկական նահանգների նվաճումը պիտի լինի ոչ այնքան անհնար մի խնդիր, հայերը շատ ուրախացան՝ ժամանակից առաջ վայելելով իրենց քաղցր երազանքի իրականացման պատրանքը, իսկ ցարի սատրապները մտածեցին, որ հայերին տված իրենց խոստումները եղել են շռայլ ու ժամանակավրեպ։

Կարելի էր կարծել, թե ամեն ինչ սկսվեց 1915-ի փետրվարից, երբ ցարական բանակի առաջ Արաքսի աջափնյակից

բացվեցին դեպի հարավ իջնող ճանապարհները հինավուրց հայկական բերրի հողերի միջով։ Այդ բանակի շարքերում հայերը կռվում էին անձնազոհությամբ, պատերազմի կարճ դադարներին աչք փակելիս երազներում տեսնում էին մեծ Հայաստանն ազատագրված, տարագիր եղբայրներն ու քույրերը վերադարձած և իրենց հայրենի ափերը շենացնելիս... Իսկ պատերազմի հաղթական հեռանկարը պարզ տեսնող ցարական պաշտոնյաներին ոչ թե այս ռոմանտիկ երազներն էին հետաքրքրում, այլ կայսրության գաղութակալական շահերը։ Նույն փետրվարին Ռուսաստանի հողագործության մինիստր Կրիվոշեինը Արտաքին գործոց մինիստր Սազոնովին գրել է, թե «Թուրքական ճակատում մեր ռազմական գործողությունների հաջող արդյունքները հիմք են տալիս ենթադրելու, որ մոտ ապագայում հնարավոր կլինի ուղղել կովկասյան սահմանները և կլորացնել մեր տիրույթները Փոքր Ասիայում ու Հայաստանում։ Էրզրումի, Վանի վիլայեթներն ու Բիթլիսի վիլայեթի մի մասը, որոնք սովորաբար կոչվում են Հայաստան... ինչպես նաև Տրապիզոնի վիլայեթը, միանգամայն պիտանի են լայնորեն վերաբնակեցվելու ռուսներով»։ Հողագործության մինիստրի նամակում կարևոր տեղ է հատկացվում Արաքսի աջ ու ձախ ափերին (այստեղ արդեն ավելորդ է համարվում Հայաստանի անուն տալը), այն լայնածիր տարածություններին, որոնք հրաշալի հնարավորություններ ունեն ոռոգվելու Արաքսի մշտահոդ ջրերով։

Իսկ այդ երկրի տերե՞րը։ Չէ՞ որ նրանց խոստումներ էին տրվել, ստանձնվել էին պարտավորություններ, որոնց դիմաց նրանցից շատ-շատերը վճարել էին ոչ միայն իրենց արյամբ, այլև կյանքով։

Բնիկ ու օրինական տերերի մասին էլ էին մտածում ցարական մինիստրները։ Կրիվոշեինի հուշած միջոցառմամբ խանդավառ Սազոնովը Կովկասի փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչին գրել է, թե ներկա իրադրության մեջ հայերի քաղաքական նշանակությունն իջել, հասել է զրոյի, և նրանց տեղը պետք է գրավեն մահմեդականները։ «Ինչ վերաբերում է հայերին Արևմտյան Հայաստանում լայն ինքնավարություն տալուն,— շարունակում է Սազոնովը,— ապա չպետք է մոռանալ, որ այժմ Ռուսաստանի կողմից նվաճված Հայաստանում հայերը երբեք էլ մեծամասնություն չեն կազմել, իսկ պատերազմի ժամանակ տեղի ունեցած

կոտորածներից հետո էլ թվային փոխհարաբերությունն ավելի է փոխվել ի վնաս հայերի։ Այդպիսի պայմաններում հայկական ինքնավարությունը իրականում կհասցնի մեծամասնության շահագործմանը փոքրամասնության կողմից... Այսպիսով, հնարավոր կլինի հայերին տալ միայն դպրոցական ու եկեղեցական ինքնուրույնություն որոշակի շրջաններում... Իսկ տեղական հողատիրության հարցերը վճռելիս պետք է պաշտպանել ապագա ռուսական գաղութակալության շահերը»։

Սազոնովն անտեղյակ էր ձևանում ռուսական բանակի կողմից գրավված արևմտահայկական նահանգների բնակչության վերաբերյալ վիճակագրական այն տեղեկություններից, որոնք հայտնի էին Կովկասի փոխարքայությանը, իր մինիստրությանն ու ցարական դիվանագետներին, և որոնք նրանց կողմից բազմիցս վկայակոչվել են, հենց որ իրենց ձեռնտու է եղել ցույց տալ այդ նահանգների բնակչության իրական թվերը։ Բեռլինի վեհաժողովին ներկայացված վիճակագրության համաձայն՝ Արևմտյան Հայաստանի այն նահանգները, որոնց պետք է ինքնավարություն տրվեր, 1878-ին ունեցել են երկու միլիոն վաթսուներեք հազար երեք հարյուր բնակիչ, որից հայ՝ մեկ միլիոն 300 հազար, այսինքն՝ կեսից շատ ավելի, մնացածը՝ թուրք, քուրդ և այլ ազգություններ։ 1912 թ. Ռուսաստանի Արտաքին գործոց մինիստրության տվյալներով՝ արևմտահայկական վեց նահանգներում, որոնք հետո պիտի նվաճվեին ռուսական զորքերի կողմից, հայերը կազմել են բնակչության 39 տոկոսը, թուրքերը՝ 25, քրդերը՝ 16, ղզլբաշները՝ 5 և այլն։ Այս էլ՝ աբդուլ-համիդյան կոտորածներից ու հալածանքներից հետո։

Սազոնովն իր մինիստրության հավաքած այս թվերի՞ց էր անտեղյակ, թե՞ Արևմտահայաստանի վրա հայերի ունեցած իրավունքը ջնջելու համար հայերի թվե՞րն էր ջնջել իր թղթերի միջից։

Եվ ցարական մինիստրների նամակների ու հրահանգների ոգով էլ սկսեցին գործել նրանց գաղութարար պաշտոնյաները Հայաստանում։

1915-ի եղերական ապրիլի սկզբին արդեն Բիթլիսի, Մուշի, Վասպուրականի ու մյուս վայրերի հայության վրա մահաբեր ամպեր էին կախվել։ Հեռատես մարդիկ, գաղթելով դեպի հյու-

ոիս, ընդառաջ էին գնում ռուս բանակներին՝ հուսալով փրկություն գտնել նրանց հովանավորությամբ։ Եվ այս ժամանակ Կովկասյան բանակի շտաբի պետ գեներալ Ն. Ն. Յուդենիչը՝ Խորհրդային Ռուսաստանի ապագա երդվյալ թշնամին, այն օրերի չորրորդ բանակային կորպուսի հրամանատարին հեռագրով կարգադրեց. «Ոչ մի կերպ թույլ չտալ և բաց չթողնել, որպեսզի ո՛չ տեղական բնակիչները ոտք դնեն Ալաշկերտի, Դիադինի ու Բայազետի հովիտները՝ նույնիսկ լքված դաշտերում ցանք կատարելու համար»։ Իսկ դրանից երկու օր առաջ Յուդենիչը Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին գրած զեկույցում խորհուրդ էր տալիս կանխել արևմտահայկական նահանգներից արտագաղթած հայերի վերադարձն իրենց ավանդական հողերը և առաջարկում էր այդ վայրերում բնակեցնել Կուբանից ու Դոնի ավազանից գաղթեցնելիք կազակներին։

* *
*

Անդրկովկասյան ֆեդերատիվ կոչված կառավարությունը, որ ստեղծվել էր, իբր թե, երկրամասի ժողովուրդների ուժերը միավորելու և համագործակցությամբ դիմակայելու ժամանակի աղետներին,— իր գործունեության առաջին իսկ շրջանից հիշեցնում էր հայտնի առակի սայլը՝ իր տարօրինակ լծակներով. կարապը, ձուկը և խեցգետինը։ Տարբերությունն այն էր միայն, որ առակում այդ լծկանները քաշել են տարբեր ուղղություններով, իսկ իրական սայլի լծկանները ոչ միայն տարբեր ուղղությունների վրա էին քաշում, այլև ջանում էին իրար դեմ շարություն գործել։ Այդ շարությունը դրսի՞ց էր հրահրվում, թե՞ ներսի ուժերն էին անհամատեղելի՝ սկզբում դա մութ հարց էր։ Սակայն շատ կարճ ժամանակ անց գոնե հայ գործիչների համար պարզ դարձավ, որ ա՛յն սայլին չեն լծվել։

Անդրկովկասյան կառավարության գլուխ էր կանգնած Ակակի Չխենկելին, և «միացյալ» զորքերի գլխավոր հրամանատարն էր գեներալ Օդիշելիձեն, որոնք գաղտնի ու բացահայտ վնասներ էին հասցնում հայոց շահերին։ Եթե ասեմ՝ նույն կառավարության կազմում մուսավաթականներին վերապահված էր որևէ կարևորություն ունեցող դեր, սխալ կլինի։ Սակայն սրանք էլ,

դարձյալ գաղտնի ու բացահայտ՝ նվաճող ու ջարդարար թուրքի հետ էին և ամեն կերպ աջակցում էին նրա հաստատմանն Անդրկովկասում, ուր թուրքը ոտք էր դնում հայոց դիակների վրայով։

1918 թ. ապրիլին, Էրզրումի ու Սարիղամիշի անփառունակ հանձնումից հետո, Հայկական կորպուսի զորամասերը հավաքվել էին Կարս՝ հայոց այդ հինավուրց բերդաքաղաքը և, իրադրությանն ու ժամանակի-տեղանքի պայմաններին ծանոթ մարդկանց կարծիքով, այստեղ կարող էին վճռական դիմադրություն ցույց տալ դեպի Կովկասի խորքը սողացող թուրքական զորամասերին։ Ավելի քան յոթ հազար զինվոր՝ լավ զինված, նաև ապավինած Կարսի ամրակուռ բերդապարիսպներին և ռուսական բանակի թողած ռազմամթերքի ու պարենի հարուստ պաշարներին։ Հարձակվող թուրքն ուներ սոսկ երկու անգամ ավելի զինվոր։ Սակայն չպետք է մոռանալ, որ նա հարձակվողն էր, անառիկ ու հզոր Կարսի վրա եկողը, որ ենթակա պիտի լիներ պաշտպանվողների հարվածներին։ Ենթակա նաև մաշող ու սարսափահար անող այն մանր պատերազմներին, որոնք նրան էին պարտադրում հայ կամավորական խմբերը ռազմաճակատի բոլոր կետերում, ինչպես և թիկունքում։

Թուրքաց զորքերի հրամանատար Վեհիբ փաշան, տեսնելով, որ իրադրությունն այնքան էլ ձեռնտու չէ իր բանակի համար, Անդրկովկասյան կառավարությանն առաջարկեց զինադադար և դրա համար իր զորքի վերջին հանգրվան էր խնդրում Կարսի ամրություններից երկու կիլոմետր հեռավորության վրա։ Մեծ խելք ու տրամաբանություն պետք չէին հասկանալու համար, որ սա նշանակում էր՝ թույլ տալ, որպեսզի թուրքաց զորքերը, առանց որևէ կրակոցի, առանց մի կաթիլ արյուն տալու, անվնաս ու ապահով գան-կանգնեն Կարսի պարիսպներին դեմ հանդիման։ Կարծես խնամախոսության առաջարկություն էր դա, որ Ջիենկելին ընդունեց անհապաղ, համապատասխան կարգադրություն արեց ճակատի ընդհանուր հրամանատար Օդիշելիձեին ու Հայկական կորպուսի հրամանատար Նազարբեկովին, և հետո՛ միայն, երբ թուրքերն ամուր դիրքեր էին գրավել Կարսի առաջ, հարմար համարեց իր համաձայնությանն ու արած կարգադրությանը տեղյակ դարձնել հայ լծակիցներին։ Սրանք Թիֆլիսում,

միացյալ կառավարության ներսում, իրենց դեմ, հայ ազգի իրավունքների դեմ կատարված դավադրության առթիվ ձկնային մնջություն պահպանելով հանդերձ, ղզացին վիճակի ծայրահեղ լրջությունը և որոշեցին հավաքվել մի տեղ, խելք խելքի տալ։ Եվ այս տեղն էլ Ալեքսանդրապոլը դարձավ, մենշևիկ ու մուսավաթ անբարյացակամ լծակիցների աչքից հեռու, Երևանի ու ռազմաճակատի ղեկավարներին մոտիկ։ Այնտեղ, Կարսի հարևանությամբ, պիտի որոշեին Կարսը փրկելու, թշնամու առաջխաղացումը կասեցնելու միջոցները։

Ալեքսանդրապոլ ժամանեց բազմամարդ մի թափոր՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ։ Եկել էին մեծ ու փոքր բազմաթիվ պաշտոնյաներ, օգնականներ ու խորհրդականներ, լրագրողներ ու հետաքրքիր տեսարանների սիրահարներ։ Վերջիններիս հետաքրքրությունը բավարարելու համար այստեղ շատ բան կար։ Թեկուզ հենց այն հանգամանքը, որ տեղաբնիկները ոչ մի ուշադրություն չդարձրին ժամանողների վրա։ Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահն էր եկել իր ոտքով, հայոց մեծ գրողը, ազգային ցավերի երգիչը, նրա դատի ճարտարախոս պաշտպանը։ Կայարանից մինչև հյուրանոց հանդիսավոր քայլքով գնաց թափորը։ Նրա առջևից շարժվում էր Ահարոնյանը՝ փառահեղ գլուխը վեր, թախծոտ հայացքը շրջապատի վրա մեծահոգաբար տարածած։ Մեկ-մեկ շոյում էր թուխ մորուքը։ Դա էլ նրան պաշարած մտահոգությունից էր։ Ի՞նչ է պատահել այս քաղաքին։ Մի՞թե մարդիկ լուր չեն առել։ Թե տագնա՞պն է այնպես նեղել, որ խելքները թոցրել են։

Կային, իհարկե, անցուդարձող ականատեսներ, որոնք ուզում էին իմանալ, թե ո՞վ է առջևից շարժվողը, որը ոչ թե քայլում, այլ ինքն իրեն տանում էր։

— Մե՞ծ գրող է, շա՞տ մեծ գրող։ Ավետի՞ս կըսեն, Ահարոնյա՞ն։

— Մեր Ավետի՞քը, Ավո՞ն։

— Չէ՞, ջանըմ, ուրիշ է, Ավետի՞ս։

Երկու ժամ հետո Ալեքսանդրապոլի Արտակարգ հանձնաժողովի շենքի ընդարձակ դահլիճում ասեղ գցելու տեղ չկար։ Անդրկովկասյան սեյմի ու կառավարության հայ անդամների, Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի անդամների, հայկական բոլոր կուսակ-

ցությունների ներկայացուցիչների հետ միացել էին ռազմաճակատի ղեկավարները՝ զանազան զորատեսակների ու կոչումների հրամանատարներ։ Նրանց հետ էին նաև տեղական ինքնավարության լիազորները, որոնցից ոմանք հույս ունեին գոնե այս մեծ ու ներկայացուցչական ժողովում արժանանալու իրենց նորընծա քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսովի տեսքին։ Նրանք գիտեին, որ պատմական մեծ շրջադարձի այս օրերին Օսմանյան կայսրության դիվանագիտական պարագլուխների հետ ծունկ-ծնկան «խորաթա կենե» իրենց քաղաքի ջոջը, և հենց նրա «խորաթաներից» է կախված ազգի ճակատագիրը։

Թե այնտեղ, Բաթում քաղաքում, ինչպե՞ս կլուծվի ազգի ճակատագիրը, դա արդեն քիչ էր հետաքրքրում նրանց, որովհետև աչքի առաջ, ժամ առ ժամ քանդվում-քայքայվում էր իրենց Ալեքսանդրապոլը՝ աշխարհում մի հատիկ ու անփոխարինելի Գյումրին։

Քաղաքում արդեն բոլորը գիտեին, որ թուրքերը Սարիղամիշին տիրանալուց հետո եկել, պաշարել են Կարսը։ Վաղն էլ Կարսին կտիրեն, և առջևում կմնա Ալեքսանդրապոլը։ Այդ էր հուշում գործողությունների տրամաբանությունը։ Ռազմաճակատի վերջին երկու ամսվա ընթացքը ցույց էր տվել, որ թուրքերն անկանգ առաջ են շարժվում, իսկ Կովկասյան բանակ կոչվածի մնացորդները, դարձյալ անկանգ, նահանջում են՝ թշնամուն զիջելով հայոց քաղաքներն ու գյուղերը, նահանգներն ու գավառները։ Ուրեմն, էլ ի՞նչ երաշխիք, թե վաղն էլ Ալեքսանդրապոլը չեն զիջելու։

Աղետի այս որոշակի ու հավաստի կանխատեսությունը մռայլ տագնապով էր լցրել երբեմնի աշխույժ քաղաքը, և քաղաքացիներին այնպես էր թվում, թե վրա է հասել հին մարգարեների գուշակած «կորուստն ու կոտորածն ամենայն երկրի»։

* *
*

Ապրիլի 19-ի առավոտյան սկսվեց ներկայացուցչական արտակարգ ժողովը։ Դահլիճում իրարանցում էր ու ժխոր, մինչև Ահարոնյանը տեղից վեր կացավ ու, թախծոտ հայացքը դիմացի պատին հառած, սկսեց իր հայրենաշունչ խոսքը, մեկն այն ճա-

ռերից, որոնց ունկնդիրներին մնում էր մտածել, թե ոչինչ են թշնամիները, և նրանց ջարդելը խաղ ու պար է, քանի որ հայ ազգն ունի այսպիսի առաջնորդ։

Սակայն երբ խանդավառ դահլիճի ծափահարությունների ներքո բարձր ու լայն ճակատի քրտինքը սրբելով նա հանգչեց բազկաթոռին, և կողքին նստած Սիմոն Վրացյանը, ժողովի նախագահի պարտականությունն իր վրա վերցնելով, առաջարկեց, որ խոսել ցանկացողները մատ բարձրացնեն կամ ցուցակագրվեն, մարդիկ սկսվեցին։ Մի բոպե քար լռություն էր։ Վրացյանը փորձեց կատակել.

— Եթե մատը դժվար է բարձրացնել...

— Բաղդիկը ձեռքերը տակն է դրել, պինդ նստել է վրեն,— խոսեց տեղացի համարձակներից մեկը։

— Էս հո Թիֆլիսի ժողովը դարձավ,— Ահարոնյանի ականջի տակ ասաց Վրացյանը և Ազգային խորհրդի նախագահի հոգին պղտորեց։

Խոսելու իրավունք խնդրեց Անդրկովկասյան բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնակատար գեներալ-մայոր Լեբեդինսկին և ընդհանուր գծերով ներկայացրեց ռազմաճակատի դժվար վիճակը։

Երկու օր առաջ զորավարը, Նազարբեկովի ու մի քանի ուրիշ սպաների հետ միասին, այցելել էր ռազմաճակատ։ Նրա զորքերը Նովո-Սելիմի վրա էին կոիվ տալիս և, ամենայն հավանականությամբ, պիտի կարողանային երկար դիմադրել, մինչև համալրումներ հասնեին և թշնամուն ետ քշեին նվաճած բնագծերից։ Այդ համալրումներն էլ պիտի կատարվեին Միացյալ կառավարության պահեստային ուժերից։ Բայց ո՞ւր էին այդ ուժերը։

Առաջներն Անդրկովկասյան երկրամասում այս մարդն էր տնօրինում ռազմական բոլոր գործերը։ Որևէ հարցով նրան դիմելիս հայերն զգում էին, որ արդարամիտ է և ջանում է ձեռքից եկածն անել իրենց համար։ Սակայն Միացյալ կառավարության ստեղծումով, մանավանդ Օդիշելիձեի ռազմական մինիստրություն գալուց հետո դրությունը փոխվեց միանգամից։ Հիմա միայն լուծվելուց հետո էին հարցերը հայտնի դառնում Լեբեդինսկուն։ Այն էլ՝ եթե Զխենկելին ու Օդիշելիձեն բարեհաճում էին տեղեկացնել նրան։ Այսպիսի դեպքերում ռուս զորավարը նրբանկատորեն զգում էր, որ տեղեկացնում են՝ ցույց

տալու համար, թե այդ է՛լ կարող էին չանել, քանի որ Ռուսաստանն ու նրա ռազմական ներկայացուցիչն այլևս անելիք չունեն այս երկրամասում, ուրկից քաշվել-գնացել էին կամ էլ ահա հեռանում էին ռուսական զորամասերը։

Ճիշտն ասած, ինքը՝ Լեբեդինսկին, ևս հասկանում էր, որ իր ներկայությունն ավելորդ է մի երկրում, որն իր անկախությունն է հայտարարել ու անջատվել հյուսիսից։ Սակայն խզված էին կապերը նոր Ռուսաստանի հետ, ինքը դեռևս ոչ մի կարգադրություն չէր ստացել իր պաշտոնի վերաբերյալ և, լինելով պարտաճանաչ ու բարեխիղճ մարդ, շարունակում էր ծառայել, օգնել այն ռազմաճակատին, որի հետ կապված էր ճակատագրով։ Կար, անշուշտ, մի հանգամանք ևս, որը նրան ստիպում էր մնալ այստեղ՝ իր հետ պահելով նաև փորձառու սպաների ու ռազմական մասնագետների, որոնք պատրաստ էին Թուրքի դեմ կռվել մինչև վերջին շունչը։ Զգացմունքների մարդ չէր նա, սակայն իրեն հաճախ էր բռնում հայ ժողովրդի բախտի մասին մտածելիս, և սիրտը ճմլվում էր ցավից։ Մանավանդ որ այդ մտածումների ընթացքը միշտ էլ նրան տանում էր դեպի իրադարձությունների մի այնպիսի քննություն, որից իր կառավարությունը չէր կարող դուրս գալ անմեղ կամ չքմեղացած։ Քանի՞ անգամ ցարական բանակները խորացան այս երկրի մեջ՝ իրենց հետ բերելով հայերի ազատագրության հույսը և վաստակելով նրանց անվերապահ նվիրվածությունն ու զինակցությունը։ Սակայն այդքան անգամ էլ ետ քաշվելով՝ Թուրքական գազանի երախում թողեցին այդ նվիրյալ զինակցին, որը մենակ ու անօգնական էր և իր ավանդական հայրենիքում հալածական։ «Մենք իրավունք ունեցե՞լ ենք այսպես անմարդկայնորեն խաղալու մի ժողովրդի ճակատագրի հետ, որն այս աշխարհում չունի ոչ մի բարեկամ ու հովանավոր, և որի մեղքն այն է միայն, որ մեր նախորդ անմարդկային խաղը տեսնելուց հետո էլ վերստին հավատում է մեզ, վստահում է մեր առաքելությանը»,— այսպես էր մտածում ռուս մարդն ու բազմափորձ հրամանատարը և պատրաստ էր իր ձեռքից եկած ամեն ինչ անելու այդ լքված ու անօգնական ժողովրդի ճակատագրի համար։ Նա գտնում էր, որ դժվար է պաշտպանել Կարսը, սակայն ամեն գնով պետք է պաշտպանել, ապա նոր համալրումներով ամրապնդել զորքը և թշնամուն հասցնել վճռական հարվածը։

Ավետիս Ահարոնյանը, սակայն, չէր լսում նրան, որովհետև հարևանի ակնարկը Թիֆլիսի ժողովի մասին՝ իրեն հանել էր հավասարակշռությունից, այս դահլիճից, նույնիսկ Ալեքսանդրապոլից և տարել այնտեղ, Թիֆլիս, այն տխրահռչակ ժողովը, որը հիշելիս իր արյունը սառչում էր երակներում։

Ճակատից զորավար Անդրանիկն էր եկել և Թիֆլիսի հասարակական հավաքույթներում բռունցք թափահարելով բողոքում էր հայկական բարձր շրջանների սառնասրտության դեմ։ Ճակատին հայ զորք է հարկավոր, որովհետև ռուս զինվորները գնացել են իրենց տները։ Մուսավաթականները չեն ուզում կռվել Թուրքի դեմ։ Իսկ վրաց մենշևիկի տեղը տաք է, օսմանլուի ասկյարը դեռ չի առևանգել նրա կնոջը կամ դստերը։ «Ռազմաճակատի ամբողջ ծանրությունը մեզ վրա է, հայեր, զինվո՛ր տվեք, համալրե՛ք կռվողների շարքերը»,— կոչ էր անում ժողովրդական հերոսը։ Եվ այդ կոչով Ազգային խորհուրդը հրավիրեց բազմամբոխ մի ժողով, որի խնդիրը պիտի լիներ կազմակերպել համաժողովրդական զորահավաք, ինչպես նաև ամեն տեսակ նյութական օգնություն հյուծվող ճակատին։ Օրվա բանախոսն էր Ավետիս Ահարոնյանը, որն իբրև խորհրդի նախագահ, համբավավոր գրող ու սիրված հռետոր՝ իրեն օրվա հերոսի պես էր պահում։ Նա իր ճառն սկսեց վերասլաց խոսքով.

— Annibal at portas— Հաննիբալը դռանն է։— Ապա իրեն հատուկ վերամբարձ ոճով նկարագրեց ռազմաճակատի վիճակը, Թուրքերի առաջխաղացման աղետը Կովկասի և մանավանդ հայ ազգի համար, վերջում էլ կրակոտ կոչ արեց ներկաներին՝ կամավոր գրվել և անմիջապես մեկնել ճակատ։ Դահլիճը քարացած լսում էր և խանգավառ ծափահարում։ Բանախոսն ինչով սկսել էր, նրանով էլ ավարտեց իր հրաշունչ ելույթը.— Annibal at portas։ Դեպի ճակա՛տ, ազգ իմ հայոց։

Ազգային խորհրդի պատասխանատու պաշտոնյաներից մեկն անմիջապես առաջ նետվեց և թուղթ ու մատիտ ձեռքն առած պատրաստվեց ցուցակագրել ճակատ մեկնելու ցանկություն հայտնողներին։ Ժողովականներն սկսեցին իրար երեսի նայել... Եվ ցուցակագրողին մոտեցավ միայն մի հոգի՝ գրող Հովհաննես Մալխասյանը, հիսուն տարեկանին մոտ, հաստամարմին մի ախալքալաքցի։

Այդ խայտառակությունից հետո Ազգային խորհրդի գործիչ-

ները երկար խորհեցին, տվին-առան և խորհրդի անունից հրաւիրակեցին մի կոչ, որով ժողովրդին հաղորդում էին վերահաս աղետի բոլոր մանրամասները, կոչ էին անում երկիրն աղետից փրկելու համար գործի դնել բոլոր միջոցները։ Կոչն ավարտվում էր ահեղ սպառնալիքով. «Այս օրհասական վայրկյանին ամեն հայ, որ խուսափում է իր քաղաքացիական ու ազգային պարտքը կատարել, դավաճան է հայրենիքի և, իբրև դասալիք, արժանի է խստագույն պատժի»։

Այս կոչը ևս ոչ մի արդյունք չտվեց։ Սակայն «խստագույն պատժի» ենթարկվողներ էլ չեղան, որովհետև անհնար էր քաղաքի ամբողջ հայությանը պատժել, մանավանդ որ այդ արդար վճիռը կիրառելու դեպքում պետք է սկսեին Ազգային խորհրդից ու նրա հարևան շրջանակներից։

Ահարոնյանը, տեղը նստած, քրքրվում էր անհանգիստ մրտքերից։ Նա ամբիոնի մոտ նկատեց նոր հռետորի՝ Հայոց սպարապետ Թոմաս Նազարբեկովին, և նոր միայն հասկացավ, որ ռազմաճակատի հրամանատար Լեբեդինսկին ճառն ավարտել է, իսկ ինքը ոչ մի արձագանք էլ չի տվել։ Կռացավ դեպի Վրացյանը և նրա ականջին ասաց կշտամբանքով.

— Այն կատուն գցեցիր ներսս, ինձ կրծում է։

— Թիֆլիսի ժողո՞վը։ Իսկ այստեղ, կարծում ես, ուրի՞շ տեսակ է լինելու,— շարությամբ ժպտաց «Հորիզոնի» խմբագիրը։— Ես թերթում գրում եմ, որ դրությունն անհուսալի է, և դուք ինձ քարկոծում եք։ Դե, տե՛ս՝ ինչ է ասում Հայոց սպարապետը։

Այդ պահին Նազարբեկովը ծերունական հիշողությանը զոռ տալով, թվերով ու փաստերով ներկայացնում էր հայկական ճակատին հասած վնասները, հայոց զորքի ողորմելի վիճակն էր քննադատում, և մնում էր նրա զորավարական խոսքից եզրակացնել, որ դրությունն իսկապես անհուսալի է, կռիվը շարունակելն ավելորդ։

— Մենք ի՞նչ կարող ենք անել մարդկային ուժերով ու տեխնիկայով գերակշիռ թշնամու դեմ,— գանգատվում էր հսկայամարմին զորավարը, որի բերանից այնպես զավեշտական էին հնչում այդ գանգատի բառերը։— Նախաձեռնությունը պատկանում է թշնամուն։— Եվ աջ ձեռքի ցուցամատով սկսեց մեկ-մեկ ծալել ձախ ձեռքի մատները։— Մենք հետախուզություն չունենք։ Եղած ուժերը քիչ են Կարսի պաշտպանության համար։ Մեզ հար-

կավոր են նոր ուժեր։ Զորքը բավարարված չէ հագուստով, սնունդով ու անհրաժեշտ ամեն ինչով։ Զորամասերը հոգնած են և չեն թարմացվում նոր ուժերի համալրումով։ Մենք մենակ չենք կարող դիմադրել թշնամուն։ Արևմտահայերից էլ էական որևէ օգնություն չենք կարող սպասել...

Երբ Հայոց սպարապետն իր այս հուսահատական զրույցն ավարտեց, մարգիկ, մի պահ վստահելով նրա վավերական խոսքին, զարմացած էին, թե, այդուհանդերձ, ինչպե՞ս է, որ այն դանդաղոշ թուրքերը դեռ չեն հասել Երևան։ Չէ՞ որ հայկական ճակատն այլևս ճակատ չէր ներկայացնում՝ ըստ Հայոց սպարապետի զեկուցման, այլ կանոնավոր պաշտպանության անընդունակ, կիսաքաղց ու անկազմակերպ մի բազմության հավաքատեղի, որը կարող էր քայքայվել անգամ ամենաթույլ թշնամու առաջին իսկ հարվածից։

Երկար լռությունից հետո, երևի սթափվելով և շատ թե քիչ հարմար ու իրական գետնի վրա կանգնելով՝ ժողովականներից մեկը փորձեց սպարապետին զգուշացնել։

— Ֆոմա Իվանովիչ, մի՞թե դրությունն իրոք այդքան հուսահատական է։

— Այո՛, այո՛, ես ջանացի ցույց տալ իրական վիճակը,— հանգիստ պատասխանեց նա։— Այստեղ են հայ ժողովրդի բախտի տնօրենները։ Ինչո՞ւ նրանց չներկայացնենք իրականությունը։ Ես հին զինվոր եմ և սիրում եմ իրերը կոչել իրենց անուններով։

Վերջին արտահայտությունը գրգռեց «Հորիզոնի» խմբագրին։

— Պարոն զորավար,— վրդովված ասաց նա,— ձեր խոսքերից այնպես է ստացվում, թե մեր զորքերն արդեն կիսաքաղց են և սնունդն էլ գոհացուցիչ չէ։ Բայց ո՞ւմ մեղքով է, որ մենք Սարիղամիշում ու մյուս կենտրոններում թշնամուն ենք հանձնել ռուսական պահեստների անքավ հարստությունը։

— Ի՞նչ նկատի ունեք, պարոն... Ի՞նչ է ձեր ազգանունը...

— Վրացյա՛ն, Սիմոն Վրացյա՛ն։

— Հա՛, ներեք, մոռացել էի, Վրացյա՛ն։ Պարոն Վրացյան, դուք հատկապես ի՞նչը նկատի ունեք։ Այսինքն՝ ի՞նչ ենք հանձնել, ո՞ւմ ենք հանձնել։— Հուզմունքից զորավարի մի աչքը կուչ էր եկել և դողում էր։ Կարծես նշան էր բռնում ընդդիմախոսի վրա։

Կարճ, գնդիկ Վրացյանը երկչոտ ետ նստեց, ամրացրեց տեղը հին բազկաթոռին.

— Պարոն զորավար, ինքս լավ հիշում եմ, որ երբ ձեզ հետ մի երկու շաբաթ առաջ այցելեցինք Սարիղամիշ, մերոնց կողմից արդեն լքված, բայց թուրքաց կողմից դեռևս չդրավված այդ քաղաքի պահեստներում անհաշիվ հարստություն էր ամբարված՝ զենք ու ռազմամթերք, զինվորական ու քաղաքացիական հագուստ, երկրագործական մեքենաներ ու մթերքներ, անսպառ ալյուր, շաքար ու դեղորայք։ Տասնյակ միլիոնների արժողության մի ունեցվածք, որ կողոպտվում էր անորոշ զբաղմունքի տեր մարդկանց կողմից և հետո էլ պարգև պիտի մնար թուրքերին։

— Հիմա ի՞նչ եք առաջարկում, պարոն, ը՛...

— Վրացյա՛ն։

— Այո՛, Վրացյա՛ն, պարոն Վրացյա՛ն։ Ուզում եք, որ ետ դառնանք, գնանք տե՞ր կանգնենք այդ «տասնյակ միլիոնների արժողության մեր ունեցվածքին»։

Զայրացած էր գեներալը, թե ոչ, վնասված աչքը լրիվ փակվել և արագ-արագ թրթռում էր։

Վրացյանը, որ հետևում էր նրա խոսքի ընթացքին, կարծում էր՝ պիտի հարց տար, թե հապա ինչո՞ւ դու ինքդ չփրկեցիր այդ տասնյակ միլիոնների հարստությունը, որ տեսել էիր, սիրտդ էլ այդպես ցավում է, ու ինքդ էլ Թիֆլիսից Սարիղամիշ էիր հասել ռազմաճակատին շոշափելի որևէ օգնություն հասցնելու և ոչ թե թարմ օդ շնչելու համար։ Սակայն այդ հարցը չտրվեց, և հիմա Վրացյանը թեթևացած սրտով ասաց.

— Ես անձամբ կոնկրետ առաջարկություն չունեմ, պարոն գեներալ։ Սակայն մտածում եմ, որ կատարված դեպքերից հետո գանգատվում եք, թե զորքերը բավարարված չեն հագուստով, սննդով ու ամեն ինչով... Ի՞նչ իմանամ, այս տրամադրությամբ վաղը չէ մյուս օրն էլ Կարսը կհանձնենք թշնամուն, Կարսն իր անբավ հարստությամբ, և այն ժամանակ էլ կասենք՝ զորքը ոչ թե կիսաքաղցած, այլ միանգամայն սովահար է և մորե մերկ։

— Այդ ուշացած կշտամբանքներից եթե որևէ օգուտ լիներ այսօրվա մեր վիճակին և իմ իրավասությանը հանձնված զորամասին, ես էլ իմ հերթին ձեզ ու ձեր նմանների հասցեին կըշտամբանքներ կուղղեի...

— Հիմա դո՞ւք ինչ նկատի ունեք,— հարցրեց Վրացյանը։

— Նկատի ունեմ այն, թե ձեր Սարիղամիշ ժամանելուց ի՞նչ շահեց ռազմաճակատը։ Եվ ո՛չ միայն ձեր։ Բոլոր նրանց, ովքեր Թիֆլիսից գնացք էին նստում, ուղևորվում դեպի ռազմաճակատի գիծը՝ ժողովրդին էլ այնպես ցույց տալով, թե տեղ հասնելուն պես թշնամուն մի այնպիսի հարված կհասցնեն, որ նա մեկ էլ ուշքը գլուխը հավաքի Միջերկրականի ափին։— Այստեղ Նազարբեկովն արդեն նշան բռնած հայացքով կրակեց, աչքի ամեն մի թարթումով մի կրակահերթ, որ հասավ նպատակին, և Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչը գլուխը կորցրեց։ Զորավարը, գտնվելով իր ռազմավարական մտքի բարձրության վրա, այնտեղից պարզ տեսավ, որ իր գրոհը հրաշալի արդյունք է տալիս։ Մնում էր կործանիչ հարվածը, այն էլ հասցրեց.— Ես չգիտեմ առհասարակ, թե այն ինչպե՞ս է լինում, որ ձեր գլխի վրայով Անդրկովկասյան միացյալ կառավարությունը քայքայիչ հրամաններ է տալիս հայոց ռազմաճակատին։ Այո՛, այո՛, հայոց ռազմաճակատին, որովհետև Կարսի գծի վրա միայն հայերն էին մնացել՝ ռուս հրամանատարների հետ միասին։ Այստեղ ո՛չ վրացիներ կան, ո՛չ էլ մուսավաթ։ Պատասխանե՛ք, խնդրեմ, այդ ինչպե՞ս է լինում։ Եթե ձեր համաձայնությամբ էր, որ Չխենկելին կարգադրեց թուրքերին թույլ տալ դիրք բռնելու Կարսի առաջ, երկու կիլոմետրի վրա, ապա դա, ես ինչպե՞ս կոչեմ, նման է ինքնասպանության և փաստորեն կհանդիսանա Կարսը հանձնելու սկիզբը։ Իսկ եթե այս ամենն արվում է առանց ձեր իմացության,— ձեր թիկունքում թե ձեր գլխի վրայով, դա միևնույն է,— ապա էլ ինչի՞ համար եք դուք այնտեղ նստում։ Մի՞թե միայն նրա համար, որպեսզի հայ դժբախտ ժողովուրդը տեսնի, որ իր ընտիր ներկայացուցիչները ևս բարձր կառավարության մեջ են։

Այս արդեն բացահայտորեն ուղղված էր Ազգային խորհրդի դեմ, և դյուրաբորբոք Ահարոնյանը տեղից վեր կացավ իր դերի ու հեղինակության հպարտ գիտակցությամբ։

— Ես ամենայն ուշադրությամբ լսում էի ձեզ, հայոց զորքերի պատվարժան սպարապետ, և չեմ կարող զարմանքս թաքցնել...

Նազարբեկովը գլուխը ծռել էր դեպի հարևանը և նրա թարգմանությունն էր լսում։

— Հետո՞, հետո՞,— հարցրեց նրա կողմ, կարծես նա էր խոսողը։

Ահարոնյանը լսեց նրան և վրդովված շարունակեց.

— Հետո էլ ա՛յն, որ դուք այստեղ ելույթ ունեցաք այնպես, ինչ որ ուրիշ տեղից տեսչական ստուգման եկած մեկը լինեք և ոչ թե հայոց զորքի գլխավոր հրամանատարը։

Գեներալ Լեբեդինսկին՝ Կովկասյան ճակատի զեկավար գործիչը, բարեկիրթ, վարվեցողության հարցերում բծախնդրորեն քաղաքավարի մի մարդ, անհանգստացած էր այդ վեճով։ Համաձայն էր, իհարկե, Հայոց ազգային խորհրդի նախագահի հետ. Հայկական կորպուսի հրամանատարի անվճռականությունը, ռազմավարության հարցերը տեղում լուծելու քաջության պակասը, եթե ո՛չ բացակայությունը, հաճախ են պատճառ դառնում ճակատագրական ձախողանքների։ Բայց չէ՞ որ Նազարբեկովն աչքի առաջ էր ահա վեց ամսից ավելի, և այն էլ պատերազմական իրադրությունում, որի մեկ օրը հաճախ մեկ շաբաթվա, մեկ ամսվա է հավասար։ Այս դժվար վիճակից դուրս գալու համար ի՞նչ է ձեռնարկել Հայոց ազգային խորհուրդը, ի՞նչ են անում Անդրկովկասյան կառավարության մեջ մտնող հայ նախարարները։ Մի՞թե նրանք իսկապես այն կարծիքի են, թե բավական է, որ իրենք այդ կառավարության մեջ իրենց ներկայությունն են ապահովում... Սակայն տեսնելով, որ այս վեճը կարող է հեռուն տանել, նա փորձեց հանգստացնել կրքերը։

— Հարգելի բարեկամներ, կարծում եմ՝ փոխադարձ մեղադրանքներո՛վ չէ, որ պետք է շտկենք ռազմաճակատի մեր ձախողակ ընթացքը։ Մանավանդ ա՛յս պահին, երբ թշնամին մեր քթի տակ է, և սատանան գիտե, թե ի՛նչ նոր խարդավանքներ է որոճում, որ կարող է իրականացնել, քանի մենք հանգիստ ենք թողել իրեն և ահա այսպես իրար օձիք թափ տալով ենք զբաղված։

Վիճողները գլխով արին. իբր համաձայն ենք, և իրար հետ էլ հայացքներ փոխանակեցին, որ երևի պետք է նշանակեր՝ ես սո՛ւս, դու է՛լ սուս, մեր թշնամու աչքը դուրս։

Մի կարճ պահ դահլիճում լռություն էր, այն լռությունը, որ սովորաբար նախորդում է պայթյունին կամ ամպրոպին։ Զորավար Լեբեդինսկին օգտվեց առիթից և, ամպրոպը կանխելու նպատակով, նորից խոսեց։

— Անկեղծ որ լինենք, ես էլ զարմանում եմ, թե այս ինչո՞ւ ռազմաճակատում անհաջողությունն ուղղակի մեզ հետապնդում

է, երբ մեր զորքի մեծ մասը, հատկապես հայ զորքը, կռվում է այնպիսի անձնազոհությամբ, որից դենն անհնար է պատկերացնել։— Գեներալ Լեբեդինսկին հայացքը պտտեց ներկաների վրա՝ ստուգելու իր խոսքի տպավորությունը, ապա ավելի հակված դեպի Նազարբեկովը, կարծես հենց միայն նրա համար, շարունակեց.— Հայոց զորքն անպայման արժանի է ամեն տեսակ խրախուսանքի ու փառաբանության։ Եվ սա գեղեցիկ խոսք չէ, որ ես ասում եմ միայն հայերիդ ներկայությամբ։ Ես այդ մասին Գերագույն գլխավոր հրամանատարությանը գրել եմ դեռևս անցած տարվա սեպտեմբերի 30-ին։ Իմ գրությունը հիշում եմ բառ առ բառ. «Հայկական գումարտակները մինչև այսօր լավագույն զորքերն են Կովկասյան ռազմաճակատի գործող զորամասերի շարքում և հանդիսանում են մարտական այն հրաշալի նյութը, որի վերակառուցումից շատ պիտի շահի մեր ճակատը»։ Այն ժամանակ ես նկատի ունեի հայկական զորաջոկատների միավորումը, որից պետք է կազմվեր բուն հայկական զորամասը՝ իր մեջ առնելով կամավորական խմբերի ահռելի անձնազոհ ուժը։ Ես այս խոսքը գրել եմ այն ժամանակ, երբ այստեղ էին ռուսական կանոնավոր դիվիզիաները։ Հիմա նրանցից քիչ բան է մնացել, իսկ հայկական զորաջոկատներն ավելի են ստվարացել։ Սրանք դարձել են հիմնական մարտունակ և մինչև վերջ նվիրված ուժն ամբողջ ռազմաճակատում։— Զորավարը կանգ առավ մի պահ, ջուր խմեց, մետաքսե թաշկինակով շուրթերը սրբելուց հետո առավել զնգուն ձայնով հարցրեց.— Ինչո՞ւ չեք հարցնում, թե հապա էլ ի՞նչ է պատահել, որ այդ մարտունակ ու անձնազոհ զորքն անվերջ նահանջում է։ Նման դեպքում սովորաբար մեղքը բարդում են հրամանատարության վրա։ Ասում են՝ այսպես ու այսպես. ապիկար հրամանատարները չկարողացան գործը կազմակերպել, որպեսզի խիզախ զորքի տված թանկագին արյունը պսակվի հաղթանակով։ Ի՞նչ խոսք, որ մենք՝ ռազմաճակատի հրամանատարներս, վերից վար, պարտավոր ենք մեղքի մեծ բաժինն առնել մեզ վրա։ Հայոց կորպուսի հրամանատարությունը մի յուրահատուկ պարտականություն էլ ունի, որի անթերի կատարումը հաղթանակի կեսը պիտի լիներ։ Կամավորական խմբերի և պարտիզանական ջոկատների ուժն օգտագործելու խնդիրը։ Մի՞շտ է, որ մենք հմտորեն օգտվում ենք այդ

ազնիվ ուժերից։ Արդարության դեմ մեղանչած կլինեն, եթե ասեմ՝ այո՛։ Ճի՞շտ չէ...

Ներկաները գլուխները տմբտմբացրին ի նշան համաձայնության։ Իսկ Արևմտահայերի ապահովության խորհրդի նախագահ Վահան Փափազյանը, որ հարմար առիթի էր սպասում այդ առթիվ իր դժգոհությունն արտահայտելու համար, վրա տվեց.

— Ո՛չ միայն չեք օգտվում, պարոն գեներալ, այլև արհամարհական վերաբերմունքով նրանց վանում եք ու մի կողմ շպրտում։

Արևմտահայոց ապահովության նախագահի դեմքն արտահայտում էր բողոք ու զայրույթ, և Լեբեդինսկին փորձեց հանգստացնել նրան.

— Իրավացի եք, պարոն նախագահ,— ասաց նա։— Հավանաբար դուք նկատի ունեք որևէ կոնկրետ իրողություն, որն այդպես վրդովեցրել է ձեզ։

Փափազյանը կանգնեց իր արդարության խրոխտ գիտակցությամբ և սկսեց բացատրել.

— Սարիղամիշի դժվար օրերին, երբ մեր զորքերին ամեն կողմից վնասներ էին հասցնում թուրք ու քուրդ ավազակախմբերը, Սեբաստացի Մուրադն ու Սեպուհը պատրաստակամություն հայտնեցին Կաղզվանի ու Օլթիի շրջանների տարածքում ոչնչացնել նրանց բները և ճանապարհ բացել դեպի թշնամու թիկունքը։

— Իրավացի է պարոն նախագահը,— հաստատեց Վրացյանը։— Նրանք մեզ էին դիմել, որպեսզի միջնորդ լինենք հրամանատարության առաջ։

— Հետո՞, հետո՞,— Վահան Փափազյանին դիմեց գեներալ Լեբեդինսկին։

— Հետո էլ այն եղավ, որ մենք այդ առաջարկությամբ դիմեցինք գեներալ Արեշևին, և նա ձեռքը թափ տվեց, ասաց. «Ժամանակ չունեմ այդօրինակ խակ ծրագրեր քննելու։ Թող գնան իրենց գլուխները պահեն,— ասաց,— այդ անկանոն ուժերը»։ Եվ Մուրադն ու Սեպուհը, իրենց քաջամարտիկ ջոկատներն առած, հեռացան Սարիղամիշից։

— Да!— հոգոց հանեց գեներալ Լեբեդինսկին։— Շատ ցավալի է։ Ես իմ աչքով եմ տեսել արևմտահայ վրիժառուների անվեհերությունը։ Մենք պարտավոր ենք նրանց հավասալ ու վրստահել. բացի նրանից, որ այդ մարդիկ խիզախ կռվող են, կա նաև ամենավճռական գործոնը. նրանք իրենց կյանքի միակ

իմաստն այժմ տեսնում են կռվի մեջ, իրենց հայրենիքի ու ազգի փրկության համար մինչև վերջին շունչը պայքարելու մեջ։ Ինչպե՞ս կարելի է մերժել այդ անվերապահ անձնազոհությունը։

— Բայց մի՞թե նույն վիճակի մեջ չէ նաև Անդրանիկի գունդը։— Լեբեդինսկու խոսքերից խրախուսված՝ խոսեց Փափազյանը, որը տեղյակ էր Նազարբեկովի քամահրական վերաբերմունքին։— Մեր ազգային հերոսի փառքը հանգիստ չի տալիս որոշ մարդկանց...

Սա արդեն որոշակի ակնարկ էր հայկական կորպուսի հրամանատարի հասցեին, և նա, հարմածն իր վրա ընդունելով, անմիջապես հայացքով նշանի տակ առավ Փափազյանին ու փորձեց հակահարված տալ։

— Երբ մի զինվորական կամ հրամանատար, թեկուզ և ճակատին աստծու մատնահետքն ունենա, ռազմի դաշտում իր համար առանձնահատուկ արտոնյալ վիճակ է պահանջում, վերին հրամանատարությունից անկախ վիճակ, ժողովրդի առաջ պատասխանատվություն չզգալու վիճակ, դա ես չը՛-չը՛-չդիտեմ ինչ-ինչպե՞ս կոչեմ։— Ջորավարն ինքնաբերաբար հավասարակշռությունից ելավ և խոսելիս կակազում էր։

— Հանգստացե՛ք Ֆոմա Իվանովիչ, հանգստացե՛ք։ Կարծում եմ՝ պարոն Փափազյանի խոսքը ձեզ չէր վերաբերում։

— Կարևոր չէ՝ վերաբերում էր, թե ոչ,— նույն ափնակոծ վիճակում, զայրացած՝ խոսքը շարունակեց Նազարբեկովը։— Կարևորն այն է, որ ես զինվորական եմ և ամբողջ կյանքում կարգապահությունը համարել եմ զինվորականի գերագույն պարտքը։ Եվ ա-ատել եմ ամեն տեսակ անարխիան... Անարխիան է, որ այս ժողովրդի տունը քանդում է, անա՞րխիան։ Հասկանո՞ւմ եք։ Տեղից վեր կացողն իր համար անկախ ու արտոնյալ վիճակ է պահանջում...

Գեներալ Նազարբեկովի վրդովմունքը փոխանցվեց դահլիճին և արագ գործող մերանի պես փոխեց նրա բաղադրությունը։ Հակառակորդները զայրացած բողոքում էին իրար դեմ։ Համախոհները տեղներից վեր կացած ձեռքներն էին թափ տալիս. իբր, այս է մեր վարձը. արյուն թափենք անհավասար ճակատամարտում, վերջն էլ գան, մեզ մեղադրեն անճարակության, ապիկարության և ուրիշ տեսակ-տեսակ մեղքերի մեջ։

Գեներալ Արեշևը, որ գլուխը կախ հանգիստ լսում էր, երբ իրեն էին քննադատում, դազազեց ու Կովկասյան ճակատի հրամանատարին «կատեգորիկ կեպով խնդրեց» իրեն ազատել ճակատից։ Բռունցքն օդում թափ տալով Վահան Փափազյանի ու մյուսների կողմ՝ նա հենց այդպես էլ ներկայացրեց իր պահանջը.

— Категоричным образом прошу вас, господин генерал...

Եվ Լեբեդինսկին, որ մինչև այդ պահը հաջողությամբ իրականացրել էր կրքերը հանգստացնողի ու սուր վիճակները հարթողի իր դերը, ձայնը բարձրացրեց մեկին.

— Թողե՛ք այդ երեխայությունը, գեներալ։ Կատեգորիկ կեպով չեն խնդրում, հասկացե՛ք հասարակ բաները...

— Իսկ ես խնդրում եմ և հակառակ դեպքում...

— Հակառակ դեպքում ի՞նչ,— պայթեց ռուս գեներալը,— ի՞նչ հակառակ դեպքում։ Դուք մոռացե՞լ եք, որ զինվորական եք և ոչ թե տամիկից խռոված երեխա։ Մոռացե՞լ եք, որ պատերազմ է, և դուք ձեր յուրաքանչյուր քայլի համար պատասխանատու եք պատերազմական ժամանակի օրենքներով։

* *
*

Ալեքսանդրապոլի արտակարգ ժողովը խառնվեց ու բորբոքվեց-եռաց երկրորդ օրվա առավոտյան, երբ դաշնակցության Թիֆլիսի բյուրոյի անդամ Կարո Ղազազյանը, կարգից դուրս խոսելու իրավունք վերցնելով, հրապարակեց Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահի տեղակալ Խաչատուր Կարճիկյանի հեռագիրն այն մասին, որ Անդրկովկասյան սեյմի մահմեդական ֆրակցիան հայտարարել է իր հեռացումը կառավարությունից և հավանորեն մոտակա օրերին կհռչակի Ադրբեջանի անկախությունը։ Հեռագրում նշված էր նաև, թե ո՞րն է մահմեդականների՝ սեյմից հեռանալու պատճառը. նրանք ասում են՝ իրենց հայտնի է դարձել, որ հայերն ու վրացիները չեն ցանկանում Անդրկովկասը կտրել Ռուսաստանից։

Ժողովականները չէին հավատում իրենց ականջներին։ Ստիպեցին հեռագիրը նորից կարդալ։ Զարմացան, զայրացան, ապա

որոշեցին կարճ ընդմիջում անել, խելք-խելքի տալ, ծանրութեթև անել ստեղծված արտակարգ ու արտասովոր վիճակը, դրանից հետո որոշել հայոց կողմի անելիքը։

Ընդմիջումին աշխուժացել էին Ալեքսանդր Խատիսովն ու Հովհաննես Քաջազնունին։ Նրանց զեկույցներում քննադատական շեշտեր էին եղել՝ ուղղված խաղաղության խորհրդաժողովի մահմեդական թևի դեմ։ Մահմեդական-մուսավաթականները Տրապիզոնում իրենց շատ էին անկախ պահում։ Նրանք անհարմար չէին համարում նույնիսկ բացեիբաց, ցուցադրաբար առանձնանալ Թուրքերի հետ և Անդրկովկասի հարցերը քննել առանց հայ ու վրացի գործընկերների։ Դա չէր կարող այլ բան լինել, քան մուսավաթականների անջատական տրամադրությունը, որը վաղ թե ուշ ջրի երես պիտի ելներ։ Եվ հիմա կարծես խորհրդաժողովի երկու պատվիրակները շատ էին ուրախ, որ ստացված հեռագրով իրենց ենթադրությունը հաստատվեց այսպես արագ ու անառարկելի։

Կես ժամից ժողովը վերսկսվեց, և ամբիոնի ետևում հայտնվող ամեն մեկը ջանում էր խոսել կարճ, գործնական, հատհատ ու շեշտված բառերով։ Հեռագիրը մարդկանց ստիպեց գնահատել ժամանակը։

Լեոն՝ հայոց պատմաբանն ու հրապարակախոսը, որ ուրիշ պարագաներում պիտի ոգեկոչեր հին ու նոր պատմության պերճախոս փաստերը և նրանց վրա հյուսեր իր կարծիքը, եզրակացությունն ու պատգամը, հենց ինքն էլ տվեց հեռագրային ոճի օրինակը, երբ ելավ տեղից, տագնապով հայտարարեց.

— Բարեկամնե՞ր, մուսավաթականներն այսօր անկախություն հայտարարեցին, վաղն էլ մեր դեմ կռվի կգան։ Այն ժամանակ հայ զորքն ստիպված կլինի կռվելու երկու ճակատում։

Քաջազնունին, որ, թվում էր, ընդարձակ զեկուցումով ապացուցել էր, թե ինքը հաշտության դաշնագրի կողմնակիցն է, ինչպիսիք էլ որ լինեն նրա պայմանները, հանկարծ հանդես եկավ մի հայտարարությամբ, որը ջնջում էր իր զեկուցումը։

— Ուրիշ ելք ու ճանապարհ չկա. մենք պետք է շարունակենք պատերազմը,— վճռաբար հայտարարեց նա։— Մենք չենք կարող լռվել, երբ մուսավաթը մեր թիկունքից ձեռքը մեկնում է Թուրքին, և նրանց ստեղծած օղակում կա՞մ պիտի խեղդվենք, կա՞մ կռվելով փրկվենք։

Այդ օրվա նիստին ներկա էր նաև Երևանյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալ Դանիելբեկ Փիրումյանը։ Արթիկի կողմերում գործ ուներ, լսել էր, որ ժողովին հրավիրված է նաև իր հորեղբորորդի Պողոսբեկը։ Եկավ, որ տեսնի, հարցուփորձ անի որդիներից։ Չէ՞ որ նրա գնդում էին ծառայում իր երկու տղաները։

«Թե որ հաշտության պատվիրակն էլ կռվելու կողմն է, ուրեմն, հիմա՞ որ կարգին կկռվենք»,— մտածեց Փիրումյանը և ուրախացավ։ Սակայն մեկ էլ ամբիոն բարձրացավ նույն պատվիրակության երրորդ անդամը՝ Միքայել Պապաջանովը, և Փիրումյանի գլխին ասես սառ ջուր լցրին։

— Ես չեմ կարծում, թե հիմա կռվելը միակ ելքն է,— դանդաղ, հանգիստ խոսեց Պապաջանովը։— Հակառակը, դա մեր կորստյան ճանապարհն է, որովհետև մենք ուժ չունենք Թուրքի դեմ պաշտպանվելու, մինչդեռ այսօր նրա կողքին էլ կանգնում է նաև մուսավաթը։ Վաղն էլ՝ վրացի մենշևիկը... էլ չեմ խոսում...

— Լավ կլիներ, որ առհասարակ չխոսեիր,— առաջին շարքից գոռաց մեկը։

Պապաջանովն շտապեց փակել իր խոսքը.

— Ես կարծում եմ՝ միակ ճանապարհը տանում է Պոլիս. վեր կենանք, գնանք այնտեղ, համաձայնության գանք Թուրքայ կառավարության հետ...

— Վազի՛ր, հա՞, Պոլսում սեղան են գցել, քե՞զ են սպասում։

Պապաջանովն այս խոսքն ասողի վրա էլ խեթ-խեթ նայելով իջավ ամբիոնից, գնաց, նստեց տեղը։

Արշակ Զուրաբյանը մի անգամ արդեն խոսել էր՝ կոչ անելով չհավատալ Թուրք պատվիրակության հաշտության խոստումներին, որովհետև նրանք, բանակցությունները ձգձգելով, ժամանակ ու հնարավորություն էին ստանում մեր հողերում ավելի խորանալու։ «Եթե Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը նրանց սրտով է, և ուզում են կանգ առնել 1877-ի սահմանի վրա, էլ ինչո՞ւ են պահանջում, որ մենք բաժանվենք Ռուսաստանից,— հարց էր տալիս հռետորը։— Եթե նրանք խաղաղություն են ուզում, ինչո՞ւ զինադադարի կոչ անելով զորքերը շարժում են առաջ»։

Հիմա նորից ելույթի խոսք խնդրելով՝ դահլիճն առավ հայացքի տակ, կրկնեց իր հարցը.

— Կարծում էիք՝ Թուրքերն առաջ են գալիս, որպեսզի մեզ

հետ բարեկամաբար գրկախառնվե՞ն։— Նա կանգ առավ մի երկվայրկյան և ինքն էլ պատասխանեց իր հարցին.— Նրանք որոշել են իրենց ճանապարհից ջնջել հայությանը։ Իրենց գործը հեշտացնելու համար մեզնից պահանջում են անկախություն հայտարարել։ Մուսավաթի անկախությունը նշանակում է անմիջական կախում Թուրքիայից։ Իսկ մենք իրավունք ունե՞նք մեր ժողովուրդը կտրելու Ռուսաստանից, հրաժարվելու հյուսիսի կողմնորոշումից։ Մեր առաջ երկու ճանապարհ կա. կա՛մ հայացքներս պիտի հառենք դեպի հյուսիս, կա՛մ պիտի գլխիկոր գնանք Թուրքին ընդառաջ՝ սպասելով, որ նա մեզ կոտորի...

Ալեքսանդրապոլի ներկայացուցիչներն իրենց քաղաքում, իրենց տանը դումարված նիստին ներկա էին անկոչ հյուրերի պես։ Ճիշտ է, նրանք ճակատից եկած լուրերն ընդունում էին իբրև ահազանգ, թե ահա ուր որ է Թուրքերը պիտի կանգնեն Ալեքսանդրապոլի դարպասների դեմ։ Եվ նիստի առաջին օրն էլ որոշեցին պայմանավորվել իրենց վիճակի շուրջ, ներկայանալ իրենց միասնական կամքով ու կարծիքով։ Սակայն պարզվեց, որ միասնությունն անհնար է. համարյա յուրաքանչյուրն ունի իր խոհն ու վճիռը, որից չի ուզում բաժանվել։ Եվ հիմա ցրված նստել էին դահլիճի տարբեր տեղերում, յուրաքանչյուրը փնտրում էր իր համախոհներին։ Միայն Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Ալ. Խատիսովն ու նրա տեղակալ Վահան Նավասարդյանն իրար փնտրելու կարիք չունեին։ Նրանք իրենց ողորմածությանը հանձնված քաղաքը մոռացել էին և համազգային բախտի շուրջն էին մտորում։

Այն ժամանակ դահլիճի վերջին շարքերը խլրտացին, և ձեռքն առաջ մեկնած խոսք խնդրեց Բագրատ Ղարիբջանյանը։

Շատերը գիտեին, որ այդ կարճահասակ, սև բեղերը մարտականորեն աջ ու ձախ սրած երիտասարդը քաղաքի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարն է։ Նավասարդյանն արմունկով հրեց իր նախագահի կողը. այսինքն՝ տե՛ս, մեր քաղաքի ներկայացուցիչն է խոսում։

— Այդ հեռագիրը ցույց տվեց, թե ովքեր են նստած Անդրկովկասյան կառավարության մեջ,— իր խոսքն այսպես սկսեց Ղարիբջանյանը՝ հայացքն ուղղելով դեպի ժողովի նախագահության սեղանը, որի ետև շարված էին Անդրկովկասյան սեյմի հայ անդամները՝ Արշակ Զուրաբյանը, Գեորգի Խատիսյանը, Սիմոն

Վրացյանը, Ավետիս Սահակյանը և էլի մի քանիսը, որոնց նա չէր ճանաչում։— Այսօր մուսավաթականներն են անկախանում, վաղն էլ այդ ցավով կբռնվեն հայ ու վրացի գործակիցները...

— Լավ կլինի, որ գործից խոսեք,— տեղից վեր կացավ Ավետիս Ահարոնյանը։

— Սա մեր իսկական գործն է և, դժբախտաբար, նաև ճակատագիրը, որին տեր են կանգնել անարժան մարդիկ...

— Լսե՛ք, պարո՛ն,— այլայլված հայացքն աջ ու ձախ գցեց նախագահը։

— Ղարիբջանյա՛ն,— օգնության հասավ Նավասարդյանը։

— ...Պարոն Ղարիբջանյան,— ամպրոպը կանխելու համար վայրկենապես փափկանալով՝ ձայնն իջեցրեց Ահարոնյանը։— Ապպն օրհասի առաջ է կանգնած։ Փրկության ճանապարհ գիտես, ասա՛, էլ ի՞նչ ես մարդկանց վիրավորում։

— Միակ ճանապարհն այն է, որ կապվենք Անդրկովկասի միակ օրինական կառավարության հետ...

— Ո՞վ է այդ միակ օրինական կառավարությունը։

— Ժողովրդական կոմիսարների խորհուրդը՝ Ստեփան Շահումյանի գլխավորությամբ։ Այդ նոր իշխանությունն է միայն, որ Ռուսաստանի օգնությամբ Անդրկովկասի ժողովուրդներին պիտի փրկի թուրքական ստրկությունից...

Բագրատ Ղարիբջանյանի առաջարկությունը դահլիճն իրար խառնեց։ Կրքերը շիկացան։ Սիմոն Վրացյանը նախագահի կողքից վեր թռավ ու գոռաց.

— Բոլշևիկների հետ որևէ հույս կապելը հիմարություն է, անհեռատեսությո՛ւն։

— Այս ճակատագրական պահին մենք իրավունք չունենք երես թեքելու Շահումյանի կառավարությունից,— նախագահության մյուս անկյունից խոսեց Արշակ Զուրաբյանը։— Ես ասել եմ և հիմա էլ նույնն եմ կրկնում...

— Պարոնա՛յք, պարոնա՛յք,— գլուխը բռնած՝ փորձեց խաղաղություն ստեղծել Ահարոնյանը և, տեսնելով, որ այդ անհնար է, նիստը հայտարարեց փակված։

* *
*

Հաջորդ օրվա նիստում սուր խոսքեր չեղան։ Ժողովականներն ավելի շատ նման էին սգվորների, որոնք մեռելատանը նստոտած իրենց պարտավոր էին համարում մխիթարական խոսքեր ասել մեռելատերերին և հայացքները ելքի դռանը՝ հարմար վայրկյանի էին սպասում, որպեսզի ելնեն, հեռանան։ Այն ժամանակ ռազմաճակատից եկած մի խումբ սպաներ լիազորեցին, որ ճակատի անունից խոսի հայկական հրաձգային Հինգերորդ գնդի հրամանատար գնդապետ Պողոսբեկ Փիրումյանը։

Խմբից բաժանվեց ու առաջ անցավ հաղթամարմին մի զորական, որի հագին տոնական համազգեստ էր։ Ոսկեհուռ ծոպերիզներով ուսադիրները, կուրծքը զարդարող մարտական շքանշանների ու մեդալների շարքերը պճնամոլ զորականի տպավորություն կարող էին թողնել անծանոթի վրա։ Իսկ կարճ խուզած փոքրիկ մորուքն ու փարթամ, բայց սուր ծայրերը վեր ցցած բեղերը նրա առնական դեմքին տալիս էին խստություն, որի հետ համերաշխ էին կրակոտ աչքերը։

Կարելի էր կարծել, թե զորականը հանդիսավոր շքերթից է գալիս և ոչ թե ռազմաճակատից, որտեղ նա իր գնդի հետ օրերն անց էր կացրել գարնանային անձրևների տակ ու իգդիրյան հրոչակավոր ցեխերի մեջ։

Հորեղբոր որդի Դանիելբեկ Փիրումյանը, որ նրանից միայն մի քանի տարով էր մեծ, բայց հայրական գորովանքով էր վերաբերվում, անհանգիստ շարժվեց տեղում. շատ էր ուզում, որ հարազատը կարողանա իր մարտական պատկառելի անվանն արժանի խոսք ասել։

Գնդապետի երևույթից անմիջապես շարժվեց, կենդանացավ դահլիճը։ Նրանք, որ ճանաչում էին, աշխուժացան ինչ-որ չափով, մտածեցին, որ, վերջապես, փորձառու հայ սպայի ձայնն էլ կլսեն։ Իսկ անծանոթները, զարմացած նրա տոնական ու շքեղ հագուստ-կապուստով, մտածում էին, թե ինչո՞ւ է պճնվել այս տարեց մարդը. հո Թիֆլիսի Գոլովինյան պողոտայում չպիտի՞ գայթակղեցնի տիկնանց ու օրիորդներին։ Ժողովը ղեկավարող Ահարոնյանը խնդրեց, որ գնդապետ Փիրումյանը թարմ տեղե-

կությունները հաղորդի ռազմաճակատի վիճակից, և նա առաջին պահ այլայլված էր ու խոսեց անվստահ։

— Դժվար թե ես կարողանամ ավելին ասել, քան հաղորդել են մեր հարգելի զորավարները։— Այստեղ նա շունչ քաշեց, ուղղեց լայն, զարդարուն կուրծքը՝ երևի մտածելով, որ ինքը պարտավոր է ժողովին հաղորդել հենց այն, ինչ միայն ինքը գիտե։ Բայց մի՞թե միայն ինքը։— Ես կուզենայի ձեզ հաղորդել... իհարկե, ոչ թե տագնապ ձգելու համար, այլ զգուշացնելու, սթափեցնելու, որովհետև տեսնում եմ, որ շատ եք հանգիստ։ Այո՛, կուզենայի հաղորդել, որ թուրքերը Կարսի տակ հանգիստ նստած չեն։ Իմ գնդի հետախուզությունը պարզել է, որ թուրքաց առաջապահները շարժվում են դեպի հյուսիս։ Իսկ դա կարող է հաստատ նշանակել, որ կամ Կարսն արդեն իրենցն են համարում և գալիս են Ալեքսանդրապոլի վրա, կամ էլ նպատակ ունեն նվաճելու երկաթգիծը, որից հետո Կարսը կմեկուսանա և կգտնվի թուրքական աքցանի մեջ...

Լեբեդինսկին հարցական նայեց Նազարբեկովին և, նրա դեմքին ոչինչ չկարդալով, մատիտով ինչ-որ նշում արեց իր առջևի թղթին։

Ահարոնյանն անհանգիստ հայացքով որսում էր ճառախոսի հաղորդած տեղեկությունները, որոնց մեջ չէր տեսնում իրեն հետաքրքրող ամենակարևորը։

— Իսկ հայ զինվորի տրամադրությո՞ւնն ինչպես է, պարոն Փիրումյան։ Ձեր ազգանունը, կարծեմ, Վանի պաշտպանության օրերից է հայտնի։

— Այո՛, պարոն Ահարոնյան, տասնհինգին իմ գնդով մասնակցում էի Վանի պաշտպանությանը։

— Էրզրումում է՞լ դուք էիք...

— Էրզրումում իմ տոհմակիցն էր, պարոն Ահարոնյան, Դանիելբեկ Փիրումյանը։ Նա այժմ Երևանյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալն է և, ահավասիկ, նստած է այս դահլիճում,— նա ձեռքը պարզեց դեպի ետին շարքերը։

Բոլորը շրջվեցին դեպի ետ։ Այն օրերին Դանիելբեկ Փիրումյանն ավելի հայտնի էր «Էրզրումի հերոսը» պատվանունով, և հաճելի էր գիտակցել, որ այդ նույն հերոսը համեստորեն նստած է դահլիճում ու ամենաթունդ վեճերի ժամանակ անգամ չի մատնում իր տեղը։

— Իսկ հայ զինվորի տրամադրությո՞ւնը։— Ահարոնյանը չմոռացավ իր հարցը, որ անպատասխան էր մնացել։

Պողոսբեկ Փիրումյանը դժվար կացության մեջ էր։ Վերջին օրերի դեպքերը, որոնց ականատեսն ու մասնակիցն էր եղել ինքը, շատ էին ցավալի, եթե չլինեին այնքան վարկաբեկիչ մի ազգի համար, որն իր ամբողջ կյանքն ապրել է դրսևկ թշնամիների դեմ կռվելով, արյուն տալով և միշտ ու ամեն պարագայի իր ապագային հավատալով։

— Ես դժվարանում եմ այդ հարցին միանշանակ պատասխան տալ,— այսպես խոսեց Պողոսբեկ Փիրումյանը։— Բայց հիմա ձեզ ներկայացնեմ մի պատկեր, և դրանից հետո դուք ինքներդ փորձեցեք պատկերացնել հայ զինվորի վիճակն ու տրամադրությունը։— Նա նորից դադար առավ մի պահ. երևում էր, որ դժվարությամբ է բառեր գտնում խոստացած պատկերն ամբողջական ու ճշգրիտ ներկայացնելու համար։— Ահա այսպես է դրությունը. մեզ վրա եկող թուրքական զորաբանակն օգնականներ ունի ամեն կողմից՝ աջից ու ձախից, առջևից ու ետևից։ Նրա հետ են ազգակից ու քուրդ ավազակախմբերը։ Իսկ ո՞ւր են կամ ովքե՞ր են հայ զորքի օգնականները։ Մեզ օգնական պիտի լինեն մեր ազգակից քաղաքաբնակներն ու գյուղացիները, որոնք Էրզրումից, Սարիղամիշից մինչև Կարսի պարիսպները միայն մտածում էին փախչելու մասին։ Եվ փախչում են՝ զինված ու մթերքներով բեռնված։ Փախչում են՝ թուրքին թողնելով իրենց երկիրը, իրենց հարստությունը։ Փախչում են՝ իրենց հետ քշած տանելով շատ զինվորների, որ իրենց հարազատներն են կամ իրենց տրամադրությամբ վարակված դասալիքներ... Հիմա կարո՞ղ եք պատկերացնել այսպիսի պայմաններում կռվող հայ զինվորի տրամադրությունը։ Կարո՞ղ եք պատկերացնել Կարմիր շեները պաշտպանող զորաջոկատի դրությունը, եթե այդ շենի բնակչությունը, իրեն պաշտպանող զինվորությանն օգնելու, թև-թիկունք դառնալու փոխարեն, թիկունքից սպիտակ դրոշ է պարզում թուրքի առաջ և նրան դիմավորում է աղուհացով։

Դահլիճն աղմկեց այս անախորժ լուրից։ Այս ու այնտեղ բարձրաձայն հայտնում էին իրենց կարծիքները։

— Պետք է գնդացիրը կապել դրանց վրա,— առաջարկում էր մեկը։

— Տո՜, ի՞նչ եք հալած յուղի տեղ ընդունում։ Փչում է իրենց նահանջն արդարացնելու համար։

— Անարի զինվորության կողքին պիտի իրենց գլխի ճարը տեսնեն։ Բա ի՞նչ ես կարծել...

Ավետիս Ահարոնյանը, տեղից վեր կենալով, հանգստացրեց դահլիճը և լրջորեն դիմեց գնդապետին.

— Իսկ չե՞ք թանձրացնում գույները, պարոն Փիրումյան։

— Ես իմ տեսածը պատմեցի ձեզ, հարգելի նախագահ։ Իմ տեսածը, որին տեղյակ են բոլոր ճակատայինները։ Հարցրե՛ք նրանց...

— Ճի՜շտ է, ճի՜շտ է,— միաձայն գոչեցին նրա հետ եկած սպաները։

— Իսկ ովքեր չեն հավատում,— մռայլադեմ ավելացրեց Փիրումյանը,— թող փորձեն գնալ ռազմաճակատի գիծը և այնտեղ ամեն ինչ կտեսնեն սեփական աչքերով։

Ասաց ու շարժվեց դեպի իր ընկերները։

— Այդպես էլ նստում եք, առանց որևէ առաջարկություն անելո՞ւ,— նրա ետևից հարցրեց նախագահը։

Գնդապետը կանգնեց շարքերի արանքում, ետ շրջվեց, ասաց.

— Ես առաջարկություն էլ արի, պարոն նախագահ. փոխանակ այստեղ անպտուղ վեճը ձգենք, թող մարդիկ ռազմաճակատ գնան։— Նա հայացքը պտտեց դահլիճի վրա, համոզվեց, որ նստածների մեծ մասը զենքի երես չտեսած, կրակոցի ձայն չլսած մարդիկ են. ի՞նչ օգուտ նրանց ռազմաճակատ գնալուց։ Շտկեց իր խոսքը, ասաց.— Կամ գոնե գնան գյուղերը, ժողովրդին հասկացնեն դրության լրջությունը։ Ասեն՝ ինչո՞ւ եք փախչում, ո՞ւր եք փախչում։ Չէ՞ որ զենք ունեցողները կարող են կանգնել մեր կողքին, կռվել թշնամու դեմ։ Չունեցողները իրենց տուն ու տեղը կպահեն, զորքի պարենավորմանը կօգնեն... Թե չէ, ժողովուրդը տեղահանված գնում է, իսկ մենք ճակատ ենք տալիս դատարկված, կիսավեր բնակավայրերի համար...

Գնդապետի վերջին առաջարկությունը կողմնակիցներ շատ ուներ։ Զորավար Լեբեդինսկին ևս այն պաշտպանեց, գտնելով, որ դա կլիներ ամենագործնական ու օգտակար քայլը՝ իբրև այդքան բարձր ներկայացուցչական խորհրդակցության արդյունք։ Եվ որոշվեց, որ հենց ներկա գտնվողներին բաժանեն մանր խմբերի,

երկու-երեքական մարդկանցով, և գնան ճակատամերձ գյուղերը, բնակչությանը համոզեն մնալ տեղերում ու հնարավոր ամեն ինչով օգնեն ռազմաճակատին։

* *
*

Հաջորդ օրվա՝ ապրիլի 22-ի առավոտյան Լեբեդինսկին գնաց Նազարբեկովի շտաբը՝ տեղեկանալու, թե գիշերն ի՞նչ է արվել երեկվա որոշումն ի կատար ածելու համար, տեսավ Հայկական կորպուսի հրամանատարը փլված իր հնամենի գրասեղանի ետևին, հայհոյում է հայերեն (այդ էր նրա իմացած ամբողջ հայերենը)։ Հետո վնասված աչքի «կրակոցներով» հաղորդեց, որ թողել, գնացել են։

— Ո՞ւր են գնացել,— ռուս զորավարը չէր հավատում ականջներին։

— Էլ ո՞ւր պիտի գնային, Թիֆլի՛ս։ Պատկերացնո՞ւմ եք,— ասաց Նազարբեկովը և հայերենի իր իմացությունը մի հիշոցով էլ հաստատեց։

— Ահա թե ի՞նչ,— ծանր հոգոց հանեց Լեբեդինսկին։— Բայց նրանք ցուցակ էին կազմում։ Ես տեսա, որ ավելորդ է իմ ներկայությունը, հեռացա։

— Նրանք այդ ցուցակի վրա էլ վիճեցին, կռվեցին և անմիջապես գնացք նստեցին ու հա՛յ-դա՛։

Քիչ հետո համհարզը զեկուցեց, որ կորպուսի հրամանատարին տեսնել է ուզում կապիտան Ալեքսանդր Շնեուրը։ Դոնների արանքում երևաց բարձրահասակ, շեկ գերմանացին, ռուսական բանակի հնաբնակներից մեկը, որ հմուտ կապավորի համբավ ուներ և աչքի էր ընկնում բծախնդրության հասնող ճշտապահությամբ։ Շեմին տնկեց ձիգ իրանը, աջ ձեռքը կտրուկ տարավ դեպի ականջը և, Նազարբեկովի կողքին տեսնելով զորավար Լեբեդինսկուն, խանդավառ բացականչեց.

— Ա՜, գեներալ, ողջունում եմ ձեզ։

Նազարբեկովը գիտեր նրանց մտերմության մասին և չզարմացավ, որ անմիջապես իրար գիրկ նետվեցին դեներալն ու կապիտանը։ Լեբեդինսկին գրկել էր նրան ու թիկունքն էր թփթփացնում։

— Որքա՜ն ուրախ եմ, որ քեզ ողջ-առողջ եմ տեսնում։— Ապա ազատելով իր հաղթ ձեռքերից, նստելու տեղ առաջարկեց դիմացը, հարցրեց.— Ուրեմն, հենց ճակատի՞ց ես գալիս։ Ի՞նչ կա այնտեղ։ Ֆոմա Իվանիչ, դո՞ւք եք կանչել։

— Նոր նշանակում ունի. պիտի մնա այստեղ՝ շտաբում,— անտրամադիր հաղորդեց կորպուսի հրամանատարը՝ երևի հասկացնելով, որ ներկա իրադրության մեջ այդքան քնարական զեղումն էլ բավական էր։— Կապիտանը վաղվանից այստեղի շտաբում կլինի։— Ապա դառնալով Շնեուրին՝ հարցրեց.— Ձեր կապի կայանն է՞լ եք բերել։ Բայց չէ՞ որ կարգադրված էր։

— Կայանի մասին ոչինչ չեն ասել, պարոն գեներալ,— արդարացավ կապիտանը։— Այն փոխադրել կարելի է նաև գրաստներով. մի քանի րոպեում բաժանում ենք մասերի և արդեն պատրաստ է փոխադրելու համար։ Կարելի է հենց հիմա կապվել իմ շտաբի հետ։

* *
*

Միկիտանչի Գևոյի նկուղի ծայրին, հաճախորդների աչք ու ականջից հեռու, կար մի ծածկած անկյուն, որ գինետան տերը պահում էր ամենաթանկագին հյուրերի համար։ Գեներալ Լեբեդինսկին մի քանի անգամ արժանացել էր այնտեղ ճաշելու պատվին, սակայն միշտ էլ՝ տեղացի ուղեկիցների հետ։ Հիմա նա Շնեուրի հետ ուզում էր նախաճաշել և, թեկուզ շատ էլ վստահ չէր, թե վարպետ Գևոն իրեն նորից կարժանացնի այդ բարձր պատվին, չզարմացավ, երբ ծեր միկիտանչին գլխաբաց ընդառաջ եկավ, հյուրամեծար քաղցրությամբ ներս հրավիրեց և տարավ, նստեցրեց մեկուսացված անկյունում։

Երկար սեղանը ծածկված էր նախշազարդ, մաքուր սփռոցով։ Աթոռների տեղ էին ծառայում ուղիղ հատած կոճղերը, որոնց երեսները շողում էին հայելու պես։ Պատերից մեկի վերին կեսը բռնում էր բազմակերպար մի յուղաներկ նկար, որի կենտրոնում Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը հայոց գրերն են ցույց տալիս Վռամշապուհ թագավորին և երկրի մյուս մեծերին։

Վարպետ Գևոյի հպարտության առանձնահատուկ առարկան էր այդ նկարը։ «Վարդգես Սուրենյանցն իր սեփական ձեռքով է

նախշել»,— սիրում էր ներկայացնել այնպես ինքնամոռաց, ոնց որ իր նկարածը ցույց տար։

Այս անգամ նա հյուրերին ներս տարավ և, նրանց ետևից ինքն էլ ներսում հայտնվելով, հանկարծ իրարով անցավ, սկսեց կոճղերը տեղաշարժել, սփռոցն աջ ու ձախ քաշել և հասցրեց անկյունից դուրս թռցնել մի փայտ, որի կեսին սպիտակ սավան էր փաթաթված։ Վերջինս չվրիպեց գեներալի աչքից։ Աչքով արեց կապիտանին և խորամանկ հարցրեց.

— Տեսա՞ր։

— Ի՞նչ էր, բան չհասկացա,— ողորկ կոճղին նստելով՝ ուսերը թոթվեց Ալեքսանդր Շնեուրը։

— Սպիտակ դրոշակ էր... Կարող է պետք գալ։

Կապիտանն ուզում էր ինչ-որ բան ասել, խոսքը բերանում մնաց, որովհետև ներս մտավ Գևոն և, շարելով տեսակ-տեսակ ա.ղանդերներն ու տաք լավաշը, հարցրեց՝ ի՞նչ են խմելու թանկագին հյուրերը։ Գեներալը հայացքով հարցրեց ընկերոջ կարծիքը և որոշակի ոչինչ չլսելով՝ ասաց.

— Գուցե մի քիչ օղի։ Մեկական գավաթը չէր խանգարի։

— Ի՞նչ մարդիկ են՝ չես էլ հասկանում,— վարպետ Գևոյի գնալուց հետո զարմացած խոսեց կապիտան Շնեուրը։— Մեկը ճակատում թուրքի դեմ կռիվ է տալիս մինչև վերջին շունչը, մյուսը նախօրոք ճերմակ դրոշ է պատրաստել նույն թուրքին դիմավորելու համար։

— Երեկ էլ գնդապետ Փիրումյանն էր գանգատվում,— հարեց գեներալը։

— Նա է՞լ այստեղ էր, Էրզրումի հերոսը։ Մենք հին բարեկամներ ենք։

— Ո՛չ, քո բարեկամը Դանիելբեկ Փիրումյանն է, որին ինքս եմ ներկայացրել գեներալի կոչման, հաստատել են, սակայն իր բախտից ճանապարհները փակ են, և դեռևս տեղ չեն հասել տարբերանշանները։

— Օ՜, նա վաղուց արժանի էր այդ կոչումին, վաղո՜ւց։

— Երեկվա խոսողը նրա ազգականն էր, գնդապետ, անունը՝ Պավելբեկ։ Հայերը Պողոսբեկ են ասում։ Նրա մասին էլ ես միայն լավ բաներ եմ լսել,— տեղեկացրեց գեներալը։— Եվ երեկ նա վրդովված էր, որ իր հայրենակիցները փախչում են թշնամու

առաջ կամ սպիտակ դրոշ են պարզում և աղուհացով են դիմավորում Թուրքերին։

— Իսկ դիտեք՝ դա ինչպիսի հուսալքության է մղում կովողներին,— ցավով արձագանքեց Շնեուրը։— Եթե ինքս լինեի որոշողը, խստագույն պատժի ենթարկել կտայի այդպիսիներին։

— Հե՞շտ է ասել,— նրա հետ համաձայն չէր գեներալը։— Իսկ ո՞վ է նրան մղել այդ քայլին, որ ուրիշ պարագաներում ինքս էլ կհամարեի դավաճանություն։ Ո՞ր մահկանացուն կհանդուրժեր այսքան փորձությունները, որոնցով մենք ենք սատուգում նրա համբերությունն ու դիմացկունությունը։

Գեներալը երկար տարիներ աշխատում էր Կովկասում։ Իբրև քաղաքակիրթ երկրի ներկայացուցիչ՝ նա իր պարտքն էր համարել այդ ընթացքում ծանոթանալ երկրամասի բնիկների կյանքին ու պատմությանը։ Սակայն հայ ժողովուրդը, Հայաստան աշխարհը, այդ աշխարհի ճակատագիրը հազարամյակների մեջ՝ նրա այս պաշտոնական հետաքրքրության ոլորտից դուրս էր ու վեր։ Ռազմական ծառայությունից առաջ, երբ Պետերբուրգի համալսարանում բանասիրություն էր ուսումնասիրում, ուսուցչապետ Նիկողայոս Մառը նրա հոգու խորքը նետեց համակրանքի ու հարգանքի կայծն այն ազգի հանդեպ, որը հինավուրց ժամանակներից ի վեր ծառայում է լույսին ու բարուն։ Իսկ այստեղ, Կովկասում գտնվելու տարիներն արդեն նրա մտերիմները և ուղեցույցներն էին նույն Մառն ու նրա հայ աշակերտներ Հովսեփ Օրբելին, Նիկողայոս Ադոնցը, Մառի գործընկերներ Թորոս Թորամանյանն ու Գարեգին Հովսեփյանը։ Նրանց հետ Անիի պեղումներին էր գնում որպես մշակութային հնության սիրահար։ Ախթամարի բարձրաքանդակների առաջ ժամերով կանգնել էր հմայվածի նման։ Վանի արքաների բևեռագրերի հետքերով ճանաչել էր այդ ժողովրդի մեծագործությունները՝ կատարած մի դարաշրջանում, երբ նրա թշնամիներն աշխարհում չէին էլ հայտնվել նույնիսկ իբրև վայրենիներ։ Եվ պետերբուրգյան կայծը տարածվել, դարձել էր մի կրակ, որը միշտ բորբոք էր նրա սրտում։ Մի անգամ, երբ նա դեռևս Կովկասյան շտաբի պետն էր և ոչ թե ճակատի գլխավոր հրամանատարը, ռազմական մինիստրությունն էին հրավիրել՝ ռազմաճակատի առաջնահերթ խնդիրները ճշգրտելու համար, նա հենց մինիստրի ներկայությամբ ասաց.

— Թուրքերը կոտորել են հայ ժողովրդի արևմտյան հատվածը և այժմ էլ գալիս են արևելյան մասի վրա, որ մեր հպատակության տակ է։ Մեր ամենաառաջնահերթ խնդիրն է փրկել այդ ժողովրդին։

Մինիստրը Լեբեդինսկու առաջարկությունը համարել էր «քարի զգացումների պոռթկում»։

— Իմ շտաբի պետը պարտավոր է ամենից առաջ հետապընդել իր կայսրության շահերը,— խորհուրդ է տվել նա,— և ոչ թե առաջնորդվել սեփական հոգու տատանումներով։

— Իմ առաջարկությունը, պարոն մինիստր, բխում է նաև կայսրության շահերից...

Գեներալը փորձեց բացատրել։ Սակայն մինիստրը կտրուկ լռեցրեց նրան՝ հանձնարարելով.

— Միայն և միայն կայսրությա՛ն շահերը...

Գեներալ Լեբեդինսկին Կովկասյան ճակատի հրամանատար նշանակվեց այս հանձնարարությամբ, սակայն Կովկաս վերադառնալով՝ մնաց իր համոզման տերը։

Նրան, իհարկե, լավ էր ճանաչում նաև իր բարեկամ Շնեուրը, որի հետ կապված էր ոչ միայն ռազմական բարձրագույն դպրոցի ուսումնակցությամբ, այլև համոզմունքներով, որոնք ստուգելու բազմաթիվ առիթներ են եղել։ Շնեուրի համար Լեբեդինսկին փորձաքար էր, որի վրա ստուգում, ճշգրտում էր իր կարծիքները։ Եվ հիմա նա զարմացած էր, թե ինչո՛ւ գեներալն արդարացնում է մի արարք, որը միայն արգահատանքի է արժանի։

— Մենք եկել, կռվում ենք իր իսկ թշնամու դեմ, իսկ նա փեշի տակ սպիտակ դրոշ է պահում սև օրվա համար։

— Կռվո՛ւմ ենք,— իբր անտարբեր՝ ասաց գեներալը։— Կռվում ենք, բայց վաղն էլ կթողնենք-կգնանք, և ինքը կմնա միայնակ ու անօգնական։ Երբևէ մտածե՞լ ես այս մասին։ Հիշի՛ր, թե մենք, հենց մենք ինքնե՛րս վերջին հիսուն տարում սրանց համար քանի՛ սահման ենք գծել, քանի՛ անգամ ենք իրենց երկրի եզրագիծը տարել հարավ, մեկ էլ քաշել հյուսիս, ավելի՛ հյուսիս... Գուցե դա մեզնից շատերի համար սոսկ նշանակում է քարտեզի վրա մի գիծ ջնջել և քաշել մի նոր գիծ... Իսկ նրանց համար, նրանց, որ այս երկրի հին ու օրինավոր տերերն են, դա ոչ թե գիծ է, այլ ահավոր ճեղքվածք, որ անցնում է մարդկանց սրտի

միջով, իրենց տան ու ընտանիքի միջով, ազգի ճակատագրի վրայով։ Ահա այս տարբերությունն է, որ մենք հաճախ չենք էլ հասկանում։

Կապիտանին համոզիչ թվաց այդօրինակ բացատրությունը, սակայն մտքին չէր նստում, թե դասալքությունը կարող է ունենալ արդարացում։ Դրա համար էլ գեներալը վերստին դարձավ վերջին հիսնամյակի պատմությանը, նույնիսկ սեղանի վրա փորձեց մատով ցույց տալ Կովկասյան ճակատի գիծն իր տարբերակներով։

— Քե՞զ պիտի բացատրեմ, որ երբ Թուրքին զիջել ենք մեր նվաճած, հայերի օգնությամբ ու խանդավառ ընդունելությամբ կրաղեցրած երկիրը և ետ ենք նահանջել, Թուրքն առաջ է եկել մահ ու ավեր տարածելով։ Մենք ենք նորից առաջ շարժվել, նա ինքը ետ է քաշվել՝ դարձյալ մահ ու ավեր սփռելով։ Եվ այս ամենը կատարվել է հայի գլխի վրա, նրա հողում, նրա տանը, Հասկանո՞ւմ ես...

Վարպետ Գևոն եկավ խորոված ի անուշ ճենճերահոտով, Թարխունի ու անանուխի, համեմի ու կոտեմի զգլխիչ բույրերով և ձեռնածուի շարժումներով ուտելիքները շարեց սեղանին, իր ձեռքով ճոռնիկից օղի լցրեց գավաթների մեջ, մի գավաթը բարձրացնելով՝ վարժ ռուսերեն ասաց.

— Ձեր Թանկագին առողջության կենացը, պարոն գեներալ, նաև ձեր, պարոն կապիտան,— նա գլուխ տվեց նախ գեներալին, ապա կապիտանին։— Այսօր ինձ համար մեծ պատիվ է, շա՛տ մեծ պատիվ։ Կերեք-խմեցեք, ես ձեր խոնարհ ծառան... Ներող կլինեք,— և աչքով խորամանկորեն ցույց տվեց այն տեղը, ուրկից սպիտակ սավանով փաթաթված փայտն էր տարել։

Վարպետ Գևոն իր հաճոյախոսության ամբողջ պաշարը պարպեց, գնաց, և «Թանկագին հյուրերը» գավաթներն իրար զարկեցին։

— Մեր առողջության համար,— համարյա միաբերան մաղթեցին նրանք։

— Երևում է՝ ականջ է դրել,— օղին կուլ տալուց հետո նկատեց Շնեուրը։

— Անկասկած,— ասաց գեներալը՝ խորոված ի մի համեղ կտոր բերանը տանելով։ Ապա մտածեց մի պահ և հիշեց.— Աշխարհում շատ կան ազգեր, որոնց պատմության բազմաթիվ

էջեր գրվել են արյամբ։ Իսկ այս հայերը հենց արարչագործության սկզբից դրված են եղել Արևելքի ու Արևմուտքի ճամփաբաժանի վրա, և բոլոր մեծ նվաճողներն իրենց սրի ուժը նրանց վրա են փորձել։

Շնեուրի մտքով անցավ ասել, թե ինքը հպարտ է, որ կռվում է հայ ազգի փրկության համար։ Սակայն մեկ էլ երկնչեց այդ բարձր խոսքից և, գավաթներն օդի լցնելով, իր գավաթը բարձրացրեց։

— Աստված բարին կատարի,— մաղթեց նա հուզված սրտով։— Չէ՞ որ լինելու է վերջին ահեղ դատաստանը...

Գեներալն իր գավաթը բարձրացրեց և զարկեց Շնեուրի գավաթին.

— Դու բաց ճակատով պիտի գնաս վերջին ահեղ ատյանին,— խոսեց նա։— Դու և բոլոր նրանք, որ մասնակից են այս ճակատամարտին։— Ապա մի փոքր դադարից հետո հիշեց.— Ուիլիամ Գլադստոնն է ասել, թե ծառայել հայ ազգին նշանակում է ծառայել քաղաքակրթությանը։

* *
*

Պահպանվել է Ալեքսանդրապոլի անկման ականատեսի հիշատակարանը, որն այստեղ եմ դնում՝ նախապես կատարելով միայն լեզվա-ոճական թեթև շտկումներ։

«Բախտորոշ մայիսի 15-ի նախընթաց քսան օրը թուրքերը նստած էին Արաքսի մյուս ափին և ոչնչով չէին մատնում իրենց անհագուրդ ախորժակը։ Հակառակը, բարեկամություն էին խաղում. մեր հրամանատարներից էին հյուր կանչում, պատիվներ էին տալիս, մեկ-մեկ էլ իրենք էին հյուր գալիս Ալեքսանդրապոլ։ Եվ ամեն անգամ երդում-հավատ էին անում, թե իրենց հոգսը 1877 թվականի ռուս-թուրքական սահմանի վերահաստատումն է եղել՝ Արդահանի, Կարսի ու Բաթումի մարզերի վրա իրենց տիրապետության տարածումը։ Հաստատել են այդ սահմանը, պըրծա՛վ, հիմա հայերի ու մյուս կովկասցիների հետ ազնիվ հարևանություն պիտի անեն։

Մենք գիտենք, որ եթե թուրքն ազնիվ հարևանություն անելու ցանկություն ունենար, իր սահմանը պիտի դներ Բիթլիսից ու

Մուշից, Արաբկիրից ու Սեբաստիայից հարավ և հետո միայն հարևանի իրավունքով խոսեր այդ սահմանից այս կողմ ապրող հայության հետ։ Արևմտահայությանը ջարդելուց հետո, նրա կենդանի մնացած փշրանքներն աշխարհով մեկ տարագրության քշելուց հետո, Արաքսի ափին նստած՝ սա ի՞նչ տեսակ հարեվանություն պիտի անի Արարատյան երկրում ու շրջականերում կուչ եկած հայության հետ, որն այլևս հնարավորություն չունի իր ֆիզիկական գոյությունը պահպանելու, ո՞ւր մնաց, թե ուժ գտներ իր մեջ՝ թուրքին Արաքսի ափից դեն շպրտելու համար։

Սակայն մեր ճա՞րն ինչ էր. երբ չէինք կարող ուժով վռնդել նվաճած հողերից, պիտի ձևացնեինք, թե հավատում ենք նրա հռչակած հարևանությանը և աշխատեինք գոնե այնպես անել, որ Արաքսը չանցնի։

Աչքաբաց մարդիկ ասում էին. «Այս փոխայցելությունները նրա համար են կատարում, որպեսզի լավ ծանոթանան Ալեքսանդրապոլի ծակուծուկերին։ Չէ՞ որ քաղաքի ամրությունների մասին այն օրերի գյումրեցիները մեծաղղորդ առասպելներ էին տարածել։ Իսկ Բաթումի խորհրդաժողովից էլ ստույգ, թե կասկածելի լուրեր էին գալիս, թե թուրքերն ուզում են տիրանալ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծին։

Այսուհանդերձ, Ալեքսանդրապոլում տարածված այս ճիշտ թե փուչ լուրերը ոչ ոքի չէին անհանգստացնում։ Մարդիկ մտածում էին, որ քաղաքային դումայի նախագահը, այսինքն՝ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխը, հռչակավոր քաղաքագետ Ալեքսանդր Խատիսովն է և նա էլ Բաթումի խորհրդաժողովում հայկական պատվիրակությունն է ղեկավարում։ Դրանից էլ հարմար առի՞թ, որ նա այնտեղ պաշտպանի իր քաղաքի ու իր ազգի շահերը։ Թող պաշտպանի, ինչպես վայել է հռչակավոր քաղաքագետին և պետական գործչին ու դիվանագետին...»։

Այստեղ ես ընդհատում եմ Ալեքսանդրապոլի անկման ականատեսի հիշատակարանը, որովհետև նա ակնարկում է Բաթումի խորհրդաժողովի մասին, առանց լուրջ տեղեկություններ ունենալու վերջինիս ընթացքից։ Մինչդեռ պահպանվել են խորհրդաժողովի փաստաթղթերը և, մանավանդ, մասնակիցների գրառումները, որոնք և լույս են սփռում թուրք նվաճողների քաղաքականության այն հատվածի վրա, որը վերաբերում է Ալեքսանդրապոլի նվաճումին։

* *
*

Ճիշտ այդ ժամանակ Բաթումում հաշտության խորհրդաժողով էր ձգվում մի կողմից Թուրքիայի պատվիրակության, մյուս կողմից՝ Անդրկովկասյան միացյալ կոչված կառավարության երեք բաղկացուցիչների՝ վրաց մենշևիկների, հայ դաշնակցականների և ադրբեջանցի մուսավաթականների միջև։

Խորհրդաժողովն իբր թե տեղի ուներ։ Սակայն կողմերը չէին ժողովվում, կարծիքներ չէին փոխանակում։ Թուրքական կողմը դեռևս ապրիլին անդրկովկասցիներին էր ներկայացրել իր վերջնագիրը և պատասխան էր պահանջում։ Սրանք էլ, երեք թև՝ երեք տարբեր շահերով ու նկատառումներով, չէին կարողանում ընդհանուր եզրակացության գալ, աշխատում էին տարբեր կողմերից մոտենալ վերջնագրին, տարբեր կերպ շքռել նրա վրայով։

Անդրկովկասյան կառավարության պատվիրակությունը տեղավորված էր ծովափնյա «Բել վյու» հյուրանոցում, որի սենյակներն իրենց նախշազարդ փոքրիկ պատշգամբներով ծովահայաց էին, և խաղաղության պատվիրակները գոնե հնարավորություն ունեին դիտելու հին Պոնտական ծովի խաղաղությունը։

Օրը մի քանի անգամ անձրև էր գալիս։ Բաթումն իր խոնավ տարերքի մեջ էր։ Հյուրասենյակներում տեղաշորերը քարի ծանրություն էին ստացել, և հյուրերը գանգատվում էին հոդացավերից ու ծանր-ճնշող տրամադրությունից։

Օրերը երկարում էին տարտամ ու ձանձրալի ընթացքով, սակայն թուրքական պատվիրակությունը ի մի չէր հավաքվում, որպեսզի սկսվեն բանակցությունները։

Անգործությունից ու հեռանկարի անորոշությունից զզված էր հայ պատվիրակ Հովհաննես Քաջազնունին, որն անանձրև ժամերն անց էր կացնում պատշգամբին, ճոճաթոռի մեջ ընկղմած, իսկ մնացած ժամանակը՝ անկողնու վրա պառկած։ Իրար հանգուցած թաթերը գլխատակին՝ մտորում էր լուռ, բանակցություններին ներկայացնելիք հայկական պահանջներն էր մտովի քննում ու վերաքննում և մխիթարական բան չէր գտնում, քանի որ ռազմաճակատից գալիս էին միայն ցավալի լուրեր, որոնցից չէր կարելի չեզրակացնել, որ թուրքերն այստեղ իրենց պարզապես առել են ծուղակի մեջ և ճակատում իրենց գործն են տես-

նում։ Հայ պատվիրակներից միայն Ալեքսանդր Խատիսովն էր, որ իրեն չէր կորցնում։ Առավոտից մինչև ուշ գիշեր հանդիպումների մեջ էր։ Վրաց խմբի ղեկավար Չխենկելին, որ հին ծանոթներից էր, հաճախ էր ընդունում նրան, լսում, զրուցում հետը՝ միշտ էլ, սակայն, զգուշորեն շրջանցելով այն հարցերը, որոնք իր ազգակիցների խմբի առաջիկա ծրագրերին էին վերաբերում։ Բանն այն չէր միայն, որ Չխենկելին բնությամբ ծածկամիտ էր ու այդ ծրագրերի շատ կետերի մասին չէր խոսում նույնիսկ իր ազգակիցների հետ։ Նա գործնական մարդ էր և ճակատից ստացվող լուրերով ու Թիֆլիսի հետ ունեցած հեռախոսազրույցներով իր համար պարզել էր, որ հայերի վիճակն օրհասական է, հետևաբար և՝ անիմաստ, նույնիսկ վտանգավոր է նրանց հետ լուծ քաշելը։ Եվ այս համոզմունքով էլ մտածում էր, թե որքա՞ն ծիծաղելի է Խատիսովի դերը. մեկ վրացիների մոտ է վազում, մեկ փորձում է գերմանական պատգամավորության ղեկավար գեներալ Ֆոն Լոսովին ներքաշել հայոց շահերի պաշտպանության մեջ, նույնիսկ Բաքվից եկած մուսավաթականների հետ էր լեզու թափում, չնայած պարզից էլ պարզ էր, որ վերջինները երազում են օր առաջ տեսնել Օսմանյան դրոշի ծածանումը Կովկասի վրա։ «Ի՞նչ է պատեպատ զարկվում այս հայը,— Խատիսովի հեռանալուց հետո Չխենկելին էր մտածում։— Մի՞թե իրեն քաղաքական բանիմաց գործիչ համարողը չի կարողանում հասկանալ մի պարզ հաշիվ. հայության նավը խորտակվում է։ Իսկ խորտակվող նավի մկներն անդամ հասկանում են, որ պետք է փախչել, գլուխ պրծացնել»։

Մայիսի կեսերին «Գյուլ Ջեմալ» նավով Բաթում ժամանեց Օսմանյան կայսրության ծովային նախարար Ջեմալ փաշան՝ Իթթիհաթի եռապետության (Թալեաթ-Էնվեր-Ջեմալ) կարևոր անդամը։ Ինչպես և նրանից մի քանի օր առաջ Բաթում եկած Էնվերը, սա ոչ մի անելիք չուներ խորհրդաժողովում, սակայն ժամանեց և անմիջապես էլ տեսակցություն ունեցավ Անդրկովկասյան պատվիրակության հետ։

Հանդիպումը տեղի պիտի ունենար հենց «Բել վյու» հյուրանոցում։ Սակայն մինչ այդ ծովային նախարարն այցելեց քաղաքի ռազմական կետերը, «հյուրերի» վրա ազդեցիկ տպավորություն թողնելու համար այս ու այնտեղ ընդունեց զորամասերի

աղմկոտ զեկույցները և նոր միայն հասավ հյուրանոց։ Անդրկովկասյան պատվիրակության բոլոր անդամներն ընդառաջ էին ելել՝ արժանանալու նրա բարյացակամ ողջույնին։ Շքամուտքի առաջ ու ձախ կանգնել էին գլխահակ, երբ նա ցած իջավ մեքենայից և թիկնապահների ու զինվորական բարձրաստիճան պաշտոնյաների ուղեկցությամբ սրընթաց անցավ դիմավորողների շարքերի միջով։

Կարճահասակ մարդ էր այդ Ջեմալ փաշան, կուրծքը դուրս ցցած, լայնամորուք և զինվորական շքեղ հագուստի մեջ երևում էր իբրև պճնված մի խրտվիլակ։

Հյուրանոցի սրահում դրված երկար սեղանի շուրջ իսկույն տեղավորվեցին պատվիրակությունները, և սեղանի գլխին բազմելով՝ Ջեմալը հայացքը շուռ տվեց ներկաների վրա։ Նրան շատ մոտիկ, ամենապատվավոր տեղերում նստել էին մուսավաթականները։ Սրանցից հետո կովկասյան լեռնականների ներկայացուցիչներն էին տեղեր գրավել։ Ապա վրացիներն էին, վերջին աթոռներին՝ հայերը։

Բազկաթոռի վրա ծուռ նստած՝ Ջեմալ փաշան հին ծանոթի մտերմությամբ գլուխ տվեց հավատակից մուսավաթականներին, և նրանք իսկույն ոտքի ելան, ժպտադեմ ծալծլվեցին փաշայի սիրալիր հայացքի առաջ։ Լեռնականները ևս անմասն չմնացին Ջեմալի սիրալիրությունից։ Կողքին նստած թարգմանի՞չը, թե՞ խորհրդատուն նրա ականջին ինչ-որ բան փսփսաց, և նա մի ծուռ կիսաժպիտով պատասխանեց Վրաստանի պատվիրակների գլուխ տալուն։ Երբ հերթը հասավ հայերին, Ջեմալը կտրուկ փոխեց դիրքը։ Հայացքն այնպես ծուռ էր ու արհամարհական, կարծես հարցնելիս լիներ. «Դուք դեռ գոյությո՞ւն ունեք այս աշխարհի երեսին»։ Համոզվելով, որ գոյություն ունեն, և, ահա՛, որպես Անդրկովկասյան կառավարության պատվիրակներ նստած են իր դիմաց, իր երկրի հետ բանակցություններ վարելու են եկել, կապտեց-սևացավ, երեսը շրջեց, սկսեց ջղային մատներով թկթկացնել սեղանը։

Ջեմալին այդ վիճակից հանեց Խալիլը, որ նրա ականջի տակ փսփսում էր։ Ծովային նախարարը տեղից վեր կացավ խրոխտորեն, աջլորավարի և, իբր թե, մոռացած տհաճ միջադեպը, սկսեց ողջունել պատվիրակության մասերին առանձին-ա-

ռանձին ու այն հերթականությամբ, որով իր հայացքներն էր բաշխել։

— Թուրքերը և ադրբեջանցիները եղբայր-բարեկամներ են,— դիմելով իր դիմաց նստած Ռասուլ-զադեին ու նրա հարևաններին՝ ջերմորեն խոսեց Ջեմալ փաշան։ Նրա աչքերը փայլում էին խանդավառությունից։— Մենք նույն մոր զավակներն ենք, նույն լեզուն ու հավատն ունենք և նույն նպատակը։ Ճակատագրի պատահական դիպվածներով բաժանվել էինք իրարից և ահա նույն ճակատագրի բարյացակամությամբ պիտի միանանք իրար։ Մենք անպայման կմիանանք, կստեղծենք մեր միասնական ու հզոր տերությունը, և ոչ ոք չի կարող խանգարել մեր միասնությանը։ Ո՛չ ոք և ո՛չ մի ժամանակ...

Ադրբեջանցի մուսավաթականները ոգևորությամբ ծափահարեցին նրան։ Ռասուլ-զադեն՝ մուսավաթական պատվիրակության ղեկավարը, նստած տեղում վեր-վեր էր թռչում։ Ջեմալը ձեռքն առաջ պարզեց մարտականորեն, և ադրբեջանցիները հարևան վրաց մենշևիկներին նայելով՝ ակամա դադարեցրին խանդավառ ծափողջույնը։

— Մենք Անդրկովկասում ոտք ենք դնում որպես կարգ ու կանոն հաստատողներ,— Ջեմալն այսպես շարունակեց իր ճառը։— Բավական է որքան աստծու ծրից ելածներն այնտեղ սերմանեցին մահ ու թշնամություն։ Բայց, առաջին հերթին, մենք այնտեղ պետք է ազատագրենք մեր ազգակիցներին։ Եվ մեր մեծ ու փոքր թշնամիները թող լավ իմանան, որ հենց սա էլ մեր գլխավոր նպատակն է։

Ջեմալը դեռ հետույքն աթոռին չէր դրել, որ տեղից վեր կացավ Հյուսիսային Կովկասի ու լեռնական ազգությունների պատվիրակ Հեյդար Բամաթը։ Նրան թվում էր, թե Օսմանյան կայսրության բանակներն այդ պահին եկել-դեմ են առել Կովկասյան լեռնաշղթային և այլևս ոչ մի քայլ չեն անելու դեպի հյուսիս։ Աղաչանքի իր խոսքը նա Ջեմալին ուղղեց թուրքերեն.

— Արդար վեզիր, ալլահի ուղարկած փրկարար, Գափգազը Մահամմադի որդիների տունն է, և մենք՝ լեռնականներս, որ միշտ էլ Օսմանյան թագավորության աղնիվ բարեկամներն ենք եղել, այսօր չպետք է դուրս մնանք ձեր ուշադրությունից։ Գափգազը մի մեծ ու համերաշխ պետություն պիտի դառնա՝ հայր Օտտոմանի գավազանի ներքո...

Ջեմալը գլխով հավանության նշաններ էր անում և սիրալիր հայացքով հուսադրում ռազմաշունչ լեռնականների պատվիրակին։

Քաջազնունին, որ Խատիսովի ձախ թևում էր նստած, նրա ականջին շշնջաց.

— Այս ի՞նչ է կատարվում, մարդ աստուծո։

Խատիսովը միայն ուսերը թոթվեց։ Նա գիտեր, որ նախորդ օրերին ադրբեջանցիներն ու լեռնականները, իրենցից ու վրացիներից գաղտնի, հանդիպումներ են ունեցել Թուրքիայի պատվիրակության անդամների հետ։

Երբ «Դափգազի» մահմեդականության ներկայացուցիչների ու Ջեմալի սիրաբանությունն ավարտվել էր, և Եռապետության անդամը գոհունակությամբ շոյում էր լայն, թիանման մորուքը, Չխենկելին ելույթի իրավունք խնդրեց և տեղից բարձրացավ, սակայն այնպես խոնարհ ու ձգված դեպի Ջեմալը, որ թվում էր, թե գնում է համբուրելու նրա ձեռքը՝ սեղանի վրա թրի պես մեկնված դեպի պատվիրակները։ Անդրկովկասյան կառավարական պատվիրակության ղեկավարը լորձնաշուրթ գովեց Օսմանյան կայսրությունը, այդ կայսրության հզորությունն անվերջ ամրապնդող պարոն նախարարին, ապա, մոռանալով, որ ինքը Անդրկովկասի ֆեդերատիվ հանրապետությունն է ներկայացնում, միայն Վրաստանի համար խնդրեց խաղաղություն և բարեկամական հարաբերություններ։

Ակակի Չխենկելու ելույթի ամեն նախադասությունը հաստատվում էր Ջեմալի գլխի մի շարժումով։ Պարզ երևում էր, որ վրաց ղեկավարի խոսքերը նրան դուր են գալիս։ Եվ սա ավելի էր խորացնում հայերի վիճակի անորոշությունը։

— Վրաստանը դարերի ընթացքում ապացուցել է, որ իր համար թանկ է Թուրքիայի բարեկամությունը, և այսօր էլ մենք այստեղ ենք հավաքվել այդ բարեկամությանը տալու պետական ապահովություն,— Չխենկելու վերջին այս խոսքերն էլ Ջեմալը հաստատեց գլխի մի քանի շարժումով, և, ի նշան համերաշխության, ասաց.

— Ես տեսնում եմ, որ գյուրջիների հետ մեր դրությը հաճելի հունով է գնալու,— այս բառերը նա արտաբերեց հանդարտ ինքնավստահությամբ, հայացքը դարձնելով աջ ու ձախ, ուր Վեհիբն ու Խալիլն էին նստած։ Իր եզրակացության տպավորությունն

ստուգելով նրանց սառը դեմքերին, Ջեմալն անմիջապես էլ ավելացրեց.— Իհարկե, գարերի պատմությունը մեզ տվել է ոչ միայն ուրախանալու առիթներ, եղել են նաև ցավալի միջադեպեր, որոնց փորփրելն այսօր մեզ կշեղեր ուղիղ ճանապարհից։ Կարևորն այն է, որ մենք հիմնականում հավատացել ենք իրար և այսօր էլ, հուսով եմ, առիթ չունենք հիասթափվելու։ Ես համոզված եմ, որ Օսմանյան կայսրության և հյուսիսային հարևան Գյուրջիստանի փոխըմբռնողությունը պիտի լինի լիակատար ու հաստատուն։— Այստեղ Ջեմալը կանգ առավ մի փոքր, մոայլվեց, մոայլ հայացքը հառեց հայ պատվիրակների վրա և շարունակեց.— Այո՛, գյուրջիների բարեկամությանը ես հավատում եմ... ինչ որ չէի կարող ասել հայերի վերաբերյալ։ Հայերը... հայերը,— երևում էր, թե ինչպիսի դժվարությամբ էր զսպում զայրույթի ու ատելության պոռթկումը, որի դեմ անզոր կուչ էին եկել հայ պատվիրակները, իսկ մյուսներն անտարբեր գլուխներն էին խոնարհել, որ չտեսնեն հայերի՝ օգնություն աղերսող դեմքերը։ Ջեմալը, սուր հայացքը սրահում կուչ եկած հայ պատվիրակների վրա հառած, հայերի «վայրագություններն» էր հիշում, թուրք ժողովրդի, նրա պետության և անդրկովկասյան մահմեդականության դեմ գործած «դաժանությունները», որոնք «այսօր էլ շարունակվում են»։ Նա հայոց «մեղսագործությունները» թվարկելիս հատուկ շեշտեց նրանց կապը ռուսաց և բոլշևիկների հետ։ Չմոռացավ անդրադառնալ նաև գեներալ Անդրանիկի գործունեությանը, հիշեց նրա «անհաշտ, ավազակային դիրքը կայսրության դեմ»։ Անդրանիկի մասին խոսելիս նա արդեն գազազած էր և թուքն էր շաղ տալիս դիմացը նստածների վրա... Հետո էլ իր խոսքն ուղղելով գահլիճին՝ ասաց.— Ո՞վ չգիտի, որ մեր ու հայերի վեճը հին է և շատ աղետների պատճառ է եղել։ Բայց կյանքը և վերջին տարիների դեպքերը ցույց են տալիս, որ հայը չի ուզում ոչ մի քայլ ձգել դեպի հաշտություն և անընդհատ խորացնում է այն անդունդը, որ, ի՞նչ թաքցնեմ, կարող է դառնալ նաև իր իսկ գերեզմանը։

Հայ պատվիրակների ղեկավար Ալ. Խատիսովն այս ամբաստանությունների տակ խեղճացած՝ փորձեց արդարանալ, արդարացնել իր ժողովուրդը։ Նա խոնարհաբար միայն ասաց.

— Գուցե պետք է ստուգել պարոն նախագահին հասած տեղեկությունները։

— Ես դրանք ստուգելու կարիքը չունեմ,— գազազած նետեց Ջեմալը։— Նո՞ր պիտի ստուգեմ ու համոզվեմ, որ դուք միշտ էլ ռուսի հետ եք եղել։ Այո՛, նրանց բացակայությամբ էլ նրանց հետ եք, և առիթը բաց չեք թողնում թիկունքից հարվածելու ձեր իսկական բարերար թուրքին։

Ուրիշ պարագաներում իր ճարպկությամբ ու ճարտարախոսությամբ փայլող Խատիսովն այստեղ ոչինչ չգտավ պատասխանելու և, երևի կյանքում առաջին անգամ, բարվոք համարեց լռել ու հանձնվել դեպքերի ընթացքին։

* *
*

Հանդիպումն ավարտվեց, և Ջեմալն ինչպես հայտնվել էր, այնպես էլ հեռացավ հյուրանոցից՝ Անդրկովկասյան պատվիրակությանը հանձնարարելով ամենակարճ ժամկետում պատասխանել վերջնագրին, որպեսզի հնարավոր լինի հավաքվել հաշտության սեղանի շուրջ։

Պատվիրակության խմբերն անխոս հեռացան իրենց հարկաբաժինները միանգամայն տարբեր ու ներհակ տրամադրություններով։

Քաջազնունին, առանց շորերը հանելու, մեջքի վրա պառկեց լայն մահճակալին, ձեռքերը տարածեց աջ ու ձախ և աչքերը փակ փորձում էր չմտածել ոչ մի բանի մասին։ Այս դեպքում նա շատ էր նման խաչված Քրիստոսին։ Այո՛, եթե հայերն էլ ունեցած լինեին իրենց Քրիստոսը, ապա նա անպայման կլիներ հայ թշվառ ազգի այս խեղճ պատվիրակի նման։

Գեղեցիկ տղամարդ էր Հովհաննես Քաջազնունին։ Միջահասակ, առնական կերպարանքին շատ էին վայելում խելոք ու թախծոտ աչքերը, գլխի՝ վաղ ճերմակած թավ ու խռիվ մազերը, բեղ-մորուքը։ Աշխատավորի խոշոր ձեռքերը եթե գործի չէին, խաչված էին լինում կրծքին կամ իրար հյուսված՝ հանգչում էին փորին։ Այդպես նա նման էր լինում նաև հոգնատանջ մի ճանապարհորդի, որ լուռ մտորում է անցնելիք ճանապարհի մասին։

Հիմա խաչանման փռվել էր մահճակալի վրա և, մտածելու, անցնելիք ճանապարհի մասին մտորելու անընդունակ, փորձում

էր իրեն անջատել այն ստորացուցիչ ու անարգական վիճակից, որին դատապարտված էին ինքն ու իր ընկերները։

Նրա ընկերները, այսինքն՝ հայկական պատվիրակության անդամները, երեքն էին՝ պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Խատիսովը, շարքային անդամ Միքայել Պապաջանովը և խորհրդական Սիմոն Վրացյանը։ Սրանցից երկուսն իսկապես իր ընկերներն էին՝ նույն դաշնակցական կուսակցության պատկանելու հանգամանքով։ Երրորդը՝ Պապաջանովը, նախկին Պետական դումայի հայ անդամը, որ ժամանակին հայտնի էր հենց դումայի նիստերում ունեցած հայանպաստ ելույթներով ու վճռական նախաձեռնությունների իր եռանդուն հրահրումով, կարծես հոգնել էր մենշևիկների ու մուսավաթականների հետ կռիվ տալուց։ Մի տարի էր, ինչ ժամանակավոր կառավարության նշանակած Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կազմում նրա հիմնադիր չորս անդամներից մեկն էր, որ պետք է այդ կառավարության բարձր մարմնի մեջ ներկայացներ հայ ժողովուրդը։ Այդ ժողովրդի մասին ի՞նչ գիտեր Հայաստանի գյուղերում երբեք ոտք չդրած այդ չինովնիկը։ Գիտե՞ր, թե ինչպե՞ս է ապրում, ի՞նչ է անում և ի՞նչ է երազում այն ժողովուրդը, որին ներկայացնելու պատիվն են վստահել իրեն։ Կամ իրենք՝ պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Խատիսովն ու հենց ինքը՝ Հովհաննես Քաջազնունին, վերջապես խորհրդականի խորհրդավոր պարտականությամբ օժտված Սիմոն Վրացյան—Գրուզինյանը,— մի՞թե իրենք, այդ երեքը միասին, հայ ժողովրդի վիճակին, ցավին ու բաղձանքներին շատ ավելի էին տեղյակ, քան ժամանակավոր կառավարության դրածոն։ Չէ՞ որ այդ օրերին Հայաստան կոչվող այն բզկտված ու անվերջ քրքրվող տարածքը նրանցից հեռու էր որպես մի օտար մարմին։ Խատիսովն, իհարկե, երկար տարիներ պետական բարձր պաշտոն էր զբաղեցրել՝ իբրև ցարական կառավարության վստահելի անդրկովկասցիներից մեկը։ Բավական է ասել, որ 1909-ից մինչև 1917-ը նա Թիֆլիսի քաղաքագլուխն էր եղել, ընդ որում վերջին երեք տարին՝ նաև Կավկասի 44 քաղաքների միության նախագահը։ Նրա մասին խոսում էին իբրև գործիմաց ու ձեռնհաս պաշտոնյայի, որը վստահություն է ներշնչում իր պաշտոնում։ Այդ ժամանակներում նրան շա՞տ էր հետաքրքրում հայ ժողովրդի ճակատագիրը կամ նա շա՞տ էր

հիշում իր հայ լինելը։ Տասնամյակներ հետո նրա դասակիցները պիտի գրեին ու թմբկահարեին, որ, երբ «Թիֆլիսն անցավ վրացիների ձեռքը, և Անդրկովկասը փաստորեն անջատվեց Ռուսաստանից», ահա այս ժամանակ միայն «իրագործելի էր նրա վաղեմի փափագը՝ մտնել դաշնակցության շարքերը»։

Հետաքրքիր է, թե այդ «փափագն» ինչո՞ւ չիրագործվեց այն ժամանակ, երբ Խատիսովը գործի գլուխ էր, ազդեցիկ դեմք համաանդրկովկասյան կյանքում։ Պաշտոնա՞նկ պիտի դառնար՝ հիշելու համար, որ ինքը հայ է և իր ազգին օգտակար լինելու նպատակով հարկ է «մտնել դաշնակցության շարքերը»։

Ալեքսանդր Խատիսովը մեծ գործունեության, հասարակության աչքին երևացող լայն շրջագծով, ազդեցիկ դերակատարության համար էր ծնվել և դեռ երիտասարդ տարիներից հասկացավ, որ իրեն նեղ է գալիս իր ձեռք բերած բժշկի պաշտոնը, նետվեց հասարակական-պետական գործունեության ասպարեզ, ուր գրկաբաց ընդունեցին մի այդպիսի եռանդուն, սնդիկի պես շարժուն, գործնական, ամեն ինչ առաջադիր նպատակին ծառայեցնելու պատրաստ մարդուն։ Երբ նրա թուրը, ինչպես ասում են, աջ էլ էր կտրում, ձախ էլ, նա պատճառ չուներ ամփոփվելու հայոց անձուկ միջավայրում և շփվելու նրա փշոտ հարցին։ Թիֆլիսի քաղաքագլխի բարձր դիրքին ոչ իր կամքով հրաժեշտ տալուց հետո նա, ճիշտ է, ստանձնել էր Անդրկովկասյան հանրապետության ելևմտական (ֆինանսների) նախարարի պաշտոնը։ Սակայն նա շրջահայաց մարդ էր և չէր կարող չտեսնել, որ այդ օրապակաս հանրապետությունը երկար կյանք չպետք է ունենա։ Եվ իրեն կապեց հայկական կյանքի հետ, իր ուժերն ի սպաս դրեց ազգային գործունեության. տասնութի սկզբին արդեն Ալեքսանդրապոլի քաղաքագլուխն էր և պատրաստվում էր նոր թռիչքների, որ պիտի կատարեր ազգային կյանքում։

Ազգային գործունեությունը մի հետաքրքիր ու շահեկան կողմ ունի. գործչի անունը զնգում է ազգի բոլոր շերտերում։ Ազգաշահ ու ազգապահպան գործունեությամբ է, որ ազգի մեջ անմահանում են մարդիկ։ Սակայն այդ գործունեությունն ունի նաև իր տհաճ կողմերը, որոնցից մեկը պարզապես անտանելի է՝ պահանջում է նաև զոհողություններ։ Դրա համար էլ Ալեքսանդր Խատիսովն Ալեքսանդրապոլի քաղաքագլուխն էր հեռակա։ Չէ՞ որ այն օրերին քաղաքն ուղղակի թուրքական արշավանքի ճա-

նապարհին էր գտնվում։ Դրա համար էլ Խատիսովը թուրքերի կողմից իր քաղաքի գրավման լուրը պիտի առներ շատ օրեր հետո։

* *
*

Հրաժեշտից առաջ Ջեմալ փաշան քաղաքավարի վերաբերմունքով զարմացրեց Անդրկովկասյան կառավարության պատվիրակներին. նրանց հանդիսավոր ճաշկերույթի հրավիրեց իր նավի մեծ սրահը։ Երփնավառ գորգերի, բազրիքներին շարված ծաղկամանների և եղբայարական համագործակցության կոչող պաստառների առատությունից շլացել էին պատվիրակները։ Թուրքական նավը լցվել էր եվրոպական դասական երաժշտության ելևէջներով։ Դեպի սրահ տանող աստիճաններին ու միջանցքներում թուրք հաճոյակատար սպասավորները շողոմաբար նրանց ներս էին հրավիրում և յուրաքանչյուրին նստեցնում էին հենց նրա համար նախատեսված տեղում։ Հայ պատվիրակների ղեկավար Խատիսովին տարան և, ի մեծ զարմանս իր, բազմեցրին սեղանի գլխին։ Երբ բոլորն զբաղեցրին իրենց տեղերը, պարզվեց, որ Խատիսովը գտնվում է Ջեմալ փաշայի կողքին, նրա ու դոկտոր Բեհաեդդին Շաքիրի արանքում։ Սկզբում նրան մի պահ թվաց, թե ինքը զգայախաբության մեջ է նախորդ օրվա խայտառակ տեսարանից հետո, մանավանդ որ նորին մեծություն Ջեմալ փաշան, ծափահարությունների ուղեկցությամբ իր աթոռին հասնելով, սիրալիր ողջունեց և նույնիսկ ժպտաղեմ հարցրեց.

— Ինչպե՞ս եք, հալ-ահվալ նեջա՞ դիր։

Իսկ երբ նստեցին, Խատիսովն աչքի տակով աջ ու ձախ նայեց կողմնորոշվելու համար։ Աջում փքված Ջեմալ փաշան համարյա հավասար էր իրեն և ճնշում էր սոսկ ներկայությամբ։ Իսկ ձախ թեն զբաղեցնող Բեհաեդդին Շաքիրը և նրա կողքին տարածված խալիչ բեյն իրենց մեծազանգված մարմիններով կողք կողքի տված փղերի տպավորություն էին թողնում։

Խատիսովն այլայլված էր չափազանց։ Ուրիշ պարագաներում արագորեն ինքնազսպումի ու կողմնորոշման հասնող մարդ՝ նա չէր կարողանում տիրապետել իրեն, որոշել անելիքն ու ասելիքը։ Դոկտոր Շաքիրը, հակառակ ահռելի մարմնազանգվածին, փոքր-

ու նվաղուն ձայն ուներ և, երբ հազիվ լսելի շաղակրատում էր, հայոց պատվիրակն ստիպված էր լինում նստատեղից բարձրանալ, ձգվել դեպի հարևանի բերանը, որպեսզի ականջը որսա նրա խոսքերը։

Երկարուկ սեղանի մյուս ծայրին, նրանց ուղղությամբ, նստած էին հայ պատվիրակության երկու անդամները. Քաջազնունին՝ մրկված, մթնած երեսկահատով, և կոկ ու շիկ հագնված, սակայն տեսքով ու վերաբերմունքով շրջապատի նկատմամբ անտարբեր Պապաջանովը, որի աչքին ոչինչ չէր երևում, բացի համով խորտիկներից և ընտիր խմիչքներից, որոնց յուրացման փայլուն օրինակ էր տալիս հարևաններին։

Քաջազնունին, առյուծաբաշ գլուխն ափերի մեջ առած, դիմացն էր նայում և, նկատելով Խատիսովի հերթական ձգվելը դոկտոր Շաքիրի բերանի ուղղությամբ, զայրացած մռնչաց.

— Վայ քո մոր... արգանդը չորացած լիներ, քեզ նմանին չբերեր։

— Что-что?— խորոված մի խոշոր պատառ բերանը դնելով՝ անհանգիստ հարցրեց Պապաջանովը։

— Կե՛ր, ասում եմ, կե՛ր,— նրա կողմ նետեց Քաջազնունին։— էլ չի լինելու։

— Странный ты человек,— խռովկան երեխայի պես պատառաքաղը վայր դրեց Պապաջանովը։— Եթե հայ ժողովուրդը մեր չուտելուց է բախտավորվելու, ես պատրաստ եմ շաբաթներով ծոմ պահել։

— Ինչպիսի՞ զոհաբերություն։

— Պատվովս եմ երդվում։

Խատիսովն իր տարերքի մեջ էր։ Պենսնեի տակից շողշողում էին նրա մանր աչքերը։ Նա կլանված լսում էր ձախակողմյան հարևանին և ինքն էր խոսում ու տեղեկություններ հաղորդում. երկու դեպքում էլ ձգվում-երկարում էր՝ մեկ դեպի դոկտոր Շաքիրի բերանը, մեկ դեպի ականջը։ Եվ բավական էլ բնական ու անբռնազբոսիկ բնույթ էր ստացել նրանց զրույցը։ Հայոց պատվիրակության ղեկավարը, օրինակ, տեղեկացավ, որ տասնչորսին էնվեր փաշայի հետ այդ Շաքիր Բեհաեդդինն է արշավել Արդահանի վրա, որ Ռիզա բեյի հետ աջարական չեթեներն է կազմակերպել, և որ առհասարակ ինքը՝ Բեհաեդդին Շաքիրը, հայոց ազնիվ թշնամին է։ Նա այդպես էլ ասաց՝ «ազնիվ թշնա-

մին», այսինքն՝ որ ուրիշների պես չի թաքցնում հակակրանքը և, գավառներում հայերին կոտորելով, ամբիոններից բարեկամության ճառեր չի ասում ու եղբայրության երդումներ չի տալիս։ Այս խոսքն ասելիս այնպես անկեղծ ու անշինծու ժպտաց՝ ոսկե ատամնաշարը ցուցադրելով, որ Խատիսովն ինքն էլ փորձեց ժպտալ հարևանին։ Հավանաբար, այդ ժպիտն ստացվեց, որովհետև դրանից հետո էր, որ թուրք դոկտորն իսկապես սրտաբաց, մինչև վերջ անկեղծ բացատրեց իր կառավարության քաղաքական ծրագիրը։

— Հայերդ,— ասաց,— կանգնած եք մեր համաիսլամական ու համաթրքական սրբազան բաղձանքների իրականացման ճամփի վրա, և մենք, ուզենք-չուզենք, բախվում ենք ձեզ հետ։ Այդ բախումը վեր և դուրս է մեր անձնական զգացումներից ու տրամադրություններից։ Պատկերացնո՞ւմ եք։— Խատիսովը շշմած պլխով արեց. «Պատկերացնում եմ», և դոկտոր Շաքիրն ավելի անկեղծ շարունակեց.— Մենք տարերայնորեն հարկադրված ենք ոչնչացնել, հեռացնել ճամփի վրայից այն ամենը, որ արգելք է հանդիսանում մեր ազգային այդ սրբազան բաղձանքների իրականացմանը։ Եվ ապա,— մի փոքր շունչ առնելուց հետո դոկտորը գտավ շատ կարևոր մի բան ևս.— դուք միշտ ռուսների հետ եք։ Դուք նրանց առաջապահն եք այս կողմերում։ Իսկ ռուսները մեր ոխերիմ թշնամիներն են։ Պատմական և ճակատագրական թշնամիները։ Հասկանո՞ւմ եք։

— Հասկանում եմ, պարոն դոկտոր,— արդեն սրտովացած պատասխանեց Խատիսովը։— Բայց չէ՞ որ մենք հիմա ռուսների հետ խզել ենք մեր կապերը։ Մենք Անդրկովկասյան մեր հարևանների հետ կազմել ենք Ռուսաստանից անկախ մեր կառավարությունը և, եթե հարկ լինի, պիտի կռվենք ռուսների դեմ։

—Է՜, բարեկամ... Իսկապե՜ս բարեկամ, քանի որ մենք միասին ճաշի ենք նստած և բարեկամաբար մեր անկեղծ խոսքերն ենք ուղղում մեկմեկու... Հնարավոր է, որ դուք հիմա իրոք խզել եք ձեր կապերը։ Բայց մի՞թե դա փոխում է դրությունը, երբ ձեր խմբապետներն են անհաշտ կանգնել ամենուրեք ու դարձյալ խանգարում են մեր շարժմանը։ Եվ, վերջապես, ո՞վ է Շահումյանը։ Մի՞թե նա հրաժարվել է հայությունից։ Եվ նա՞ չէ, որ Բաքուն կտրել է Կովկասից ու Օսմանյան կայսրությունից, դրել ռուսի ծառայության տակ։ Իսկ Բաքվում ո՞վ է պա-

հում Շահումյանի թիկունքը։ Հայե՞րը, հայկական զո՞բքը։ Եվ այսքանից հետո դուք ուզում եք համոզել, թե արդեն ձեր կապերը խզել եք Ռուսաստանից ու մեր բարեկամն եք ոտով-գլխով։ Է՞, ո՞նց կլինի, բարեկամ, այդպես ո՞նց կլինի։

— Բայց Շահումյանը մեզ հետ ոչ մի կապ չունի, պարոն դոկտոր։ Կդա ժամանակ, որ մենք կովի կելնենք իրար դեմ։

— Իսկ դրան մենք որքա՞ն պիտի սպասենք,— խորամանկ հարցրեց Թուրքը։— Որքա՞ն պիտի սպասենք։ Չէ՞ որ օրեցօր նրանք ամրապնդվում են Բաքվում... Լավ իմացեք, մենք բարեկամներ կդառնանք այն ժամանակ, երբ տեսնենք, որ մեր բոլոր թշնամիները նաև ձեր թշնամիներն են, և դուք սուր եք շարժում նրանց դեմ։ Մենք ուրիշ տեսակ բարեկամություն չենք ճանաչում։

Ջեմալ փաշան ականջի պոչով լսում էր հարևանների զրույցը և, տեսնելով որ այն ճիշտ հունով է ընթանում, աշխատում էր ոչնչով չխանգարել։ Ահա այդպես, Բեհաեդդին Շաքիրը լավ բռնեցրեց. այդ ո՞նց եք Ռուսաստանից կտրվել, որ Շահումյանը նրա կարգը բերել է Բաքու և դեմ է արել մեր քթին։ Այդ քանի՞ տեսակ հայեր կան աշխարհում, և մենք մի հայ ժողովրդի հանդեպ քանի՞ տեսակ հարաբերություն ու քաղաքական ընթացք պիտի բռնենք։— Այսպես ինքն իր ներսում հարց էր տալիս Ջեմալը, չնայած իր համար այդպիսի հարց առհասարակ չկար, քանի որ տարիներ ի վեր, գոնե 1914-ից սկսած ինքն ու իր կուսակիցները միայն մեկ ու միասնական քաղաքականություն են վարել հայի դեմ, որտեղ էլ նա հանդիպի, ինչ քաղաքական հոսանքի, դասի ու խավի էլ պատկանելիս լինի։ Ա՛յդ էր մնացել, որ 1915-ի հայկական եղեռնի կազմակերպիչ Եռապետության անդամը չիմանա, թե ինչպես պիտի լուծել հայ ժողովրդի հարցը։

Դոկտոր Շաքիրը հայ պատվիրակի դեմքին հավանաբար հարց կարդաց և աշխատեց այդ հարցին էլ բացատրություն տալ։ Այդ պահին նրա անկեղծությանը չէր կարելի չհավատալ։

— Դուք փորձեցեք հասկանալ մեր դրությունը,— բացատրեց Շաքիրը,— մեծ տերությունները մեզ դուրս են արել Եվրոպայից, և մեզ հիմա կենսական մեծ տարածություն է պետք։ Կենսական տարածություն, որը լավագույնս համապատասխանի նաև մեր հավատո և ազգային բաղձանքներին։ Հայերդ խելոք մարդիկ եք, և չի կարող պատահել, որ չիմանաք մեր ակունք-

ներր Միջին Ասիայում են, Հյուսիսային Կովկասում, Իթիլ-Վոլգայի ավազանում։ Եվ այստեղից մինչև այդ ակունքները մերոնք են տարածված, մեր լեզվի ու հավատի եղբայրները, մեր արյունակիցները։ Մերոնք և... մեզանից կտրված։ Հասկանալի՞ է։ Մենք պետք է միանանք։ Մենք պարտավոր ենք կազմել մեկ միասնական հզոր պետություն և այս խուլ ու բութ աշխարհին ասել այն խոսքը, որի համար ամենակարող ալլահն ստեղծել է մեզ։ Եթե չկատարենք այդ միսիան, ճակատագիրն ու ալլահը մեզ չեն ների։ Հիմա ո՞նց կլինի, որ ամեն մի Անդրանիկ մեր մեծ ճանապարհին կանգնի ու խանգարի... Այստեղից էլ առաջ է գալիս ճանապարհը մաքրելու խնդիրը, որը վեր է մեր անձնական ցանկությունից...

...Հյուրանոցային իր սենյակի առաջ խատիսովը կանգ առավ մի պահ՝ խոսելու պատրաստ, իր երկար ու հանգամանալից զրույցը բացատրելու տրամադրությամբ։ Սակայն Քաջազնունին կողքով անցավ գլուխը կախ, մռայլ ու փշոտ։ Նրան սպասում էր անքուն ու անհանգիստ մի գիշեր, որի տխուր ուրվագիծը պիտի մնար միայն ամեն ինչ պարունակող ու հանդուրժող օրագրում։

* *
*

Ջեմալ փաշայի գնալուց հետո Բաթումի դիվանագիտական մթնոլորտն ավելի պղտորվեց։ Անդրկովկասի պատվիրակության վրացի, ադրբեջանցի ու հայ անդամներն այլևս ոչնչով ցույց չէին տալիս իրենց «միասնությունը»։ Իսկ թուրք պատվիրակությունը, արգեն համոզված, որ իր դեմ ունի շահերով իրարից տարբեր, նույնիսկ հակադիր ու թշնամի զրուցակիցներ, չէր էլ շտապում ստանալու վերջնագրի պատասխանը, որի վրա առաջին շրջանում այնպես պնդում էին Պոլսից եկող հրահանգները։

Ստացվել էր այն դրությունը, երբ որսորդը թակարդը լարումդնում է ճամփաբաժանի կենտրոնում և սպասում որսի ընկնելուն։ Որսն էլ գիտե թակարդի տեղը, մոտենում-հոտոտում է ու ետ կանգնում։ Որսորդն սպասում է, որսն էլ է սպասում։ Եվ որովհետև որսն ուրիշ ճանապարհ չունի, որսորդը չի էլ շտապում։

Ահա այս սպասումի ծանրությանը չդիմանալով՝ հայ պատվիրակները մոտեցան, զգուշորեն փորձեցին ոտք դնել թակարդի վրա. չէ՞ որ փորձը փորձանք չէ։ Բաթումի խորհրդաժողովին Գերմանիայի կողմից ներկա գեներալ Ֆոն Լոսովին հայերը խնդրեցին միջնորդել, որպեսզի Թուրքիայի պատվիրակության ղեկավար Խալիլ բեյն ու ռազմական ներկայացուցիչ, Կովկասյան ճակատի հրամանատար Վեհիբ փաշան իրենց ընդունեն։ Ֆոն Լոսովի միջնորդությամբ հիշյալ թուրքերը մայիսի 13-ի ուշ երեկոյան ընդունեցին հայկական պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Խատիսովին ու պատվիրակության անդամ Հովհաննես Քաջազնունուն։ Խորհրդակցությունն ավարտվեց հաջորդ օրվա սկզբին, և գիշերվա երրորդ ժամին իր հյուրասենյակը հասնելով՝ Քաջազնունին նստեց ու դրի անցկացրեց խորհրդակցության բոլոր մանրամասները (գրառումներից դժվար է հաստատ ասել, թե խորհրդակցությունը երբ է սկսվել՝ մայիսի 13-ի՞ վերջին ժամերին, թե՞ նախորդ կամ հաջորդ օրվա)։

Ընդունելությունը Վեհիբ փաշայի կացարանում էր, գորգապատ ու ընդարձակ մի սենյակում, որի գլխին, գահավորակի վրա տիրաբար փլված էր մարմնապարարտ հսկա Խալիլը, և Վեհիբն իրեն այնպես էր պահում, ասես նրա ծառան էր։

Տանը ծառայող կար, որը հայ «հյուրերին» աթոռներ մատուցելով՝ այնպես հեռացավ, ոնց որ գոյություն էլ չէր ունեցել։

Եվ Խալիլը, իբր, բարեկամաբար, հարցրեց.

— Հը՞, խե՞ր լինի։

Հարցը Խատիսովին էր տալիս, բայց հայացքն ուղղեց նաև Քաջազնունու վրա և մեկ էլ ետ վերցրեց, ինչպես փշոտ մի բան վերցնի ու անմիջապես էլ վայր ձգի։ Եվ հայ պատվիրակության ղեկավարը սրտապնդված սկսեց խոսել։

— Թանկագին Խալիլ բեյ,— ասաց,— եկել ենք աղերսելու, որ դուք մի քիչ մտնեք մեր դրության մեջ։ Գոնե մի քիչ։ Ախա՜ր,— ասաց,— Տրապիզոնից ու Բրեստ-Լիտովսկից մենք այնքան էլ գոհ չէինք, կարծում էինք՝ ժամանակ անցնի, մեր մասին կմտածեք, մեր ցավերը կմեղմանան։ Սակայն այժմ կանգնած ենք առավել վատթար պայմանների ու տխուր հեռանկարի առաջ։ Ձեր զորքերն անընդհատ առաջ են շարժվում։ Ոչ միայն անհնար է դարձել, որ մեր գաղթականները վերադառնան իրենց

բնակավայրերը, այլև նոր գյուղեր են դատարկվում, ժողովրդի վերջին մնացորդներն են տեղահանվում։

Վեհիբը զորավարական համազգեստը հանած՝ փաթաթվել էր նախշուն խալաթի մեջ և հողաթափները քսքստացնելով սենյակի մի ծայրից մյուս ծայրն էր չափում։ Կանգ առավ Խալիլի կողքին, և Խալիլն էլ նրան ծուռ նայելով, մի դիմախաղ ցույց տվեց, որը պիտի նշանակեր. «Բա ես քեզ ի՞նչ էի ասում»։ Վեհիբը ժպիտի նման մի բան խաղացրեց դեմքին։ Եվ Խալիլը խշշոցով օդը ներս քաշեց, ավելի տարածվեց՝ ու սկսեց բացատրել.

— Ես ձեզ բարեկամաբար պիտի հայտնեմ, որ Տրապիզոնից հետո շատ ջուր է հոսել։ Մենք պատերազմի ենք ելել և երկար ճանապարհ ենք կտրել։ Այս ճանապարհն էլ հեշտ չենք անցել, հա՛. շատ արյուն ենք թափել, արյուն, որը պետք է վարձատրվի։

Խատիսովն ապշահար նրան էր նայում։

Քաջազնունին մտածեց, որ հետաքրքիր տրամաբանություն է. իրենց անցած երկար ճանապարհին հայի արյուն է թափվել, միայն հայի՛ և շա՛տ արյուն։ Ու հիմա հայը պիտի վճարի դրա դիմաց, իր արյան դիմաց։ Նա գուցե այս մասին պիտի խոսեր, բայց Վեհիբը կանխեց.

— Մենք լրացուցիչ հատուցում պիտի ստանանք։ Պա՞րզ է։ Եվ դրանից բացի էլ, ինչպես անցյալ անգամ Ջեմալ փաշան հանգամանորեն բացատրեց, մենք պարտավոր ենք հոգալ Կավկազում ապրող մեր հավատակիցների մասին։

— Հոգացե՛ք, պարոն զորավոր,— խեղճ-խեղճ առաջարկեց Խատիսովը։— Հոգացե՛ք։ Դա մեզ հետ ի՞նչ կապ ունի։

— Դուք խանգարում եք մեզ,— ջղային հայտարարեց Խալիլ բեյը։— Դրա համար ապացույցներ՝ որքա՞ն ուզեք։

Այստեղ նա շարադրեց, հավանաբար, նախօրոք մշակված մի տեղեկանք, որի համաձայն՝ հայերը դաժան բռնություններ են գործադրում Երևանի նահանգի, Բաքվի ու մյուս շրջանների մահմեդականների նկատմամբ։

Լռությունը խեղդում էր Քաջազնունուն։ Նա առարկելու փորձ արեց։ Ասաց.

— Բայց մենք Ջեմալ փաշային էինք խնդրել, որպեսզի ստուգել տա այդ տեղեկությունները։

Սակայն Խալիլը չէր լսում նրան և հասավ ամենակարևորին.

— Դրա համար էլ մենք ստիպված ենք պահանջել Երևանի նահանգի մի զգալի մասը, որպեսզի այնտեղից կարողանանք պաշտպան կանգնել մեր հարազատներին։ Ես կարող եմ վստահորեն հաղորդել, որ Թուրքիայում հասարակական կարծիքը սարսափելի գրգռված է և բավարարություն է պահանջում։ Այո՛, այո՛, բավարարություն է պահանջում։ Իբրև գաղտնիք ես ձեզ ասեմ նաև, որ իմ կուսակցության մեջ երկու հոսանք գոյություն ունի՝ քիչ հանդուրժողներ և անհանդուրժողներ։ Հենց վերջին շրջանում հաղթանակել է երկրորդ հոսանքը։ Հիմա այս հոսանքն էլ պնդում է գծել այն նոր սահմանները, որոնք ներկայացված են մեր պատվիրակության նախագծում։ Ես, որ վաղ ժամանակներից մեր երկու ազգերի միջև հաշտարարի դեր ստանձնած մարդ եմ, շատ էլ համակիր չէի նախագծին, սակայն անզոր եղա այն փոփոխելու... Ամեն պարագայի, խոստանում եմ իմ կողմից գործադրել ամեն ջանք, որպեսզի նախագծի մեջ, տարածքային պահանջներին վերաբերող մասում, մտցվեն էական փոփոխություններ։ Ես հույս ունեմ, թե հաջողության կհասնեմ։ Բայց դրա համար ժամանակ է պետք, ժամանա՛կ։ Ամեն ինչ կլինի իր ժամանակին։

Խատիսովը գո՞հ էր այդ բացատրությունից, ինքն էլ չգիտեր։ Սակայն ե՞րբ էր գալու ժամանակը։

— Պատերազմական ամեն մի օրն այնքա՛ն ավերածություններ է պատճառում...

— Չգիտե՛մ-չգիտե՛մ,— իբր մեղմացած խոսեց Խալիլը։— Ես վախենում եմ՝ հեռագրեմ իմ կառավարությանը, և այնտեղ զայրանան ու հրաման տան վերջնագիրը ներկայացնելու իր ամբողջությամբ։ Դրա համար էլ անհրաժեշտ է որոշ ժամանակ։ Այդ ընթացքում էլ դուք՝ Կովկասի հայերդ, կտաք շոշափելի ապացույցներ, որ դուք արդեն խելքի եք գալիս։ Հասկացա՞ք, ահա այսպե՛ս։

Խալիլից հետո խոսեց Վեհիբ փաշան։

Նրա խոսքից կարելի էր եզրակացնել, թե Խալիլի՝ աստիճանաբար իջած, մեղմացած վերաբերմունքից է վրդովվել։ Սակայն իրականում գործում էր ընդունելությունից առաջ լարած մեքենան. եթե մեկը գնում է դեպի հաշտության եզրը, մյուսը պետք է գազազի և ընդհակառա՛կը։ Թող այս հայերը համոզվեն, որ իրենց առաջ միայն մեկ ճանապարհ կա՝ Արևելյան Հա-

յաստանը նվաճող Թուրքի առաջ փռելու ճանապարհը։ Իսկ հետո՞ էլ թե ի՞նչ կմա այդ ճանապարհին, դա արդեն Թուրքի իմանալու կամ որոշելու բանն է։

Եվ Խալիլի բարեկամական վերաբերմունքից հավասարակշռությունը կորցրած զորավար Վեհիբն այնպես էր խոսում, ասես նախորդը ոչինչ էլ չէր ասել, և այսքան ժամանակ ինքը քնած էր եղել կամ անջատված։ Սկսեց Խատիսովի խոսքից և մոլեգնեց, որովհետև նա ասել էր. «Դուք այժմ հրաժարվում եք Տրապիզոնում տված ձեր խոստումներից. Ռաուֆ բեյն այնտեղ խոստացել էր շարգելել արևմտահայերի վերադարձն իրենց հայրենիք։ Իսկ հիմա դուք Կարսի մարզից փախածներին էլ չեք թողնում վերադառնան իրենց տները, որ երեկ, մեկել օրն են լքել»։

Ապա Վեհիբը նորից սենյակը չափեց իր քսքստոցներով և, ջղայնությունից շնչահեղձ լինելով, պատմեց նահանջող հայկական զորամասերի դործադրած «ահավոր դաժանություններ»ը Թուրքերի դեմ։ Պատմում էր Երզնկայում, Մամախաթունում ու Էրզրումում «իր աչքերով տեսածներ»ը։ Այդ բոլորը տեսել են նաև իր զինվորները և, համենայն դեպս, իրեն հաջողվել է զբաղեցնել նրանց վրեժխնդրությունը, իսկ Թուրքական բանակը հայերի հանդեպ իրեն պահել է միանգամայն քաղաքավարի։

Եվ այսպես, Խալիլն անմիջապես հնարեց ու հաղորդեց «զարհուրելի լուրեր», որոնք, իբր թե, իրենց են հասել Կովկասի տարբեր մասերից՝ Բաքվից ու Երևանի նահանգից՝ գուժելով մահմեդական անզեն ու անմեղ բնակչության հանդեպ կիրառված չարագործությունների մասին։ Վեհիբն էլ, Խալիլից ետ չմնալով, դարձյալ հորինում և մեկ առ մեկ պատմում էր իր ժողովրդի դեմ նույն հայերի գործած այն «ահավոր դաժանությունները», որոնց ականատեսներն ինքն ու իր զինվորներն են եղել Երզնկայից մինչև Էրզրում, Սարիղամիշ, Կարս, մինչև Արաքսի ափերը...

Վեհիբ փաշան, որ զրույցի սկզբում շատ էր հուզված ու անհանգիստ, քանի դեռ չգիտեր, թե իրենց զրուցապանակից ինչո՞վ պիտի կրակեն հայ ընդդիմախոսները, խորամանկորեն որսաց նրանց տարակուսական հայացքները և հանգստացավ. հանկարծական հարձակումը խուճապ էր գցել հակառակորդի թուլակազմ բանակում։ Եվ հարձակումը շարունակեց արդեն ճնշող, դիմացինին զինաթափող հանգստությամբ։ Մեղադրանքները

հորդում էին նրա բերանից՝ ասես առատության եղջյուրից։ Հայերը թուրքերին ամեն տեղ և ամեն ժամանակ խարդավանքներ ու չարություններ են նյութել։ Նրանք արժանի չեն ոչ մի վստահության ու ներողամտության։ Ճիշտ է, մի տարի էլ չանցած, 1919 թ. փետրվարին, երբ ռազմական դատարանը սեղմի պատին, նույն այդ Վեհիբ փաշան ուրիշ երդ է ասելու։ Այն ժամանակ անհերքելի փաստերի ճնշման տակ նա պետք է խոստովանի, որ իրենց ավանդական հայրենիքից տարագրված հայերը ոչ մի մեղք էլ չեն ունեցել, իսկ «հայերի զանգվածային ջարդերն ու կոտորածները, կողոպուտներն ու նրանց ունեցվածքի բռնագրավումներն իրականացվել են «Միություն ու առաջադիմություն» կոմիտեի կենտրոնական հաստատության որոշումներով»։ Այո՛, այն ժամանակ Վեհիբ-փաշան ուրիշ տեսակ պիտի խոսի։ Բայց հիմա նրա դեմ նստած են մարդիկ, որոնք անտեղյակ են իրավիճակից։ Պահանջներ ունեն, բայց չգիտեն ո՛ւմ դեմ են կանգնած և ո՛ւմ են ներկայացնում իրենք, ո՛ւմ շահերից են խոսում...

Վեհիբն ու Խալիլը հայերին ընդունելուց առաջ խորհուրդի էին նստել և մտածում էին, թե նրանք իրենց հաշիվներն սկսելու են 15 թվականի դեպքերից։ Նույնիսկ խորհուրդ էին արել, թե ի՞նչ պատասխան պիտի տան, ինչպե՞ս պիտի տակից դուրս գան. չէ՞ որ ամբողջ աշխարհն է խոսում այդ մասին։ Եվ քանի գնում, այդ խոսքն ավելի անողոք է դառնում... Եվրոպայում ու Ամերիկայում դիվանագիտական ամբիոններից ու մամուլից հորդացող հակաթուրքական հեղեղից փրկություն չունեն իրենք...

Իսկ սրանք կարծես ուրիշ աշխարհից են եկել, կամ ուրիշ երկիր են ներկայացնում...

Գուցե իրավացի՞ էին իրենց Եռապետության ղեկավարները, որ ասում էին՝ պետք է ոչնչացնել ամբողջ արևմտահայությունը, այն ժամանակ նրանց դատը պաշտպանող չի մնա։

Եվ, Խալիլի «բարի» դեմքին իր ասելիքը կարդալով, Վեհիբ փաշան հասավ ամենակարևորին։ Ասաց.

— Անգլիացիները շարժվում են դեպի Մոսուլի ու Հյուսիսային Պարսկաստանի կողմերը։ Մենք պետք է կանխենք այդ առաջխաղացումը և անհետաձգելիորեն գրավենք Թավրիզը։ Հենց ի՞նքս,— շարունակեց Վեհիբը,— Էնվեր փաշայից հրաման ունեմ այդ միջոցառումն իրականացնել առավելագույն արագու-

թյամբ, ի՞նչ գնով լինի։ Այստեղ էլ ամենակարճ և օգտագործման համար միակ հնարավոր ճանապարհը Ալեքսանդրապոլ-Ջուլֆա-Թավրիզ երկաթգիծն է։ Խնդրում ենք՝ մե՛զ տրամադրեք այդ ճանապարհը։ Այս միջոցառումը ձեր դեմ ոչինչ չունի։ Դա ռազմական կառաշարի հասարակ տեղափոխություն է ձեր երկրով։ Ես անձամբ ձեռք կառնեմ բոլոր միջոցները, որպեսզի իմ զինվորների կողմից որևէ բռնություն կամ անկարգություն տեղի չունենա։ Ես գլուխս կտամ, եթե իմ բանակի զինվորականը ձեր երկրում... Դա էլ ասելո՞ւ բան է... Մերոնք միշտ էլ աչքի են ընկել իրենց կարգապահությամբ ու հանդարտությամբ։ Պատրաստ ենք,— նա գլխով ցույց տվեց Իրեն ու Խալիլին,— եթե կուզեք, ձեզ հետ միասին մշակել բոլոր անհրաժեշտ պայմանները, որպեսզի այս մեծ զորաշարժը տեղի ունենա միանգամայն հանգիստ ու անվտանգ։

Հետո խնդրեց հավատալ, որ իր կառավարությունն այստեղ չունի ոչ մի ետին միտք, ասենք, երկրամասի բռնագրավման նպատակ կամ նման որևէ բան։

— Բռնագրավումը երկաթգծո՛վ չի կատարվում,— հանգստացնող ժպիտով ավելացրեց Թուրք զորավարը։— Երկաթգծո՛վ, երբ զորքերը լցված են վագոնները և վագոնների բեռներն էլ փակ են։ Եթե ես նպատակ ունենայի գրավել Երևանի նահանգը, դրա համար ինչո՞ւ պիտի դիմեի խաբեության կամ երկաթգծով այդքան ճանապարհ կտրելուն։ Նման նպատակը ես կիրականացնեի բացահայտ, ցանկացածս պահին և առանց վախենալու, թե կհանդիպեմ որևէ լուրջ դիմադրության։ Արևո՛վս եմ երդվում, որ մեր միակ ու իսկական նպատակն է տեղափոխվել Թավրիզ։ Եվ ուզում եմ, որ այդ գործողությունը կատարենք բարեկամական պայմանավորվածությամբ։ Չեմ կարող չհավաստիացնել, որ դա հավասարապես շահավետ կլինի ինչպես մեզ, այնպես էլ ձեզ համար։ Մեր շահը պահանջում է զորքերի ջուտափոխ փոխադրություն և, որ քիչ կարևոր չէ, զորքի մի մասը, իբրև ապահովության երաշխիք, ճանապարհի տարբեր կետերում պահելու հոգսից կազատվենք (չէ՞ որ ստիպված կլինենք շարժվել հակառակորդի երկրով)։ Ձեզ համար էլ ձեռնտու է, քանի որ դա ձեզ կազատի նորանոր բախումներից, արյունհեղությունից ու ավերածություններից, որոնք, ի՞նչ խոսք, անպայման կլինեն, եթե փորձեք հրաժարվել ու դիմադրել։ Ես

չեմ կարող չավելացնել նաև հետևյալը. ձեր շահերի տեսակետից ձեռնտու է, որ մենք անգլիացիների հետ հանդիպենք Իրանի հողի վրա և ոչ թե ձեր երկրում։ Իսկ դրա համար դուք պետք է ամեն եղանակով մեզ օգնեք նվազագույն ժամկետում հասնելու Թավրիզ։

Վեհիբը բոլոր այս նկատառումներով շատ էր խնդրում, որ հայերն անմիջապես համաձայնեն իրենց առաջարկությանը և հետո էլ ցույց տան հնարավոր ամեն տեսակ աջակցություն։ Նա միաժամանակ զգուշացնում էր, որ հրաժարվելը կբարդացնի փոխհարաբերությունները և կդժվարացնի իր խնդիրը։ Սակայն ինքն այն մարդը չէ, որ կանգ է առնում դժվարությունների առաջ։ Միևնույն է, ինքը կիրականացնի այդ միջոցառումը։

— Եթե երկաթգիծը չտաք,— զգուշացրեց Վեհիբը,— մենք առաջ կգնանք ռազմական երթով, նույնիսկ շքերթով, պատկերացնո՞ւմ եք... Եվ ահա վախենում եմ, թե ձեր քաղաքներով ու գյուղերով կատարված այդօրինակ երթի ժամանակ անհնար լինի պահպանել կարգ ու կանոնը, և երկրամասի բնակչությունն էլ ենթարկվի չտեսնված տառապանքների։

Այս զրույցը, ավելի ճիշտ՝ երկու թուրքերի մեղադրանքները, սպառնալիքներն ու առաջարկները այսպես հանդամանորեն շարադրելուց հետո Հովհաննես Քաջազնունին իր պարտքը համարեց գրի անցկացնել նաև հետևյալ շատ կարևոր տպավորությունը, որ ինքն ու Խատիսովն էին ստացել իրենց բարձրապաշտոն զրուցակիցներից։

«Խալիլի ու Վեհիբի խոսքերից անձամբ ես (կարծում եմ՝ նաև Խատիսովը) կազմեցինք այն համոզմունքը, որ թուրքերն այս անգամ չեն խաբում, որ նրանց իսկապես ծայրահեղորեն անհրաժեշտ է շուտափույթ հասնել Թավրիզ և որ, համենայն դեպս, այս պահին նրանք չունեն ուրիշ նպատակներ ու ցանկություններ»։ Ինչպես ասում են՝ սևով սպիտակի վրա այսքանը գրել է Քաջազնունին։ Եվ հետո էլ շարադրել է իրենց տված պատասխանը։

«Նախ խոսեց Խատիսովը,— գրում է հայ պատվիրակը։— Իհարկե, մեր վիճակը շատ էր ծանր, և Խատիսովն աշխատում էր մերժողական մեր պատասխանը ներկայացնել առավելապես դիվանագիտական ձևի մեջ՝ ջանալով թուրքերի ուշադրությունը շեղել գլխավորից և մեջտեղ քաշել երկրորդական հարցերը։ Ինձ

թվաց, թե Խատիսովի պատասխանի մեջ թուրքերը կարող են դիտել տատանումի նշաններ, որոնք և իրենց հիմք կտային ավելի համառելու։ Դրա համար էլ ինքս անհրաժեշտ համարեցի շատ կարճ, բայց շատ որոշակի ու աներկդիմի արտահայտություններով նկարագրել մեր վերաբերմունքը գլխավոր հարցի նկատմամբ։ Ես համարյա բառացի ասացի հետևյալը. «Այն պահին, երբ դուք մեզանից պահանջում եք Ախալցխան, Ախալքալաքը, Ալեքսանդրապոլը, Էջմիածինն ու Սուրմալուն, այսինքն՝ այն պահին, երբ դուք պատրաստվում եք հասցնել մահացու հարվածը հայ ժողովրդի քաղաքական, իսկ թերևս նաև ֆիզիկական գոյությանը, մեր միջև չի կարող լինել համաձայնություն որևէ հարցում։ Ամենից առաջ պետք է լուծվի տարածքային հարցը, սահմանների հարցը։ Այդ հարցի լուծումից էլ կախված պիտի լինի ամբողջ մնացյալը։ Ես գիտեմ, որ մեր հրաժարվելու դեպքում դուք ուժ կգործադրեք, և դա մեզ համար կստեղծի նորանոր զարհուրելի տառապանքների սպառնալիք։ Այդուհանդերձ, քանի դուք դեռ չեք հրաժարվի ձեր պահանջներից, մենք չենք համաձայնի, որ ձեր զորքերը փոխադրեք մեր երկաթգծով։ Իմ ընկերն ասաց, որ դա շատ դժվար է, իսկ ես ասում եմ՝ դա պարզապես անհնար է»։

Հովհաննես Քաջազնունին գոհ էր իր ասածից։ Նա այդ մասին էլ է գրել. «Ինձ թվաց (նույն կարծիքը հետո հայտնեց նաև Խատիսովը), թե այս խոսքերն ինչ-որ չափով ներգործություն ունեցան, և թուրքերի խոսելու տոնն իջավ իր արհամարհական ու ամբարտավան բարձրերից։ Նրանք դեռ երկար ժամանակ փորձում էին համոզել մեզ, որ զիջենք։ Բայց մենք հաստատ կանգնած էինք մեր դիրքերում։

Այդպես էլ, ոչ մի համաձայնության չգալով՝ մենք բաժանվեցինք գիշերվա երրորդ ժամին»։

Երբանի՞կ անտեղյակություն, որով իրենց օրորում էին այդպես էլ բռնագրավիչ թուրքին մինչև վերջ չճանաչած հայ բանախոսները։

Խալիլն ու Վեհիբը նրանց համառությունը ստուգեցին (եթե նրանց ունեցածն էլ կարելի էր կոչել համառություն, որը պետք է հոգս ցնդեր երկու շաբաթ հետո)։ Ստուգեցին իրենց համար ձեռնտու եղանակներով. նախ հարձակվեցին, հետո բարեկամական ժեստեր արին, հետո էլ զիջումների խոստումներից անցան

սպառնալիքին... Երբ տեսան, որ ընդդիմախոսների ձեռքին ոչինչ չկա և տալիք էլ ոչինչ չունեն, նրանց թմբեցրին իրենց ձևական անտարբերությամբ։ Իբր թե, չեք ուզում-չեք ուզում, ձեր աստվա՜ծը ձեզ հետ...

Հաջորդ առավոտյան իսկ ֆերիկ-մարշալ Վեհիբը ռազմաճակատ հասավ և, ոտնատակ տալով պայմանագրությունը, իր զորքը տարավ Ալեքսանդրապոլի վրա։

Այստեղ ես վերստին պիտի դառնամ Ալեքսանդրապոլի անկման ականատեսի հիշատակարանին։

«Մայիսի 15-ի վաղ առավոտյան թուրք մի սպա մտնում է Ալեքսանդրապոլ, փնտրելով գտնում քաղաքի պարետ գնդապետ Յանկովսկուն և նրան է հանձնում իր հրամանատարությունից բերած ծրարը՝ պահանջելով շտապ կարգով պատասխանել նրա մեջ եղած կարգադրությանը։

— Ի՞նչ կարգադրություն է,— հարցնում է պարետը։

— Բա՛ց արեք, կարդացե՛ք, կիմանաք,— բացատրում է սպան։— Հայոց կորպուսի հրամանատարին է ուղղված, նրա բացակայության դեպքում՝ ձեզ։ Վերջնագիր է, որին պետք է պատասխանեք երեք ժամվա ընթացքում։

Հայկական կորպուսի հրամանատար Թոմաս Նազարբեկովն այդ պահին գտնվում էր քաղաքում։ Երեկոյան գեներալ Արեշևը մեծ կերուխում էր սարքել նրա հրաժեշտի առիթով։ Բոլոր կարևոր հրամանատարներն այնտեղ էին եղել, և տաքացած գլուխները, իրար հերթ չտալով, գովում էին իրենց սպարապետին, խոստանում էին նրա հրամանով թուրքին ետ քշել մինչև Էրզրում, չնայած պարզ էր մի բան, որ Նազարբեկովն էր քշվում. ետ թե առաջ՝ դժվար էր պարզել, քանի որ նրա շտաբը, Ալեքսանդրապոլում պահելն այլևս անհնար համարելով, նախորդ օրն էին ուղարկել Ղարաքիլիսա, և հաջորդ օրն էլ շտաբի ետևից ինքը՝ մեծ զորապետը պիտի գնար։ Կերուխումն այդ առիթով էր կազմակերպված։

Ըստ երևույթին, ամեն պարագայի հարկ էր պահել մունդիրի պատիվը։ Ինչ էլ որ լինի, Հայոց սպարապետին էին հրաժեշտ տալիս, և հարկ էր, որ հրաժեշտի արարողության մասին երկար խոսվի։ Եվ Արեշևի կազմակերպած այս ուրախության օրինակով խնջույքներ եղան նաև զորանոցում, տեղաբնակ հրամանատարների տներում ու մոտակա գյուղերում։ Ի՞նչ մեծ մեղք

է, որ,— մտածել էին կազմակերպիչները,— հայ զորականն իրավունք չունի՞ մեկ անգամ իրեն անհոգության տալու։ Չէ՞ որ զատկի տոնն անգամ չէին նշել և մարդիկ մի կարգին չէին էլ թաթախվել։

Այս անհոգությունը թելադրված էր, իհարկե, նախ և առաջ Թուրքերի վարքով. վերջին քսան օրերի ընթացքում իրենց այնքան հանգիստ են պահել, որ կարելի էր մտածել, թե նրանք իրենց խնդիրը կատարել են՝ 1877 թ. սահմանին տիրանալով և դրանից դենը որևէ քայլ կատարելու ո՛չ ախորժակ ունեն, ո՛չ էլ հատկապես ուժ։

Քաղաքի պարետը հրավիրված չէր կերուխումի, և նա լավ գիտեր, որ սպիտակ ագռավի դերով ինքը չպետք է այնտեղ գտնվեր։ Իրեն պարետ էր նշանակել Անդրկովկասյան զորքերի ընդհանուր հրամանատար Լեբեդինսկին։ Նշանակել էր Նազարբեկովի գլխի վրայով, և դա բավական էր, որ այս մարդը և՛ պարետ լինի, և՛ չլինի։ Իսկ սա նշանակում էր՝ քաղաքը և՛ պարետ ունի, և՛ չունի։

Նազարբեկովը դեռ չէր սթափվել գիշերվա կերուխումի ազդեցությունից։ Աչքերը բացեց և պառկած տեղը, ձեռքերը գլխատակին, ընդունելով քաղաքի պարետ Յանկովսկուն, թոնթորաց.

— Ի՞նչ է պատահել, լույսը չբացված տնկվել եք աչքիս առաջ։

— Թուրքերից կարևոր ծրար կա, ասում են՝ վերջնագիր է։

— Կարևոր է, թե ոչ, դուք եք այս քաղաքի տերը, բա՛ց արեք, որոշեցեք անելիքը։ Չէ՞ որ ինքս եմ շրջաբերականով ձեզ իրավունք տվել, որ իմ բացակայությամբ դրության տերը լինեք և ամեն ինչի պատասխանատվությունն առնեք ձեզ վրա։

— Ձեր բացակայությա՛մբ, պարոն գեներալ։ Բայց դուք այստե՛ղ եք։

— Ծ՛ս, ե՛ս, սատանա՛ն տանի,— ճակատը շփեց գեներալը և վրդովված հարցրեց.— Իսկ ի՞նչ է գրված։ Բաց արեք տեսեք՝ ի՛նչ են ուզում։

Յանկովսկին բացեց ծրարը և շշմած նայեց անծանոթ գրերին.

— Ոնց որ պարսկերեն է, պարոն գեներալ։ Սրանք միշտ ֆրանսերեն էին գրում։ Գոնե իրենց լեզվո՛վ լիներ, շտաբում կարդացող կգտնեինք։

— Նման դեպքերում ես քաղաքում եմ գտնում այդ մարդուն։ Եվ դո՛ւք եք այս քաղաքի տերը։ Գնացե՛ք, գտե՛ք, որոշեցե՛ք անելիքը։

Յանկովսկին պարսկերեն իմացող չհայտնաբերեց քաղաքում և ուղևորվեց թուրքերի մոտ, որպեսզի նրանցից իմանա, թե ինչ են գրել։ Իսկ Նազարբեկովը նրա գնալուց հետո փորձեց քունը շարունակել։ Հայհոյեց ապիկար պարետին։ Համհարզին կոպտեց հիմար այցելություններով իր հանգիստը խանգարելու համար... Եվ հետո էլ անբովոր աղմուկից վեր կացավ, տեսավ՝ քաղաքում սոդոմ-գոմոր է։ Դու մի ասա, թուրքերը պարսկերեն ուղարկած վերջնագրով պահանջած են եղել երեք ժամվա ընթացքում քաղաքը հանձնել իրենց, հակառակ պարագային պետք է ամրությունները հողին հավասարեցնեին։ Եվ այդ երեք ժամն անցել էր։

Հայոց սպարապետի աչքի առաջ Ալեքսանդրապոլը կործանվում էր։ Արկեր էին, որ պայթում էին այս ու այնտեղ։ Փողոցները լիքն էին գաղթականներով։ Զորքի մի մասը զորանոցը լքած հեռանում էր քաղաքից, որովհետև ավագ ու կրտսեր հրամանատարներից շատերը նախորդ օրվա մեծ կերուխումից հետո իրենց տվել էին տեսական հանգստի։

Գեներալ Արեշևն իր մտերիմների հետ քաղաքի այս թոհուբոհի մեջ հազիվ գտավ սպարապետին և պաղատագին հորդորեց անմիջապես հեռանալ քաղաքից։

— Մենք հիմա անզոր ենք բերդը պահել, և ուր որ է թուրքերը ներս կմտնեն։ Ի՞նչ ազգային աղետ ու խայտառակություն կլինի, եթե Հայոց սպարապետը գերի ընկնի թշնամու ձեռքը,— սրտացավ, անկեղծ հուզումով նրան բացատրեց փոքր գեներալը։

Վերջապես՝ հաջողվեց Նազարբեկովին նստեցնել իր «Մերսեդեսը»։ Գեներալ Արեշևն ու փոխգնդապետ Եղիազարովը նրան թիկնապահ դարձան և, գաղթականների հեղեղը ճեղքելով, հետևից փոշու ամպ թողնելով, սպարապետական մեքենան հասցրին Օրթաքիլիսա գյուղը։

Օրթաքիլիսայում նրանց հայտնեցին, որ Ալեքսանդրապոլի խուճապն անցել է, կարգը վերականգնվում է։ Եվ «Մերսեդեսը» մեկ էլ վերադարձավ իր իսկ լքած քաղաքը։

Սակայն այստեղ պարզվեց, որ քաղաքի խուճապն անցել է

նրա պարպումով։ Ճիշտ է, իրենց դիրքերում էին գտնվում փոխ-գնդապետ Կարաքեշիշյանն ու առաջին գնդի հրամանատար Սամարցևը։ Սակայն սրանք երկուսով ի՛նչ պիտի անեին, երբ նահանջել էր զորքի մեծագույն մասը, իսկ քաղաքում գտնվող ավելի քան հարյուր երեսուն թնդանոթներից ոչ մեկը չէր գործում, հարյուր գնդացիրներից և ոչ մեկը չէր հնձում բերդաքաղաքի վրա գրոհի եկող թուրքական շարքերը։

Այո՛, քաղաքի պաշտպանությանն ի սպաս էին գրված 134 թնդանոթ, 100 գնդացիր։ Քաղաքի պահակազորը հաշվում էր 5576 զինվոր ու 506 սպա, որոնցից բացի Ալեքսանդրապոլի շրջակայքում էին գտնվում ավելի քան տասը հազար մարտիկ և 1100 սպա (Հայկական առաջին դիվիզիան, Հայկական միացյալ զորամասը, Անդրանիկ զորավարի հատուկ ջոկատը)։ Պահակազորի հետ միասին այս բոլորն անում է տասնվեց հազարանոց մի բանակ, որի դիմաց թուրքերն Ալեքսանդրապոլի վրա էին եկել ընդամենը յոթ հազարանոց զորքով։

Չի կարելի կասկածել, որ տասնվեցհազարանոց բանակով յոթ հազարին հաղթելն ավելի հեշտ է, քան հակառակը։ Չի կարելի կասկածել, որ գործը լավ կազմակերպելու դեպքում քաղաքի բնակչությունը ևս դուրս կգար իրեն պաշտպանելու, քանի որ, միևնույն է, պաշտպանվելով որոշ զրկանքներ կրելն ավելի թեթև նեղություն է, քան գաղթի ճամփան բռնելը կամ տեղում մնալով թուրքի կամայականություններին ենթարկվելը։

Գնդապետ Յանկովսկուն հաջողվել էր թուրք հրամանատարությունից մի քանի ժամ ևս պոկել քաղաքի բնակչությունը տեղահանելու և զորքը 25 կիլոմետր քաղաքից հեռացնելու համար։ Երբ այս բոլորը նա զեկուցեց Նազարբեկովին, վերջինս զայրույթից եռում էր։ Հենց փողոցում գոռգոռաց գնդապետի վրա, նրան համարեց անբան ու անհասկացող մարդ և կարգադրեց նորից գնալ թուրքերի մոտ ու նրանց պահանջներն իմանալ ավելի հանգամանորեն։ Կարծես ճակատի գծի վրայով թուրքերի մոտ գնալ-գալը պապոնց տուն այցելելու պես մի բան է, կամ էլ շատ կարևոր է, թե թուրքերն ի՛նչ տեսակ մանրամասներով են պահանջում Ալեքսանդրապոլը։

Թուրքերի տված ժամկետը լրացել էր, վերսկսվեց քաղաքի ռմբակոծությունը։ Նազարբեկովն իր մոտ հրավիրեց քաղաքի մեծավորներին ու հրամանատարական կազմի մնացորդներին և

կարգադրեց, որպեսզի քաղաքը գիշերով հանձնեն, եթե թուրքերի պահանջներն ամոթալի չլինեն։ Այդ էլ շեշտեց՝ «Եթե թուրքերի պահանջներն ամոթալի չլինեն»։ Իսկ եթե ամոթալի լինե՞ն։ Զասաց, թե այս դեպքում ի՛նչ պետք է անել։ Շտապում էր։ Ալեքսանդրապոլը հոգեվարքի մեջ թողած՝ նստեց իր մեքենան և հեռացավ դեպի Մեծ Ղարաքիլիսայի կողմերը, ուր իր շտաբը պիտի տեղավորված լիներ։

Նազարբեկովի հեռանալուց հետո միայն տեղ հասավ քաղաքի պարետ Յանկովսկին՝ բերելով թուրքերի պահանջի մանրամասները։ Ահա նրանք.

ա) Պետք է անմիջապես հանձնել Ալեքսանդրապոլն ու նրա մեջ գտնվող ամբողջ զինամթերքը.

բ) Թուրքաց զորքի մի մասը քաղաք պիտի մտնի այնտեղ կարգ ստեղծելու և պաշտպանելու համար (հայտնի է, չէ՞, որ թուրքերը լավ կարգ ստեղծող ու պաշտպանող են), մյուս մասը կշարժվի դեպի արևելք.

գ) Հայոց զորքերը պետք է ետ քաշվեն, դիրքավորվեն Ախուրյանից 25 կմ հեռավորության վրա.

դ) Երկաթուղային կայարանը, դեպոն, արհեստանոցները, շոգեմեքենաները և քաղաքի ու բերդի մեջ ամեն ինչ պետք է մնան անվնաս։

Դժբախտաբար, Նազարբեկովն այլևս տեղում չէր, որպեսզի որոշեր՝ թուրքերի այս պահանջներն ամոթալի՞ են թե՞ ոչ և հատկապես ի՞նչ աստիճան ընդունելի են։

Եվ մայիսի 15-ի երեկոյան թուրքերը մտան Ալեքսանդրապոլ։ Զօգնեցին քաղաքի բնակիչների պարզած ճերմակ դրոշները։ Ի՛չ մի նշանակություն չունեցավ քաղաքի պարետի հետ կազմած պայմանագրությունը։ Թուրքն էր խուժել հայկական քաղաքը և սկսեց գործել թուրքավարի. նախ և առաջ կողոպտում էր պահեստներն ու տները, որպեսզի գաղթողները չհասցնեն իրենց հետ դուրս տանել որևէ բան, որ արժեք ունի նվաճողի համար։ Ապա սկսվեցին կոտորածները, բռնություններն ու բռնաբարությունները։ Վաղուց էր, ինչ թուրք ասկյարը ոտք չէր դրել Արաքսից ու Ախուրյանից այս կողմ, դրա համար հին ծարավը հագեցնելու մարմաջով թափվել էին տները, խոզերի պես տակն ու վրա էին անում։ Նրանցից փախչող կանայք ու աղջիկները խառնվում էին Արարատյան դաշտի ճանապարհը բռնած խմբերին։

Քաղաքում մնացածների հետ արդեն հաշվեհարդար էր տեսնում դաղազած թուրքը, որին իր իսկ հրամանատար Վեհիբ փաշան հավատացրել էր, թե հայերը նրա ցեղակիցներին տանջել են ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Կովկասի քաղաքներում ու գյուղական վայրերում։

Ահա այսպես ընկավ Ալեքսանդրապոլը, որից հետո դեպի Վաղարշապատ ու Երևան տանող ճանապարհի վրա ոչ մի լուրջ ռազմական ամրություն չկար, և թուրքն անարգել մտնում էր Արարատյան նահանգը՝ Հայոց աշխարհի սիրտը, ինչպես այդ նահանգն էր ճանաչվում հնագույն ժամանակներից ի վեր»։

Ալեքսանդրապոլն ընկավ, և թուրքերը տիրացան ոչ միայն այդ բերդաքաղաքին, այլև Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծին, որին խաղաղորեն տիրելու համար Բաթումում հայ պատվիրակների հետ, իբր թե, բանակցություններ էին վարում։

Ալեքսանդրապոլն ընկավ, և այն ժամանակ արդեն բոլորի համար պարզ դարձավ, որ դա հայոց վերջի սկիզբն է։

Բայց ո՞վ էր մեղավոր։ Ո՞ւմ կամ ինչի՞ պատճառով ընկավ և այն էլ այդքան հեշտ ու հանկարծակի՝ մի քաղաք, որը, ինչպես հայտնի էր ժամանակակիցներին, պետք է դիմադրեր ու դիմանար շատ ավելի, քան նվաճող թուրքի ճանապարհի բոլոր ռազմական կետերը՝ Էրզրումից մինչև Կարս։

Անկասկած, ամեն պատերազմում էլ զորքն է կռվողը։ Բայց ինչպե՞ս կռվեց Ալեքսանդրապոլում ու նրա շուրջը տեղակայված տասնվեց հազարանոց բանակը, որ նույնիսկ մի քանի ժամ էլ չդիմացավ քաղաքը։ Տասնվեցհազարանոց բանակ՝ շուրջ յոթ հազարի դիմաց։ Եթե տասնվեց հազար զինվորներ դատարկաձեռն ու անգործ կանգնած էլ լինեին, յոթ հազարը նրանց կոտորելու և վրայից անցնելու համար գոնե մեկ ամբողջ օր կպահանջվեր։ Ուրեմն, զո՞րքն էր մեղավոր, որ չկռվեց, ոչ մի դիմադրություն ցույց չտվեց, և թուրքն անարգել ու անպատիժ մտավ քաղաք, հղփացավ նրա բարիքներով։

Պատմաբանն այս պարտության միակ պատճառ է համարում Հայկական զորքերի գլխավոր հրամանատար Թոմաս Նազարբեկովին ու նրա վատարի օգնականներին, որոնք չկարողացան հայոց ուժերը կազմակերպել վճռական ճակատամարտի համար։ Մեկ ուրիշն էլ, ռազմական գործի իմացությամբ զինված, գրտնում է, որ այն ժամանակ հայոց ուժերը պարզապես անբա-

վարար էին հաղթանակ տանելու համար, և կազմակերպչական ի՛նչ եռանդ էլ որ գործի դրվեր, մեկ է, վաղ թե ուշ այդ ուղտը պիտի չոքեր հայ ժողովրդի դռանը։

Պարտության պատճառի մասին գրել է նաև ինքը՝ գեներալ Նազարբեկովը։ Նա ասում է՝ Թուրքերի կողմից հանկարծակի ու անսպասելի հարձակման ենթարկված քաղաքը թողնելուց առաջ ինքը մի քանի լուրջ կարգադրություններ էր արել։ Ահա այդ կարգադրությունները. «...կռիվը եռում էր, թեև բերդի հրետանին չէր գործում։ Գեներալ Արեշևն իր շտաբով ղեկավարում էր մարտը։ Պարետը դեռևս չէր վերադարձել։ Կարգադրեցի, որ տեղակալն ստանձնի նրա պարտականությունների կատարումը։ Գեներալ Սիլիկյանին հաղորդեցի Թուրքերի հարձակման անցնելու մասին։ Անդրանիկին կարգադրեցի անմիջապես շարժվել դեպի Ալեքսանդրապոլ և գործել Թշնամու թիկունքում, որը շրջանցել էր մեր աջ թևը։ Սակայն, ցավ ի սիրտ, կարգադրություններս չկատարվեցին»։

Շարադրվածներից միայն մեկն է կարգադրություն, այն, որ ուղղված էր Անդրանիկին։ Եվ մի՞թե այս մեկի չկատարումն էլ բավական էր, որպեսզի այդպես դյուրությամբ քայքայվեր բերդաքաղաքի պաշտպանությունը։

Ես ասացի՝ Ալեքսանդրապոլի անկումը հայոց վերջի սկիզբը պիտի դառնար, և սա մռայլ հոռետեսություն չէ, որովհետև հայոց զորքերը, որոնք, ըստ Թուրքաց հետ Յանկովսկու ընդունած պայմանի, պետք է դիրքավորվեին Ախուրյանից 25 կիլոմետր հեռավորության վրա,— ոչ մի տեղ էլ կանգ չառան ու չդիրքավորվեցին։ Ըստ երևույթին այդ անկարգ, անկանոն ու անգլուխ նահանջող խառնամբոխի մասին բարձր կարծիքի էր միայն թուրքական հրամանատարությունը. չէ՞ որ, այնուհանդերձ, հնարավոր էր համարել, որ այն անպայման կդիրքավորվի արդեն նվաճված Ալեքսանդրապոլից 25 կմ հեռու և կդիմադրի, կանի այն, ինչ որ չէր արել Ալեքսանդրապոլում։ Իսկ իրականում ծայր էր առել անկազմակերպ նահանջի, դասալքության և հուսահատ դեգերումների մի շղթա, որով խեղդվում էր հայ զինվորությունը։ Զնգուն անուններով պսակված Երզնկայի, Մակվի գումարտակները, Խնուսի գունդը, գնդապետ Ջալինյանի հեծյալ զորամասը և ուրիշ խմբեր տարբեր ճամփաներով գնում էին

դեպի Արարատյան դաշտը։ Նազարբեկովի հետ բախված ու դրժ-գոհ Անդրանիկը 3500-անոց իր ընտիր ջոկատի հետ շարժվում էր դեպի Ջալալօղլի։ Մնացած զորքն էլ, գեներալ Արեշևի երաշխավորությամբ ու Նազարբեկովի առանձնահատուկ հովանավորությունը վայելող Բեկ Մամիկոնյանի գլխավորությամբ հոսում էր դեպի Մեծ Ղարաքիլիսա, որտեղ հույս ուներ Հայոց կորպուսի շտաբի «ռազմավարական հնարամտությամբ» փրկել ոտով-գլխով տանուլ տված պատերազմը։

Թուրքերը չէին շտապում հետապնդել նահանջողներին, նախ, որովհետև նրանք չէին կարող մտածել, թե նահանջն այդքան համատարած է ու արագընթաց, ապա, որ ամենակարևորն է, նրանք պետք է հիմնովին յուրացնեին ու մարսեին ձրի ստացած վիթխարի պարգևը՝ Ալեքսանդրապոլում մնացած անբավ պարենն ու ռազմամթերքը։

* *
*

Իսկ այնտեղ՝ Բաթումում՝ թուրքական պատվիրակությունը ձևացնում էր, թե բանակցությունները շարունակվում են։ Հայ պատվիրակները ևս մի բան ձևացնում էին, իսկ թե ի՞նչ՝ իրենք դեռ պարզ չէին պատկերացնում։ Զգձգո՞ւմ էին իրենց պատասխանը Ալեքսանդրապոլ քաղաքի ու Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծի վերաբերյալ։ Այնպես էր երևում, թե Խատիսովն ուղղակի շշմած է իր պատվիրակության հնարամտության վրա. տեսնո՞ւմ եք, ահա այդպես մենք հարցը կախված կպահենք, և դուք՝ թուրքերդ, ստիպված կլինեք զիջումներ անել։

Մի անգամ նույնիսկ Չխենկելու մոտ այդ առթիվ թափանցիկ ակնարկ արավ, ասաց.

— Խալիլն ու Վեհիբը մեր առաջ վիզ են ծռել. երկաթգիծ են ուզում՝ Ատրպատական զորք փոխադրելու համար։ Եվ մենք այնպես կանենք, որ դա թանկ նստի իրենց վրա։

Թող Չխենկելին իմանա, որ միայն իրենք ու մուսավաթականնե՛րը չեն թուրքերի հետ իրենց հարցերը քննում առանձին-առանձին։

Իսկ եթե իրական վիճակը հարցնելու լինեք, այնտեղ մի այնպիսի տաղտկալի սպասում կար, որից բանագնացները լեկածի

պես էին։ Թմրած, անշարժության գամված, մտածելու, դեպքերն արագացնելու ոչ մի ուժ չունեին և կարծես չէին էլ ուզում ունենալ։

Խատիսովին նամակ էին բերել իր Թիֆլիսյան մի բարեկամից։ Ավելի ճիշտ՝ իր նամակի պատասխանն էր դա. ինքը նրան մայիսի սկզբին էր գրել՝ պատմելով պատվիրակությունների կազմի ու թուրքերի ներկայացրած վերջնագրի մասին։ Եվ հիմա պատասխան-նամակում նախկին պոլսեցի ծանոթն աշխատում էր իր թղթակցին գոնե որոշ չափով տեղյակ պահել հակառակորդների վարք ու բարքից։ Ըստ երևույթին նամակից զգացել էր, որ Ալեքսանդր Խատիսովն իր հակառակորդներին գիտե միայն արտաքին տպավորությամբ. «Խալիլ բեյը հաստ մարդ է, ուռած դեմքով, իսկ Վեհիբ փաշան, հակառակը, չոր մարմին ունի և ձայնն էլ՝ խլացնող»։

«Զհավատաք թուրք պատվիրակների ոչ մի խոսքին,— գրել էր Խատիսովի ծանոթը։— Խալիլ բեյն այն ապերախտն է, որ բարեկամական ապաստան էր գտել Գրիգոր Զոհրապի տանը, երբ երիտասարդ թուրքերը հալածական էին Նազիմ փաշայի հեղաշրջման առիթով։ Այն ժամանակ Զոհրապի ոտքերն էր լիզում և երդվում էր նրա երախտիքը չմոռանալ հարյուր տարի։ Սակայն Տասնհինգին, երբ Զոհրապի կինը նրան դիմեց՝ խնդրելով, որ պաշտպանի իր անմեղ ամուսնուն, նա հրաժարվեց նույնիսկ այդ խեղճ կնոջ աղերսանքը լսել մինչև վերջ»։

«Վեհիբը Տասնհինգի դահիճներից է, սիրելիս,— գրում էր ծանոթը։— Ես իմ աչքերով եմ տեսել, թե ինչպես իր ասկյարներին կարգադրում էր խոշտանգել հայ անճարներին և չէր վրստահում, երևի մտածում էր, թե հանկարծ այդ ճիվաղները կարող են թերանալ, կանգնում, իր կարգադրության կատարումն էր դիտում մինչև վերջ»։

Խատիսովն այդ նամակի մասին ոչինչ չասաց գործակիցներին։ Մտածում էր, թե ծանոթը, Տասնհինգի դժոխքով անցած մարդ, դառնացածությունից գուցե թե չափն անց է կացնում։ Նա պատրաստ էր առհասարակ ոչ մի նշանակություն էլ չտալ ստացած տեղեկություններին։ Բանակցող կողմերն իրենց ներսում կարող են հազար ու մի գաղտնիք ունենալ, նույնքան էլ ծրագրեր ու նկրտումներ։ Կարևորն այն է, որ այդ թուրքերը

մեզնից չեն թաքցնում մեր գործին վերաբերող իրենց բոլոր մտածումներն ու ծրագրերը։ Իսկ մնացյալի վրա թքա՛ծ։

...Եվ Խալիլ բեյն ինքը ջուր մաղեց այս անտեղյակ երջանկության կամ երջանիկ անտեղյակության վրա։ Խալիլ բեյը, որին Խատիսովն ուղղակի Խալիլ էր կոչում իր գործակիցների շրջանում. «Խալիլն ասաց», «Ես քիչ առաջ Խալիլին մի դիտողություն արի»։ Ահա այս Խալիլը, թուրքական պատվիրակության ղեկավարն ու «հաստ մարդը», մայիսին 18-ի թե 19-ի առավոտյան հանդիպելով Խատիսովին, նրա բարևին պատասխանելու փոխարեն, հենց այնպես, իբր ոչ մի կարևորություն էլ չունի, նետեց.

— Կարող եմ շնորհավորել. ձերոնք Ալեքսանդրապոլը հանձնեցին։

— Ալեքսանդրապո՞լը,— շնչահեղձ եղավ հայոց պատվիրակության ղեկավարը։— Ո՞նց հանձնեցին։ Չէ՞ որ զինադադար էր։

— Մերոնք ներս մտան, և ձերոնք էլ հանձնեցին։ Ճիշտ է, զինադադար էր, և համարյա առանց կրակոցի հանձնեցին,— լպրծուն մի բարեկրթությամբ, քողարկված չարախնդությամբ հաղորդեց Խալիլ բեյը և շնայեց էլ, որ տեսնի՝ իր հաղորդած լուրն ի՛նչ տպավորություն թողեց մարդու վրա։

Օդը ծանրացավ։ Պարզ, արևկա եղանակ էր, սակայն միանգամից աշխարհը մթնեց Խատիսովի համար, նրա սրտի զարկերը մուրճահարվածների ձևով խփում էին ականջների տակ և քունքերին։ Ուշքը գլուխը եկավ միայն այն ժամանակ, երբ Քաջազնունին և Վրացյանը, ուրիշներից տեղեկացած լինելով կատարվածի մասին, եկան, որպեսզի խելք-խելքի տան մեծ սղետի առաջն առնելու համար։

*

*

Ես չգիտեմ՝ ո՞ր ժողովրդին է պատկանում ծնունդն այն իմաստության, որն ասում է. հաղթողին չեն դատում։ Բայց իսկապե՞ս հաղթողին չպետք է դատել։ Կամ մի՞թե պարտվողը,— նա, որ հնար չի ունեցել հաղթական իր ծունկը դնելու դիտապաստ ընկած հակառակորդի կրծքին,— պետք է միայն դա-

տապարտված մնա խայտառակության, սերունդների՝ մեկմեկու փոխանցվող պարսավանքին...

Հաղթողին չե՞ն դատում։

Հայն իր բազմադարյան պատմության դժվար բավիղներում պարտություն շատ է տեսել, որպեսզի խորշի այդօրինակ ինքնագոհ իմաստակությունից։ Հայը միշտ էլ փոքր ուժերով կռվել է իր մեծաքանակ թշնամիների դեմ և, ինչո՞ւ թաքցնել, շատ է պատահել, որ անհավասար ու ահեղ այդ ճակատամարտերում նրան վիճակվել են պարտություն, կոտորած, արհավիրքներ ու մահեր։ Դրա համար էլ նա փարվել է ուրիշ մի իմաստության. չիմացյալ մահը մահ է, իմացյալ մահը՝ անմահություն։ Իմացյա՞լ մահը, որ անմահացնում է ոչ միայն հայրենիքի ու նրա սրբազան գործի համար ընկածին, այլև բովանդակ ազգին...

Տասնամյակների հեռվից հեշտ է դատել հայրենիքի զինվորությանը, առավել ևս՝ զորավարներին, որոնց մեղքով կամ անճարակության պատճառով բախտորոշ ճակատամարտներ են տանուլ տրվել։

1918 թ. գարնանը հայոց զորամասերը բոլոր ճակատներում անկարգ նահանջում էին թուրքական բանակների առաջ։ Նահանջող զորամասերը հրամանատարներ ունեին, որոնք արիության բազմաթիվ օրինակներ էին տվել անցյալ պատերազմներում։ Ճակատների հրամանատարները ռուսական բանակի շարքերում, կայսրության փառքի համար չէին խնայել իրենց արյունը։ Եվ, վերջապես, կար զորքի գլխավոր հրամանատարը, բազմափորձ ու անվանի մի գեներալ, որը հինավուրց կարգով պետք է կոչվեր Հայոց սպարապետ։

Հայոց սպարապետները, ըստ օրինաց երկրի, բանակն իրենք էին առաջնորդում մարտի, իրենք էին զորքին տալիս անձնազոհության օրինակ, որ լինում էր թշնամու ջարդ, նաև սեփական անձի նահատակություն։ Հին օրերի սպարապետը չուներ առավել բարձր նպատակ ու պատիվ, քան հայրենիքի համար զոհվելը։ Եվ մեծագույն խայտառակություն էր, եթե աստծու կողմից իրեն վերապահված մահը նա ընդունում էր իր հարկի տակ, խաղաղ իր անկյունում։ Հին պատմիչները մեզ են ավանդել մի այդպիսի տարօրինակ մահ, որ բաժին էր հասել Մամիկոնյան սպարապետական տոհմի քաջազարմ ներկայացուցիչ Մանուելին։ Երբ ծեր սպարապետը հիվանդ պառկած էր անկողնում, և հա-

բազատներն ու երկրի տերերը հավաքված էին նրա շուրջ, նա ամենքի առաջ մերկացավ, բացեց մարմնի բոլոր անդամները, անհարմար չզգաց նույնիսկ ամոթը ցույց տալ։ Ասաց՝ տեսե՞ք, թե ինչպես ողջ մարմնիս վրա մի դրամի մեծության չափ ողջ տեղ չկա, քանի որ վերքերով եմ ծածկվել պատերազմների մեջ։ Հետո նա սկսեց աղիողորմ լալ։ Ասում էր. «Մանկությունից ի վեր ես արյունահեղ կռիվներում եմ եղել, ամեն վերք հանձն եմ առել քաջությամբ, սակայն ինչո՞ւ բախտ չունեցա մեռնելու պատերազմի մեջ, երկրիս համար, հայ ազգի ու եկեղեցու համար։ Ես երբեք չէի խնայում իմ կյանքը, բայց և այնպես ինձ վիճակվեց կյանքս ավանդել անփառունակ մահով՝ անկողնում պառկած»։

Այդպես էր կարգը Հայոց աշխարհում։ Սպարապետը բանակն առաջնորդում էր մարտի, գնում էր զորքի առջևից, կռվում էր քաջաբար և հայրենիքի ու ազգի համար մարտում ընկնելը համարում էր փառքերից մեծագույնը։

Հայոց նոր սպարապետն էլ էր գնում իր զորքի առջևից, սակայն, դժբախտաբար, նահանջո՛ղ զորքի, որի առջևում արդեն հայրենի երկրի վերջին սահմանն էր մնացել, և սպարապետը՝ մեջքը հենած այդ սահմանին՝ իբրև մահվան պատին, օգնություն էր աղերսում, ու նրան օգնող չկար։

Գուցե նա տեղյակ չէ՞ր հին հայոց սպարապետների մարտական վարք ու բարքին, չէ՞ր կարդացել նրանց անձնազոհություններին նվիրված հնավանդ երկերը։ Չէ՞ որ չգիտեր հայերեն և իր ենթակաների հետ խոսում էր ռուսերեն, կամ օգնության էին հասնում թարգմանիչները։ Արևմտահայ հասարակական գործիչ Վահան Փափազյանին էր բախտ վիճակվել դատարկվելիք Ալեքսանդրապոլում միջնորդ-թարգմանիչ լինելու Նազարբեկովի ու զորավար Անդրանիկի միջև։ Այդպես էլ հայոց երկու նշանավոր զորավարներն իրար չէին հասկացել, և մեր ազգային հերոսը հեռացել էր վրդովված։ Ասել էր.

— Թող գայլերը գան, ինձ ուտեն, թե որ Հայոց սպարապետն իր զորքի հետ պիտի խոսի թարգմանչի միջոցով։

Բայց չէ՞ որ այդ սպարապետը նաև քաջության ու զորավարական հմտության օրինակներ էր տվել Արևմտյան Հայաստանում, երբ նրա հրամանին ենթակա էին ռուսական կանոնավոր զորամասերը, երբ հայ կամավորական խմբերն իրենց կործա-

նարար հարվածներով թշնամուն ստիպում էին գլուխ պրծացնել...

Ալեքսանդրապոլի անկումը, իսկ ավելի ճիշտ՝ նրա անփառունակ հանձնումը Թուրքերին, ըստ երևույթին, այն ճակատագրական կետերից էր, որոնք միանգամից բեկում են մարդու անունը, և այնուհետև մոռացվում է, թե այդ անվան տերն ի՞նչ է արել առաջներում։ Հենց իրենք՝ ալեքսանդրապոլցիները, տեսնելով հսկա մարմինն ափալ-թափալ մեքենայի մեջ խցկող զորավարին՝ չկարողացան զսպել իրենց լեզուների խուտուտը, ետևից կանչեցին.

— Նազարբեգո՞վ-Նազար-բեգո՞մ։— Հետո տեսան, որ առանց ետ նայելու սլանում է դեպի Ղարաքիլիսա, փորները բռնած, այդ ողբերգական պահին քրքջալով իրենց մեջ ուժ գտան գոռալու.— Նազադ բեգո՞մ, նազադ բեգո՞մ։

Սրամիտ մարդ լիներ այդ Նազարբեկով զորավարը, գոնե հետագայում, երբ կանգ էր առել Ղարաքիլիսայում, կամ էլ հենց Դիլիջանում, որ նրա վերջին ապաստանն էր դարձել, և հավաստի լուրերով՝ ամբողջ Հայաստան աշխարհին հայտնի էր դարձել, թե ինչպես Թուրքերը Ալեքսանդրապոլը զուր տեղը ոմբակոծելուց հետո, քաղաք էին մտել տոնական շքերթով, առանց տեղացիներից մի գնդակ, թեկուզ մի ապտակ վայելելու,— ահա այս ժամանակ, գոնե ստացած փոթ-անվանն ի հատուցում, կասեր՝ ա՛յ ալեքպոլցիներ, ա՛յ գյումրեցիներ, բա դա անելո՞ւ բան էր, որ դուք ձեր քաղաք-ամրոցն այդպես տոնական ճաշասեղանի պես բացեցիք-փռեցիք Թուրքի առաջ...

Բայց ո՞վ էր ինքը՝ Թոմաս Իվանի Նազարբեկովն իբրև մարդ, գեներալ և հատկապես Հայկական զորքերի գլխավոր հրամանատար, այսինքն՝ Հայոց սպարապետ։

Զորավար Նազարբեկովի մասին շատերն են գրել։ Գրել են նրա անձնական բարեկամները և առհասարակ բարյացակամ մարդիկ, որոնց համար այդ հին ու փորձված, ռուսական պետության երեք մեծ պատերազմների բովով անցած զորականը պատշաճ բանականության, ռազմական հմտության և խիզախության օրինակ էր՝ առանց որևէ շոշափելի թերության։ Իսկ անբարյացակամների ներկայացրած զորավարը պատահաբար ունեցել է նաև հաջողություններ, երբ ինքնըստինքյան պատահական մարդ էր իբրև ժամանակի հայկական զինվորության գլխավոր հրամանատար։

Ինձ թվում է՝ ավելորդ կլինի այս երկու ծայրահեղությունները հաշտեցնելու ամեն փորձ։ Մանավանդ, որ հրապարակված ու անտիպ մեծաքանակ նյութերի մեջ կան նաև լուրջ, համոզիչ կարծիքներ։ Ահա նրանցից մեկը, որի հեղինակը Նազարբեկովի երկարամյա ծանոթ-բարեկամն է, Թիֆլիսի հայկական ղեկավար շրջանակի ոչ երկրորդական մի գործիչ՝ Գևորգ Մելիք-Կարակոզով-Ղարագյոզյանը։ Նա, իր իսկ խոստովանությամբ, ստիպված շատ է ունեցել զորավարի հետ խոսելու մեջ հետաքրքրքրող խնդրի շուրջ և ահա թե ի՛նչ է գրել իր հուշերում։ Ասում է՝ դեռևս այն ժամանակ, երբ հայկական կորպուսը նոր էր կազմակերպվում, և հետագայում, «ընդհուպ մինչև իր մահը, նա (այսինքն՝ Նազարբեկովը.— Բ. Ու.) ինձ բազմիցս ասել է, թե հայերը հոգնել են, չեն ուզում կռվել, որ այդպիսի նյութից դժվար է կազմակերպել մարտունակ բանակ, և այդ պատճառով էլ, «քիչ հավանական է, որ հնարավոր լինի կասեցնել թուրք զորքերի առաջխաղացումը» (հուշերում այս չակերտները կան, որ կնշանակի՝ մեջ է բերված զորավարի ուղղակի խոսքը.— Բ. Ու.)։ Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հետագայում, նա այս բառերն այնքան հաճախ էր կրկնում (և պետք է ենթադրել՝ ո՛չ միայն ինձ), որ, պարզ է, նրանք չէին կարող լինել պատահական, այլ կամ գալիս էին խոր համոզմունքից, կամ անհաջողությունների համար արվող կշտամբանքները դիմակայելու պահանջից։ Բայց ինքն իրեն բխում է օրինական հարց. նա այդպիսի կասկածամտության պարագային պե՞տք է իր վրա վերցներ ազգային բանակի կազմակերպչի ու գլխավոր հրամանատարի այդքան պատասխանատու դերը»։

Հուշագրողը, այս իսկապես օրինական հարցից հետո, նշում է, որ Նազարբեկովն առհասարակ չի ունեցել ո՛չ հիվանդոտ պատվախնդրություն, ո՛չ էլ բարձր պաշտոններից կառչելու սովորություն։ Այս դեպքում ի՞նչը նրան ստիպեց ընդունելու, իր կարծիքով, դեպի անկասեցնելի կործանում գնացող ազգի զորքը գլխավորելու պատիվը։ «Բացառապես՝ ժողովրդի առաջ ունեցած պարտքի գիտակցությունը»,— իր հարուցած հարցին այսպես է պատասխանում Գ. Մելիք-Ղարագյոզյանը և ավելացնում. «Դրա մեջ էր նրա քաղաքացիական արիությունը, բայց գուցեն միաժամանակ... նրա պատմական սխալը»։

Սրան հետևում է հուշագրողի կարծիքը՝ այն օրերի հայ ժողովրդին ու նրա ցանուցիր զորքին անհրաժեշտ հրամանատարի մասին։ «Անձամբ ես մտածում եմ,— գրել է նա,— թե այն փոթորկոտ ու ճակատագրական շրջանում պահանջվում էր ուրիշ մասշտաբի, եռանդի, բնավորության, թերևս նաև ուրիշ տարիքի զորահրամանատար։ Նազարբեկովը հին, կազմակերպված, կանոնավոր բանակի փորձառու գեներալ էր։ Բայց տանուլ տված աշխարհամարտի փլատակների վրա շտապ կարգով ազգային նոր բանակ համալրելու և այն թուրքաց բազմափորձ, միայն իրենց երևույթով հայության վրա սարսափ տարածող բանակների դեմ տանելու համար, ուրիշ զորավարների կամայականությունները և բիրտ ու ամբարտավան խմբապետների քմահաճույքները հաղթահարելու համար, զինվորությանն ու ամբողջ ազգին ոգևորելու, առաջ տանելու համար պահանջվում էր ուրիշ տեսակ զորահրամանատար։ Առավել անմիջական ու հնարամի՛տ, գործնական վիթխարի եռանդի ու անձնական հմայքի, բնատուր մեծ խելքի ու առողջ բնազդի տե՛ր և վճռակա՛ն, հենց միայն իր իսկ կերպարով ոգևորող ու ոգեշնչո՛ղ, ահռելի գործնական եռանդո՛վ, թեկուզ նաև անդրկովկասյան իշխանության՝ նենգավոր թշնամու դեմ երերացող, անկայուն, հաճախ էլ դավաճանական վճիռներ հանող ղեկավարներին ընդգիմացո՛ղ... Կարող են հարցնել. իսկ որտեղի՞ց գտնեին այդպիսի մարդուն։ Հայկական վերին սպայության շարքերում եղե՞լ է առավել հարմար մարդ, քան Նազարբեկովը։ Չգիտեմ։ Գուցե չի էլ եղել։ Սակայն հեղափոխությունը և գործը ծնում են առաջնորդներ, և թերևս այդպիսին պետք էր փնտրել ո՛չ անպայման կադրային զինվորականների շարքերում, այլ նրանց մեջ, որոնք առանձնապես հուսադրում էին իրենց տաղանդով, եռանդով ու կազմակերպչական ընդունակություններով։ Այդպիսինին պետք է այն շրջանում վստահվեր դիկտատորական իշխանություն, ու նրա շուրջը, ինչպես այդ լինում է հեղափոխական բանակներում, շուտով կկազմակերպվեր ընդունակ գործիչների մի ամբողջ խումբ։ Միայն այդպիսի առաջնորդի գլխավորությամբ 1917—1918 ճակատագրական թվականները կավարտվեին լավագույն արդյունքներով, քան ձեռք բերեց հայ տարաբախտ ժողովուրդը, որի միայն վերջին բեկորները փրկվեցին, չնայած նրա այն իսկապես հերոսական խիզախումներին՝ գործված մի խղճուկ տա-

բածքի վրա, որը կիսով չափ բռնագրավվել էր Թուրքերի կողմից և պիտի կոչվեր Հայկական հանրապետություն»։

Մելիք-Ղարագյոզյանն այստեղ վերստին անդրադառնում է զորավար Նազարբեկովի կերպարին՝ տալով նրա ճակատագրական սխալի իր սեփական բացատրությունը։ Նազարբեկովը,— ընդգծում է հուշագրողը,— հաշվի չէր առել, որ երբ պետական իշխանությունը երերուն է, կամազուրկ և գտնվում է խարխլվելու վիճակում, պատմական պահի խնդիրը պահանջում է ինքնուրույն բեմելն ու ինքնակամ վճիռներ հանելն ա՛յն մարդու կողմից, որին վստահված է ժողովրդի բախտը։

Սպառի՞չ է Նազարբեկովի բարեկամի այս բնութագրությունը թե՞ ոչ, ես քննելու նպատակ չունեմ։ Մանավանդ նրա այն հարցը, թե սպարապետության համար «Հայկական վերին սպայության շարքերում եղե՞լ է առավել հարմար մարդ, քան Նազարբեկովը»։ Իսկապես եղե՞լ է, թե՞ ոչ՝ այդ կերևա հետագա իրական-պատմական դեպքերից, որոնք և կազմում են այս գրքի առանցքը։

Բայց ո՞վ էր, այսուհանդերձ, Նազարբեկովը, որի մասին այնպիսի ծայրահեղորեն հակասական կարծիքներ են պնդում նույնիսկ մերօրյա հեղինակները։

Գրական գործերից մեկում նա ներկայացվել է իբրև Քաջ Նազարի կրկնօրինակը։ Իսկ Կովկասյան ճակատի գաղտնիքներին քաջատեղյակ մի հետազոտող փորձում է արդարացնել Հայոց նոր սպարապետին։ Թվարկում է նրա անցյալ ծառայությունները նշանակալից, Անդրկովկասյան սեյմի հայատյաց ղեկավարների խարդավանքներն է հիշում, հայոց ռազմաճակատի վիճակն անհուսալի... և ահա՛, պատրաստ է ուշացած, բայց գիտական ու հիմնավոր արդարացումը։

Ների՛ր ինձ, ընթերցող, որ չպիտի փորձեմ հաստատել մեկի ասածը կամ ժխտել մյուսի տեսակետը։ Ականատեսները համերաշխ են միայն նրա արտաքինին վերաբերող տեղեկություններում։ Ասում են՝ հաղթահասակ ու բարետես մարդ է եղել։ Նաև ասում են՝ ձախ աչքի վնասվածքի շնորհիվ նմանեցրել են ռուս հռչակավոր այն զորավարին, որը նապոլեոնյան բանակները ներքաշելով մինչև իր հայրենիքի մայրաքաղաքը, հետապարտիզանական պատերազմներով հյուծեց նրանց։ Նմանություն, հավանաբար, եղել է, եթե իսկապես նմանեցրել են և աչ-

քից հեռու էլ կոչել են նրա անունով. «Կուտուզովն է գալիս», «Կուտուզովը վրդովված է»։ Սակայն ռազմավարական նմանություն նշմարելն անհնար է, որովհետև հայ «Կուտուզովը» ոչ մի տեսակ պատերազմ վարելու տրամադրություն չուներ և կառավարության լիազորություններով օժտված իր վերադասներին անվերջ ու անընդհատ հորդորում էր զինադադար կնքել, թուրքերն ի՛նչ.պայմաններ էլ որ առաջարկելու լինեն...

Այստեղ իսկ ես խոսք պետք է տամ իրեն՝ Հայոց սպարապետ Թոմաս Նազարբեկովին։ Թող նա ինքը խոսի (կամ կարդա իր գրածները), և ընթերցողը դատի նրա մասին։

Իմ ձեռքի տակ են Նազարբեկովի հեռագրերը հայ-թուրքական ռազմաճակատից՝ ուղղված Թիֆլիս, գեներալ Կվինիտաձեին և Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նախագահին, որ Ավետիս Ահարոնյանն էր։ Սրանք սովորական հեռագրեր չեն, որ ունենում են անարյուն բառերի կցկտուր շարքեր, և կարդալիս չես կարող որոշել՝ իմաստունի՞ ձեռքի տակից են դուրս եկել, թե՞ հազիվ տառաճանաչ մահկանացուի։ Սրանք հանգամանալից, ընդարձակ գրություններ են, որոնք ոչ միայն պատմում են դեպքերի ընթացքը ճակատում, այլև արտահայտում են հեղինակի հոգեբանական վիճակի շարժումը, նրա բնավորության գծերը, մարդկային արժանավորություններն ու թուլությունները։

Դատելով այս հեռագրերից՝ չի կարելի չեզրակացնել, որ Նազարբեկովը վարժ ու կիրթ գրիչ է ունեցել։ Իսկ այսպիսի մարդու մասին ընդունված է ասել՝ որտեղ նրա գրածը, այնտեղ էլ ինքը։

Ուրեմն Հայոց նոր սպարապետ Թոմաս Նազարբեկովին փորձենք ճանաչել նրա գրածներից, որոնք հիմնականում ես տեսել եմ իր սեփական ձեռագրով, այսինքն՝ իր իսկ գրչի տակից ելած վիճակում։ Իսկ մեր օրերում ձեռագրով ճշգրիտ որոշում են նաև նրա հեղինակի վարքն ու բնավորությունը, նրա հոգեբանության անսխալ պատկերն են տալիս։

«Այս մայիսի 10-ի ժամը մեկին Ղարաքիլիսա հասա Ալեքսանդրապոլից, որտեղից դուրս էի եկել երեկոյան ժամը 17-ին,— գրել է Հայոց սպարապետը։— Դուրս գալուս ժամանակ քաղաքի գրությունը ներկայանում էր իբրև կատարյալ անհուսալի. թուրքերն աջ թևում նվաճել էին Օրթաքիլիսան՝ կտրելով երկաթուղին և շարունակում էին հարձակումը Ջաջուռի վրա։ Ձախ թևում թուրքերը նվաճել էին Փոքր Ղարաքիլիսան և դուրս էին գալիս

Ալեքսանդրապոլի թիկունքը։ Ծախսված էին բոլոր պահեստային ուժերը։ Թուրքերի կողմից զինադադարի հանկարծակի խախտումը աներևակայելի խուճապ էր առաջացրել քաղաքում և շրջակա գյուղերում. ամբողջ բնակչությունը փախչում էր՝ իր հետ քաշելով նաև զինվորներին, որոնք նետվում էին փրկելու իրենց ընտանիքները, քանի որ տեսնում էին դրության ամբողջ անհուսալիությունը։

Ալեքսանդրապոլից դուրս գալուց առաջ ես հրամայել եմ թուրքերի մոտ բանագնացներ ուղարկել զորքի ու քաղաքի բնակչության ներկայացուցիչներից, որպեսզի մշակեն ըստ հնարավորին շահավետ պայմաններով քաղաքը թուրքերին հանձնելու կարգը։ Դրա հետ միասին, այն ժամանակ ես գեներալ Արեշևին կարգադրել եմ գիշերվա ընթացքում նահանջել Ջաջուռի լեռնանցքը՝ նախօրոք պատրաստված դիրքը։ Հաղորդում եմ առաջին հայկական հրաձգային դիվիզիայի շտաբի պետի տված զեկույցը։ «Զեկուցում Ալեքսանդրապոլ քաղաքի ու բերդի հանձնման պայմանների մասին. առաջին՝ պարտավոր ենք ամբողջ սպառազինությունը թողնել քաղաքում կամ զենքերը հանձնել, երկրորդ՝ քաղաք պիտի մտնի թուրքական զորքի մի մասը՝ այնտեղ կարգ պահպանելու համար, մնացած զորքը պետք է Արփաչայից 25 կմ հեռանա։ Երրորդ՝ երկաթուղային կայարանը, դեպոն, արհեստանոցները, գնացքաքարշները, վագոնները և ամեն ինչ քաղաքում ու բերդում պետք է մնան անվնաս»։ Մայիսի 15-ի երեկոյան դրությունը. չնայած մեր մի շարք միջոցառումներին, թուրքերն աջ թևում ամրացել են Օրթաքիլիսայում ու նրանից հյուսիս գտնվող բարձունքներում, կենտրոնում կուտակվել են բերդի առաջ, ձախ թևում գրավել են Թափա-Դոլակն ու Փոքր Ղարաքիլիսան, որտեղից էլ հարձակվել են դեպի արևելք։ Մեր աջ թևը, շրջանցելով թուրքերին, հեռացել է դեպի սարերը։ Զգիմանալով թուրքերի հարձակմանը, չորրորդ գունդը նահանջել է Ջաջուռ՝ Դյուզքենդի շրջանից դեպի արևմուտք, մի մասով Օրթաքիլիսայի վրա գնալու, մյուս մասով էլ ձախ թևին օժանդակելու համար։ Ձախ թևում երկրորդ ու առաջին գնդերը նահանջել են Մեծ Քափանակի շրջանի բարձունքները։ Ութերորդ գունդը դժվարությամբ շարունակում էր մնալ Ալեքսանդրապոլի հյուսիս-արևելյան մասում։ Մնացած զորամասերի ու բազմաթիվ ջոկատների տեղադրությունն անհայտ է։ Կարգադրը-

ված է եղել պաշտպանել Ջաջուռի բարձունքները, և ժամը 24-ի կողմ ստացվել են վերոշարադրյալ պայմանները։ Նկատի առնելով զորքերի քայքայվածությունն ու նվազ մարտունակությունը, ուշադրության առնելով, որ անհնար է Ալեքսանդրապոլի կայազորով գրավել Ջաջուռի լեռնանցքից հյուսիս գտնվող տեղամասը, և այդ պատճառով էլ բոլորովին հույս չդնելով Ջաջուռի բարձունքները պահելու վրա, դիվիզիայի հրամանատարը որոշել է կատարել թուրքերի պայմանները և զորքերը ետ քաշել Գերքի գիծը՝ ճակատը պաշտպանելով և հեծելազորի միջոցով թևերին հետևելով, ուր և զորասյուները կարգի բերել և մարտն ընդունել, որի մասին հրաման է տրված։

1918 թ. մայիսի 16-ի ժ. 4 և 35 րոպե»։

Սա դիվիզիայի շտաբի պետ Մացիևի զեկույցն է Հայկական կորպուսի հրամանատար Նազարբեկովին։ Նազարբեկովը, իր տագնապալից խոսքին առավել մեծ համոզչություն հաղորդելու համար, այս հեռագիրը մեջ է բերում ամբողջությամբ, ապա կատարում է նաև սեփական եզրակացություն, որ հետևյալն է. «Նկատի առնելով զորագնդերի լիակատար քայքայվածությունը, մարտն ընդունելու և Ջաջուռի դիրքերը պաշտպանելու բացարձակ անհնարինությունը՝ ես համաձայն եմ դիվիզիայի պետի առաջարկությանը և իրեն կարգադրել եմ զբաղեցնել նախատեսված գիծը։

1918 թ. մայիսի 16-ի ժ. 9 և 30 րոպե։

Կորպուսի հրամանատար Նազարբեկով»։

Հայկական կորպուսի հրամանատարը հեռագրում Ալեքսանդրապոլից իր հեռանալու օր է համարում մայիսի 10-ը և ոչ թե 15-ը։ Մի՞թե այսպես շուտ նա մոռացել էր իր նահանջի հանգամանքները։ Թե՞ Թիֆլիսում նստածների առաջ էր անհարմար, որպեսզի քաղաքը թուրքերին հանձնվեր իր աչքերի առաջ, իր իսկ անմիջական մասնակցությամբ։

Ավելորդ չէ նշել նաև, որ դիվիզիայի պետի հեռագրում դրությունը ծայրահեղ անհուսալի չէ։ Մացիևը որոշել էր «կատարել թուրքերի պայմանները և զորքերը ետ քաշել Գերքի գիծը՝ ճա-

կատը պաշտպանելով ու հեծելազորի միջոցով թևերին հետևելով, ուր և զորասյունները կարգի բերել և մարտն ընդունել»։ Գեներալ Նազարբեկովն այսքանից վերակազմում է ուրիշ մի վիճակ՝ «նկատի առնելով զորագնդերի լիակատար քայքայվածությունը, մարտն ընդունելու և Ջաջուռի դիրքերը պաշտպանելու բացարձակ անհնարինությունը»։

Ի՞նչ է պատճառն այս տարբերության։ Մի՞թե դիվիզիայի պետ Մացիևն իր դիվիզիայի վիճակն ավելի վատ էր տեսնում, քան գեներալ Նազարբեկովն իր զարաքիլիսյան հեռվից։ Թե՞ վերջինիս ձեռնտու էր դրությունն այնպես ներկայացնել, որպեսզի հետո արդարացվեն թուրքերի առաջ անձնատուր լինելու բոլոր պայմանները։

«Թիֆլիս, Հայոց ազգային խորհրդի նախագահին.

Ալեքսանդրապոլը թուրքերի կողմից գրավելու և մեր զորքերն Արփաչայից ու Երևանյան երկաթուղուց ետ քաշելու պատճառով ինձ վստահված կորպուսի զորամասերն իրերի բնական ընթացքով դասավորվում են հետևյալ երեք խմբերով (ապա հանգամանորեն ներկայացնում է Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ու Երևանյան զորախմբերի դասավորությունը.— Բ. Ոի.)։ Հայկական զորամասերի դրությունը ծայրահեղորեն դժվարանում է նրանով, որ մենք գտնվում ենք երկու թշնամիների սրանքում. մեր առջևում թուրքերն են, թիկունքում՝ թաթարները, և թուրքաց հետագա հարձակման դեպքում մենք այլևս ետ գնալու տեղ չենք ունենա։ Ծայրագույն կետերը, որոնցից դենը մենք չենք կարող նահանջել, ես համարում եմ Ջալալ Օղլին ու Վորոնցովկան աջ թևում, Սանահինը կենտրոնում և Դիլիջանն ու Նոր-Բայազետը ձախ թևում։ Եվ խնդրում եմ ցուցում տալ, թե ի՞նչ պիտի անել, եթե թուրքերը մոտենան այդ ծայրագույն կետերին։

Դժբախտաբար ես հույս չունեմ, թե մեր զորամասերը թշնամուն ցույց կտան անհրաժեշտ դիմադրություն այն կետերում, որ իրենք են այժմ զբաղեցնում։ Զորամասերը լրիվ կազմալուծված են, գնդերը վեր են ածվել վաշտերի։ Այսպես. 8-րդ հրաձգային գնդում առայժմ առկա են 120 մարդ, յոթերորդ հրաձգային գնդում հիմա սոսկ մի քանի տասնյակ մարդիկ են հավաքվում։

Ինձ վստահված կորպուսի համար ամենաահեղ հարցը սույն պարագային սննդի հարցն է՝ պարենային բոլոր տեսակների գծով։ Ժամանակին էվակուացվելու հնարավորություն չունենալով, գաղթականների հոսքի, ինչպես նաև Կարսի ու Ալեքսանդրապոլի փոխադրամիջոցների անբավարարության պատճառով, երկու այդ կետերում եղած հսկայական պաշարները գրավվել են թուրքերի կողմից, և կորպուսի տրամադրության տակ եղած մարտական, մթերային, սննդի, հացահատիկի պաշարները միանգամայն չնչին են. եռագիծ փամփուշտների պաշարը կբավականացնի միայն մեկ մարտի համար, ուրիշ խոսքով՝ մենք փամփուշտ համարյա չունենք։ Հրացաններ բոլորովին չունենք։ Հագուստ և կոշիկ բոլորովին չկան։ Ունենք սպիտակեղենի մի չնչին պաշար։ Ալյուր առհասարակ չկա։ Պաքսիմատը, յուրաքանչյուր մարդուն օրական մեկ ֆունտի հաշվով, կբավականացնի յոթ օր։ Կա ձավարի ու շաքարի մի փոքր պաշար։

Նկատի առնելով, որ Թիֆլիսից փամփուշտ ու մթերքներ ստանալը դժվար թե լինի, և որ դրա հետ նաև՝ մեր զորքերը համարյա հասել են հնարավոր նահանջի վերոհիշյալ ծայրագույն կետերին, ստիպված ենք, առանց դրսի օգնության, մեր դրությունը համարել անելանելի, որը և անհնար է դարձնում թուրքերի դեմ մեր կռվի հետագա շարունակելը։

1918 թ. մայիսի 16-ի ժ. 22 և 30 րոպե։

Կորպուսի հրամանատար Նազարբեկով»։

Մայիսի 16-ի ժամը 12 և 40 րոպեին, նույն հասցեներով հղած հեռագրում հանգամանորեն նկարագրված են հայկական զորամասի անհաջողությունները Ղարաքիլիսայի ճակատում։

Հաջորդ օրվա հեռագիրն էլ ունի նույն բովանդակությունը՝ գումարած ամեն ինչով օգնության հաստնելու խնդիրքը։

Ամսի տասնութին փոխադրամիջոցներ են խնդրվում՝ իր մոտ, Ղշլաղ գյուղում պահվող երեք հազար թուրք գերիներին թիկունք տեղափոխելու համար։

Գնդապետ Բեկ Մամիկոնյանը, զեկուցելով իր և հարևան միավորումների վիճակի մասին, գեներալ Նազարբեկովին խորհուրդ է տալիս նյութական ամբողջ ունեցվածքն ու թնդանոթները շտապ կերպով փոխադրել խոր թիկունք, որպեսզի չընկնեն թուրքերի

ձիոքը։ Սակայն գեներալին հայտնի էր, որ այլևս խոր թիկունք չկա։ Իսկ թնդանոթնե՞րը... Այն ե՞րբ է եղել, որ կռվողներն իրենց զենքերն ուղարկել են խոր թիկունք։ Բանցքամարտի՞ պիտի նետվեին դիմացից եկող թշնամու դեմ։

Գեներալ Նազարբեկովը հիմնավոր կրթություն ստացած մարդ էր, կարողանում էր կազմել գրագետ զեկույցներ, որոնք պարզ ու լայն պատկերացում են տալիս ռազմաճակատի ընդհանուր դրության և նրա առանձին կետերի մասին։ Այդ գրագետ մարդը նաև խելոք էր. մտածում էր, թե հնարավոր է, որ թղթակիցները չհավատան իր տագնապալից ահազանգերին։ Դրա համար էլ մեկ-մեկ ուղարկում էր նաև ստորին օղակներից իրեն հասած զեկույցները։ Ուղարկում էր՝ անպայման շեշտելով, որ դրանք բնագրերն են, և ինքը չի հավելել ոչ մի բառ։

Այստեղ արժե մեջ բերել երկուսը Նազարբեկովի ստացած ու վերագրկած զեկույցներից։

«Հաղորդում եմ, որ միացյալ զորախմբի երրորդ առանձին բրիգադը հալչել է և կարող է դուրս բերել 84 զինվոր, 4 գնդացիր։ Բրիգադին է միացված Տիգրան Բաղդասարյանի (արևմտահայ) ջոկատը 400 հետիոտն ու 250 հեծյալ զինվորների կազմով, որը գտնվում է առաջին զինվորական գնդի մեջ։ Գնդապետ Բաղդասարովը, Վանի երկրորդ գնդի հրամանատար Կետտերը ներկայացրել են զեկույց հիվանդության մասին։ Գեներալ-մայոր Սիլիվով»։

Գեներալ Արեշևի հեռագրում դրությունը նկարված է այնքան մռայլ գույներով, որ Նազարբեկովն իսկապես կարող էր չավելացնել ոչինչ։ Արևմտահայերը փախչում են ճակատից, արևելահայ գյուղերն էլ լավագույն դեպքում դատարկվում են, վատագույն դեպքում՝ սպիտակ դրոշ բարձրացնում հորիզոնում դեռևս չերևացած թուրքերի առաջ, որովհետև սրանք լրատուների միջոցով խոստացել են խնայել հնազանդվողներին,— գրում է մարտական հրամանատարը, ապա, դառնալով զորամասի վիճակին, հաղորդում. դիրքերը լքում են նույնիսկ նախկին կռվողները. «Ախալքալաքցիները, ղարաբաղցիներն ու ելիզավետպոլցիները, տեսնելով ընդհանուր փախուստը, հայտարարել են, որ եթե բոլորդ հեռանում եք, ապա մենք էլ կհեռանանք՝ պաշտպանելու մեր հարազատ վայրերը։ Հետևանքն այն է, որ մնացել են հրամանատարական կազմն ու զինվորների մանր խմբեր...»։

Եվ այս տագնապալից տեղեկություններից հետո վերստին գալիս են սպարապետի ոչ պակաս տագնապալից ահազանգերը։

«Թիֆլիս, Հայոց ազգային խորհրդի նախագահին.

Այս ժամին ինձ է ներկայացել Ալեքսանդրապոլի ջոկատի պետ և հայկական առաջին հրաձգային դիվիզիայի հրամանատար գնդապետ Բեկ Մամիկոնյանն իր անձնական զեկույցով։ Իր իսկ նախկին տեղեկությունների և անձնական այս զեկույցի համաձայն՝ վերջին օրերին ծավալված զինվորների զանգվածային դասալքության պատճառով ռազմաճակատում ես այլևս զորք չունեմ։ I, IV, VII և VIII հրաձգային գնդերը բոլորովին հեռացել են իրենց տեղամասերից։ Այդ գնդերից յուրաքանչյուրում մնացել է 20—40 մարդ։ Երրորդ հրաձգային գնդում և Կարսի ամրոցային գնդում մնացել է հարյուրական մարդ։ Գնդապետ Բեկ Մամիկոնյանի խոսքով՝ ամբողջ զորամասում մնացել են չորս հարյուր մարտիկներ, որոնք ևս անպայման կհեռանան այսօր գիշերը։ Դրանից բացի, վերջին օրերի ընթացքում միանգամայն փոխվել է տեղական բնակչության տրամադրությունը. բոլոր գյուղերը ճերմակ դրոշակներ են հանել, զենքը ձեռքներին պահանջում են հեռանալ և պատրաստ են անցնել թուրքերի կողմը։ Վաղը կորպուսի շտաբի ու թուրքերի արանքում այլևս չի լինի ոչինչ, բացի դիվիզիայի շտաբից։ Դիվիզիաների ու կորպուսի շտաբներին մնում է երկուսից մեկը՝ մնալ տեղերում և այստեղ սպասել թուրքերի գալուն, կամ էլ՝ անհապաղ կազմացրվել հենց այստեղ, կամ ուր որ կնշվի։ Սպասում եմ ձեր շուտափույթ կարգադրություններին՝ ի՞նչ անել։ Դրանից բացի, խնդրում եմ շտապ ցուցում տալ այն մասին, թե պե՞տք է հաշվել, որ մենք պատերազմական վիճակում ենք թուրքերի հետ, թե՞ զինադադարի դրություն է։

1918 թ. մայիսի 18-ի ժամը 20։

Կորպուսի հրամանատար Նազարբեկով»։

«Ղարաքիլիսայից Թիֆլիս, Հայոց ազգային խորհրդի նախագահին.

Ի գիտություն հաղորդում եմ գեներալ Սիլիկովից ստացածս հեռագրի պատճենը. «Սուրմալուի ու Էջմիածնի գավառնե-

րի բնակչությունը Ալեքսանդրապոլի դեպքերից հետո փութկոտ էվակուացվում է։ Փախստականներով լցվել են գյուղական ճանապարհները, փոխադրական միջոցներ չեն մնացել։ Արժեքավոր ունեցվածքները շուտափույթ կերպով տեղափոխելու համար անհրաժեշտ է շտապ իմ կարգադրության տակ ուղարկել տաս բեռնատարներ։ Գեներալ Սիլիկով»։

1918 թ. մայիսի 19։

Կորպուսի հրամանատար Նազարբեկով»։

«Թիֆլիս, Հայոց ազգային խորհրդի նախագահին.

Ունեցած տեղեկությունների համաձայն՝ Ալեքսանդրապոլյան զորաջոկատի կազմից մարդիկ զանգվածաբար դասալքել և հասել են Թիֆլիս։ Միջոցներ ձեռք առեք դասալիքներին բռնոտելու և, ըստ անվանական ցուցակների, վերադարձնելու իրենց զորամասերը, ուր և նրանք պետք է ենթարկվեն դատի։

1918 թ. մայիսի 19։

Կորպուսի հրամանատար Նազարբեկով»։

«Գեներալ Կվինիտաձեին,

«Թիֆլիս, Հայոց ազգային խորհրդի նախագահին.

Ամեն օր դրությունն առավել վատթարանում է։ Ինչպես ես արդեն զեկուցել եմ (ընդգծումն իրենն է.— Բ. Ու.), Ղարաքիլիսայի առաջ զորք չի մնացել, բոլորը ցրվել են տները։ Ինչպես գեներալ Սիլիկովի այսօրվա զեկույցից է երևում, նույն պատկերն է նաև Երևանյան զորաջոկատում։ Այսպիսի պայմաններում ես մեր վիճակը համարում եմ անելանելի և պատերազմի հետագա շարունակումը՝ անհնար։ Դրությունը պահանջում է անմիջապես կնքել խաղաղություն։ Անհրաժեշտ է հայտարարել զորացրում և դադարեցնել մարտական ամեն տեսակ գործողություն, նույնիսկ թուրքերի հետագա հարձակման դեպքում։ Գոնե թույլ կադրերը իրեղենի մի մասի հետ պահպանելու և բնակչությունը փրկելու համար անհրաժեշտ է այդ միջոցառումն իրականացնել անհապաղ, ապա թե ոչ, թուրքերի կողմից մեզ Դիլիջանին ու Սանահնին սեղմելն ավելի կվատացնի դրությունը և

վերջնականապես կխորտակի ինչպես բնակչությանը, այնպես էլ զորքին։

Մայիսի 20-ի ժ. 20 և 30 րոպե։

Կորպուսի հրամանատար Նազարբեկով»։

Նույն հասցեներով՝

«Թշնամին գրավել է Համամլուն և շարունակում է առաջ-շարժումը։ Զոկատը նահանջում է Ղշլաղ, որից հետո Ղարաքիլիսա։

1918 թ. մայիսի 21-ի ժ. 19։

Կորպուսի հրամանատար Նազարբեկով»։

«Այսօր կորպուսի շտաբը փոխադրվում է Դիլիջան։

1918 թ. մայիսի 21-ի ժ. 20։

Կորպուսի հրամանատար Նազարբեկով»։

Թիֆլիս, գեներալ Կվինիտաձեին,

Պատճենը՝ Հայոց ազգային խորհրդի նախագահին.

Անդրկովկասյան կառավարության կարգադրությունը, որ ձեր թիվ 76 հեռագրով հաղորդել էիք ինձ, ընդունված է ի կատարումն, ես համապատասխան նամակ եմ հղում Շեքի փաշային՝ մանրամասն համաձայնագիր մշակելու համար երկու կողմերից բանախոսներ հավաքելու մասին։ Բայց ինձ զարմացնում է կառավարության կողմից ինձ արված կարգադրությունը, երբ թուրքերը համառորեն չեն ուզում հաշվի նստել ոչ մի տեսակ համաձայնության հետ, համառորեն շարունակում են մարտական գործողություններն ու առաջշարժումը, չնայած ես արդեն համաձայնություն էի տվել [իրենց] զորքն անարգել կերպով Ջուլֆա տեղափոխելու համար։

Այսօրվա տեղեկությունների համաձայն՝ թուրքերն արդեն մո-

տեցել են Վորոնցովկային, մերձենում են Նալբանդին և գրոհում են Իգդիրի վրա։

Բացի դրանից իմ ոչ մի նամակին ես պատասխան չեմ ստացել։ Այս ամենն ապացուցում է, որ թուրքերը նկատի ունեն (երևի պիտի լինի՝ նպատակ ունեն.— Բ. Ու.) նվաճելու ոչ միայն երկաթգիծը մինչև Ջուլֆա, այլև հետապնդում են ուրիշ նպատակներ և առհասարակ չեն ցանկանում մեզ հետ կնքել որևէ համաձայնագիր։ Ենթադրում եմ, որ կառավարության կողմից ինձ վրա դրված այս հանձնարարությունը ես ցանկալի արդյունքներ չի տալու։

1918 թ. մայիսի 21։

Կորպուսի հրամանատար Նազարբեկով»։

Նույն հասցեներով տրված հեռագրում սպարապետը գրում է, թե.

«Գեներալ Սիլիկովը հաղորդում է, որ մայիսի 21-ի ժամը 17-ին Սարդարապատի տակ մարտ է բորբոքվել։ Սարդարապատի ջոկատը նահանջում է Գյուրաքուլու և Հայկական Ջեյվա գիծը։ Իգդիրի ուղղությամբ մեր զորամասերն ամրանում են Արաքսի գետանցներում՝ Մարգարայի առջև ունենալով հեծյալ զորաջոկատներ...»։

Գեներալ Նազարբեկովը վերստին աղերսում է, որ խաղաղության դաշինք կնքվի, քանի որ թուրքերն առաջ են շարժվում, իսկ ինքը Դիլիջանում է, և դենը ոչ մի տեղ չկա։ Առաջարկում է թույլ տալ, որ ինքը զորքը ցրի՝ թողնելով միայն հրամանատարական կազմը, ապա հայտարարի, որ զորքն ու բնակչությունը պիտի հույսները դնեն բացառապես տեղանքի և իրենց վրա։

«Անհրաժեշտ է անմիջապես հրաժարվել մարտական գործողություններից,— շարունակում է նա,— և խաղաղություն կնքել, քանի որ միայն այդպիսի ճանապարհով կարելի է պահպանել մնացած նյութական ունեցվածքը («материальную часть»)։ Խնդրում եմ նաև նշել, թե ի՞նչ պիտի անեմ ինքս, եթե թուրքերը շարունակեն հարձակումը Դիլիջանի վրա, որովհետև կորպուսի շտաբն այլևս նահանջելու տեղ չունի, և թուրքերի կողմից Դիլիջանի գրավումով ևս, շտաբն ուրիշ որևէ տեղ փոխադրելով

անգամ, կտրվում եմ Թիֆլիսի, ինչպես նաև մի քանի զորաջոկատների հետ ունեցած ամեն տեսակ կապից։

1918 թ. մայիսի 22։

Կորպուսի հրամանատար Նազարբեկով»։

«Մի շաբաթ առաջ խնդրել էի շտապ ուղարկել հաց ու գարի։ Զորքը ծայրահեղ դրության մեջ է դրված՝ մի շաբաթվա ընթացքում հացի ու պաքսիմատի բացակայության պատճառով։ Այսպիսի պայմաններում անհնար է ռազմական գործողություններ վարել։ Խնդրում եմ ձեռք առնել վերջին միջոցները՝ ամենաշտապ կարգով պաքսիմատ ու գարի ուղարկելու ինձ վստահված կորպուսին։

Մայիսի 25։

Կորպուսի հրամանատար Նազարբեկով»։

* *
*

Հայկական կորպուսի հրամանատարի, այսինքն՝ Հայոց սպարապետի հեռագրերը Թիֆլիս էր հղում մի կապավոր սպա, որն իր գործը լավ դիտեր և բանականության հետ սերտ հարաբերությունների մեջ էր։ Այդ պատճառով խելամիտ կապավորը հեռագրերը հաղորդելիս մտնում էր նրանց խորքը, վեր էր լուծում ամեն մի նախադասությունը, նույնիսկ բառերի տեղն ու նրանց ներքին իմաստներն էր քննում։ Եվ որովհետև ուղղախոս մարդ էր, մտածածը չէր թաքցնում։

Մայիսի 25-ի հեռագիրը ձեռքին Նազարբեկովի մոտից հեռանալիս կապավոր սպան երկընտրանքի մեջ ոտքը կախ էր գցել ու քթի տակ խոսեց սպարապետի հետ։

— Պարոն գեներալ, բա այսպես հարմա՞ր է։

— Ի՞նչը հարմար չէ,— գլուխը հաջորդ հեռագրի սևագրությունից բարձրացնելով՝ քրթմնջաց սպարապետը։

— Այս, որ գրում եք, թե «Մի շաբաթ առաջ խնդրել էի շտապ ուղարկել հաց ու գարի», և հետո էլ՝ «Խնդրում եմ ձեռք առնել

վերջին միջոցները՝ ամենաշտապ կարգով պաքսիմատ ու գարի ուղարկելու ինձ վստահված կորպուսին»։

— Իսկ ինչո՞ւ հարմար չէ։ Զորքն ու ձիերը օդո՞վ պիտի սնվեն։

— Հասկանալի է՝ զորքը հաց է ուտում, ձիերը՝ գարի։ Սակայն դուք մի շաբաթ առաջ հեռագրով նույն այս մարդկանց հաղորդել էիք, որ «Վերջին օրերին ծավալված զինվորների զանգվածային դասալքության պատճառով ռազմաճակատում ես այլևս զորք չունեմ»։

— Ե՞րբ եմ այդպիսի բան հաղորդել։

— Մայիսի 18-ի ժամը 20-ին, պարոն գեներալ։ Եվ հաջորդ օրերին էլ տարբեր ձևերով հաստատել եք ձեր այդ հաղորդումը։ Օրինակ, մայիսի 20-ի ժամը 20 և 30 րոպեին գրել եք. «Ինչպես ես արդեն զեկուցել եմ, Ղարաբիլիսայի առաջ համարյա զորք չի մնացել»։ Եվ ավելացրել եք նաև, թե «Գեներալ Սելիկովի այսօրվա զեկույցից էլ երևում է, որ նույն պատկերն է նաև Երևանյան գորաջոկատում»։ Պարոն գեներալ, ի՞նչ կմտածեն այս հեռագրերն ստացող մարդիկ։ Գուցե նրանք իսկապես կարդում են։

— Գնա՛, գնա՛,— վրդովմունքով ու արհամարհանքով կապի սպային քշեց սպարապետը։— Քո խելքի բանը չէ, գնա՛, շտապ հեռագրի՛ր։

Ի՞նչ պիտի աներ կապի սպան։ Գնաց ու հեռագրեց։ Սակայն ճանապարհին, հեռագիրը տալիս և նրանից հետո էլ երկար ժամանակ մտածել է։ Մարդ է, չէ՞։ Մանավանդ որ քննելու որթն էլ պլուխը մտած է եղել։ Մտածել է՝ փորձելով գտնել իր գեներալի հեռագրերի տարօրինակ տրամաբանության ակունքը, ավելի ճիշտ՝ նրանց մեջ սովորական տրամաբանության բացակայության պատճառը։ Եվ որովհետև, ինչպես քիչ առաջ ասացի, նա սերտ հարաբերության մեջ է եղել բանականության հետ, ուրեմն պտել է և ակունքը կամ պատճառը։ Մտածել է, որ քաջությունը նաև խելք է (անխելք մարդուց քաջություն չսպասե՛ք)։ Բայց երբ խելոք մարդուն լքում է քաջությունը, նա ուղած-չուզած սկսում է անխելք բաներ անել։

Այս կարգավոր սպան գոյություն ունեցե՞լ է թե՞ ոչ, հաստատ չգիտեմ։ Սակայն մնացածը եղել է այնպես, ինչպես ներկայացրի։ Ո՛չ ավել, ո՛չ պակաս։ Ուրիշ խոսքով՝ այստեղ և ամենուրեք ես առաջնորդվում եմ հազար հինգ հարյուր տարի առաջ մեր

պատմիչ Ղազար Փարպեցու ավանդած արդար սկզբունքով՝ «չյավելուլ զանեղեալսն... չնուազեցուցանել զեղեալսն»։

* *
*

Իսկ ռազմաճակատի վիճակն օրհասական էր հայերի համար։ Եվ նրանց սպրապետը դարձել էր այդ օրհասի ազդարարը։ Երևի նա կտրված էր արդեն ամեն տեղից։ Թիֆլիս հեռագրեր էր հղում՝ պատասխան, հատկապես պատասխան-օգնություն չհուսալով։ Իսկ Երևանյան զորամասի վերջին տագնապներից հետո ոչ մի լուր չուներ և մտածում էր, որ այնտեղ իր գուշակած օրհասն արդեն վրա է հասել։ Եվ վերջին անգամ անհույս մի կանչ էլ հղեց Թիֆլիսում նստած հայոց մեծամեծներին։

«Դիլիջանի մոտ այլևս ոչ մի զորք չկա։ Ոչ մի հնարավորություն չունենք Դիլիջանի առաջ գոնե մի թույլ ջոկատ կանգնեցնելու։ Բացի դրանից, պարենի ու փամփուշտի ոչ մի պաշար չկա։ Դրությունն այնքան աղետալի է, որ զորաջոկատի պետ գնդապետ Բեյ Մամիկոնյանցը չի տեսնում ուրիշ որևէ ելք, քան անձնատուր լինելը՝ համաձայնելով թուրքերի ամեն տեսակ պայմաններին և նրանցից խնդրելով, որպեսզի անարգել թույլ տան մարդկանց գնալու իրենց տները։ Ես իմ կողմից վերստին զեկուցում եմ, որ անհրաժեշտ է, առանց մի բոպե ուշացնելու, խաղաղություն կնքել, ինչ էլ որ կատարվի, որպեսզի սովամահությունից փրկվեն ինչպես զորքի մնացորդները, այնպես էլ ժողովուրդը, որը հարյուրհազարանոց քաղցած զանգվածով շարժվում է դեպի Ելիզավետպոլի ու Նոր Բայազետի շրջանները, ուր, հավանաբար, գնում է նաև Երևանի շրջանի բնակչությունը։ Հաղորդելով այս մասին՝ խնդրում եմ շուտափույթ ցուցումներ և միջոցառումներ կառավարության կողմից։

Մայիսի 23-ի ժ. 10։

Կորպուսի հրամանատար Նազարբեկով»։

Հայոց սպարապետ Թոմաս Նազարբեկովի այս տագնապալից ու աղերսական հեռագրերը, որքան էլ զարմանալի, մնում էին ոչ միայն անհետևանք, այլև անպատասխան։ Հայկական զորա-

բանակի այն օրերի ելից-մտից բոլոր փաստաթղթերը մնացել են անվնաս։ Նրանց մեջ չկա Թիֆլիսի ազգային խորհրդից ստացված և ոչ մի գրություն, որ պատասխանի սպարապետական ղեկույց-աղերսագրերից գոնե մեկին։ Չկա այդպիսի ո՛չ մի թուղթ, ո՛չ մի կարգադրություն, ո՛չ մի հանձնարարություն։ Իսկ այդ խորհուրդը, Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որ ծնվել էր 1917 թ. հոկտեմբերին՝ իբրև Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության տեղական հավատարիմ պաշտպանը, անմիջապես էլ իրեն հայտարարել էր ամենայն հայության ղեկավար գործադիր մարմին, որն «ստանձնում է ազգային բոլոր գործերի գերագույն ղեկավարությունը»։ Հայության այդ գերագույն գործադիր (գործադի՛ր) մարմինը կարողացավ ստեղծել միայն իրեն ենթակա նահանգային, գավառական ու քաղաքային մարմնիկներ՝ Երևանի ազգային խորհուրդ, Բաքվի ու Մոսկվայի, Գանձակ-Ելիզավետպոլի ու Ալեքսանդրապոլի, Զանգեզուրի, Ղարաբաղի ու Նախիջևանի հայոց ազգային խորհուրդներ։ Մարդիկ հույս ունեին, թե իշխանության կերպարանքով ու հավակնություններով ծնված այդ խորհուրդները կջանան և կկարողանան շոշափելի գործ կատարել, ազգի տարասփյուռ հատվածներն իրար բերել՝ սպասվող նոր աղետը կանխելու կամ այն գոնե մասամբ մեղմացնելու համար։ Սակայն այդ հույսերն ի դերև ելան, որովհետև բազմակուսակցական մարմինն ու մարմնիկները գլուխ չէին հանում միջկուսակցական ու ներկուսակցական գզվռտուքից։ Եվ անգործունեության ու ապիկարության ամենատխուր օրինակը տալիս էր հենց կենտրոնական մարմինը՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը։ Հայ ժողովրդի համար ամենաօրհասական այն օրերին, Ալեքսանդրապոլի խայտառակ անկումից հետո, այդ խորհուրդը գիշեր ու ցերեկ ժողովներ էր գումարում, բարձրաձայն կարդացվում էին Երևանից, ռազմաճակատի տարբեր կետերից ու Հայոց սպարապետ Թոմաս Նազարբեկովից ստացված հեռագրերը, առավել բարձրաձայն, ուղղակի կոկորդ պատռելով ճառախոսները ջանում էին իրար համոզել, որ հայոց ռազմաճակատում ահավոր վիճակ է, ազգը գտնվում է կործանման առաջ, և իրենք՝ ազգի գլուխն անցած դաշնակցական ու ոչ դաշնակցական «գործիչներն» ունեն միայն մեկ պարտականություն՝ որքան կարելի է հեռու մնալ ազգի ճակատագրի անօրինությունից և չկատարել ոչ մի գործնական քայլ։

Սա կարող է թվալ անպատասխանատու հայտարարություն կամ առնվազն՝ չափազանցված տեղեկություն։ Բայց դուք տեսաք Հայոց սպարապետ Նազարբեկովի տագնապալից հեռագրերը, որոնցով նա «Ազգային բոլոր գործերի գերագույն ղեկավարությանը» զեկուցում էր, որ ռազմաճակատը քայքայված է, ժողովուրդը տեղահանված փախչում է՝ ուր որ կարող է կամ կոտորվում է առաջ շարժվող Թուրքական բանակներին դիմադրելով։

Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդում 1918 թ. մայիսի 19-ին քննել են հայ ազգի օրհասական վիճակի հարցը, և խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանն արել է մի հայտարարություն, որը դարձել է խորհրդի վճիռը։ Ահա այդ վճիռ և «գործունեության» ծրագիր դարձած հայտարարությունը. «Ավելի լավ է թողնել իրեն՝ ժողովրդին իր բնազդական հայեցողությամբ լուծելու խնդիրը և մեզ վրա չվերցնենք ծանր պատասխանատվություն...»։

Իսկ այս վճռից հետո խորհրդի հեղինակավոր անդամ Նիկոլ Աղբալյանն էլ, ճակատագրական պահին իր վճռականությունը ցուցադրելով ասել է. «Ով կազատվի, թո՞ղ ազատվի»։

Ահա թե ի՜նչ վիճակի էր հասել հայ ժողովուրդը, որի գինվորությունը, երկրի նահանգներն իրար ետևից թշնամուն զիջելով ու անընդհատ նահանջելով, հասել էր Արարատյան դաշտը, բարձրագույն հրամանատարությունը պատրաստ էր և անվերջ հորդորում էր հայրենիքի վերջին մնացորդը հանձնել Թուրքերին՝ ինչպիսի պայմաններ էլ նրանք առաջարկելու լինեին։ Իսկ առաջնորդնե՞րը, ազգի բախտն իրենց խղճի վրա առած առաջնորդնե՞րը նախընտրում էին հետու մնալ ավելորդ գլխացավանքից՝ թողնելով, որ ազգն ինքն իր «բնազդական հայեցողությամբ» կատարի ընտրությունը՝ ապրե՞լ, թե՞ մեռնել։

* *
*

Գեներալ Սիլիկյանին իր տարօրինակ զեկույցն ի գիտություն թողնելուց հետո Դանիելբեկ Փիրումյանը ռադիոկապով Պողոսբեկ Փիրումյանին հաղորդեց, որ նա իր գունդը Սուրմարիից փոխադրի Արաքսի ձախ ափը և Մարգարայի կամուրջի մոտ սպասի նոր հրամանի։

— Էլի՞ նահանջում ենք, ախպերս։

— Գետն անցնում ենք՝ ամուր դիրքեր գրավելու համար,— անորոշ պատասխանեց Դանիելբեկը և զրույցը փակեց։

Սակայն անորոշ պատասխան տվեց ոչ թե այն պատճառով, որ չէր ուզում ռադիոկապով ռազմավարական մանրամասներ օդ բաց թողնել։ Պարզապես շատ էր անորոշ դրությունը։ Գոնե իր համար այդպես էր, որովհետև անբեկանելի վճռել էր Երևանյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալի իր պաշտոնը լքել և գնալ կռվի գիծ։ Իսկ թե ի՞նչ պիտի աներ այնտեղ, ինչո՞վ և ինչպե՞ս, դա հայտնի չէր ոչ ոքի, նույնիսկ իրեն, որ ինքնակամ որոշել էր գնալ ուղիղ ճակատ, կռվել և ոչ թե նահանջի հրամաններ հաղորդել սրան-նրան։ Այդ հարցը հնարավոր պիտի լիներ լուծել մի այլ ազգականի հետ, որն այդ օրերին գտնվում էր Բուրքական հարձակման սուր սլաքի դեմ-դիմաց, Սարդարապատ-Վաղարշապատ գծի վրա։

Հովսեփբեկ Փիրումյանն էր իր այդ ազգականը, գնդապետ, իրենից տասը տարով ջահել, սակայն ռուսական բանակում վաղուց անուն հանած մի զորական, որը գրագետ ու քաջ սպայի համբավ ուներ, և բոլորովին էլ պատահական չէր, որ գեներալ Սիլիկյանն ու Երևանի հայոց ազգային խորհուրդը նրան էին վստահել Ալեքսանդրապոլից եկող Թուրքական գլխավոր հարվածի դեմն առնելու պատի՞վը, թե՞ դժբախտությունը։ Երբ այդ հարցը լուծվում էր, Դանիելբեկն անհարմար զգաց իր ժխտական վերաբերմունքն արտահայտել Հովսեփբեկին այդ ամենապատասխանատու ճակատը վստահելու վերաբերյալ։ Ո՞վ է նման դեպքերում ձայն բարձրացնում հարազատի դեմ։ Սակայն հետո, մանավանդ վերջին վճիռներին տեղյակ դառնալով, որոշեց, որ ինքը ճակատագրական սխալ է կատարել իր կարծիքը թաքցնելով։

Իսկ վերջին վճիռներն այնքան անտրամաբանական էին, որ ստիպում էին գործել ոչ միայն ազգականի նշանակման դեմ, այլև ի հեճուկս հայկական զինվորական ու քաղաքացիական ամեն տեսակ ղեկավարության։ Բաթումի խորհրդաժողովի հայ պատվիրակությունը թիֆլիս էր հեռագրել՝ առաջարկելով դադարեցնել ռազմական գործողությունները հայ-Թուրքական ճակատում և Երևանն առանց որևէ դիմադրության հանձնել Թուրքերին։ Այդ առաջարկությունը Բաթումից Երևան էր հասել դաշնակ-

ցական բյուրոյի անդամ Համո Օհանջանյանի ստորագրությամբ։ Իսկ Երևանի քաղաքային դումայում էլ մայիսի 18-ին քննել էին հարցը, և քվեարկությամբ անցել էր դումայի նախագահ Արմենակ Թոշյանի առաջարկությունը, որի համաձայն երկրի ղեկավարությունը պետք է քաշվեր Սևանի բարձունքները՝ Երևանն ու Էջմիածինը հանձնելով Թուրքերին։ Դումայում կարդացվել էր նաև Հայկական զորքերի գլխավոր հրամանատար Թոմաս Նազարբեկովի հրամանը, որով հանձնարարվում էր Էջմիածնի ու Երևանի հանձնումը կատարել շուտափույթ՝ ի՛նչ տեսակ պահանջներ էլ Թուրքերը ներկայացնելու լինեն։

Դումայի նիստին ներկա էր նաև Մովսես Սիլիկյանը, որն ուրիշ ոչ մի խոսք չուներ, քան վերադասներից եկած առաջարկությունը և իր գլխավոր հրամանատար Նազարբեկովի կարգադրությունը։ Ընդհակառակը, զարմանում էր, որ ստեղծված իրադրության մեջ այդքան ճշմարիտ ու տրամաբանական ելքի դեմ խոսող մարդիկ էլ են գտնվում։

Այդպիսի «ելքի» դեմ նույն օրը Երևան քաղաքի բնակչությունը ցույց կազմակերպեց։ Քարկոծեցին քաղաքային դումայի շենքը։ Համարձակ կանանցից մի քանիսը լաչակները վար առան գլխներից, շպրտեցին դեպի դումայի պատշգամբը։ «Առեք,— ասացին,— այդ լաչակները կապեցեք ձեր դատարկ գլուխներին, դուք տղամարդու գլխարկ դնելու իրավո՛ւնք չունեք»։ Սակայն քաղաքի պարետ Արշո Շահխաթունին հեռախոսով կապվեց պահակազորի պետի հետ, կարգադրեց իսկույն զորք ու զենք հանել ցուցարարների դեմ։ Եվ կես ժամից փողոցները դատարկված էին։

Առաջները, նույնիսկ Ալեքսանդրապոլի անփառունակ անկումից հետո, ճակատի պատասխանատվությունն զգացող մարդիկ մտածում էին, թե, այդուամենայնիվ, դեռ կորած չէ ամեն ինչ, քանի թիկունքում կա Արարատյան դաշտը՝ իր հոծ բնակչությամբ, որ կկռվի բանակի հետ միասին կամ, ծայրահեղ դեպքում, գոնե նյութական ու բարոյական օգնություն ցույց կտա կռվողներին։ Իսկ դա իսկապես կլինի օգնություն, որպիսին զորքը չտեսավ ո՛չ Կարսում, ո՛չ էլ մանավանդ Ալեքսանդրապոլում։ Առաջ մտածում էին, որ, ասված մի՛ արասցե, եթե Արարատյան դաշտում էլ անհնար լինի կասեցնել Թուրքի առաջխաղացումը, ապա Երևանում նրա դեմ կկանգնի բռունցքված հայու-

թյունը և կպաշտպանի իր վերջին կենտրոնը։ Իսկ հիմա, երբ երկրի ղեկավար կոչվածները, համաժողովրդական դասալքության փող հնչեցնելով, մերկացրել են թիկունքը, երբ կռվող զորքի սպարապետն ու նրան ենթակա զորամասերի հրամանատարներն իրենց անճարակությունը փորձում են քողարկել Բաթումից ու Թիֆլիսից եկած անձնատվական կարգադրություններով, մնում է վերջին մի հույս՝ ի մի հավաքել դեռևս կռվելու ընդունակ զորքը, դուրս գալ Թուրքի ստեղծած ճակատի ամենասուր անկյան դեմ։ Պարզ է, որ ամենասուր անկյունը նաև ամենաուժեղ հատվածն է թշնամու ճակատի։ Այնտեղ կուտակված լավագույն ուժերը գալիս են Վաղարշապատ-Էջմիածնի ու Երևանի դեմ և աչքի առաջ ունեն Բաքուն։ Այո՛, սա թշնամու գլխավոր հարվածի ուղղությունն է։ Բայց այստեղ է նաև այդ ահեղ թշնամու ամենամեծ թուլությունը. չէ՞ որ նա այստեղ հակահարված չի սպասում։ Այն ո՞ր խելագար թույլ հակառակորդն է, որ իրեն թշնամու երախքն է նետում նրա ամենաուժեղ կետում։

Թշնամու գլխավոր հարվածի ամենասուր կետում է գտնվում գնդապետ Հովսեփբեկ Փիրումյանի զորամասը։ Դանիելբեկը չգիտեր՝ ղեկավարության որոշումը նրան հասե՞լ է թե՞ ոչ։ Հնարավոր է, որ նա, հակառակ այդ որոշման, կանգնի ու դիմադրի։ Սակայն ի վիճակի՞ կլինի վճռական բեկում մտցնել ճակատում։ Վճռական բեկում, որ միակ միջոցն ու ելքն է փրկության։ Վճռական բեկում, որից այդօր կախված էր Հայաստան աշխարհի, իսկ եթե կուզեք, նաև ազգի ճակատագիրը։ Սա միակ հնարավորությունն է վճռական բեկումն ստեղծելու համար։ Միակն ու վերջինը, որովհետև այստեղ ձախողվելով՝ հայոց զորքն այլևս ո՛չ թիկունք կունենա, ո՛չ էլ ճակատ։ Այստեղ չի կարելի փորձել։ Այստեղ պետք է հարվածն իջեցնել՝ համոզված լինելով, որ դա կոտրելու է թշնամու ողնաշարը։ Հայի ու Հայաստանի համար ուրիշ ճանապարհ չկա, ուրիշ հնարավորության ստվերն անգամ չի երևում։

Ոչ ոք չէր կասկածում Հովսեփբեկ Փիրումյանի ռազմագիտական կարողությունների և հատկապես զինվորական արիության վրա։ Իր ազգական Դանիելբեկը՝ նույնպես։ Ճիշտ է, Կովկասյան ճակատում նա իր այդ արժանիքներն առավելագույն չափով չէր դրսևորել ոչ մի անգամ։ Սակայն մերձավոր ազգականը գիտեր նրա կենսագրությունը և համոզված էր, որ Հով-

սեփբեկ Փիրումյանը, ի տարբերություն վերին հրամանատարության, պատրաստ կլինի կռվելու մինչև վերջին գնդակն ու վերջին շունչը։ Կռվի առանց ետ նայելու։ Այդպես էր նրա բնավորությունը՝ ըմբոստ, վճռական, գլխապատառ քայլերի պատրաստ։ Սիրահարված էր Թիֆլիսի հայ մեծահարուստ Մելիքյանցի աղջկան։ Երբ ամուսնության առաջարկություն էր արել, աղջկա հայրն ամբարտավան մերժել էր, պատճառաբանելով, թե իր ազնվական տոհմը մի ստորին սպայի տալու աղջիկ չունի։ Այն ժամանակ Հովսեփբեկը նժույգի վրա Մելիքյանցի ապարանքի սանդուղքներով սլացել էր երկրորդ հարկ՝ Թուրը մերկացրած սպառնալով բնաջնջել այդ «ազնվական տոհմը»։

Սարիղամիշի տակ, տեսնելով, որ իր ջոկատը փախչում է Թուրքի գնդացրային կրակից, վեր էր կացել, մեն-մենակ նետվել դեպի հրակնատը, որ լռեցնի։ Եվ, իր բախտից, պատահական մի արկով գնդացիրն ու գնդացրորդը հօդս էին ցնդել։

Հրամանատարի ռազմագիտական հմտությունն ու խիզախությունը միշտ էլ վճռական դեր ունեն պատերազմի դաշտում։ Հատկապես այդ երկուսի միասնությունը։ Բայց մի՞թե միայն այսքան բան։ Եթե այո՛, ուրեմն, Հովսեփբեկը հարմար ղեկավարն է վերջին այն ճակատամարտի, որով պետք է վճռվի հայոց կենաց ու մահվան հարցը։ Այն ժամանակ ինքն էլ կռվի նրա կողքին, նրա ընդհանուր հրամանատարության ներքո, որևէ գումարտակի կամ դասակի գլուխ անցած։ Այստեղ է նաև Պողոսբեկի Հինգերորդ հետևակայինը, հիմնականում ղարաբաղցիներից կազմված այն գունդը, որի հետ ինքը մեծ հույսեր է կապում՝ հենց այն պատճառով, որ դա հիմնականում կանոնավոր զինվորությամբ համալրված գունդ է։ Թեպետ պակաս դեր չունի նաև Պողոսբեկի հրամանատարության պարագան։ Պողոսբեկի նկատմամբ նա ուներ ներքին անբեկանելի հավատ ու վստահություն։ Նրան հավատում էր, ինչպես ինքն իրեն։ Ա՛յ, ուրի՞շ բան, եթե Պողոսբեկին վստահած լինեին ռազմաճակատի հրամանատարությունը։ Այն ժամանակ Դանիելբեկի համար ոչ մի հարց չէր մնա։ Նա կմտածեր, որ իր հորեղբորորդին ամեն ինչ կանի, և որ նրանից չի՛ կարող փախչել նույնիսկ ամենավերջին հնարավորությունը, հարյուրից մեկը։

Պողոսբեկին հիշելուց մտածեց նաև ամենահարմար տարբերակի մասին. հնարավոր է, որ այս երկու հորեղբորորդիներն

իրար չընդունեն։ Մանավանդ Պողոսբեկը, որին այնքան էլ դուր չէր գալիս երրորդ հարազատի բնավորությունը, և նրանից երբեք չէր թաքցնում իր վերաբերմունքը։ Մի անգամ, ոնց էր պատահել՝ երեքով սեղան էին նստել։ Դանիելբեկը մեծավարի բաժակ բարձրացրեց իրենց տոհմի կենացը, մաղթեց, որ երեքով բարձր պահեն Փիրումյան տոհմանունը։ Երեք զնդապետ, երեք հողվոր եղբայրների զավակներ։ Կարևոր էլ չէ տիտղոսը։ Երեք զորական, որոնց ետևից գալիս են ուրիշ տոհմակիցներ։ Դժվար ժամանակ է, հայ ազգի ու նրա հին թշնամու ամենաճակատագրական բախումի ժամանակը։ Եվ թող յուրաքանչյուրը մտածի, որ ինքը տոհմի եռոտանու մի ոտքն է։ Մտածի ու ամուր մնա, հաստատ ու աներեր։ Որովհետև բավական է եռոտանու մի ոտքն էլ ծռվի, մյուս երկուսն անկարող կլինեն իրենց պարտքը կատարել, և ամեն ինչ կրակի ու մոխրի մեջ կթափվի»։ «Հովսեփի հետ եռոտանի պահել չի լինի»,— կես լուրջ-կես կատակ ասաց Պողոսբեկը։ Երևի, մտածում էր, որ նրանից հինգ-վեց տարով մեծ է, և դա իրեն իրավունք է տալիս անելու նաև այդքան լուրջ մի դիտողություն։ «Ինչո՞ւ չի լինի, ա՛յ Պողոս,— լուրջ պայթեց Հովսեփբեկը։— Էդ ինչպե՞ս եղավ, որ մի հասարակ եռոտանու ոտք էլ չենք կարող լինել»։ Պողոսբեկը, փոխանակ իր խոսքի մեջ լրջանալու, կատակի տվեց՝ քրքջալով. «Վա՛յ քո պապոնց ի՞նչն եմ ասել. ոտից գլուխ նրանց ես քաշել, հա՛. կովարար աքլորի նման միշտ կատարը տաք»։

Այս «աքլորի» վրա Հովսեփբեկը տեղից վեր թռավ, այլայլված բողոքեց, կապտեց ու կարմրեց։ Չիմանար Պողոսբեկի ուժը, գուցեև մենամարտի հրավիրեր կամ աշխատեր հենց սեղանի վրա հարաբերությունները պարզել։ Սակայն նրա դեմ հանգիստ, հեգնական ժպիտը երեսին Պողոսբեկն էր նստած, Փիրումյան տոհմի այն կաղնեբազուկը, որի ուժը մեկ էլ, ասում են, ինքը՝ Փիրումն է ունեցել։ «Արի՛, նստի՛ր, նստի՛ր, ամոթ է հերսդ ցրիվ տաս»,— խոսեց նա, փեշը բռնեց, որ նստեցնի։ Աքլորացածը փեշն ազատելով՝ բողոքեց ավագին. «Դե՛, տե՛ս, է՛, տված վիրավորանքը քիչ էր, հիմա էլ՝ «հե՛րսդ ցրիվ տաս»։ Այ մարդ, մեծը դու ես, ինչո՞ւ չես հարցնում թե ի՞նչ է ուզում ինձանից։ Հը՞, ես դրա ծաղրատե՞ղն եմ, ի՞նչ է»։ «Բայց ի՞նչ է պատահել, ա՛յ Հովսեփբեկ,— տեղից վեր կենալով՝ արդեն լրջացած, զարմացած հարցրեց Պողոսբեկը։— Ես ինչ մի վիրավորական բան

ասացի»։ «Դե՛, սրա՛ն տես, հա՛, կտա, գլուխս կջարդի, հետո էլ հանգիստ կհարցնի՝ «Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ վիրավորվում ես իմ հասցրած վիրավորանքից»։ «Ախպե՛ր, ես թերություն չունե՞մ, դու էլ իմ այդ թերությունը երեսովս տուր, ծաղրի՛ր, ծիծաղի՛ր։ Ի՞նչ է պատահել։ Այդ ո՞ր օրվանից է, որ Փիրումանց մեծը փոքրին չի կարող ասել՝ աչքիդ վերը հոնք կա։ Հը՞, ասացե՛ք, խնդրեմ»,— ասաց ու աչքով արեց Դանիելբեկին. իբր, այսպես հաշտության եղանակն էլ գտանք։ «Դու ե՞ս մեծը։ Դու ո՞ր օրվա մեծն ես։ Ա՛յ, նա՛ խոսեր,— գլխով Դանիելբեկին ցույց տալով՝ ավելի բորբոքվեց կրտսեր Փիրումյանը։— Նա խոսեր, էլի կասեինք, հա՛, մեծի իրավունքն է շահատակում»։ «Ես եմ մեծ, այո՛, քեզանից մեծ եմ հինգ տարի և 279 օրով»։

Դանիելբեկը հազիվ էր ծիծաղը զսպում։ Առաջ էլ գիտեր, որ իր կրտսեր ազգականը տաքարյուն է ու կռվարար։ Բայց ա՞յս աստիճան։ «Դե, լա՛վ, երեխայություն արիք, բավակա՛ն է, նստեցե՛ք»,— առաջարկեց՝ մեծավարի ժպտալով։ «Բա ո՞նց նըստեմ, է՛»,— թափը կոտրած, բայց դեռ անհանդուրժող հարցրեց կրտսերը։— Ինձ վիրավորի, և ես էլ մարսեմ ու նստե՞մ»։ «Դե՛, դու էլ իրեն մի բան ասա»։ «Ի՞նչ ասեմ»։ «Ասա՝ արջ, առյուծ կամ նման մի բան, որ իրեն սազի»։ «Ուրեմն, քո կարծիքով իր ասածն ինձ սազո՞ւմ էր։ Եվ շատ լավ հատուցում ես առաջարկում. ինքն ինձ աքլոր անվանի, ես իրեն՝ առյո՛ւծ»։ «Դե, դու էլ իրե՛ն աքլոր ասա»։ «Բա ո՞նց ասեմ, էս բոյի աքլո՞ր կլինի»։ «Դե՛, նստիր, այդ վերջին արդարամտությանդ կենացը խմենք»...

Հիմա Դանիելբեկը գնում էր այս «աքլորի» հետ որոշելու իր համար ամենակարևոր, ամենամեծ ու ամենա... խնդիրը։ Ո՞չ երևի անհնար կլինի այդ խնդրին վայել լրջությամբ խոսել նրա հետ։ Հանկարծ այն հին օրվա պես աքլորացավ, ինչպե՞ս պիտի բան հասկացնես։ Հրամայելու էլ իրավունք չունես։ Դու քեզ ազատել ես ռազմաճակատի հրամանատարի տեղակալի պաշտոնից և հիմա մի սովորական անպաշտոն մարդ ես, որը լավագույն դեպքում կարող է մտնել որևէ զորամաս և կռվել նրա հետ։ Բայց հիմա ո՞ւր է կռվող զորամասը։ Այն էլ վերևներից տեղատարափի պես եկած զինադադարի որոշումներից ու կարգադրություններից հետո։

Արաքսի ձախափնյակում անկանոն տարածված ճակատի հրամանատար Հովսեփբեկ Փիրումյանը, իր շտաբի հետ միա-

սին, նահանջել էր դեպի Վաղարշապատի դաշտը և, լայն հարթության վրա բարձրացած մի փոքրիկ բլրի գլխին հարմար տեղավորված, հեռադիտակով փորձում էր ընդգրկել ամբողջ ճակատը՝ արևելքից արևմուտք, ջանում էր գտնել մի կետ, որի վրա հենվելով հնարավոր լիներ կասեցնել թշնամու առաջխաղացումը։ Նա, հեռադիտակն աչքերին, ահա ինչքա՜ն ժամանակ, զբաղվում էր ճակատի գիծը։ Հետն էին շտաբի սպաները, որոնք չգիտեին, թե ի՜նչ խնդիր է կանգնած իրենց առաջ, ինչպե՜ս պիտի պաշտպանեն այդ բաց դաշտը, երբ Կարսի ու Ալեքսանդրապոլի բերդում, հարյուրավոր թնդանոթներով ու գնդացիրներով զինված՝ չկարողացան մի փոքր դիմադրություն ցույց տալ։

Ճակատի տարբեր կետերում, այս ու այնտեղ արկեր էին պայթում, գնդացիրներն էին ճարճատում, հրացանների կրակոցներն էին լսվում։ Սակայն դա պատերազմ չէր, այլ անգործ մնացած զորքերի վարժություն կամ կռվի ծարավ ունեցողների շարություն, որ դժվար թե հագենար այդօրինակ պարապ զբաղմունքով։

Դանիելբեկը բլրի թիկունքում ձին պահ տվեց համհարզին, որը Վաղարշապատում պիտի բաժանվեր, մնար շտաբում, կամ գտներ իր ճանապարհը, սակայն չուզեց բաժանվել հին պետից և ասաց. «Որտեղ դուք, այնտեղ էլ ես։ Հիմա իմ ճակատագիրը կապված է ձեզ հետ։ Եթե դեռևս չեմ ձանձրացրել, թույլ տվեք ծառայել ձեզ»։ Այդ ինքնակամ նվիրվածության համար կարող էր միայն շնորհակալություն հայտնել։ Նվիրվածության և այն ծանր ու դժվարին օրերի, որ միասին են անցկացրել, և ինքը երբեք առիթ չի ունեցել մի հասարակ նկատողություն անելու։ «Գնա՜նք,— ասել էր,— աստված պահի՜ քեզ»։

Համհարզը երկու ձիերի լկամները հանեց բերաններից, բաց թողեց, որ արածեն։ Ճերմակը պղնձաձայն խրխնջաց և առջևի աջ ոտքով գետինը ծեծեց։ Բլրի վրա կանգնածները մեկեն շրջվեցին դեպի նորեկները և զարմացան, որ չեն նկատել նրանց մոտենալը։ Մինչև ճակատի հրամանատարը կհավաքեր իրեն, կարգադրություն կաներ սպաներին, Դանիելբեկն աշխույժով վեր վազեց և բլրի հարթ գագաթին, զինվորական ողջույն տալով ներկաներին, ողջագուրվեց տոհմակցի հետ, փորձառու հայացքով շուրջը տնտղեց։

— Ձե՞ս վախենում՝ շտաբդ բարձրացրել ես այս նշանակետի վրա,— հարցրեց ի միջի այլոց։

— Զինադադար է, չէ՞։

— Իսկ ինչպե՞ս են գործերդ։

— Գործ չկա։ Ժամ առ ժամ կարգադրության եմ սպասում։ Չգիտեմ՝ ի՞նչ պիտի լինի վերջը։ Ասում են՝ հանձնվում ենք։ Գո՞ ցե նոր հրամա՞ն ես բերել։

Ճակատի հրամանատարը շատ էր զարմացել, որ տոհմակիցը հայտնվեց այսպես հանկարծակի ու առանց զգուշացնելու։ Մի շաբաթից ավել չէր տեսել նրան։ Իսկ օրերն անսովոր արագությամբ գլորող պատերազմի պայմաններում դա կարելի էր համարել մի հավերժություն։ Եվ, այսուհանդերձ, ճակատի հրամանատարը չիմացավ՝ ուրախանա՞ թե՞ տխրի տոհմակցի անսպասելի հայտնությամբ։ «Ի՞նչ է պատահել, հո այդ անիրավները չե՞ն ուղարկել, որ հանձնվենք թշնամուն,— անցավ նրա մտքով։— Չէ՞ որ վերջին օրերի տագնապալի հեռախոսազրույցներն ու հասցրած լուրերն ուրիշ ելքի չէին հասցնի, քան դրան։ Գեներալ Նազարբեկովն անդունդի վրա կախված՝ պես մի գլուխ դինադադար էր աղաղակում, որ նշանակում էր՝ համաձայն եմ ամեն տեսակ պայմանի։ Իսկ Երևանյան ճակատի հրամանատար գեներալ Սիլիկյանը, Արարատյան դաշտի բախտը որոշված համարելով, տագնապի փող էր հնչեցնում՝ զորք ու ժողովուրդ Կոտայքի ու Սևանի լեռները քաշելու և այնտեղ անմատչելի ժերսերում հայության մնացորդները պաշտպանելու համար։ Հարազատներն ուրիշ հանդամանքներում ուրախ պիտի լինեին իրար հանդիպելիս։ Ուրախությունն, իհարկե, ցույցերով չէին արտահայտում։ Լեռնցու «Բարև», «Բարով տեսանքի» հետ իրար ձեռք սեղմում էին ամուր, մեկ էլ Դանիելբեկը սովորություն ուներ դիմացինի ուսը թփթփացնելու, որ երևի պիտի նշանակի՝ «Ես պինդ եմ, իսկ դո՞ւ»։

Այս անգամ նրա թփթփացնելը սոսկ սովորության տուրք էր, և Հովսեփբեկը միայն գլուխը շարժեց վաբանոտ։

— Ի՞նչ կա վերևներում,— հարցրեց նա,— Նազարբեկովը հո Դիլիջանից էլ ներքև՞ չի գնում։

— Դիլիջանից դենը նստած են մուսավաթի զորքերը, որոնց մի թևն արդեն Սևանի ափն է հասել։

— Բա քո պետն էլ ինչպե՞ս էր մեզ հրավիրում Սևանի լեռ-

ները։ Որպեսզի ճակատից թուրքի հարվածն ընդունենք, թիկունքից՝ մուսավաթի՞։

— Արի դրա մասին չխոսենք, Հովսեփբեկ։— Դանիելբեկը նրա թևն առավ և քաշեց մի կողմ՝ տեսնելով, որ իրենց զրույցն ուշադրությամբ լսում են քիչ հեռու իբր թե անելիքը քարտեզի վրա որոշող սպաները։ Եվ երբ հեռացել էին այնքան, որ իրենց այլևս անհնար կլիներ լսել, Դանիելբեկը մտահոգ հարցրեց.

— Ի՞նչ ես որոշել, ինչպե՞ս պիտի կանգնեցնես թշնամուն։ Այս պահին դա է ամենակարևորը։ Նրա մուտքը չպիտի հասնի էջմիածին։ Հակառակ դեպքում ազգովին կկործանվենք, և ոչ ոք չի.մնա մեզ վրա սգացող։

— Ես ձեզ չեմ հասկանում, ախպերս. մեկ հրաման եք տալիս, թե պատրաստվեք կազմակերպված նահանջելու, մեկ էլ եկել ես... Չնայած ես ոչ նահանջողն եմ, ոչ էլ համաժողովրդական նահանջ կազմակերպողը։ Ես վճռել եմ կռվել մինչև վերջին շունչս, հասկանո՞ւմ ես,— կտրական հայտարարեց ճակատի հրամանատարը.— Եթե թուրքերն առաջ կշարժվեն, թող անցնեն իմ դիակի վրայով։

— Այդ քիչ է,— հանգիստ խոսեց Դանիելբեկը։

— Ո՞նց թե քիչ է,— նրա տոհմակցի աչքերը կլորացան զարմանքից։— Ո՞նց թե քիչ է։ Եթե զինվորականը պատրաստ է կռվելու մինչև վերջին շունչը, եթե նա մի թիզ անգամ չի նահանջի, քանի շունչը վրան է...

— Այդպիսի լոզունգը հիմա մեզ չի փրկի, հասկանո՞ւմ ես, Հովսեփ։ Դու ճակատի հրամանատարն ես, և այսօր քեզ է հանձնված ամբողջ ճակատի, եթե կուզես՝ Հայաստան երկրի բախտը։ Իսկ դու խոսում ես որպես մի հասարակ զինվորական, որը պատրաստ է միայն նահատակության։

— Բա ի՞նչ անեմ ես, որ մի դժբախտ երկրի զինվորն եմ և, մոխի՛ր գլխիս, ձեր շտաբի մեղքով՝ վաղուց պարտված զորամասի հրամանատարը։

— Հիմա մեղավորի և անմեղի հարցը չենք քննելու, Հովսեփբեկ։ Շտաբում հույսները դրել էին քո քաջության վրա։

— Իսկ դո՞ւ։ Ի՞նչ է, դու չէի՞ր հավատում,— արդեն այլայլված՝ պայթեց գնդապետը։— Մաղիս համրանքով մեկ մարտի եմ նետվել...

Դանիելբեկը մտերմորեն գրկեց նրա ուսը և փորձեց կատակել.

— Քո գլխին մազ կա, հաշվում ես,— ցավագին ժպտաց և գլխարկը վար բերեց՝ մերկացնելով գագաթը։— Իմ գլխին քանի՞ մազ է մնացել...

Դանիելբեկի մերկ ու քրտնած գագաթը փայլփլում էր մայիսյան արևոտ օրվա շողերից։ Արևի երես չտեսած այդ մերկությունն այնպես ճերմակ էր, այնպես փափկասուն, ասես կաթնահունցի երես լիներ։ Ալեխառն քունքերի ու ծոծրակի մազերի մեջ սեր դեռ տիրական էր, թեպետ գնդապետի վեցերորդ տասնամյակն էր լրանում։

Շուրջը թռչուններ էին ծլվլում։ Այգիներում այս ու այնտեղ գեղջուկները ծառերի տակերն էին քչփորում, որ նշան էր, թե նրանք դեռ հավատում են իրենց վաղվան, համոզված են, որ թշնամու ոտքը չի դիպչելու այս հողին։ Չհավատային էլ, հավանաբար անհնար է, որ հայ գյուղացին տանը նստի և ձեռքերը ծալած սպասի իր օրհասին։ Դանիելբեկը նայում էր նրանց ու մտածում, թե ինչպե՞ս է, որ հրամանատարության մտքով չի անցել վտանգի ենթակա այս գյուղերի աշխատավորներին ոտքի հանել։ Հետո ի՞նչ, որ ծերունիներն են մնացել, հաշմանդամներն ու անզեն կանայք։ Այդ ծերունիները կարո՞ղ էին իրենց գրաստբեռնատարներով զինամթերքի ու պարենի փոխադրումներն անել։ Կանայք հո կարո՞ղ էին զորքի սնունդն ապահովել, որպեսզի զինվորական խոհանոցների հաստավիզները գնան ճակատ...

Դաշտի լռությունը պատառոտվեց այդ կողմերի համար անսովոր դղրդյունից. Հյուսիսից, Բաշ-Ապարանի կողմից, մի ինքնաթիռ, կոշտերի վրայով քարշ եկող գոմշասայլի նման օրորվելով եկավ, երկու անգամ պտույտ գործեց նրանց գլխի վրայով, երևի ճակատի գիծն էր ստուգում, հեռացավ Երևանի կողմի վրա։

— Ես քեզ կարող եմ վստահեցնել, որ այս զորամասում նահանջող չի լինելու,— վճռաբար ասաց Հովսեփբեկը։— Կռի՞վ մինչև վերջին գնդակը։ Իսկ նրանից հետո թող թշնամին մեր դիակների վրայով գնա դեպի Երևան։ Միայն Պողոսբեկի հետ է, որ առանձին չեմ խոսել։ Նրան էլ կտեսնեմ այսօր երեկոյան։ Բայց վստահ եմ, որ նա ևս ուրիշ խոսք չի կարող ունենալ։ Պողոսբեկին հո լա՞վ ես ճանաչում։

— Մինչև վերջին գնդա՞կը,— տոհմակցի խոսքը կրկնելով՝

ձայնին ուրիշ երանգ տվեց Դանիելբեկը։— Դա ուրիշ բան չէ, քան նահատակության գնալը, սիրելիս։

— Բա է՞լ ինչ կարող եմ անել, երբ դեմս այսքան հաղթանակներով հարբած թշնամին է, իսկ թիկունքում, ասում ես, Նազարբեկովն ու Սիլիկյանը զենքերը ցած են դրել։ Երևի նրանք ինձ ռազմական տրիբունալի էլ կհանեն իրենց որոշումը չկատարելու համար։

— Պիտի հաղթել թշնամուն, հասկանո՞ւմ ես։ Պիտի հաղթե՛լ։ Սա մեր միակ ելքն է։ Մեկ է՞լ կրկնեմ. մեր ազգի գոյությունը կախված է այս միակ ու վերջին ճակատամարտից։ Միակ ու վերջին։ Վերջին, եթե պարտվեցինք։ Որովհետև նրանից հետո թուրքը կմտնի Արարատյան երկիրը և կանի այն ավերածությունն ու կոտորածը, որ սփռել է Երզնկայից մինչև Ալեքսանդրապոլ։ Նա գիտի, որ այսօր այլևս մեր թիկունքում ոչ ոք չկա. ո՛չ Ռուսաստանը, ո՛չ հարևանները։ Ո՛չ էլ նույնիսկ եվրոպական քարոզիչները, որոնք նախորդ տարիներին ցավակցության աղաղակ էին բարձրացրել աշխարհով մեկ։ Հիմա նրանք զբաղված են ավելի կարևոր գործով. իրենց շահերի համար են պոռում։ Հայի սուգն անելը ոչ ոքի եկամուտ չբերեց։

— Հիմա դու ի՞նչ կարգադրություն ես բերել ինձ համար, Դանիելբեկ, ախպերս,— հուսահատ նրան դիմեց ճակատի հրամանատարը։— Եթե ինձնից պատրաստի հաղթանակ ես ուզում, ես ո՛չ կտամ, ո՛չ էլ կարող եմ խոստանալ։ Այն, ինչ կարող եմ, ես խոստացել եմ արդեն։ Իսկ եթե այդքանը չի բավարարում, խնդրեմ, ես կհեռանամ այստեղից, իմ տեղը նշանակեցեք՝ ո՛ւմ ուզում եք, ո՛ւմ արդեն որոշել եք։

Դանիելբեկը մտածեց, որ հաջողության կեսն ապահովված է. նա ինքը պատրաստակամություն հայտնեց հեռանալ։ Լա՛վ է այսպես։ Առանց բարդությունների։ Սակայն, այնուհանդերձ, համագործակցություն առաջարկեց, չնայած ենթադրում էր, որ հայտարարությունը վերջնական է։

— Դրա կարիքը բոլորովին էլ չկա։ Եթե ինքդ ես մնում, էլ ե՞ս ինչ դալի պոչ եմ, որ պիտի տնկվեմ այստեղ։

— Միասին կգլխավորենք ճակատամարտը։ Կարծում եմ՝ մենք բաժանելու ոչինչ չունենք։

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ մի դեպքում։ Ես քեզ միայն հաջողություն կարող եմ մաղթել։ Կոտրիր թշնամու առաջխաղացումը, և ես

առաջիններից մեկը կհամբուրեմ քո ճակատը։— Հուզված, այլայլված էր Հովսեփբեկը։ Նա անկեղծորեն իր տեղը զիջում էր ավագ տոհմակցին և դրա մեջ չէր տեսնում որևէ բան, որ վիրավորեր իր պատվասիրությունը։ Նրա հոգում այդ պահին ծնվեց նույնիսկ այն առկայծող հույսն էլ, թե գուցե իսկապես այդ տոհմակիցը կարողանա գտնել դրությունը փրկելու մի ճանապարհ։ Քանի որ համոզված էր, որ Հայկական կորպուսի տնօրինության ներքո գործող բոլոր սպաների մեջ Դանիելբեկ Փիրումյանը եթե ամենագրագետ ու ամենաքաջ մարդկանցից մեկն է, ապա հնարամտության մեջ չունի իր մրցակիցը։ Իսկ հնարամտությունը պատերազմական անելանելի վիճակներում հավասար է օգնություն հասնող թարմ զորամասի։ Հովսեփբեկ Փիրումյանն այս հանկարծահաս մտածումով էր բաժանվում իր ազգականից և հրաժեշտին ասաց նաև իր համար ամենակարևորը.— Իսկ որ ավելի անկեղծ լինեմ... պատկերացնո՞ւմ ես, Դանիելբեկ...

— Ի՞նչ ես երեխա-երեխա խոսում, Հովսեփբեկ,— թեթևացած, հանգիստ նրան ասաց ավագ տոհմակիցը։

— Իսկապես անկեղծ ասած,— աչքերում խոնավություն կար, կոկորդը սեղմվում էր, բառերը դժվար էին լեզվին հասնում։— Ես ինձ ու իմ զորամասին պատրաստում էի նահատակության։ Այո՛, ստո՛ւյգ նահատակության։ Որովհետև պիտի կռվեինք մինչև վերջին գնդակը և մինչև վերջին շունչը։ Մեզնից ոչ ոք չպետք է տեսներ Երևանի անկումը։ Դա կարող էր լինել միայն մեր վերջին զինվորի նահատակությունից հետո... Բայց այդ չի նշանակում, թե հավատ ունեի իմ հաղթանակի նկատմամբ։ Մեղավոր եմ ես, թող ապիկարի մեկը համարվեմ. չե՛մ հավատում դրան։ Մենք թուրքական դիվիզիաների դեմ կռվելու ուժ չունենք։ Չեմ հավատում մեր հաղթանակի հնարավորությանը... Բայց... Բայց, պատկերացնո՞ւմ ես, քեզ հավատում եմ, քե՛զ, Դանիելբեկ։ Եվ ուզում եմ հավատալ նաև քո հաղթանակին...

Եթե մի երկվայրկյան էլ մնար, հեկեկալու էր։ Դրա համար էլ շտապ զրկեց ավագ տոհմակցին, սեղմվեց նրան, ապա կրտրուկ բաժանվելով՝ հեռացավ։ Բլրակի ստորոտից ձեռքով հրաժեշտի նշան արեց։

— Ամենա՛յն հաջողություն, հաջողությո՛ւն,— ինչքան կարող էր բարձրաձայն գոռաց Հովսեփբեկը և արագաքայլ գնաց

դեպի հրամանատարական վրանը, այնտեղից Երևան ճանապարհվելու համար։

Միայնակ մնալով իր վրանում, Հովսեփբեկ Փիրումյանը, արդեն պաշտոնանկ ու կովի դաշտից հեռացող մի գնդապետ, փորձեց հանգիստ սրտով ու մտքով գնահատել իր վիճակը, հատկապես կատարած վերջին քայլը, որի համար ուրիշ հանգամանքներում գուցե թե ինքն իրեն չներեր։ Այստեղ նա, առաջին հերթին, ուրախացավ, որ ամեն ինչ կատարվեց խաղաղ, բարյացակամության մթնոլորտում։ Նա լավ էր ճանաչում իրեն և գիտեր, որ մի ուրիշ անգամ նույնիսկ Դանիելբեկի նկատմամբ ունեցած սերն ու հավատն էլ չէին կարող զսպել իրեն։ Կբորբոքվեր, կպայթեր, կաներ մի այնպիսի բան, որից պիտի ամաչեր հետո։ Իսկ այժմ, փա՜ռք աստծո, ոչինչ վատ բան, ո՛չ մի տհաճություն... Հանգիստ խղճով, հարազատի բարյացակամությամբ իր դիրքը զիջեց մի մարդու, որը,— դրա մեջ արդեն ավելի քան համոզված էր,— արժանի է շատ ավելի բարձր դիրքի ու պաշտոնի։ Եվ նա դրանք է՛լ ուներ ընդամենը մի քանի ամիս առաջ։ Նախորդ տարվա վերջին, երբ նոր էր կազմակերպվել Երևանյան զորամասը, Դանիելբեկին նշանակել էին այդ զորամասի հրամանատար։ Եվ այն ժամանակ ոչ ոքի մտքով իսկ չէր անցնում, թե շրջապատում կա այդ պաշտոնին առավել արժանի ուրիշ մի զորական։ Ո՞վ չէր հիշում Էրզրումի ճակատամարտի օրերին նրա կատարած անօրինակ խիզախությունները։ Ռուս ու հայ սպանների և զինվորների աչքի առաջ է եղել նրա անբասիր ծառայությունը ռուս-թուրքական պատերազմի ամբողջ ընթացքում։ Իսկ նա այդ պատերազմի ճակատը ոտք էր դրել՝ ցարական բանակի սպայի համար նախատեսված ամենափառավոր շքանշաններով կուրծքը զարդարած։ Համարյա գոյություն չունեցող Երևանյան զորամասի հրամանատար նշանակվելով՝ նա ամենակարճ ժամանակում ստեղծեց ու ամրացրեց այդ զորամասը և թուրքերի դեմ հարդարեց այնպիսի ճակատ, որ անպայման կդիմանար բոլոր փորձություններին։ Սակայն Նազարբեկովի ու մյուս վերևինների գլխներին փչել էր, թե Երևանի զորամասի հրամանատարը պետք է գեներալի աստիճան ունենա։ «Պարոնա՜յք,— ասում էին,— Դանիելբեկ Փիրումյանն արդեն գեներալ-մայոր է. Կովկասյան ճակատի հրամանատարությունը վաղուց նրան ներկայացրել էր, հաստատումն էլ եղել է արդեն։ Ի՜նչ մեծ դրժ-

բախտություն է, որ կապը կտրված է ռուսական կենտրոնի հետ, և այդ մարդու գեներալական տարբերանշաններն ու փաստաթղթերը տեղ չեն հասել»։ «Չէ՛, որ չէ՛,— պատասխանում էին գեներալացավ ունեցողները։— Մեզ գեներալի ուսադիրներով մարդ է հարկավոր»։ Եվ գեներալ Մովսես Սիլիկյանին նշանակեցին Երևանյան զորամասի հրամանատար։ Երբ նոր նշանակված հրամանատարը ծանոթացել էր գործերի վիճակին, զորամասի կառուցվածքին ու հնարավորություններին, և Դանիելբեկը պիտի հրաժեշտ տար զորամասի հին աշխատողներին ու նոր պետին, գեներալը մոտեցավ, փաղաքուշ ձայնով հարցրեց. «Բարեկամ, այդ ո՞ւր եք շտապում»։ «Ռազմաճակատ, գեներալ, իմ գործն այնտեղ է»։ «Իսկ այստե՞ղ ով պիտի աշխատի»։ «Այստեղ ձեզ են նշանակել, գեներալ, երևի դուք էլ կաշխատեք»։ «Չէ՛, կնե՛ր ինձ,— բարեկամաբար, սիրալիր խոսել էր նորեկ գեներալը։— Ամեն ինչից երևում է, որ դուք լավ աշխատող եք։ Դուք պիտի մնաք։ Ես մենակ ի՞նչ պիտի անեմ այստեղ»։ Եվ Դանիելբեկը մնացել էր։ Մնացել էր ծառայելու ոչ թե գեներալ Սիլիկյանին կամ գեներալ Նազարբեկովին, այլ իր երկրին ու ազգին։ Չէ՞ որ տարիներ շարունակ տեսնում էր, թե շտաբային ու հրամանատարական կետերից արձակվող սխալ հրամաններն ի՞նչ տեսակ աղետ են կուտակում զորքի ու հայրենիքի համար։ Գոնե իր ուժերի ու կարողությունների չափով կկանխեր այդպիսի հրամանների արձակումը մի զորամասում, որը երևի թե ամենակարևորն էր հայկական ռազմաճակատում։ Սակայն երեք-չորս ամսվա ծառայությունն այս զորամասի հրամանատարության մեջ նրան համոզեց, որ զուր է փայփայել այդ անիրականանալի պարտքը. հայկական ճակատը ղեկավարվում է ո՛չ միայն և ո՛չ այնքան զորամասի հրամանատարության հրամաններով, որքան ռազմաճակատի ու հայրենիքի իրական վիճակի մասին ոչ մի գաղափար չունեցող Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի գործիչների կարգադրություններով, Հայոց սպարապետի՝ նահանջի ու թշնամուն հանձնվելու աղերսագրերով։ Եթե, իհարկե, Անդրկովկասյան միացյալ կառավարության հայատյաց ղեկավարները նրանց երբեմն թույլ էին տալիս խառնվելու հայոց ճակատի գործերին և իրենք անմիջապես չէին կատարում գաղտնի մի խարդավանք կամ բացահայտ մի ստորություն։

Եվ հիմա եկել է վերջին անգամ իր բախտը փորձելո՞ւ։ Ո՛չ, անխղճություն է այդպես մտածելը։ Դանիելբեկի նմաններ սեփական բախտը չեն փորձում։ Նրանք ամեն ժամ պատրաստ են սեփական կյանքը փորձանքի ենթարկելու, որպեսզի փրկեն ազգի բախտը։ Նրանք երբ գնում են իրենց պարտքը կատարելու, երբեք չեն մտածում, թե իրենք սեփական բախտ ունեն, երկրի ու ազգի բախտից բացի՝ սեփական, անձնական կյանք... Ա՛յ, հիմա, երկու հասուն տղաներին նետել է այս կրակի բերանը և ինքը, հրամանատարի տեղակալի հանգիստ ու ապահով դիրքը թողած, գնում է արյամբ գրելու իր կյանքի վերջին էջը կամ հայրենիքի փրկության մեծ հայտը...

Վերջին մտքի վրա Հովսեփբեկը կանգ առավ մի պահ, ընկերկեց. ո՛չ այստեղ, ամենայն հավանականությամբ, սխալվում եմ ես,— մտածեց նա։— Դանիելբեկի նմանների համար «կամ, կամ» չկա։ Նա ասաց, եթե կա հարյուր տարբերակ, որոնցից միայն մեկն է փրկություն, մենք ա՛յն պիտի կատարենք։ Դու կարո՞ղ ես։ Քեզ ընդունա՞կ ես համարում այդ քայլին։ Ո՞չ։ Պատրաստվել ես նահատակությա՞ն։ Զորքն է՞լ ես տանում նահատակության։ Որպեսզի լուծպորտ անցնես ու պատասխա՞ն չտաս այդ ապիկարության համար։ Ո՛չ, մեր տոհմը սովորություն չունի ապիկար զավակի փոխարեն պատասխան տալու։ Բարի եղիր հենց այս գլխից զիջելու դիրքդ։ Ես ճակատը կտանեմ դեպի փրկություն և պատասխան կտամ... Եթե դրա կարիքը լինի...

Այդպե՞ս ասա՞ց։ Զգիտե՛մ։ Երբ նա խոսում էր, ես շատ էի հուզված։ Ես նրան այդե՛ս հասկացա։ Եվ, կարծում եմ, դա կյանքիս ամենահաջող քայլերից մեկն է կամ հենց ամենահաջողը, որովհետև Դանիելբեկին հնարավորություն տվի անմահացնելու մեր տոհմը, որ շատ է արժանի այդպիսի պատվի...

Գնդապետ Հովսեփբեկ Փիրումյանը ճակատից հեռանում էր այս խոհերով։ Լինում էին վայրկյաններ, երբ նա ըմբոստանում էր հենց այս խոհերի դեմ, իրեն ճնշված-ստորացած էր զգում, որովհետև կատարածը թվում էր փոքրոգություն։ Սակայն մեկ էլ վայրկենական այդ ապրումը տեղի էր տալիս առավել մեծ ու տևական, հիմնավոր ու բարձր գիտակցությանը, որի համար քիչ էր մնում ինքն իրեն շնորհակալություն հայտներ բարձրաձայն։

* *
*

Առավոտյան աղջամուղջին պատից կախված հեռախոսը զրուցեց, և Արամ Մանուկյանը, որ դեռ կարգին քնով չէր անցել Երևանի Հայոց ազգային խորհրդի աղմկոտ ժողովից ու նրան հետևած տխուր, անհանգիստ մտորումներից հետո, վեր կացավ, լսափողը սեղմեց ականջին։ Աղմուկ ու խշշոց էին լսվում, ընդհատ-ընդհատ աղմուկ ու կտկտոց, ապա այդ կտկտոցները միախառնվում էին, ոնց որ կարկուտ էր տեղում թիթեղյա կտուրների վրա։ Մի վայրկյան միայն անփարատելի խառնաձայնի միջից լսվեց.

— Генерал Силиков говорит, генерал Силиков...

Հետո գեներալի հեռավոր ձայնը կորավ աղմուկի մեջ, և ականջներն այդպես էլ չիմացավ, թե Երևանյան զորամասի հրամանատարն ինչ էր ուզում ասել այն տարաժամին։

Քիչ անց վերստին զողոզաց հեռախոսը։ Այս անգամ աղմուկը մեղմացել էր, սակայն գեներալ Սիլիկյանը չէր խոսում։

Արամը սենյակի անկյունում դրված լվացարանի առաջ երեսը թրջեց, իբր լվացվեց, հագավ շորերը և շտապեց դրասենյակ։ Սակայն այնտեղի հեռախոսով ևս հնարավոր չեղավ կապվել զորամասի շտաբի հետ կամ զանգել Սիլիկյանի բնակարան։ Այն ժամանակ նա դրասենյակի առաջ ննջած պահակին խնդրեց, որ արագ վազի քաղաքի պարետ Շահխաթունու բնակարանը, որ Հարևան շենքում էր գտնվում։

— Ասա, թող իր մեքենայով գա։ Շտա՛պ,— հանձնարարեց նրան։

Ի՞նչ կարող էր լինել։ Հո առա՞ջ չեն շարժվել թուրքերը։ Գուցե հենց իր՝ գեներալի հետ է վատ բան կատարվել։ Համենայն դեպս, Ազգային խորհրդի նախագահն ուրախալի ոչինչ չէր սպասում գեներալի տարաժամ զանգից։

Շատ չանցած կազմ ու պատրաստ ներկայացավ Արշո Շահխաթունին։ Նա այնպես կոկիկ էր հագնված, այնպես խնամքով սափրված էր, սանրված, նույնիսկ օծանելիքներով գլխի հարթ մազերը մշակած, որ Մանուկյանը մտածեց, թե գուցե այս մարդն առհասարակ չի քնում։

— Արտակարգ բա՞ն է պատահել, պարոն Արամ,— նախա-

գահի առաջ իր գեղուղեշ հասակը տնկելով՝ անհանգստություն խաղաց Շահխաթունին։

Նախկին դերասանի այս ձևերը դուր չէին գալիս Ազգային խորհրդի նախագահին, որ լուրջ մարդ էր և արհեստական-շինծու վարվեցողության հակառակորդ։ Մի անգամ նույնիսկ մտերմորեն նրան նկատողություն էր արել։

— Աշխատիր չմոռանալ, որ հիմա բեմում չես քայլում,— զգուշացրել էր Արամը։— Հետո էլ պիտի իմանաս, որ այն, ինչ բեմում իրական ու ճշմարիտ է թվում, շատ հաճախ պարզապես կեղծ ու տհաճ է առօրյա կյանքում։

Զևացնելով, թե բոլորովին էլ չի վիրավորվել այդ նկատողությունից, Շահխաթունին պատասխանել էր, թե.

— Մայրս, Արամ փաշա, սրամիտ կին է։ Ասում է՝ բեմի վրա հարյուր գեր ես խաղացել, բոլորին էլ հավատացել ենք։ Այս պարետի գերն էլ թող լինի հարյուրմեկերորդը։

— Մեքենան սարքի՞ն է,— ողջույնն առնելով անմիջապես հարցրեց Մանուկյանը։

— Հիմա սարքին է,— պատասխանեց պարետը։— Սակայն ինչքան կդիմանա՝ աստված գիտե։ Հետո՞ւ տեղ պիտի գնաք։

— Առայժմ գնանք փոստ։ Գուցե հնարավոր լինի այնտեղից կապվել գեներալ Սիլիկյանի հետ։

Ճանապարհին Երևանի պարետն Արամին պատմեց, որ գիշերը գեներալ Սիլիկյանը զանգել ու հաղորդել է, թե թուրքերն արդեն Ալեքսանդրապոլից շարժվել են Անի ու Աղին կայարաններ վրա։ Ասում էր. «Պահեստային զորք ուղարկեցեք, մերոնք դժվար թե դիմանան»։

— Իսկ ինչո՞ւ հիմա ես ասում,— վրդովվեց Արամը։

— Ես անմիջապես կապվեցի Աղինի հետ, և հեռախոսավարն ինձ ասաց հետևյալը։ Ես բառացիորեն նրա խոսքերն եմ կրկնում. «Սա վերջին զանգը կլինի, որին պատասխանում եմ. որովհետև մեր կայարանն են նվաճում։ Ահա՛-ահա՛ ես տեսնում եմ, թե ինչպես մի ասկյար վազում է դեպի հեռախոսագիծը։ Ուր որ է կկտրի»։

Շահխաթունին ոչ միայն բառացիորեն, այլև հեռախոսավարի ձայնով կրկնեց նրա հաղորդածը, մտածելով, թե Արամը շատ պիտի զոհ լինի, որ զուր տեղն իրեն չի անհանգստացրել այդպիսի դատարկ բանի համար։ Սակայն, հակառակը, նա զայրացավ

և կարգադրեց հետագայում իրեն վերաբերող ամեն ինչին տեղյակ պահել։

Փոստի պատի տակ դրված երկար նստարանին թիկունքի վրա պառկած էր հեռախոսավարը և խոմփոցներ էր արձակում։ Արամ Մանուկյանը նոր հասկացավ, թե ինչո՞ւ քաղաքի հեռախոսները միայն ղողոացնում են, և պարետին հասկացրեց, որ ուշքի բերի նրան։

Շահխաթունին երկու ձեռքով բռնեց հեռախոսավարի ուսերը և թափ տվեց։ Շշկլված հեռախոսավարը վեր թռավ, գլորվեց նստարանից և հա՛յ-հո՛ւյ կանչելով վազեց դեպի անկյունում ցից դրած հրացանը.

— Հը՞, ո՞վ է, ի՞նչ կա, թուրքե՞րն են եկել,— փնթփնթաց նա։ Մեկ էլ ճանաչելով դիմացը կանգնած Շահխաթունուն, խեղճացավ.— Վա՛յ, պարոն Շայխաթունի՞, էս ի՞նչ էր պատահել, ննջել էի, հա՞։

— Տո՛, անբա՞ն լածիրակ,— պայթեց քաղաքի պարետը,— մոնչոցիցդ Արաքսի վարազները փախան, դադարցյուն ընկան։ Որ քո ննջելն այդ է, բա մրափե՞լդ ոնց է լինում։

— Ներող կլինես, պարոն պարետ, չգիտեի, որ գայու ես։ Բա որ իմացած լինեի, բայղուշի պես անքուն-անդադար կսպասեի քո գալուն։

— Չգիտեիր է՞լ, որ պատերազմ է, և դու գտնվում ես մարտական դիրքում, հայվա՞ն-անասուն։

— Դիրքում եմ, բա ի՞նչ է, պարոն Շայխաթունի։ Բա ո՞նց չգիտեմ։ Լուսադեմին գեներալն էր հրաման արել, որ միացնեմ էն փաշա՛ է, ի՛նչ է՝ նրան։ Ես էլ միացրի-պրծա ու ասի՝ աչքիս որթը կոտրեմ, էդ ա որ դու ինքդ եկար, պարոն Շայխաթունի, ես քո էդ ազնվական ոտիդ փոշին դառնամ։ Բա մարտական դիրքում եմ, ո՞նց, սա հենց իմ մարտական դիրքն է և իմ խրամատը...

— Դե՛, քի՛չ բլբլացրու, քո դեմ Արամ փաշա Մանուկյանն է, Ազգային խորհրդի նախագահը և քո հոգեառը. ուզի տրիբունալի կտա, ոտով-գլխով կկորչես։

Հեռախոսավարը հանկարծ քարշ եկավ դեպի դռան մոտ կանգնած հսկայամարմին Արամը և փովեց նրա ոտքերի առաջ։

— Վա՛յ, խնայի՛ր ինձ, մեծ փաշա, մի բոլուկ երեխի տեր եմ։

Արամը կռացավ, թեատակերից բռնած թեթևորեն բարձրացրեց նրան։

— Դե՛, լա՛վ, բավական է թատրոն խաղաք,— բարկացած մի կողմ հրեց նրան և քայլեց դեպի հեռախոսը, որ գտնվում էր սենյակի կենտրոնում ձգված երկար սեղանի վրա։— Շուտ միացրու գեներալին և աշխատիր չքնել դիրքում։ Մեկ էլ որ քնեցիր, էլ ինձնից չնեղանաս։ Շո՛ւտ։

Գեներալ Սիլիկյանի հոգնած, խռպոտ ձայնը ոչ մի լավ բան չէր խոստանում։ Ռազմաճակատի անմխիթար վիճակը մի քանի բառով ներկայացնելուց հետո նա հաղորդեց, որ հեռագրեր է ստացել Թիֆլիսից ու գլխավոր հրամանատարությունից և ուզում էր իրեն՝ Արամին, ոչ միայն տեղյակ պահել, այլև խորհրդակցել հետը, որպեսզի միասին որոշեն անելիքը։

— Ովքե՞ր են ստորագրում հեռագրերը,— անհանգստացավ Արամը՝ պատրաստվելով ծանր բոթի։

— Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահն է, Ավետիս Ահարոնյանը, և Ղարաքիլիսայից գեներալ Նազարբեկովը։

— Ի՞նչ են ուզում։ Պահանջում են երկի՞րը հանձնել թուրքերին։

— Երևի դա նրանց համար արդեն վճռված հարց է, որովհետև հրամայելու պես խորհուրդ են տալիս, որպեսզի կաթողիկոսը բարձրանա Բյուրականի իր ամառանոցը՝ այնտեղ փոխադրելով նաև վեհարանի շարժական հարստությունը։

— Ա՜-հա՜,— խոր հոգոց հանեց Մանուկյանը։— Այդպե՞ս։ Ուրեմն այլևս ոչ մի հույս չկա, և կաթողիկոսն ու իր գանձերը պիտի փրկվեն՝ Բյուրական փոխադրվելով։ Այդպե՞ս-այդպե՞ս։— Նա այս խոսքերը ձգում էր, որպեսզի մտածելու ժամանակ շահի։ Շահխաթունին ամբողջ կեցվածքով ու դեմքով ողբերգության մարմնացում էր Ազգային խորհրդի նախագահի հայացքի առաջ։ Իսկ հեռախոսավարը սմքել, կուչ էր եկել սենյակի անկյունում, և դեմքին այնպիսի արտահայտություն կար, կարծես գիտակցում էր, որ այդ ամբողջ դժբախտության պատճառն ինքն է եղել. քնով անցած չլիներ, հայոց բանակն այնքան ապիկար կդառնա՞ր, որ մի կաթողիկոսի կյանք էլ չկարողանար պաշտպանել։ Արամը դեռ հերթապահ հարցեր էր տալիս, ուզում էր իմանալ Սիլիկյանի սեփական կարծիքը, որովհետև նրան է, որ ավելի լուրջ մարդ և բանիմաց զորավար էր համարում.— Ուրեմն, դուք

ես համոզված եք, որ լավ կլինի, եթե փոխադրվի։ Այդպե՞ս։ Իսկ ինչպե՞ս պիտի տեղ հասցնեք այդ առաջարկությունը։ Ես և դո՞ւք։ Ինչպես կուզե՞ք։ Իհարկե, անձամբ կնախընտրեի կրռվել մինչև վերջ։ Մինչև վերջին գնդակը և վերջին շունչը։ Բայց ի՞նչ կարող եմ անել, երբ ռազմավարներդ միայն ա՛յդ եյքն եք տեսնում։ Ցտեսություն։ Կհանդիպենք Հռիփսիմեի վանքի մոտ և այնտեղից միասին կգնանք։ Ցտեսությո՛ւն։

Ճանապարհին Շահխաթունին առաջարկեց մի տեղ մեքենան կանգնեցնել, և վարորդը, նրա առաջարկության նպատակը գուշակելով, Զանգվի ձորն անցնելուց հետո, թեքվեց դեպի աջ, մտավ մի հսկա ընկուզենու տակ, որի արմատների արանքից վրխկալով ջուր էր հոսում։

Շահխաթունին մի տարօրինակ պայուսակ հանեց մեքենայից և նրա պարունակությունը մեկ-մեկ հանելով՝ փոքրիկ ճաշասեղան սարքեց ընկուզենու ամենամեծ կոճղարմատի վրա։

— Էս հո կարգին պատրաստություն ես ունեցել,— զարմացավ Արամը։

— Մինչև ես լվացվեի, մայրս եղած-չեղածից կապեց, դրեց։ Իմաստուն կին է։ Ասաց՝ որ կանչում են, երևի կարևոր գործ կա, վերցրու, որ անոթի չմնաք։

Կոնյակի փոքրիկ շիշ էլ կար։ Շահխաթունին երկու բաժակ լցրեց և մեկը դնելով Արամի առաջ, մյուսը հանդիսավոր բարձրացրեց։

— Ինչի համար գնում ենք, հաջողությամբ պսակվի, պարոն Արամ,— մաղթեց նա և բաժակը երկարեց, որ զարկի։

Արամն առանց ոգևորության բարձրացրեց իր բաժակը։

— Չեմ կարծում, թե հաջողվի համաձայնեցնել,— դժկամ խոսեց նա։— Չեմ կարծում և, ճիշտն ասած, չեմ էլ ուզում։

Շահխաթունու խաժ աչքերը չովեցին՝ արտահայտելով այն զարմանքը, որ բառերով, իբր, դժվար է արտահայտել։

— Այո՛, ինձ ցավ պիտի պատճառի, եթե համաձայնի,— մտախոհ շարունակեց Արամը և ձեռքով տրորեց իր քիթն ու մռութը։— Էհ, վերջապես, այս հողի վրա մի՞թե չի մնացել նահատակության պատրաստ մի մարդ։

Շահխաթունին պարպեց իր բաժակը և հայացքով նույնը հորդորեց Արամին։ Իսկ նա իրենը դրեց գետնին։

— Ես առհասարակ խմելու սովորություն չունեմ։ Դու այդ

մեկն էլ կուլ տուր. հաճույքով ես խմում։ Մի անգամ խմելուց հետո հայելու մեջ նայել եմ մոութիս... Դիմացինս հաց ու ջրից կկտրվի։

— Բայց ի՞նչ օգուտ նահատակությունից, եթե այն չի փրկելու երկիրդ։— Շահխաթունուն դեռ անհանգստացնում էր Արամի ցանկությունը՝ կաթողիկոսին տեսնելու նահատակության պատրաստ։

— Ես նկատի ունեմ ոչ թե էշի նահատակությունը։— Արամը դարձյալ տրորեց դեմքը։ Ըստ երևույթին ներքին անհանգստությունը նա այդպես էր արտահայտում։ Չէ՞ որ ուրիշներն էլ սեփական մատներն են շարդոտում կամ անում են մի այնպիսի բան, որից զրուցակցի ախորժակն է փակվում։— Երբ իր ազատության համար նահատակության պատրաստ է լինում ամբողջ ազգը, այն ժամանակ կովում են բոլորը, և նահատակության կարիքն այլևս չի զգացվում։ Իսկ մեր զորավարները թշնամու առաջ ճողոպրելով՝ հեռագրեր ու կոչեր են շաղ տալիս. պայմանագի՞ր կապեցեք, հաշտությո՞ւն կնքեցեք, կաթողիկոսի՞ն փախցրեք և երկիրը հանձնեցեք թուրքին։

Այդ ժամանակ ընկուզենու տակ հայտնվեցին մի խումբ որբեր. մի ջահել աղջիկ, այնքան նիհար, որ թվում էր՝ եթե վրայի ցնցոտին հաներ, կմնար միայն կմախքը, առանց մաշկի, և գլուխները խուզած մանկահասակներ, որոնց տղան ու աղջիկը դժվար էր որոշել։ Նրանց ոսկրացած դեմքերին հիվանդոտ կայծկըլտում էին սև-սև աչքերը, որոնք հառված էին Շահխաթունու «սեղանի» վրա։

Արամը նայեց, նկատեց և անմիջապես վարորդին կարգադրեց եղած ուտելիքը բաժանել։

— Ախր, դուք սկի բան չկերա՞ք,— դժգոհեց պարետը։

— Բան չկա, թող բաժանի,— տխուր ասաց Մանուկյանը և ուղղեց վեր կացավ։— Աստվա՞ծ իմ, այնքան սովորական է դարձել, որ այս թշվառությանը նայում ենք առանց սարսուռի։

Ճանապարհին գաղթականների խմբերը մի քանի անգամ կանգնեցրին մեքենան։ Վրա էին տալիս բոլոր կողմերից, պառկում էին անիվների առաջ... Բոզոքն ու տրտունջներն արտահայտում էին այնպես խառնաձայն ու իրար հերթ չտալով, որ դժվար էր տարբերակել նրանց ասածները։ Չվարթնոցի մոտ էր, որ մեքենան պաշարած ամբոխի վրա գոռգոռալով Շահխա-

թունին ատրճանակը հանեց ու սպառնաց։ Տարեց մի մարդ, որ երևի ամբոխավարն էր, կամ հիմա ամբոխ դարձած երբեմնի համայնքի հեղինակավոր ներկայացուցիչը, ոսկրացած ձեռքն առաջ պարզեց.

— Ի՞նչ պիտի անես, աղա՛, որ զենքդ հանել ես։

— Պիտի կոտորե՞մ,— արտիստորեն գոռաց Շահխաթունին։

— Դե՛, էն է առանց քո զենքի էլ կոտորվում ենք, ինչի՞ նեղություն քաշես։

— Բա ի՞նչ անեմ, որ ճանապարհ չեք տալիս, գնանք մեր գործին։ Այս ի՞նչ խառնակչություն է։

— Աղա՛ ջան, հոգո՛ւդ մեռնիմ, խառնակչություն չկա։ Կոտորվում ենք անտեր։ Ապրեցնելու մի ճար գիտես, արա՛, ինչի՞ կսպառնաս կոտորել։ Բա մի՞ ազգ չենք, նույն աստծո՞ւն չենք ուղղում մեր օրհնանքները։ Ինչի՞ կսպառնաս կոտորել...

Տարեց մարդուն ձայնակցում էին նրա շուրջը խոնվածները, և չէր երևում, թե հեշտ է լինելու օղակումից դուրս գալը։ Դա ավելի էր կատաղեցնում դյուրաբորբոք Շահխաթունուն, որը հարձակվեց տարեց մարդու վրա։

— Տո՛, ծե՛ր դեմագոգ, ի՞նչ է, ձենդ երկինք ես գցել...

Արամը դուրս եկավ մեքենայից և առաջին հերթին Շահխաթունու թևը բռնեց։

— Կացե՛ք,— աղմկոտ ամբոխի կողմ հնչեց խրոխտ ձայնը։

Նրա երևալուն պես քարացավ ամբոխավար հռչակվածը։

— Տո՛, էս խո Արա՛մն է,— նա, իր բախտակիցներով շրջապատված, ձեռքերը վեր պարզեց, ասես հայտնվել էր նրանց մեսիան։— Երկինք-գետի՛նք, էս խո Արա՛մն է։ Ժողովո՛ւրդ...

Արամը դանդաղ, հանդիսավոր մոտեցավ ծերունուն, իսկ նա դեռ շշմած էր, հմայված ու հիմա էլ ձեռքերն էր քսում Արամի հագուստին. «Այդ դո՞ւ ես»։

Կմախքացած մարդու մեջ Արամը տեսնում էր մեկին, որին գիտեր առաջուց, սակայն խանգարված դիմագծերը թույլ չէին տալիս վերականգնելու հին ծանոթի պատկերը։ Ծերունին երևի թե զգում էր, որ նա ջանում է հիշել, սակայն դժվար է իր աղավաղված արտաքինի մեջ տեսնել Վանի պաշտպանության զինվորին։

— Աբե՛լն եմ, Արամ փաշա։ Վանա կռիվ չե՞ս հիշեր։ Վանա արդար կռվի Աբելին չե՞ս հիշեր...

Արամը նրան իր գիրկն առավ, սեղմեց եղբայրաբար ու վերից վար ականջին ինչ-որ բան շշնջաց։ Վարից նա էլ գլուխը բարձրացրեց, և հիմա խոսում էին հայացքներով։

Երկուսի աչքերից էլ արտասուք էր հոսում...

Արամն Աբելին հրավիրեց իր մոտ՝ Ազգային խորհրդի շենքը և ասաց, թե ինչպե՞ս պիտի գտնի։

— Վաղը կգաս, կզրուցենք, մի բան կանենք։

Աբելն Արամին պատմել էր, որ իրենց խմբից մի պատանի գիշերը մտել է դիմացի արտը՝ հեղիի համար ցորեն քաղելու, և տվել-սպանել են։ Ինքը՝ Արամը, ճանաչում էր արտատիրոջը և մտքում որոճում էր այն պատիժը, որին պիտի ենթարկել տար այդ հղփացած հարուստին։ Շահխաթունուն հանձնարարեց երեկոյան իր ծանոթ խմբապետներին հրավիրել։

— Թող գործ անեն, պարապությունից իրար են գզում։

— Ի՞նչ նկատի ունեք, պարոն Արամ։

Նա մեքենայի միջնորմը բարձրացրեց, որ վարորդն իրենց լսի։

— Ազգը կոտորվում է քաղցից, իսկ գյուղական համփաներն օրեցօր ուռճանում են։ Խմբապետների խնդիրը կլինի գաղթականների սնունդն ապահովել այդ համփաների հաշվին։

* *
*

Հռիփսիմեի վանքի մոտ երկար սպասեցին գեներալ Սիլիկյանին։ Նա եկավ այլայլված և, ներողություն խնդրելով ուշանալու համար, կցկտուր բացատրեց.

— Տեղակալս էր օյինբազություն սարքել։

— Դանիելբեկ Փիրումյա՞նը։

— Էլ ո՞վ։

— Ի՞նչ պիտի աներ այս խառնաշփոթ իրավիճակում։

Եվ գեներալը պատմեց հետևյալը։

Ինքը՝ Մովսես Սիլիկյանը, Մանուկյանին զանգել էր ցայգալույսին և հետո գնացել դեպի զորամասի մարտկոցները, որպեսզի օրվա համար առաջադրանքներ տա հրամանատարներին ու վերադառնա Հռիփսիմեի մոտ։ Ջոկատներից մեկում հայտնեցին, որ

շտաբում գնդապետ Դանիելբեկ Փիրումյանն է սպասում և իր հետ շտապ լուծելու հարց ունի։

— Ես շարունակեցի գործս, մտածելով, որ տեղակալս է, պարտավոր է սպասել և ոչ թե կարգադրել, որ շտապ ներկայանամ։— Հռիփսիմեի վանքի մոտից ոտքով էին գնում մինչև Մայր տաճարը, և ճանապարհին այսպես հանգիստ ու մանրամասն պատմեց Սիլիկյանը։— Վերադառնամ, տեսնեմ ի՞նչ. սա, կարծելով, թե շատ պիտի ուշանամ, դիմում է գրել, թողել սեղանիս, հեռանում է։ «Ի՞նչ դիմում է»,— ասում եմ։ Թե՝ «Կարդա՛, կիմանա՛ս»։ Կարդում եմ, և քիչ է մնում գագաթս պայթի։ Դիմումով հայտնում է, որ հայրենիքի համար ստեղծված ծայրահեղ ճակատագրական պահի գիտակցությամբ թողնում է Երևանյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալի իր պարտականությունը և ստանձնում է Սարդարապատի ճակատի ղեկավարությունը։ «Ո՞նց թե՝ ստանձնում ես, ա՛յ մարդ,— ասում եմ,— քո ուզելո՞վ է, որ վերցնես ու գնաս։ Կամ Սարդարապատի ճակատն անտե՞ր է, ի՞նչ է։ Չէ՞ որ այնտեղ էլ քո տոհմակից Հովսեփբեկ Փիրումյանն է հրամանատար։ Ճանաչված ու խիզախ մի գնդապետ, որի ծառայությունները բարձր են գնահատվել Գերագույն հրամանատարության կողմից»։ «Բայց այդ «ճանաչված ու խիզախ հրամանատարը»,— ասում է,— իր ճակատի վիճակը համարում է անհուսալի և հենց մի գլուխ պահանջում է, որ զինադադար կնքենք»։ «Հետո՞ ինչ, որ պահանջում է։ Մենք էլ ենք պահանջում։ Բոլորն են պահանջում։ Հայկական կորպուսի հրամանատար Նազարբեկովը չի՞ պահանջում։ Մեր դրությունն իսկապես անհուսալի է, և հաշտությունն ու զինադադարը՝ միակ խոհեմ քայլը, որ այսօր կարող ենք և պետք է կատարենք»։ Այստեղ նա կովարար աքլորի պես խրոխտացավ, թե «Ի՞նչ է, դուք մի՞թե այսքան երկար նահանջի ճանապարհին չտեսաք ու չիմացաք, որ թուրքը ձեզ հետ հաշտվել չի ուզում, որ զինադադարի պայման է կապում, անմիջապես էլ ինքն է խախտում իր պայմանը և առաջ է շարժվում քո խաբված ու թմրած զորաջոկատների վրայով»։ «Տեսել ու իմացել եմ,— ասում եմ,— ո՞չ կույր եմ, ո՞չ անհասկացող։ Բայց մի՞թե դրանից մեր վիճակը թեթևանում է։ Մենք ուրիշ ելք չունենք,— ասում եմ։— Այդպես են մտածում բոլորը՝ Թիֆլիսում նստած մեր Մխացյալ կառավարության պարագլուխները, Հայկական կորպուսի հրամա-

նատարը։ Վերից վար ու վարից վեր բոլորն էլ այդպես են մտածում։ Դա է միակ ելքը։ Մի՞թե դու չես հասկանում այդ հասարակ բանը»։ Ասում է. «Ո՛չ, դա ելք չէ, որովհետև քանի դու զինադադարի կոչեր ու խնդրագրեր ես ուղարկում վերև-ներքև, թուրքը մեր ժողովուրդը կոտորելով ու երկիրն ավերելով առաջ է շարժվում։ Զինադադար կնքես, դարձյալ կշարունակի առաջ շարժվել։ Առաջ կշարժվի ու կշարդի այնքան ժամանակ ու այնքան տեղ, մինչև որ Հայաստան աշխարհը լրիվ կլինի իր ոտքի տակ, հայազուրկ ու ավերակ, և ինքը հնարավորություն կունենա գրկախառնվելու մուսավաթի հետ, իր կայսրության սահմանները հասցնելու Կովկասյան լեռնաշղթա և նրանից էլ դեն։ Իսկ մեր միակ ելքը,— ասում է,— կռվելն է, կռվելը և ոչ թե դիրք պահելը»։ Այսպես խոսում էր տաքացած և գտնում էր, որ իր վճիռը միակ ճիշտն ու հարմարն է պատերազմական այն իրադրության մեջ, որ ստեղծված է Ալեքսանդրապոլից մինչև Սարդարապատ։ Պատերազմական պայմաններում զորամասի հրամանատարությունը կարող է իր ձեռքը վերցնել նույնիսկ ցածր կոչման որևէ սպա, որն ի վիճակի պիտի լինի փրկելու դրությունը։ Սակայն դա լինում է այն դեպքում, երբ զոհվել է ճակատի հրամանատարը կամ ինչ-ինչ պատճառներով անհնար ու անհարմար է նրան թողնել իր պաշտոնում։ Բայց սա հավակնում է այն պաշտոնին, որի տերն է իր տոհմակիցը՝ մի կարգապահ սպա և փորձված զինվորական։ Ասում է. «Գնդապետ Հովսեփբեկ Փիրումյանի հետ ինքս անձամբ լուծել եմ հարցը, և նա ինձ է զիջել ճակատի հրամանատարությունը»։

— Երկուսն էլ գնդապետ են, ճանաչում եմ,— խոսեց Մանուկյանը, որ ուշադիր ու լուռ լսում էր այս զարմանալի պատմությունը։

— Այո՛, երկուսն էլ գնդապետ են։ Բայց Դանիելբեկը մի տարի առաջ ներկայացված է եղել գեներալության։ Ռազմական մինիստրությունում հաստատվել էր միջնորդությունը։ Փաստաթղթերն ու տարբերանշաններն են ուշանում, որովհետև քանի ամիս է, ճանապարհները փակ են, և Կովկասը կտրված է մայրաքաղաքից։

— Հիմա գնդապետի տարբերանշաններով այդ գեներալն ուզում է ճակատ գնալ, կռիվն անձամբ գլխավորել և հավատում է իր հաղթանակին։

— Այո՛, ճիշտ այդպե՛ս։

— Բայց ի՞նչ կա այդտեղ դատապարտելի։ Եթե, իհարկե, դուք ևս դտնում եք, որ նա ի վիճակի պիտի լինի գոնե մի փոքր բարելավելու ճակատի վիճակը։

— Ոչինչ չունեմ, պարոն Մանուկյան, ինքս նրան շատ բարձր եմ գնահատում իբրև մտածող մարդու և հմուտ ռազմավարի. Երևի լսած էլ պիտի լինեք էրզրումի ճակատամարտում նրա կատարած քաջությունների մասին։ Բայց Արարատյան դաշտն էրզրում չէ, պարոն Արամ, այստեղ թույլ տված մեր ամեն մի սխալը կարող է լինել ճակատագրական։

Արամ Մանուկյանը քայլում էր՝ այդ պատմությամբ մի փոքր խանդավառված։ Եվ նա չթաքցրեց այդ։

— Պատկերացնո՞ւմ եք,— ասաց,— ես առաջ էլ ճանաչում ու հարգում էի։ Իսկ հիմա պարզապես սիրեցի այդ գնդապետ-գեներալ Դանիելբեկ Փիրումյանին։— Սիլիկյանը զարմացած նայեց նրան, երևի փորձեց առարկել։ Սակայն Մանուկյանը, որ պատմության ամբողջ ընթացքում սոսկ լսող էր, այժմ խոսում էր ոչ թե կարծիք հայտնելու, այլ վճիռ հանելու համար։ Եվ գեներալ Սիլիկյանն արդեն պարտավոր էր ընդունելու նրա ասածը՝ իբրև վճիռն այն արտակարգ ու իրավարար պաշտոնի, որն Արամ Մանուկյանին էր վստահված։— Միշտ չէ, որ ինձ իրավունք եմ վերապահում խառնվելու ձեր գործերին։ Ճակատի հարցերը հիմնականում ձեր բաժինն են, և դուք՝ հրամանատարներդ, շատ ավելի լավ գիտեք, թե ո՞ր քայլն ինչպե՞ս պիտի կատարել։ Սակայն այս անգամ, պարոն գեներալ, թույլ տվեք չհամաձայնելու ձեզ հետ։— Մանուկյանի տոնը լուրջ էր, առարկություն չընդունող, և Սիլիկյանն զգաց, որ ինքն այս անգամ չարաչար սխալվել է։— Առհասարակ մենք պարտավոր ենք շատ ավելի նրբանկատ լինելու... Կրկնում եմ. ես առաջ էլ հարգում էի Դանիելբեկին։ Ճանաչում եմ նրա տոհմը, քաջ տոհմակիցներին։ Գնդապետ Պողոսբեկին մոտիկից ճանաչելու և մտերիմը լինելու բախտ եմ ունեցել Վանում, ճակատագրական Տասնհինգի ծանր օրերին։ Այդպիսի մարդկանց վստահորեն կարելի է հանձնել մի ամբողջ երկրի զորքը, և նրանք հրաշքներ կգործեն...

— Բայց չէ՞ որ Հովսեփբեկն էլ նրանց տոհմից է և առ այսօր իրեն չի հեղինակազրկել,— գեներալն ասես կառչեց մի վերջին

հեղհեղուկ պատճառաբանության՝ իր դեռևս չհանած վճիռն արդարացնելու նպատակով։

— Առ այսօ՞ր,— ձգեց Մանուկյանը։— Այո՛, Հովսեփբեկը ևս նրանց տոհմից է, ըստ երևույթին՝ ժառանգած նաև տոհմի ավանդական քաջասրտությունը։ Բայց տեսնո՞ւմ եք, որ այդ քաջասիրտ գնդապետն այսօր կռվելը համարում է ապարդյուն, նույնիսկ վտանգալից և միակ ելքը թուրքի ողորմածությանը հանձնվելու մեջ է տեսնում... Հետո՞ ինչ, որ այդպես են մտածում նաև վերադաս հրամանատարներն ու Միացյալ կառավարության պարագլուխները։

— Եթե դուք այդպե՞ս եք որոշել,— Սիլիկյանը հուսահատորեն դիմեց Մանուկյանին։— Եթե դուք իսկապես այդ համոզմանն եք, էլ ո՞ւր ենք գնում, ինչո՞ւ ենք գնում։

Մանուկյանը դառը ժպտաց քթի տակ.

— Ես գնում եմ ոչ թե իմ կարծիքը հաղորդելու կաթողիկոսին։ Դուք ասացիք՝ հեռագրեր եք ստացել և անձամբ էլ համաձայն եք նրանց առաջարկությանը... Պարզապես հաճելի է տեսնել՝ ի՞նչ է մտածում այս երկրի հոգևոր նվիրապետը, որ ի պաշտոնե պարտավոր է լինելու ամենախելոքը. չէ՞ որ հոգևո՞ր առաջնորդն է։

— Եվ դուք այնտեղ չե՞ք հայտնելու ձեր կարծիքը։

— Պիտի աշխատեմ լինել միայն վկա, չնայած նման դերն առհասարակ անհարիր է իմ բնավորությանը։

Վաղարշապատը հայոց ողբերգության կենտրոնն էր դարձել, և նրա ներսում եռացող դժբախտությունը հորդում էր դուրս։ Քաղաքի մուտքին չհասած՝ նրանք դեմ առան գաղթական ծովի ալիքին, որը խճուղին լցված շարժվում էր տարբեր կողմերի վրա։ Խճուղու եզրերին նստոտած աղերսալից, մեռնող հայացքներով ողորմություն էին մուրում մեծ ու փոքր, կին ու տղամարդ։ Սակայն ողորմացող չկար։ Կային մուրացիկներ, որոնք այլևս ուժ չունեին նստած տեղից ձեռք առաջ շարժելու։ Պառկել էին, մի ձեռքը գլխատակին, մյուսը բուռ արած մեկնել դեպի առաջ։ Փակ աչքերով էին, և հայտնի չէր՝ ո՞րն է կենդանի, ո՞րը՝ մեռած։

Մայր տաճարի բակի աջակողմյան ծառերի տակ կրակարաններ էին շինել և հսկա կաթսաներում ձավարից ապուր էին եփում գաղթականների համար։ Երեք վեղարավոր երիտասարդներ դարպասներից ներս խուժող գաղթականների դեմը պահում էին՝

հայտարարելով, որ ճաշը պատրաստ չէ, հենց որ պատրաստ լինի, խումբ-խումբ ներս են թողնելու։ Երիտասարդներից մեկը, ճանաչելով զորավար Սիլիկյանին, որի շտաբը հենց իրենց կողքին՝ Գևորգյան ճեմարանի առաջին հարկում էր տեղավորված, ընդառաջ գնաց և գլխով խոնարհում արեց։ Ապա իմանալով, որ զորավարն ու իր ուղեկիցները վեհափառին պիտի հանդիպեն, զարմացավ.

— Այս ժամի՞ն,— բայց և այնպես առաջ ընկավ։

Տրդատա դռան պահակի ականջին ինչ-որ բան ասաց և, հյուրերին իրենից առաջ թողնելով, հետևեց նրանց։ Դեպի վեհարան տանող սալարկած ուղին եզերում էին վերասլաց բարդիներ ու լորենիներ, որոնց արանքներում խնամված թփերն էին վարդերի, հասմիկների և այլազան երփնավառ ծաղիկների։ Ուրիշ ժամանակ այստեղ պիտի լսվեին երգեցիկ թևավորների դայլայլները։ Սակայն հիմա օդը լիքն էր Մայր տաճարի պատերից անդին խլրտացող գաղթականների անհոդարաշխ ձայներով։

Տարօրինակ բանագնացները մռայլ էին և բառեր չէին գտնում իրենց հոգիների խռովքներն իրար հաղորդելու։

Արամը մտածում էր, որ գաղթականությունն ավելի շատ էջմիածնի շուրջն է կուտակվել, չնայած նրան տեղավորելու, օգնելու և պետքերը հոգալու կոչված կազմակերպությունները Երևանում էին գտնվում։ Գաղթականը չի՞ հավատում այդ կազմակերպություններին, որոնք իսկապես անզոր էին որևէ լուրջ օգնություն հասցնելու։ Թե՞ պարզապես երկրի հին հավատն է նրանց այստեղ բերում։ Այստեղից ավելի շո՞ւտ են տեղ հասնում իրենց աստվածառաք աղոթքները, թե՞ գիտեն, որ ամենուր էլ մահն է սպասում, և այստեղից ավելի հեշտ պիտի իրենց հոգիները հասնեն հայոց աստծու մոտ, խառնվեն նրա երկնային հոտին։

Կաթողիկոսը նրանց ընդունեց վեհարանի իր ընդարձակ առանձնասենյակում, փափուկ բազկաթոռի մեջ ընկղմված։ Ցոթերորդ տասնամյակը նոր միայն ետև թողած Գևորգ Ե Սուրենյանը շատ էր ծեր երևում, և հյուրերը չզարմացան, որ իրենց ողջույնին ծույլ-ծույլ պատասխանելով՝ նա պարարտ մարմինը հազիվ շարժեց բազկաթոռի վրա ու աջը մեկնեց առաջ։ Գեներալ Սիլիկյանը խլեց նրա ձեռքը և տարավ շուրթերին։

— Հը՛, նոր սենյակներ նվաճելո՞ւ եք եկել,— լայն դեմքին բարի ժպիտ՝ փորձեց կատակել վեհափառը։

— Քա՛վ լիցի, վեհափառ, այն երեք սենյակն էլ մեզ բավական է.— մեղավոր խոսեց գեներալը։— Գուցե ճեմարանի տնօրենը դանդաղե՞լ է։ Բայց մենք դժգոհելու առիթ չենք տալիս։

— Դժգոհելու առիթն էլ, պատճառն էլ հենց այն է, որ հոգևոր ճեմարանում է նստում զորամասի սպայակույտը... Սակայն, կարծում եմ, դա ժամանակավոր երևույթ է, և խաղաղություն լինի, ամեն ինչ կբռնի իր տեղը։ Ուրեմն, խաղաղությո՛ւն ամենեցուն։

Տեսնելով, որ հովանավորը մնում է ստվերի մեջ, Շահխաթունին մոտեցավ, համբուրեց վեհափառի աջը, որ թույլ ընկած էր աջակի սեղանի եզրին, ապա խոսեց թատերային վերամբարձ տոնով.

— Պատիվ ունեմ ներկայանալու, վեհափառ. Երևան քաղաքի պարետ Շահխաթունի։— Կաթողիկոսը գլուխը շարժեց հանգիստ, և պարետը հայացքով ցույց տվեց քիչ հեռու, մեկուսի կանգնած Արամին, նրան ևս ներկայացրեց.— Պատիվ ունեմ, վեհափառ, և առհասարակ ինձ համար մեծ պատիվ է ներկայացնել Երևանի Ազգային խորհրդի նախագահ, Արարատյան երկրի արտակարգ և միանձնյա դիկտատոր Արամ փաշա Մանուկյանին։

Այս անունը լսելուն պես աշխուժացավ կաթողիկոսը, փորձեց տեղից վեր կենալ։ Արամը մեծաքայլ մոտեցավ, շտապեց առնել նրա աջը, որպեսզի նա տեղից վեր չկենա։ Երբ կռացավ համբուրելու համար, վեհափառը ձախ ձեռքով բռնեց նրա ուսը և մտերմորեն սեղմեց։

— Այդպես էլ պատկերացրել եմ ձեզ,— գոհունակությամբ խոսեց վեհափառը՝ ոգեշունչ հայացքն իր դեմ կանգնած Արամի վրա և ուշքի գալով՝ նրան տեղ ցույց տվեց.— Նստեցե՛ք, նստեցե՛ք... Ահա ճիշտ այդպես էլ պատկերացրել եմ՝ բարձրահասակ, բացճակատ։ Մարդուս ճակատին կարելի է կարդալ նրա հոգին։ Զո՞ւր չէ, որ «ճակատագիր» խոսք էլ կա։— Ապա հայացքը սահեցնելով ներկաների վրա, ասելիքը եղրափակեց աստվածաշնչյան խոսքով.— Բազումք են կոչեցեալք և սակաւք՝ ընտրեալք։ Գոհություն աստծուն, որ այս դառն ու դժվար օրերին

ազգին ձեզ նմաններն են առաջնորդում։ Ձեզնից առաջ ձեր անունն էր այստեղ հասել։

Վեհափառի գովեստի խոսքերը հաճելի էին Արամի համար։ Սակայն այդ պահին նրան տանջում էր իր առաքելության տխուր գիտակցությունը։ Քիչ հետո կպարզվի, թե ինչի՞ համար են նկել, և վեհափառը կզղջա իր խոսքերի համար։ Զղջումն ի՞նչ է որ, կանիծի՞ այն ճանապարհը, որ իրենց բերել է այստեղ... Եվ մինչ նա այս հոգեմաշ ինքնախարազանումն էր ապրում, զորավար Սիլիկյանն իր կաշվե պայուսակից հանեց հեռագրի երկու մեծադիր թերթեր ու անհամարձակ դրեց կաթողիկոսի առաջ։ Վերջինս փորձեց մի հայացքով իմանալ թղթերի էությունը. կկոցած աչքերով վերից վար տնտղեց, հետո էլ սրտնեղած նայեց վեղարավոր գավազանակրին, որը հանդիպման առաջին իսկ վայրկյանից պատի տակ ձգված սպասում էր կարգադրության։ Նա իսկույն դուրս գնաց և բերեց ակնոցը։

Եթե քիչ առաջ վեհափառը հիշած էլ չլիներ մարդու ճակատին նրա հոգին կարդալու հնարավորությունը, միևնույն է, նրա դեմքին նայողն անպայման կգար նման եզրակացության։ Հեռագրերից մեկի առաջին իսկ տողերի վրա նրա լայն ճակատը ճերմակեց, ապա երևացին կապտադալուկ բծեր, որոնք շուտով ծածկվեցին քրտնքի կաթիլներով։ Երկրորդ հեռագիրը չկարդաց։ Երկուսը միասին սեղանի վրա շպրտեց և տեղից վեր կացավ շանթահարի պես։ Քիչ առաջվա հոգնած ու ընդարմացած մարդը չէր այլևս։ Նրա աչքերը վառվում էին, ասես կայծեր պիտի արձակեին։ Երևի հարվածը շատ էր անսպասելի, և սկզբում անելիքը չիմանալով նա անհանգիստ աջ ու ձախ քայլեց վանդակի մեջ նետված առյուծի պես, ապա շեշտակի կանգ առավ զորավարի դեմ և ձեռքը նրա կողմ տնկելով որոտաց.

— Ուրեմն, դուք արդեն որոշել եք թուրքերին հանձնել Հայոց եկեղեցու Մայր աթոռը...

Սիլիկյանը փորձեց հանգստացնել ափերից դուրս եկած վեհափառին։

— Ձերդ Սրբություն, էջմիածնի Մայր աթոռը հանձնելու ոչ մի որոշում էլ չկա։ Պարզապես ձեր անձի և Մայր աթոռի սրբությունների ապահովությունն ունենք աչքի առաջ։ Առջևում ամառ է, և դուք առժամանակ կփոխադրվեք Բյուրականի ձեր ամառանոցը...

— Իսկ Բյուրականի՞ց ուր պիտի փոխադրվեմ,— պայթեց վեհափառը։— Չէ՞ որ էջմիածինն այդքան հեշտությամբ թշնամուն հանձնողի համար Բյուրականը ոչ մի դժվարություն չի ներկայացնի։— Եվ առանց զորավարի նոր պատճառաբանությունների վրա ուշադրություն դարձնելու, շրջվեց դեպի գավազանակիրը, առույգ ձայնով կարգադրեց.— Իմ անունից ասացեք, որ հնչեցնեն բոլոր եկեղեցիների զանգերը։ Հայոց երկրին ու նրա առաքելական եկեղեցուն անագորույն վտանգ է սպառնում։

Այդ նա թափ տվեց հագուստը, կրծքի վրա ուղղեց ադամանդակուռ խաչը, գոհարազարդ գայլսոնը ձեռքն առնելով հաղթաքայլ ելավ վեհարանից և սև սքեմավորներով շրջապատված ուղղվեց դեպի Մայր տաճարը։

Շուտով զողանջեցին զանգերը՝ նախ Մայր աթոռի զանգակատնից։ Սրան էլ արձագանքեց Գայանեի եկեղեցու կոչնակը։ Հռիփսիմեի տաճարի զանգերը փոքր-ինչ ուշացումով, բայց այնպես զողանջեցին, որ վանքի շուրջը ծփացող ժողովուրդը հորձանք տվեց դեպի Մայր աթոռ։

Լուրն իրար տալով՝ մարդիկ ամբողջ Վաղարշապատն ու շրջակաները լցրել էին այնպիսի տագնապով, ասես թշնամին Մայր տաճարի պատերի տակ է արդեն, և միայն նահատակների դիակներով պիտի փակվի նրա ճանապարհը դեպի հայոց եկեղեցու սրբությունները։ Իսկ վեհափառի թափորը վեհարանից մինչև Մայր եկեղեցու դուռն իր կարճ երթի ընթացքում ստվարացավ, դարձավ սեակնած գետ, որ հոսում էր առաջ՝ իր ետևից ու կողքերից քշած տանելով մարդկային հեղեղը։

Մայր տաճարի դռները կրնկի վրա բաց էին կաթողիկոսի առաջ։ Բայց նա դռներով ներս մտնելուց առաջ փարվեց զանգակատան սյուներին, շքամուտքի աջ ու ձախ կողմերի քանդակազարդ քարերը շոյեց-դուրգուրեց դողացող ձեռքերով և նոր միայն քայլեց դեպի սրահը, որի կենտրոնում Իշման սեղանն էր՝ գմբեթի լուսամուտներից իջնող խորհրդավոր լույսերով ողողված։

Բեմի առաջ գրակալներ կային՝ ծանրաբեռնված սուրբ գրքերով։ Բարձրաստիճան հոգևորականները կիսաշրջան կազմած կանգնել էին՝ տեղ ազատելով կաթողիկոսի համար, որը սովորաբար մոտենում էր կենտրոնական գրակալին, բաց էր անում Օրվա ոգուն հարմար գրքի համապատասխան էջը, և այսպես էր սկսվում պատարագը, որի ամբողջ ընթացքում տասներկու

սարկավագներ ձայնակցում էին նրան։ Այս անգամ, սակայն, նա շրջանցեց գրակալները, հոգևորականների կիսաշրջանն ու սարկավագների շարքը, բարձրացավ բեմ և շրջվելով դեպի ծփացող դահլիճը, հուզված խոսեց։

— Ժողովուրդ հայոց, հայրենիքը մեր ծանրագույն վտանգի տակ է։— Դողդողացող ձայնով ասաց այս խոսքը, որպես թե կրակ նետեց դահլիճը և թողնելով, որ կրակն այդ բորբոքվի, տարածվի ծայրեծայր, ինքը հայացքը նկարազարդ առաստաղին հառած՝ ապրում էր այն պահը, երբ հոգին վերանում է, խառնըվում բարձրյալի սրբազան բանակին։ Ժողովուրդը մի շունչ դարձած տնքում էր, հառաչում։ Նույնիսկ նրանք, որ քաջատեղյակ էին ռազմաճակատի վիճակին, գիտեին թշնամու առաջխաղացման ընթացքն ու յուրայինների անկասեցնելի նահանջը, միայն այժմ, վեհափառ հայրապետի ցավագին ահազանգից հետո ամբողջ ահագնությամբ պատկերացրին երկրի վիճակը, և սրտերը լցվեցին դառը կսկիծով։ Նրանք սարսափահար հայացքները հառել էին տաճարի պատերի վրա, և պատերից իրենց էին նայում տագնապած սուրբ հայրերն ու հրաշագործ ոգիները։ Ցավ ու կարեկցանք կար մշուշոտ հայացքներում, որոնք այդ պահին առավել, քան երբևէ, հարազատ էին հայի հոգուն, նրա սրտի թարգմանն էին, նրա անմխիթարական վիճակի սրտամորմոք ու լուռ արտահայտությունը։ Եվ այդ հայացքների մեջ մարդիկ զուր պիտի փնտրեին պատասխանը իրենց տանջող հարցերի, ելքն այն ահազարհուր վիճակից, որի մեջ խորովվում-փոթորիկվում է բովանդակ ազգը։— Ժողովո՞ւրդ հայոց։— Վերացած, երկնային գիների հայացքներից փրկություն աղերսող հավատացյալներին կրկին սթափեցրեց կաթողիկոսի դողդոջ ձայնը։— Թուրքը՝ մեր բանական հոտի արնախում ոսոխը, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության. գալիս է էջմիածնի վրա։ Թուրքը կոտորած ու ավեր փռելով գալիս է, և մեր զորապետներն էլ ուրիշ ելք չեն գտնում այդ աղետից, քան հայոց հայրապետին փախուստի մղելը։ Նրանք Ամենայն հայոց կաթողիկոսին առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր աթոռ էջմիածինը, մեր սրբարանները, հայ ժողովուրդը, հայրենի երկրի վերջին կտորը և առաջարկում են լքել այս բոլորը, սեփական կյանքը փրկել Բյուրականում կամ ուրիշ անմատչելի որևէ լեռնածերպի վրա։

Ահա այսպես, ո՛չ ավել, ո՛չ պակաս։ Կարծես ի՛նքը չէ այն կաթողիկոսը, որին առաջարկում են փրկել իր կյանքը և փրկության ճանապարհն են ցույց տալիս. հեռանալ Բյուրական կամ մի ուրիշ ապահով տեղ։ Իսկ ինքը՝ Գևորգ Սուրենյան-Տփղիսեցին, մտածում է այդ փրկարար առաջարկի մասին, մտածում է հայոց կաթողիկոսի ու նրա բռնելիք դիրքի մասին։ Հայացքը վերևներում է, հրեշտակների հետ, նա պատասխան է հայցում Ամենափրկիչից, Հայոց Լուսավորչից, սուրբ առաքյալների մշտագո և մշտազդոն ոգիներից։

Դահլիճում վա՜ղ-վի՜ղ էին կանչում։ Տառապանքի ու ցավի հառաչանքներն իրար խառնվելով, ալիք տալով հասնում էին եպիսկոպոսաց դասին և խփում վեհափառի քղանցքներին։ Ժողովուրդը մոլորված էր «այո»-ի ու «ոչ»-ի բավիղներում։ Եվ ահա պղնձաձայն զնգաց կաթողիկոսի խոսքը, իբրև տապը մեղմացնող սյուք ու զեփյուռ տարածեց, սփռվեց եռացող մարդկային ծովի վրա։

— Ո՛չ և ո՛չ, հազա՜ր անգամ ոչ։ Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդված Մայր աթոռը։ Ես չեմ հեռանա հայոց առաքելական եկեղեցու օջախից։ Եթե հայոց զինվորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը, չեն կարողանա թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթե ի զորու չեն լինի փրկելու մեր սրբությունները, ապա թող ես նահատակվեմ հենց այստեղ, շեմի վրա Մայր աթոռի, որի գահակալի պատիվն ունեմ մեր սուրբ նախնիների արդար բարեխոսությամբ և Աստծո ողորմածությամբ։

Դահլիճում գոհունակության տնքոցը հորձանք տվեց, ժայթքեց դուրս, որպեսզի տարածվի տաճարի բակում ծփացող բազմության վրա և այնտեղից էլ հորդա Վաղարշապատի փողոցները, գնա ավելի հեռո՛ւ, տարածվի կուչ եկած Հայաստանում ու նրա սահմանների դուրս։

Վեհափառի մոտ կիսաշրջան կազմած եպիսկոպոսական դասը հպարտության հայացքներով ողջագուրվեց ծերունազարդ հայրապետի հետ։ Խրոխտ շտկեցին իրենց մարդիկ, որոնց Մայր աթոռ էր բերել տագնապը։ Նույնիսկ ժպիտներ երևացին պայծառացած դեմքերի վրա։ Իսկ նրանք, որ վեհարանում ուրիշ առաքելությամբ էին ներկայացել, մեկուսի կանգնած որոճում էին իրենց մտորումները, որ տարբեր էին իրարից, տարաբնույթ։ Ահա զորավար Մովսես Սիլիկյանը, որ լիցք առած իր վերադաս-

ներից, հրահրողը դարձավ այս բոլորի, հիմա ամոթից կծկվել էր մեկուսի։ Կուզենար, որ վեհափառն իրեն չտեսներ, և կյանքում առաջին անգամ զգում էր, որ ինքը երկարահասակ է ու ցավում էր դրա համար։ Երևանի պարետ Արշո Շահխաթունին արդեն մոռացե էր, թե ինչի՛ համար է եկել, ոգևորված կաթողիկոսի փայլուն դերով, շատ էր ափսոսում, որ նրա կողքին չէ իբրև երկրորդ հերոսը բեմում։ Նա զարմանում էր նաև, թե ինչպե՛ս է, որ այս մոլորված հանդիսականները ծափողջույններն են մոռացել։

Բարդ ու հակասական էին Արամ Մանուկյանի տպավորությունները. իբրև վերին հրամանն ի կատար ածող՝ այն դիրքից դեմ էր եղել այդ հրամանին և հիմա կարող էր վայելել տապալումի և այնքան բարեհաջող, աներևակայելիորեն գեղեցիկ տապալումի հաճույքը... Սակայն նրա սիրտը կոտրված էր այն գիտակցությունից, որ կաթողիկոսի աչքում ընկավ իր անունը, հավասարվեց լքումի փող հնչեցնողների անուններին։ «Ձեզնից առաջ ձեր անո՛ւնն էր այստեղ հասել»,— գորովանքով ասաց վեհափառ հայրապետը։ Դա Վանի պաշտպանի անունն էր։ Պատահական չէր, որ ասաց նաև, թե պետք է գոհանանք, որ այսօր հայոց ազգին ձեր նմաններն են առաջնորդում... Եվ դո՞ւ, Վանի՛ հերոս, ազգային ազատագրական պայքարի քաջամարտի՛կ, այժմ ի՞նչ առաջարկությամբ ես եկել Մայր աթոռ էջմիածին։ Ո՞ւմ հետ ես դու։ Ո՞ւր ես տանում հայոց ազգը, որ տարտղնված է, կիսակործան, բարեկամներից լքված, թշնամու անդթությանը մատնված։

Արամը տանջվում էր անմխիթար, որ վեհափառն իրեն չասաց նաև այս խոսքերը, չշտամբեց ու չանիծեց։ Արհամարհե՞ց իրեն, թե՞ խոցված էր այնպես խորն ու անբուժելի, որ չէին օգնի ո՛չ կշտամբանքի խոսքերը, ո՛չ անեծքը, ո՛չ էլ խրատը հայրական։ Հուցե նրա հոգում այդ վայրկյանին միայն մի հա՞րց էր գլուխ հանել՝ սրտաքանդ մի հարց, հուսահատեցնող մի հարց՝ «Եվ դո՞ւ, Արամ»։ Գուցե չտվեց այդ հարցը միայն նրա համար, որ պատասխանը կարող էր լինել առավել սրտաքանդ։ Եվ Արամին քրքրում էր, ամենից առաջ, այն գիտակցությունը, որ իր հանդեպ սասանվեց հավատը մեծ հավատավորի։ Եվ սասանվեց ի՛ր մեղքով, Արամ Մանուկյանի՛։

Պատվախնդրությունը հզորագույն խթանն է մեծագործության։ Պատվախնդրությունը ողնաշարն է հոգու, որը կծռմռվի, կկորցնի իր ձևն ու ինքնությունը, եթե այդ ողնաշարը չունեցավ։ Արա՜մ տղա,— ո՞չ թե Արամ փաշա, որպիսի պատվանունով քեզ հաճախ են մեծարում, առանց հասկանալու, որ դու վիրավորվում ես թուրքական այդ կցորդից,— այո՛, Արա՜մ տղա, այն լեռնաստանը, ուր ծնվել ես դու, ուր սովորել ես քայլել, հոգու ամբությունն է սիրում, շիտակությունը հոգու։ Այնտեղ լեռներն ուղիղ դեպի երկինք են միտում։ Հոգ չէ, որ կայծակները նրանց կուրծքն են ճեղքում կամ զարկում են հպարտ ճակատներին։ Դու այդ ինչպե՞ս մոռացար հայրենի լեռնաստանի դասերը։ Ինչպե՞ս լծվեցիր այն սայլին, որը գլորվում է դեպի բացերախ ձորը...

Արամը հոգեպես բդկտվում էր այս մտքերից։ Եղավ մի պահ, որ ինքնադատաստանի ոլորտի մեջ կորցրեց վեհափառի խոսքի տուտը։ Թմրած էր կարծես և արթնացավ մեկ էլ, երբ տաճարն այնպես հոգձանք տվեց, ամբոխն այնպես ծփաց-ալեկոծվեց, ոնց որ իրար էին ձուլվել տաճարի ներսում գտնվողներն ու դրսինները, կամ կապկպված իրար՝ գերմարդկային մի անտես ուժով ցնցվում էին, և նրանց հետ էլ տաճարն էր ցնցվում, իսկ հրեշտակներն ու սրբերն արդեն խառնվել էին ալեկոծվող ամբոխին, գնում էին դեպի կռիվ ու նահատակություն։

— Թուրքը չի կշտացել մեր ժողովրդի արևմտյան կիսով, հիմա էլ այս մի կիսի վրա է եկել անհագուրդ ու մոլեգնած։ Եվ եթե այստեղ էլ հաղթեց, դա կլինի ստույգ վերջը մեր ազգային գոյության։ Մի՞թե մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օջախի կրակը, մեր հավատի ջահը, մեր ազգային գոյի հիմքերը։ Իսկ եթե եկել է վերջը, ապա ինչո՞ւ այն չընդունենք պատվով ու քաջությամբ և ոչ թե ողորմելի զեռունի պես ոսոխի առաջ սողալով։ Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջության օրինակներով, ներկված են նահատակների արյամբ։ Դրանով չի սպառվել մեր արյունը, և չի կորսվել քաջությունը մեր շարքերից։ Դարեր առաջ, երբ Մոհամեդի խաժամուժն արաբական անապատներից եկել, ուզում էր ավերել մեր երկիրը, կտրել մեր լեզուն և մեռցնել մեր հավատը, ոտքի ելան մեր նախնիք։ Նրանց դրոշին գրված էր. «Քաջությամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս, և մի՛ տեսցեն աչք մեր կոխան ոտից լեալ

պղծալից արանց սրբարանս մեր»։ Հաջորդ բոլոր դարերը հայոց ազգն այդպես է ապրել՝ իր ինքնության համար պայքարելով, իր վաղվա համար այսօր մեռնելով։ Եվ որովհետև ով գաղափարի հետ է մեռնում, մեռնում է որպես հատիկը ցորյանի, ապա հատիկի մահով նոր կյանքեր են ծնվում վաղ թե անագան։ Դրա համար է, որ զանգվածային մահերով ու կոտորածներով հարուստ մեր կենսագրությունը չի ունեցել և երբեք էլ չպետք է ունենա վերջին վերջակետ։ Ուրեմն էլ ինչո՞ւ դավենք ապրելու և դոյատևելու մեր ազգային կերպին։ Ինչո՞ւ ազգովին չբարձրանանք, չկանգնենք թշնամու դեմ, որ գալիս է անդրարաքսյան իր թեթև հաջողություններով հղփացած և մեր արյան վերջին կաթիլին ծարավի...

— Պատրա՞ստ ենք ելնելու, վեհափա՞ռ տեր,— գոչեցին դահլիճի տարբեր կողմերից։

Եվ այս ահեղագոչ ձայնե՞րն էին՝ միացան, թե՞ դահլիճը միաձայն, միահամուռ պայթեց.

— Պատրա՞ստ ենք։

Կաթողիկոսը դրան էլ սպասում էր. շունչ առավ մի պահ և, հայացքը ծփացող ամբոխի վրա, աջով ադամանդազարդ լանջախաչը բռնած, երանությամբ շարունակեց.

— Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն։ Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները։ Իսկ դրանք ո՞վ չգիտի։ Բայց վերին նախախնամության բարեհաճ թելադրությամբ՝ համոզված եմ նաև, որ ազգն իմ հայոց անարդ թշնամուն դեռևս չի ասել վերջին իր խոսքը։ Եվ խոսքն այդ պետք է լինի հաղթական...

— Պետք է լինի հաղթակա՞ն... հաղթակա՞ն,— արձագանքեց դահլիճը։ Եվ արձագանքն այդ թնդաց Մայր տաճարի կամարների տակ, ելավ նրա դռներով ու լուսամուտներով, տարածվեց դո՞ւրսը, ամենուրե՞ք։

Էջմիածնից ելած սուրհանդակները, որ սարկավագներ էին, Գևորգյան ճեմարանի սաներ կամ էլ այդ պատվական առաքելությունը կամավոր ստանձնած աշխարհականներ, Արարատյան երկրի բոլոր վանքերին ու եկեղեցիներին էին տանում Ամենայն հայոց կաթողիկոսի հրամանը՝ տիվ ու գիշեր զանգեր հնչեցնել այնքան ժամանակ, քանի դեռ թուրքը գտնվում է Արաքսից այս կողմ։

Արեգակը նոր էր ելնում Սևանի կողմերից և դեռ արեգակ չէր, այլ Գեղամա լեռների թիկունքները հրավառած լավա։ Այդ հրավառությունը տվել էր ելևնքին, անդրադարձել, շաղ եկել Արարատյան նահանգում, որ ասես լվացված էր հազար ջրով։ Գիշերը մեղմ անձրև էր տեղացել, և համատարած կանաչությունը վաղորդայնից այնպես էր շողարձակում, այնպես էր հուրհրատում, որպես թե երկինքը ոչ թե անձրև էր մաղել, այլ ադամանդի փոշի, որի ակնախտիտ փայլերով բռնված էին դաշտերը, թուփ ու ծառերը, լեռ ու սարերը՝ հորիզոնից հորիզոն։

Եվ սուրհանդակները կաթողիկոսական հրամանը թեմական առաջնորդներին ու գյուղական եկեղեցիների տերանց էին տանում մայիսյան այդ թույր ու բույրերով արբեցած։ Տանում էին՝ մտածելով աշխարհը լցված այս անծիր ու անսահման երջանկության մասին, որ հայը չի կարողանում վայելել, քանի որ նրա դեմ նորից մոլեգնել է թուրքը։

* *
*

Երեկոյան դեմ Երևանի ազգային խորհրդի նախագահի առանձնասենյակը մտավ մոտ քառասուն տարեկան, պատկառելի արտաքինով մի մարդ և նախագահ Մանուկյանին խնդրեց իրեն լսել մի քանի րոպե։

Մի քանի րոպեն դարձավ մի ժամի չափ, գուցեև ավելի, որովհետև զրույցը, որ չէր կարելի համարել բարեկամական, սակայն անպայման ընթանում էր փոխըմբռնողության մթնոլորտում, Արամ Մանուկյանին ստիպեց մոռանալ և՛ ժամանակը, և՛ այն անհետաձգելի գործերը, որոնք պետք է ավարտեր հենց այդ օրը։

Անսպասելի այցելուն Արշավիր Մելիքյանն էր, Արամին միայն իր հրապարակած հոդվածներով ու խմբագրած բոլշևիկյան թերթի առիթներով ծանոթ մի մտավորական, որը վերջին տեղեկությունների համաձայն՝ դասեր էր տալիս Երևանի դպրոցներից մեկում։ Սակայն, ինչպես զրույցից պարզվեց, հիմնական զբաղմունքը դարձյալ մնում էր գրական-հրապարակախոսական գործը, որի առանձին պոռթկումները նույնիսկ դուր էին եկել իրեն՝ Երևանյան նահանգի միանձնյա ղեկավարին։

Արդեն բավականին խոսել էին, երբ Արամը գրպանից հանեց մի թերթ և փռեց գրասեղանին։ Թերթի վրա թանաքով նշումներ էին կատարված, և Արամը զրուցակցի ուշադրությունը հրավիրեց նրանց վրա։

— Այստեղ ձեր մի դասախոսության մասին են գրել,— ասաց Ազգային խորհրդի նախագահը։— Ցավում եմ, որ ներկա չեմ եղել։ Բայց լրագրի տեղեկություններից կարելի է պատկերացնել ոգին։ Ասում է. «որպեսզի կովկասյան անարխիան վերջ գտնե, անիկա ըսավ, որ հարկավոր է ճանաչել խորհուրդների իշխանությունը և մեր խզած կապերը վերահաստատելով անոր հետ...»։

— «Զանգի» հարձակո՞ւմն եք ընթերցում,— հանդիսատ միջամտեց Մելիքյանը։

Արամը, թերթը մի կողմ նետելով, վեր կացավ տեղից։

— Հարձակումը հարձակում, սակայն կարևոր է, որ ձեր զեկուցման հիմնական թեզերը շարադրել են, և ընթերցողի համար հասկանալի է, թե ի՞նչ եք ուզում և ինչի՞ համար։

— Այդ զեկուցումը ես կարդացել եմ երկու ամիս առաջ, բայց այսօր էլ նույնը կկրկնեի։

— Դրանով ոչ ոքի չէիք զարմացնի,— Արամի ներսում կարծես եռում էր հակադրության ոգին։

— Ձեզ չհասկացա, ներող եղեք։

— Կուզեք՝ ինքս էլ հրապարակավ նույն բառերն ասեմ ու պաշտպանեմ։ Եվ ոչ թե ձևի համար։

— Բայց գո՞րծը, ձեր գործը, ձեր կուսակցության դիրքն ու քաղաքականությունը։ Չէ՞ որ դրանք այլ բան չեն, քան հրաժարումն այն ամենից, ինչ որ ես եմ պնդում։

— Ես անձամբ Շահումյանի հետ կապվելու և համագործակցելու փորձեր արել եմ։

— Իսկ ինչո՞ւ չեք շարունակում։ Մի՞թե երեկվա անհաջող փորձը թույլ չի տալիս այսօր բռնելու միակ ճշմարիտ ուղին, որը մեր ժողովրդին պիտի տանի դեպի փրկություն։

— Այսօր մեր քթի տակ է թուրքը, և մենք պետք է կռվենք նրա դեմ։ Դրանով, կարծում եմ, կօգնենք նաև Շահումյանին, որի դեմ է գնում մեր ընդհանուր թշնամին։ Ա՛յ, եթե վաղը ևեթ դուք ու ձեր համախոհները մեզ հետ ելնեք այդ թշնամու դեմ, և մենք

միասնական ուժով կարողանանք կասեցնել նրա առաջխաղացումը...

— Մերոնք արդեն զինավառ պատրաստ են գնալու ճակատ,— հպարտությամբ հայտնեց Մելիքյանը։

— Շնորհակալություն դրա համար,— ուրախացավ Աղգային խորհրդի նախագահը։— Թշնամու հետ մաքրենք մեր հաշիվը և նրանից հետո արդեն կխոսենք մնացած հարցերի մասին։

— Բայց չէ՞ որ ձեր ղեկավարները որոշել են հանձնվել։— Արամը ոչինչ չուներ դրան պատասխանելու։ Դրանից էլ ուժ առավ Մելիքյանը։— Նրանք Ռուսաստանից կտրվել են, որպեսզի ընդունեն Թուրքիայի հովանավորությունը։

— Իմ ղեկավարնե՞րը, մեր ղեկավարնե՞րը,— Արամը մարտահրավերը չընդունողի պես խուսափեց ուղղակի պատասխանից։— Ես արդեն ասացի, որ մենք պատրաստվում ենք վճռական ճակատամարտի։ Դանիելբեկ Փիրումյան կա, ճանաչո՞ւմ եք։ Ա՛յ, շա՜տ ուշագիր։ Ճակատամարտի հրամանատարությունն ընտանձնել է այդ Փիրումյանը, և մենք ազգովին պետք է դուրս գանք մարտի։ Պետք է փրկենք մեր երկրի այս վերջին կտորը։ Այս է ահա մեր գլխավոր խնդիրը։ Միակն ու ամենագլխավորը։ Թող բախտը ժպտա մեզ՝ մարտը շահենք։ Նրանից հետո կմտածենք մնացածի մասին։

Մելիքյանը ոտքի ելավ միանգամից, ակամա ձեռքը մեկնեց ղրուցակցին։

— Ուրեմն, ցտեսություն, ցը հանդիպում ռազմի դաշտում։

Արշավիր Մելիքյանի գնալուց հետո Մանուկյանն անցավ իր անհետաձգելի հարցերի լուծմանը, հանձնարարություններ տվեց ենթականերին, ոմանց հետ կարճ ու երկար ղրույցներ ունեցավ առաջիկա անելիքների շուրջ։ Սակայն այնպես էլ չկարողացավ բաժանվել այն մտքերից, որոնք ծնվել էին այդ չսպասված զրույցից։ Այդ մտքերը նրան հանգիստ չտվին նաև տանը, ուր սովորաբար գիշերվա մի քանի ժամերն էր անց կացնում։

Տանը մոմ կար, վառված էր, և նրա աղոտ, իրերը հազիվ խորհրդանշող լույսը երազելու էր մղում։ Ուժասպառ, դրանից էլ խաղաղված քաղաքի անդորրը, մոմի համարյա անիրական լույսը, քիչ առաջ աչքի անցկացրած թղթերի հանդարտեցնող, ինքնահանգստություն բերող տրամադրությունը և մանավանդ զրույցը խառնակ դրության տեր դարձած ու այդ իսկ դրությունից

երկիրը փրկելու ելք որոնող հայրենակիցների հետ,— այս բոլորը միասին և առանձին-առանձին,— Արամին առել էին մտորումների, երազի, ինքնաքննումի ու ինքնարդարացման հորձանուտի մեջ, հանգիստ չէին տալիս։

Անելանելի կամ այդպիսին թվացող վիճակներում մարդ պատեպատ է զարկվում, և նրան օգնության ձեռք են մեկնում անցած կյանքի, պարզապես ծանոթ, լսածից կամ կարդացածից հայտնի դեպքերը։ Նրանք հուշում են մի ելք, փրկության մի դուռ։ Մանուկյան Արամի համար այսպիսի հուշարարի դեր կարող էր ստանձնել սեփական կյանքի փորձը, որ այդ պահին կարծես պատի ետև էր անցել, պահմտոցի էր խաղում՝ թույլ տալով, որ դառը մտորումները սարդոստայնի նման փաթաթվեն նրան ու հանգիստ չտան։ Իսկ այդ մտորումները հիմա նրան խոր ցավ էին պատճառում։

Անկողնում պառկած, աչքերը փակ՝ ինքը շատ էր թույլ, և հակառակ մտքերը, դատապարտման տրամադրությունները հաղթում էին։ Անկողինն այսպիսի դեպքերում դառնում էր պատժարան կամ կլանող ճահիճ, որ վար էր քաշում մինչև խեղդելու աստիճան։

Վեր կացավ անկողնուց, վերստին անցավ գրասեղանի ետև ու, հայացքը սենյակի առարկաներին, սկսեց քննել այն մտքերը, որոնք իրեն հանգիստ չէին տալիս քիչ առաջ։ Հայացքի դեմ իրենց ստվերների հետ երերացող առարկաների մեջ տեսավ զարմանալի մի երկվություն,— իրենք՝ բուն առարկաները, մեկ էլ՝ նրանց ստվերները,— և փորձեց իր կյանքը համեմատել նրանց հետ։ Չէ՞ որ ինքն էլ իր ստվերն ունի՝ այն կենսագրությունը, որ երևում է ահա ճիշտ այսպես՝ աղոտ, երերուն, բայց անպայման երևում է, եթե դիմացինը զինված է լույսով, ճանաչում է իրեն, գիտե, հիշում է Զեյթունն ու Վանը, հայոց աղատագրությանը զինվորագրվածների անանձնական պայքարի պատմության մանրամասներն է իմանում։ Այո՛, ինքը և իր ստվերը։ Պատահում է, որ ինքն իր ստվերը հիշելիս հոգով առույգանում է, լցվում ներքին մի հպարտությամբ և մտածում է, որ զուր չի եղել իր ծնունդը, իր ապրած կյանքը։ Մեկ էլ զգաստանում է, և Վանն ու Զեյթունը, պայքարն ու գալիքի պայծառ երազները թվում են այն վարդագույն հիշողությունը, որ մարդուն հյուր է գալիս իբրև մխիթարություն, ոսկեմշուշ հեքիաթ, սրտապա-

բար հովվերգություն։ «Մի՞թե ես հիմա լոկ այս հիշողությամբ պիտի մխիթարվեմ,— ցավով մտածում էր նա։— Մի՞թե վերջին շրջանում ես արել եմ մի բան, որից պետք է ամաչեմ ինձ ծնած ազգի առաջ, իմ խղճի դեմ հաշիվ տալիս»։

Քիչ առաջ տուն մտնելով նա պեղեց վերջին ամիսներին իր ձեռքի տակից ելած թղթերը։ Դրանք բոլորն էլ գրել ու ստորագրել էր որպես պաշտոնյա և կատարագրեր իբրև անձնավորություն, որ սեփական կարծիքներ ունի, համոզմունքներ ու նպատակներ։ Ո՛չ, երկդիմություն չի խաղացել։ Սակայն ինչո՞ւ մարդիկ դժգոհ են իրենից։

1917 թվականի վերջին, երբ դեռ նոր էր նշանակվել Արարատյան երկրի կառավարիչ, երբ նոր միայն ուրվագծվում էին հայկական կյանքի դժվարությունները, նա սեփական ձեռքով կոչ հղեց ժողովրդին։ Հայ զինվորին, քաղաքային ու գյուղական բնակչությանը փորձեց ոտքի հանել վերահաս վտանգի դեմ. «Հա՛յ զինվորներ,— գրել էր նա,— ռազմաճակատի դատարկվելը, Կովկասի ու հատկապես հայ ժողովրդի ծանր կացությունը, հակահեղափոխական մութ ուժերի գլուխ բարձրացնելու փորձերը մեզ հրամայում են դիմելու ամենակտրուկ ու ամենախիստ միջոցների։ Բայց նախքան այդ ծայրահեղության դիմելը վերջին անգամ կոչ ենք անում ձեզ և պահանջում, որ դուք ձեր քաղաքացիական խղճի պարտադիր թելադրությամբ շտապեք հայրենիքի փրկության գործին ինքնաբերաբար բերելու ձեր մասնակցությունը։

«Քաղաքացինե՛ր. մեր առաջին կոչը ձեզ ենք ուղղում։ Դուք պարտավոր եք առաջին օրինակը տալ...

«Գյուղացինե՛ր. վերջին անգամ դիմում ենք ձեզ, ձեր ամուր հավատքին, ձեր խորունկ հայրենասիրությանը։ Դուք, աշխատանքի զավակներ, դուք ձեր առողջ բնազդով ավելի սուր մրմունջով կզգաք հայ ժողովրդի ցավն ու օրհասը։ Ազգն ու հայրենիքը վտանգի մեջ են։ Ելե՛ք, մեր քաջե՛ր, եկե՛ք, ձեր կրծքները դեմ տվեք ու դարձեք ամուր պատնեշ թշնամու հանդեպ, ա՛յն թշնամու, որ սպառնալիորեն արշավում է հեղափոխության դեմ, ձեր իրավունքների, ձեր հողի ու ազատության դեմ։

«Հայե՛ր. կոչն ամենքի՛դ ենք ուղղում։ Ամենքը պիտի ելնեն զինվոր դառնալու կամ զինվորի դժվարին բեռը թեթևացնելու

համար։ Ամենքը պիտի իրենց մասնակցության բաժինը հանեն, ծերն ու երիտասարդը, հարուստն ու աղքատը, տղամարդն ու կինը, ամե՜նքը, ամե՜նքը»։

Տաղնապալից ու ոգեպնդիչ այս կոչի տակ դրված էր Երևանի հայոց ազգային ու զինվորական խորհուրդների Հատուկ կոմիտեի անունը։ Բայց չէ՞ որ ինքը՝ Արամն էր նրա հեղինակը, նույն այդ կոչով 1886—1898 թվականներին ծնված տղամարդ զինապարտների զորահավաքի եռանդուն կազմակերպիչը։ Իսկ եթե այժմ դեռ հայկական գնդերը կան, և դուք հավատում եք, թե նրանք պիտի կռվեն ու ազատագրեն գերեզմանատեղիի չափ փոքրացած այս հողը, ապա Արամն էլ իր բաժինն ունի դրա մեջ, այս գնդերի ստեղծման ու իրար բերելու մեջ։

Դուք Ռուսաստանին հենվելու ճանապարհն եք ցույց տալիս։ Դուք գիտեք, որ այս աշխարհում հայի փրկության ու ապահովության ամենաստույգ ճանապարհը բարեկամությունն է ռուսի հետ, նրա հովանավորությունը։ Բայց այդ ո՞ւմ եք ասում։ Եթե աշխարհում դեռ կա արդարության ձայնը, թող բարձրանա և դղրդա այն ականջների համար, որոնք խցանված են ճշմարտության դեմ։ Երբ մեր կոչով զինվորյալ գնդերը ճակատ էին գնացել, սակայն մթնոլորտում դեռ օգնության ու հարեհասի աղաղակն էր տիրում, ես նոր կոչ հղեցի մեր մտավորականությանը՝ մեր ազգի միակ այն խավին, որին խնայել էինք նախորդ զորահավաքին, որովհետև նրանց կատարածը թիկունքում միշտ նույն կռիվն է ազգի գոյությունը պահպանելու համար։ «Այժմ հայկական գնդերին հարկավոր են մտավորական շատ անձնավորություններ,— մենք այսպես սկսեցինք մեր երկրորդ կոչը։— Արդ, հայ մտավորականությանն ենք դիմում՝ փորձված ռազմիկներին, հայրենիքին ծառայելու զգացմունքով լցված անձնավորություններին և հորդորում ենք կամավոր գրվել...

«Մենք համոզված ենք, որ ճակատի քայքայումը, հայ ժողովրդի ու Կովկասի գլխին ծանրացած վտանգը և Ռուսաստանի ազատության վտանգվելը շատ մոտ են հայ գիտակից տարրերի սրտին, համոզված ենք, որ նրանք չեն կամենա, թշնամու երիվարների ոտքերի տակ նետել մեծ հեղափոխության փրկարար սկզբունքները, ուստի և վստահությամբ կանչում ենք նրանց հայ ժողովրդի ազատագրության գործին մասնակցելու։

Ամենից առաջ ձեզ ենք դիմում, հա՛յ ուսանողներ ու աշա-

կիլտներ, դուք դեռ կյանքի խճճված պայմաններում չեք մեռցրել ձեր արյունը, դուք դեռ ապրում եք վառվռուն գաղափարների աշխարհում։ Ամենից առաջ ձեր սրտերում է արձագանք գտնելու ժողովրդի փրկության կոչը։

Դիմում ենք և ձեզ, հա՛յ ուսուցիչներ, բժիշկներ, փաստաբաններ, ինժեներներ ու այլ մասնագիտությունների մտավորականներ։ Դուք մինչև այսօր ձեր շնորհները ծառայեցրել եք ազգի խաղաղ կուլտուրական առաջադիմության։ Այսօր, երբ ռազմի շեփորն է հնչում, դուք պիտի դուրս գաք ձեր առանձնասենյակներից և գնաք պատերազմի դաշտ։

Բաց ճակատով ենք դիմում ձեզ, փորձված հայ մարտիկներ, դուք մեր ժողովրդի ամենաանձնվեր պահապանները եք և միշտ պատրաստ եք եղել զոհաբերելու ձեր կյանքը։ Այսօր կրկին ձեր դռներն է բախում հայ ժողովրդի բախտը։

Երեանի հայոց Ազգային ու Ինքնորական խորհուրդների Հատուկ կոմիտե»։

«Մենք համոզված ենք, որ ճակատի քայքայումը, հայ ժողովրդի ու Կովկասի գլխին ծանրացած վտանգը, Ռուսաստանի ազատության վտանգվելը շատ մոտ են հայ գիտակից տարրերի սրտին»։ Մեկը, որ իրար կողքի՞ է դնում այս երեքը՝ հայ ժողովուրդը, Կովկասն ու Ռուսաստանը...

Այսպես ինքնարդարացման, ավելի ճիշտ՝ սեփական դիրքի ճշգրտման ու մեկնաբանման տենդի մեջ Արամը հասավ վերջին տարիների դեպքերին, որոնց մասնակիցն էր եղել ինքը, որոնց ընթացքն ինչ-որ չափով պայմանավորված էր եղել նաև իր հայացքներով ու գործելակերպով։ «Երբ ինձ արդեն Երևան էին ուղարկել՝ Թիֆլիսում համահայկական հարցերը Ռուսաստանից անջատ ու անկախ տնօրինելու համար,— մտածում էր Արամը,— ես նույնիսկ Երևանից էլ աշխատում էի խափանել նրանց այդ արկածախնդրությունը։ Քանի՞ անգամ գլուխ եմ զարկել նրանց հետ՝ հասկացնելու, որ մենշևիկներն ու մուսավաթականները մեզ հետ մի սայլի լծվել չեն կարող, նրանցից յուրաքանչյուրն իր շահերն ունի։ Մուսավաթականները երազելով երազում են այն օրը, երբ կապվելու են օսմանյան թուրքերի հետ և դառնան համաթուրքական տերության գլխավոր սյուներից մեկը։ Իսկ

վրացի մենշևիկների բոլոր խաղերը լոկ մի նպատակ ունեն՝ ստեղծել իրենց միասնական, կոչիկ պետությունը և ինքնուրույն գոյություն պահպանել՝ Գերմանիայի հովանավորության ներքո։ Դրա համար մենշևիկներն արդեն գերմանական կառավարության դիվանագիտական ու արդյունաբերական ներկայացուցիչներին են հրավիրել, նրանց սիրաշահում են հանքային ու տնտեսական հարստությունների համատեղ մշակման հեռանկարներով։ Այս տարամետ նպատակներին լծված սուտ-բարեկամների հետ ընդհանուր ի՞նչ շահեր կարող է ունենալ բոլորի կողմից լքված Հայաստանը։ Թուրքիա՞ն էր հովանավորելու նրա ազատագրական ձգտումները, թե՞ նրա հայաջինջ քաղաքականության դրդիչ ու խրախուսիչ Գերմանիան։ Մենշևիկներին ու մուսավաթականներին հայ դաշնակցությունը նրա համար է անհրաժեշտ միայն, որպեսզի միասնաբար հեշտությամբ կարողանան Անդրկովկասը կտրել Ռուսաստանից։ Հակառակ դեպքում, այսինքն՝ Հայաստանի ու Ռուսաստանի չխզված կապերի դեպքում, ռուսական ներկայությունը պիտի փչացներ Թուրքիայի ախորժակը և ձախողեր նրա նորաթուխ դաշնակիցների ծրագրերը։

Ես գիտեի, որ ռուսներից վերջնականապես կտրվելուց հետո մենշևիկներն ու մուսավաթականներն անմիջապես լքելու են մեզ՝ երեսի վրա թողնելով հայակուլ Թուրքի առաջ։ Թիֆլիսի մեր ջոջերը ևս չէին բացառում այդ խարդավանքի հնարավորությունը։ Սակայն նրանց ամենից առաջ ու ամենից շատ սարսափեցնում էր Մոսկվայում ու Պետրոգրադում հռչակված խորհրդային իշխանությունը։ Նրանք փետրվարին ստեղծված Անդրկովկասյան սեյմում էլ կարողացան անցկացնել մի այսպիսի որոշում. Թուրքերի հետ բանակցությունների գնալ «իբրև Ռուսաստանի անբաժանելի մաս», երբ «Ռուսաստանի տակ հասկանում էին լոկ այն մարզերը, որոնք հակահեղափոխական արկածախնդիրների ջանքերով անջատվել էին հեղափոխական-ժողովրդական Ռուսաստանից։ Այն ժամանա՞կ չէր, որ ես հայ ժողովրդին ուղղված կոչում ցավով նշեցի Ռուսաստանի ազատության վտանգվելն ու հեղափոխության փրկարար սկզբունքների պաշտպանության մեր արբազան պարտքը։ Այն ժամանա՞կ չէր, որ ես մեր կուսակցության առավել իրատես գործիչների հետ ջանում էի Հայաստանի բախտը կապել սովետական իշխանությանը, Սովետական Ռուսաստանին և, Թիֆլիսի մեր պարագլուխներից անկախ, կապվե-

ցի Ստեփան Շահումյանի հետ։ Այն ե՞ս չէի, որ Պողոս Մակինցյանին ուղարկեցի Բաքու՝ Շահումյանի մոտ, որպեսզի նրա երաշխավորությամբ էլ գնա Լենինի մոտ, և ամուր հիմքեր գցվեն սովետական իշխանության ու Հայաստանի նոր բարեկամության համար։ Երբ Թիֆլիսում պատրաստվում էին ընկնելու Թուրքի գիրկը, ես բանախոսներ ուղարկեցի Շահումյանի մոտ, խնդրեցի շտապել նոր Ռուսաստանի ձեռքը դնելու մեր բախտի վրա. «Թե որ մեր Թիկունքում Ռուսաստան չեղավ, կկրկնվի Տասնհինգ թվականը»,— այս էր իմ կարգախոսը։ Մեզ համար ուրիշ ճանապարհ չկա։ Մենք փրկության ուրիշ կոչաններ չունենք։ Մենք պետք է Շահումյանի հետ լինենք և նրա միջոցով՝ Ռուսաստանի հովանու ներքո։ Իսկ Թիֆլիսի մեր գործիչները,— որոնցից յուրաքանչյուրն այսօրվանից արդեն իրեն պատկերացնում է ստեղծելիք Հայկական պետության գահին փառավորապես բազմած,— սարսափում են ոչ միայն Կովկասի խորհրդային իշխանությունից, այլև նրա հայ ղեկավար Ստեփան Շահումյանից։ Նրանք Շահումյանին կոչում են Կովկասի փոխարքա և վախենում են հայ փոխարքայի ստվերի տակ մնալուց։ Նրանք իրենց այս վախը խոստովանում են՝ առանց ամաչելու։ Սիմոն Վրացյանն ասում է. «Մեր ու Շահումյանի ջրերը մի առվով գնալ չեն կարող, որովհետև հենց որ նա երևում է, ժողովուրդն այլևս ուրիշ որևէ մեկին ո՛չ տեսնել է ուզում, ո՛չ լսել»։

Այսօրինակ մտորումներն Արամին տանում էին մի տխուր մտահանգումի. որ այդ մարդիկ հիմա անձնական պատվախնդրության են ծառայում։ Եվ ազգային գործը նրանց հետաքրքրում է այնքան, քանի դեռ չի վտանգվել իրենց անձը... Իսկ այս դեպքում ինքն ի՞նչ գործ ունի նրանց հետ։ Մի՞թե այս էր ամեն ինչի վերջը։ Մի՞թե դրան պիտի հանգեցնեին մանկության վարդագույն երազները, պատանության խանդավառ փնտրտուքը, երիտասարդ օրերի անձնազոհ ճակատումները բախտի քմահաճ խաղերի դեմ, որոնց զոհ գնացին Նիկոլը, Իշխանը, Թորգոմը և մյուս նվիրյալները։ Երբ Շուշվա Ագուլյաց ծիսական դպրոցում իրենց մանկական երազներով էին ապրում, ինքը մտքով Կապան երկրի լեռնաստանում էր, ծննդավայր Ջեյվա գյուղում, արդեն առասպել դարձած Դավիթ բեկի հայրենանվեր հերոսների հետ։ Ի՞նչ անձնական կյանք, երբ ազգի կյանքն է վտանգված,

ի՞նչ երջանկություն այն մարտերից դուրս, որոնցով պիտի ձեռք բերվեր հայրենիքի ազատությունը... Թեմականում նրա այդ համոզմունքներն ամրացան, առավել խոր արմատներ ձգեցին։ Իսկ դարասկզբին արդեն Բաքվում էր, Գանձակում, Կարսում, Սասունում, ամենուր՝ որտեղ հայը նեղվում էր, և պետք էր ինքնապաշտպանություն կազմակերպել։ Մինչև Վանի պաշտպանությունը։ Վա՞նը։ 1915-ի համատարած ջարդի թշվառ համայնապատկերի մեջ եթե կային նաև մխիթարական պահեր կամ պոռթկումներ, ապա դրանց շարքում Վանի ինքնապաշտպանությունն էր, ամենահերոսականը, ամենափառավորը։ Իսկ ինքը՝ Արա՞մը չէր, որ Արմենակ Եկարյանի ու մյուս հայրենանվեր ազատամարտիկների հետ միասին գլխավորեց այդ պաշտպանությունը։

Այն ժամանակ դրսի միջամտություն չկար։ Պարագլուխ կոչվածները Թիֆլիսի տաքուկ անկյուններից գրավոր ու բանավոր կարգադրություններով չէին խառնվում մարտնչողների գործին։ Եվ նրանք՝ Թուրքական սպառազեն, կանոնավոր բանակի դեմ իրենց ազատ ինքնուրույնությունը պաշտպանող վանեցիները, կռվում էին ինքնամոռաց։ Նրանք համոզված էին, որ իրենք պարտություն չունեն, քանի պաշտպանում են իրենց տունն ու տեղը, իրենց աստվածատուր ազատությունը... Եվ երբ մեկ ամսվա համառ պայքարից հետո Վանն աշխարհի դեմ կանգնեց իսկապես հաղթական, վրա հասած կենտրոնական պաշտոնեությունը, տեղական բնակչության ցնծուն հավանության ներքո, Արամին՝ Վանի պաշտպանության հերոսներից մեկին, հռչակեց Վանի ու համայն Վասպուրական աշխարհի կառավարիչ-նահանգապետ։

Հետո ծայր առան տեղահանությունը, գաղթը, նոր տառապանքները։

Թիֆլիսում, դաշնակցական բյուրոյի նիստերին, երբ համոզված էր, որ իր ղեկավար գործակիցները ծուռ են խոսում կամ սխալ վճիռ պիտի հանեն, վիճում էր, պնդում իր տեսակետի վրա... Մինչև որ նրանք սկսեցին իրենց անվստահությունն արտահայտել բացահայտ։ Նույնիսկ իր պակասավոր կրթությունը երեսով տվին. «Դու քո Թեմականի էշը նստած Բեռլինից կամ Ցյուրիխից նժույգով եկածների առաջն ես ընկնում...»։ Բայց Շուշվա Թեմականն ու Բեռլին-Ցյուրիխն ի՞նչ գործ ունեն այստեղ, երբ խոսքը վերաբերում է մի հասարակ հարցի՝ բոլոր կողմերից մերժված, բարեկամներից լքված հայությունը, ոտքի

կանգնելու համար, արժե՞ որ Ռուսաստանի փեշը բռնի թե՞ ոչ։

Առաջին անգամ համառեց։ Մտածում էր, որ նահանջի առաջին քայլին կհետևեն հաջորդները, և այն ժամանակ հրա՞ժեշտ ձեզ, ինքնուրույնություն, սեփական կարծիք, այդ կարծիքն արտահայտելու-պաշտպանելու ազնվամտություն և ուրիշ նման բաներ, որ մինչև այդ նրա համար եղել էին մարդկային ամեն տեսակ արժանավորությունների հիմքը, մարդ արարածի հոգու ողնաշարը...

Սակայն հետո կամաց-կամաց սկսեց մտածել, որ այդ բեռլին-ցյուրիխներից ստացած կրթությունն, ըստ երևույթին, մի շատ կարևոր, շատ վճռական հանգամանք է, որի համը հասկանում են նրա՞նք միայն, ովքեր վայելել են արդեն։

Հիմա մեկ-մեկ հանդիպում է իր հին բարեկամ Գարեգին Հովսեփյանի հետ, որն ուսումնառության ջանադիր տարիներին հիմնավոր վայելել է Բեռլին-Ցյուրիխը, վրայից՝ Հալլեն ու Լայպցիգը, այսօր էլ՝ Ռուսաստանի ու արտասահմանյան գիտական մի շարք ընկերությունների պատվավոր անդամ է։ Հաճախ են բռնվում տաք ու սառ զրույցների։ Սակայն, այսուհանդերձ, չէր պատահում, որ իր Թեմականի էշը մի անգամ էլ նրա այդ բազմաթև ու հրեղեն նժույգի առաջն ընկնի։

Սա՞ ինչպես պիտի բացատրվի։

* *
*

Արամ Մանուկյանն ու նրա ենթակաները գիշեր-ցերեկ ոտքի վրա էին, որովհետև թուրքերը տառացիորեն Երևանի քթի տակն էին հասել, և ռազմաճակատին պետք էին զինվորներ, զենք ու պարենամթերք։ Թաղեթաղ ման էին գալիս, ժողովներ էին գումարում, սակայն ճառ ու զեկուցում կարդալու կարիք չէր լինում, որովհետև, նախ, դրա համար այլևս ժամանակ չկար, ապա ժողովո՞ւրդ... Ժողովուրդն արդեն ամեն ինչ գիտեր, զգում էր ու հասկանում։ Մարդիկ համոզված էին, որ թշնամու հետ բախվելն անխուսափելի է, ուրեմն էլ ինչո՞ւ սպասել, որ նա մտնի Երևան, և նոր միայն զենք առնել այնտեղ պաշտպանվելու կամ պարտվելու համար։

Կոնդի բոլոր բակերը փոքր ու նեղ էին, սակայն մի լայն բակ

գտնվեց և, հարևաններին հավաքելով, ժողովն այնտեղ արին։ Արամի հետ եկածները կանգնել էին տան հաշտում, որ բակից բարձր էր մի քանի ոտք։ Հաշտ-պատշգամբի սյունից սյուն պարան էր կապված, որի վրա լվացքի ճերմակ շորերը թեթև քամուց ֆոֆռում էին ճերմակ դրոշների պես։

Արարատյան երկրի արտակարգ ղեկավարը կարճ ու վճռական խոսք ասաց հայրենիքի վրա կախված մահագույժ վտանգի մասին, զինապարտներին առաջարկեց շտապ ցուցակագրվել՝ ռազմաճակատ մեկնելու համար։ Թիկունքում մնացողներին էլ կոչ արեց ռազմաճակատին օգնել՝ ինչով կարող են։ Նա չմոռացավ հիշել նաև, որ այս պատասխանատու, հայրենանվեր գործի կազմակերպումը տեղերում պետք է գլխավորեն թաղամասերի ընտրյալները։ «Ժողովրդական պատերազմ է,— ասաց,— և չեմ կարծում, թե մեր ժողովուրդն իր կյանքն ու պատիվը պաշտպանելու համար պիտի սպասի, որ դրսից գան, մեջքին հրելով տեղից շարժեն»։

Ժողովականները կենտուկաթուկ ծափ զարկեցին։ Նույնիսկ միահամուռ ոտքի ելնելու, մինչև վերջին շունչը կռվելու կոչեր եղան։ Իսկ երբ շիկացած մթնոլորտում ոգեշնչող խոսք ասելու կարիք կար, բակում կանգնածների առաջին շարքից խոսք խընդրեց տարեց մի կին։ Նա մարմնով առույգ էր դեռ, սակայն դեպի հաշտ քայլեց երկու երիտասարդի օգնությամբ, որոնք թևատակերը մտած տարան, բարձրացրին, մինչև հասան Արամ Մանուկյանի կողքը։ Կինը հազիվ էր ոտքերը փոխում։ Ըստ երևույթին տեսողությունն էլ վատ էր. կարմրած աչքերով նայում էր մի անորոշ կետի, որը պետք է գտնվեր ժողովականների թիկունքում, նրանց գլուխներից վեր։ Ձեռքով ինչ-որ հասկացրեց ուղեկցող երիտասարդներին, և նրանք ուրիշ շորսին էլ հրավիրեցին իրենց մոտ և վեցով նրա աջ ու ձախ կողքերին շարվեցին։

— Սրանք իմ տղերքն են,— ծանր, սարսռազդու ձայնով խոսեց կինը։— Սրանց համար ես և՛ մայր եմ եղել, և՛ հայր, էն պատճառով, որ մեր տան տղամարդը թուրքի կռվում զոհվեց, երբ մեծը հազիվ ութ տարեկան էր։ Ես սրանց պահել, մեծացրել եմ իմ ոտ ու ձեռքի ուժով և աչքերիս լույսով. ունևորների համար լվացք էի անում և հաց էի թխում թեժ թոնրի վրա կռացած։ Հիմի սրանք են իմ ուժը, իմ աչքերի լույսը և իմ հույսը։ Երկուսը պսակված են, թոռներ ունեմ և թոռներիս աչքերով եմ

նայում էս քաղցր ու անարդար աշխարհին։ Էն չորսն էլ կամուս-նանան, տուն-տեղ կդառնան, թե որ աստված կամենա... Իսկ հի-մի, որ մեր երկրի նեղ օրն է, և թուրքը եկել է՝ մեր ազգի օրը սևացնի, ես իմ պահած-պաշտած վեցին էլ կովի եմ ճամփում, ժողովուրդ։ Ես էլ ուրիշ խոսք չունեմ։ Ես չեմ ափսոսում, որ վեցն էլ կովի են գնում։ Իսկ ո՞ւմ հայտնի չի, որ կովում շամիչ ու հալվա չեն բաժանում։— Նա շարժվեց տեղից, և տղերքն իսկույն թևատակերը մտան, փորձեցին տանել, ինչպես կտեղափոխեին աշխարհի ամենաթանկ ու ամենափխրուն մի գանձ։ Սակայն մայրը հանկարծ ազատվեց նրանց ձեռքերից և պառավ արծվի նման թևերը դեպի բակը տարածած, բացականչեց.— Միայն մի բանի համար եմ ափսոսում։ Շա՜տ եմ ափսոսում... որ միայն էս վեցն եմ բերել։ Ա՛յ, էդպե՛ս։

Խոսելու կարիք այլևս չեղավ։ Պահանջեցին ցուցակ անել, և երբ քարտուղարը մի տախտակի կտորի վրա թուղթ դրած՝ ուզում էր ցուցակագրել, մարդիկ նրա գլխին թափվեցին.

— Ի՞նձ գրիր, պուճուր աղբեր։

— Տղայի՛ս, տղայի՛ս,— քիչ էր մնում մատը քարտուղարի աչքը կոխի մի ցնցոտիակիր պառավ։— Որ մերը մեկն է, գնանք, Ջանգվում խեղդվե՞նք։ Մինուճարիս գրիր. Աղամիրանց Աբաս։

— Էգ թուրքի անուն-ազգանունով ի՞նչ ես առաջ ընկնում, քի՛րս,— պառավի վրա հարձակվեց զինվորական մաշված հա-մազգեստով մի կարճահասակ մարդ, որի թիկունքում կանգնած էին նրա երկու պատճենները։

— Աղգանունը չգիտեմ հորս ի՞նչ ցավն է։ Իսկ տղայիս էդ անունը տվել ենք, որ ապրի, հոգուդ մեռնիմ։ Բա նրանից առաջ վեցն իրար հետևից գնացին, ի՞նչ պիտի անեի։

— Ուրեմն, սա քո մինուճա՞րն է,— արդեն ուրիշ հայացքով նրան նայեց զինվորականի հագուստով մարդը։

— Էդպես, հոգուդ մեռնիմ, թող տղիս առաջ ու առաջ գրի։ Էս սուրբ իրիկնամուտից եմ ուզել, որ բոլորն էլ գնան ու հաղ-թանակով, ողջ-առողջ ետ գան։

Վերջապես քարտուղարն ուշադրություն դարձրեց զինվորա-կան հագուստով մարդուն.

— Լսում եմ, ախպերացու։

— Շա՜տ ապրես, ուրեմս, էս ե՛ս, էս էլ երկու տղերքս։

— Անուն-ազգանուն։

— Ես՝ Սիմոն, սրանք էլ՝ Վազգեն և Վարազդատ։ Բոլորս՝ Ճշմարիտյան։

— Հաջո՞ղը...

Նորքում կամավորներին ցուցակագրելու գնացած երկու հոգու քիչ էր մնում ծեծեին։

— Էս ի՞նչ է,— ասացին,— ուրիշ տեղեր Արամ փաշան ինքն է իր ոտքով գնում, իսկ մեզ մոտ էս երկու օրապլականներին է ուղարկել։

Կայծակ Պողոսը, իր տիտղոսի համար անսովոր՝ կարգ ու կանոնի սիրահար մի մարդ, ձեռքը վերցրեց հավաքույթի գործը, ելույթի խոսք տվեց իր ընկերներին ու բարեկամներին, և երբ որ պիտի սկսեին ցուցակագրությունը, ժողովի հրապարակ թափվեցին մի խումբ կերած-խմած երիտասարդներ, որոնք երևի կխանգարեին գործը, եթե Կայծակ Պողոսի ներկայությունը բացակայված լիներ։ Նրան տեսնելով՝ մոտեցան, փորձեցին սրախոսել, աշխուժացնել լուրջ-լուրջ կանգնած մարդկանց։

— Տղե՞րք,— նրանց սաստելով ձեռքը դնելի մատուցերը տարավ կազմակերպիչը։— Մեջտեղ հայրենիքի խնդիր կա, տղե՞րք։ Շանտաժություն անողի մորը կլացացնեմ, հա՞։

— Ի՞նչ ես խոսում, Կայծակ ախպեր, ի՞նչ ես խոսում,— մոտեցավ, սկսեց լեզու թափել խմբի ղեկավարը։— Մենք մեր հայրենիքի թշնամիներ՞ն ենք, թե՞ խորթ զավակները։ Մենք հենց էս սհաթին էլ ցուցակագրվենք։ Քաջե՞ր,— շրջվեց նա և դիմեց իր թասակիցներին,— առաջ եկեք և ձեր աղնիվ անուններն էստեղ շարել տվեք։

Ցուցակագրությունն ավարտելուց աղմուկով ցրվում էին հավաքվածները։ Հանկարծ տղերքը շրջան կազմեցին ու երգեցին.

—Գարահիսար լերան կրծքին
Զինվորն ընկավ վիրավոր,
Կուրծքը պատռած, սիրտը խոցված
Ջար թշնամու գնդակով...

Կայծակ Պողոսը կայծակնային արագությամբ հասավ, տվեց ղեկավարի վզակոթին։

— Տո լածիրա՞կ,— ասաց,— մենք թշնամուն ջարդելու ենք գնում, դու էստեղ լաց ու շիվա՞ն ես գցում։

— Կայծակ ջան, կուզես՝ «Դաշնակցական խումբ» երգենք.— մեղավոր ժպտալով նրան քսվեց գինով երիտասարդը։— Կարևորն էն է, որ երգ ասելով ենք գնում։ Թող թշնամին սարսափի մեր զահմ ու զանդից։

* *
*

Սարդարապատի ուղղությամբ գործող հայ զորքի ղեկավարությունն ինքնակամ ստանձնել էր Դանիելբեկ Փիրումյանը, և այս լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ ռազմաճակատում՝ Իգդիրից մինչև Մեծ Ղարաբիլիսայի մոտերքը։ Հին, կադրային հրամանատարներն ու զինվորները մոտիկից ճանաչում էին կամ տեղյակ էին այդ քաջ ու հնարամիտ զորապետի մարտական ուղուն։ Եվ ոչ ոքի համար զարմանալի չէր, որ հայոց կռվի ամենաճակատագրական պահին, պատերազմի ամենաբժվար, պարզապես անհուսալի կետում առաջ նետվելով՝ կրակն իր վրա է վերցրել մի այդպիսի զորական.

Իրավացի՞ էին նրանք, պիտի արդարանա՞ր նրանց սպասումը՝ դեռ ցույց կտար պատերազմը, որն այդ օրերին իրենց մեծավոր ու մեծ ճանաչող հայ գործիչներն արդեն համարում էին տանուլ տված։

Հայոց բազմադարյան պատմությանն անծանոթ չէր այդ վիճակը, մանավանդ հին ու հզոր թագավորական հարստությունների կորստից հետո։ Բոլոր մեծ ու փոքր պատերազմները տանուլ էին տրվել վերջիվերջո, և բազմապատկվել էին նահատակները, որոնք պետք է անմահանային ազգի պահած գրավոր ու բանավոր պատմություններում։

Սակայն այս մե՞կը։ Մի՞թե վերջինը պիտի դառնար։ Մի՞թե նահատակվելու էր ժողովուրդը, մի ամբողջ ազգային հանրություն, որպեսզի ոչ ոք չմնար՝ հյուսելու նրա վերջին եղերերգը։

Ասում են՝ երբ Հայոց սպարապետ Նազարբեկովին հեռագրով հաղորդել են, թե Դանիելբեկ Փիրումյանը Սարդարապատի տակ անցել է նահանջող հայ զորքի գլուխ և ուզում է ետ մղել թուրքերին, կատաղությունից կապ է ընկել նրա լեզուն, և դողացող շուրթերն արտաբերել են միայն մի խոսք. «Խելագա՞ր է, ձեռ է քաշել իր գլխից, ուզում է ազգի գլո՞ւխն ուտել»։

Խելագա՞ր էր Փիրումյանը։

Եվ ո՞վ էր առհասարակ Դանիելբեկ Աբիսողոմի Փիրումյանը։

Ես պետք է մի փոքր պատմական շրջագայություն կատարեմ դեպի անցյալ դարերը, որովհետև այն տոհմը, որի պատկանելությամբ հպարտ էր ինքը՝ նոր ժամանակի ինքնակոչ դրագետը, իսոր անցյալից է գալիս։

* *

Տասնհինգերորդ դարի կեսին, երբ Հայաստանի մյուս մասերում օտար բռնակալների պարբերական հարվածներից հողմնահարվել-վերացել էին հայրենի պետական կազմավորումները, Արցախ-Ղարաբաղում և հարևան Սյունիք-Զանգեզուրում դեռևս իրենց գոյությունը պահպանում էին այդ նահանգների բնիկ տեր հին հայ նախարարական տների մնացորդները։ Ճիշտ է, մանրացել էին նրանք՝ նվանվելով տարբեր կողմերի վրա տարածված ճյուղերին այն ծառի, որի բունն արդեն գետնի տակ է անցել։ Բայց և այնպես նրանք գոյություն ունեին օտարներից անկախ կամ կիսանկախ վիճակում, պահում-պահպանում էին հայրենի երկիրը, հարազատ ժողովրդի ազգային ու մշակութային ինքնությունն էին պաշտպանում։ Եվ այնքան նշանակալից էր այդ գավառապետությունների վարչա-քաղաքական դեմքը, որ Արևելյան Հայաստանին տիրացած պարսկական արքունիքն ստիպված եղավ հաշվի նստել եղածի հետ՝ ճանաչելով նրանց վարչական դերը, նույնիսկ սեփական զորք պահելու իրավունքը։ Հետագայում, տասնվեցերորդ դարի սկզբին, շահ Աբաս Մեծն այդ հայ գավառապետների հետ իր քաղաքական փոխհարաբերությունները կանոնավոր հունի մեջ առնելով՝ նրանց կոչեց մելիքներ։ Նման տիտղոսով օծեց նաև այն գավառապետներին, որոնց ինքն էր նշանակել Արևելյան Հայաստանի մյուս նահանգներում։ Եվ այսպես արմատավորվեց, կյանքի իրավունք ստացավ հայ մելիքությունը, որի աթոռակալները երեք դար շարունակ, մինչև Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանի հետ տասնիններորդ դարի սկզբին, քաղաքական ու տնտեսական ամենադժվար պայմաններում հայրենի երկրի ու հայ ազգի փրկության

համար ճամփաներ էին փնտրում, հաճախ իրենց նետելով կենաց և մահու ճակատագրական բախումների մեջ։

Մելիքությունը վարչական մի շարք հարցերում ժառանգել էր հին նախարարական-իշխանական կարգի օրենքները։ Այսպես, մելիքական աթոռի օրինական ժառանգորդն էր գերդաստանի ավագ որդին, և մյուսները միայն ազնվական ավատատերեր էին։ Մելիքական զորքի գլխավոր հրամանատարը մելիքն ինքն էր, և տոհմակիցները միայն այդ զորքի մեծ ու փոքր ստորաբաժանումներն էին գլխավորում՝ ըստ այդմ կոչվելով հազարապետ, հարյուրապետ (յուզբաշի)։ Մելիքական տներում զորական ավատատերը հաճախ կոչվում էր նաև բեկ, որ արևելյան լեզուներում նշանակում է ազնվական, իշխանավոր։

Փիրումյան տոհմաճյուղի բունը Վարանդայի Մելիք-Շահնազարյան մելիքությունն էր, որի զինական ուժերի դլուխն ու բուունքն էր հանդիսանում այն՝ մինչև Մելիք-Շահնազար Բ-ի հայրենադավ գործունեությունը տասնութերորդ դարի երկրորդ կեսին։ Շահնազարը մելիքության աթոռին տիրել էր ապօրինաբար, և հարևան մելիքներն իրենց զինական ուժերով քանիցս փորձեցին դաս տալ այդ ինքնակոչին։ Հարևանների անդիջում թշնամանքը դիմագրավելու համար Շահնազարը բարեկամացավ քոչվոր ցեղապետ Փանահի հետ, նրան նվիրեց Շոշի բերդը, որը կես դար առաջ, 18-րդի առաջին քառորդում, անառիկ էր պահել դարաբաղցիների դիրքը թուրք ասպատակիչների դեմ մղված հերոսական պայքարում։

Շահնազար Բ-ին լքեցին տոհմակիցներից շատերը, որոնց հետ էր նաև Փիրումյան տոհմաճյուղի նախնին՝ Փիրում անունով։ Սա ծառայության մտավ Պարսից շահի զորքերի մեջ՝ որոշելով այնտեղ բարձր դիրքի հասնել և այս ճանապարհով սանձահարել Վարանդայի ուխտադրուժ ու հայադավ ինքնակալին։ Սակայն, ինչպես ասում են, մարդիկ ծրագրեր են գծում իրենց համար, իսկ երկնայինը դրանք խառնում է իրար։ Կովկասյան լեռնաշղթայից հարավ են իջնում Ռուսական կայսրության բանակները, և այսրկովկասում շուտ են գալիս բոլոր հին հաշիվները։

Իրենք՝ Փիրումյան տոհմի ժառանգները, պահել են հետաքրքիր ավանդություններ տոհմի վաղնջական նախնիների մասին։ Իրենց հիմքում ճշմարիտ, սակայն արտաքուստ հեքիաթանման այս զրույցներում փառավոր կենսագրություն ունեն լեռնային

Վարանդա գավառի Նախիջևանիկ գյուղից ելած քաջ Փիրումյանները։ Վարանդայի մելիքի զորապետներն էին նրանք կամ ճարտարախոս բանագնացները, որոնք հարկ եղած պահին զենք էին առնում և սրով էին լուծում այն հարցերը, որոնք չէին լուծվել բանախոսությունների ճանապարհով։ Եվ ավանդական հերոսների շարքում կա մեկը, որը ոտք է դրել նաև գրավոր աղբյուրների մեջ՝ իրար կապելով նշանավոր տոհմի ավանդական պատմությունը իրապատում կենսագրության հետ։ Բահադուր կամ Բայանդուր բեկն է դա, որը տասնութերորդ դարի առաջին քառորդում նախ պարսից բանակի զորավարներից մեկն էր, շահական անիրավություններից զզված՝ վերադարձավ հայրենիք, ապա գնաց Վրաստան, բարեկամացավ Դավիթ բեկի հետ, վերջում դարձավ Սյունյաց և Արցախի հակաթուրքական քաջ պայքարի ղեկավարներից մեկը։

Այս Բայանդուրի թո՞ռն էր, թե՞ թոռնորդին՝ Ասրիբեկ, որը, հրապուրված քաջ նախնի Բայանդուրի կենսագրության փառավոր էջերով, եղավ պարսից բանակում, շահի վստահությունն ու համակրանքը նվաճեց իր քաջությամբ և իմաստությամբ։ Սակայն, երբ շահական զորքերն ասպատակության էին ելել իր պապերի հողը, լքեց նրանց, անցավ գեներալ Վալերիան-Ռոստոմ Մագաթովի մոտ։ Ասրիբեկի հաղորդած թանկագին տեղեկությունների շնորհիվ էր, որ ռուսական բանակի հայաշունչ խիզախ զորավարը պարսիկ բռնագրավիչներին քանիցս ջարդ տվեց Շամքորի մոտ, Գանձակի տակ, ապա և բուն պարսկական հողում, ուր Մագաթովն իր խուճապարար ռազմերթն էր իրականացնում։ Պարսկական արշավանքը տեղի էր ունեցել 1828 թ. ձմռանը, աղբյուրների հավաստմամբ՝ հյուսիսային Պարսկաստանի համար անսովոր դաժան ցրտին։ Եվ ահա այդ պայմաններում, մանավանդ անծանոթ երկրի տարածքում, ինչպես դեռևս Բաֆֆին է նշել,— «Ռուսաց զորքերը մեծ արգելքների և անհաջողությունների պիտի հանդիպեին, եթե չունենային մի այնպիսի ճարպիկ և քաջ առաջնորդ, որպիսին էր Ասրիբեկը»[1]։

Նախիջևանիկ գյուղի հին գերեզմանատանը, Փիրումյան տոհմի տապանաքարերից մեկի վրա, նախշազարդ շրջանակի մեջ փորագրված է. «Ազնիւ տապանս է հրաշալի և մեծանուն Ասրի-

---

1 Բաֆֆի, Երկերի ժողովածու, տասներորդ հատոր, Ե., 1959, էջ 364—365։

բեկի բուտքարուշիկ... որ է տոհմէն Փուրումօվի, 1832 թվին»։ Ուրեմն, ռուս-պարսկական պատերազմի հերոս, պոդպորուչիկ Ասրիբեկ Փիրումյանը վախճանվել է 1833-ին։ Նրա ժառանգներից էին՝ «աղնվազարմ Ալահվերդին», Փուրումբեկը («որ է որդի Ասրիբէկի», «որ է տոհմէն Փուրումօվի»)։ Փիրումբեկի որդին էր Աբիսողոմը, որ, հավանաբար, միայն հողագործությամբ է զբաղվել, քանի որ մյուս հարազատները զարդարված էին բեկի (զորապետի) տիտղոսով, և հարկ էր, որ նրանց համար հաց վաստակող ևս լիներ։ Հողվոր ու այլկեցաղ Աբիսողոմը հասել էր քառասներորդ դարը՝ ժառանգ ունենալով Դանիելբեկին։ Աբիսողոմի եղբայր Ղահրամանի որդին՝ Պողոսբեկը, Դանիելբեկի մոտ էր արդեն, գլխավորում էր Հայկական հրաձգային Հինգերորդ գունդը, որ Իգդիրից անցել էր Արարատի ձախ ափը և իր վրա պիտի առներ թուրքական զորքերի գլխավոր հարվածը։

Սարդարապատի ճակատամարտին իր եռանդուն մասնակցությունը բերից նաև Ասրիբեկի մյուս թոռ Նիկոլայի որդին՝ Քրիստափորը, որը Շուշվա թեմական դպրոցն ավարտելուց հետո, 1913 թ. կրթությունը շարունակելու էր գնացել Կիևի համալսարանի բժշկական ֆակուլտետը և Սարդարապատի ճակատագրական օրերին Խնուսի գնդի ավագ բժիշկն էր ու այդպես էր կատարում իր սրբազան պարտքը օրհասի առաջ կանգնած հայրենիքի հանդեպ։

Դանիելբեկը ծնվել էր 1860 թ. և 80-ականներին սովորում էր Պետերբուրգի ռազմական դպրոցում, համարյա պատահաբար ծանոթացավ Լազարյան ճեմարանի ուսանողուհի, Ալեքսանդրապոլի Խալաթյանց հայտնի տոհմի դուստր Երանուհու հետ։ Ծանոթացավ, ճանաչեցին իրար և հասկացան, որ համարյա պատահական այդ հանդիպումը եղել է ճակատագրի մատի ցուցումով։ Առաջին հանդիպումից մեկ ամիս անց տեղի ունեցավ նրանց հարսանեկան հանդեսը, որ կազմակերպեցին Պետերբուրգի հայ մեծահարուստները՝ հիմնականում ալեքսանդրապոլցիներ և շուշեցիներ։ Սեղանապետ էր կարգված Թադևոս ապերը՝ Շուշիի անվանի բարերար Թադևոս Թամիրյանցը, որի մառաններից բերված արնագույն գինիները պլպլում էին ջահերի լույսերի տակ։

Եվ Թադեոս ապերն էր, որ, հարսանեկան սեղանն օրհնելուց

հետո, գինու գավաթը գլխից վեր պահած, ոգեշունչ ու երազկոտ խոսեց.

— Ժողովո՜ւրդ, նախևառաջ աստվածանից եմ ուզել, որ մեր ազգի ամեն մի օրը ծնունդով սկսվի և հարսանիքով էլ ավարտվի...

* *
*

Երանուհին բարձր առաջադիմությամբ ավարտեց Լազարյան ճեմարանը և դասախոսների միահամուռ կարծիքով՝ անպայման իր ծանրակշիռ խոսքը պիտի ասեր հայագիտության բնագավառում։ Դա լինելու էր առաջին կին հայագետի խոսքը։ Սակայն ունեցավ առաջին տղան, որին անվանեցին Միքայել, ապա անմիջապես էլ միանգամից հայտնվեցին զույգ գստերը՝ Սրբուհին ու Մարիամը, դրանց էլ հաջորդեցին Հովսեփը, Ալեքսանդրն ու Լևոնը, և փոքրիկների հոգսերով ծանրաբեռ մայրն այնպես էլ ոչինչ չկարողացավ տալ իրեն սպասող հայագիտությանը։ Գիտության ճանապարհին իրենց լուրջ քայլերը կատարող Խալաթյանց եղբայրները՝ Գրիգորն ու Բագրատը, ճեմարանական ծանոթներն ու բարեկամները միշտ էլ ափսոսանքով էին խոսում նրա վաղեմի շնորհների մասին։ Սակայն ինքը՝ Երանուհին, դա մի մեծ կորուստ չէր համարում, քանի որ հնարավորություն ուներ երեխաներին տալու իր ցանկացած դաստիարակությունը։ Մի անգամ նրա եղբայր Գրիգորը ձեռքի անցկացրեց տասնամյա Միքայելի շարադրությունների տետրերը և բառեր չէր գտնում իր զմայլանքը քրոջն արտահայտելու համար։ Եվ Երանուհին, որ վաղուց, տարիներ շարունակ, համառորեն ու հաստատակամ սպասել էր այդ օրվան, ակնհայտ հպարտությամբ եղբորն ասաց.

— Իսկ դուք խոսքներդ մեկ արած միայն կորուստներն էիք հաշվում։

Գրիգոր Խալաթյանցը՝ ժամանակի հայագիտական մարզի ամենաազդեցիկ անուններից մեկը, որի խոսքն այն տարիներին Լազարյան ճեմարանում հնչում էր իբրև տնօրինական, քեռորդուն առաջնորդեց ճեմարան, այստեղ էլ հովանավորեց առաջին քայլերը... Սակայն քեռու խնդավառությունը երկար չտևեց, և դրա մեղքը, հավանաբար, Միքայելինը չէր։ Երկուսի միջև գոյացած ու օրըստօրե սաստկացող սառնությունն աննկատ չէր կարող մնալ Երանուհուց։ Նա քրոջ գորովալից հորդորներով ու

մոր փաղաքուշ խրատներով շատ ջանաց լցնել այն անջրպետը, որ գնալով մեծանում էր երկու անհունորեն հարազատ մարդկանց միջև, սակայն ապարդյուն։ Եվ մի անգամ էլ Դանիելբեկը, Կովկասյան ծառայությունից արձակուրդի գնալով՝ դարմանքով իմացավ, որ աներձագի ոտքն իսպառ կտրվել է իրենց տնից։ Վշտացած էր Երանուհին, սակայն չգիտեր ո՛ւմ պետք է մեղադրել. եղբո՞րը, որ պահանջում է կույր խնկարկություն իր գիտական ծառայությունների առաջ, թե՞ որդուն, որ բաց աչքերով է նայում աշխարհին և համարձակություն ունի սեր սև կոչելու, ճերմակը՝ ճերմակ։

Դանիելբեկի ու ավագ որդու միջև տիրական էր մի պարզ անկեղծություն, որ միայն լավ ընկերներն են ունենում։ Հայրը միշտ էլ համոզված է եղել, թե տղան մորից ստանում է հոգեկան այն սնունդը, որ նրա կրծքի կաթի պես անարատ է ու սուրբ։

Լազարյան ճեմարանի պրոֆեսորներից միայն հիացմունքի խոսքեր էր լսել։ Ասում էին՝ Միքայելը հմտությամբ տիրապետում է արևելյան բոլոր այն լեզուներին, որ անցնում են ճեմարանում։ Ասում էին՝ ինչ որ ուրիշները մի տարում են յուրացնում, ինքը հաղթահարում է մեկ ամսվա մեջ։ Իսկ Գրիգոր քեռին մի անգամ Դանիելբեկին, գաղտնիք հաղորդելու պես, ասել էր. «Մարդ աստուծո, սա ոչ թե սովորում, այլ կլանում է... վախենում եմ,— ասաց,— վերջն ի՞նչ պիտի լինի...»։

Բայց այս անվերապահ հիացմունքը երկար կյանք չունեցավ։ Մի օր էլ, ամենօրյա սովորական զրույցի մեջ, հիշվեց Միքայելի անունը, և քեռին անմիջապես թթվեց։

— Ի՞նչ պատահեց, Գրիգոր,— անհանգստացավ Դանիելբեկը։

— Եղբայր, որտեղի՞ց է այդ ամբարտավանությունը,— ցասկոտ խոսեց աներձագը։— Ո՛չ մեծ ու փոքր կասի, ո՛չ պատիվ ու անուն։ Պրոֆեսորներ կան, որոնց հեղինակությունը Կայսերական ակադեմիայում անձեռնմխելի է։ Իսկ սա տալիս, կացնով կտրում է դրանց վիզը։ Ո՞վ է տեսել նման բան։

Դանիելբեկը չէր կարող ընդունել այդ նորությունը. ո՞նց թե ամբարտավան։ Տղան ինչպե՞ս է ամբարտավան աճել իրենց տանը, իր կողքին, մանավանդ օրինապահ ու բծախնդիր Երանուհու դաստիարակության պայմաններում։

Տուն հասնելով՝ մտավ տղաների սենյակը, մոր մոտ ուղար-

Լեց պատանի Հովսեփին ու փոքրիկ Լևոնին (Ալեքսանդրը մահացել էր, երբ դեռ կաթնակեր էր) և, առանց նախապատրաստության, հարձակվեց.

— Այս ի՞նչ եմ լսում, տղաս, ինչպե՞ս է պատահել, որ քեռուդ հետ խռովխեթ եք։

Տղան կարծես դրան նախապատրաստված էր։ Առանց իրեն կորցնելու, քմծիծաղով հարցրեց.

— Ձեզ է՞լ հասցրել են արդեն։

— Ի՞նչ են հասցրել, տղաս։ Ոչինչ էլ չեն հասցրել։

— Բայց այդ դեպքում ինչի՞ մասին է խոսքը, հայրիկ։

Իսկապես, ինչի՞ մասին է խոսքը։ Որ տղան ամբարտավա՞ն է։ Որ նրանից հանգի՞ստ չունեն քեռին ու էլի ինչ-որ անառարկելի հեղինակություններ։ Իսկ ինչո՞ւ չունեն։ Տղան ինչո՞վ պետք է անհանգստացներ նրանց։ Ինչի՞ մեջ է արտահայտվել տղայի ամբարտավանությունը։ Կարելի՞ է բացատրել։ Կարելի՞ էր այս հարցերի պատասխաններն իմանալ և նոր միայն դատ բաց անել։

— Գուցե քեռի՞ն է գանգատվել, հայրիկ,— հորն օգնության հասավ Միքայելը։ Դանիելբեկը վերագտավ իրեն, փորձեց հիշել Խալաթյանցի գանգատի էությունը։

— Ասում է...

— Որ ինքը դժգո՞հ է ինձանից։

— Այո՛, և՛ ինքը, և՛ էլի ինչ-որ հեղինակավոր պրոֆեսորներ։

— Հայրիկ,— անմեղ, տղաչական խոսեց երիտասարդը,— միայն ի՛նքը։ Այդ «հեղինակավոր պրոֆեսորներն» էլ ինքն է։ Ձի՞ ասել, որ Կայսերական ակադեմիայում իր տեսակետները հալած յուղի տեղ են ընդունում...

— Հը՛մ։

— Ա՛յ, հենց դա է, որ կա։ Կայսերական ակադեմիայում իր տեսակետները ոտուգլխով ընդունում են։ Հետո՞ ինչ։ Մի՞թե դրանով էլ իր սխալ տեսակետները դառնում են ճիշտ ու վավերական։

— Բայց ի՞նչ տեսակետներ են, որտե՞ղ են արտահայտվել։ Եվ դո՞ւ որտեղ ես նրանց դեմ խոսել։

— Նա իր այդ տեսակետներն ամեն տեղ էլ արտահայտել է, տպագրել է առանձին գրքերով...

— Ա՜, Խորենացու մասի՞ն,— հանգստացավ Դանիելբեկը, և ամբողջ այս զրույցն իր հիմքով ու հետևանքներով դարձավ անհետաքրքիր, նույնիսկ զավեշտական։— Ես էլ մտածում էի, թե պատահել է մի զարհուրելի բան։

— Հայրիկ, հիշո՞ւմ եք. երբ կարդացել էինք նրա գիրքը, ես ձեզ հետ խոսեցի։ Այն ժամանակ ասում էիք՝ դուք էլ նույնն եք մտածում։ Լսարանում նա մի անգամ խոսեց այնպես, ինչ որ Մովսես Խորենացու հեղինակությունն ու վավերականությունը Բաղել է և ամբիոնից վերջին դամբանականն է կարդում։ Սպասում էր, թե ահա կծափահարեն ուսանողները, իսկ ես վեր կացա և ասացի. «Եթե մի հրաշքով Մովսես Խորենացին կենդանանար, ինքն իրեն կարդալաց՝ եր մեծադույն հաչողությամբ»։ «Չի՞ լինի, որ ինքդ նրա փոխարեն արդարացնես»,— զայրացած հարցրեց նա։ Ես ամբիոն բարձրացա և խոսում էի, իր տեսակետի դեմ ծառացող փաստերն էի վկայակոչում. Թողեց ու հեռացավ։ Այս է ամբողջ պատմությունը։ Ես մեղավո՞ր եմ, հայրիկ։ Ես իրավո՞ւնք չունեմ իմ կարծիքն արտահայտելու։ Եվրոպայի հայագետների հորինած «հիմքերը» մի տեղ է հավաքել և նրանց էլ իր անհիմն վարկածները գումարելով՝ սուտ ու կեղծարար է հայտարարում մի հեղինակի, որին կարգին չեն է՛լ հասկացել։ Հասկանան, հետո՛... Դա ի՞նչ գիտություն է։

Դանիելբեկի համար պարզ էր ամեն ինչ, իսկ ամենակարևորը՝ նա ուրախ էր, որ տղան սեփական կարծիք ունի և այդ կարծիքն արտահայտելու համարձակություն։ Ո՞ւր կտանի այդ վեճը, և տղան ուժ կունենա՞ մինչև վերջ կռվելու իր ճշմարտության համար։

— Բայց ի՞նչ պիտի անես, տղաս։ Մեր գործում մի մեծավորի սխալ բացահայտվում է այն ժամանակ, երբ արդեն տրված են լինում զոհերը, երբ նրա ձախողանքն աչքի առաջ է իբրև պարտություն։

— Ձեր գործն ուրիշ է, հայրիկ,— պատասխանեց Միքայելը, և հայրը ներքին մի անհարմարություն զգաց իր վիճակի համար։ Ինչպես էլ արագ են աճում զավակները։ Ահա այսպես. մեկ էլ տեսար՝ դերերը փոխվել են, և որդիդ քեզ խելք է սովորեցնում։ Ուրախանա՞ս դրա համար, թե՞ տխրես։ Ամեն հանդիպումին,— իսկ այդ հանդիպումները քանի գնում հազվադեպ էին դառ-

նում,— որդին երևում էր մի նոր կողմից, ավելի բարձր ու խելոք, ավելի հավասարակշիռ ու լայնախոհ։— Ձեր գործն ուրի՛շ է, հայրիկ։ Ձեր մեծավորի տեսակետն առաջարկվում է որպես անքննելի հրաման և այն պետք է կատարվի առանց առարկության։ Թե դա որքան նպատակահարմար է, դուք ինքնե՛րդ կիմանաք։ Գիտության մեջ ինչպե՞ս կարելի է հրամանով առաջ մղել մի կարծիք, որը չի կարողանում ոտքի վրա կանգնել։

— Եվ դու մտածում ես, թե գիտության մեջ այդպիսի բաներ չե՞ն լինում։

— Ինչո՞ւ չեն լինում, լինում են, հայրիկ։ Մեկն իր դիրքի ու հեղինակության ուժով կարողանում է սխալ տեսակետներ հրապարակել, նույնիսկ նրանց շուրջը նպաստավոր կարծիք է տարածվում... Սակայն գալիս են արդարամիտ մարդիկ, ցույց են տալիս սխալները, ասում են ճշմարտությունը։ Իմ բարեկամներից մեկը,— դուք նրան ճանաչում եք, հայրիկ. Հովսեփ Օրբելին,— ասում է. «Լավ է, որ այս թյուրատեսությունները ի մի հավաքեց քեռիդ։ Մեկն էլ կգա, միանգամայն հոդմացրիվ կանի, և այն ժամանակ Մովսես Խորենացին ավելի կբարձրանա իրեն պաշտողների աչքում»։

...Միքայել Փիրումյանը պատրաստվում էր կռվելու հանուն հազարամյա մեծ ճշմարտության։ Բավականաչափ նյութեր էր հավաքել։ Իրար էր բերել իր խոհերն ու դիտողությունները Հայոց Պատմահոր ազգային ու համաշխարհային նշանակության վերաբերյալ։ Մի ծավալուն գլուխ, որի վերնագիրն էր դարձրել ժամանակի հմուտ հետազոտողներից մեկի դիպուկ հրամայականը՝ «Խորենացին Խորենացիով պետք է հասկանալ»,— պատրաստ էր արդեն... Սակայն սկսվեց մեծ պատերազմը։ Եվ թղթերը գրասեղանի գզրոցների մեջ հավաքելով՝ Միքայելը հրաժեշտ տվեց Խորենացուն, եկավ Կովկասյան ռազմաճակատ։

* *
*

Ալեքսանդրապոլում թուրքերն էին նստած, և դա իր դրոշմն էր դրել ամենուրեք, ամեն ինչի վրա։ Առանց դիմադրության հանձնված քաղաքում ասկյարներն իրենց հրամանատարների ղեկավարությամբ շրջում էին փողոցները և կրակում մարդկանց վրա։

Կարգադրված էր կասկածելիներին գնդակահարել։ Իսկ գողեգող եկած թուրքի աչքին կասկածելի էին երևում բոլոր հայերը, նույնիսկ բակերում տուն-տուն խաղացող մանուկները։

Կողոպուտն սկսվել էր մայիսի 15-ի երեկոյան ժամը 6-ին, երբ մեկ ժամի չափ քաղաքը ռմբակոծելուց հետո թուրքերը ներս էին խուժել և խումբ-խումբ տարածվել թաղերում։ Կողոպուտի ենթարկվում էին, առաջին հերթին, այն քաղաքացիները, որոնք սպիտակ դրոշ էին պարզել նվաճողների առաջ։ Թուրքերը մտածում էին, որ այդպիսիք անպայման մեծ հարստության տեր պիտի լինեն, և սպիտակ դրոշներով ընդառաջ են ելել, որպեսզի փրկեն իրենց ունեցվածքը։ Թե չէ, այն ե՞րբ է եղել, որ ընչազուրկ հայը հանձնվի թուրքին և այն էլ խաղաղության ու բարեկամության ցույցերով։

Վարպետ Գևոյի գինետունը նրանք նվաճեցին ո՛չ միանգամից։ Նախ ստիպեցին, որ իրենց ուրախության համար մեծ թաղարեմ սարքվի։ Գինետուն լցված խաժամուժը վայելեց Գևոյի առատաձեռնությունը։ Այստեղ մեծ մասամբ սպաներ էին, որքան կարողացավ հասկանալ Գևոն։ Նկուղի բոլոր սեղանները շնաճանճերի պարսերի պես զբաղեցրած՝ կերան, խմեցին գոմռալով։ Կշտանալուց-լիկվելուց հետո կարգադրեցին, որ նվագախումբ էլ բերվի։

Մինչև նվագախումբը գար, նրանցից մի քանիսը թափվեցին խոհանոց, անկյուններն էին ստուգում։ Նույնն արեցին նաև մառանում։ Տակառների արանքներն էին նայում, դատարկ տակառներն էին շուռ տալիս։

— Բաշընա գոնում, ի՞նչ եք փնտրում, ի՞նչ եք ուզում, չի՞ լինի ասեք, իմանամ,— իրենց լեզվով հարցնում էր Գևոն, որի ոտքերն արդեն դողում էին։

— Կին ծառաներիդ որտե՞ղ ես թաքցրել, ի՛թ օղլու,— մռռալու պես հարցրեց փնտրողներից մեկը։

— Ինձ մոտ կին ծառայող չկա, ջանընա՛ ղուրբան,— վիզը ծռած փորձեց համոզել Գևոն և մի ապտակ կերավ։

Հազիվ էր ոտքի վրա կանգնում։ Քթի արյունը սրբելով բողոքեց.

— Բա ասված կընդունի՞ ձեր արածը...

Եվ թուրքը հարձակվեց՝ նրա վրա շպրտելով գինու պղնձե չափը։

Գևոն գլուխը փախցրեց, և չափը գնաց, փշրեց նկուղի ցածրիկ պատուհանի ապակին։

— Քո հավա՛տը... Գյավուր շո՛ւն...

Մեծավորների համար Գևոն սեղան էր դցել սրահի անկյան փակ խցում։ Վազեց նրանց մոտ և արյունլվա գանգատվեց մեծավորների մեջ իրեն ավագի պես պահողին.

— Փաշա, ջանընա դուրբա՛ն օլում, բու նա՞ զուլում դրը։

— Ադա, այդ ի՞նչ թամաշա է,— հոհռալով հարցրեց փաշան։— Հո չե՞ս կռվել տղերանց հետ։

— Փաշա, ծեծեցին ու հավատս հայհոյեցին։ Բաշընա դոնում, փաշա։ Կարգադրիր, որ իրենց կարգին պահեն, բա էսպես ո՞նց կլինի։

Փաշան դռան տեղ ծառայող վարագույրի փեշը մի կողմ քաշեց ու դեպի սրահը գոռաց.

— Այ գյադալար, է՛յ։— Սրահի աղմուկը դադարեց, և փաշան մատը թափ տվեց ասկյարների վրա.— Ո՞վ համարձակվեց այս պատվարժան մարդու հավատը հայհոյել։ Ես ձեզ չե՞մ ասել՝ ի՞նչ պիտի անեք, քյոփայօղլուլար։— Եվ դառնալով Գևոյին՝ հարգալից ասաց.— Դե, գնա՛, հիմա քեզանից ներողություն կխնդրեն։

Սրահում հանկարծ թափվեցին Գևոյի վրա և, բերանը փալաս խցկելուց հետո, քարշ տալով տարան մառանը...

Եկան նվագախմբի տղերքը և Գևոյին իր տեղում չգտնելով ուզում էին վերադառնալ։ Մի հաստամարմին ասկյար թիկունքով ծածկեց դուռը, թե.

— Մեզ համար եք եկել, պիտի նվագեք։

Եվ տարակուսած նվագածուներն իրար նայելով ճարահատյալ նստեցին իրենց սովորական տեղերում, հարբած խուժանի համար նվագեցին թուրքական երգեր ու պարեր։ Սկզբում ոռնալու պես երգում էին իրենք՝ թուրքերը։ Հետո ստիպեցին, որ նվագախո՛մբը երգի։ Խմբի ավագը, որ դափ զարկողն էր, կանգնեց, թե.

— Բիլմանամ, վալլա՛հ, թուրքջա բիլմանամ։

Ասկյարներից մեկը հանեց ատրճանակը և երեք անգամ կրակեց նրա վրա։

— Ո՞նց թե բիլմանամ, քյոփայօղլու,— ասաց նա և նստեց։

Թառ ու քամանչա նվագողները, տեսնելով իրենց ընկերոջ

գետին փովելը. հարայ տվին, բողոքեցին, աղաղակով դիմեցին սպաներին, որոնք հարբած իրենց երգերն էին ոռնում։

Եվ սրանց էլ տեղնուտեղը լռեցրին։

Քաղաքում տագնապ էր, և խորհրդավոր, ծանր լռությունը խախտում էին հատուկենտ կրակոցները տարբեր թաղերում։ Լռությունը խեղդում էր մարդկանց։ Կողոպտվածներն իրենց բախտն էին լալիս, չկողոպտվածները սարսափով թուրքերին էին սպասում ամեն րոպե և, չնայած ունեցվածքի լավագույնն արդեն թաղել-հորել էին հուսալի տեղերում, հույս չունեին իրենց համար, որովհետև գիտեին նաև, որ թուրքը չի հավատում, թե չունևոր հայ էլ կարող է լինել։ Ուրեմն կյանքը փրկելու համար չունևորն էլ պետք է ունևոր դառնար։

Գիշերը տեղացիներից ոչ ոք չէր համարձակվի փողոց դուրս գալ։ Լուսադեմին երկաթգծի աշխատող Անդրեյ Վինոգրադովը, աշխատանքային հերթափոխի գնալիս, Գևոյի գինետան առաջ, հենց պատի տակ տեսավ մերկ ու արնաշաղախ մի մարմին, որ փռված էր մեջքի վրա։ Կողքին դրված էր Գևորգի գլուխը։ Իսկ մարմինն այնպես էին փռել, որ երևա... Մորթելուց առաջ թլպատել էին։

Ճանապարհին Վինոգրադովին միացան աշխատանքի ընկերները, որոնք մռայլ էին ու մտահոգ։ Նրանցից յուրաքանչյուրն իր հետ բերել էր թուրքի վայրագությունների նորանոր գույժեր։ Մեկը պատմեց, որ Աստվածածին եկեղեցու տերտերին կախել են զանգակատանը՝ հենց զանգի լեզվակից, որովհետև այդ հոգևորականը համարձակվել է երեկոյան ժամերգության համար զանգ հնչեցնել։ Մի ուրիշը բերդի մոտ տեղի ունեցած կոտորածի մանրամասներն էր պատմում։ Բերդապահ մի ջոկատ, արդեն հրաման ստացած լինելով դադարեցնել հրաձգությունը, կամավոր հանձնվել է ներս խուժած թուրքերին։ Շարք են կանգնեցրել, հանել են տվել շորերը, ստիպել, որ մերկ-մերկ փորեն իրենց գերեզմանի խրամատը, հետո ասել են՝ պառկեցեք, և կոտորել են մինչև վերջինը։

— Հանձնվողին սպանում են, սպիտակ դրոշ պարզողին սպանում են... Ի՞նչ պիտի անել, որ լավ լինի, հը՞,— տրտնջում էր տարեց մի երկաթուղային, որի դեմքը մրոտ էր, սև, և միայն ատամներն ու աչքերն էին փայլում առավոտյան աղջամուղջի մեջ։

— Ի՞նչ պիտի անել, մի՞թե չդիտես,— իր հզոր բասով պատասխանեց Վինոգրադովը, որի սիրտը վառվում էր անզոր կատաղությունից։— Չգիտե՞ս ինչպես պիտի վարվել թշնամու հետ։ Պիտի սպանե՞լ։ Կարծես Թուրքին նոր ես ճանաչում և նոր պիտի որոշես՝ ի՞նչ անել, երբ նա գալիս է քեզ ոչնչացնելու, քո երկիրն ավերելու։

— Հեշտ բրդում ես, էլի՜, Անդրի,— դառնացած խոսեց մրոտը։—Կարծես կարող էինք սպանել, չսպանեցինք։

Կայարանը եռում էր Կարսի կողմից բերված զորքերով։ Աղմուկ էր, իրարանցում։ Հրամանատարները գոռգոռալով կարգադրություններ էին անում։ Զինվորները սոված գայլերի պես ալ ու ձախ էին ընկնում և, որսալու բան չգտնելով, հայհոյում էին գյավուրներին։ Նրանց մեծ մասը ռուսական զինվորի հագուստ-կապուստով էր, որովհետև Թուրք զինվորությունն իր մերկությունը ծածկել էր Էրզրումում, Սարիղամիշում ու Կարսում ձեռք ձգած ռուսական պահեստների առատ պաշարներով։

Ռուսական համազգեստը խաբում էր քաղաքի հին տերերին։ Մտածում էին՝ չլինի՞ մերոնք վերանվաճել են Ալեքսանդրապոլը։ Մեկ էլ մոտենալով տեսնում էին Թուրքի մռութը և մրոտներում թքոտում էին։

Քաղաքի ելումուտը փակ էր մայիսի 15-ի—լույս 16-ի գիշերվանից։ Դուրս գալու փորձ անողները գնդակահարվում էին ուռանց հարցաքննության։ Իսկ կայարանը, դեպոն, հարակից արհեստանոցները մնացել էին անվնաս, ինչպես որոշված է եղել երկկողմ պայմանագրությամբ։ Հիմա նրանք գործում էին անխափան, և անխափան պահողներն էլ նախկին աշխատողներն էին՝ հայեր, ռուսներ։

Անդրեյ Վինոգրադովն այն առավոտյան տեսածից գազազած՝ մտածեց ընկերների հետ խոսել, պայմանավորվել, որ թողնեն, հեռանան այս դժոխքից։ Մեկ էլ հիշեց գնդապետ Սամարցյանի խոսքը. «Մենք չպետք է ձեռքից տանք երկաթգիծը»։

— Լա՜վ, ձեռքից չտվինք երկաթգիծը, բայց ի՞նչ կարող ես անել, երբ տնօրենը Թուրքն է, և դու պարտավոր ես ծառայել նրա բոլոր կամայականություններին։

Ալեքսանդրապոլի կայարանում արդեն քանի՜ տարի մեքենավար աշխատող Անդրեյ Վինոգրադովն իր աշխատանքային ընկերների համար Անդրեյ էր, նույնիսկ Անդրանիկ։ Եվ ինքն էլ

իրեն շոյված էր զգում Անդրանիկ անունով, որովհետև գիտեր, որ հայի համար այդ անունն ու անվան տերը նվիրական են, ինչպես քրիստոնյա հավատացյալի համար սուրբ Գևորգ զորավարը։

Մի անգամ,— դա նույն տարվա գարնանամուտին էր,— իր գնացքով Թիֆլիս պիտի հասցներ Անդրանիկ զորավարին։ Ալեքսանդրապոլում իրեն տարան, ծանոթացրին մեծ անվանակցի հետ։ Ասացին.

— Այս ռուսն է ձեզ Թիֆլիս հասցնելու, զորավար։ Անունն էլ Անդրանիկ է։

Անդրանիկը մտերմորեն, պինդ սեղմեց Վինոգրադովի ձեռքը և ուրախ պատասխանեց։

— Մի գնացք, որի վարողը ռուսն է, անվթար ու անխափան տեղ կհասնի։

Միջահասակ զորավարի կողքին կանգնած հսկա Վինոգրադովը ճնշվում էր իր հասակի համար։ Եվ մի քիչ խոնարհված փորձեց սիրալիր խոսքի պարտք չմնալ, ասաց.

— Մի գնացք, որ ձեր նման փառապանծ մարդու է տանում, իհարկե, անխափան տեղ կհասնի։

Թարգմանելու կարիք չկար։ Զորավարի խաժ աչքերը շողացին բարությամբ։ Եվ Վինոգրադովը, հիացած նրա առնականորեն գեղեցիկ դիմագծերով, մտածեց, թե արարիչն ինչպես գիտե մեծ անհատականության համար ստեղծել անթերի կաղապար։

Անդրեյ Վինոգրադովն ինքն էլ արարչի կողմից տուժվածներից չէր։ Բարձրահասակ, թիկնեղ, դիմագծերը կանոնավոր, կապույտ աչքերի արծվենի հայացք... Եվ այս բոլորի հետ ներդաշնակ էր նրա փափուկ բարությունը, որ, հիրավի, ընտանեկան բարձր դաստիարակության արդյունք էր։ Ծնվել էր Կազանում, տոհմիկ մտավորականի ընտանիքում։ Ուսուցիչ էր եղել պապը, իսկ հայրը պատմաբան էր, Կազանի համալսարանի պրոֆեսոր։ Հորն էր պարտական այն բուռն սիրով, որ ուներ հին պատմության, ժողովուրդների հանգամանալից կենսագրությունների հանդեպ։ Գիմնազիան ոսկե մեդալով ավարտելուց հետո պետք է ուսումը շարունակեր համալսարանում, սակայն զինվորական ծառայության կանչվեց։ Երբ զորացրվելու ժամանակն էր, սկսվեց մեծ աշխարհամարտը, և համալսարանական ուսումը հետաձգվեց անորոշ ժամանակով, գուցեև առհասարակ մնաց անիրականա-

նալի երազանք, որովհետև բանակում դարձավ երկաթուղային ծառայող, ամենահմուտ մեքենավարներից մեկը Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա գծի վրա։ Բնակվում էր Ալեքսանդրապոլում և ծնողներին գրած նամակներում հիացմունքով պատմում հայկական քաղաքի բնակիչների, նրանց կենցաղի ու բարքերի մասին։ Հայրը նամակներում առանց տագնապի հաճախ հարց էր տալիս, թե արդյոք հայուհիները չեն նրան մոլորեցրել իրենց թուխ աչքերի մշուշներում, և զգուշացնում էր, որ բոլոր դեպքերում չմոռանա Կազանը, հայրական տունը. չէ՞ որ ինքն այդ տան միակ արու զավակն էր։

Անդրեյը հաջորդ նամակներում անպայման շրջանցում էր հոր կես-կատակ, կես-լուրջ հարցը և հիշեցնում, որ ինքն այս ժողովրդի հանդեպ ունեցած խոր հարգանքի ու հիացումի համար ևս, առաջին հերթին, իրեն՝ հորն է պարտական։ «Հիշո՞ւմ եք, հայր,— գրել էր մի նամակում,— դուք ինչպիսի հպարտությամբ էիք նշում, որ ձեզ դաս է տվել Ստեփանոս Նազարյանց հայը՝ ամենալուսավոր ու ամենաազնվական այն մարդանցից մեկը, որոնց դուք բախտ եք ունեցել ճանաչելու ձեր կյանքի ճանապարհին։ Հիշո՞ւմ եք, հայ վաճառականների ազնիվ ու խիզախ արարքը, որի մասին գրված է Կազանի հին ժամանակագրության մեջ, և դուք կարդալով բացատրում էիք ինձ ու պատվիրում երբեք չմոռանալ, քանի որ երախտագիտությունը մարդկային բնավորության հիմնաքարը պետք է լինի։

Եվ Կազանի հայ վաճառականների արարքն ինքն էլ քանի՜ անգամ պատմել էր Ալեքսանդրապոլի իր ծանոթներին ու բարեկամներին։

— Իվան Ահեղի ժամանակներում է եղել,— պատմում էր Անդրեյ Վինոգրադովը,— տասնվեցերորդ դարի կեսին։ Ռուսական հողերի միարար թագավորը շատ էր մտահոգված իր երկրի հարավային սահմանների համար, որովհետև Կազանում բուն դրած թուրք-թաթար խանը երբեք հանգիստ չէր տալիս հարևան ռուսական իշխանություններին։ Եվ խանի զնդաններում էլ ցմահ տառապանքի էին դատապարտված ավելի քան հարյուր հազար ռուս գերիներ։ Իվան Ահեղի բանակը պաշարում է Կազանը։ Խանն իր քաղաքի բերդապարիսպների պաշտպանական կետերն է քշում ամբողջ բնակչությունը, նույնիսկ բոլոր այն օտարներին,

որոնք պատահաբար գտնվում էին այս վաճառաշահ քաղաքում։ Այս օտարների հետ էին նաև հայ վաճառականները։— Պատմելիս Անդրեյ Վինոգրադովի աչքերը վառվում էին ներքին կրակից։— Հայերին, իբրև ռազմական գործում հմտություն ունեցող մարդկանց, խանի գործակալները տանում են բերդի թնդանոթների մոտ և կարգադրում են կրակել։ Հայերը հրաժարվում են կտրականապես, պատկերացնո՞ւմ եք, հրաժարվում են։ Այս ժամանակ խանի մարդիկ երկաթե շղթաներով նրանց կապոտում են թնդանոթներին և թիկունքներին թրամերկ զինվորներ կանգնեցնելով՝ մահվան սպառնալիքի տակ ստիպում են կրակել։ Ի՞նչ անեին հայ վաճառականները։ Պիտի կրակեին։ Եվ կրակում են, բայց այնպե՛ս, որ արկերը պայթում են ռուսական զորքերից այն կողմ կամ էլ նրանց դիրքերին չէին հասնում, որպեսզի ոչ ոքի վնաս չտան...

— Խելք են ունեցել, հա՞... մե՞րդ չմեռնի, հա՞յ,— խանդավառ արձագանքում էին ունկնդիրները։— Հենց էդպես էլ ձեր պատմության գրքերում գրվա՞ծ է։

— Գրված է։ Գրողն էլ եղել է ականատես մի հոգևորական,— և իր ասածի ճշտությունը հաստատելու համար Անդրեյն արտասանում էր այդ ականատեսի ժամանակագրության ամենակարևոր հատվածը.— «лестно и худо бияху и не улучаху, аки не умеющи, и ядра через все перепущаху или не допущаху, едва кого убиваху».

— Ա՛յ Անդրանիկ, էդ է՞լ ռուսերեն է։

— Ռուսերեն է, իհարկե, մեր հին ռուսերենն է, ինչպես որ ձեր գրաբար լեզուն։

— Վա՛յ, մերդ չմեռնի, գրաբա՛ր,— հպարտանում է հայ ունկնդիրը։— Որ բան էլ չես հասկանում, մեկ է, սիրտդ հետը խոսում է, և մարմինդ փշաքաղվում է, ինչ որ մեր անցյալներն իրենց պատանքը շալակներին եկած-խոսելիս լինեն մեզ հետ։

Զորավար Անդրանիկին Թիֆլիս տանելիս Վինոգրադովը նրա հետ մի փոքր զրույց էր ունեցել և հաճախ էր հիշում ոչ առանց հպարտության։

— Մի հատ կոնյակ ունեի՝ Շուստովի արտադրության։ Լսել էի, որ զորավարը կոնյակ է սիրում։ Մեքենայի ղեկը տվի օգնականիս, կոնյակս առած գնացի զորավարի կուպեն։ Մտածում էի, որ ապրել կա ու մեռնել կա։ Ո՞նց կարելի է ամենաժողովրդական զորավարին այսքան մոտիկ լինել ու մի քանի խոսք չփո-

խանակել հետը, մեկ էլ ինձ ե՞րբ է բախտ վիճակվելու։ Գնացի, հենց այդպես էլ ներկայացա։ «Զորավար,— ասացի,— ներեցեք, որ ուզում եմ ձեզ անհանգստացնել...»։ «Ա՜, ռո՞ւս,— ասաց,— խնդրեմ, ներս արի, ի՞նչ է պատահել»։ «Ոչինչ էլ չի պատահել, զորավար։ Ուզղակի համարձակություն բռնել է, որ գամ ու ձեզ հետ մի քանի խոսք փոխանակեմ։ Այս Շուստովի կոնյակն էլ,— ասացի,— բերել եմ, որ ձեզ հետ բաժակ բարձրացնեմ»։ Անկեղծ, ամբողջ երեսով մեկ ծիծաղում է։ Աչքերից բարություն ու անկեղծություն են ճառագում։ Օ՛խ, ի՜նչ աչքեր էին, ի՜նչ հայացք։ «Համեցի՛ր,— ասաց,— ռուսի անմիջականությունը շատ կսիրեմ»։ «Իսկ իրե՞ն»։ Հարցական, մի քիչ զգաստացած նայեց։ «Ռուսին, իրեն՝ ռուսին չե՞ք սիրում»։ Նա ասաց. «Իսկական ռուսին սիրում եմ ու հավատում։ Շա՜տ»,— լրջացած պատասխանում է և նայում երկու ուղեկիցներին, որոնք, երևի իմ անսպասելի հայտնությունից զարմացած, լուռ հետևում են սկսված զրույցի ընթացքին։

Այս խոսքից հետո վեր կացավ, աջ ու ձախ քայլեց վագոնի միջանցքում։ Վերջը եկավ, նստեց, բաժակ բարձրացրինք... Զորավարը խմեց հասարակ ժողովրդի կենացը, աշխատավոր, տանջվող ու շարքաշ ժողովրդի՝ ի՜նչ ազգի էլ որ պատկանի։ «Աշխարհը նրա ուսերին է դրված,— ասաց,— աշխարհը նա է տանելու դեպի մեծ լույս ու ազատություն, թե որ տանելու լինի։ Ա՜յ, Ռուսաստանում ժողովրդական պետություն է ստեղծվել, և նրա շորշոփներն արդեն Կովկասյան լեռնաշղթան ճեղքել, հասել են Բաքու։ Թող զորանա, արմատավորվի այդ իշխանությունը։ Թող Շահումյանի բազմազգ իշխանության գլխից ցրվեն թշնամական ամպերը, որ այսրկովկասյան ժողովուրդները նրա հովանու տակ ազատ շունչ քաշեն։ Հիմա մենք մի խնդիր ունենք,— ասաց,— թիկունք դառնանք Շահումյանի իշխանությանը և միասնական ուժերով ետ մղենք թուրքական բռնությունը... Մինչև որ Ռուսաստանը, նոր Ռուսաստանը ոտքի կանգնի և իր հաշտարար ձեռքը մեկնի Կովկասյան լեռներից այս կողմ։ Այս է մեր հասկանալիքը։ Այս է մեր այսօրվա անելիքը, մեր փրկության միակ ու ստույգ ճանապարհը»։

* *
*

Այն առավոտ Կարսից եկած ապրանքատար գնացքը երեք մի քանի հազար ասկյար բերեց Ալեքսանդրապոլ։ Եվ ասում էին՝ էլի՛ են գալու։ Վինոգրադովին ծանոթ էր Թուրքերի ծրագիրը։ Նա ռազմաճակատի շտաբում բարեկամներ ուներ, և նրանք էին ասել, թե Թուրքերը մեր երկաթգիծը պահանջում են, որպեսզի շտապ կարգով զորք փոխադրեն Ջուլֆա, որտեղից մի օրվա ընթացքում զորաշարժով կհասնեն Ատրպատական և այնտեղ կփակեն Բաքվի ու Միջին Ասիայի վրա գնացող անգլիացիների ճանապարհը։ Սակայն իրականում ուրիշ էր Թուրքերի նպատակը։ Անգլիացիների հետ բախվելու համար ինչո՞ւ պիտի Կարսի վրայով Ալեքսանդրապոլ գային, այստեղից էլ հասնեին Ջուլֆա, ապա ոտքով՝ Ատրպատական։ Անգլիացիների ռազմերթը կասեցնելու ամենակարճ ուղին հարավով էր անցնում, Վանա լճի մոտերքով։ Այնտեղ նրանք մեկ-երկու օրվա ընթացքում կհանդիպեին անգլիական զորքերին և կլուծեին իրենց հարցը, եթե իսկապես դա՛ էր հարցը։

Բայց ուրիշ էր Թուրքերի նպատակը. նրանց դեպի Ջուլֆա էր քաշում Բաքուն։

— Ա՛յ հեր օրհնած, դե այդպես ասա, էլի՛,— Վինոգրադովի այս կարծիքի վրա բացականչեց մեքենավար Սերոբը, որ երիտասարդ երկաթուղայինների մեջ աչքի էր ընկնում իր կրակոտ, մարդամոտ բնավորությամբ և Վինոգրադովի մտերիմ ընկերն էր։— Նրանք էդ անգլիացիների անունը մեջտեղ են գցել, որպեսզի չխրտնեցնեն մեր մեծավորներին։ Մինչդեռ աչք են տընկել Բաքվի վրա, որտեղ Ստեփան Շահումյանի կոմունան է։ Ուրեմն, Թուրքը մտածում է, թե սրանք, ինչ էլ որ լինի, իրենց հայ Շահումյանի թիկունքում պիտի կանգնած լինեն։ Չէ՞ որ կոմունան պաշտպանող զորքի մեջ հազարավոր հայեր կան։

— Վո՛,— ուրախացավ Վինոգրադովը,— գլուխդ լավ է գործում, Սերոբ։

— Է՛, գլխիս տերը չմեռնի, գլխովս ինչե՞ր են անցել։ Բայց լավ է, հա՛, որ Թուրքն էս տեսակ մոլորություն ունի. մտածում է, թե ամեն տեղ էլ հայը մնում է հայ։

— Թուրքի մոլորությունը լավ է թե ոչ՝ մե՛նք չպիտի որո-

շինք,— Վինոգրադովն է վրա բերում։— Բայց որ Շահումյանի կոմունան պիտի պաշտպանել, դրա մասին երկու կարծիք չի կարող լինել։

— Մեր ձեռքին ի՞նչ կա, այ՛ Անդրանիկ։ Մենք իսկի մեր Ալեքսանդրապոլի համար չկարողացանք կուրծք դեմ տալ...

— Ալեքսանդրապոլը տանուլ տվինք անխելքությունից։ Շահումյանն Անդրկովկասի տերերին զգուշացնում էր, որ չկտրվեն Ռուսաստանից, չհավատան Թուրքին... Նրանց համար ի՞նչ. Կարմիր Ռուսաստանից խրտնած՝ ոտով-ձեռով ընկան Թուրքի գիրկը, հիմա էլ նրա հետ սիրաբանում են։

— Է՛, դա ի՞նչ կապ ունի Ալեքսանդրապոլի հետ, կամ էլ հենց քո Ռուսաստանի հետ, որին ստիպեցին զորքերը ետ քաշել, և հայց մնաց մեն-մենակ կանգնած արնախում Թուրքի դեմ։

— Կապ կա՛, Սերոբ,— այս անգամ էլ Հարութն է խոսում՝ տարեց մի մարդ, որ ռուս-ճապոնական պատերազմին է մասնակցել, կռվել նաև 14—15 թվականներին և ոտքից վիրավորվելուց հետո եկել, կայարանում աշխատում է որպես սլաքավար։

— Չե՞ս բացատրի, որ իմ էս անհասկացող գլուխն էլ մրտնի,— քունքին զարկելով՝ հարցնում է Սերոբը։

Հարութը կաղ, մի քիչ էլ կարճ ոտքը մյուսով է գցում, իբր տեղը հարմարեցնում է, և աշխատում է բացատրել.

— Ես էսպես եմ գաղափարում, Սերոբ. նախ էդ ռուս զորքի ետ քաշվելը Ռուսաստանի մեղքով չեղավ...

— Բրեստ-Լիտովսկի պայմանագրով պարտադրեցին,— վրա է տալիս Վինոգրադովը։— Ռուսաստանի դեմ կանգնած էին Թուրքիայի ուժեղ հովանավորները և ստիպեցին, որ թուլացած, հոգնած Ռուսաստանն իրենց խայտառակ առաջարկներն ընդունի։

— Բա մենք էդ հոգնած ու թույլ Ռուսաստանից ի՞նչ պիտի ստանայինք ըստ քո գաղափարի, ընկեր Հարութ քեռի,— իրենն է պնդում Սերոբը, որ ուրիշ անգամ գուցե թե ամենակրքոտ պաշտպանը կլիներ Ռուսաստանի, սակայն հիմա հակառակությունը բռնել է։

Վինոգրադովը թողնում է, որ հարցը լուծվի երկու հայերի անվնաս վեճով, և ուշադրությամբ լսում է։ Հանձնվելու տրամադրություն չունի սլաքավար Հարութը։ Նա յուղոտ, դժգունած կարտուզը հանում, քորելու պես տրորում է ճաղատ գագաթը և մեծ իմաստություն ասողի կեցվածքով բացատրում է.

— Կա մի մեծ և, Սերոբ աղա,— ասում է։— Ես կուզենայի, որ դու էդ և-ն իմանաս ու երբեք մտահան չանես։

— Էդ և-ն ի՞նչ ցավս է,— Սերոբն է խոսում քմծիծաղելով։— Հիմի էլ սկսեցիր և-երով խոսել։

— Էդ և-ն էն է, որ ռուսն էսօր հանգամանքից ստիպված ետ է քաշվել, վաղը մեկ էլ ետ կգա ու իր դասը կտա ինչպես քո էդ Թուրքին, էնպես էլ նրան քսի տվող գերմանացուն։

— Թուրքն էլ երբվանի՞ց իմը դառավ։

— Խոսքի օրինակ եմ ասում, ա՛յ Սերոբ։ Ես քեզ համար մի հաստատ բան նշեմ, փորձված, ստուգված. ռուսը մի տեղ որ ոտք է դրել, էնտեղից ետ կանգնողը չի։ Նամանավանդ,— այստեղ սլաքավարը ցուցամատն էլ վեր է տնկում,— նամանավանդ, եթե էդ տեղը արյուն էլ է թափվել, իր սեփական արյունը։ Իսկ մեր էս աշխարհում, Երևանի համար, Կարսում ու Էրզրումում, Սարիղամիշում ու Սախարնի-գարայում ռուս զինվորն էնքան արյուն է տվել, որ եթե հավաքես, իրար բերես, Թուրքի զորքը կքշի-կտանի։

Սերոբը հարցական նայում է Վինոգրադովին, այսինքն՝ հը՞, ճի՞շտ է ասում, դո՞ւ էլ նրա պես ես մտածում։ Եվ Վինոգրադովը գլխով է անում, այսինքն տարեց մարդ է, այնքան կռվել է ռուսական բանակում, քնել-վեր է կացել, կերել-խմել է, թշնամու հերն է անիծել և սեփական արյունն է տվել ռուս զինվորի հետ։ Այդքան բաները նրան չպիտի՞ ծանոթացնեին, բարեկամացնեին այն բնավորությանը, որ կոչվում է ռուսական։

Բայց Վինոգրադովն ասաց ուրիշ բան։ Նա դեռ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա գծի վրա էր մտածում և չէր կարող իր բարեկամներին, աշխատանքի իր ընկերներին չասել մտածածը։

— Թուրքն այս երկաթգիծը ձեռք ձգեց, որպեսզի մեկընդմիշտ խեղդի Հայաստանը, լա՛վ իմացեք։ Այս մի կտոր երկաթգիծը, ուրիշ ճանապարհներ չունեցող մի ափ Հայաստանի գլխավոր երակն է, որ հիմա գտնվում է նրա թշնամու ձեռքում։ Եվ Թուրք-թշնամին ուզի կսեղմի-կսպանի, ուզի՝ կպահի։ Բայց ինչո՞ւ պիտի պահի, երբ որ եկել է սպանելու։ Սպանելո՛ւ, որպեսզի ազատ ու անարգել հասնի Բաքու, և Անգորայից մինչև Բաքու ու նրանից էլ դենը լինի մեկ միասնական, համաթուրքական և համաիսլամական բռունցք՝ բարձրացած քրիստոնյա աշխարհի վրա։

— Ա՛յ, լսեցի՞ր,— դարձյալ Հարութն էր՝ աջ ձեռքը ցուցամատով վեր տնկած։— Էդ է, որ կա, Սերո՛բ տղա։ Էսպես կգաղափարեն, հա՛։— Ժպտում է, ապա մեծավարի թիթփացնում է Անդրեյ Վինոգրադովի հաղթ մեջքը։— Անդրանիկ ջան, ես էլ էդպես եմ գաղափարում, խոսքերս գալիս, հասնում են լեզվիս ծերը։ Բայց, դե, որ պիտի ասեմ, պիտի մեկ-մեկ բացահայտեմ, քարի կապին դեմ են առնում։

Անդրեյը համակիր ու ներողամիտ ժպտում է.

— Կարևորը մտածելն է,— ասում է,— կարևորն այն է, որ հոգուդ մեջ ճշմարիտ լինես։ Թե չէ, ասել-բացատրելը, մի քիչ ավել-մի քիչ պակաս, ինքն իրեն կգա։

Սերոբն էլ համաձայն էր, իհարկե։ Նա հիմա այնպես լավ էր պատկերացնում իր հողի ու հայրենիքի ցավալի վիճակը և այնպես պատրաստ էր իր բաժին օժանդակությունը բերել այդ վիճակից ազգը փրկելուն...

Սակայն ինչպե՞ս։

Ո՛չ դիվանագետ, ո՛չ էլ պետական կամ ռազմական գործիչ Անդրեյ Վինոգրադովի սովորական-տարրական տրամաբանությունը շատ ավելի իրատես ու ճշմարիտ էր, քան հայոց պարագլուխների դիվանագիտական խարխափումը Բաթումում և քաղաքական-ազգային ճամարտակությունները Թիֆլիսում։ Թուրքերը Պարսկաստանում անգլիացիների հետ մաքրելու հաշիվ չունեին։ Նրանց անգլիացիների դեմ կռվի էր հրահրում Անգլիայի նվաճողական մրցակից և Թուրքիայի հովանավոր Գերմանիան։ Ալեքսանդրապոլի նվաճման առթիվ անգլիացիների հարցը տարփողելով՝ դիվանագիտության մեջ հմուտ ձեռնածու թուրքն էլ մի գնդակով երկու նապաստակ էր որսում. նախ հովանավոր Գերմանիային էր ուզում ցույց տալ, թե Ալեքսանդրապոլ-Ջուլֆա գծով գնում է անգլիացիների երթը կասեցնելու։ Ապա և այդ զորաշարժի դեմ կանգնած միակ ուժին՝ հայությանն էր թմրեցնում՝ նրան այն պատրանքը սրսկելով, թե նման զորաշարժով հայոց ջահերը ոչ մի չափով չպետք է տուժեն, քանի որ, իբր թե, Ալեքսանդրապոլ-Ջուլֆա գիծն իրենց համար սոսկ ճանապարհ է, որով գնում են շտապու�գ կերպով անգլիացիների հարցը լուծելու, որից հետո պիտի տուն դառնան ոչ թե այդ նույն գծով, այլ հարավով՝ Հայաստանից հեռու, հայերի համար անվնաս ու անվտանգ։

Սերոբի համար պարզ էր դարձել հարցերից մեկը։ Եվ, այնուհանդերձ, կար հարցերի հարցը, որ տանջում էր նրան։

— Եվ էդպես էլ ես չիմացա, թե հիմի ի՞նչ կա մեր ձեռին,— մտահոգ հայացքը դարձրել էր Վինոգրադովին և ուզում էր նրա դեմքին կարդալ իր հարցի պատասխանը։— Ի՞նչ կարող ենք անել, ի՞նչ պիտի անենք։ Նորից հարց եմ տալիս՝ ի՞նչ կա մեր ձեռին։

— Մեր ձեռքի՞ն,— նրա հարցական հայացքը բռնած բացատրեց ռուս մեքենավարը։— Որ ասեմ՝ ձեր ձեռքին է ամեն ինչ, դու չպիտի հավատաս, ճի՞շտ է։ Բայց ասեմ՝ մեր ձեռքին շատ բան կա, և բացատրեմ։— Հետաքրքրությունից վառվում էր Սերոբը։ Պակաս լարված չէր նաև տարեց սլաքավարը, որի համար Վինոգրադովի խոսքը միշտ էլ նման է եղել ճանապարհի եզրին վառվող այն լույսին, որը բացում կամ փակում է գնացքի ճանապարհը։— Դուք գիտե՞ք, որ Կարս-Ալեքսանդրապոլ և Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծի տերն ու տնօրենը մենք ենք, այդ գծերի նախկին և այսօրվա աշխատողներս։ Թուրքերը մասնագետներ չունեն, որ բերեն և մեզ քշեն այստեղից։

— Ադա՛, դրանցից ի՞նչ երկաթուղային,— համաձայն էր Հաբութը։— Եզան սելն էլ կարգին-սարքին չեն կարող պահել։

— Ուրեմն, նրանց հույսը մենք ենք, պա՞րզ է,— շարունակեց Վինոգրադովը։

— Հրաժարվե՞նք ծառայելուց,— հարցրեց Սերոբը։

— Դա կլինի երեխայություն։ Մենք չենք հրաժարվի։ Բայց պիտի անենք այն, ինչ մենք ենք ուզում, ինչ որ մեր շահն է պահանջում։

Երևի կոնկրետ գործ պատկերացնելով մտահոգվեց Սերոբը.

— Մտածելո՞ւ բան է։

— Եվ կմտածենք,— հաստատեց Վինոգրադովը։— Իսկ դու ասում ես՝ մեր ձեռքին ի՞նչ կա։

* *
*

Մի առավոտ Սևանի հարավային ափին գտնվող Սառցաշեն գյուղի մարդիկ տեսան՝ իրենց աթարի դեզերին մեջք դեմ տված կկզել են մի քանի հարյուր զինվորներ՝ ամենատարբեր համա-

զգեստներով ու տարբերանշաններով։ Սկզբում կարծում էին՝ սարել-փայտացել են խեղճ մարդիկ։ Գիշերը սաստիկ ցուրտ էր եղել, չնայած մայիսի սկիզբն էր արդեն։ Սակայն հետո թմրածներն արթնացան, ճլմկոտալով, իրենց կոտրատելով ուշքի եկան և բացատրեցին, որ ղարաբաղցիներ են, Թիֆլիսից են գալիս և գնում են իրենց երկիրը Թուրքից ու մուսավաթից ազատագրելու։ Գիշերվա կեսին այս ավանն են հասել հոգնած ու փշրված և, գյուղացիներին չանհանգստացնելու համար, թիկունք են դարձրել աթարի դեզերը։

Սառցաշենցիները, որ սկզբում զարմացել էին, թե ինչպես է պատահել, որ իրենց շները նորեկներին դիմավորել են խաղաղությամբ, հետո հասկացան գաղտնիքը. հայի հոտ են առել, հարազատ հոտ և մտածել են, որ յուրայիններ են, նրանցից ոչ մի վտանգ չկա։ Գաղտնիքն այսպես բացատրելուց հետո էլ սառցաշենցիները եկվորներին հրավիրեցին իրենց տները, տաքացրին թեյով ու օղիով, կերակրեցին, և երբ նրանք, շնորհակալություն հայտնելով ուզում էին հեռանալ, ասացին.

— Ո՞րտեղով պիտի Ղարաբաղ գնաք, ճամփեքը բռնված են մուսավաթի զորքով։

Զորաջոկատի հրամանատար գնդապետ Գուրգեն Շահնազարյանը ձեռքը թափ տվեց այդ «նորություն» վրա և, ջոկատը մարտական շարքի կանգնեցնելով, շարժվեց դեպի արևելք։ Սակայն հենց Ախտայի կողքին հարևան Օրդաքլուից ու շրջակայքի բլրակներից սրընթաց վար իջնելով՝ մուսավաթական ավազակախմբերը կրակի տակ առան կռվին անպատրաստ ջոկատը, որը, մինչև ուշքի գար ու մարտն ընդուներ, տվեց երկու տասնյակ զինվորից ավելի կորուստ։ Ճիշտ է, դասակների ու ջոկերի հրամանատարները շուտով մարտի դասավորեցին զորամասը, հուժկու հակահարվածով կոտրեցին նախահարձակների դիմադրությունը և հետո էլ հետապնդելով կոտորեցին նրանց մեծ մասը։ Սակայն գնդապետն ու նրա օգնականները քրքրվում էին ինքնակշտամբանքից. ո՞նց կարելի էր քիթը երկինք տնկած առաջ շարժվել, երբ որ մարդիկ զգուշացրել էին, թե ճամփեքը բռնված են մուսավաթի զորքով։ Հետո՞ ինչ, որ մուսավաթն, իբր, դաշնակցության ու մենշևիկների հետ մի կառավարության մեջ է գտնվում, և այս բովանդակ Անդրկովկասն էլ մեկ միասնական, իբր, եղբայրական ընտանիք է։ Դո՛ւք, ղարաբաղցի կողքահաստ հայե՛ր դ,

այդ ե՞րբ պիտի։ Հասկանաք, որ մուսավաթը, հայ ժողովրդի երդվյալ թշնամին, միշտ և ամենուր մնում է մուսավաթ։ Այսպես իրենք իրենց դատափետելով, հագեմաշ մտորումներով գնում էին դեպի արևելք, դեպի Շուշի, ուր նույն մուսավաթն ու թուրք փաշաները գրկախառնված, ոտքները դրել էին Ղարաբաղի շնչափողին, սեղմում էին ու պահանջում հանձնվել իրենց ողորմածությանը։ Իսկ այդ համառ անհնազանդը չէր հանձնվում, չէր ենթարկվում, նույնիսկ ուժասպառ էլ չէր լինում, այլ գյուղական, գավառական, լեռնային ու ամեն տեսակ իր դիրք ու ամրություններին ապավինած՝ կռվում էր, թափ էր տալիս իրեն, որպեսզի իր վրայից թոթափի օտար անիծյալ ոտքը...

Վարդենիսի մոտ ջոկատին հասավ հեծյալ մի սուրհանդակ, ի՞նչ սուրհանդակ, սասնցաշենցի մի տրեխավոր ու ցնցոտիակիր պատանի և հայտնեց, որ Երևանից կարևոր մարդ է եկել, իրենց է ուղում։

— Իսկ ո՞ւր է ինքը, ինչո՞ւ դու ես եկել մեր ետևից,— կասկածով հարցրեց գնդապետ Շահնազարյանը։

— Մի կերպ իրեն գցեց մեր գյուղը. տաքության մեջ վառվում էր։ Ասաց. «Հասե՛ք նրանց ետևից ու հաղորդեցեք մեծամեծների հրամանը. ե՛տ դարձեք, եկեք Երևան։ Կռիվն էստեղ է,— ասում է,— դուք մեծ կռիվն էստեղ թողած՝ էդ ո՞ւր եք գնում»։ Հա՛, մոռացել-պրծել էի. էս թուղթն էլ,— ասաց,— տուր իրենց հրամանատարին։

Գնդապետը, ծրարված քառածալ գրությունը բացելով, առաջին իսկ բառերից ճանաչեց Արամ Մանուկյանի ձեռագիրը։ Շրջեց և մյուս երեսին էլ տեսնելով նրա ստորագրությունը՝ հաճելի թեթևություն զգաց։ Ե՛վ ձեռագիրը, և՛ նրա տիրոջը ճանաչում էր Շուշվա թեմականից, ուր Արամը դեռևս աշակերտական նստարանից ազգային գործչի համբավ ուներ։ Հիմա այդ իսկապես ազգային գործիչը թուղթ է հղել՝ խնդրելով իր գունդը միացնել Հայոց միասնական զորքին, որն օրհասական կռիվ է մղում Էջմիածնի ու Երևանի, այսինքն՝ Հայաստանի սրտի համար։ Հենց՝ այդպես էլ գրված էր. «Թուրքը սուրն ուղղել է Հայաստանի սրտին։ Այստեղ է լուծվում հայ ազգի լինել-չլինելու հարցը։ Շտապեցեք այստե՛ղ։ Իսկ Շուշվա և Ղարաբաղի համար կռվելու ժամանակ մենք դեռ կունենանք»,— հրամանի տոնով աղերսում էր Երևանի արտակարգ տնօրենը։

Շահնազարյանը հուզումով կարդաց գրությունը, երկու անգամ շուռումուռ տվեց ձեռքին, ապա ծալեց, դրեց գրպանը և դարձավ սուրհանդակին.

— Շա՛տ լավ, տղա ջան։ Դու հիմա շտապ վերադարձիր, տաքության մեջ վառվող մարդուն հանգստացրու։ Իսկ մենք մի բան կորոշենք։ Պա՞րզ է։

— Հասկացա, ես գնամ,— թերահավատությամբ արձագանքեց պորտակցի սուրհանդակը և ձիու գլուխը ետ շրջելով՝ ոտնահարեց լղար անասունի ցից-ցից կողաճաղերը։— Դե՛, շարժվի՛ր, է՛, քու տիրոջ...

Գնդապետ Շահնազարյանը կարգադրեց, որ պահակներ կարգեն շրջապատի դիտակետերում, իսկ ինքը հրամանատարական անձնակազմով քաշվեց մի դատարակ մարագ. սպայակույտի նիստում պրտի որոշեին իրենց անելիքը, չնայած ինքը՝ գնդապետ Շահնազարյանը, որպես ջոկատի հրամանատար՝ արդեն ուներ իր վճիռը և կարող էր զորքի երեսը շուռ տալ դեպի Երևան ու մարտական քայլքով գնալ-միանալ թուրքի դեմ ճակատող հայոց բանակին։

Սպաները շուրջանակի նստոտեցին մարագի միաշար պատի էզրերին։ Նրանցից ոմանք անտեղյակ էին Երևանից եկած նամակի բովանդակությանը և փորձում էին վայրկյան առաջ իմանալ հարևաններից։ Սրանք էլ հանգստացնում էին.

— Մ՛ս, հիմա ամեն ինչ կիմանանք։

Հրամանատարն սպայակույտի առաջ կարդաց Արամ Մանուկյանի նամակը և հայացքն ունկնդիրների վրա շուռ ածելով հարցրեց.

— Հիմա ի՞նչ եք առաջարկում։

—Ի՞նչ պիտի առաջարկենք, պարոն գնդապետ,— հարցն ասես օդում բռնելով՝ խոսեց երիտասարդ պորուչիկ Ավագյանը։— Հրամանատարը դուք եք, հրաման տվեք՝ շարժվենք դեպի ճակատ։ Թիֆլիսից մեզ ճանապարհելիս ազգի մեծերն ասացին՝ «Հայրենիքն է ձեզ կանչում»։ Այսօր այդ կանչը գալիս է Երևանից ու Էջմիածնից։

— Բայց դրանից առաջ Շուշուց էր եկել, չէ՞։ Հիշո՞ւմ եք, թե ի՞նչ էր ասում պատմաբան Լեոն,— տաքացած վեր թռավ տեղից ակնոցավոր մի սպա, որ ուսադիրներ էլ չուներ։— «Դուք գնում եք,— ասաց,— փրկելու մեր ժողովրդի այն հատվածը...»։

«Հիշո՞ւմ եք»։ Իհարկե՛, հիշում էին։ Եվ այդ պահին կարծես վերստին նրանց առաջ իր վիթխարի հասակով կանգնած էր Լեո-Առաքել Բաբախանյանը, որի յուրաքանչյուր խոսքին ծարավով սպասում էին համաշխարհային պատերազմի տագնապներից կուչ եկած հայ ընթերցողները։ Թիֆլիսում բնակվող ղարաբաղցիների հայրենակցական միության անունից նա ողջերթի հանձնարարական խոսք ասաց զորամասի առաջ, և հայրենիք գնացող զինվորներն ասես նրա կրակոտ բառերն իրենց մեջ առան, իբրև հոգեղեն զինամթերք։ «Արցախ-Ղարաբաղը դարեր ի վեր իր ազատության ու անկախության համար մաքառող Հայաստանի համար միշտ էլ վահան է եղել և զորավոր բազուկ,— ասում էր հրապարակախոս-պատմաբանը։— Պատմությունը մեզ շատ փաստերով ցույց է տալիս, որ նվաճող ազգերի ահավոր հորձանքները գալիս, ընդհարվում էին այդ լեռնաստանին, փշրվում էին ու ետ դառնում։ Իսկ այսօր այնտեղ բնավորվող մուսավաթական ոճրագործը մեր լեռնաստանի դռներն է բացել հայակեր Թուրքի առաջ...»։

Թիֆլիսաբնակ ղարաբաղցի հայ երիտասարդները հայրենիքի ու իրենց սրտերի կոչով գնում էին փրկելու Ղարաբաղը։ Արդյոք նրա՞ համար, որ այդ լեռնաստանը Հայաստանի հյուսիս-արևելյան բերդամրոցն է, վահանը կամ թշնամու գլխին իջնող հզոր բազուկը։ Թե՞ որ այն իրենց հայրենի եզերքն է, իրենց ծննդյան ու սննդյան տեղին, միակ ու անփոխարինելին։ Կար մի անբացատրելի մղում ևս. երբ որ Հայաստանը, Ալեքսանդրապոլից մինչև Շուշի և Էրզրումից, Սարիղամիշից մինչև Ղարաքիլիսա ու Դիլիջան, այս բովանդակ Հայաստան աշխարհը վառվում էր Թուրքի բորբոքած կրակից, նրանք ամաչում էին Թիֆլիսում փողոց դուրս գալ, իրար «բարի լույս» կամ «բարի օր» ասել։ Այդ համարում էին անբարոյականություն, սրբապղծություն, մարդկային հասարակության կողմից դատապարտվող այնպիսի արարք, որից հետո մարդ արարածն իրավունք չպետք է ունենա հանգիստ քնելու։

Սպաներից մի քանիսն արդեն իրենց խոսքն էին ասել քննվող հարցի մասին, և դեռևս անհնար էր եզրակացնել, թե նրանց համար որտե՞ղ էր նախընտրելի հայրենասիրական պարտքի կատարումը՝ Շուշի՞ում թե Ալեքսանդրապոլում, գնդապետ Շահնա-

Ղարյանը ձեռքի մի կտրուկ շարժումով լռեցրեց տաքացած սպաներին, ասաց իր խոսքը, որ և հնչեց վճռի պես։

— Սիրելի հայրենակիցներ, ես տեսնում եմ, որ ձեր խոսքերը, ինչքան էլ իրարից տարբեր, նույն ուղղությունն ունեն, այսինքն՝ մենք գնում ենք մեր հայրենիքի փրկության գործին մատուցելու մեր ծառայությունը։ Եվ հոգ չէ, եթե այդ ծառայությունն արժենա մեր կյանքը։ Այդպե՞ս է։

— Էդպե՞ս է, բա ի՞նչ,— համարյա միաբերան գոչեցին տեղերից։

— Այստեղ հիշեցինք քանքարավոր Լեոյի խոսքը,— շարունակեց գնդապետը։— Իհարկե, մենք բոլորս էլ գիտենք, որ մեր հայրենի լեռնաստանը Հայոց երկրի համար միշտ եղել է բերդ ու պատնեշ, նաև զորավոր բռունցք, որ իջել է նրա թշնամիների գլխին։ Եվ այդ բռունցքը հիմա վտանգված է. թուրքն ու մուսավաթը սիրաբանում են նրա մարմնին տիրանալու և հոշոտելու համար։ Բայց մենք իրավունք կունենա՞նք հայ կոչվելու, մեր արածը հայրենասիրություն անվանելու, եթե շարունակենք մեր երթը դեպի Ղարաբաղ, երբ առավել օրհասական պահ է ապրում Արարատյան երկիրը։ Այն լեռ՞ն չէր, որ Արարատյան երկիրն էր համարում Հայաստանի սիրտը։ Եվ ահա այստե՛ղ,— ստացված գրությունը գլխից վեր թափ տալով շարունակեց գնդապետը,— այստե՛ղ, նույնն է կրկնում Արամը՝ Արարատյան երկրի կառավարիչը։— Եվ կարդաց Արամի բառերը.— «Թուրքը սուրն իր ուղղել է Հայաստանի սրտին։ Այստեղ է լուծվում հայ ազգի լինել-չլինելու հարցը։ Շտապեցե՛ք այստեղ։ Իսկ Շուշվա և Ղարաբաղի համար կռվելու ժամանակ մենք դեռ կունենանք»։

— Բա էլ ինչի՞ եք ուշացնում, պարոն գնդապետ,— տեղից վեր կենալով՝ վրայի հագուստն ուղղեց սպաներից մեկը, որ քննարկման ամբողջ ընթացքում լուռ էր եղել։

— Ուրեմն, գնում ենք Երևանյան ռազմաճակատ,— հարցնելու պես գոչեց գնդապետը։

— Գնում ենք, բա ի՞նչ պիտի անենք,— միահամուռ որոշեց ապայակույտը։

— Դեմ չկա՞։ Դե, հենց այս բոպեին ջոկատները պատրաստել մարտական երթի։

* *
*

Դեռ երկար ճանապարհ կար մինչև Երևան, և այդ ճանապարհն անցնում էր լեռնափեշերով ու անհարմար դարավանդներով, որովհետև կարճ կտրելու նպատակով հրամանատարը հրաժարվել էր Սևան-Երևան խճուղուց։ Լեռնային դժվար վերելքներին ու վայրէջքներին ծանոթ դարաբաղցիներն անմռունչ հաղթահարում էին արգելքները՝ յուրաքանչյուր ձոր ու սար անցնելուց առաջ հայացքով որոշում երկու կետերի միջև ընկած ամենակարճ ուղին։ Եվ որքան էլ երթն արագ լիներ ու հրամանատարների շտապեցնող ներկայությունը՝ մշտագո, զինվորները ժամանակ էին գտնում խորհելու իրենց առաքելության շուրջ։ Իսկ խորհելն անհրաժեշտ էր, որովհետև մի շաբաթ առաջ որոշել էին գնալ, հայրենի եզերքը փրկել բռնությունից, իսկ հիմա գնում են հակառակ ուղղությամբ, և իրենց յուրաքանչյուր քայլն ավելի է հեռացնում այդ երեզքից ու իրենց բուն նպատակից։ Բայց հեռացնո՞ւմ է, թե ավելի՞ է մոտեցնում,— մտորում էին այսպես, և հաճախ էր պատահում, որ հակասական, այրող մտքերից գլուխ էր պտտվում։

Ներսիսյան ճեմարանի վերջին խմբի սան Գևորգ Բաբայանը՝ հաթերքցի մի երիտասարդ, որ հրաժեշտի միտինգում կրակոտ ճառ էր ասել՝ վերջում էլ կարդալով հանպատրաստից գրած իր ոտանավորը, հիմա փոթորվում էր ներքին խռովքից։ Այնտեղ ոտանավորով դիմել էր հայրենի գյուղին՝ իշխանանիստ, հինհին ժամանակներից աշխարհին հայտնի իր հերոս կռվողներով ու հոգևոր կյանքի մեծ գործիչներով, դիմել էր Թարթառին, որ իր երկրամասի դեռն էր ու խորհրդանիշը.

Սպասի՛ր քիչ էլ, գալիս ենք, Թարթառ,
Մենք կփրկենք քեզ բիրտ ճիրաններից,
Եվ մեր երգերը, մեր երգե՛րն արդար
Քո գույգ ափերին կհնչեն նորից»։

«Ների՛ր ինձ, Թարթառ,— ինքն իրեն խոսում էր հաթերքցի կամավորականը,— ների՛ր, հարազատս, մայր Արաքսն է վտանգված, գնում եմ նրա կանչին։ Թե որ մեր ազգի մայր դեռն արյան ու ավերի բերանին թողած՝ քո գիրկը վազեի, պիտի որ ինքդ

էլ ինձ չներեիր. չէ՞ որ Արաքսը քո մայրն է նաև։ Ների՛ր ինձ, Թարթառ»։

Այսպես ինքն իրեն խոսելով գնում էր զինվորը և չգիտեր, որ ընկերն էլ, կողքից քայլելով, Քիրսից է ներողություն խնդրում, Մռավից կամ Դիզափայտից, որ ճանապարհը ծռել, ահա այսպես գնում է հայր Արարատի կանչին։ Կամ Շուշուց ու Գանձասարից է ներողություն խնդրում, որ Երևան է գնում ու Էջմիածին, գնում է Հայաստան աշխարհի կրծքին ուղղված յաթաղանը ետ վանելու։

* *
*

Երևանում նրանց առաջնորդեցին Ազգային խորհուրդ։ Լավ էր, որ այնտեղ էր Արամ Մանուկյանը։ Սիրով ընդունեց և ասաց.

— Կարծում եմ՝ ամենաճիշտն այն կլինի, որ դուք միանաք Ղարաբաղյան գնդին։

— Այդպիսի գունդ էլ կա,— զարմացավ Շահնազարյանը։

— Այդպես չի կոչվում, բայց կազմված է հիմնականում ղարաբաղցիներից, և հրամանատարն էլ գնդապետ Պողոսբեկ Փիրումյանն է։ Երևի ճանաչում ես։

— Հայտնի անուն է,— ուրախացավ Շահնազարյանը,— նրան ո՞վ չի ճանաչում։

— Ռազմաճակատն էլ ղեկավարում է մյուս Փիրումյանը, Դանիելբեկը, որ Պողոսբեկի հորեղբորորդին է։

— Ա՜, դա արդեն հրաշալի է,— երջանկությունը չկարողացավ թաքցնել Թիֆլիսից եկած գնդապետը։— Մեկը մյուսից քաջ մարդիկ են։

— Իսկ այդ գունդը, որին պիտի միանաք,— ավելացրեց Արամը,— հաշվիր Հայկական կորպուսի միակ զորամիավորումն է, որ համալրված է հիմնականում փորձառու զինվորներով և շատ թե քիչ պահպանել է իր ամբողջությունը։

— Չի՞ մասնակցել կռիվներին։

— Այն էլ ինչպե՜ս. եղել է Կովկասյան ռազմաճակատի բոլոր տաք կետերում,— տեղեկացրեց Արամը։— Բախտի բան է. գունդն ու գնդապետն իրար լավ են գտել, և հիմա պետք է կազմեն նորաստեղծ ռազմաճակատի կորիզը։

Հետո Արամը կարգադրեց, որ քաղաքի պարետ Շահխաթունին լուծի զորաջոկատի սննդի հարցը։ Հրաժեշտին ողջագուրվեց գնդապետ Շահնազարյանի հետ.

— Հուսով եմ, որ ամեն ինչ բարեհաջող է լինելու, և մենք հաջորդ հանդիպումին իրար շնորհավորելու ենք հաղթանակի առթիվ։

— Եթե այդ հույսը չլիներ, ինչո՞ւ պիտի այս տարօրինակ ճանապարհը կտրեինք,— ժպտաց գնդապետը։— Ձեզ էլ ամենայն հաջողություն եմ մաղթում. Արարատյան երկրի ամբողջ հոգսը հիմա ձեր ուսերին է դրված։

— Է՛, Գուրգեն սիրելիս,— հառաչեց Արամը։— Ի՞նչ է մնացել Արարատյան երկրից՝ Հետո էլ տվել են անսահման իրավունքներ՝ մի վանդակի սահմաններում, որի մեջ ոնց էլ շարժվում ես, գլուխդ պատին է զարկվում։

* *
*

Զորաջոկատը Հինգերորդ գնդին միացավ Սուրմարիի գավառում, Արաքսի աջ ափին, որտեղից ուր որ է պիտի հետևանք արդեն նահանջի հրաման ստացած զորամասը։ Երևանում Գուրգեն Շահնազարյանի գունդ-գումակին էին միացել ղարաբաղցի, գանձակեցի ու զանգեզուրցի մի քանի տասնյակ նախկին զինվորներ, որոնք Երևանում ու մերձակայքում էին գտնվում և Արամ Մանուկյանի կոչով հավաքվել էին ռազմաճակատ մեկնելու համար։ Նրանք խառնվեցին Թիֆլիսից եկած երեք հարյուրին, և չորս հարյուր հայրենանվեր մարտիկներ գնում էին գումարվելու Հինգերորդ գնդի՝ շուրջ յոթ հարյուր հետևակայիններին։ Ռազմի փորձ ունեցող մարդիկ էին չորս հարյուրի մեծ մասը, իսկ մնացածները, եթե փորձ էլ չունեին, ապա ունեին կռվելու պատրաստակամություն և վառվում էին աղետյալ հայրենիքին օգնություն հասցնելու տենչ ու երազով։

Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում Հինգերորդ գունդ կոչվածը, որ հրաշունչ այն օրերի պատմության մեջ հայտնի է Ղարաբաղյան գունդ անունով։

Այս զորամիավորումը ծնվեց հայրենիքից հեռու և քաղաքական ու նյութական ծանր պայմաններում։ Առաջին աշխար-

համարտի երրորդ տարում ռուսական բանակը ցրված-շարված էր Սև ծովի ափերից մինչև Ռևանդուզ, Համադան ու Սուլթանաբադ, ավելի քան հազար երկու հարյուր կիլոմետր երկարությամբ, և այդ անհուն տարածություններում իր վրա էր առնում զանազան տերությունների զորական մեծ ու փոքր միավորումների հարվածները։ Այդ ժամանակ հայերը մտածեցին, որ մի այդպիսի ճակատ երկար դիմանալ չի կարող, ուրեմն և անհրաժեշտ է ազգային ուժերն ի մի հավաքել գալիք արհավիրքները դիմագրավելու համար։

Հայ ազատագրական մարտերի հերոս Քեռու ջոկատը, որ կռվում էր գեներալ Ռիբալչենկոյի՝ Պարսկաստանում տեղակայված զորամասում, հենց Ռևանդուզի ճակատամարտից հետո, 1916-ի վերջին որոշեց վերակառուցվել։ Գնդապետ Պողոսբեկ Փիրումյանը նոր մի գունդ կազմեց Քեռու զորամասի արևելահայ զինվորներից, որոնք հիմնականում իր հայրենակիցներն էին՝ ղարաբաղցիներ։ Հաջորդ տարին, 1917-ին, գունդը Պարսկաստանից Արևմտյան Հայաստան փոխադրվելով՝ մասնակցեց Ոստանի ու Վանի պաշտպանությանը։ Այդ տարվա կեսից, երբ ռուս զորքերը թողեցին նաև Վասպուրականը, Վանի պաշտպան էին մնացել միայն Պողոսբեկ Փիրումյանի գունդը, մեկ էլ տեղական աշխարհազորը, որի ղեկավարն էր Լևոն Շաղոյանը։ Հետագա դիմադրությունն անիմաստ համարելով՝ սրանք ևս թողեցին Վանը։ Հինգերորդ գունդը, որից հեռացել էին մի քանի դասակներ, և մնացել էր նրա կորիզը միայն, Արաքսի աջ ափով, հին Բայազետով-Իգդիրով նահանջեց դեպի Կարսի մարզը և մայիսի կեսերին մտավ Արարատյան դաշտը։

Ի՞նչ էր մնացել նախկին հզոր, լավ սպառազեն գնդից։ Շուրջ 700 աննահանջ զինվորներ, որոնք ունեին հետևակային զինավառություն։ Նրանք իրենց հետ քարշ էին տալիս նաև լեռնային հրանոթների մի մարտկոց, որը, սակայն, հրետանավորներ չուներ։

Արաքսից հարավ, Դաշբուրուն գյուղի դաշտում իրար խառնվեցին Հինգերորդ գնդի հնաբնակներն ու նորեկները, և տեսնելո՞ւ էր, թե ինչպես իրար գիրկ էին նետվում ծանոթները, ինչպես արագ ու սրտագին մտերմանում էին անծանոթները, ինչպես Ղարաբաղից այդքան հեռու, այդ խոլոր-մոլոր դաշտում հնչում էին ղարաբաղյան գյուղերի անունները, հոլովվում էին սարերի

ու ձորերի, դաշտերի ու աղբյուրների անունները, և ինչպես դրանից ավելի էին քաղցրանում կորցնելիք Սուրմարին, անկորնչելի, միշտ հայի աչքի առաջ ու սրտի խորքում գտնվող Արարատը, Արաքսը, մա՜յր Արաքսը, որ այդ օրերին վարարել, ելել էր ափերից, պիտի քշեր թշնամուն, սակայն չէր կարողանում։

Գնդապետներ Պողոսբեկ Փիրումյանն ու Գուրգեն Շահնազարյանը, որ հին ծանոթներ էին և երկար զրույցի ու խոսակցության շատ նյութ ունեին իրար համար, լուռ դիտում էին գնդի եռուզեռը։ Իսկ հետո Փիրումյանը գնդապետ Գուրգեն Շահնազարյանին տարավ, ծանոթացրեց գնդի սպաների հետ. շտաբսկապիտաններ Վարդան Ջաղինյան, Տաճատ Հովակիմյան, Աղասի Հովհաննիսյան, Կարապետ Սարգսյան, պորուչիկներ Միքայել Օհանջանյան, Ալեքսանդր Միրզոյան, պոդպորուչիկներ Նիկողայոս Թոփչյան, Սաքո Նահապետյան, Աղասի Կռունկյան, Գրիգոր Շիրինյան, Գրիգոր Մարգարյան, Սմբատ Ջատինյան, Թևիկ Առաքելյան, Տիգրան Ժամհարյան, Արսեն Սարգսյան, Հովհաննես Հովհաննիսյան, Գառնիկ Հովասափյան...

— Դե՛, այսպես,— ձիգ ու զգաստ սպաներին դիմելով՝ իր ահեղ բասով ասաց Պողոսբեկ Փիրումյանը։— Գնդապետ Գուրգեն Շահնազարյանը, մեր հին բարեկամն ու նոր զինակիցը, առայժմ լինելու է գնդի հրամանատարի տեղակալը։ Նա իր կարողություններով արժանի է, որ կռվի տանի շատ ավելի մեծ զորամիավորումներ։ Սակայն այս է մեր ունեցածը։ Մնացածներդ էլ ծանոթացե՛ք և սիրեցե՛ք։ Այսքան բան։ Ազատ եք։

Գնդապետ Շահնազարյանը միայն Փիրումյանին լսելով՝ հարցրեց.

— Բա Երևանում ասում էին՝ գնդում ձերոնցից էլ կան։ Ո՞ւր մնացին, պարոն գնդի հրամանատար։

— Մերո՞նք։ Ահա՛, է՜, հեռու կանգնած դիտում են,— և ձեռքով արեց, որ մոտենան հեռու կանգնածները։— Մոտեցե՛ք, ծանոթացե՛ք գնդապետի հետ։ Պոդպորուչիկ Աբրահամ Կարապետյան՝ քրոջս տղան է, պարոն գնդապետ։

— Այսքան էլ նմանությո՞ւն,— երիտասարդին ոտից գլուխ տնտղելով՝ հիացավ գնդապետ Շահնազարյանը։— Ասած չլինեիք, պիտի մտածեի, որ ձեր տղան է։

— Ասում են՝ տղա զավակը քեռուն է քաշում,— ուրախությամբ արձագանքեց հրամանատարը։— Բայց իմ տղան, որ հիմա

Ղարաքիլիսայի ճակատում է, իր հորն է նման։ Սա էլ մեր Դանիելբեկի տղան է, պոդպորուչիկ Միքայել, հասկանալի է, Փիրումյան։ Մոտեցի՛ր, ա՛յ տղա, ի՞նչ ես հեռվից-հեռու հետազոտում։ Գիտնական է, հա՛, պիտի հայագիտության հսկաների հետ ոտ գցեր, եկել է հայրենիքը փրկելու։

Գնդապետ Շահնազարյանին մոտեցավ 29—30 տարեկան, բարձրահասակ, ամոթխած պոդպորուչիկը, որի խնամված բեղերի ու քունքերի մեջ սպիտակ թելիկներ էին երևում, սակայն առնական ու կիրթ դիմագծերով իր տարիքից ջահել էր երևում։ Փոքր-ինչ խոնարհվելով, պոդպորուչիկը սեղմեց գնդապետի ձեռքը, ցածրաձայն ասաց.

— Պարոն գնդի հրամանատարը ժամանակից շուտ կոչումներ է շռայլում։ Ես միայն զինվորական եմ, պարոն գնդապետ։

— Մեզնից ոչ ոք զինվորական չի ծնվել, սիրելիս,— մտերմորեն նկատեց գնդապետը։— Ոչ էլ ծնվում են, որ հետո՛ դառնան զինվորական։ Ռազմական գործը մեզնից յուրաքանչյուրի մեջ մի բան սպանում է։

— Եթե, իհարկե, մեզ չի սպանում,— կատակեց գնդի հրամանատարը։

— Այո՛, այո՛։ Իսկ ո՞ւր է ձեր եղբայրը,— Միքայելին դիմելով հարցրեց գնդապետը։

— Նա շարքային զինվոր է, զինվորների մեջ կլինի,— պատասխանեց գնդի հրամանատարը։— Այս տարի մի քանի >րով աթաթակուրդ էի գնացել Թիֆլիս, ճանապարհին դարանեց, Անիի մոտ օձիքս հավաքեց, թե «Գալիս եմ քեզ հետ, եթե չթողեցիր, նշանակում է՝ սուտ են եղել նախկին բոլոր քարոզներդ»։ Հիմա էլ հեռու է շուտ գալիս մեզանից։ Ասում է. «Թող չիմանան, որ ազգական ենք»։ Կարծես հավաքվել ենք գողության գնալու և ոչ թե թուրքի դեմ կռվելու։ Ես էլ ասում եմ. «Թե որ ծուլացար կամ թուլացար, ա՛յ, այն ժամանակ ազգանունդ փոխիր, հիմա ի՞նչ ուն ես թաքցնելու»։

— Իսկ ո՞նց է, ազգանունը փոխելու վտանգ կա՞։

— Օ՜,— կարճ բեղ ու մորուքը շոյեց գնդի հրամանատարը։— Նրա նման քսան զինվոր ունենամ, Աշոտ Երկաթի պես թշնամու մի ամբողջ զորաբանակի դեմ կգնամ, և հաշվիր՝ հաղթանակն ապահովված է։— Փիրումյանը հարազատին հիշելիս դարձավ փափուկ ու երազող։— Կան զինվորներ, նույնիսկ լավ կռվողներ,

որոնց անընդհատ պետք է մի բան ասես, կարգադրես։ Պատկերացնո՞ւմ եք. ճիշտ է, նրանք միշտ պատրաստ են, բայց սպասում են հրամանի։ Սրա նմաններն ուրիշ տեսակ են։ Սրանց եթե պետք է կարգադրություններ անել, ապա միայն զսպելու համար։ Թե չէ, մեր թթի արաղի պես բռնկվող են։ Իսկ եթե երկար պահեցիր մի տեղ, ինքն իր ամանը կկոտրի։

Ծանոթությունն ավարտվել էր։ Զինվորներն այս ու այնտեղ փունջ-փունջ, ջոկ-ջոկ ու դասակ-դասակ զրուցում էին կամ հանգստանում կանաչների վրա պառկած։ Ոմանք բավականին հեռացել էին և դաշտում ցրված վարժում էին նորեկ անփորձներին։

Գնդի հրամանատարը կարգադրություններ արեց ավագ հրամանատարներին, սրանք էլ՝ իրենց ենթականերին, և դաշտի վրա մեկեն տարածվեցին մարտական հրամանները՝ «Ջոկա՛տ, շարքի՛-ի՛»։ «Դասա՛կ, հավասարվե՛-ե՛լ»... Մի քանի րոպեում գունդն արդեն շարքի էր կանգնած կանաչ հարթության վրա։ Գնդի հրամանատարը շարքերի դիմաց ընդունեց հրամանատարների զեկույցները, կանգնեց մի փոքրիկ բարձրության վրա, ո՛ր կից երևում էին գնդի բոլոր շարքերը։ Լռություն էր դաշտում։ Մի քանի րոպե առաջ այդ մեծ տարածության վրա ճարճատող ու զընգուն հրամաններից, իրար խառնված աղմկոտ զեկույցներից հուշտ եղած՝ թռել-հեռացել էին թևավոր երգիչները։ Եվ հիմա դաշտի լայնության վրա հայոց զորքի Հինգերորդ գունդն էր կանգնած, որի մեծ մասը կազմում էին ռուսական բանակի շարքերում տարբեր ճակատներում թրծված զինվորներ ու սպաներ։ Իսկ նրանք, որ անփորձ էին ու վառոդի հոտից պիտի փոշտացնեին, հին գայլերի կողքերին այնպես էին ձգվել, այնպես հանգիստ էին նայում իրենց դեմ արձանացած զորապետին, կարծես նրա հետ հազար հուր ու ջուր էին անցել։

— Հա՛յ քաջեր, հայրենակիցնե՛ր,— շարքերի վրա տարածվեց հրամանատարի զընգուն բասը,— շնորհավո՛ր գնդի համալրումը, շնորհավո՛ր։

— Շնորհավո՛-ո՛-ո՛ր,— միաձայն, խրոխտ արձագանքեց գունդը, և այդ արձագանքը կոտրատվելով գնաց, տարածվեց դաշտի չորս կողմերի վրա։

Բարձունքին արձանացած, կրակոտ հայացքը գնդի վրայով դեպի հայոց կորցրած հեռաստանները՝ հրամանատարը մի պահ

լռեց։ Ճարտասան չլինելով՝ նա ուզում էր ոչ թե գեղեցիկ խոսք ասել, այլ արտահայտել այն արտակարգ հուզումը, որ պաշարել էր իրեն, և բառեր էր փնտրում։— Արտասովոր է այս համալրումը և ունի մի մեծ խորհուրդ։ Մարդիկ, որ Թիֆլիսի բարեկեցությունը թողած՝ գնում էին իրենց ծննդավայրը Թուրքի ու մուսավաթի ճիրաններից փրկելու, Սևանի ափից ճանապարհը ծռել, եկել են այստեղ։ Եկել են այստեղ, ուր վճռվում է շատ ավելի կարևոր մի խնդիր՝ մեր ազգային հավաքականության լինել-չլինելու խնդիրը։ Լինել-չլինելո՞ւ, որովհետև եթե այստեղ, սուրբ էջմիածնի թիկունքում և այս արդար ու հավերժական Արարատի աչքի առաջ մենք հաղթեցինք, ուրեմն ապրելու է մեր ազգը, իսկ եթե, աստված մի՛ արասցե, պարտվեցինք, եթե ի վիճակի չեղանք Թուրքին ետ մղելու իր եկած ճանապարհով, ապա դա լինելու է մեր ազգի մահը։ Ես ուզում եմ, որ մեր գնդի ամեն մի զինվոր հասկանա այս ճշմարտությունը։

— Հասկանո՞ւմ ենք, պարո՞ն գնդի հրամանատար,— բարձր ու ցածր, բամբ ու քնքույշ ձայներով պատասխանեցին շարքերից։

— Հասկանո՞ւմ եք, շա՛տ բարի։ Իսկ պատրա՞ստ եք թշնամուն ցույց տալու մի կռիվ, որ նա տեսած չլինի իր օրում։ Մի կռիվ, որ մեր նախնիներն անգամ տված չլինեն։ Պատրա՞ստ եք այդպիսի կռվի։

— Պատրա՞ստ ենք, պարո՞ն գնդի հրամանատար,— հիմա ամբողջ գունդը գոչեց միահամուռ, միասնական և այնպես հզոր, որ թվաց, թե նրա թափից գետինը ցնցվեց։

— Կեցցե՞ք,— ավելի հուզված գոչեց հրամանատարը և չիմացավ, թե է՛լ ինչ ասի, ձեռքերն առաջ պարզած, շքանշաններով զարդարված կուրծքն առաջ տված բացականչեց.— Ես ձեզ մատա՛ղ։— Այս «մատաղը» հաղորդվեց ամբողջ գնդին, մտավ զինվորներից ու սպաներից յուրաքանչյուրի սիրտը, և գունդը որպես մի տարածուն, հսկա մարմին՝ օրորվեց, ծփաց, իրարով անցավ։— Ձեզ մատա՛ղ, վաղը մենք պիտի կռվի մրտենք Թուրքի դեմ։ Վաղը մենք պետք է կանգնենք ու ասենք՝ «էլ առաջ շարժվելու տեղ չունես, Թուրք»։ Հասկանո՞ւմ եք։

— Հասկանո՞ւմ ենք, պարո՞ն գնդի հրամանատար։

— Հիշեցեք, որ ազգը միշտ էլ հավատացել է Արցախամուր աշխարհի զինվորին և երբեք չի սխալվել։ Վաղը մենք պետք է

նման լինենք մե՛զ, մեր հերոսական աշխարհի՛ն և, եթե կուզեք, պիտի ավելին է՛լ լինենք։ Այո՛, մարդս միշտ էլ հնարավորություն ունի լինելու ավելի վեր, ավելի ուժեղ, ավելի քաջ, քան ինքն է առհասարակ։ Դուք կլինե՞ք այդպիսին, ձեզ մատա՛ղ։

— Կլինե՞նք, կլինե՞նք, պարո՛ն գնդի հրամանատար,— դարձյալ միահամուռ, որոտաձայն թնդաց գունդը, և գնդապետը լցվեց մի անպարփակելի հավատով, որից սիրտն է ուռչում։

Գնդի հրամանատարը նոր տեղակալին հանձնարարություններ տալով ճանապարհ դնելուց հետո մենակ էր մնացել և գոհունակությամբ մտածում էր գնդի տրամադրության մասին։ Հնաբնակներից յուրաքանչյուրին նա ճանաչում և վստահում էր, ինչպես հարազատ մարդու։ Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ նրանց մեծ մասի հետ պատերազմական կյանքի անպատմելի դառնություններն ու շնչին ուրախություններն էր կիսել շուրջ վեց տարի, այլև այն ճակատագրական պահի բերումով, որն ահա կանգնած է ազգի առաջ, և նրա յուրաքանչյուր մասնիկը ոտքի է ելել՝ հասկանալով, որ այստեղ միայն մահ կա ու հաղթանակ, մա՛հ ու հաղթանա՛կ, և պետք է ընտրել երկուսից մեկը։

Հին զինվորները դա լավ են հասկանում։ Իսկ նորեկների հետ առանձին խոսելիս այդպես էլ բացատրեց. «Տղե՛րք ջան, իմ թանկագին հայրենակիցներ, ձեզ մատաղ, ես ուզում եմ, որ դուք լավ հասկանաք և մի վայրկյան իսկ մտներիցդ չգցեք. այս ճակատամարտում մենք երկու ելք ունենք՝ մա՛հ կամ հաղթանա՛կ։ Երրորդը չկա՛։ Ուրիշ անգամ, ուրիշ տեղերում լինում են նաև ուրիշ ելքեր՝ նահանջ ու փրկություն, զիջում ու դիվանախոսություն։ Մեզ համար դրանք բոլորը թիկունքում են մնացել։ Հիմա պիտի թուրքին հաղթենք...»։ «Այսինքն՝ երկրորդ ելքն էլ բացառվում է, մա՛հը»,— կողքից հուշեց նոր տեղակալ գնդապետ Շահնազարյանը, և այդ լրացումը դուր եկավ գնդի հրամանատարին։ «Անկասկա՛ծ,— իսկույն գլխով արեց նա։— Մահը՝ ծայրահե՛ղ դեպքում, որովհետև ռազմադաշտում մահ առնելը գոնե պատվաբեր է»։

Եվ այդ նորելուկ զինվորներն ու իրենց հրամանատարները լսում էին այնպես ինքնամոռաց, հաճախ էլ խոսքով ու անհոդաբաշխ ձայնարկություններով այնպես հասկացնում էին իրենց

անձնազոհության պատրաստակամությունը, որ չհաջատալ չէր կարելի, անհնա՛ր էր պարզապես։

Երբ մարդ գիտակցաբար ու կամավոր եկել է պատերազմի դաշտ, և նրա խոսքը, կեցվածքը, անդամ հայացքը՝ ասում են, որ նա պատրաստ է ամենաահավորէն ու ամենահերոսականին, չես կարող չհավատալ։ Չհավատալը նույնիսկ անմարդկային կլինի, անբարոյական։ Սակայն Պողոսբեկ Փիրումյանը, Հինգերորդ գնդի հրամանատարն ու ոգին, մի վեցերորդ զգայարանով զգում էր ու ներքուստ էլ համոզված էր, որ հերոսությունը սոսկ գիտակցական գործողություն չէ, ուղեղի ու համոզմունքների թելադրությամբ կատարվող այն քայլը, որ փրկում է ինչ-որ բան կամ ստեղծում է փրկելու հնարքը և դրանով իսկ հաստատում մարդուս հզոր անհատականությունը։ Բոլորովին էլ ո՛չ։ Հերոսության մեջ կա գերգիտակցական կամ ենթագիտակցական մի բան, որ շատ հաճախ մատչելի կամ հասկանալի չէ սովորական բանականությանը, իսկ եթե կուզեք, հերոսությունն ի՛նչ-որ տեղ գիտակցության ու բանականության ժխտումն է։ Հերոսությունը հրաշքն է, մարդու խելոք բնազդի ժայթքումը՝ գիտակցականությունից վեր, անբանական ու անբնական։ Եվ այն երբեք չի ենթարկվում գիտակցության ու բնականի նորմերին։ Գուցե թե մարդու գիտակցությունը պարզապես հող է ստեղծում, որպեսզի բնազդական մղումները ժայթքեն ամենատրամաբանական, ամենաճշգրիտ ու ամենաօգտակար ձևով։

Հովսեփը՝ Հինգերորդ գնդի ամենակրտսեր Փիրումյանը, իբր թե, պատահաբար դեմ առավ գնդի հրամանատարին, ձգվեց, պատվի առավ և շիկնած վրա տվեց.

— Պարոն գնդի հրամանատար, թույլ տվեք զեկուցել...

Հրամանատարը ժպտաց, մոտեցավ ու ցուցամատով խփեց նրա քթին.

— Դու էլ ի՞նչ ես սալդաթ խաղում։

Պատանին սիրտ առավ և զգուշության համար շուրջը նայելով ասաց.

— Ամի՛, մեր ամբողջ դասակը լիազորել է, որ գամ զեկուցեմ...

— Ո՞ւմ զեկուցես, ի՞նչ զեկուցես,— կատակի տալով հարցրեց գնդի հրամանատարը։—Քեզ ո՞վ է այդ իրավունքը տվել, որ վեր կենաս դաս, զեկուցես ուղիղ գնդի հրամանատարին։

վաղն էլ սիրտդ կուզի, որ գնաս, ո՛չ ավել-ո՛չ պակաս, զեկուցես ռազմաճակատի հրամանատարին։ Հետո՞ ինչ, որ նա քո հայրն է։

— Դե՛, լավ, է՛, ամի, ինչի՞ եք այդպես ծաղրում։ Հազիվ սիրտ եմ առել, եկել,— երեխայի պես տրտնջաց Հովսեփը։

— Դե՛, լա՛վ, որ եկել ես, ասա, տեսնեմ՝ ի՛նչ պիտի զեկուցես։

— Հա՛, ուրեմն ինձ լիազորել են, որ ամբողջ դասակի անունից ձեզ հաղորդեմ, թե մենք էլ ձե՛զ մատաղ ենք, ձեր ցա՛լը տանենք և ձեր ետևից մեզ կնետենք ամեն տեսակ կրակի մեջ։

— Վա՛յ-վա՛յ-վա՛յ,— տոհմակցին գիրկն առնելով՝ ճակատը համբուրեց գնդի հրամանատարը և այս անգամ էլ, հուզմունքը փարատելու համար, դարձյալ կատակեց.— «Ձեր ետևի՞ց»։ Ծտեվից քո քեռակին Սանամն էլ կնետվի։ Կարևորն առջևից նետվելն է։

— Որտեղից էլ ուզեք, կնետվենք, ետևից է՛լ, առջևից է՛լ, կողքերից է՛լ։

— Իսկ չի՞ լինի առանց ինձ...

— Ինչո՞ւ չէ, կլինի՛։ Բայց երբ դուք երևում եք, զինվորին թվում է, թե ինքն ամե՛ն ինչ կարող է։

* *
*

Երկու օր առաջ Արտո Շահխաթունին ռազմաճակատի բոլոր կարևոր կետերն էր հասցրել Արամ Մանուկյանի հրահանգը ճանապարհների վրա խիստ հսկողություն սահմանելու մասին։ Իսկ Պողոսբեկ Փիրումյանի հետ Մանուկյանն անձամբ էր զրուցել հեռախոսով և բացել էր հրահանգի գաղտնիքը. Երևանի ազգային խորհրդի ու Պետական դումայի վերջին միացյալ ժողովին ներկա են եղել նաև քաղաքի մուսուլմանության ներկայացուցիչները։ Չի կարող պատահել, որ նրանք թուրք հրամանատարությանը չհաղորդեն այդ ժողովի անձնատվական որոշման մասին։ Ուրեմն, պետք է հսկել բոլոր ճանապարհների վրա և լրտեսներին որսալ։

Արդեն երեք հոգի անցել էին գնդապետ Պողոսբեկ Փիրումյանի մաղով։ Ոչ մեկը լրտեսի նման չէր։ Երկուսը թաթարներ

էին՝ աշխարհի չարութարուց անտեղյակ մարդիկ, որոնց վրա կասկածելն անգամ անհնար էր։ Երրորդը հայ էր, որ ճարպիկ մարդ էր երևում առաջին իսկ հայացքից, քննությունից էլ պարզվեց, որ դասալիք է, փախած գնալիս է եղել իր հայրենի Շուլավեր։

— Տարեք դասալիքներից կազմված գումարտակը, և եթե մեկ էլ փորձի ճանապարհը ծռել, դատեցեք ըստ ռազմական օրենքի,— քննելուց հետո նրան բերող զինվորին կարգադրեց Փիրումյանը։

Չորրորդը հենց հեռվից գնդապետի վրա թողեց շատ նպաստավոր տպավորություն։ Երկու զինվոր նրան բռնել էին Թալինի մոտ, բանուկ ճանապարհից հեռու, դարուփոսերով կուզեկուզ գնալիս։ Եվ նրանց բոլոր հարցերին տվել էր խուսափողական մի պատասխան. «Մարդ եմ, էլի՛, ինձ համար գնում եմ»։ «Իսկ ո՞ւր ես գնում»։ «Ձեզ ի՞նչ, թե ուր եմ գնում, ինձ համար գնում եմ»։

Գրպանից հանել էին մի փոքրիկ ատրճանակ և մի բուռ թուրքական ոսկի։ Դրանց մասին որոշակի ոչինչ չասաց։ Դարձյալ խուսափողական՝ «Պատերազմ է, հիմա ո՞վ զենք չունի»։ Ոսկու մասին էլ՝ «Տուն-տեղ ծախել եմ, այդքան փող է դարձել»։

Այսքանն իմանալուց հետո գնդապետն իր համար պարզեց, թե հենց դա է, որ կա։ Այս մասին մտածելիս էլ նրա աչ այսին նկատեց կեղծ մորուքի պոկված եզրը և, զինվորներին ճանապարհ դնելով, մոտեցավ, պոկեց մորուքը։ Տակը մնաց ածիլած դեմքը, որի վրա միայն կարճ բեղեր կային՝ սև փայլուն որդի պես կպած վերին շրթունքին։

Հիմա արդեն հանգիստ էր, ուրախ, որ վերջապես հայտնվել է։ Բայց ի՞նչ պիտի տա։ Ժամանակը սուղ է, նրա հաղորդելիք տեղեկությունները՝ չափազանց անհրաժեշտ։

— Այդ մորո՞ւքն ինչի էիր կպցրել։

Քննությունը կատարվում էր հրամանատարական վրանում։ Վարագույր-դուռը հավաքված էր կողքի վրա։ Առավոտվա արևը շեղակի խփում էր մինչև վրանի խորքը, և աչք ծակող լույսի տակ նկատելի էին տարօրինակ հյուրի դեմքի բոլոր շարժումները։ Ավելի ճիշտ, պարզ երևում էր, որ դեմքի ոչ մի մկանն էլ չի շարժվում։ Ոչ մի փոփոխություն, ոչ մի նշան, որ մատներ նրա հոգու խոռվքը։ «Փորձված աղվես է»,— մտածեց գնդապետը

և զարմացավ, որ փորձված աղվեսն այսպես հեշտ է թակարդն ընկել։

— Հը՛, պատմի՛ր, տեսնենք։

— Ի՞նչ պատմեմ, պարոն գնդապետ։ Ի՞նչ եք ուզում ինձանից։

— Այդ մորուքն ինչի՞ էիր կպցրել։ Այս հարցին չպատասխանեցիր։

— Մորո՞ւքը... Դե՛, մորուք է, էլի՛, տարիքս մեծացնում է։

— Ահա՛, տարիքդ մեծացնում է։ Հասկացանք։ Որ կռիվ չգնաս, չէ՞։

Մեղավոր ժպտաց.

— Ճիշտ այդպես, պարոն գնդապետ։ Դե՛, հիմա մեր ազգի կեսը խուսափում է պատերազմից։ Ես էլ մտածում էի... Դե՛ հիմա, որ մեղքս բացվել է, թույլ տվեք՝ ես էլ սանկանում եմ կռվել։

«Սանկանում եմ»։ Սա «ցանկանալն» է, և հայ չէ ասողը.— մտածեց գնդապետը, դրանից էլ ուրախացավ։ Սկզբից հայի նման էր, խոսում էր տանելի հայերեն, և պետք էր ենթադրել, որ հայ մարդն է լրտեսության գնում թուրքերի համար։ Լավ է որ հայ չէ,— մի փոքր թեթևացած՝ մտածեց գնդապետը։

— Ի՞նչ ազգից ես։

— Հը՛մ, ինչի՞ եք հարցնում, պարոն գնդապետ, հայ եմ, ի՞նչ ազգիս պիտի լինեմ։

— Այսինքն, լրի՞վ հայ։

— Ինչպե՞ս թե։ Ոչ լրիվ հայ է՞լ կլինի, պարոն գնդապետ։ Դե՛, տեսնո՞ւմ եք,սաղ-սալամաթ տղամարդ եմ։ Միայն այդ մորուքն էի դրել, որ մի քիչ տարիքով երևամ։

Իրոք, որ «սաղ-սալամաթ տղամարդ» էր, մոտավորապես գնդապետի հասակի, գուցե նույնիսկ մի քիչ երկար։ Պինդ էլ կառուցվածք ուներ։ Գլուխը... ոչ թուրքի էր, ոչ հայի, այլ ինչպես՝ ինչ-որ խառնուրդի։

— Ի՞նչ ես քեզ հիմարի տեղ դրել,— ձայնը բարձրացրեց Փիրումյանը, և հարցաքննվողը նրա կրակված աչքերից վախեցավ։— Շալվարդ հանի՛ր։

Հիմա նա արդեն վախից կծկվեց։ Երևի չէր սպասում, թե հարցն այսքան կբարդանա։

— Հո չե՞ս խլացել։ Ասացի՝ շալվարդ հանի՛ր։

— Ինչի՞ համար, պարոն գնդապետ, բա ամո՞թ չի ձեր ներկայությամբ մերկանամ։

— Իմ ներկայությամբ դու հոգիդ էլ պիտի մերկացնես։ Դե՛հա՛, շալվարդ վա՛յր գցիր,— ոզնու պես փշոտվեց գնդապետը։

Շալվարն իջեցրեց, ձեռքը տարավ ամոթին։

— Ձե՛ռքդ։

Ձեռքն էլ ետ քաշեց։ Եվ ամեն ինչ պարզ էր։

— Իսկ ինչո՞ւ էիր թաքցնում։

— Թաքցնում էի, որ ինձ չսպանեն։ Հո ես մեղք չունեմ, որ թուրք եմ,— խեղճացած, դողալով խոսեց նա։

— Իսկ այդ ո՞ր հայն է անմեղ թուրքին սպանում։

Նա փաթաթվեց գնդապետի ոտքերին, երեսը երկարաճիտ կոշիկներին էր քսում, մզզում էր հորթի պես, լաց էր լինում։

— Խնայի՛ր ինձ, պարոն գնդապետ, ես քո արևի՛ն մեռնեմ, ես քո ոտի տակի փոշի՛ն...

— Ոտի՛ կանգնիր։ Քեզ հետ եմ, ոտքի՛։

Նա դեռ երեսն էր քսում, շողոմ-շողոմ մզզում էր։ Գնդապետը ձեռքը գցեց նրա թևատակը, բարձրացրեց.

— Ա՛յ, այդպե՛ս-— ասաց,— ուղիղ կանգնիր և ուղիղ պատասխանիր հարցերիս։ Ուղի՛ղ, միայն ուղի՛ղ։

— Ախա՛ր, ես ի՞նչ պատասխանեմ,— բռունցքներով տրորում էր աչքերը, որոնցից այնպես էլ ոչ մի կաթիլ արցունք չէր գալիս։— Ես ի՞նչ պատասխանեմ, ես մի խեղճ մուսուլման եմ և ոչ մի պատասխան էլ չունեմ։

— Ոչ մի պատասխան չունե՞ս։

— Ոչ, գադա՛ն ալըմ, գլխովդ շո՛ւռ գամ, պարոն գնդապետ։

— Ես վերջին անգամ եմ զգուշացնում. քեզ հետ մուկ ու կատու խաղալու ժամանակ չունեմ։ Եվ պատմիր, թե ո՛ւր ես գնացել, ի՛նչ ես տարել ու ի՛նչ ես բերել։

— Ես ոչինչ էլ չունեմ պատմելու։ Դե՛, սպանի՛ր, եթե պիտի սպանես դրա համար,— և սկսեց թոսխոտալ, իբր, ներսի ամբողջ արտասուքն սպառվել է, հիմա էլ ահա այդպես ճաք ու պատառ է լինում։

Այն ժամանակ Փիրումյանը նրա բազուկը բռնեց։ Ինչպես որ բժիշկն է ստուգում հիվանդի զարկերակը։ Բազուկը գցեց մատանի մատի ու միջի մատի արանքը և ստուգեց ոսկորի ամրությունը։

— Վա՜յ, նանա՜,— ծղրտաց, գալարվեց թուրքը և գունդուկծիկ դարձավ գնդապետի առաջ։— Մեռա՜, նանա՜, վա՜յ։

— Դու չես մեռնի,— ատամները կրճտացնելով հայտնեց գնդապետը։— Ես թույլ չեմ տա, որ դու մեռնես, այլ այսպե՛ս, ահա այսպե՛ս,— մի քիչ ավելի սեղմեց, և թուրքը ոռնաց.— Ահա՜, այսպե՛ս, զգո՞ւմ ես, հասկանո՞ւմ ես, ահա այսպես քո միջից կհանեմ բոլոր տեղեկությունները։ Ես քեզ զգուշացրի, որ ժամանակ չունեմ։ Կարծում ես՝ կատա՞կ եմ անում։

Թուրքը թուլացած փռվեց գնդապետի ոտքերի առաջ։ Ձեռքն ազատ էր արդեն, կարող էր առնել բերանը։ Բերանն առավ կապտած, թուլացած ձեռքը և մղձաց։ Հետո էլ պպզեց ու սկսեց օրորվել աջ ու ձախ։ Լալիս էր ու օրորվում։ Հիմա որ բացվե՞լ էին նրա արտասուքի աղբյուրները։

— Դե՛, խոսի՛ր, ժամանակ չունեմ,— հանգիստ կարգադրեց գնդապետը։

— Վա՜յ, մեռնում եմ, պարոն գնդապետ, թող շունչս տեղը գա։ Լա՜վ, է՜, լա՜վ, հիմա՜։ Էս բոպեին։

Եվ կկզած էլ սկսեց պատմել։

Սեյֆուլլա Աբբաս Օղլի Ասադուլլաևը, այսինքն՝ քննվողը, Երևանի մուսուլմանական կոմիտեի անդամ, անձնապես ծանոթ Հայոց ազգային խորհրդի անդամներին, Երևանի պարետ Արտո Շահխաթունու մտերիմն ու մանկության ընկերը, մայիսի 18-ին ներկա է եղել Ազգային խորհրդի ու Պետական դումայի միացյալ նիստին ու նրա որոշումն է հասցրել թուրքաց հրամանատարությանը։

Գնդապետ Փիրումյանը, վրանի միակ աթոռին նստած, լսում էր Սեյֆուլլա Ասադուլլաևի հաղորդումը և համոզված էր, որ դա միայն մակերեսի վրա եղածն է։

— Հետո՞։

— Հետո էլ ի՞նչ, պարոն գնդապետ։ Գնացել, հայտնել եմ, հիմա էլ վերադառնում եմ։

— Իսկ ձերո՞նց ինչ ես տանում։ Ի՞նչ հանձնարարություն կա։ Ցաղուբ Շեվքի փաշան այդ հաճելի լուրն առել է ու առանց որևէ հրահանգի քեզ բա՞ց թողել։

— Դե՛, ի՞նչ հրահանգ, ես լուր տանող մարդ եմ։

— Լուր տանողը լուր բերող էլ է լինում։

— Չէ՛, վալլա՜հ, պարոն գնդապետ, այն ոսկիները տվեցին,

թե՝ շատ ապրես, շատ գոհ ենք, որ այս լուրը հասցրիր։ Ուրեմն, որ հայերը հանձնվում են, մենք էլ առանց կոտորածի ու արյունհեղության կհասնենք Երևան, ու էդպես էլ գործը կպրծնի։

— Բայց ես քեզ զգուշացրի, չէ՞,— ցածրաձայն, սակայն կտրուկ խոսեց Փիրումյանը։— Քեզ ասացի, որ պիտի քաշեմ-հանեմ բոլոր տեղեկությունները։ Մինչև վերջինը։— Եվ վեր կացավ տեղից։

— Վա՜յ, գաղա՜ն ալըմ, էլ չբռնես, պարոն գնդապետ,— հենց պպզած ետ-ետ գնալով աղերսեց Սեյֆուլլա Ասադուլլաևը, որի աչքերը սարսափից կլորացել էին։— Ախր ինձ կսպանե՛ն մերոնք։ Ես ո՞նց կապրեմ սրանից հետո...

Ասադուլլաևը պատմեց, որ թուրքերը նոր հարձակման են պատրաստվում։

— 21-ին պիտի առաջ շարժվեն, պարոն գնդապետ։ Վաղը չէ, մյուս օրը։ Նրանք ուզում են այսպես,— կապտած թաթն էլ կացնի պես առաջ տալով ցույց տվեց՝ ինչպե՛ս,— պիտի ճեղքեն էջմիածնի վրա, կտրեն, հասնեն Երևան...

— Իսկ դո՞ւք ինչ պիտի անեք այդ ընթացքում։

— Մեզ էլ հանձնարարում են, որ թիկունքից խփենք։ Իրը թե գյուղերում ու Երևանում կազմակերպված ջոկատներ կան և նրանք պիտի թիկունքից խփեն... Բայց, դե՛, մենք ի՞նչ ջոկատներ ունենք որ, մենք մեր եղբայր հայերի հետ հարյուր տարի աղուհաց ենք կերել, մենք ո՞նց թույլ կտանք այդպիսի նամարդություն։

— Որտե՞ղ են գտնվում այդ ջոկատները և ղեկավարների անունները,— մռայլ ու մտահոգ պահանջեց գնդապետը։

— Դե՛, իրենք են մտածում, թե ջոկատներ կան, պարոն գնդապետ։ Ո՞ւր են այդպիսի ջոկատներ։ Չկան, վալլա՛հ, աստված վկա, պարոն գնդապետ։

— Բայց մենք պայմանավորվեցինք, որ ուղիղ խոսես և ասես ամեն ինչ։ Ամե՛ն ինչ՝ մինչև վերջ։

Գնդապետը թուղթ ու մատիտ հանեց իր պայուսակից, դրեց դաշտային սեղանի վրա, որ գտնվում էր վրանի անկյունում, և կարգադրեց.

— Մոտեցի՛ր և գրի՛ր, թե որտեղ են այդ ջոկատները և ովքեր են նրանց ղեկավարները։

— Պարոն գնդապետ, գադա՞ն ալըմ, խեղճ եմ։ Ախար, ինձ թիքա-թիքա կանեն, չհանդամի բաժին կդառնամ։

— Ոչ ոք ոչինչ չի իմանա։ Իսկ այստեղից դու կհեռանաս քո մորուքով և կասես՝ «Ոչինչ չկարողացան պարզել, վասսալա՜մ...»։

Թուրքի դեմքն այլայլվեց։ Ձեռքերը բարձրացրեց, սկսեց գլուխը ծեծել։

— Տե՛ղն է ինձ, տե՛ղն է ինձ։ Ինձ նման շանը սա դեռ քիչ է։ Ես ի՞նչ գործ ունեի։ Է՞, ինչի՞ ես խնայում, պարոն գնդապետ, տուր, սատկացրու, էլի՞, ինչի՞ ես պահում,— լրտեսն այսպես ինքնադատաստան էր անում՝ մերթ-մերթ գլխին զարկելով, մազերը փետելով, ականջները քաշելով։ Հետո էլ նամազի համար չոքելու պես ընկավ, սկսեց գլուխը զարկել գետնին։

— Բավակա՞ն է հիստերիկա սարքես, վե՛ր կաց տեղից,— գոռաց գնդապետը և մեկ էլ հասկացավ, որ իր «հիստերիկան» ևս ավելորդ է. չէ՞ որ Սեյֆուլլա Ասադուլլաևի սարքած այս տեսարանը պարզապես վերջին հանձնարարությունը կատարելու նախապատրաստությունն է։— Դե՛, շուտ արա, վեր կաց, գրիր՝ ինչ որ պահանջեցի, և հայդա՛։

Ցուցակն ստանալուն պես գնդապետ Պողոսբեկ Փիրումյանը թուրք լրտեսի առաջ շպրտեց կեղծ-մորուքը, որ կպցնի, ապա ներս հրավիրեց իր համհարզին։

— Սրան պահեցեք առանձին։— Լրտեսը վիզը ծուռ նայեց նրան, և ի պատասխան այդ հայացքի՝ գնդապետն ավելացրեց.— Այս թղթի ճշտությունը պիտի ստուգենք...

* *
*

Ռազմաճակատի հրամանատար Դանիելբեկ Փիրումյանն իր հորեղբորորդու զեկույցը լսեց մեծ բավականությամբ։

— Պողո՜ս տղա, այս թուրքին աստված է ղրկել,— հաճույքով ձեռքերը շփեց, ժպտաց.— Վաղը չէ մյուս օրը նրանք առաջ կշարժվեն։ Եվ որովհետև համոզված են, թե մեր զորքը քաշվել է Կոտայքի ու Սևանի բարձունքները, զորաշարժը կլինի պապոնց տուն գնալու պես։ Մենք պետք է օգտվենք այդ հանգամանքից։ Մենք պետք է հարվածենք։ Այս անգա՛մ կամ երբե՛ք։

— Ես էլ մտածում եմ, որ այս հարվածից շատ բան կլինի կախված։ Թուրքն այդ հարվածն, իհարկե, սպասում է, բայց, բարեբախտաբար ո՛չ այստեղ։ Չէր կարող չսպասել որովհետև համոզված է, որ հակառակորդը մահվան շնչում էլ իր մեջ ուժ կգտնի գոնե մեկ հարված հասցնելու համար։

Դանիելբեկը համամիտ էր ազգականի հետ։ Իսկապես, մի՞թե թուրքն այնքան հիմար է, որ պիտի կարծի, թե հայ ժողովուրդը մինչև իր մահվան վիհը ետ է քայլելու այսպես խեղճուկրակ, առանց մի փոքր անգամ վրեժխնդիր լինելու այն բոլոր տառապանքների ու գազանությունների համար, որ կրել է այսքան տարիների ընթացքում, մանավանդ վերջին այս պատերազմում։ Այդ հարվածը կարելի էր հասցնել Էրզրումում կամ Երզնկայում, Սարիղամիշում կամ Բիթլիսում... Կարում՝ անպայման։ Իսկ երբ այստեղ էլ չհասցվեց, թուրքն սպասում էր, որ Ալեքսանդրապոլը կդառնա փորձաքար։ Թուրքի բախտից Ալեքսանդրապոլը եթե փորձաքար էլ եղավ, ապա միայն ցույց տալու համար, թե ի՛նչ աղետների կարող է ենթարկվել մի ժողովուրդ, որի գլուխ են կանգնած ապիկար ղեկավարներ և անարի զորավարներ։ Հավանաբար թուրքի միակ վախը մնացել է ժողովրդական պատերազմը Երևանում և Արարատյան երկրի մնացած բնակավայրերում։ Չէ՞ որ մտնել մի երկիր՝ դեռ չի նշանակում նրա տերը լինել և նրա բնակչությանը թելադրել նվաճողի անկասեցնելի կամքը։ Երկիրը պետք է նվաճել նրա բնակչությա՛մբ հանդերձ։ Եվ այդ հաղթանակը դյուրացնելու համար թուրքը ոտքի է հանում Արարատյան երկրի մուսուլման բնակչությանը, որի հարվածներից կաթվածահար պիտի լինի հայությունը, և թուրքի առաջ այլևս գոյություն չպիտի ունենա ոչ մի խոչընդոտ։

— Դանիելբեկ, սիրելիս, չի՞ լինի, որ այս հարվածի իրավունքը վստահես ի՛նձ, իմ գնդի՛ն։

Ռազմաճակատի հրամանատարը մտերմիկ ժպտաց, ինչպես սիրելի զավակի չարաճճիության վրա են ժպտում։ Թեև իրենից ընդամենը չորս տարով փոքր, Պողոսը միշտ էլ կրտսերի դերում է եղել նրա ներկայությամբ, կրտսեր եղբոր կամ ավագ որդու։ Այդքան հարազատ։ Բայց ինչո՞ւ հարազատ չլինեին հորեղբորորդիները։ Նրանց աշխարհում տոհմակիցները եղբայրներ էին համարվում և սա՝ այն պատճառով, որ այնտեղ դեռևս կար, սրբություն էր արյան հարազատության չխամրող զգացումը։ Եղբայր-

ներից ավագը «մեծ ապա»— «մեծ հայր» էր մյուսների ու նրանց զավակների համար, և մյուսներն էլ ավագի զավակների համար «կուճի ապա» էին, «փոքր հայր»։ Ուրեմն, այսպես թե այնպես, հորեղբայրները՝ մեծ թե փոքր, հայր էին բոլոր զավակների համար, և հավասար էին նրանց բոլորի իրավունքները, բացի մեկից՝ խոսքի իրավունքի՛ց։ Խոսքը մեծի՛նն էր, ավագի՛նը։

* *
*

Մի շաբաթ էլ չկար, ինչ Ալեքսանդրապոլը թուրքերի նստավայրն էր դարձել, և այդտեղից տարբեր ուղղությունների վրա ձգվող ճանապարհներով հայ ժողովրդի վերջին ուժերի դեմ պիտի շարժվեին թուրքական հայաջինջ հեղեղները։ Քաղաքում ու նրա մերձակայքում տեղավորված էին Կովկասյան ճակատում գործող թուրքական բանակի հիմնական ուժերը՝ 5-րդ, 9-րդ, 11-րդ ու 36-րդ դիվիզիաները, շուրջ երկու հազար հեծյալներից բաղկացած քրդական մի զորաջոկատ և տեղական մուսուլմանական բնակչությունից կազմված անկանոն բազմաթիվ զորախմբեր։

Թուրքական բանակի հրամանատարության ծրագրած արշավանքը, Ալեքսանդրապոլից սկսվելով, պետք է ծավալվեր երեք ուղղություններով.

Հինգերորդ դիվիզիան Քարախաչի լեռնանցքով գնում էր դեպի Բորչալու, նպատակ ուներ ոտքի տակ տալ մինչև Թիֆլիս, նվաճել Վրաստանի մայրաքաղաքը, ապա շարժվել Բաքվի վրա։

Տասնմեկերորդը, տեղարնիկ մահմեդականներից հետագայում կազմված խաժամուժի հետ միասին, հարձակման էր անցել Ղարաքիլիսայի ուղղությամբ, պիտի Դիլիջանով, Քարվանսարայով դուրս գար Ղազախ, անցներ Բաքու։

Երրորդ ճակատն ուղղված էր Երևանի վրա։ Այս ուղղությամբ շարժվում էին 9-րդ և 36-րդ դիվիզիաները՝ քրդական հեծելազորի և դարձյալ տեղական մահմեդականներից հավաքված զորաջոկատների հետ միասին։ 9-րդ դիվիզիան խնդիր ուներ Արագած սարը շրջանցելով դուրս գալ Ապարան, այնտեղից զորաշարժով նվաճել Աշտարակը, Եղվարդը և շրջակաները, ապա հարձակվել Երևանի վրա։ Նրա կազմի մեջ էին մտնում Դար-

գանելում հռչակված 106-րդ, 107-րդ և 108-րդ հետևակային գնդերը, հրետանային երկու դիվիզիոն, հարվածային հետևակի ու սակրավորների մի գումարտակ, կորպուսային մեկ հեծյալ գունդ և այլ զորամիավորումներ, որոնցից հատուկ առաջադրանքներ ունեին շուրջ 1500 հեծյալից բաղկացած քրդական զորամասը և տեղական մուսուլմաններից հավաքված առանձին անկանոն կազմավորումներ։ 36-րդ դիվիզիան գլխավոր ու վճռական հարվածի իրականացնողն էր լինելու։ Այս ճակատում թուրքերը սրընթաց գրոհով Ալեքսանդրապոլից պիտի անցնեին Սարդարապատ, դուրս գային Արարատյան դաշտը և հաղթական երթով Երևանում միանային 9-րդ դիվիզիային։ Երևանի նվաճմանը պիտի հաջորդեր ավերիչ արշավանքը դեպի Սևան, Սյունիք, Ղարաբաղ, Գանձակի կողմերը։ Եվ, այսպիսով, հայկական ու հայաբնակ շրջանները նվաճած թուրքական զորքերը, մուսավաթական բանակի հետ միասին, Գանձակից շարժվելու էին Բաքվի վրա։

Ալեքսանդրապոլից մինչև Բաքու՝ ավերված Հայաստանի և հայության դիակների վրայով։

Ղարաքիլիսայի գծի վրա Նազարբեկովի ընդհանուր ղեկավարությամբ պաշտպանության անցած հայկական զորամասը համալրվել էր զորավար Անդրանիկի ջոկատով, որն ուներ շուրջ 3500 ընտիր զինվորներ։ Այնտեղ էին նաև Բեկ Մամիկոնյանի ու գեներալ Արեշևի ղեկավարած զորամիավորումները։

Ենթադրվում էր, որ Ապարանի վրա շարժվող 9-րդ դիվիզիայի ու տեղական մահմեդական խաժամուժի դեմ մղվելիք ճակատամարտը ղեկավարելու էր Դրաստամատ Կանայանը, որի տրամադրության տակ դրվեցին գնդապետ Դոլուխանյանի 6-րդ հրաձգային գունդը, փոխգնդապետ Կորոլկովի պարտիզանական հեծյալ գունդը, փոխգնդապետ Սիլինի սահմանապահ գումարտակը և Հայկական երկրորդ հեծյալ գունդը, որն Ալեքսանդրապոլի անփառունակ անկումից հետո գնդապետ Զալինյանի ղեկավարությամբ արագորեն վերակազմվեց Եղվարդի դաշտում և անմիջապես բարձրացավ Ապարան՝ թշնամու առաջընթացը կասեցնելու։

Ալեքսանդրապոլից արշավանքի ելած թուրքական զորամասերի հիմնական հարվածն ուղղված էր Սարդարապատ-Վաղարշապատ-Երևան գծի վրա։ Այստեղ էր գործում թշնամու հռչակա-

վոր Գալիպոլու կամ Դարդանելյան դիվիզիան՝ իր 36 թվահամարով*։

Նրա թևերով առաջ էին շարժվում քուրդ վարձկանների հեծելազորը և կողոպուտի ծարավի զանազան ավազակախմբեր։ Մարտական կարևոր առաջադրանքներ էին իրականացնելու տեղական այլևայլ անկանոն զորախմբերը, որոնց մի մասը դիվիզիայի պոչն էր դարձել Կարսի շրջանից, իսկ մյուս մասը, հայերից գաղտնի, կազմակերպված էր Արարատյան նահանգի գյուղերում և արդեն հրահանգ պիտի ստանար թիկունքից արնաքամ անող հարվածներ հասցնելու հայոց զորքերին։ Այս հրահանգը, ինչպես հայտնի է, կուլ էր գնացել Պողոսբեկ Փիրումյանի գնդի հետախուզությանը։ Սակայն զորախմբերն իրենք, ուրիշ աղբյուրներից տեղեկություններ ունենալով ռազմաճակատի վիճակի մասին, զինված էին, կազմ ու պատրաստ և սպասում էին իրենց ժամին։

Սարդարապատ-Վաղարշապատ-Երևան գծի համար, իբրև օժանդակ ուժ, կանգնած էին նաև թուրքական ուրիշ զորամիավորումներ, որոնց շարքում առանձնահատուկ պատասխանատու խնդիր պիտի կատարեին 6-րդ և 12-րդ հետևակային դիվիզիաները՝ սփռված Արաքս գետի աջ ափի երկարությամբ, Կողբի ու Իգդիրի կողմերում։ Սրանք ևս հրամանի էին սպասում, որպեսզի Արաքսն անցնեն և, հեղեղելով Արարատյան դաշտը, ավերեն բոլոր բնակավայրերը, կոտորեն տեղացիներին ու արևմտահայկական նախճիրից փրկված գաղթական խլյակներին։ Թուրքական հրամանատարությունը սովորաբար հետևակային զորքերով էր լուծում հայկական շրջանները հայաթափ անելու գործը, և այս տեսակետից 6-րդ ու 12-րդ դիվիզիաները բավականին փորձ ունեին։

Կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի հրամանատարը, ինչպես ասվել է արդեն, ֆերիկ Վեհիբն էր, Գերմանիայում ռազմական կրթություն ստացած և դիվանագիտական հարաբերություններում բավական փորձված մի գործիչ, որը լավ գիտեր

---

* Թուրքական 36-րդ դիվիզիան Գալիպոլու (Գելիբոլու) կամ Դարդանելյան էր կոչվում, որովհետև նշանավորվել էր Դարդանելի համար Գալիպոլու թերակղզում մղված մարտերում, և այն Կովկասյան ճակատ էր ուղարկվել հաղթանակը շուտափույթ ապահովելու համար։

հայկական կյանքը և ժամանակի հայ գործիչներից շատերի անձնական ծանոթն էր։ Երբ դեռ ֆերիկ-մարշալ չէր, և 1908-ի հեղաշրջումից հետո երիտասարդ թուրքերի իր կուսակցությունը թուրքական կյանքի վերակառուցման առաջին քայլերն էր կատարում, նա եղավ Սասունում, Բիթլիսում, Վանում ու Շատախում, հանդիպեց հայկական շրջանների հետ, եղբայրության ու համագործակցության հավաստիացումներ տվեց նրանց, միաժամանակ, հենց նրանց աչքերի առաջ, գոյություն ունեցող քրդական զորամիավորումներին հովանավորեց իր կուսակցության անունից, երբ որ պարզից էլ պարզ էր, որ այդ զորամիավորումները սուլթան Համիդի նախաձեռնությամբ էին ստեղծվել՝ ուղած ժամին հայերի վրա քշելու համար։ Իզուր չէր, որ քրդական այդ հեծելազորը «Համիդիե» էր կոչվում սուլթան Համիդի անունով։

1915-ի հայկական ջարդերի ժամանակ էլ ձեռքերը ծալած չէր եղել Վեհիբը։ 1917-ի վերջում Կովկասյան բանակի հրամանատար նշանակվելով՝ նա իր կուսակիցների հակահայկական ծրագրի իրականացումն ավարտին հասցնելու մեծ հեռանկար ստացավ։ Եվ այդ հեռանկարը շոշափելի իրականություն դարձնելու համար գաղտնի ու բացահայտ ճանապարհներով իր ծրագրերին լծեց Ադրբեջանի մուսավաթական կառավարության անդամներին։ Հետագայում նա հրապարակորեն խոստովանել է, որ առանց Բաքվի մուսավաթականների եռանդուն աջակցության դժվար թե իրենց հաջողվեր հայերին ու վրացիներին անջատել իրարից և Կովկասյան ճակատը թողնել միայն հայերի ուսերին։

Ինչ էլ որ լիներ ֆերիկ Վեհիբ փաշան ճարպիկ զորավար էր, կարողանում էր օգտվել անդրկովկասցիների տարաձայնություններից և ռազմական ու դիվանագիտական գործեր վարելու անճարակությունից։ Այդ նա էր, որ պարբերաբար զինադադար էր կնքում և, հակառակորդին չկռվելու տրամադրելով, հարձակվում, առաջ շարժվում այնքան, որքան պետք էր իրեն՝ մինչև հաջորդ հարձակման նախապատրաստությունը։

Դեպի Երևան շարժվող Դարդանելյան (36-րդ) դիվիզիայի հրամանատարը գնդապետ Քյազիմ բեյն էր, որից վեր Յաղուբ Շևքի փաշան էր՝ զորամասի հրամանատար, դարձյալ հայկական շրջաններին ծանոթ, Տասնհինգի արյունարբուներից մեկը։ Ամեն անգամ Բաթումից ռազմաճակատ այցելող ֆերիկ Վեհիբին հավատացնում էր, թե հեռու չէ այն օրը, երբ էջմիածինն ու Երե-

վանք արյան մեջ խեղդա՝ իրենք ճանապարհ կբացեն դեպի Բաքու։ Ի՞նչ էր մնացել մինչև Երևան. իրենք Ալեքսանդրապոլը ետև էին թողել և հույս ունեին շքերթով, առանց զորքի ու զենքի որևէ կորստի, Արարատյան երկիրն առնել։

Իսկ ի՞նչ կար Յաղուբ Շեքի փաշայի բանակի դեմ։ Հայկական կորպուսն ի՞նչ էր հանել այդ սև ուժին դիմադրելու համար։

Գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանատարության տակ գտնվող Երևանյան ճակատը, ցուցակների համաձայն, հսկայական ուժերով պիտի կռվեր ու հաղթեր թշնամուն։ Նրա տրամադրության տակ բրիգադներ կային, դիվիզիա, հեծյալ ու հետիոտն բազմաթիվ գնդեր... Սակայն՝ լոկ ցուցակների համաձայն, այսինքն՝ անվա՛մբ։ Բրիգադը սովորաբար մի քանի գնդից բաղկացած զորամիավորումն էր։ Մինչդեռ Երևանյան ամեն բրիգադում 100—150 մարդ էլ չէր մնացել։ Գնդերից յուրաքանչյուրը հալչելով մի քանի տասնյակ զինվոր ունեցող ջոկատ էր դարձել։ Համալրումներ պիտի կատարվեին, զորաջոկատները պիտի վերակազմվեին ու վերադասավորվեին։ Սակայն դրա համար ոչ լրացուցիչ ուժ էր մնացել, ոչ էլ, մանավանդ, տրամադրություն ու եռանդ։ Քանի որ Թիֆլիսից ազգային պարագլուխները, նահանջի իր ճանապարհի տարբեր կետերից էլ Հայոց սպարապետ Թոմաս Նազարբեկովը բոլորին հորդորում էին զինադադար կնքել, հանձնվել թուրքերին։

Եվ, այսուհանդերձ, Հայկական կորպուսի Երևանյան զորամասի տրամադրության տակ էին գտնվում հետևյալ միավորումները. հրաձգային 2-րդ դիվիզիայի 5-րդ ու 6-րդ գնդերը, որոնցից առաջինի հրամանատարն էր Պողոսբեկ Փիրումյանը, երկրորդինը՝ Դանիելբեկ Փիրումյանը, գնդապետ Բաղդասարովի 3-րդ հետևակային բրիգադը, Պարտիզանական ու Զեյթունյան հեծյալ և հետևակային գնդերը, գնդապետ Պերեկրյոստովի, փոխգնդապետ Սիլինի, փոխգնդապետ Կորոլկովի խմբերը, գնդապետ Արարատյանի ղեկավարած հրետանային չորս մարտկոց։ Եղել էին, իհարկե, ուրիշ զորամիավորումներ ևս, որոնք փոխադրվել էին Ղարաքիլիսայի ճակատը, որովհետև, իբր, այնտեղ դրությունը ծանրացել էր անսպասելիորեն, և, ահա, Երևանյան ճակատը կարող էր գլուխ պահել մնացածով, որ ճշգրիտ հաշիվներով անում էր չորս հազար զինվոր։ Չորս հազար զինվոր՝ թուրքերի Դարդանելյան դիվիզիայի, մի քանի հազարանոց ավերիչ խա-

Ղամբուրի և Իգդիրում ու Սուրմարիում իրենց ժամին սպասող 5-րդ և 12-րդ դիվիզիաների դեմ։

Մայիսի 20-ի երեկոյան, երբ Սիլիկյանի հրամանով Սուրմարիից ետ քաշված 5-րդ և 6-րդ հայկական հետևակային գնդերը դեռևս գտնվում էին Արաքսի ափին, երկաթգծից հարավ և դեռ չէին էլ բռնել այն դիրքերը, որ գրավելու էին՝ թշնամու դեմն առնելու համար, թուրքերն Ալեքսանդրապոլի կողմից մտան Արարատյան դաշտը և, ինչպես կանխատեսել էին, հաղթական շքերթով, առանց լուրջ դիմադրության հանդիպելու, տիրացան Արաքս կայարանին։

Այդ օրերին տեղի ունեցած մարտերի մասնակից Հովհաննես Բաղրամյանը, հետագայում Սովետական Միության մարշալ և Սովետական Միության կրկնակի հերոս, իր հուշերի գրքում ամենայն մանրամասնությամբ պատմում է Արագած կայարանի, ապա նաև Սարդարապատ գյուղի ու կայարանի գրավումը թուրքերի կողմից։ Ըստ նրա ունեցած տեղեկությունների՝ Ախուրյան գետակի ձախափնյա Ղազարապատ գյուղից մինչև Արագած երկաթուղային կայարանը ձգված ճակատի գծի վրա պաշտպանությունն իրականացնում էր Արագածյան կամ Ալագյոզյան կոչված գունդը, որի կազմի մեջ էին մտնում Հայկական հետևակային 1-ին և 2-րդ բրիգադները և Հայկական 1-ին առանձին հեծյալ գունդը, երեքը միասին՝ շուրջ 700 զինվոր ու սպա։ Այս ջոկատի վրա էր դրված նաև երկաթգծի մոտերքից դեպի հյուսիս շարժվող հոծ գաղթականության ապահով տեղափոխության խնդիրը։ «Բոլոր ճանապարհները բառացիորեն լեփ-լեցուն էին մարդկանցով, սայլերով ու անասուններով։ Քրդական հեծյալ ջոկատների հարձակումների պատճառով բազմիցս խուճապի մատնվեցին գաղթականները։ Խուճապի ժամանակ նրանք հաճախ ձգում էին ունեցած-չունեցածը, որպեսզի զավակներին ու իրենց փրկեն սպառնացող վտանգից»,— պատմում է անվանի զորահրամանատարը, որն այն ժամանակ կորնետի* աստիճանով ծառայելիս է եղել Հայկական առաջին հեծյալ գնդում, բանակային ավագ Զոլոտարյովի հրամանատարության ներքո։

Այսպես, ուրեմն, Արագածյան ջոկատը չի կարողանում թշնամուն լուրջ դիմադրություն ցույց տալ, և Շևքի փաշայի զորքի

* Կորնետ— սպայական առաջին աստիճանը հեծելազորում։

առաջապահները մայիսի 20-ի երեկոյան գրավում են Արագած կայարանը։

Այս ժամանակ Զոլոտարյովը տեղակայված է լինում Գեչիրլու գյուղում և մայիսի 21-ի կեսօրին, ճշտված տեղեկություններ չունենալով թուրքերի առաջխաղացման մասին, իր մոտ է կանչում կորնետ Բաղրամյանին, կարգադրում «հինգ ձիավորից բաղկացած հեծյալ պարեկի գլուխն անցնել, անմիջապես քառարշավ երթով դուրս գալ Սարդարապատի արևմտյան ծայրամասը և պարզել, թե թուրքերն այդ բնակավայրի ուղղությամբ ինչպիսի ուժերով են ծավալել հարձակումը, միաժամանակ ճշտել, թե Հայկական 1-ին հետևակային բրիգադն ինչպիսի ուժերով է պաշտպանում հիշյալ գյուղը»։ Այս առաջադրանքը կատարելուց հետո Բաղրամյանը շուտափույթ պիտի վերադառնար Գեչիրլու և զեկուցեր հետախուզության արդյունքների մասին։

Պատանի կորնետը, հինգ հաջողակ հեծյալների գլուխն անցած, հասնում է Սարդարապատ գյուղի արևելյան թաղը, որից կենտրոնական փողոցն է ձգվում դեպի արևմտյան թաղամասը։ Հենց այստեղից էլ հետախույզների առաջ բացվում է հետաքրքիր տեսարան. դիմացից ընդառաջ էին գալիս «ռուսական բանակի ռազմական համազգեստով ու հանդերձանքով, հրացանները թեքությամբ դեպի առաջ բռնած, մոտ քսան զինվոր»։ Իրար տեսնելով՝ հանկարծակիի եկան ու կանգ առան ինչպես քսան զինվորները, այնպես էլ Բաղրամյանի հետախույզները։

Դիմացից եկողներն, իհարկե, թուրքեր էին, որ հագել էին Արևմտյան Հայաստանի քաղաքներում ռուսական ռազմական պահեստներից կողոպտած զգեստները։ Բայց հայ հետախույզներն ինչպե՞ս իմանային, թե նրանք թուրք են և ոչ թե ռուսական բանակի զինվորներ, մանավանդ որ դեռևս չհերքված տրվյալներով գյուղի արևմտյան թաղամասը պիտի պաշտպանեին հայկական զորամասի ստորաբաժանումները։ Իսկ թուրքե՞րն ինչպես պարզեին՝ դիմացից իրենց պես ռուսավարի «կահավորված» թուրքե՞ր են, թե՞ իսկապես ռուս զինվորներ։ Առաջինը Բաղրամյանն է ջանում դիմացից եկող «յուրայիններին» հասկացնել, որ իրենք հայեր են։ Ասում է. այն ժամանակ «ես ամբողջ ուժով ու ամբողջ ձայնով սկսեցի հայերեն նրանց հավաստիացնել, որ մենք յուրայիններ ենք, հայեր ենք»։

Երևի թուրքերն արդեն հասկացել էին ամեն ինչ. ձեռքներն

էին թափահարում՝ հասկացնելով, որ նրանք ավելի առաջ գնան։ Այն ժամանակ Բաղրամյանը, դիմացիններին ավելի միամտացնելու համար, իսկույն վայր է իջնում ձիուց և խաչակնքում։ Թուրքերը դրան պատասխանում են հրացանային մի համազարկով, որը, բարեբախտաբար, ոչ մի վնաս չի տալիս, որովհետև, նախ, նրանք իրարից բավականին հեռու էին գտնվում, ապա և հանկարծակիի եկած կրակողները դեռ լրիվ չէին զգաստացել արտասովոր պատահարից։

Բաղրամյանի զինվորները ձիերով, իսկ ինքը՝ ձին թողածվազելով, հասնում են Գեչիրլու և զեկուցում, որ Սարդարապատում թուրքերն են տիրություն անում։

Սարդարապատի գրավման բոթն ավելի շուտ հասել էր Դանիելբեկ Փիրումյանին, որն այն ժամանակ թուրքիկ խորհրդակցության էր նստել Հինգերորդ գնդի հրամանատար, գնդապետ Պողոսբեկ Փիրումյանի հետ։

Պողոսբեկն առաջիններից մեկն էր շնորհավորել տոհմակցի վճռականությունը։ Նա միշտ էլ դժգոհ էր եղել Հայկական կորպուսի ու Երևանյան ռազմաճակատի վերին հրամանատարության տարտամ քայլերից, իսկ վերջին օրերին, տեղյակ լինելով նրանց անձնատվական քաղաքականությանը, անվերջ մտածում էր այն մասին, թե ինչպիսի՞ աղետ պիտի գա ազգի գլխին, եթե երկրի այս վերջին տարածքն էլ հանձնվի թուրքի ձեռքը։ Դանիելբեկի որոշման մասին երկու օր առաջ իրեն հաղորդեց Սիլիկյանը՝ դրությունն այնպես ներկայացնելով, թե այդ որոշումն ակնհայտ նշան է ծայրահեղ հուսահատության։

— Ամեն մարդ ազատ է իր գլուխը մահու տալու,— ասաց նա։— Բայց բանակն ու նրա թիկունքում կանգնած ժողովրդի վերջին մնացորդը դեպի կործանո՞ւմ առաջնորդել... Ի՞նչ ասեմ... դա խելքիս չի նստում։ Երևի մտածում է՝ или пан, или пропал: Երկու դեպքում էլ պատվաբեր է. մի դեպքում՝ հերոսի փառք, մյուսում՝ նահատակի անուն։ Սակայն չէ՞ որ երկրորդը բացառվում է հենց միայն այն պատճառով, որ ապրողներն են բարձրացնում նահատակության հարցը, մինչդեռ պարտության դեպքում ապրողներ, այսինքն՝ ծափահարողներ չե՞ն լինելու։

Պողոսբեկը ջղայնությունից գույն տվեց, գույն առավ, սակայն զսպեց իրեն, միայն ասաց.

— Գոնե չվարկաբեկեիք... թե չէ, առնվազն անհարմար է։

Եվ թողեց, հեռացավ՝ շտապելով անմիջապես գտնել Դանիել-բեկին։ Անսխալ գուշակում էր, որ այդ պահին նա էլ իրեն է փնտրում։

Հինգերորդ գնդի գումարտակները, նախորդ օրվա երեկոյան Արաքսն անցնելով, տեղավորվել էին տարբեր վայրերում։ Երկրորդ ու երրորդ գումարտակները Էջմիածնից հարավ-արևմուտք էին հասել, գտնվում էին Քյորֆուլու և Հայի Ձեյվա գյուղերի տարածքում, իսկ առաջինը և նորա՛զմ չորրորդը դեռևս երկաթգծից հարավ էին, Մարգարա գյուղի շրջակայքում։

— Պո՛ղ, ախպե՛ր, իմացի՛ր, որ հույսս դու ես,— անկեղծորեն խոստովանեց Դանիելբեկը, և Պողոսբեկը նրա ձայնում, մանավանդ այդ «Պողի» մեջ մի այնպիսի ջերմություն զգաց, որ անհարմար չլիներ, կգրկեր, կհամբուրեր ճակատը։

«Պող» իրենց բարբառում նշանակում է վառվող ածուխ։ Մանուկ Պողոսբեկին այդպես էին կոչում հարազատները, և դա շատ էր սազում, որովհետև նա ածխի պես թուխ էր, կրակոտ ու դյուրաբորբոք։ Եվ հիմա այդ վաղնջական փաղաքշականն ընդունեց իբրև հարազատի անվերապահ հավատի ու հավատարմության կանչ, որ այս անդամ ակամա հնչեց, երբ երկուսն էլ սովորաբար պահում էին հոգու խոր-խորերում։

— Մի՞թե երբևէ կկասկածես,— շշնջաց Պողոսբեկը։— Ես հավատում եմ իմ բոլոր զինվորներին, նորեկներին ևս։ Ամեն օր նրանցից յոթ քրտինք եմ հանում։ Գնդապետ Շահնազարյանն էլ արժանի է իր ազգանվանը...

Դանիելբեկը որոշել էր առաջին մարտին դուրս գալ փոքրաքանակ ուժով և երբ պատճառաբանեց, տոհմակիցը մի ավելորդ անգամ ևս համոզվեց նրա ռազմավարական հմտության մեջ։ Հիմա թուրքերը, ինչպես իրենք են թմբկահարում, առաջ են շարժվում շքերթային քայլքով և չեն սպասում ոչ մի դիմադրության։ Փոքրիկ, բայց ընտիր մի ուժով կարելի է հանկարծակի հակահարձակում ձեռնարկել, կանգնեցնել, նույնիսկ ետ շպրտել։ Միաժամանակ պետք է ամբողջ ճակատը պատրաստել հաջորդ ու ամենավճռական հարվածին։ Մեր առաջին հաջողության ու թուրքերի առաջին անհաջողության հանգամանքները քննելիս մեր զորքը հիմք պիտի ունենա մտածելու, որ ինքն անպայման կհաղթի. չէ՞ որ մի փոքրաքանակ զորամասով մենք ջարդեցինք թշ-

նամու առաջապահը։ Իսկ թուրքերը, ընդհակառակը, պիտի մտածեն, թե մենք, որ ջարդ կերանք սրանց մի բուռ զորքից, ո՞նց պիտի դիմանանք ամբողջ բանակին։

— Եվ, այսուամենայնիվ, մենք ճակատի մոտակայքում պատրաստ կունենանք պահեստային ուժեր,— ասաց Դանիելբեկը։— Ի՞նչ իմանաս, գուցե թուրքերն ավելի ուժեղ ու զգաստ են, քան մենք ենք պատկերացնում։

— Այդ ամենը ճիշտ է,— նկատեց Պողոսբեկը։— Եվ ես կարծում եմ, որ առաջին մարտին դուրս կգանք իմ երկու կամ երեք գումարտակով։ Միայն թե աջից ու ձախից մեզ աջակցի հրետանին։

Դանիելբեկն այդ մասին էլ էր մտածել և նախօրոք կարգադրել էր, որպեսզի կազմ ու պատրաստ լինեն հրետանու կապիտաններ Սակելյարիի ու Սերգո Աթանեսյանի մարտկոցները։

Փիրումյանները մարտի մնացած մանրամասներն էին ճշգրտում, երբ համհարզն անհամարձակ ներս մտավ և զեկուցեց, որ եկել են եպիսկոպոսներ Գարեգին Հովսեփյանն ու Զավեն Բաբայանը և հանդիպում են խնդրում։

— Գարեգին Հովսեփյանն ինչո՞ւ է խնդրում,— ոտքի կանգնելով՝ ասաց Դանիելբեկը։— Անմիջապես նե՛րս հրավիրիր։

Դրսից երևի լսելի էր այս խոսքը, առանց սպասելու համհարզի հրավերին, աշխույժով, արագաքայլ ներս մտավ փոքրամարմին սրբազանը, ետևից էլ՝ մարմնապարարտ ու հաղթանդամ Զավեն եպիսկոպոս Բաբայանը, որին երկու Փիրումյաններն էլ ճանաչում էին դեռևս Էրզրումից, ուր նա վերջին մի քանի տարին վարել էր թեմի առաջնորդությունը։

Գարեգին սրբազանը, ողջույնի փոխարեն, խաչ հանեց երեսին, ապա նայելով սեղանի վրա փռված քարտեզին, որի կենտրոնում կարմիր ու կապույտ սլաքներն իրար դեմ էին խոյանում, ասաց.

— Երևում է՝ առաջիկա մարտն էիք ծրագրում։— Դանիելբեկը գլխով արեց։— Աստվա՜ծ օգնական։ Թող ամենակարողն ապավեն կանգնի մեր սրբազան դատին։ Հայոց հողն այլևս տեղ չունի նահանջի։— Եվ աջ ու ձախ նայելուց տեսնելով, որ ոչ ոք իրենց չի խանգարում, աշխատեց ժամանակ չկորցնել, դիմեց Փիրումյանին.— Հուսամ՝ ճանաչում եք Զավեն եպիսկոպոսին։

— Իհարկե, ճանաչում ենք։ Էրզրումում նրա ժողովրդահաճ

գործերի մասին լսելով հպարտանում էի,— պատասխանեց Դանիելբեկը։

Իսկ Պողոսբեկը հին ծանոթի պես մոտեցավ, գրկեց եպիսկոպոսի ուսը, ժպտացին իրար։

— Հին, բարի ժամանակներում, երբ մենք թագավորություն ունեինք և հայրենի նախարարներն էին իրենց զորքերն առաջնորդում ի պատերազմ, մեր յուրաքանչյուր աշխարհ կամ նահանգ իր զորքն ուներ՝ մեծ կամ փոքր, իր այրուձին, նիզակավորների, սակրավորների իր գնդերը։ Նահանգի զորքի գլուխ կանգնած էր լինում գահերեց տերն այդ նահանգի, իսկ գնդերը նրա կրտսեր տոհմակիցներն էին վարում՝ սեպուհները։— Այսպես հեռվից սկսելով Գարեգին սրբազանը հասավ ամենակարեվորին.— Հիմա Հայոց տասնհինգ աշխարհներից հավաքվել է փոքրաքանակ մի զորաշար, որն իր վրա պիտի տանի այս սրբազան պատերազմի ծանրությունը։ Այստեղ է նաև մեր Արցախանան աշխարհը։ Փոքր է նրա գունդը։ Բայց դա հայրենանվեր ու քաջ զինվորների գունդ է, որին առաջնորդում են Ասրիբեկյան-Փիրումյան փառավոր տոհմի պայազատները։— Դանիելբեկն ու Պողոսբեկը նայեցին իրար, չգիտեին, թե պերճախոս սրբազանը դեպի ուր է տանում խոսքը։— Մեր հայրենի գունդը գնում է մի պատերազմի, որից չկա նահանջ, կա մահ կամ հաղթանակ։ Ուրեմն, դա ազգի ու հայրենիքի վերին կամքով մահվան դատապարտվածների գունդ է, մահապարտների գունդ...

— Լա՛վ անուն է,— անմիջապես արձագանքեց ճակատի հրամանատարը։— Թող գունդն իր այդ անունը վրայից ջնջի հաղթական պատերազմով։

* *
*

Մի ժամ հետո Հայկական հինգերորդ հետևակային գունդը մարտական կարգով, գումարտակ առ գումարտակ, վաշտ-վաշտ, սվելի փոքր միավորներով կանգնած էր Վաղարշապատի դաշտում։ Թիկունքում էջմիածինն էր, Հայոց երկրի ու հայոց հավատի մեծագույն սրբարանը։ Այնտեղ, մայիսյան ետկեսօրյա պրսպրղուն երկինք միտված գմբեթներով երևում էին Մայր տաճարը, Գայանեի ու Հռիփսիմեի վանքերը։ Թիկունքում նրանք

լին, որ հայ զինվորների հայացքներին դեմ առնելով՝ պատճառում էին սրբազան, անբացատրելի սարսուռ։ Գնդի հայացքի դեմ Արարատն էր, Հայոց երկրի, Հայոց սուրբ տան գմբեթը, ամենավեհն ու ամենափառահեղը։ Մաքուր օդը, մայր մտնող արևի սփռած ծիրանագույն մուժը և տրամադիր սրտերն այնպես մոտեցրել էին լեռը, որ կարելի էր շշունջով էլ խոսել հետը։ Հավանաբար, կազմակերպիչների մտքում եղել էր այս տեսարանը. գնդի դրոշը կանգնեցրել էին մի բլրակի վրա, և գնդի շարքերից այնպես էր երևում, թե այն ծածանվում է Արարատի գագաթին։

Գնդի հրամանատար Պողոսբեկ Փիրումյանը, կանգնած հուզումնածուփ շարքերի առաջ, պողպատաձայն գոչեց.

— Հայկական Հինգերորդ հետևակային գունդ, զգա՜-ա՜-աստ,— և գետինը դողացնելով գնաց դեպի ճակատի հրամանատարը։ Նա առաջին անգամ պիտի զեկուցեր տոհմակցին՝ իբրև իր պետին, և մոտեցավ, անսովոր ուրախությունից փոքր-ինչ դողացող ձայնով զեկուցեց.

— Ռազմաճակատի պարոն հրամանատար, պատիվ ունեմ զեկուցելու, որ Հայկական հետևակային Հինգերորդ գունդը պատրաստ է ձեր հրամանին։

Դանիելբեկը սիրահարվածի պես դիտում էր գնդի հաղթահասակ, ամրակուռ հրամանատարի շարժուձևը, կեցվածքը, լսում էր զնգուն ու երգեցիկ ձայնը և մտածում, թե ինչպե՜ս ամեն ինչ կատարյալ է իր հարազատի մեջ։

Եվ այս մտորումի պատճառով պատասխանն ուշացնում էր։ Ճակատի հրամանատարը հանկարծ ուշքի եկավ և, առաջին պահ ասելիքը մոռացած, գոչեց.

— Ողջո՜ւ-ո՜ւյն Հայկական Հինգերորդ հետևակային գնդի զինվորներին ու սպաներին։

— Ողջո՜ւ-ո՜ւյն,— ի պատասխան որոտաց գունդը։— Ո՞ղջո՜ւ-ո՜ւյն։— Իսկ մի երկվայրկյան հետո.— Ո՜ւռ-ռա՜ մեր ճակատի հրամանատարին, ո՜ւռ-ռա՜։

Գարեգին եպիսկոպոսի ականջները կանչեցին։ Զավեն Բաբայանը ծանրամարմին մոտեցավ նրան, ականջին շշնջաց.

— Ի՞նչ քաջ տղերք կան այս Հինգերորդ գնդում։ Սրբած թրեր են, հա՜։

— Թշնամու աչքը դուրս գա,— արձագանքեց սրբազանը՝ մյուս ականջը ռազմաճակատի հրամանատարի ձայնին։

Դանիելբեկ Փիրումյանը բլրակի վրա կանգնած՝ խոսում էր ռազմաճակատի դրության և հայկական զորքի խնդրի մասին։ Նա այդպես էլ ասաց.

— Հայկական զորքի խնդիրը, որ մեկն է, միս-մինակ, սուրբ ու անկասելի. մենք պետք է հաղթենք։ Մենք պետք է հաղթենք մեր թշնամուն։ Մենք պետք է հաղթենք թուրքին։ Հասկանո՞ւմ եք, մենք պետք է հաղթե՛նք...

Վերջին բառերն ասելիս կարծես աչքերից կրակ էր թափվում։ Իրեն էլ թվում էր, թե ահա ուր որ է, խոսքերի հետ ինքը պիտի թևածի զինվորական այդ հպարտ շարքերի վրա, դառնա նրանց դրոշ, կամքը, նրանց վճռականությունը։ Ուշքի եկավ զնդի միահամուռ ու միասնական պատասխանից.

— Մենք անպայման կհաղթե՛նք թուրքին։

Երբ խոսքը տվին Էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչ-տնօրեն, անվանի հայագետ, սրբազան Գարեգին Հովսեփյանին, նա՝ սևագգեստ, առաջին հայացքից խեղճ կանգնած բլրակի վրա, կարծես բան էլ չուներ ասելու։

— Իմ հայրենակիցներ, շատ սիրելի, պաշտելի Արցախ աշխարհի քաջ զա՛վակներ։ Այն բառերը, որ դրին իմ անվան կողքին, այս րոպեին կապ չունեն ինձ հետ։ Հիմա ես ձեզանից մեկն եմ, օրհասի առաջ կանգնած հայրենիքի զինվորը։ Ես էլ ձեզ պես եկել եմ պատերազմի դաշտ և ինձ համար չկա ո՛չ նահանջ, ո՛չ վերադարձ, քանի Արարատյան երկրում թուրք ասկյարն է քայլում, քանի մեր ազգի ու հայրենիքի վրայից վերացած չէ մահացու վտանգը։ Ես ինձ համարում եմ մահապարտ մեկը, որը միայն հաղթական պատերազմում կարող է ետ նվաճել իր կյանքը, իր ապրելու իրավունքը։ Ես չեմ կարծում, թե ձեր շարքերում կգտնվի մեկը, որ ուրիշ տեսակ մտածի։ Ուրեմն, դուք է՛լ մահապարտներ եք, թանկագին հայրենակիցներ, և մահապարտների գունդ է այս Հայկական-ղարաբաղյան Հինգերորդը, որ հայրենիքի փրկության համար պիտի կռվի մինչև վերջին շունչը, մինչև հաղթանակը... Մի մոռանաք, որ մեր թիկունքում Էջմիածինն ու Երևանն են մնացել, մնացել է մեր հայրենիքի սիրտը։ Այնտեղ ազգի վերջին բեկորներն են հավաքվել և սպասում են մեր հաղթական խոսքին, որը լինելու է հայոց երկրի փրկության մասին...

Պողոսբեկ Փիրումյանն այդ վայրկյանին մի փոքր առաջ

շարժվեց և մայր մտնող արևից նրա լայնշի կուրծքը հուրհրաց ռազմական պատվանշանների ցոլքերով։ Գունդը մի հայացք դարձած նկատեց իր հրամանատարի շարժումը և սպասում էր նրա խոսքին, երբ շարքերի վրա փռվեց նրա զրնգուն ձայնը.

— Կեցցե՛ հայոց Մահապարտների գունդը։

— Կե՛-ց-ցե՛,— թնդաց գնդի միահամուռ արձագանքը,— կե՛ց-ցե՛։

Վերստին լռություն տիրեց դաշտում, և սրբազանը, ոգևորված գնդի խանդավառ արձագանքով, շարունակեց.

— Հիշենք, որ մեր նախնիները երբեք էլ թշնամուն չեն զիջել իրենց հպարտ լեռնաստանը։ Մեր Քիրսն ու Մռավը, Դիզափայտն ու Լուսավորչի սարը մեզ համար չպետք է ամաչեն հայր Արարատի առաջ, որը մեզ հետ է, մեր աչքերի առաջ ու մեր սրտում և պետք է տեսնի թշնամու տապալումը մեր անկոտրելի ուժից...

Ապա ոսկեհուռ լանջախաչը բարձրացրած գնդի առաջ՝ պահպանիչ կարդաց սրբազանը։

Հետո գնդապետը հրամայեց, որ գունդը երդումի պատրաստվի։

Բոլորը միանգամից մեկ ոտքով ծնկի իջան, զենքերը ձախ ձեռքերով բռնած, աջերը կրծքներին, հայացքները գնդի դրոշին, որ այդ պահին ասես Արարատի գագաթին էր ծածանվում թեթև հովից։ Նրանք վերացած, ոգեղինացած սպասում էին ամենակարևորին։ Եվ այդ ամենակարևորը չուշացավ։ Գնդապետ Պոզոսբեկ Փիրումյանը որ, ականջը ճակատի հրամանատարի ձայնին, լուռ գլխով էր անում, հանկարծ պոկվեց տեղից, շքերթի քայլով մոտեցավ գնդի դրոշին, նրա առաջ ծնկի իջավ։ Նրա կրակված աչքերի դեմ դրոշն էր այդ, հայոց սուրբ լեռն Արարատ և հայրենի երկրի կորսված հեռաստանները։ Ձախ ձեռքով արծաթապատ թուրը կողքի բռնած, աջով դրոշի փեշը՝ հրամանատարը գնդի անունից երդվեց բարձրաձայն։

— Մենք՝ Հայկական Հինգերորդ հետևակային գնդի բոլոր զինվորներս ու սպաներս, գիտակցում ենք, որ հայ ազգի ու հայոց հայրենիքի վրա կախված է մահվան վտանգը։ Այս օրերին, երբ մեր գարավոր թշնամի թուրքը, մեր ժողովրդի կեսը ոչնչացնելուց հետո, շարժվում է նաև մյուս կեսը բնաջնջելու, մենք ուրիշ ելք չունենք, քան այս պահից կոչված մահապարտներ՝ երդվենք մեր գնդի դրոշի առաջ, մեր ազգի ու հայրենիքի առաջ,

որ կկռվենք մինչև վերջ և կհաղթենք թշնամուն։ Թող մեզ ստոր գասալիք ու դավաճան կոչեն, թող դարերի ու գալիք սերունդների անեծքով ծածկվեն մեր անունները, եթե դրժենք այս երդումը։ Միայն հաղթանակը մեր վրայից կջնջի մահապարտ անունը։ Հաղթանա՛կ կամ մա՛հ։ Հաղթանա՛կ, միա՛յն հաղթանակ։— Ապա դրոշի փեշը սեղմելով շուրթերին, աչքերը փակ խոնարհվեց Արարատի առաջ, ոտքի ելավ, շրջվեց դեպի գունդը, շարունակեց երդումը և երդվեցրեց.— Հաղթանա՛կ, միա՛յն հաղթանակ։

— Հաղթանա՛կ, միա՛յն հաղթանակ,— թնդաց, որոտաց գունդը, որի վերջին զինվորն անգամ այդ վայրկյանին իրեն զգում էր հզոր ու ամենակարող։

— Երդվո՛ւմ ենք,— նորից զնգաց գնդապետի ձայնը։

— Երդվո՛ւմ ենք, երդվո՛ւմ ենք, երդվո՛ւմ ենք,— ճարճատեց գունդը միահամուռ, միակամ ու միասիրտ, և նրա ձայնն ալիք տալով տարածվեց Արարատյան դաշտում, երևի արձագանքեց Արարատի կրծքի խորխորատներում։

* *
*

Մայիսյան օրվանից դեռ մի քանի ժամ կար, և Գարեգին եպիսկոպոսը մտածեց, թե կարող է մի զորաջոկատ ևս այցելել։ Երբ իր այդ ցանկությունը հայտնեց, ճակատի հրամանատարը նրան խորհուրդ տվեց գնալ գնդապետ Պերեկրյոստովի մոտ, իսկ Պողոսբեկին էլ խնդրեց մի հուսալի ուղեկից դնել հետը։

— Զավեն եպիսկոպոսն էջմիածին պիտի գնա,— անհանգստացավ սրբազանը,— կհոգա՞ք նրա մասին։

— Հանգիստ եղեք,— մտերմորեն ժպտաց Դանիելբեկը։— Զավեն եպիսկոպոսն օտար տեղ չէ։

Վերջին երկու օրերին սրբազանը ոգեշունչ ու հոգեպարար խոսքեր շատ էր ասել տարբեր վաշտերում ու գումարտակներում, աշխարհազորայինների խմբերում, պարենի բեռներով եկածների հետ զրուցելիս։ Մի տեղ ելույթ էր ունենում, արժանանում իր ունկնդիրների երախտագիտության ու սիրո խոսքերին, հետո սրանց ուղեկցությամբ մյուս խմբի մոտ էր գնում։ Ուղեկիցներն այնտեղ էլ էին ոտ կախ տալիս, լսում և այստեղի ելույթի խոս-

քերից մի ուրիշ տեսակ հիացած ու զմայլված, դժգոհում էին.

— Այ սրբազան, բա ինչի՞ էս խոսքերից մերոնց էլ չասացիր։

— Օրհնյա՛լ, իսկ ձերոնց մոտ բերանս պարա՞պ էր։

— Չէ՛, սրբազան, մեզ մոտ էլ լավ-լավ բաներ էիր ասում։ Բայց էստեղ ասածներդ ուրիշ են, է՞։

— Է՛, քե մատաղ, էդ ուրիշ բաներն էստեղ գալու ճանապարհին էի գտել, հո ինձնից չէի ասում,— մանրիկ բարի աչքերը կկոցած՝ կատակում էր սրբազանը։— Ա՛յ, հաջորդ խմբի հետ էլ պիտի խոսեմ էն բաներից, որ գտնելու եմ իրենց ճանապարհին։ Կարևորն այն է, որ սրտի խոսք ասես։ Սրտից ելած խոսքը լավ է գտնում ուրիշի սրտի ճանապարհը։

Եվ այսպես նա ամեն տեղ սրտի խոսք էր ասում, մարտիկների սրտեր էր հուզում։ Մարդիկ ամենուրեք շնորհակալությամբ էին ճանապարհում նոր օրերի այդ Ոսկեբերանին, ինչպես նրան իր շնորհակալության խոսքում կնքեց Թիֆլիսից եկած զարաբաղցիների ջոկատի հրամանատարը՝ գնդապետ Շահնազարյանը, որի համար սրբազանի ճառը ճարտասանության վերին օրինակ էր, և ինքը պիտի հիշեր երկար ու երկար ժամանակ, եթե աստված տար, որ ողջ-առողջ ելներ այդ պատերազմից։

Երեկոյան դեմ սրբազանը հասավ Արաքսի ափը, ուր երկաթգծի զույգ եզրերին նստոտած իրեն էին սպասում ճակատի ծայր ձախթևայինները՝ մի խայտաբղետ «լսարան»։ Այնտեղ էր գնդապետ Պերեկրյոստովը, որ հայտնեց, թե ճակատի հրամանատարն արդեն ռադիոյով տեղեկացրել էր, և իրենք սպասում էին սրբազանին։

Ռուս գնդապետի առաջ հավաքված էին պարտիզանները, նորեկ կամավորները, Թիֆլիսից ու Երևանից հենց այդօր ժամանած ուսուցիչներ ու գիմնազիստներ, որոնք խառնվել էին ռուսական զորամասերի մնացորդներից կազմված գումարտակին, սակայն դեռ չէին ձուլվել նրան, որովհետև քաղաքացիական զանազան հագուստների մեջ էին և կարգապահության տեսակետից էլ նման էին կապտակոհակ գետին խառնված պղտոր ջրի, որ չվրիպեց սրբազանի սուր աչքից։

Գնդապետ Պերեկրյոստովը, բարձրահասակ, լայնաթիկունք ու շիկամազ մի տղամարդ, որ սրբազանի հին ծանոթներից էր, նրան ընդառաջ գնաց և, պեպենոտ դեմքին սրտաբուխ ժպիտ, դիմավորեց ու անուշ խոսքերով տարավ, ներկայացրեց իր ջո-

կատին։ Երբ ժպտում էր, աչքերի տեղ երկու նեղ գծեր էին գոյանում շեկ հոնքերի տակ, լրջանալիս երևում էին աչքերի սպիտակուցների պեպենները։

Գարեգին եպիսկոպոսն անհարմար վիճակի մեջ էր։ Այդ խոկույն հասկացավ գնդապետը և նրան խնդրեց ուշադրություն դարձնել, որ զորամասում ռուս և այլ ազգությունների զինվորներ ու հրամանատարներ էլ կան։

— Նրանց համար ձեր խոսքը թարգմանելու են իրենց հայ ընկերները,— ասաց։— Ես այնպես եմ նստեցրել, որ հասկանալու համար ոչ մի դժվարություն չլինի։

Սրբազանը շոյված էր գնդապետի նրբանկատությունից և քաղցրությամբ գլխով արեց ու վայրկենապես մտքում գծեց մոտավոր պատկերն այն զրույցի, որ պատշաճ կլինի ոչ միայն խայտաբղետ, այլև բազմազգի իր ունկնդիրներին։

— Տեսնո՞ւմ եք, իմ սիրելի ազգակիցներ. այսօր ձեզ հետ ուս-ուսի նստած են և վաղն էլ թուրքի դեմ կռվի պիտի դուրս գան մեր այլազգի բարեկամները, որոնց մեջ ես տեսնում եմ շատ ռուսների։— Սրբազանն այսպես սկսեց իր զրույցը, որ հիմնականում ծավալվելու էր հայ և ռուս ժողովուրդների հին ու նոր փոխհարաբերությունների շուրջը։— Պարոն գնդապետն ասաց՝ վնաս չունի, որ ես մեր լեզվով պիտի խոսեմ, թարգմանիչներ կան, որոնք իմ խոսքերը պիտի հասկացնեն ռուս բարեկամներին։ Բայց ես շատ կուզենայի իմ հատուկ շնորհակալությունը հայտնել իրենց իսկ լեզվով, առանց թարգմանիչների։

— Ասկանալի է, շատ ասկանալի է, սրբազան,— բարեկիրթ ասաց գնդապետ Պերեկրյոստովը, որ շուրջ չորս տարի ծառայելով Հայաստանի տարբեր նահանգներում տեղակայված զորամասերի հետ, լրիվ հասկանում էր հայերենը և ամեն կերպ շանում էր խոսել։— Մենկ միասին կրվում ենկ և միասին էլ պիտի ախտենք տշնամուն։

— Աստվա՛ծ տա, սիրելի գնդապետ, աստվա՛ծ տա,— ունկընդիրներն աղմկեցին, և սրբազանը հասկացավ, որ պատճառը գնդապետ Պերեկրյոստովի հայերենն է. երևի շատերի համար անսպասելի էր այդ ռիժ, ռուսից էլ ռուս զորականի հայերենը։ Աղմկում էին զարմացողները, իրար հրմշտում։ Գնդապետը տեղից վեր կացավ և, ձգված, գոտին ուղղելով, պեպենոտ, բարի դեմքն այս ու այն կողմ դարձնելով ասաց.

— Ուշադրություն՛, զինվորներ, ուշադրություն՛...

Զինվորները միահամուռ ծափահարեցին։ Գնդապետը ժըպտալով ձեռքը թափ տվեց, նստեց։ Սրբազանին ուրախացրեց ինքնաբուխ այս տեսարանը, և աչը բարձրացրեց։ Սև թևքը բացվեց կողքի վրա, և դրանից նա երևաց արծվի պես, որ պատրաստվում է թռիչքի։

— Հայրենիքի՛ զինվորներ, քաջե՛ր,— նրա ձայնն այժմ սուր հնչեց և ասես մեկեն կտրեց աղմուկը։— Ես տեսնում եմ, որ դուք սիրում եք ձեր ռուս հրամանատարին։ Պարոն Պերեկրյոստովի անունը հայտնի է Տասնհինգից, երբ նա, ռուսական բանակի զորամասերից մեկի գլուխն անցած, մասնակցում էր Վասպուրականի ազատագրական մարտերին։ Փա՞ռք նրան, որ այսօր էլ, երբ իր հայրենիքը պատառոտվում է երեկվա դաշնակիցների հարվածներից ու տնաբույս ապիկարների դավաճանությունից, ինքը մեզ հետ է, կռվում է մեր դարավոր թշնամու դեմ։ Ի՛ր և մե՛ր թշնամու դեմ...

— Փա՞ռք գնդապետ Պերեկրյոստովին,— տեղից կտրուկ բարձրանալով գոչեց երիտասարդ մի պորուչիկ։

— Փա՞ռք և պատի՞վ,— նրան արձագանքեցին բոլոր նստածները։

Սրբազանը նորից թևը բարձրացրեց գոհունակությամբ, և նստածների շարքերի վրա տարածվեց այնպիսի լռություն, որ լսվում էին մոտիկ թփերի վրա երգող թռչունների ձայները, թիկունքում ինչ-որ տեղ ետ ու առաջ անող շոգեքարշի հևոցը։

— Ես իզուր չասացի՝ «ի՛ր և մե՛ր թշնամու դեմ»,— շարունակեց սրբազանը։— Առաջին անգամ չէ, որ մենք միասին ենք ճակատում մեր ընդհանուր թշնամիների դեմ, որ թուրք նվաճողներն են։ Հազար տարի սրանից առաջ հայ և ռուս զորքերը միասին ճակատ էին տալիս այսօրվա թուրքերի նախահարց՝ սելջուկ թուրքերի դեմ՝ Մանազկերտի մոտերքից մինչև Ճորոխի հովիտը։ Եվ այն օրերից սկսած՝ արևելքից եկած մեր բոլոր թշնամիները պատուհասել են նաև ռուսաց երկիրը։ Երբ որ ռուսներն իրենց Կուլիկովյան դաշտում ջարդեցին թաթար-մոնղոլներին, այդ նշան էր, թե Հայաստանում ավեր ու մահ սփռող նրանց ցեղակիցների մեջքը կոտրեցին։ Դրա համար էլ դեռ վաղմիջնադարյան օրերից հայը հուսավառ հայացքով էր նայում դեպի հյուսիսի մեծազոր ազգը։ Դրա համար էլ միջնադարյան հայ

տաղասացը հավատում էր, որ մեր երկրի թալկացած տունկը հյուսիսի հովից պիտի կենդանանա։ Դրա համար էլ վերջին դարերի մեր ամենահեռատես ու ամենաիմաստուն գործիչներից մեկը՝ Իսրայել Օրի իշխանը, եվրոպական բոլոր մեծ ու հզոր տերությունների քիմքերը պտրելուց, նրանց տրամադրություններն ու ցանկություններն ապարդյուն ստուգելուց հետո, եկավ կանգնեց Ռուսական ցար Պետրոս Մեծի արքունիքում և ասաց. մեր բազմաչարչար ազգը կա՞մ այս երկրի օգնությամբ պիտի փրկվի իր հին թշնամիների ճիրաններից, կա՞մ էլ ոչ մի փրկություն չունի։ Եվ Օրիի հետ բանակցած Պետրոս Մեծը հասկացել էր նրան, գիտեր, որ հարևանների ասիական բարբարոսությունից քրքրվում է աշխատասեր ու լուսավոր մի ազգ, որ իր հավատակիցն է։ Այդ մեծ թագավորը, կաղնեբազուկ իր թևը բարձրացրած ասել է. «Մենք մեր կայսերական առանձնահատուկ ողորմածության ու հովանավորության տակ ենք առնում անհավատների լծի տակ տանջվող հայ ազգը...»։ Եվ ահա այն ժամանակից ի վեր, ավելի քան երկու հարյուր տարի, եթե մեր ազգի որևէ հատվածը կարճ կամ երկար խաղաղ ու համեմատական ապահով կյանք է ունեցել, ապա միայն ռուս ազգի ազնիվ ու քաջ զավակների օգնությամբ, եթե մեր թշնամիները ժամանակ առ ժամանակ մեզ հանգիստ են թողել, ապա հյուսիսի մեր բարեկամի ահից։ Թող հավերժորեն անխա՞խտ լինի Ռուսաց տերության հզորությունը։ Թող կարճ ժամանակում այդ մեծազոր տերությունը վերագտնի իր ապահով խաղաղությունը, որ մենք էլ նրա օգնությամբ հզորացած՝ փրկվենք մեր հին թշնամու վայրագությունից։

— Կեցցե՞ ռուս ազգը, կեցցե՞ մեծ Ռուսաստանը,— ոգևորված բացականչեց քիչ առաջ իրեն ցույց տված պորուչիկը, և նրան անմիջապես արձագանքեցին բոլոր նստածները, բացի մի փոքրիկ խմբից, որը հանդիպման կեսից թիկունք էր դարձրել սրբազանին, և դա չէր վրիպել նրա ամենատես աչքից։

Գարեգին եպիսկոպոսը խոսեց նաև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու համար հայ ու ռուս ականավոր մարդկանց գործադրած ջանքերից, նրանց պայծառ հիշատակը վկայակոչեց։ Վերհիշեց Աբովյանի երախտագիտության խոսքը ռուսի մասին, որը Թուրքի ու ղզլբաշի ստրկությունից ազատել էր հայ

ժողովրդին։ Եվ էլի ուրիշ շատ մեծերի հիշեց, որոնց իրատես հայացքում միշտ էլ փրկարար է Ռուսաստանի դերը... Եվ երբ զրույցի վերջում ունկնդիրներն սկսեցին իրենց տպավորություններն արտահայտել լսածի մասին,— հարցեր էին տալիս, պատասխաններ լսում, իսկ առավել գործնական մարդիկ խոստանում էին անաղարտ պահել երկու ազգերի բարեկամությունը, վաղվա կռվում էլ այնպես խիզախել, որ թշնամու աչքերը չբացվեն,— թիկունքով նստածներից մեկը տեղից վեր կացավ և հարց տալու իրավունք խնդրեց։ Կարճահասակ երիտասարդ էր, թխադեմ, կարճ ու սրածայր մորուքով։

— Մենք բոլորս բարձր ենք գնահատում ձեր հայագիտական ուսումնասիրությունները, թանկագին Գարեգին եպիսկոպոս Հովսեփյան։— Ներքին հուզմունքը թե խոսվքը զսպած՝ այսպես խոսեց զինվորականը։— Այսօր էլ վկա եղանք ձեր ճարտասանական ձիրքի հորդումին։— Սրբազանն արտաքուստ խաղաղ, նույնիսկ գովասանական այս բառերի տակ զսպված դժգոհություն զգալով՝ պատրաստվեց հարված ընդունելու, և հարվածը չուշացավ։— Ի՞նչ եք կարծում, հարգարժան եպիսկոպոս, արդյոք շատ չէ՞ր ձեր խոսքը այդ հովանիի ու հովանավորության մասին...

Խոսողի շուրջը նստած երեք-չորս հոգին, որոնք, երևի իրենց ընկերոջ պատվին, շուտ էին եկել արդեն, և սրբազանը կարող էր նրանց երեսներն էլ տեսնել, ցնծության մեջ էին։ Նրանց ընկերոջ հարցը շատ էր մերկ, բայց սրբազանը պատասխանելուց առաջ նրան հարցրեց.

— Չէի՞ք ասի, թե ռազմաճակատ գալուց առաջ ինչո՞վ էիք զբաղվում, հարգարժան զինվորական։ Ինձ համար հետաքրքիր է, թե ո՞ւմ հարցին պատասխանելու պատիվն ունեմ։

Զինվորականը, ոչ առանց հպարտության, անմիջապես պատասխանեց.

— Հայագիտության դասեր ունեի Ներսիսյան ճեմարանում, այժմ էլ, ինչպես տեսնում եք...

Սրբազանը քմծիծաղեց, շոյեց կարճ ու ցանցառ մորուքը։

— Հիմա պաշտոնակցի իրավունքով ես ձեզ մի հարց տամ... Պաշտոնակցի իրավունքո՞վ, թե չէ, ուրիշ ոչ մի պարագայում ես ինձ իրավունք չէի վերապահի։

— Խնդրեմ, խնդրեմ,— մեծահոգաբար առաջարկեց զինվորականը։

— Հայագիտության դասերին ձեր ուսանողնե՞րն են թիկունքները դեպի ձեզ նստում, թե դո՞ւք սովորություն ունեք թիկունքով լսելու։ Տեսնում եմ, որ խոսելիս չեք օգտվում թիկունքի ծառայությունից։

Ծիծաղեցին զինվորականներից շատերը։ Նույնիսկ նրա թիկնակիցները հեգնական ժպիտով նայեցին իրենց ընկերոջը։ Եվ նա, իբր, դարձյալ իր մեծահոգության բարձունքից, զիջեց.

— Ես դրա համար կարող եմ ներողություն խնդրել՝ սպասելով, սակայն, հարցիս պատասխանին։

Սրբազանը, որքան էլ բարեկիրթ մարդ, դժվարությամբ էր իրեն զսպում, որպեսզի կոպտորեն չվիրավորի այդ «հայագիտության դասեր ունեցողին»։ Նա շատ էր ցավում, որ տեսարանին ականատես և ունկնդիր են վաղվա ճակատամարտին պատրաստվողները։ Ինքը նկել էր նրանց ոգին բարձրացնելու, սակայն, ահա՛, նրանց մտքերը պղտորվում են այս տհաճ հարց ու պատասխանով։

— Բայց ինձ թվաց, թե ձեր հարցի պատասխանը կար արդեն իմ տված հարցի մեջ։ Այսինքն՝ երբ թիկունքով ես լսում, երևի ամենակարճ խոսքը թվա երկար և ամենաճշմարիտ խոսքը՝ հիմարություն։ Բայց անկախ այս հանգամանքից, ես կարող եմ օգնել, որ դուք ավելի պարզ արտահայտեք ձեր միտքը։ Համաձա՞յն եք։ Հա՛, փառք աստծո, դե՛, խնդրեմ, ասացեք՝ ինչ որ մտածում եք։

— Այսինքն՝ ես ի՞նչ եմ մտածում, սրբազան,— իրարով անցած ու Գարեգին Հովսեփյանի այս մարտահրավերից գլուխը կորցրած խոսեց զորականը։ Սակայն նահանջելու տեղ չուներ և միտքը բացատրեց.— Այդքան որ հովանի ու հովանավորություն եք կանչում, որքա՞ն ճշմարիտ է, և, հատկապես, դա որքա՞ն կարող է բարձրացնել հայ զինվորի մարտական ոգին։ Չէ՞ որ մենք ունենք պայքարի վերջնական նպատակ, որ է՝ ազատ ու անկախ Հայաստանը։ Ո՛չ մի պետության ու ո՛չ մի ժողովրդի կողմից չպարտադրված փոխհարաբերություններով...

— Ա՛-հա՛,— զորականի խոսքի վրա առաջացած աղմուկը լռեցնելու համար սրբազանը թևը բարձրացրեց։— Ուրեմն, ուզում եք անկախ-ազատ Հայաստան։ Բոլորի՞ց անկախ, ամե՞ն ինչից ազատ։ Ճիշտը որ խոստովանեմ, ինքս էլ եմ ուզում։ Երևի չի լինի խելքը գլխին որևէ հայ, որ չերազի այդպիսի Հայաստան։

— Բա էլ ինչո՞ւմն է բանը։

— Բանն ամենակարևոր հարցի մեջ է. թե որտե՛ղ պիտի դնենք և ինչպե՛ս պիտի պահենք այդ անկախ, ազատ Հայաստանը։

— Է՛, որտե՞ղ պիտի դնենք, Գարեգին եպիսկոպոս, երեք հազար տարի է, նա իր տեղն ունի։

— Երեք հազար տարի չէ, շատ ավելի է, բարեկամ։ Հայ ժողովուրդը ոչ մի տեղից էլ չի եկել երեք հազար տարի առաջ։ Նա ծնվել ու ազդ է դարձել իր հայրենիքում, որ կոչվում է Հայկական բարձրավանդակ։ Բայց նրա ամբողջ կյանքը, նրա ամբողջ գրավոր պատմությունը և մանավանդ վերջին դարերը մեզ սովորեցրել են մի դառը ճշմարտություն, որ ե՛ս չպետք է ձեզ բացատրեմ, եթե դուք իսկապես հայագիտության դասեր եք տալիս։ Հասկանալի՞ է։ Եթե դուք ձեր ազատ ու անկախ Հայաստանն իր տեղում եք պահում, բա որտե՞ղ եք տեղավորելու Թուրքիան, որը թշնամին է ո՛չ միայն քո անկախ պետության, այլև քո ազգի ֆիզիկական գոյության։ Որտե՞ղ եք տեղավորելու մենշևիկներին ու մուսավաթին, որոնք մեր հողերի լավագույնը ծալելատակներն են դրել, աչքներն էլ տնկել մնացածի վրա։

— Մենք ուզում ենք...

— Դուք ինքներդ է՛լ չդիտեք, թե ի՛նչ եք ուզում,— վրդովված՝ նրան ընդհատեց սրբազանը։— Եվ, վերջապես, դուք ո՞վ եք, որ այդպես միայն ուզում եք։ Չի՞ լինի վեր կենաք, ձեր ուզածը նվաճեք...

Գնդապետ Պերեկրյոստովը տեղից վեր կացավ և սրբազանից ներողություն խնդրելով, զորականին առաջարկեց նստել։ Ապա իր շիտակ հասակով ձգվեց զորամասի առաջ, խոսեց.

— Կարծում եմ, մենք մեր խորին շնորհակալությունը պիտի հայտնենք թանկագին Գարեգին եպիսկոպոսին իր բովանդակալից, խոր ու իմաստուն զրույցի համար,— ասաց նա։— Ինչ վերաբերում է զրույցի վերջնամասին, այստեղ էլ հույսներս կդնենք մեր թանկագին սրբազանի մեծահոգության վրա։

Գնդապետը շրջվեց, կռացավ դեպի սրբազանը և, նրա աջն իր հսկայական թաթի մեջ առնելով, ջերմորեն թափ տվեց.

— Կներե՛ք, սրբազան, երևի ձեզ վիրավորելու նպատակ չուներ երիտասարդը,— անկեղծ ցավակցությամբ, ցածրաձայն խոսեց նրա հետ։— Կամավորները քիչ ավելի ազատ են պահում

բրենց։ Կանոնավոր բանակում զինվորն իր շրջանակներից դուրս գալու իրավունք չի ունենում։

Սրբազանն զգացված էր նրա խոսքերից և ինքն էլ նրա համար ցածրաձայն պատասխանեց.

— Երբ մեկը զենք է վերցրել, պետք է որոշակի իմանա, թե ինչի՞ համար է կռվելու։

* *
*

Ճանապարհին սովորաբար նա մտքով հաջորդ զրամասի հետ էր լինում. մտմտում էր այն խոսքը, որ այնտեղ պիտի ասեր, փորձում էր իրար բերել տպավորությունները նախորդ հանդիպումներից։ Հաճախ այս նախորդները ևս բավականին նյութ էին տալիս հաջորդ ելույթի համար... Սակայն այնօր նա չէր կարողանում կտրվել «հայագիտության դասեր ունեցողի» միջադեպից։ Ի՞նչ էր աչք խոթում իր հայագիտությունը։ Այդ ի՞նչ հայագետ է, որ տարրական իրատեսություն չունի՝ և չի կարողանում պարզել, թե այս ժողովուրդն ի՞նչ շրջապատի մեջ է գտնվում, ինչպե՞ս կարող է ապրել, և նրան հրում է ինքնասպանության։ Այո՛, եթե Թուրքի, մուսավաթի ու մենշևիկի հարևանության պայմաններում մեր ուժասպառ ազգը մեկուսացնում են իր միակ բարեկամից ու հզոր հովանավորից, հանձնում այդ երդվյալ թշնամիների ողորմածությանը, դա նրա կործանումն է ու մահը։ Մարդիկ չե՞ն տեսնում, չե՞ն զգում այսքանը։ Քանի՞ ամիս է, Թուրքիայի տերերը պահանջում են, որ Կովկասը մեկուսանա, անջատվի Ռուսաստանից, որպեսզի իրենք հեշտությամբ կլանեն այդ մեկուսացած ու անպաշտպան կովկասցիներին։ Մի՞թե հենց դա՛ նրանց ոչինչ չի ասում։ Թուրքը շա՞տ է ցավում Կովկասի անկախության համար։ Ինչպե՞ս չէ, հենց գիշեր-ցերեկ նրանց անկախ ու ազատ զարգացումն է երազում, այդ պատճառով է, որ արնախում զորքը քաշած եկել է՝ իր ճանապարհին ավեր ու մահ սփռելով։

Կամ այն մյուսնե՞րը։ Երեկ չէ մյուս օրը Սեյմի ժողովում Գեգեչկորին վեր է կացել ու հրապարակել մուսավաթական կառավարության զինվորական կոմիսար Զեյնալ Սուլթանովի հեռախոսազրույցը Թիֆլիսում գտնվող լեռնականների ներկայա-

ցուցչի հետ։ Սուլթանովն ասել է՝ թող լեռնական մուսուլմանները զինվեն ու նախապատրաստվեն. իրենց նոր իշխանությունը շուտով Ղարաբաղի ու Զանգեզուրի վրայով կկապվի Անատոլիայի հետ, և նրանից հետո Կովկասում միայն կլինի մուսուլմանական տիրապետություն։ Պատահա՞կան է, որ թուրքացած քուրդ Սուլթանովը, Անդրկովկասում, իբր թե, բարիդրացիական հարաբերություններ հաստատելու նպատակով բնավորված անգլիական միսիային կաշառելով, իր եղբորը՝ բժիշկ Խոսրովբեկ Սուլթանովին, նշանակել է տվել Ղարաբաղի տեր ու տնօրեն։ Իսկ այդ բժիշկ-հայակերն էլ կաշառվածների օժանդակությամբ փորձում է ձեռք ձգել նաև Զանգեզուրն ու Կապանը։

Գեղեշկորին ինքը քի՞չ սադրանքներ է կատարում Հայաստանի ու հայության հանդեպ. ահա թուրքի ճակատը լքած մենշևիկյան զորքերը կանգնել են Լոռու և Բորչալուի դեմ ու այս կողմից էլ նրանք են պատրաստվում հոշոտելու հայ ժողովրդի բզկտված մարմինը։

Իսկ մեր իմաստուններն ազգի գլուխն են լցնում անկախ ու ազատ Հայաստանի թմբիրը։ Չե՞ն ուզում ոչ մի տերության կամ ժողովրդի կողմից պարտադրված փոխհարաբերություններ։

Բայց որքան հայտնի է, կամ ինչպես պետք է ենթադրել, կուսակցություններն ազգի ցավից են ծնվում, որպեսզի դարմանեն այդ ցավը։ Ինչպե՞ս է պատահում, որ նրանք մոռանում են իրենց դերը։ Թե՞ կարծում են՝ ցավը պետք է վերացնել ցավատիրոջ հետ միասին։ Հիմա մեր ազգի առաջ կանգնած մի անհետաձգելի խնդիր կա՝ կասեցնել թուրքի առաջխաղացումը, փրկել Հայաստանի սիրտը, որպեսզի նա ապրի։ Հետո արդեն անհրաժեշտ կլինի ապահովել այն հովանավորությունը, որի առկայությամբ թուրքն այլևս չի համարձակվի մեզ վրա գալ, և Կովկասում վերջ կտրվի ազգամիջյան խժդժություններին։

Այսպես նա մտածում էր իր համար՝ երկար ժամանակ մոռացած ուղեկցի գոյությունը։ Իսկ այդ ուղեկիցը խոնարհ, խելոք, սակավախոս մարդ էր՝ նշանակված գնդապետ Պողոսբեկ Փիրումյանի կողմից։

Մի օր էլ սրբազանին ուղեկցեց Դանիելբեկի ավագ որդին՝ պոդպորուչիկ Միքայել Փիրումյանը։ Հաջորդ օրը նա կարևոր գործ ուներ զորամասի շտաբում. հոր հետ պետք է ճակատամարտի քարտեզը գծեր, մնաց այնտեղ, և սրբազանն ստիպված եղավ

շրջագայել միայնակ, մեկ-մեկ էլ հոգևորական պաշտոնակիցնել ի հետ։ Զավեն եպիսկոպոսի հետ զորամասից-զորամաս էին գնում հին աշուղների պես, մեկը մյուսի թևը բռնած։ Մարմնեղ Զավենը ծանր էր շարժվում և հաճախ էր խնդրում, որ Գարեգին սրբազանը ոտը մի քիչ կախ գցի։ Գարեգինը կանգնում էր, ժբպտալով խոսում.

— Աչքերդ խփի՛ր, փեշս բռնի՛ր։ Ես էլ կձևացնեմ, թե քոռ աշուղ եմ ման ածում։

— Տեսե՞լ ես՝ այդ քոռերը ոնց էլ դիպուկ են գավազան իջեցնում շների վրա։

Գարեգին սրբազանը լավ էր հիշում իրենց գյուղերում տաղ ասող զանգեզուրցի աշուղներին։ Երեխա էր, հարցասեր, աշխարհի բոլոր գաղտնիքները բացելու հետամուտ, մի անգամ իրենց բակում երգող աշուղի առաջ կուացավ, փչակ-փչակ աչքերին նայեց և հարցրեց.

— Աշուղ դայի, դու բոլորովի՞ն քոռ ես։

— Հա՜, քե մատաղ, բոլորովին,— դատարկ խոռոչների վրա կուչ եկած կոպերը ճպճպացնելով փորձեց ժպտալ «աշուղ դային»։

— Բա սկի՞ ոչ մի հետ էլ չե՞ս տեսել։

Երևի «աշուղ դային» հասկացավ, որ հարցվորը շատ է միամիտ, և հետո էլ, պարտավոր էր հավաքվածներին աշխուժացնել։ Կոտրատված մի ժպիտ խաղացրեց ծաղկատար դեմքին, ասաց.

— Քե մատաղ, ինչի՞ չէ. տարին մի հետ տեսնում եմ։

Քոռ աշուղին ման ածողը լուրջ զայրացած նկատեց.

— Շա՜տ ա,— ասաց,— մի օրվա մեջ էնքան ցավ ու դառնություն կտեսնես, որ սիրտդ կճաքի, և աչքդ նորից կքոռանա։

Հիմա ամեն առավոտ էջմիածնից դուրս գալիս ու երեկոյան իր կացարանը գնալիս երանի էր տալիս այն քոռին, որ «ոչ մի հետ» բան չէր տեսել կյանքում, և սիրտը չպիտի ճաքեր այն ցավերից ու տառապանքներից, որ միայն աչքով տեսնողը կարող է հասկանալ։

Արդեն երեկո էր։ Մի պայծառ կիսալուսին իր կաթնալույսն էր փռել չհնձած արտերի ու արոտների վրա։ Հեռվում հատուկենտ կրակոցների ձայներ էին լսվում։ Մոտիկ եղեգնուտներում միայն մեկ անգամ բղավեց վայրի խոզը և լռեց։ Երևի նա էլ հասկացավ, որ վտանգավոր ժամանակներ են։

Սրբազանը ձին կանգնեցրեց, ետ նայեց, որ տեսնի՝ ուղեկիցը

հո չի՞ ննջել ձիու վրա։ Պողոսբեկն իր հետ ուղարկելիս ասել էր.

— Խոսողին լսող է պետք։ Թե որ ռուսի զորամասում ունկընդիր չունենաք, մեր Կարոն բավական է. հազար լսում է, մեկ խոսում։

— Միքայելն էլ շատախոս չէ, գնդապետ,— բարեկամաբար, պատասխանեց սրբազանը։— Խոսում է հա՛տ-հա՛տ։ Բայց դրանք ոսկեհատներ են։ Աստված շա՛տ պահի։

— Կարոն էլ անարժան բաներ չի ասում,— տեղեկացրեց Պողոսբեկը։— Միայն թե կարողանաք բերնից խոսք քաշել։

— Նկատի կունենամ։

Եվ հիմա բավական տեղ նրա հետ ճանապարհ գնալուց հիշեց գնդապետի երաշխավորությունը, մանավանդ, որ շատ էր ուզում դուրս գալ այն տհաճ միջադեպի տպավորությունից։ Իսկ ուղեկից Կարոն, կարծելով, թե սրբազանը բան է ուզում, ձիուն խթանեց և արագ հասավ նրան.

— Հը՛, լսում եմ, սրբազան։

— Լավ ես անում, որ լսում ես, հեր օրհնած։ Բա սկի՞ չես ասում, թե որտեղացի՛ ես, ումանցի՛ց։

— Է՛, որ ասացի, պիտի ճանաչե՞ս, սրբազան։ Աշտարակի կողմերից եմ։

— Հատուկ ո՞ր գյուղից։

— Նազրվան են ասում, սրբազան, լսած կլինես։ Նազրվանցի եմ։

— Հա՛, Ղազարավանցի՛ ես,— ծոր տալով ուղղեց Գարեգին եպիսկոպոսը։

— Ինչ-ի՞նչ։

— Ղազարավան։

— Չէ՛, սրբազան, մեր գեղի անունը Նազրվան է, Նազրվա՛ն։

— Ա՛յ տղա, այդպես եկվոր անլեզուներն են կոչում, նրանք, որ հենց մի գլուխ տեսածն ու լսածը աղավաղում ու այլանդակում են։ Ձեր գյուղի իսկական անունը Ղազարավան է, Ղազարավա՛ն։ Հասկանո՞ւմ ես։ Եվ Ղազարն էլ մեծ մարդ է եղել։ Մեզանից, է՛, հազար քանի հարյուր տարի առաջ է ապրել։ Գրող մարդ էր, պատմիչ։ Նրա մարմինը թաղված է ձեր գյուղի եկեղեցում։ Այդ պատճառով էլ գյուղը նրա անունով են կոչել։

— Բա դու էդ ո՞րտեղից գիտես, սրբազան, գրքերում գրվա՞ծ է էդ բոլորը։

— Գրված է, որդիս, գրված է։

— Բա ո՞նց է, որ մեր գյուղի տերտերը մեզ չի ասել։

— Ասած կլինի, երևի դու չես ուշադրություն դարձրել։

— Չէ՞, սրբազան, ասող չի։ Որ ասած լիներ, ինձ էլ կհասներ։ Ասող չի։ Համ էլ նրա խոսքին որ ուշ դնես, ճանապարհդ կծռվի։

— Ո՞նց թե։

— Էսօրվա էն մեծախոսի նման է։

—Ո՞ր մեծախոսի։

— Էն, որ մեծ-մեծ բրդում էր։ Ժողովուրդը Թուրք-նասրանու ձեռքից կոտորվում է, իսկ ինքը վեր է կացել, թե ես անկախ Հայաստան եմ ուզում։

— Գյուղում ի՞նչ ունես, Կարո։

Սրբազանն ուրախ էր, որ այս հասարակ շինականն էլ ճիշտ է մտածում։ Սակայն ցանկություն չուներ վերադառնալու տխուր միջադեպին։

— Գյուղում ի՞նչ ունես, Կարո։

— Է՛, գյուղացին ի՞նչ կունենա, սրբազան. մի քանի տավար ունեմ, դրանից ավել՝ էրեխա։ Տանը հարսներն են մնացել, էրեխեքը։ Ես ու ախպերս էստեղ ենք։ Չգիտեմ՝ էս բոլորի վերջն էլ է լինելու, որ դառնանք մեր գործին...

— Շուտո՛վ, շուտո՛վ,— տխրամած պատասխանեց սրբազանը։

— Է՛, աչքս խաղում է. վախենում եմ՝ Թուրքի գնդակը չթողնի, որ էդ օրը տեսնեմ։

— Սիրտդ լե՛ն պահիր, Կարո ջան, այս զորքը, որ ես եմ տեսնում, վաղը Թուրքի մոութը ջարդելու է։ Նախորդ բոլոր պարտություններին, նահանջի ու կորուստների վրեժը պիտի հանի։

— Ախար, էդ պարտությունների ու նահանջների ժամանակ ուրիշ տեսակ էր, է՛, հայր սրբազան։ Մեր ափիցերները ռուսերեն մեր էին հայհոյում, հայերեն էլ՝ խոր խոքի։ Մեզ հետ ո՞վ էր էդ իմաստուն զրույցներն անում, որ աչքներիս աղն է՛լ քաղցրանա, հողն է՛լ։ Էս է, ինձ գցել են պարոն Պողոսբեկի գունդը, ոնց որ դժոխքից դրախտն ընկած լինեմ։ Գնդապետ տեղովն էն հասարակ զինվորներին «քե մատաղ» է ասում։ Բա ես նրա «քե մատաղի» համար կրա՞կ չեմ դառնա, թափվեմ Թուրքի գլխին...

— Գնդում բոլո՞ր քեզ պես են մտածում, Կարո։

— Դե՛, գնդի մասին ի՞նչ ասեմ, սրբազան, քո աչքով տեսար,

քո բերանով էլ կնքեցիր «Մահապարտների գունդ»։ Գնդում մի սրախոս կա, կողքիս էր, ասաց. «Մահապարտներ չենք, է՛, մահատարներ ենք. Թուրքին մահ ենք տանելու»։

* *
*

Երբ երկու Փիրումյանները, մյուս զորագնդերի հրամանատարների հետ որոշում էին գլխավոր հարվածի ուղղությունը, հիշեցին նախանցյալ օրը բռնած լրտես Սեյֆուլլա Ասադուլլաևին։

— Նրա հաղորդած տեղեկությունները հաստատվեցին,— հաղորդեց ճակատի հրամանատարը։— Արամի մարդիկ հայտնաբերել էին ապստամբության բոլոր օջախները Զանգիբասարում։ Այս գործողությունը կատարվել էր գիշերը և հույժ գաղտնի։ Ամբողջ գիշեր խստագույն պահակություն են սահմանել թուրքական գյուղերի շուրջ և բռնել են երկու հոգու, որոնք այդ մասին պետք է լուր տանեին Շեքի փաշային։ Ուրեմն, ո՛չ փաշայի հանձնարարությունն է հասել ապստամբներին, ու այդ մասին ինքը փաշան տեղեկություն չունի, ո՛չ էլ ապստամբների զգուշացումն է հասել փաշային։ Հիմա փաշան հույս ունի, թե Զանգիբասարի գյուղերն ապստամբած սպասում են իր զորքի երևալուն։ Թուրքական զորքը երկաթգծի ուղղությամբ, որ միակ ամենակարճ ու անվտանգ ուղին է, պիտի հասնի Զանգիբասար, այնտեղի ապստամբներին էլ իր հետ առած՝ շարժվի Երևանի վրա։

— Դա ամենահավանական տարբերակն է, պարոն հրամանատար,— համաձայնեց Պողոսբեկ Փիրումյանը։— Ճիշտ է, երկաթգիծը համեմատաբար բաց տարածություն է, ենթակա մեր հարվածներին։ Բայց Թուրքը չի կարող մտածել, թե ո՛չ փակ տարածություններն առավել անվտանգ են։ Զանգիբասարը նրանց ամենահուսալի հենակետն է, նախապես, իբր թե, ոտքի հանված, և հիմա նրանք այնտեղ են շտապելու։

Առանց Մահապարտների գնդի անելիքի մանրամասները բացելու, ճակատի հրամանատարը հանձնարարեց, որ մարտական պատրաստության բերվեն հրետանային մարտկոցները։

— Ես առավոտյան կստուգեմ պատրաստությունը,— զգուշացրեց նա։— Ժամը հինգին-վեցին։ Հասկանալի՞ է։

— Պարզ է, պարոն հրամանատար,— տեղից վեր կենալով՝ զգաստ պատասխանեց հրետանու կապիտան Խորեն Իգիթխանյանը՝ վրաստանցի ամրակազմ մի երիտասարդ, որի մարտական կարողությունների մասին արդեն տեղյակ էր ճակատի հրամանատարը։

Մյուս հրամանատարները ևս մարտի պատրաստ լինելու հրաման ստացան։ Այդքա՜ն բան։

Գնդապետ Պերեկրյոստովը մտածեց, որ ճակատի հրամանատարն զգուշանում է գլխավոր հարվածի մանրամասները հրապարակելուց։ «Ճիշտ էլ վարվում է,— եզրակացրեց նա։— Առաջին անգամն է այս մարդկանց հետ գործողություն ձեռնարկում և այն էլ ամենակարևորը, ինչպե՞ս կարող է բացել բոլոր քարտերը։ Վիրավորակա՞ն է։ Ես անձամբ չեմ վիրավորվում»։ Այս մտքի վրա էր, որ հրամանատարը նրան հարցրեց.

— Պարոն գնդապետ, չե՞ք կարծում, որ ձեր կողմերի կամուրջները մեզ պետք չեն։— Գնդապետ Պերեկրյոստովը հանկարծակի գալով՝ չգիտեր ի՞նչ պատասխանել։— Մենք աջափնյակում այլևս ոչինչ չունենք։ Առայժմ այնտեղ փոխադրելու էլ բան չկա։ Այդ կամուրջները կարող են պետք գալ միայն թուրքերին։

— Այո՜, ճիշտ այդպես, պարոն հրամանատար։

— Մենք այդ կամուրջները կոչնչացնենք այսօր ևեթ,— կտրուկ ասաց նա։— Եվ, կարծում եմ, առայժմ մեկ-երկու վաշտը բավական կլինի, որպեսզի հնարավորություն ունենանք կանխելու այդ կողմերի որևէ գետանցում։ Արաքսը վարարել է, և ամեն տեղ չէ, որ թուրքերը կհամարձակվեն իրենց նետել գետը։

— Ճիշտ այդպես, պարոն հրամանատար,— գլխի շարժումով պատասխանեց Պերեկրյոստովը։— Ուղղակի պետք է աչալուրջ լինենք։

— Աչալրջությո՜ւն ամենից առաջ,— համաձայնեց Դանիելբեկ Փիրումյանը և կտրուկ հայացքը դարձրեց դեպի կապիտան Երվանդ Մամաջանյանը, որ, անկյունում նստած, ոչնչով չէր մատնում իր ներկայությունը։— Դո՞ւք ինչ կարծիքի եք, պարոն կապիտան։ Եթե Արաքսի գետանցումների հսկողությունը դնենք ձեր վաշտի վրա... Կտանք մի վաշտ ևս։ Ավելին չսպասեք։

Երվանդ Մամաջանյանը ոտքի կանգնեց, ձգված ուղղեց գո-

սին՝ բութ մատները տակից անցկացնելով և համարձակ պատասխանեց.

— Պատրաստ եմ մարտական առաջադրանքը կատարելու, պարոն հրամանատար։

Գնդապետ Պերեկրյոստովի պեպենոտ դեմքին մի խոր գոհունակություն կար, որ չվրիպեց ճակատի հրամանատարի աչքից։ Ի՞նչ է մտածում այս փորձված ու խելոք ռուսը,— անցավ Դանիելբեկ Փիրումյանի մտքով։— Դեմքն այնպիսին է, կարծես ժպտում է միշտ. ներքին բարությունի՞ց է, թե՞ անհոգությունից։ Սրանք մարդկային հակոտնյա հատկանիշներ են, որ հաճախ են շփոթվում։

— Առաջարկություններ չկա՞ն,— ընդհանուր հարց տվեց Փիրումյանը և անմիջապես էլ հայացքը հառեց Պերեկրյոստովի վրա։— Պարոն գնդապե՞տ։

Գնդապետի դեմքի ժպիտն ավելի ընդգծվեց։

— Կարծում եմ՝ սկզբի համար ամեն ինչ լավ է։ Աստված տա՝ մեր ուղածը կատարվի,— խոսեց Պերեկրյոստովը։— Եթե գալո՞ւ եք մեզ մոտ. ասացիք, որ հրետանու մարտկոցներն եք այցելելու վաղ առավոտյան։

— Այո՛, կապիտան Իգիթխանյանի մարտկոցը ձեր զորամասի մոտ է։ Ուրեմն, տեղում կհանդիպենք։

* *
*

Թռուցիկ խորհրդակցությունից հետո ճակատի հրամանատարն անցավ շտաբի ռադիոկետը և փորձեց կապվել Երևանյան ռազմաճակատի հրամանատար գեներալ Սիլիկյանի հետ։

Ռադիոկապն ստեղծել էր կապիտան Ալեքսանդր Շնեուրը՝ Փիրումյանի կազմակերպած նոր շտաբի պետը։ Ռուսական բանակի այդ հին սպան, ծագումով գերմանացի, շտաբի ղեկավարությունն ստանձնելուն պես իր հետ բերած ռադիոսարքը կարգի գցեց և նորաստեղծ ճակատի հրամանատարին հպարտությամբ զեկուցեց.

— Ռադիոկապը պատրաստ է, կարող եք օգտվել։

Սակայն այդ ռադիոսարքի առաջին իսկ ծառայությունն այն եղավ, որ իրեն՝ շտաբի պետ Շնեուրին, կարգադրեցին անմիջա-

պես ճանապարհվել Երևան՝ խորհրդակցության, և չմոռացան հաղորդել, որ դա գեներալ Սիլիկյանի կարգադրությունն է։

«Ի՞նչ խորհրդակցություն է,— վրդովված մտածեց Դանիել-բեկ Փիրումյանը։— Ո՞վ է այն իմաստունը, որ առաջ շարժվող թշնամու դեմից մարդկանց հանում, հետները խորհրդակցություն է անում։ Ի՞նչ պիտի անեն այդ խորհրդակցությունում։ Գուցե Սիլիկյանը մտածում է, թե առանց Շնեուրի ես ի վիճակի չպետք է լինեմ այստեղ գործից գլուխ հանելու...»։

Այնուհանդերձ, նորաստեղծ շտաբի պետին ճանապարհեց և հանձնարարեց Երևանում չուշանալ։

— Արամին էլ թե որ տեսնելո՛ւ լինեք,— ավելացրեց նա,— ասացեք՝ օգնություն ենք սպասում. ժողովրդական պատերազմին՝ համաժողովրդական օգնություն։ Անհարմար չզգաք. իմ անունի՛ց ասեք։

...Եվ այս անգամ Սիլիկյանին էջմիածնի շտաբում բռնելով՝ Փիրումյանը զարմացավ. «Ի՞նչ խորհրդակցություն է հրավիրել, որին ինքը չի մասնակցում»։ Նա Շնեուրի մասին ոչինչ էլ չհարցրեց, իբր կապվել էր վաղվա մարտի նախապատրաստությանը ծանոթացնելու։

Սիլիկյանը դժկամությամբ ընդունեց հաղորդված տեղեկությունները և նախկին տեղակալին հասկացրեց, որ ինքը չի խրախուսում այդ միջոցառումը, սակայն նպատակ էլ չունի դեմ կանգնելու, որովհետև, միևնույն է, Արարատյան դաշտի հարցը լուծված է ըստ էության։ Նա հայտնեց նաև, որ իր ու կորպուսի ղեկավարության ջանքերն ուղղված են նրան, որպեսզի հաշտություն կնքվի, և ազգի գոնե վերջին բեկորները փրկվեն վերահաս կործանումից։

— Ամբոխավարությունը գուցե մի այլ տեղ որևէ շահ բերի, բայց պատերազմի մեջ և այն պայմաններում, որոնցում մենք ենք գտնվում, կործանարար կարող է լինել,— ռադիոկապով տրտնջաց նա և, խոսքը փակելու համար, հաջողություն մաղթեց.— Աստված ընդ քեզ, Դանիելբեկ Աբիսողոմովիչ։ Թող ե՛ս լինեմ չկամեցողը։ Միայն իմացիր, որ խելացի նահանջը միշտ էլ նախընտրելի է անհաջող մարտից...

— Երանի՜, թե դեռ նահանջելու տեղ ունենայինք, զորավար,— զրույցը կտրուկ չընդհատելու համար ասաց Փիրումյանը։— Այն ժամանակ երևի թե ընտրություն կատարեինք։ Չէ՞

որ միշտ էլ խելոք մարդիկ տարբերակներից լավագույնն են ընտրում։ Բայց այժմ մենք ունենք միայն մեկ ճանապարհ, որը տանում է դեպի մահ կամ հաղթանակ։ Ընդ որում մահը մերը կլինի, հաղթանակը՝ ազգինը։

— Դա՞ ինչ բառախաղ է։ Առաջ դու բառախաղով խոսող չէիր։

— Բառախաղ չկա, զորավար։ Եթե մահ լինի, միայն մենք ենք ընդունելու. չէ՞ որ մենք պիտի կռվենք։ Իսկ հաղթանակի դեպքում կասեն՝ հայե՞րը հաղթեցին։ Մի երկու ժամ առաջ մեր ճակատի գլխավոր հարվածային ուժերից մեկը՝ Հինգերորդը, սրբազան օծում ընդունեց և ստացավ գիտե՞ք ի՞նչ անուն, Մահապարտների՞ գունդ։ Մեռնել կարելի է, բայց դեպի ետ ո՞չ մի քայլ։

— Օծողն ո՞վ էր։ Չլինի՞ զորամասի հոգևոր առաջնորդի պաշտոն էլ եք ստեղծել։

— Գարեգին Հովսեփյանն էր օծողը, մեր նոր Ոսկեբերանը։

— Չեմ նախանձում այն զորավարներին, որոնց խորհրդատուն վեղարավորն է լինում։

Կաթողիկոսի հետ ունեցած չարաբաստիկ հանդիպումից հետո ռազմաբեստների մասին հիշելն անգամ գեներալ Սիլիկյանին հանում էր հավասարակշռությունից։ Դա գիտեր Փիրումյանը և երբեք ջանք չէր թափում նրան մխիթարելու համար։

— Հինգերորդ դարում, զորավա՞ր, երբ հայությունն Ավարայր էր գնում պարսից գերակշիռ բանակների դեմ իր հավատն ու ինքնությունը պաշտպանելու, Վարդանի և վարդանանց կողքին կռվում էր Ղևոնդն իր դասակիցներով։ Եվ պատմությունը Վարդանին ու Ղևոնդին իրար կողքի է հիշում։

— Փոխվել են ժամանակները, Դանիելբեկ Աբիսողոմովիչ,— հորանջեց Սիլիկյանը, և Փիրումյանն այդ զգաց նրա ձայնի տատանումից։

— Դժբախտաբար, մեր ազգի համար ոչինչ էլ չի փոխվել, զորավար,— այս անօգուտ խոսքամարտը փակելու տրամադրությամբ վրա բերեց Փիրումյանը։— Թշնամու անունն է փոխվել, նրա նպատակը նույնն է՝ մեզ վերացնել իբրև ազգային ինքնության։ Իսկ մե՞նք ինչով ենք փոխվել։ Նույն չարաբախտն ենք, նույն միայնակը։ Միայնակ՝ այս արևի տակ, ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ։ Պատկերացրեք, պատերազմն էլ նույն ուժերով ենք մղում, ազգի բոլոր շերտերով, մեծ ու փոքրով։ Այսօր աշխարհազորայինների ջոկատն ընդունեցինք մի

ամբողջ գերդաստան՝ մեծ հորը, նրա երեք տղաներին և տասներկու թոռներին։ Ներուկը նեղսրտում էր, որ քիչ են։ Ասաց՝ այդքան էլ Դիլմանի կովում է թողել։ Մի կողմ քաշվեցի և ուրախության արտասուքս սրբեցի։ Իսկ չեմ հիշում, թե ցավից երբևէ արտասուք թափած լինեմ։

Այս ասելիս սիրտը կսկծաց. «Ի՞նչ հիմարություն. դու ի՞նչ ցավ ես ունեցել որ հպարտանում ես»։

— Ասուած մի՛ արասցե, որ ցավից արտասվես,— անմիջապես արձագանքեց զորավարը, և ձայնը դարձավ ջերմ, հարազատական։— Աչքդ տղաներիդ վրա՛ պահիր։ Կարծեմ երկուսն էլ այդտեղ են։

— Այո՛, այսօր երկուսն էլ մահապարտներ կնքվեցին։ Սիրտս ճմլվեց... Բայց մեկ էլ մտածեցի, թե նրանք ինչո՞վ են առավել ուրիշներից։

— Մի՛ ասա, ասուա՛ծ սիրես, քո սիրտն են...

— Երևի դժվար կլիներ, եթե պատերազմը ժողովրդական չլիներ։ Ժողովրդական պատերազմ, որ մղվում է ոչ թե թշնամու մի հերթական ներխուժման դեմ կամ շարքային մի հաղթանակի համար, այլ կործանման վիհի եզրին կանգնած ազգը փրկելու... Դուք գիտեք, որ ես բարձր խոսքերի սիրահար չեմ։ Սակայն այդ խոսքերը հիմա գալիս են, և չասել զինվորին, զինակցիդ, ազգիդ, կնշանակի լինել ծածկամիտ, նույնիսկ վախկոտ ու անբարյացակամ։ Չէ՞ որ այս պահին անկեղծ ու ոգեպընդող խոսքի կարիք ունեն բոլորը. ո՛չ միայն նորածիլ զինվորականը, այլև բազմափորձ կովողը և շրջահայաց սպան։

Այս խոսքն ասելիս մտածեց, որ զորավարը կընդունի իբրև կշտամբանք իր հասցեին, բայց չզղջաց ասելու համար։ Չէ՞ որ ինքը չէր սկսողը, և, վերջապես, ո՞վ է ասել, թե անկեղծությունը պնաք է պարուրել զգուշության մշուշով։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Նախապատմական ժամանակներից ի վեր արաքսամերձ այս դաշտին վերապահված է եղել ինքնահատուկ մի բախտ։ Ավանդությունն ասում է՝ Հայկյան ժառանգները տարածվել են մայր Արաքսի ափերին և Արարատի հովանավոր հայացքի տակ ստեղծել իրենց քաղաքակրթությունը։ Իսկ բևեռագիր մեր ժայռերն ու քարերը խոսում են առավել արժանահավատ և, հաստատելով ավանդության մանրամասները, պատմում են Արամ թագավորի ու նրա հետնորդների մասին, որոնք, իրենց աստվածների զորությանն ապավինած, քաղաքներ ու ավաններ են կառուցել, ոռոգել են իրենց երկրի պապակած անդաստանները և հաց ու գինի են վայելել հողի վրա հեղած արդար քրտնքի դիմաց։ Այստեղ, արաքսամերձ այս դաշտում բարձրացած բլուրների վրա Արգիշտիխինիլի քաղաքն է կառուցել Մենուայի որդի Արգիշտի Առաջին արքան՝ Էրեբունի—Երևանի հիմնադիրը։ Ահա նրա բևեռագիր արձանագրությունը, որով հզոր ու շինարար տիրակալը գալիք սերունդներին հաղորդում է, թե Մարաստանի դեմ տարած փառավոր հաղթանակի պատվին կանգնեցրեց քաղաքն Արգիշտիխինիլի և նրա շրջակա հողերը ոռոգելու համար գետից ջրանցք հանեց առատաջուր։ Հայտնի են Արգիշտի արքայի գահակալության տարիները՝ մ. թ. ա. 786—764 թթ.։ Հայտնի է նաև Արգիշտիխինիլիի հիմնադրման ժամանակը, որ եղել է Արգիշտիի գահակալության տասնմեկերորդ տարին՝ մ. թ. ա. 775 թվականին։

Արգիշտիխինիլին ամրացել ու ծաղկել է նրա հեղինակ Արգիշտի Ա-ի հաջորդների օրոք։ Վանի թագավորության մեծազորտիրակալներն էին. Սարդուրի Բ՝ որդի Արգիշտի Ա-ի, Ռուսա Ա՝ որդի Սարդուրի Բ-ի, Արգիշտի Բ՝ որդի Ռուսա Ա-ի, Ռուսա Ա՝ որդի Արգիշտի Բ-ի և, վերջապես, Ռուսա Գ Էրիմենա, որ նշանակում է Էրիմենյան-Արմենյան, այսինքն՝ հայի որդի... Նրանք Էրեբունի—Երևանի կողքին բարձրացած Արգիշտիխինիլիի համար ապահովեցին ռազմա-պաշտպանական հզորության, տնտեսական փարթամության և մշակութայն ծաղկման մի այնպիսի վիճակ, որ հին արևելքի ամբարտավան տիրակալների նախանձն էր շարժում։

Հետո եկան Երվանդունի գահատոհմի դարերը, երբ Արգիշտիխինիլին մասամբ կորցրել էր իր վաղեմի շուքը, սակայն դեռևս այնքան բանուկ էր և մայր Արաքսի ու հայր Արարատի հարևանությամբ այնքան գրավիչ, որ այս արքայատոհմի տիրակալները հենց այստեղ, հինավուրց քաղաքի արևելյան մասում հաստատեցին իրենց գահը։

Սակայն պատահե՞լ է, որ մի թագավոր աշխարհի արարչագործությունը չկապի իր ծննդի հետ։ Երվանդունիները չէին ճանաչում գահանիստ քաղաքի հինավուրց փառքը և իրենց էին վերագրում նրա շինարարությունն ու բարգավաճումը։ Նրանք նույնիսկ նոր անվամբ կնքեցին իրենց գահանիստը՝ Արգիշտիխինիլին կոչելով Արմավիր։

Մշտահոլով այս աշխարհում հավերժական ոչինչ չկա։ Երվանդունի արքայական տանը փոխարինելու եկան ուրիշ գահատոհմեր, որոնք միշտ էլ պիտի այս աշխարհից հեռանային անքնական մահով... Հաջորդ հարյուրամյակները հին ու հզոր տերություններ պիտի ջնջեին աշխարհի երեսից և աշխարհ պիտի բերեին առաջներում անհայտ ցեղեր, որոնց ձևած-կարած անհարմար հագուստների մեջ հոդագունդը թափտալու էր հուսահատ։ Մեծ Հայքն իր հաղթանակներով ու փառքերով արդեն ծվարել էր պատմության խորխորատներում, իսկ նրա ժողովուրդը բզկտված ու կոտորակված քաշում էր օտարի լուծը, օտարի՛, որ նրա տան տերն էր դարձել և նրա բախտի տնօրենը...

Վերջին դարերում, երբ Պարսից շահերն իրենց ենթարկեցին Արևելյան Հայաստանը և նրա տարբեր նահանգներում էլ բազմեցրին իրենց կուսակալ-խաներին, Արարատյան երկրի խան-

սարդարն իր նստավայր դարձրեց Երևան քաղաքը, որ հին էր, ինչպես իրեն կանգնեցնող ժողովուրդը հայոց, սակայն երկար դարերի միջոցին երբեք էլ չէր պատահել, որ դառնար Հայաստան երկրի քաղաքամայր։ Երևանի սարդարն ի վերուստ հաստատված պարտականություն ուներ հավաքելու արքունի հարկը և հետևելու նահանգի կարգ ու սարքին։ Սակայն Իրանի այս դրածոն, որ կարող էր և՛ Իրանի որդին լինել, և՛ Ալթայի տափաստաններից իր հոտի ետևից եկած վրանաբնակի մի երկրորդական-երրորդական շառավիղը, շատ շուտով դարձավ ինքնակալ տերն Արարատյան երկրի։ Երևանի ամենաակնառու տեղում, Զանգվի գեղատեսիլ ձորի վրա կառուցել տվեց իր ապարանքը, որ պետք է մրցեր իր դիրքն այստեղ անխախտ պահող շահի պալատի հետ և անպայման մրցում էր, որովհետև կառուցված էր հայ բազմաքանքար վարպետների ձեռքով։ Ապարանքի դիմաց, Զանգվի մյուս ափին, դեպի Վաղարշապատի դաշտը ձգվեց ու տարածվեց սարդարի այգին՝ հայ բազմաշարշար գեղջուկներից խլված հողակտորների կցմցումով։ Օրեցօր շենանում էր այս այգին, ցանկապատերն ու պարիսպները տարեցտարի ընդլայնվում էին ու ծավալվում, որովհետև սարդարի այգին պետք է մրցեր իր իսկ տիրոջ՝ Պարսից շահի այն այգեստանների հետ, որ փռված էին Կասպիական ծովի հարավային ափին։ Եվ արդեն մրցում էր իսկապես, որովհետև սարդարի այգու եզրը հասել էր հին Արգիշտիխինիլի-Արմավիր։ Բայց նրանից արևմուտք այլևս չէր շարժվում, որովհետև դեռն անկենդան տափաստանն էր, արևախանձ ու խորշակահար, ղռալից բոլոն օձերի ու օձակենցաղ ուրիշ զեռուններին։ Եվ այստեղ էր, որ իբրև վերջին սահման ու անառ եզրագիծ, կանգնեցվեց սարդարի այգու հզոր պարիսպը՝ Սարդարապատը։

Այս ամենը կատարվում էր Արարատի հայացքի առաջ։ Արարատի, որ լեռ էր, քարեղեն հսկա և անմոռուն պիտի մնար դար ու դարեր։ Սակայն Հայաստանում, ասում են, անխոս քար չկա, հայոց քարերն իրենց վրա պահում են անցյալ սերունդների հեռագրերը ապագային։ Ձեռագրեր՝ փորագրված անհիշելի ժամանակներից ի վեր, սկսած դեռևս այն օրերից, երբ փորագրողը չգիտեր էլ, թե ո՛վ է ինքը՝ ինչացո՛ւ, ի՛նչ առաքելությամբ աշխարհ եկած... Պարզապես աչք էր բացել, տեսել արևի ճառագումը հեռավոր լեռնապարի ուսից և... արևի ժպիտ փորագրել

իր բնակարան-քարայրի ճակատին։ Անտառում եղնիկ էր որսացել, ընդառաջ եկած հարազատները երջանկությունից թևաբաց վեր-վեր էին թռել... Եվ նա քարով քարի վրա փորագրեց փախչող եղնիկ, փորանկարեց իրեն՝ եղնիկի ետևից նետ արձակելու պահին, եղնիկը քարայր հասցնելը քանդակեց, ապա և յուրայիններդ խանդավառությունը՝ երջանկությունից վեր-վեր թռչող մարդիկ, կին-տղամարդ... Այո՛, կին-տղամարդ, որոնք տարբերակված են իրենց բաց ու ընդգծված ամոթներով, որովհետև այն ժամանակ ամոթը դեռևս ամոթ չէր համարվում...

Ահա այսպես է գրվել մեր առաջին գրական գործը, որին հետևել են ուրիշները՝ կարճ ու երկար, հմուտ ու ապաշնորհ, ուրախ ու վշտալից։ Նրանց հերոսներն իրենք էին իրենց տպագրիչները, բայց չէին մտածում մեծ տպարանների մասին։ Ամեն անգամ մեկ օրինակ՝ մեկ խանդավառ կանչ, մեկ ցավագին հառաչ, մեկ պարզունակ պատմություն...

Հիմա մեր լեռնաստանը ծածկված է այդպիսի հեռագրերով...

Հետո մերոնք սնպագրեր տեսան հարևան երկրներում և փոխառան, նրանցով գրեցին իրենց անշուք ու անպաճույճ խոսքերը, որպեսզի քարերը զրուցեն գալիք սերունդների հետ, որպեսզի քարերը ժպտան ու հառաչեն, ջանասիրության դաս տան և քաջության օրինակ...

Այսպես են քարերին կենդանացրել, շունչ ու հոգի պարգևել մեր հինավուրց նախնիները, մինչև որ եկել է այր մի Մաշտոց անուն և ասել է. «Բավական է որքան ծոմվեցիք անխոս, կամ ուրիշների առաջ վիզ ծռեցիք կիսատ-պռատ խոսքերն իրար կապելու համար... Ահա սրա՛նք են մեր գրերը՝ սեփական, հարմար, հավերժական,— տպա դիմելով բովանդակ աշխարհին՝ պատվիրել է այսպես.— Եղիր տե՛ր այս գրերի, պահի՛ր ու պաշտպանի՛ր իրրև սրբությունը սրբոց։ Կապրես այնքան ժամանակ, քանի տերը կլինես այս գրերի, որոնք պահապանն են քո հողի ու քարի, քո երկրի և քո հոգու»։

Եվ Մաշտոցյան գրերը ծաղկեցին, սփռվեցին հանուր Հայաստանով մեկ, գնացին ապրելու աշխարհի բոլոր կողմերում, ուր որ հայ կար և հայություն... Կամ՝ ուր երբևէ ոտք էր դրել ճշմարիտ մի հայ։ Իսպանիայում ու Շոտլանդական լեռնաստանում գտնվել են խաչքարեր, որոնք խոսում են հայերեն, քանի որ

ուշ-միջնադարում այդ վայրերը ոտք են դրել հայ վաճառականներ, որոնք վախճանք եղել է հայերեն...

Եվ հիմա քարեղեն Արարա՞տը պիտի մնար անմռունչ, երբ նա ի՛նքը համակ խոսք էր ու սրտագին զրույց, երբ նա պերճախոս խորհուրդ էր ու սուրբ խորհրդանշան, հայի ապրելու լեռնացած կերպը՝ նրա հին ու հավերժական հայրենիքի կենտրոնում...

Վաղնջական մի զրույց է պտտվում Արարատի շուրջը, Արարատյան դաշտում։

Արարատի թևի տակ, Փոքր Մասսի գագաթին մի լճակ է ծփում անապական ջրով։

Լճակն այն կոչվում է Անահտական, քանզի գոյացել է հայոց աստվածուհի Անահիտի արտասուքից։

Պատմում են, թե բերքի և արգասավորության մեր ոսկեմայրն ու ոսկեծղին Անահիտ սիրահարված էր Արարատին։ Գիշերը քուն չուներ և, Արաքսի ջրերից ելնելով, պտտվում էր լուսնոտի պես, ևիրո և նվիրումի իր քնքշագին խոսքերն էր հղում Արարատի լանջերն ի վեր՝ իբրև սյուք ու զեփյուռ։ Իսկ ցերեկները փարվում էր նրա փեշերին՝ բաշխելով իր գգվանքները, որ տոթակեզ էին առավել, քան Արարատյան դաշտի միջօրեի շունչը։ Անցնում էին օրերը՝ անպատասխան սիրո տանջանքներով լեցուն։ Արարատի լռությունը փոթորկում, քրքրում էր Անահիտի սիրտն ու հոգին։ Եվ նա մի օր էլ, իրենից ի բաց վանելով կանացի պարկեշտության կեղևը, բարձրացավ գագաթը Փոքր Մասսի։ Վաղորդայնի մի թափանցիկ մշուշով իր հմայքոտ մարմինը պարուրած՝ կանգնեց Փոքր Մասսի կատարին և սիրո կրակ-խոսքեր ուղղեց սիրած Արարատին։ Խոսքերն այդ նրա շուրթերից ելնում էին իբրև հրաշք թռչուններ, թևածում էին Արարատի ականջի տակ, Արարատի ճակատն ի վեր, Արարատի ուսերն ի վար... Սակայն Արարատը՝ անդրդվելին այդ վիթխարի, այնքան անտարբեր էր ու սառնաշունչ, որ Անահիտի շուրթերից թռած հրաշք թռչունները թևաբեկ ու սառած թափվում էին նրա խուլ-փակ ականջի տակ, նրա ձյունամած ճակատն ի վար, ուսերն ի վար։

Եվ սիրաբեկ ու հուսահատ Անահիտը, ասում են, ծնկի է իջել Փոքր Մասսի կատարին... Միայն արտասուքը կարող էր մեղմել նրա անամոք վիշտը... Երկար լացեց ոսկեմայրն ու ոսկեծղին Անահիտ... Եվ նրա սիրո արտասուքից մի լիճ գոյացավ Փոքր

Մասսի կատարին, Արարատի հայացքի տակ՝ իբրև անպատասխան սիրո և սիրեցյալի անտարբերության հավերժական առհավատչյա։

Հետո, ասում են, Անահիտը ոսկեմայր ու ոսկեծղի՝ թանձրամշուշ ամպի մեջ պարուրված, հեռացել է Արարատի փեշերից, գնացել է դեպի Արաքս՝ նրա գարնանահորդ ալիքների մեջ խեղդելու իր վիշտն անամոք և վիրավոր ինքնասիրությունը կանացի։

Երևի աշխարհի արարչագործությունից ի վեր այս երկնքի տակ պոռթկացած ամենամեծ ու ամենածանր ցավերից մեկը ահանջանքն է այն, որ բերում է իր հետ ուշացած զղջումը։ Ասում են՝ մի առավոտ Արարատն աչք է բացել, տեսել արտասուքի լճակն Անահտական, հասկացել է անմտությունն իր արարքի և ցավից ու տառապանքից քարացել է մի ակնթարթում։ Եվ ցավն ու տառապանքը հաղար ճեղք են տվել նրա կրծքի վրա։ Եվ ցավն ու տառապանքը հավերժորեն ձյունաճերմակ նստել են նրա գագաթին, որպեսզի, երբ նայի Անահտական լճակի հայելուն, այնտեղ տեսնի գլուխն իր ալեհեր։

...Եվ մի օր էլ, ասում են, Փոքր Մասսի հյուսիսային լանջին ծվարած Ակոռի գյուղի տանուտերը գնացել է Երևանի սարդարի ապարանքը, գոռոզ տիրակալին լուր է տվել, թե բա չե՞ս ասի այսպի՞ս ու այսպի՞ս. Փոքր Մասսի կատարին ծփում է մի եղեմական լճակ։ Իրր, անմահական է ջուրը նրա, որ անտեսանելի ծորանով իջնում և իբրև աղբյուր արևերես է ելնում սարի հյուսիսահայաց լանջին, հազարաբույր ծաղկանց, մշտադալար թփերի և զմրուխտե կանաչների մեջ։ Սարդարն իսկույն իր մոտ է կանչել երկրամասի հմուտ ճարտարապետներին ու քարգործ վարպետներին և կարգադրել, որ իր համար ամառանոց-ապարանք կառուցին Փոքր Մասսի կանաչափառ լանջին, անմահական այն աղբյուրի մոտ։ Երևանի բռնատիրոջ հրամանն ի կատար է ածվել կարճ ժամանակում։ Հինավուրց Ակոռի գյուղի քարգործ վարպետները բազմագույն քարեր են կտրել Մասսելի հյուսիսահայաց ժայռերից։ Կտրել են ու սրբատաշել, սրբատաշել ու տեղափոխել, չնայած այդ ժայռերի անդունդներում օրնիբուն դղրդյուն կար սարսափազդու. ասես մռնչում էին մասսյաց պահապան դևերը խորին անդունդների մեջ։

Մի տարին էլ չբոլորած՝ Փոքր Մասսի ստորոտում կանգ-

նեց ադինասարաս մի ապարանք, որի շքեղահյուս կամարների ներքո գիշեր ու զօր անմահական ջրի ցայտաղբյուրներն էին երգում, ծփում էր լճակը մարմարակուռ, և երփնավառ ծաղկաստանում դայլայլում էին հրաշք թևավորներ։

Սարդարը տեսավ այս բոլորը, շրջեց ապարանքի զարդարուն սենյակներում, իր մեծազգի հպատակների հետ ճաշի նստեց գմբեթարդ, մասսահայաց տաղավարներում... Եվ երբ ամեն ինչ ստուգված էր, տիրոջ հավանությանն արժանացած, ի զարմանս ականատեսների, խան-սարդարը կարգադրեց, որպեսզի հարևան Սուրբ Հակոբա վանքի առաջնորդը ներկայանա և նորակերտն օրհնի հայոց երկրի օրենքներով։

Խան-սարդարի սարբազներն անմիջապես նրա ոտքը բերին սուրբ առաջնորդին ու վանական միաբանությանը։

Ասում են՝ օծման այդ հանդեսին ներկա է եղել ամբողջ Ակոռին իր մեծ ու փոքրով և լիացել է սարդարի կարգադրությամբ սարքված, առատությունից տրաքվող սեղաններից։

Ասում են՝ Ակոռիի քարգործ վարպետներն արժանացել են խան-սարդարի տեսակ-տեսակ նվերներին։

Ասում են՝ Սուրբ Հակոբա վանքի հավատավոր սպասարկուները քեֆ-խնջույքից հետո գինուց շաղված հայացքներով շփոթել են մենակյացի իրենց խուցերը...

Իսկ հետո եղել է այն, ինչ որ պիտի լիներ. Արարատյան երկրի բոլոր գավառներից բռնությամբ դեռատի աղջիկներ են բերել ապարանքը։ Շինականի լուծն ավելի է ծանրացել։ Հայոց հողն ավելի անհույս է տնքացել օտարի արնաներկ կրունկների տակ։

Եվ այս բոլորը տեսել է Մեծ Մասիս-Արարատը։ Հայոց հայրն ու ապավենը։ Դարերի անհույս աղաղակներն ու տնքոցներն ամպրոպաձայն արձագանքներ են տվել նրա քարեղեն խորխորատներում։ Աշխատավոր, արդար զավակների տառապանքը բազմապատկել ու թանձրացրել է նրա ճակատի մռայլ ամպ ու զամպը։

Եվ ասում են... Բայց այս մեկը ո՞չ թե ասում են որպես հնավանդ զրույց, այլ գրված է ժամանակի արդար հիշատակարաններում, հայտնի է աշխարհի աստղագետներին ու երկրախույզներին։ Տեսածներից ու լսածներից զայրացած Արարատը 1840 թվականի հունիսի 20-ին իր անդունդներում ամբարած պատժիչ

ուժերն է ի ցույց հանել։ Եվ ժայթքելով դեպի երկրի երես՝ ցասման հեղեղը խորտակել է սարդար-խանի ամառանոց-պարանքը, մեղսակից Սուրբ Հակոբա վանքը և Ակոռին։ Եվ պարիսպը Սարդարապատ այնպես գետնի տակն է անցել, որ նրանից պահպանվել է լոկ մի անուն՝ իբրև ահեղ զգուշացում բոլոր բռնակալներին։

Պատմության ու իմաստության դասերը, սակայն, բռնակալների համար չեն կարծես։

Երբ Օսմանյան կայսրության բանակները ձախողվեցին Բալկաններում ու Միջերկրականի ափերին, երիտթուրք կառավարողներն իրենց հայացքը շրջեցին դեպի արևելք և հյուսիս։ Եվ փոխհատուցումը պիտի կատարվեր հայոց հաշվին։ Իսկ հայերն ունեի՞ն այդքան ձախողանքները փոխհատուցելու ուժ ու հարստություն։ Ունեի՞ն։ Թող, ուրեմն, վճարեին իրենց հողով, տուն ու տեղով, կյանքով ու արյունով։

Բայց պատահե՞լ է երբևէ, որ թուրքը հայից պահանջելիս առաջնորդվի ճշմարիտ հաշիվներով... Այսպես, ասենք, մեկի դեմ մեկ կամ թեկուզ երկուս, երեք... Այն ի՞նչ հաշվով էին առաջնորդվում հենց Սարդարապատի ճանապարհը բռնած թուրքերը, որոնք իրենց նույն քաղաքական ու զինական առաջնորդների հրամաններով, հորդորներով և հարկադրանքով 1915-ին մտել էին Արևմտյան Հայաստանի նահանգներն ու գավառները, անխնա կոտորում էին անպաշտպան հայ բնակչությանը, կողոպտում էին նրանց ունեցվածքը և հիմնահատակ ավերում բնակավայրերը։

* *
*

1918 թվականի մայիսի 22-ի առավոտը բացվեց Արարատյան երկրի բոլոր վանքերի ու եկեղեցիների զանգերի զողանջներով։ Դեռ մութը կռիվ էր տալիս լույսի հետ, որ էջմիածնի Մայր տաճարի կաթողիկեն կանչեց արծաթաձայն։ Նրան անմիջապես արձագանքեցին Գայանեի ու Հռիփսիմեի վանքերի համերաշխ զանգերը, որոնց տագնապոտ ձայներից չորս կողմերի վրա զարթնեց Արարատյան դաշտը։ Եվ ծավալվեց համաստիչուռ ու անվերջանալի մի ահազանգ, որ մտնում էր շեներն ու ավան-

ները, զարկվում էր հայոց սարերին ու լեռնապարներին։ Զարկվում ու ետ էր գալիս, և այնպես էր թվում, թե լեռները ևս զանգեր են դարձել, ու Արարատն էլ մայր զանգն է՝ դրված Հայոց երկրի կրծքին։

Արևելքում, Գեղամա լեռների վրա մութը ճաք էր տվել, և այդ ճաքից ելնում էր մի կրակ, որ ասես դանդաղ պիտի լափեր լեռների վրա քուլա-քուլա նստած ամպերը։ Կրակը ձևավորվեց։ Հիմա էլ արեգակի ծիրանավառ կիսաշրջանը նման էր աչքի վառվող լույսի, որ ամպեղեն բիբի հետ միասին չված էր Արարատյան երկրի վրա։

Ռազմաճակատի հրամանատար Դանիելբեկ Փիրումյանը, վաղուց ոտքի վրա, երկու ձեռքով տրորեց ուսերն ու ծոծրակը։ Թվում էր այնտեղ թունավոր մի սարդ ճիրանները տարածել է դեպի գանգը և սեղմում է անխնա։ Տրորեց ու նայեց երկրի կարմրած աչքին։

— Ի՞նչ ես բերում այս երկրին, ա՛յ սուրբ առավոտ։ Շառագունած աչքդ ի՞նչ է ասում։ Կկարողանա՞նք ետ մղել պղտոր սելավը,— այսպես բարձրաձայն խոսելով շրջվեց և թիկունքում տեսավ տոհմակից գնդապետին։— Պո՞ղ։ Այդ երբվանի՞ց ես այստեղ։

— Մրսած հարսի պատմությունը գիտե՞ս։

— Ի՞նչ հարս։

— Աղբյուրի վրա կոացած է լինում։ Մի ձայն է հանում ու ինքն իրեն թոնթորում։ «Քոռանա՜մ,— ասում է,— երկուշաբթի օրը թոնրատանն եմ քամի առել»։ Մի ձայն էլ հանում է երեքշաբթի՝ ոչխար կթելիս առած քամուց... մինչև հասնում է ուրբաթ օրը և ինքն իրենից խրտնած ետ է նայում, տեսնում՝ Սիմոն քեռին ետևը կանգնած։ «Վա՜յ, Սիմոն քեռի, էդ երբվանի՞ց ես էստեղ»։ Թե՝ «Քե մատաղ, հենց հաշվիր՝ երկուշաբթի օրվանից էստեղ եմ»։

— Ո՞նց էլ կատակ անելդ գալիս է,— տրտնջալու պես նրան ասաց Դանիելբեկը։

— Օրը պիտի կատակով բացես,— անհոգ հարեց գնդի հրամանատարը։— Մանավանդ որ այս օրը մերն է։ Հայի՛ օր է բացվում, Դանիելբեկ։ Եվ մենք պիտի ծիծաղենք թուրքի վրա։ Թե չէ, մեռած օրս կլինի...

— Անմիտ կատակներ մի՛ անի, Պո՛ղ։

— Ես ասացի, դու կտեսնես։

— Ի՞նձ ես սիրտ տալիս։

— Երբեք ինձ չի խաբում կանխազգացումը,— հանգիստ խոսեց Պողոսբեկը։— Իսկ այս օրվա հաղթանակը ոնց որ գրպանումս լինի։ Գումարտակների հրամանատարները գիշերը կանգնել էին, թե՝ «Թույլ տուր, հարձակվենք։ Զուր ժամանակ ենք վատնում,— ասում են,— միևնույն է, զինվորի աչքին քուն չի գալիս...»։

Դանիելբեկն անհանգստացավ։

— Ջանե՛ս նման բան,— ասաց։— Ո՛չ մի քայլ առաջ, մինչև նրանց առաջապահների վրա հրետանային կրակ չթափենք։ Հասկանո՛ւմ ես. նրանք առավոտյան սեպի պես դուրս են գալու Սարդարապատից։ Մենք միաժամանակյա կրակով կոմբակոծենք թևերից։ Դուք պիտի շարժվեք այն ժամանակ, երբ տեսնեք, որ սեպի կենտրոնն է կրակի տակ։

— Հասկանալի է, սիրելիս։ Ամեն ինչ կլինի՝ ինչպես պայմանավորվել ենք։ Ես զինվորի տրամադրության մասին եմ խոսում,— հանգստացրեց Պողոսբեկը։— Գիշերն ինձ մոտ վերադարձավ սրբազանը։ Ասում է. «Սիրտս չի դիմանում»։ Գնացել, Մայր տաճարը բացել է տվել, աղոթք է կարդացել ու անմիջապես բռնել վերադարձի ճամփան։ «Ձեր քունը կտանի՞,— ասում է։— Եկել եմ, որ միասին կարճացնենք այս երկար գիշերը»։

— Սնդի՞կ է գրված այդ մարդու ներսը,— զարմացավ Դանիելբեկը։— Ամբողջ օրը շարժման մեջ է, կրակված խոսում է, գիշերն էլ մի ժամ չի հանգստանում։

— Հովսեփը սիրահարված է նրան։ Ասում է. «Եթե նրա ճառերից հետո մեր զորքը պարտվի, կենդանի մնացածներին պիտի կախաղան բարձրացնել»։

— Միքայելն էն գլխից է զմայլված նրա գիտությամբ։ Հիմա էլ ասում է. «Միայն նրա պես վիթխարի գիտնականը կարող էր լինել այսպիսի քարոզիչ»։ Եվ որոշել է պատերազմից հետո մնալ մոտը։ Ասում եմ. «Թող բարով-խերով այդ հետոյին հասնենք»։

Այդ պահին երևաց համհարզը և զինվորական ողջույն տալով՝ զեկուցեց, որ ներկայանում է ըստ հրամանի։ Ճակատի հրամանատարը նայեց ժամացույցին.

— Կեցցե՛ս,— ասաց,— պայմանաժամից էլ շուտ ես եկել։— Եվ դառնալով գնդապետին՝ ձեռքը պինդ սեղմեց.— Ես գնում

եմ դեպի հրետանային մարտկոցները։ Ինչպես պայմանավորվել ենք։

Ճանապարհին Դանիելբեկ Փիրումյանը նախ հանդիպեց հրետանային մարտկոցի պետ Խորեն Իգիթխանյանին, տեսավ ու հավանեց դասավորությունը, հրետանավորների տրամադրությունն ու պատրաստականությունն ստուգեց թռուցիկ հարցուփորձով և, այսքանից հետո միայն խոսելով մարտկոցի հրամանատարի հետ, զգաց, որ իր առաջ կանգնած է խելոք ու բարեխիղճ մի զորական, որի հետ դժվար չպիտի լինի խնդիրներ լուծել։

Իգիթխանյանը՝ երիտասարդ, զրագետ ու հայրենասեր մի սպա, համակ սպասում էր ու անհանգստություն։ Համոզված էր, որ իր մարտկոցի «նախապատրաստությունից» մեծապես կախված է լինելու մարտի հաջողությունը։ Ի՞նքը պիտի թշնամուն հասցներ առաջին անսպասելի հարվածը, առաջացներ տագնապ ու խուճապ, որից հետո արդեն իրենց խոսքն էին ասելու գնդացրորդներն ու հետևակայինները։ Սպասումից, ամենասպատասխանատու դերի գիտակցությունից լարված էր այն աստիճան, որ զգում էր ներքին մի դող։ Այդ ծայրահեղ լարվածությունից նա չկարողացավ ազատվել նույնիսկ ռազմաճակատի հրամանատարի հայրական-խրախուսիչ խոսքից հետո։ Փիրումյանն անմիջապես նկատել էր նրա վիճակը և փորձեց հանգստացնել.

— Տղա՛ս,— ասաց,— ապրե՛ս, լավ ես պատրաստվել։ Բայց շատ մի՛ հուզվիր։ Ես քո կողքին եմ լինելու,— և ուսը գրկեց մտերմորեն։

Հետո ճակատի հրամանատարը մի կարճ ժամանակով բաժանվելու էր նրանից։ Ճերմակը քամու պես սուրում էր դեպի Արաքսի շամբուտները, ուր տեղակայված էր հայկական զորքի մի փոքրիկ մասը և խնդիր ուներ հսկելու գետի անցումները, որպեսզի թուրքերն այդ կողմերով չխուժեն Արարատյան նահանգ։

Արաքսը վարարել, հորդում էր մայիսյան պղտոր ջրերից։ Գետի իսկական հունից բավական հեռու գոյացել էին հոսող ճահճուտներ, որոնցով անցնելու փորձ կարող էին կատարել միայն խելագարները։ Իսկ թուրքերն իրենց խելոք էին համարում։ Ուրեմն շնորհակալությո՛ւն հայոց մայր Արաքսին, որ բնական պատնեշ էր դարձել թուրքական 5-րդ և 12-րդ դիվիզիաների դեմ, որոնք առատաջուր գետից այն կողմ, Իգդիրի, Կող-

բի ու Կաղզվանի երկարությամբ տարածված, երազում էին թափվել Արարատյան դաշտը, կոտորել տեղացիներին ու արևմտահայ հարյուր-հազարավոր գաղթականներին, որոնք ապաստան էին գտել հայկական այս վերջին մի բուռ հողի վրա, բաց երկնքի տակ։

Փիրումյանն իմացավ, որ կատարված է իր հրամանը՝ արդեն քանդված են Մարգարայի ու Կարակալայի կամուրջները, և թուրքերը միայն մտքով կարող էին Արաքսն անցնել, եթե, իհարկե, գետանցների վրա հսկող հայ փոքրիկ ջոկատները կարողանան աչալուրջ հսկողությամբ կասեցնել նրանց ամեն մի փորձ։

Մարգարայի կամուրջի ավերակի մոտ նա հանդիպեց գումարտակի հրամանատար Երվանդ Մամաջանյանին, որը զեկուցեց առաջադրանքի կատարման մասին և խոստացավ ամուր պաշտպանել Արաքսի գետանցները։ Ռուսական բանակի երկու զորականներն իրար վաղուց էին ճանաչում և նոր փորձությունների կարիք չունեին իրար ստուգելու համար։ Էրզրումի ճակատում կապիտան Մամաջանյանի ղեկավարած վաշտը գնդապետ Փիրումյանի հուսալի հենարանն էր եղել, մանավանդ Դալան-գյոզ ամրոցի գրավման ժամանակ, երբ ուսից ծանր վերք ստացած վաշտապետը մարտը չթողեց, մինչև որ թշնամին ջախջախված էր վերջնականապես, և ինքն այլևս չէր կարող տեղից շարժվել։

— Կապիտան, ես քեզ նման կտրիճին ճակատից հանել եմ ու նշանակել այստեղ նրա համա՞ր միայն, որ այս թիկունքը մեր ամենանեղ տեղն է,— հին ծանոթի ու բարեկամի մտերմությամբ սեղմելով Երվանդ Մամաջանյանի ձեռքը՝ բացատրեց Դանիել-բեկ Փիրումյանը։— Ձեր գումարտակի հսկողության տակ քիչ տեղամաս է դրված, բայց այդ չի նշանակում, թե դուք լիազորություն չունեք ուրիշ հանգույցների վրա հսկելու։

— Պարոն զորավար, ես ուրախ եմ... և հպարտ նաև, որ պատիվ ունեմ կատարելու ձեր հրամանը...

Եվ պատմեց, որ առավոտյան եղել է բաշգառնեցի Մակեդոնի ու տրապիզոնցի Թուրգիկ Հովսեփի հեծյալ ջոկատներում, խելքխելքի են տվել, պայմանավորվել, թե ինչպես գիշեր-ցերեկ աչալուրջ հսկեն Արաքսի հովիտը, որ ոչ մի թուրք չհամարձակվի գետի ձախ ափ ելնել։

— Ուշադիր եղեք նաև արևելյան սահմաններում, որովհետև

նրանք Շարուրի կողմերից էլ կարող են հայտնվել,— զգուշացրեց Փիրումյանը։— Արամը խոստացել է Վեդիի կողմերում ոտքի հանել ժողովրդական աշխարհազորը։ Սակայն, ամեն պարագայի, այստեղ դո՛ւք պիտի լինեք դրության տերը, փորձված ու հմուտ զորականնե՛ր։

— Կաշխատեմ արդարացնել ձեր վստահությունը, պարոն զորավար։

Դանիելբեկ Փիրումյանը Մամաջանյանին հրաժեշտ տվեց այն հաստատ համոզումով, որ թիկունքը հուսալի ձեռքերում է գտնվում։ Իսկ նրա կարծիքով՝ թիկունքի ապահովությունը ճակատամարտի հաջողության կեսն է։ Երբեք չէր մոռանում հայկական ավանդությունն այն քաջ զորականի մասին, որը կրծքից վերք ստացած՝ գոռացել է. «Վա՜յ, թիկունքս...»։ «Տարօրինակ մարդ,— հարցրել են,— կուրծքդ է վիրավորված, դու թիկունքիդ համա՞ր ես վայ կանչում»։ Եվ զորականն ասել է. «Թե որ ես պաշտպանված թիկունք ունենայի, կրծքից վե՞րք կստանայի»։

Հիմա ճակատամարտի գնացող հայ փոքրաքանակ զորքը պաշտպանված թիկունք ուներ։ Սակայն նրա դեմ կանգնած էր և ահա այսօր նոր արշավանքի պիտի ելներ թուրքական հռչակավոր դիվիզիան՝ կոչված նաև Դարդանելյան կամ Գալիպոլլու, որի հետ շարժվում էր մի խաժամուժ՝ քրդական հեծելազորը և Սարիղամիշի ու Կարսի կողմերից հավաքված մահմեդական ավազակախմբերը։ Փոքրաքանակ հայոց զորքն ի վիճակի՞ կլինի թշնամուն հասցնելու վճռական այն հարվածը, որից հետո սովորաբար մնում է փակել հաշիվները։ Դանիելբեկ Փիրումյանն այդ հարվածը տեսնում էր շատ որոշակի, այնպես իրական, կարծես մեկ անգամ արդեն ամեն ինչ կատարվել էր և հիմա լոկ ցույց էր տրվելու եղածի կրկնությունը։ Իսկ այսօր թուրքերը վաղ առավոտվանից հարձակման չանցան, դա ևս ինքը կանխատեսում էր, դրա համար էլ հանգիստ գնաց Արաքսի ափի հսկողության կետերն ստուգելու։

Հրետանու սպա Խորեն Իգիթխանյանն արդեն վարակվել էր ռազմաճակատի հրամանատարի հանգստությամբ, սակայն դեռևս չէր կարողանում մի տեղ կանգնած մնալ։ Մարտկոցի հրանոթների ստուգումն առիթ դարձնելով՝ մեկից մյուսի մոտ էր գնում, խոսում էր զինվորների հետ, նոր հանձնարարություններ էր տալիս։ Սակայն դա էլ չէր օգնում, որովհետև այնտեղ էլ

հրետանավորներն էին հուզված և անհամբեր հարցնում էին. «Ինչի՞ ենք սպասում, երբ որ պարզ տեսնում ենք իրենց դիրքերը։ Ահա մի տեղ ծուխ է բարձրանում, և զորքը խռնված է շուրջը։ Հարվածենք՝ ահագին ավերածություն կլինի»։

Եվ Դանիելբեկ Փիրումյանն իր շուրջը հավաքեց մարտկոցի մեծ ու փոքրին, բացատրեց հարվածն ուշացնելու պատճառը.

— Տեսնո՞ւմ եք թուրքի ու մեր միջև ընկած այն բաց տարածությունը։ Մերկ դաշտ են, ոչ մի թուփ ու կանաչ, ոչ մի ձոր կամ բլուր։ Առաջինը կրակ բացողն ու առաջ շարժվողն այնտեղից պիտի անցնի։ Եվ այնտեղ էլ պիտի հակառակորդի կրակի տակ ընկնի։ Իսկ դա կլինի այն աղետը, որին մեր ժողովուրդն ասում է էշի նահատակություն։

— Բայց, միևնո՞ւյն չէ, պարոն զորավար, թե մենք այնտեղով երբ պիտի անցնենք,— երկչոտ հարցրեց հրետանավորներից մեկը, որ երևի ամենաանհամբերն էր իր ընկերներից։

Խորեն Իգիթխանյանը խեթ նայեց նրան, և հայացքն ասում էր՝ «Ա՛յ կոտրած գդալ Դրաստամատ, դու էլի մե՞ջ ընկար»։ Սակայն մարտկոցի հրամանատարի հոդում կշտամբանք չկար, նույնիսկ ուրախ էր, որովհետև մտածեց, թե զորավարը գոնե մի փոքր կբացատրեր իրենց խնդիրը։

— Իհարկե, միևնույն չէ, որդիս,— հանգիստ բացատրեց ճակատի հրամանատարը։— Մենք պետք է այդ դաշտն անցնենք թուրքերին բոլոր կողմերից հարվածելուց, խուճապահար անելուց հետո։

— Գլուխը կորցրած ետ փախչելիս նա երկար ժամանակ դեռ ետ չի նայի,— նկատեց մարտկոցի հրամանատարը, որ իսկույն հասկացել էր գաղտնիքը։

— Ա՛յ, կեցցե՛ս,— վրա բերեց Փիրումյանը։— Հիմա հասկանո՞ւմ եք՝ ինչի՞ ենք սպասում։

— Դե՛, որ ամեն ինչ էդքան պարզ լինի, կովելը կդառնա խաղ ու պար,— քթի տակ քրթմնջաց Դրաստամատը։

— Խաղ ու պա՞ր,— հեգնական ժպտաց Փիրումյանը։— Չէ, որդիս, այդ մեկը մտքիցդ հանիր։

— Դե՛, ես հեշտության տեսակետից եմ ասում, պարոն հրամանատար,— արդարանալու համար խոսեց համարյա պատանի Դրաստամատը։— Երբ որ, ա՛յ, էսպես պարզ գիտենք առաջադրանքը, էլ ի՞նչ է մնում։

— Մնում է խիզախորեն կռվել։

— Իմ էս աչքի՛ս վրա,— աջ թաթը վեր պարզած խոստացավ հրետանավորը և աշխույժ քայլեց դեպի իր հրանոթը։

* *
*

Արևը բավականին բարձրացել էր։ Շոգից տաքացած օդը երևում էր հանդարտ ծփացող, ծիրանագույն ու թափանցիկ հեղուկի պես։ Արարատյան երկրի զանգերը հնչում էին իբրև խորհրդավոր, անորոշ հեռուներից եկող կանչեր։

Թուրքերի հանգիստը կորել էր այդ զանգերի ղողանջներից, որոնք լցվել էին օդը, տարածվել ամենուր, կախվել նրանց գլխավերևներում ինչպես խայթող մեղվապարսեր, որոնցից փրկվելու համար գող արշն իրեն ջուրն է նետում կամ ժայռից գլորվում ցած։

Եվ այդ հոգեմաշ ու հալածող զողանջները լռեցնելու, թե՞ պարզապես նրանցից փրկվելու համար Շևքի փաշայի զորքերն առաջ շարժվեցին։ Առաջ շարժվեցին Սարդարապատ ավանից ու Սարդարապատ կայարանից, իսկ ճանապարհն անցնելու էր Գեչիրլուով դեպի Ղամիշլու-Եղեգնուտ և այնտեղից երկաթգծի վրայով՝ Ջանգիբասար, ուր պետք է խառնվեին ապստամբած տեղացիների հետ ու գնային Երևանի վրա։ Վեհիբ փաշայի ռազմավարական ծրագրով Կովկասյան 9-րդ դիվիզիան ու նրան ուղեկցող անկանոն զորամասերն էլ պիտի, Արագածը հյուսիսից շրջանցելով, նվաճեին Բաշ-Ապարանը, ապա կտրուկ ճանապարհով հասնեին Երևան։ Այնուհետև Արարատյան դաշտն իր բնիկներով և շուրջ երեք հարյուր հազար գաղթականներով պիտի մնար թուրքական աքցանի մեջ։ Կսեղմվեր այդ աքցանը, այնքան կսեղմվեր, որ խեղդամահ լիներ հայության վերջին այդ խոշոր զանգվածը։ Վերջապես թուրքը պե՞տք է ազատվեր կոկորդին դեմ առած ու անտանելի այդ ոսկորից։

Թուրքերի առաջապահները Եղեգնուտին հասվեհաս էին, իսկ զորքի ամբողջ բազմությունը կեղտաջրի պես տարածված բռնել էր Սարդարապատի ամբողջ տափաստանը։ Աջ ու ձախ թևերից հրանոթները կրակում էին բոլոր ուղղությունների վրա։ Գնդացիրներ էին ճարճատում։ Հետևակն օդում և դեպի դիմացի տա-

բածությունները կրակելով, աղմուկ-աղաղակով շարժվում էր։ Նրանց երթը շատ էր ուրախ։

Թուրք զինվորը դեռ այդպիսի շքերթ, այդքան աղմկալից ու խանդավառ տեղաշարժ չէր ունեցել վերջին պատերազմի ընթացքում։ Դե՛, թող խլանա՞ն հայոց զանգերի զողանջները։ Թող Արարատյան երկիրը գերեզման դառնա հայության մնացորդների համար, որպեսզի ոչ մի արգելք չմնա թուրքաց ավանդական բաղձանքների իրականացման ճամփի վրա...

Դանիելբեկ Փիրումյանի հրամանով մեկեն կրակ ժայթքեց Խորեն Իգիթխանյանի մարտկոցի թնդանոթներից։ Եվ դա ահազանգ դարձավ, որպեսզի Քյորփուլու գյուղից արևմուտք դիրք մտած կապիտան Կլիչի թնդանոթներն էլ իրենց զայրույթը թափեն երկաթգծի երկարությամբ անհոգ խռնված թուրքերի վրա։ Փիրումյանը Կլիչին հանձնարարել էր առաջին իսկ հարվածներով շարքից հանել Սարդարապատ կիսակայարանի ջրհան սարքը, որը երկաթգծի այդ հատվածն ու շրջակաները խմելու ջրով ապահովող միակ կետն էր։ Ճակատի հրամանատարը, հեռադիտակով կիսակայարանը հայացքի մեջ առած, սպասում էր դիպուկ այն հարվածին, որ միայն կապիտան Կլիչի նման նշանառուն կարող էր հասցնել։ Եվ այդ հարվածից ջրհան կայանի փայտամածը վառվեց, կայանը փշուր-փշուր տարածվեց չորս կողմերի վրա։

Հայերի թնդանոթների ավերիչ ու մահացու հարվածներից Սարդարապատի դաշտի ղոները ծածկվում էին թուրքերի դիակներով ու արյունով։ Դաշտի մոտերքում խնամքով քողարկված գնդացրորդները հնձում էին անկազմակերպ նահանջի ճանապարհը բռնած ասկյարներին։

Եվ այն ժամանակ Քյորփուլուի այգիներում, Ղուլիբեկլի ու Հայի Զեյվա գյուղերում դարանած Հինգերորդ գնդի գումարտակները դուրս հորդալով սկսեցին չընդմիջվող ու դիպուկ հարվածներով հնձել նահանջող թուրքերին։

Գնդապետ Պողոսբեկ Փիրումյանը հեռադիտակով տեսել էր, որ թուրքական շարժման ծայրն արևելքում Եղեգնուտից էլ դուրս էր եկել, իսկ ձախ թևը քսվում էր Ղուլիբեկլուի իրենց թաքստոցներին։ Եվ այժմ, երբ իրար կոխկրտելով փախչում էին թուրքական դիվիզիայի ետնապահները, սեպի ծայրը կազմող վաշտերը, գլուխները կորցրած՝ աննպատակ կրակում էին աջ ու ձախ։ Գրն-

դապետը գումարտակի հրամանատար Ստեփան Խաչատրյանին կարգադրեց կտրուկ անցումով փակել այդ վաշտերի նահանջի ճանապարհը։ Խաչատրյանի գումարտակը գնդացրային կրակի պաշտպանությամբ հասավ Սարդարապատ կայարանի մատույցներին և ապահով դիրքեր գրավելով՝ սկսեց ջարդել նահանջի փորձ կատարողներին։ Ծուղակի մեջ ընկած թուրքական վաշտերը ուրիշ ելք չունեին, քան սպիտակ դրոշ պարզելը։

Թուրք բարձրաստիճան մի սպա անմիջապես առաջացավ և, Գողոսբեկ Փիրումյանի ոտքերն ընկնելով, կյանք աղերսեց։

Գնդապետը կովկասյան թուրքերենով կագադրեց, որ նա վեր կենա, ապա հանձնելով համհարզին՝ ճանապարհեց թիկունք։

— Լա՛վ պահեցեք,— հանձնարարեց նա,— կարևոր հավք է երևում։

Սակայն սպան ու համհարզը դիրքերից հազիվ էին հեռացել, երբ սպիտակ դրոշ պարզած թուրքերը հանկարծ պպզոտեցին և սկսեցին կրակ տեղալ իրենց շրջապատած հայկական ջոկատների վրա։

Գնդապետը չարաչար զղջաց, որ հավատացել էր թուրքական դրոշի գույնին։ Այն ե՞րբ է եղել, որ թուրքը հարգել է զինադադարի իր պայմանագրությունը կամ հայի պարզած ճերմակ դրոշի ազնվությունը։ Նա կարգադրեց նռնակներով հանգցնել թուրքաց կրակը։ Իսկ ինքը թուրը մերկացրած խոյացավ օղակի մեջ գտնըվող վաշտերի վրա.

— Քաջե՛ր, իմ ետևի՛ց,— և նրա ծանր հարվածից տապալվեց թուրք մի սպա։

Գնդապետի ետևից թրամարտի ու սվինամարտի նետված հայ զինվորները գոռում-գոչյունով լցրել էին Սարդարապատի դաշտը։

Բոլոր կողմերից պաշարված թուրքերը, տեսնելով, որ իզուր է դիմադրությունը, աղերսում էին խնայել իրենց։ Լոլոզ վաշտապետը, բարձրացած մի քարի վրա, լալահառաչ բացատրում էր, որ իրենք ծառայել են եվրոպական ճակատներում և չեն մասնակցել հայկական կոտորածներին։ Աղաչում էր խիղճ ունենալ և չկոտորել անմեղ զինվորներին։

— Բա էդ որտեղի՞ց ես իմացել հայկական կոտորածների մասին, ես քու...,— գոռաց մի հայ զինվոր և հրացանի փողը բռնած՝ կոթով զարկեց նրա գլխին։— Խիղճ ունեցողների՞ս նայեք։

* *
*

Ղուլիբեկլուից արևմուտք Հինգերորդ գնդի երկրորդ գումարտակն էր կռվում։ Այնտեղ գնդացրային կրակով ետ էին մղել թուրքերի հակահարձակումը և ջանում էին պաշտպանել գրաված դիրքերը, մինչև օգնական ուժեր կհասնեին։

Այնտեղ լավ հունձ էին անում դիպուկահարները, որոնք իրենց գործին էին՝ հարձակում լիներ թե պաշտպանություն։ Այնտեղ էին երկու անբաժան ընկեր՝ Զաքարն ու Արշակը, որոնք իրենց Վարանդայում համբավավոր որսորդներ էին եղել, հիմա գնդի լավագույն դիպուկահարներն էին։ Զաքարն անպայման հրացանին հենակներ պիտի դներ, նոր բռներ իր որսը։ Իսկ Արշակին բավական էր և իր ձախ թևը։ Հրացանը դնում էր ձախ թևին, փողը վերից զգուշորեն վար իջեցնում և ձգանը սեղմում։ Այդպես նրա գնդակից փրկություն չուներ օդում թևածող թռչունը։ Իսկ դիմացի թուրքը բավականին մեծ էր ամենախոշոր թռչունից։

Արշակը հայացքը կտրեց թիկունք դարձրած թուրքերից, տեսավ՝ աջակողմյան փոքրիկ հողաթմբի վրա, թռիչքի պատրաստվող արծվի նման, սքեմի թևերը թափ է տալիս Գարեգին սրբազանը։ Նրա ձեռքի խաչը հուրհրատում էր արևի տակ։ Ինքը խանդավառված խոսում էր. աղո՞թք էր կարդում, թե՞ անեծքով դժոխք էր ուղարկում թուրք ասկյարներին։ Ճիշտ է, հայ զինվորները տեսնում էին նրան և գիտեի, որ իրենց համար է սեփական կյանքը վտանգի տակ դրել սրբազանը։ Սակայն արկերի դղրդոցի, գնդակների ճայթյունների ու սուլոցների, փախչողների վայնասունի ու հետապնդողների աղաղակի մեջ ո՞վ էր լսում նրա ձայնը։

Թուրքերի հունձը մի պահ դադարեցնելով՝ Արշակը վազեց դեպի հողաթումբը և, հրացանը ձախ ձեռքին, աջով սրբազանին առավ թևի տակ ու վազեց դեպի մոտիկ փոսը։ Սրբազանը, նրա թևատակին հորիզոնական ձգված, ոտուձեռքերն էր թափ տալիս։ Բայց ինչպե՞ս կարող էր փրկվել լեռնորդու պիրկ ձեռքից։ Փոսի մեջ դիպուկահարը նրան ցած դրեց և փորձեց արդարանալ.

— Սրբազան ջան, կյանքս քե մատաղ, բա էն թումբն ես բարձրացել, հեռի քեզանից, որ մի բան պատահեց, ո՞ւմ պիտի դնենք քո տեղը։

Իսկ սրբազանը շշմած նրան էր նայում, ոտից գլուխ չափում էր հայացքով, մտքում՝ այն առեղծվածը, թե այդ կարճ ու կլոր կոճղի մեջ որտեղի՞ց այդքան ուժ։

— Ա՛յ արջ, ո՞նց է անունդ։

— Արշակ է, Գարեգին սրբազան,— խոստովանողի մեղսապարտությամբ հայտնեց «արջը»։— Անունս անունիդ մատաղ, քեզ խնայի՛ր, սրբազան։

— Այ տղա, գիտե՞ս, որ Արշակ էլ նշանակում է արջի ձագ։ Արշակը քմծիծաղեց, հողոտ ձեռքով սղալեց կախ-կախ բեղերը.

— Հլա ո՞ւր է, հա՛, մինչև իսկական արջ դառնամ...

— Արշակ, թո՛ւրքը, թո՛ւրքը։

— Հո՞ր ա, սրբազան։

— Ձեռքիս ուղղությամբ նայիր...

Բավական հեռու, մասրենու թփի տակից ելած ասկյարը բաց տարածությամբ իրեն աջ ու ձախ գցելով փախչում էր՝ մեջքից կռացած։ Արշակը ձախ բազուկը ծալեց, հրացանի փողը դրեց վրան և վերից մի փոքր վար իջեցնելով կրակեց.

— Քո պատվին՝ է՛դ մեկ, սրբազան,— ինքնագոհ ժպիտով նրան նայեց Արշակը։

— Ադա՛, մեկ է՛լ կրակիր, ոնց որ չի կպել,— հորդորեց սրբազանը։

— Էդպես չի լինում, սրբազան։

Եվ, իսկապես, ասկյարը գլուխը բարձրացրեց, ոտքերը խանգարված ու լայն-լայն առաջ գցեց, ապա ետ ընկավ թիկունքի վրա։

Սրբազանը թփթփացրեց Արշակի մեջքը։

— Դե՛, հիմի դու էնտեղ նայիր, սրբազան,— հրացանը նորից հարմարեցրեց դիպուկահարը։— Տե՛ս, հա՛, գալիս է իր ընկած յոլգաշին կողոպտելու,— արդեն ինքն իրեն խոսեց Արշակը։— Վա՛յ, ես քո հավատը...

Սրբազանն ուզում էր զգուշացնել, որ էլ հավատ չհայհոյի, նա կրակեց։ Թուրքը նստեց իսկույն, մեկ էլ ձեռքերին հենվելով ծանրորեն վեր կացավ։

— Ադա՛, ոնց որ...

Երեսի վրա ընկավ ընկերոջ գլխին։

— Սրբազան ջան, էդ է՛լ քո պատվին,— ուրախացավ Արշակը։— Հիմի դու էստեղ կաց, ես առաջ պիտի գնամ։

Այդ պահին թուրքի արձակած արկը եկավ, ընկավ աջակողմյան այն թմբի վրա, որը քիչ առաջ սրբազանը դարձրել էր աղոթարան։ Հողի ու փոշու սյուն կանգնեց և, երբ սյունն իջավ, թմբի տեղը մնաց հարթ մի կալատեղ։

Արշակը վախով ու խնդությամբ դարձավ դեպի սրբազանը.

— Էն ո՞ր սովյալին ես մի կտոր հաց տվել, քե մատաղ։

Եռանդով ծիծաղեց սրբազանը.

— Տված կլինեմ, օրհնվեն քո անցյալները։ Էդ ո՞ր տեղից հասար։

— Աստծու մատը խառն է, սրբազան։ Թե չէ, ես պիտի վազելով ընկերներիս ետևից կնացած լինեի։ Դե, հիմի դու էստեղ մի քիչ շունչ քաշի, ես գնամ։ Ափսոս են էն թուրքերը, որ իմ գնդակներին են սպասում։

— Իսկ ի՞նչ կլինի, որ միասին գնանք։

— Է՛, չեղա՛վ, սրբազան,— լուրջ անհանգստացավ Արշակը։— Տե՛ս, կտամ, ինձ կսպանեմ... Ես հեչ, հա՛, էն թորքերն են ափսոս։

Մոտիկ ինչ-որ տեղ ահեղ դղրդյուն լսվեց։ Ձիեր վրնջացին։ Սրբազանը ծնկի իջած, ակնաղարդ լանջախաչը վերուվար անելով աղոթք էր կարդում։ Արշակն շտապով մոտեցավ, սրբազանի ձեռքը խլեց, տարավ շուրթերին, ապա թողեց ու վազելով գնաց դեպի երկաթգիծը։

Կեսօրից հետո Պողոսբեկ Փիրումյանի գումարտակները մտան Սարդարապատ ավանն ու Սարդարապատ կայարանը։ Կայարանի նվաճումը կատարվեց այնպես արագ, որ թուրքերը չփորձեցին էլ վիրավորներին տանել իրենց հետ, և գերի ընկան երկու հարյուրից ավելի վիրավոր ասկյարներ, որոնք հաղթողներին նայում էին վիզները ծռած, իրենց օրհասին սպասող դատապարտյալների պես։ Բարձրաստիճան մի սպա, որի երկու ոտքերը ջարդված էին արկի բեկորներից, մոտեցող հայ զինվորներին տեսնելով, ատրճանակի փողը սեղմեց քունքին ու կրակեց։ Պողոսբեկ Փիրումյանը մոտեցավ նրա կողքին անհույս պառկած ասկյարին, թուրքերեն հարցրեց.

— Ինչո՞ւ կրակեց։

— Մեկ չի՞, դո՛ւք պիտի կրակեք,— լալով պատասխանեց թուրքը։

— Մենք գերու վրա չենք կրակում,— պատասխանեց գնդապետը և զինվորներին կարգադրեց՝ հսկեն գերիներին, մինչև կգան-կհասնեն սանիտարական զորամասից։

Սարդարապատ գյուղում թուրքերը փորձեցին դիմադրել։ Դիրքեր էին մտել գյուղի արևմտյան թաղամասում և կրակում էին փողոցներում շարժվող հայ զինվորների վրա։ Հենց կենտրոնական փողոցում, եկեղեցու պատի տակ սպանեցին երկու զինվորի ու մի սարդարապատցի ծերունու, որը զինվորներին պատմում էր, թե ինչպես առավոտյան թուրքերն սկսեցին քանդել եկեղեցու պատերը, երբ լսեցին զանգերի ղողանջները։

Գնդապետ Փիրումյանը կարգադրեց շտապ անցումով թիկունքից հարվածել թուրքերին, և երկու վաշտեր անմիջապես գործի անցան։

Վարանդացի Արշակը նկատել էր գյուղի ծայրի տան հրակնատը, որտեղից մեկը ժամանակ առ ժամանակ հրացանային կրակ էր տեղում։ Նա իր հրացանի փողը բազկին դրած նշան էր բռնում հրակնատի վրա, բոլորովին մոտիկ երևաց Գարեգին սրբազանը, ետևից՝ զինվորների մի ջոկատ։ Աղմուկ էր շուրջը, ծուխ ու փոշի։ Արշակը չհասկացավ՝ ի՞նչ է աղաղակում սրբազանը։ Կրակեց հրակնատի վրա, համոզվեց, որ գնդակն իր գործը տեսել է, նոր միայն վազեց հոգևորականի մոտ։

— Ինչ՞ է պատահել, սրբազան,— անհանգստացավ դիպուկահարը։— Ինչի՞ ես կանգնել գնդակի բերանին։

— Ծուխը տեսնո՞ւմ ես,— լանջախաչը սրի պես պարզեց դեպի գյուղի հարավ-արևմտյան ծայրը։ Այնտեղ իսկապես թանձր ծուխ էր բարձրանում, և ծխի միջից մերթ ընդ մեղթ ցոլանում էին բոցեղեն լեզուները։— Թուրքերը երեխաներին լցրել են այն տունը, կրակ են տվել։ Հասե՛ք, փրկեցե՛ք...

— Զինվորնե՛ր, իմ ետևի՛ց,— գոռաց Արշակը և ջոկի գլուխն անցած, նեղլիկ մի փողոցով վազեց դեպի աղետի վայրը։

Վազում էր նաև սրբազանը։ Փոշոտվել, գոլյնը գցել էր նրա ոքեմը, որի ձախ փեշը պատռված էր, և վազելիս մեկ-մեկ ծունկը դուրս էր գալիս պատռվածքով։ Գյուղը դեռ ցնցվում էր կրակոցներից։ Փողոցում իշամեղվի տզզոցով գնդակները թռչում էին աջ ու ձախ, խփում էին պատերին ու պարիսպներին։ Եվ

զարմանալի էր, թե ինչպես է, որ նրանցից ոչ մեկը... Այս մըտքի վրա էր սրբազանը, որ առջևից գնացող զինվորը գլուխը բըռնեց ու նստեց։ Չկարողացավ էլ «վայ» կանչել։ Մինչև ընկերները հասան, փորձեցին բարձրացնել, շունչը փչեց։ Օգնության եկած զինվորները հայացքով սանրեցին շրջապատի կտուրները և տեսան՝ մեկը շարշարվում է, որպեսզի անցնի վերջին ցանկապատը։ Երկուսի գնդակներն էլ բռնեցին նրան. մեջքին երկու տեղից թեթև ծուխ բարձրացավ։ Կարծես հոգին էր, ասես, ընկավ։

Գյուղի տարբեր կողմերից դեպի վառվող տունն էին վազում կանայք՝ պառավ, ջահել։ Վազում էին՝ մազ փետելով, կուրծք պատռելով, ճվոց-ծվվոցով... Ասում են՝ մինչև վերջին ժամը զինված ասկյարները պաշտպանելիս են եղել տան մատույցները, որ տեղացիներից ոչ ոք չմոտենա։ Իսկ իրենք՝ ասկյարներն ու սպաները, խումբ-խումբ գնացել են և կենտուկաթուկ, շալվար կապելով հեռացել։

Գյուղի տանուտեր Աղապարոնը, որ այդ չարաշուք տան տերն էր նաև, ասում են, երեկ գնացել է բողոքելու։ Ասկյարները բըռնել, տարել են դեպի Ղուրդուղուլու կողմերը, և խեղճ մարդն էլ չի վերադարձել։

Հիմա տան շուրջն ականապատված է։ Տարեց կանանցից մեկը փորձեց մոտենալ, ականը պայթեց, մարմինը շաղ տվեց վառվող տան պատի տակ։ Մնացած կանայք աղիողորմ հեկեկում էին ու երեսները ճանկռոտում։

— Քարանա՞ն ձեր մայրերը,— կանչում էր մի պառավ, որ ցամաքած աչքերը հառել էր երկնքին։— Աստվա՛ծ, քարե կարկուտ թափիր։ Աստվա՛ծ, էլ ինչի՞ ենք ապրում էս զուլումից հետո։

Տան հրդեհը հանգցնել չհաջողվեց։ Զինվորներն արագորեն ականազերծ արին։ Ապա դռները ջարդելով փրկեցին քառասուն երեխաների, որոնց թուրքերը փակել էին ներսի սենյակներում։

Մի ծեր գյուղացի, մազը երեսին չորացած, փորձեց պատմել եղելությունը։ Կակազի պես շարշրկեց բառերը, վերջն էլ ողբալով բացատրեց սրբազանին.

— Լեզվով ասելո՞ւ չէ, հա՛յր սուրբ, լեզուս պատ չի գալիս, որ ասեմ։

Երեխաներից շատերը հազիվ էին ոտքի վրա կանգնում։ Մնացածներին դուրս բերին ձեռքերի վրա։ Պատառոտված էին հագուստները։ Կիսամերկ մարմիններն արյունոտ էին, կապտոտած. ենթարկվել էին տևական ու դիվային խոշտանգումների։ Եվ լուռ էին նրանք, անարտասուք, անտրտունջ՝ իբրև նոր օրերի նահատակներ։

Տան ընդարձակ բակում ասեղ գցելու տեղ չկար արդեն։ Երեխաների շուրջը խռնվել էին կանայք և վիրավոր դաղանների մոլոտոցով գուրգուրում էին անմեղ զոհերին։ Վիրավորված, բրզկըտված էր մայրական զգացումը, և նրանք իրենց կարեկցանքի ու խղճահարության խոսքերը մայրերին էին ուղղում, այդ երեխաների հեռավոր ու անծանոթ մայրերին. «Քարանա՜ն ձեր մայրերը, ա՜յ աստծո գառներ», «Թող ձեր մայրերի անեծքը մա՜հ դառնա թուրքի համար, ձեր մայրերի ու աշխարհի բոլոր մայրերի անեծքը...»։

Գյուղացիները զինվորների հետ բակն էին լցվել, նաև թառել էին հարևան կտուրներին, պարիսպներին, ծառերի վրա։

Բակի կենտրոնում Պողոսբեկ Փիրումյանն էր շվար կանգնած և վառվում էր զայրույթի, ցավի ու վրեժի զգացումներից։ Քըրտինքը ճակատից հոսում էր դեպի աչքերը, այտմորուսները։ Փոշին ու արյունը գորշ բծերով էին նախշել հագուստները։ Նա ծանր, տանջված հայացքով նայեց Գարեգին սրբազանին, և տառապանքից կուչ եկած հոգևորականը մոտեցավ, նրա ականջի տակ ինչ-որ բան ասաց։

Հետո սրբազանը շրջվեց դեպի զինվորները և խոսեց.

— Զավակնե՜ր, հա՜յ զինվորներ, դուք, որ վկան եք այս համազգային ցավի ու նվաստացման, լա՜վ իմացեք, թե ինչի՜ համար եք կռվում, ո՜ւմ դեմ և ինչի՜ց պիտի փրկեք մեր հողն ու ժողովուրդը։ Թող վրեժք բազմապատկի ձեր ուժը։ Թող աստվածն ամենատես ու ամենակարող զորավիգ լինի ձեզ և դժոխքի կրակը թափի նվաճող թուրքի գլխին...

Երեխաների կողքերին լուռ լալիս էին անծանոթ մայրերը։ Ժողովուրդը տնքում էր, ախ ու վիշով էր արձագանքում սրբազանի խոսքերին։ Իսկ Պողոսբեկ Փիրումյանը, որ աչք-ունքով զինվորներին արդեն կարգադրել էր մարտական շարք կազմել, «զգա՜ստ» հրաման արձակելով՝ խրոխտ անցավ շարքերի առաջ և, դիմելով սարդարապատցիներին, ասաց.

— Թանկագին ժողովուրդ, հայ մայրեր, քույրեր, մենք զինվորներ ենք և խոսքով չէ, որ պիտի սփոփենք ձեր վիշտը։ Մենք երդվում ենք ձեր ցավով, որ վրեժ կլուծենք, վրե՛ժ՝ այս բոլոր ցավերի ու վիրավորանքների համար։ Երդվո՛ւմ ենք։

— Երդվո՛ւմ ենք,— որոտացին զինվորական շարքերը։

Եվ ժողովուրդը նոր սկսեց բարձրաձայն, անզուսպ հեկեկալ։

* *
*

Իրիկնադեմին Սարդարապատ գյուղից ու Սարդարապատ կայարանից արևմուտք Պողոսբեկ Փիրումյանի Մահապարտների գնդի հետ հանդիպեցին գնդապետ Պերեկրյոստովի պարտիզանական զորամասն ու փոխգնդապետ Կորոլկովի հեծյալ էսկադրոնը։ Նրանք մի քանի ժամ առաջ էին լսել թուրքերի սարդարապատյան շարագործության մասին և ցավում էին, որ վաղ առավոտյան չեն իմացել։

— Մենք պիտի շրջապատեինք նրանց,— ցասումնալից խոսեց Պերեկրյոստովը։— Այն տան մոտ էլ նրանք պիտի կոտորվեին շուրջկալված կեղտոտ շների պես։

Շիկնած դեմքի վրա նրա պեպենները երևում էին որպես փշեր։

Սարդարապատում արդեն ղողանջում էր եկեղեցու զանգը, և այնպես էր թվում, թե նա ոչ միայն Արարատյան երկրի զանգերի ղողանջներն է փոխանցում կռվող հայ զինվորներին, այլև իր հատուկ սարդարապատյան պատվիրանն է տալիս, սարդարապատյան տառապանքի վրեժն է պահանջում։

Այնօր հայոց զորքերը կարող էին երկաթգծի ուղղությամբ առաջանալ առնվազն մինչև Արաքս ու Ղարաբուրուն կայարանները։ Օրվա վերջում կռվողներին օգնության հասած հրետանային մարտկոցների ու գնդացրորդների, հեծյալ ջոկատների ու պարտիզանական խմբերի աջակցությամբ Մահապարտների գունդը բավականին խոր կմխրճվեր թուրքական նահանջող զորաշարքերի մեջ։ Նրանք առաջ էին շարժվում և սարդարապատյան աղետի վրեժով կրակված՝ մոռացել էին նախընթաց պատերազմի երկար ճանապարհը, որ կազմված էր միայն նահանջի ու պարտության ցավալի դրվագներով, հիշում էին ու գիտեին մի բան՝

որ իրենք պարտավոր են հաղթել, պարտավոր են վրեժ լուծել իրենց հարազատներին, երկրին ու ազգին հասցված լկանքների և տառապանքների համար։

Սակայն Դանիելբեկ Փիրումյանը փորձված զորապետ էր և գիտեր, որ զինվորության ամենախանդավառ տրամադրությունն ու հաղթելու կամքը ոչինչ չեն կարող անել այնտեղ, ուր մեծ խզում կա թիկունքի ու ճակատի միջև։ Թուրքերն ուշքի կարող են գալ և գերակշիռ ուժերով կհարձակվեն ելման կետերից բավական հեռացած հայկական զորամասի վրա։ Այն ժամանակ ջուրը կթափվի ձեռք բերած առաջին հաջողության արդյունքը։ Մինչդեռ գրված դիրքերում ամրանալով՝ հնարավոր կլինի բոլոր ուժերի նոր դասավորություն կատարել և երկու-երեք օրվա ընթացքում նախապատրաստել հաջորդ ու ամենավճռական հարձակումը։

Երեկոյան դեմ զորավարը հասավ շտաբ և Երևան, Ազգային խորհրդի նախագահին կարճ հեռագրեց, որ Սարդարապատյան ճակատում թշնամու առաջխաղացումը կասեցված է։

Շտաբ կոչվածը երկաթգծի կողքին ընկած փայտե մի տնակ էր՝ փայտաջիլների մակաղատեղիների զարմանահրաշ նախշերով, գաղջ օդով, ավելի ճիշտ՝ շնչելու օդի բացակայությամբ։ Միայն այստեղ էր, որ զորավարն զգաց իր հոգնածությունը։ Այնպիսի հոգնածություն, որի նմանը կյանքում երբեք չէր զգացել։ Նախորդ ամբողջ գիշերն ու այդ ցերեկը նա ոտքի վրա էր եղել կամ ձիու վրա։ Սա առաջին անգամ չէր։ Հիշում էր, որ օրերով, շաբաթներով քուն ու դադար չի ունեցել, ձյան ու անձրևի տակ, ցեխերում ու ձյուներում կռվել է, և մարմինն այնպես չարդված չի եղել, այնպես անընդունակ շարժվելու, գործնական մի քայլ կատարելու։ Մտածեց, որ ծերությունն է վրա հասել։ Ինչ էլ որ լինի, վաթսունին հասվեհաս է, և սա այն տարիքը չէ, որ իր պահանջները չներկայացնի։ Բայց մի՞թե այս տարիքն իր պահանջները պիտի ներկայացներ այսպես միանգամից, ամենապատասխանատու պահին, կյանքում ամենակարևոր քայլը կատարելու ժամանակ։ Չէ՛, երևի ապրումներն էին ուրիշ, վերջին օրերի հուզումնակոծ, անհնարինը հանձն առած մարդու ապրումները, որոնց տակ նա կարող էր առհասարակ չդիմանալ։ Բայց դիմացավ։ Ո՛չ միայն դիմացավ։ Ազգային խորհրդին էլ զեկուցեց, որ թշնամու առաջխաղացումը կասեցված է։ Եվ հիմա կարելի է գո-

նե մեկ ժամ փովել մի տեղ, փովել ու չմտածել, չմտածել, այսինքն՝ անջատվել այս ճակատից, աշխարհից, ամեն ինչից...

Ուզում էր համհարզին զգուշացնել... Եվ հանկարծ փայտոջիլների բուծարանից դուրս պրծած երիտասարդ կապավորը շուտասելուկով զեկուցեց.

— Պարո՞ն հրամանատար, պարո՞ն հրամանատար, ներողություն եմ խնդրում անհանգստացնելու համար։ Ազգային խորհրդից պատասխան հեռագիր է ստացվել. խնդրում են ճակատի վիճակի մասին մանրամասն գրել։

— Դե՛, դու պատասխանիր, էլի՛։

Եվ երիտասարդը կարմրատակեց միանդամից իր վրա դրված այդ աներևակայելի պարտականությունից։ Նրան կապիտան Շնեուրն էր իր հետ բերել շտաբ՝ ներկայացնելով իբրև պատրաստի կապավորի։ «Ճեմարանի բարձր դասարանի աշակերտ է, տեխնիկայի նկատմամբ մեծ սեր ու հմտություն ունի և իմ օգնությամբ շուտով լրիվ կտիրապետի գործին»։ Հիմա Շնեուրի բացակայությամբ նա ստիպված է միայնակ գործել այն տեխնիկայի վրա, որին հետո պետք է տիրապետի։

Հեռագիրն Արամ Մանուկյանից էր։ «Ուրախ եմ, հպարտ եմ և շնորհակալ։ Խնդրում եմ հեռագրել մանրամասները»,— գրել էր Ազգային խորհրդի նախագահը։ Ապա գալիս էր երկրորդ մասը. «Այդպես էլ գիտեի։ Շնորհավորում եմ։ Շնեուր»։

Երևի կապիտան Շնեուրը Մանուկյանի մոտ է եղել, երբ հեռագիրն ստացել են։

— Բայց ի՞նչ մանրամասներ են պետք։ Հո ճակատամարտը չպիտի՞ նկարագրենք... Դե՛, գրի՛ր, երիտասարդ,— կանգնած տեղը, հենց դռան արանքից թելադրեց ճակատի հրամանատարը։— Ասում էիր՝ անունդ ի՞նչ է։

— Անունս Դանիել է, պարոն հրամանատար,— ամոթխած, կարծես ինքն էր դրել իր անունը, պատասխանեց կապավորը, որ կանգնել էր, մնացել ու չգիտեր՝ իրեն ինչպե՛ս պիտի պահի ճակատի հրամանատարի ներկայությամբ։

— Դանիե՞լ,— հոգնած ժպտաց հրամանատարը։— Ա՛յ տղա, գիտե՞ս, որ դա շատ ծանր անուն է, ինչքա՞ն պատասխանատու... Ա՛յ, ես, որ չգիտեմ, թե ով է վրաս կապել, տանջվում-չարչարվում եմ, չեմ կարողանում արդարացնել։

— Հենց միայն այսպիսի մի զեկույցը բավական է, պարոն հրամանատար, որպեսզի...

Հրամանատարի մարդամոտ վերաբերմունքից ստացած հաճմարձակությունն այդքան բավականացավ, երիտասարդը շիկնածշշկլած՝ տեղ չէր գտնում իրեն թաքցնելու։

— Դե՛, նստիր, նստիր, երկու Դանիելս մի կարգին հեռագիր տանք։ Գրի՛ր. «Թշնամին դուրս է շպրտված և նահանջում է։ Մեր զորքերը գրավել են Սարդարապատ գյուղն ու կայարանը»։— Գրեցի՞ր։ Կեցցե՛ս։ Դե՛, մի քիչ էլ դժվարություններ ցույց տանք, թե չէ, կկարդան, կկարծեն՝ այդքանը հենց խաղ ու պարով ենք արել։ Հը՞։ Ճիշտ չե՞մ ասում։ Գրի՛ր. «Ռմբակոծության հետևանքով ավերվել է Սարդարապատ կայարանի ջրհան աշտարակը, որը երկաթգծին ջուր մատակարարող միակ հանգույցն է։ Հաղթական զորքը ծարավ է...»։ Կհասկանան, չէ՞, որ հաղթական զորքը նաև կուշտ չէ... Դե՛, այսքան բան։ Կարծեմ՝ բավական է։ Ստորագրությունն էլ դիր՝ Սարդարապատի ռազմաճակատի հրամանատար Դանիելբեկ Փիրումյան։ Դիր նաև քո սեփական ստորագրությունը. հեռագիրը հղեց Դանիել... ազգանո՞ւնդ ոնց է։

— Մարտիրոսյան։

— Ա՛, մարտիրոսների ցեղի՞ց ես։

— Նաև Մարտիրոս գյուղից։

— Ի՞նչ ես խոսում։ Այդպիսի գյուղ է՞լ կա։

— Կա՛, Վայոց ձորում է գտնվում։ Այնտեղ է ծնվել Իսրայել Օրին։

— Ա՛, մեծ մարդ է եղել Իսրայել Օրին։ Պատմաբանները նրա գործն ուսումնասիրում են... Նրա մասին դեռ շատ կգրվի։ Ուրեմն՝ Դանիել Մարտիրոսյան, Մարտիրոս գյուղից։ Ա՛յ տղա, այդքան էլ մարտիրոսությո՞ւն կլինի։

— Մեր գյուղի գերեզմանատունը լիքն է նահատակների տապանաքարերով։

— Ինձ էլ անվերջ այն միտքն է տանջում, թե մենք ինչպես ենք ապրել՝ անդադար նահատակվելով,— կարծես ինքն իրեն խոսեց հրամանատարը և հոգնած ոտքերն առաջ գցելով՝ դուրս եկավ։ Տնակի ցածր դռնից ելնելիս գլուխն իջեցրել էր, բարձրացրեց և հայացքն առավ Արարատին, որ օծված էր իրիկնադեմի ոսկեղեն մուժով։ Գագաթի ձյունները խայտում էին ու

կայծկլտում, և դաշտի բոլոր կողմերից եկող զվարթաձայն զանգաղողանջներին ունկնդիր սարը գլուխը թեքել էր դեպի արևելք, մտորում էր այդ օրվա, հայոց օրվա փոքրիկ թե մեծ երջանկության վրա։

— Ների՛ր, Արարատ, մեր հայր ու ապավեն,— համարյա լսելի խոսեց Դանիելբեկ Փիրումյանը։ —Ների՛ր, որ առաջինը քեզ չզեկուցեցի։ Բայց չէ՞ որ դու տեսնում էիր, քո աչքի առաջ էինք մարտնչում, քո անունով ու պարգևած զորությամբ։— Եվ գլխարկը վար առնելով՝ ծունկի եկավ, հայացքն Արարատին, աչքերի մեջ երջանկության պարգևած երանելի խոնավություն։

* * *

Հինգերորդ գնդի շտաբում Պողոսբեկ Փիրումյանը նորընծա տեղակալի հետ հետագա գործողություններն էր քննում, որ ներս մտան Արշավիր Մելիքյանն ու իր մի զինվորը, և Մելիքյանը գնդապետին մեկնեց մի լայնշի ծրար, մեջը՝ լուսանկարներ։

— Երբ այն թուրք սպային թիկունք տանելիս են եղել,— անշտապ բացատրեց Մելիքյանը,— շպրտել է մի թփի տակ։ Այս երիտասարդն է տեսել ու վերցրել։

Երիտասարդը շիկնելով հայացքը վայր թողեց. ասես մեղք է գործել՝ թուրքի նետած ծրարին տեր կանգնելով։

Նկարներից մեկում հայոց վանքի ընդարձակ աղոթասրահ էր, ուր անկանոն իրար վրա էին թափված սևասքեմ վանականների մարմինները։ Այս ու այնտեղ սուրբ սպասքի ամաններ էին երևում, քրքրված գրքերի կիտակներ։ Եվ այս ամենի կողքին, հպարտ գլուխը վեր տնկած, աջ ոտքը գրքերի կիտակին՝ օրվա առաջին գերին էր, բարձրաստիճան սպան։ Գնդապետը լավ էր հիշում նրա կերպարանքը։ Մի երկար պահ հայացքը հառել էր նկարին. այո՛, նա էր, որ ճակատում իր ոտքերն էր ընկել և կյանք էր աղերսում։ Այն վիճակից մինչև այս նկարը կամ հակառակը... Նույն ճիվաղն էր։ Ապա ձեռքն առավ ծրարը, նայեց կոնակին։ Այնտեղ լատինատառ գրված էր «Կարս, 1337, ռաբիուսանի»։ Սա հիջրայի թվականն էր, որ քրիստոնեականով կլինի՝ 1918, ապրիլ։ Ծրարի վրա հասցե էլ կար՝ դարձյալ լատինատառ.

«Խոթանքով...»։ Գնդապետը չկարդաց. մնացածը կարևոր չէր։ Ուրեմն, իր կյանքի մի երանելի պահն անմահացրած տուն պիտի ուղարկեր, որպեսզի հարազատները տեսնեն, հպարտանան իրենց հերոսի արած-թողածով։

Հաջորդ նկարում կախաղանների շարք էր՝ ոտքերից կախված մարդկանցով։ Կախվածներից մեկի կողքին նույն սպան էր՝ ատրճանակը պարպելուց հետո կամ պարպելու համար առաջ մեկնած։ Գնդապետը մտքով պատկերացրեց լուսանկարի տեսարանին նախորդած պահերը։ Կախվածը ձեռքերով ոտնաչիլերը բռնել, փորձում է բարձրանալ, և սպան կրակում է նրա թևերին։ Կրակում է ու սպասում հաջորդ շարժումին։

Թուրքը երևի ձանձրացած է եղել սովորական սպանություններից ու կոտորածից և հետաքրքիր տեսարաններ է հորինել իր միապաղաղ զբաղմունքը հետաքրքիր դարձնելու համար։

Գնդապետը խոպոտած բասով դարձավ երիտասարդին, որը մոայլ կանգնել էր Մելիքյանից մի քայլ ետ.

— Անունդ ի՞նչ է, տղաս։

— Վրեժ։

— Վրե՛ժ։ Իննսունհինգից հետո ես ծնվել, պարզ է։ Ո՞ր կողմերից ես։

— Սասունցի եմ, գնդապետ,— խրոխտ պատասխանեց երիտասարդը։— Աբդուլ-Համիդյան ջարդերին փոքր երեխա եմ եղել, անունս էլ՝ Հրահատ։ Մեր մեծ գերդաստանից ես եմ մնացել և քույրս։ Հայրս է ինձ «Վրեժ» վերակնքել։

— Հրահատ-Վրե՛ժ,— արտասանեց Պողոսբեկը և արդեն մտերմորեն դիմեց Արշավիր Մելիքյանին.— Իսկ ո՞նց է կոչում։ Հուսով եմ՝ արդարացնում է անունը։

Մելիքյանի դեմքը պայծառացավ.

— Անո՛ւնը և հոր հո՛ւյսը։

* *
*

Արարատյան դաշտում դեռ լույս էր, հաղթանակի խանդավառություն։ Զանգերի զողանջներից օդը լցվել էր մի երաժշտությամբ, որ կարծես չի ունեցել սկիզբ և վերջ էլ չպետք է ունե-

նա։ Հենց այդ ժամանակ Երևանի կողմից դաշտի վրա փռվեց շոգեգնացքի՝ օդը ճոթոտող սուլոցը։ Հայոց գնդերը, մոռացած զգուշություն ու վտանգ, տեղներում կանգնեցին, ուռա՜ կանչեցին. գնացքն ինչ էլ որ բերեր իր հետ, թիկունքից էր գալիս, թիկունքի զոյության առհավատչյան էր, նրա հզոր ապացույցը։ Առաջ ե՞րբ էր եղել այդպիսի բան. տուն ու տեղ թողած՝ թիկունքը փախչում էր՝ իր հետ քշած-տանելով նաև դասալքության պատրաստ զինվորներին։

Գնացքի զիլ սուլոցը և ուրախ հեռոցները սարսափ տարածեցին թուրքաց խանգարված զորաշարքերում։ Ասկյարները մտածում էին, որ հայերի ճակատի համար զորահամալրում է գալիս, և չգիտեին՝ ո՞ւր պիտի փախչեն, եթե հանկարծ գնացքը հասնի Ալեքսանդրապոլ ու սկսի թիկունքից հարվածել։ Նրանք տագնապած իրար էին հասցնում տխուր լուրը.

— Գյավուրները նոր ուժե՞ր ստացան։

Իսկ հայոց ճակատի ուղղությամբ շարժվող գնացքն շտապելուց թանչում էր։ Վագոնների պատուհաններից, ապրանքատար վագոնների տախտակամածներից հորդում էր ցնծագին աղմուկը։ Զուռնան ծկլթոցով նվագում էր մի հին եղանակ, որ ուրախ էր ու տխուր, և նրա հետ դհոլը քայլ էր գցում կենտուկաթուկ։

Պողոսբեկ Փիրումյանը կարգադրել էր, որ զինվորները չհեռանան դիրքերից ու խրամատներից։ Իսկ զինվորների սրտերն այնտեղ էին, գնացքից դուրս հորդացող ամբոխի մոտ։

Գնացքը կանգ առավ Սարդարապատ կայարանի թիկունքում, այնտեղ, ուր ջրմուղն էր, որը կործանվեց հրետանային համազարկից։

Վագոններից դուրս ժայթքեց բազմակերպար ու բազմագույն հեղեղը։ Ծանրաբեռ շալակներով կանայք ու աղջիկներ էին, ծերեր ու երեխաներ։ Խոնավ կուլաներն ուսերին ու կռնատակներին՝ երկաթգծի եզրերին աղմկում էին Երևանի ջուր վաճառող տղաները։

— Ջրի ջո՞ւր, սառը ջո՞ւր,— կանչում էր գանգրահեր ու թուխ մի պատանի։

Նրան հետևեցին աշխույժ դասակիցները։

Բեղերը ճերմակ, գլխաբաց մի ծերունի կայարանի պատի տակ խաչած ձվերի, պանրի, թարխունի ու այլազան կանաչիի պաշարը շարեց լայն սփռոցի վրա, լավաշն էլ կողքին դարսեց։ Նա

կոնատակն էր առել այծենի տակճորը, որից գինի էր լցնում կավե գավաթի մեջ ու մեկնում զինվորներին։

— Սո՜ւրբ գինի է, իսկը մեռոն, խմողին գնդակ չի բռնի,— ասում էր նախօրոք գինով ու կարմրատակած ալևորը։— Մոտեցե՛ք, մոտեցե՛ք, ես ձեր օր ու ումբրին մեռնեմ, մո՜տ եկեք։ Ձեր հաղթանակի՞ կենացը, ձե՞ր կենացը, մեր Հայաստան աշխարհի՞ կենացը։— Ապա հայացքը դարձնելով դեպի հարավ՝ խոսեց.— Ա՜յ սուրբ Արարատ, դո՜ւ հաստատ պահիր մեր գոյության հիմքը։

Ծեր, նիհար, կարճահասակ զուռնաչին հենց ապրանքատար վագոնի եզրին նվագում էր այն պարեղանակը, որից լսողի ոսկորն ու մկանն են խաղում։ Դեռահաս դամքաշը շունչը կուլ տալ չէր կարողանում, վարպետը դհոլչուն աչքով էր անում, որ ուժեղ զարկի։ Դհոլը ցավից թե ուրախությունից մռնչում էր տիրոջ ծնկան վրա։ Պարի ասպարեզ մտան ճերմակ խալաթավոր աղջիկներ և սկսեցին պարի հրավիրել իրենց շուրջն ակնապիշ կանգնած երիտասարդ զինվորներին։ Սկզբում դժկամությամբ աղջիկներին խառնվեց մի պորուչիկ, որ աջ ձեռքը վեր տնկած, ձախը՝ գավակին, մի շրջան արեց, հետո ճկուեց ու սկսեց հոլի պես պտույտներ գործել աղջիկների քթների տակ։

Գնդապետի հրամանով պարենի իրենց նվերները շալակած քաղաքացիները, զինվորների ուղեկցությամբ, մտան խրամուղիները, անձամբ նվերներ մատուցեցին դիրքապահներին։ Այնտեղ դիրքերի մեջ էլ նրանք ճաշի սփոռոց բացեցին՝ հյուրասիրելով հաղթանակած զինվորներին։ Նրանց հետ բաժակ բարձրացրին հանուն ընկածների հիշատակի և չմոռացան ճակատամարտի հերոսներին։

Այս նվիրատվությունների ընթացքում, կերուխումի սփռոցների շուրջ բոլորի ուշադրության կենտրոնում էին վիրավորները, մանավանդ նրանք, որ վիրակապերով զարդարված, չէին լքել ճակատը և պատրաստ էին մասնակցելու հաջորդ մարտերին։ Նրանցից շատերը նորընծա զինվորներից էին, անփորձ աշխարհազորային։ Ցավի ու տառապանքի հետ միասին դեմքներին դրոշմված էր հպարտությունը։

Եղվարդեցի մի երիտասարդ, անունը՝ Կիրակոս, ճերմակ փաթաթանով աջ թաթը շքանշանի նման դրած դոշին, հրաժարվեց ճակատը թողնել «Հիմա էլ կօգնեմ կովողներին,— ասաց նա,—

և հենց որ ձեռնամարտի գնալու լինենք, թուրը ձեռս կառնեմ. ես ձախլիկ եմ»։

Կիրակոսի երկու քույրը հարցուփորձ անելով գտել էին նրան։ Բերած պաշարը բացեցին-շարեցին խրամատի պատրհանում, հարևաններին մոտ հրավիրեցին և սկսեցին թոնթորալ.

— Մեր եղբա՞յրը, մեր միևուճար եղբա՞յրը...

— Վա՛յ, Կիրակոս ջան, վերքդ շա՞տ է ցավեցնում, ցավդ տանեմ։

Փոքր քույրն էր սրտապատառ լինում, չնայած ավագն աչքունքով ջանում էր հասկացնել, որ նա զսպի իրեն։

Հանկարծ խրամուղու ծայրին երևաց երիտասարդ մի սպա, կուզեկուզ մոտեցավ զինվորներին և հազորդեց Պողոսբեկ Փիրումյանի հրամանը խմիչքը չչարաշահելու մասին։

— Տնաշենի տղերք, ի՞նչ չարաշահել, եղածը խմում ենք, էլի՞,— սպայի գնալուց հետո անտարբեր փնթփնթաց մի երիտասարդ զինվոր, որ կուչ էր եկել կողքի ծեր զինվորի՝ Լիպարիտ ապոր կողքին։

— Եղածը խմո՞ւմ ենք,— նրան տնազելով խոսեց Լիպարիտ ապերը։— Մի մատան տեղ է, չե՞ս կարող հուպ տալ։

— Ո՞նց հուպ տամ, երբ էն անտերը կողքիս է։ Անհնարին է, չեմ կարող։

— Ախր ինչի՞ չես կարող, է՞, դու կնյազ Կուտուզովի տղա՞ն ես, թե՞ Մանթաշովի փեսան... Ասում են՝ հրեն հարձակման ենք անցնելու։ Որ ծուռուծուռ անես, տան-լեշդ փռեն, լա՞վ կլինի...

Սակայն այնպես էլ հարձակման անցնելու կարիք չեղավ, որովհետև թուրքերը, մի քանի արկ ուղարկելով դեպի հայկական դիրքերը, նահանջեցին մինչև Արաքս ու Ղարաբուրուն կայարանները և, հավանաբար, ապահովության համար, դիրքեր փորեցին կայարաններից հյուսիս-արևելք գտնվող բլուրների վրա։

Իրիկունը վրա էր հասնում, և Սարդարապատ ավանն ու Սարդարապատ կայարանը վերանվաճած հայ զորքերը պիտի դիրքավորվեին ձեռք բերած նոր գծի վրա, չնայած դեռ կարող էին առաջ գնալ և ստիպել, որ թուրքերը չամրանան Արաքս կայարանի մոտերքում։

Այն ժամանակ Պողոսբեկ Փիրումյանն իր շտաբի ռադիոյով միացավ ճակատի հրամանատարի հետ և փորձեց ճշգրտել հետագա անելիքը։

— Ի՞նչ անելիք, ախպերս, ամրանանք մեր գրաված դիրքերում, մի փոքր շունչ քաշենք, մինչև խելքներս տեղը գան,— փոքր-ինչ անհոգ պատասխանեց Դանիելբեկ Փիրումյանը, և գընդապետը հասկացավ, որ հրամանատարը շատ է հոգնած։

— Պարոն հրամանատար, գուցե, այնուամենայնիվ, մի բան ասեմ։

— Ասա՛, Պող, ասա՛,— արդեն մտերմիկ ու ջերմ արձագանքեց ճակատի հրամանատարը։— Գիտեմ, որ դու հանգիստ նըստողը չես։

— Պիտի կարծել, որ թուրքերն առայժմ մեր գծով հարձակման չեն դիմի։

— Ձեր գիծը ո՞րն է։

— Ուր որ մեր գունդն է կանգնած, ճակատի կենտրոնը։

— Ձեն դիմի, պարզ է։

— Նրանք պիտի աշխատեն ճեղք գտնել թևերում կամ թիկունքում։

— Հա՜, կաշխատեն, հասկացա։ Սիրում եմ մտածող մարդկանց, կեցցե՜ս, Պող, ախպե՜ր։

— Դե, սպասիր, խոսքս ավարտեմ, է՛։

— Հիմնականն արդեն հասկանալի է, Պո՛ղ,— նրան ընդհատեց ճակատի հրամանատարը և բացատրեց։— Ուզում ես, որ ճակատի կենտրոնում առայժմ դիրք բռնի քո գունդը, իսկ մնացածներին դասավորեմ թևերում ու հնարավոր ճեղքումի մյուս կետերում։

Գնդապետը զարմանքից հոգոց հանեց.

— Վա՜հ, տնաշեն...

— Բա՛, կարծում ես միայն դո՞ւ իրավունք ունես հասկանալու։ Հիմա դու գունդը խրամատավորիր, ես մնացածների հոգսը կքաշեմ։ Համենայն դեպս, քո աջ թևում մի մարտկոց կթողնենք։ Հրետանին միշտ էլ պետք է...

Ճակատի կապի սպան զրույցի մեջ ընկավ.

— Պարոն հրամանատար,— ասաց,— գեներալ Սիլիկյանն է ուզում ձեզ հետ խոսել։ Պարոն գեներալ, պարոն գեներալ, պարոն Դանիելբեկ Փիրումյանը գծում է, խնդրեմ, խոսեցե՛ք։

— Գիտեմ, գիտեմ, կես ժամ է, պարոն Դանիելբեկ Փիրումյանի զրույցն եմ լսում,— հոգնած, փուխր ձայնով խոսեց գեներալը։— Շնորհավորում եմ հաղթանակդ, պարոն Փիրումյան։

— Շնորհակալ եմ, պարոն գեներալ։

— Հավատա, որ շնորհավորում եմ ամբողջ հոգով, ամենայն անկեղծությամբ։

— Հավատացած եմ, պարոն գեներալ, շնորհակալ եմ։

— Իսկ որ հավատացած եք, ինչո՞ւ չէիք զեկուցում, չէ՞ որ ես դեռևս Երևանյան ճակատի հրամանատարն եմ և, կարծեմ, իրար հետ էլ դեռևս հաշտ ու համերաշխ ենք։

Փիրումյանը հանկարծակիի եկավ այսպիսի սկզբից։

— Պարոն գեներալ,— ասաց,— դուք շտաբում չէիք։ Ինձ ասել էին՝ գտնվում եք Երևանում, և ես էլ հեռագրել եմ Երևան, Ազգային խորհրդին, որտեղ էլ, հավանաբար, դուք պետք է լինեիք։ Համ էլ, կարծում եմ՝ ամենից կարևորը կատարվածն է. հայոց զորքը ո՞չ միայն կասեցրել է թշնամու առաջխաղացումը, այլև ետ է մղել ամբողջ ճակատի լայնությամբ՝ միջին հաշվով 18—20 կիլոմետր։ Անհրաժեշտ է մտածել հաջորդ քայլի մասին, որը շատ ավելի դժվար պիտի լինի։

— Իհարկե, ամենակարևորը դա է, սիրելիս,— փոխվեց նաև գեներալի ձայնը։

— Քիչ առաջ Արամի հետ էի խոսում,— զրույցի ուղղությունը փոխեց գեներալը։— Նա ոգևորված է ձեր զեկույցով և խոստանում է ճակատի համար կազմակերպել համաժողովրդական օգնություն։ Ես խնդրեցի այդ անել առանց վայրկյան կորցնելու։

— Շնորհակալ եմ, գեներալ։ Հիմա մեզ համար ամենակարևորը հաջողությունը ձեռքից չտալն է։

— Դե՛, պի՛նդ կացեք, սիրելիս, պի՛նդ կացեք։ Ես միշտ հավատացել եմ ձեր հնարամտությանը և ուրախ եմ, որ այս անգամ, ամենաճակատագրական պահին, ձեր աստղը չխաբեց։

Ա՜ստղը... Երանի՜ թե այն ուղեկցի մինչև վերջ։ Փիրումյանն էլ շնորհակալ էր իր աստղից, բայց այդ վայրկյանին՝ նաև գեներալ Սիլիկյանից, որ, վերջապես, հավատում է և իր հետ է ճակատի հետ։ Թե չէ, այն ի՞նչ տրամադրության էր լծված երկու օր առաջ։

— Պարոն Փիրումյան, հիշո՞ւմ եք, մի անգամ գնդապետ Վեքիլյանի մոտ...

Փիրումյանը վերջին ամիսներին նկատել էր, որ գեներալ Սիլիկյանը հաճախ է խճճվում իր իսկ նախաձեռնությամբ զրույցին խառնված երկրորդական թեմաների մեջ ու կորցնում է հիմ-

նականի ծայրը։ Գիտեր, որ դա ծերունական թերություն է, և հանգուրժում էր, օգնում, որ մարդը դուրս գա խճճանքից։ Հիմա գեներալի այս թերությունը նյարդայնացնում էր նրան։ Նա կուզենար նույնիսկ կտրուկ անջատվել զրույցից, մեկ էլ զգաստացավ. կմտածի, թե առաջին հաջողությունից Դանիելբեկ Փիրումյանը մեծամտացել, գլուխը կորցրել է։

— Գեներալ, ի՞նչ լուր ունեք մյուս ճակատներից։

— Ի՞նչ-ի՞նչ,— սթափվեց գեներալը։

— Ասում եմ՝ ի՞նչ լուրեր կան մյուս ճակատներից։

— Դրությունը վատ է Ղարաքիլիսայում։ Իսկ Արագածի կողմերում՝ ուղղակի անհուսալի։ Այսօր թուրքերը մտել են Բաշ-Ապարան և հավանաբար Աշտարակի ու Եղվարդի վրայով պիտի շարժվեն դեպի Երևան։ Հակառակի պես մենք այնտեղ զորք առհասարակ չունենք։ Գնդապետ Զալինյանի հեծյալ գունդն է իրեն կարգի բերում Եղվարդի դաշտում։ Իսկ թե երբ կռվի մեջ կմտնի, հայտնի չէ։

— Ինչո՞վ կարող եմ օգնել։ Որոշակի ծրագիր կա՞,— անհանգստացավ Փիրումյանը, կարծես թշնամին ետ էր նվաճել իր հաջողությունը։

Սելիկյանը հապաղում էր, երևի ինքն էլ չէր որոշել, թե ի՞նչ պիտի ուզի Սարդարապատի ճակատից։

— Իսկ դուք ի՞նչ կարող եք տալ,— վարանոտ հարցրեց նա։— Այսինքն՝ ի վիճակի՞ կլինեք մեկ-երկու գունդ զիջել։

— Մահապարտների գնդից բացի...

— Այն ժամանակ՝ Վեցերորդը։

— Խնդրեմ։

— Եվ Կորոլկովի պարտիզանական հեծյալ գունդը։

— Այդ էլ՝ խնդրեմ։ Աջ թևում է գտնվում Մուրադի խումբը, որ լավ հանգիստ է առել, կուզեք՝ այն էլ ուղարկեմ։

— Շատ շնորհակալ կլինեմ։

— Ո՞ւր պիտի ժամանեն։ Տեղը, ժամը որոշակի ասեք։

— Գիշերը կարո՞ղ են շարժվել։

— Դրանք այսօրվա մարտին չեն մասնակցել, հանգիստ են և կարող են հենց այս րոպեին էլ ճանապարհվել։

* *
*

Արամը Սարդարապատ հասավ ուշ երեկոյան, երբ արդեն Երևանում ռազմաճակատին օգնելու համար կատարել էր բոլոր կարգադրությունները և համոզվել, որ գործերը լավ են գնում։

Պարենի և խմելու ջրի պաշարներով բեռնված գնացքը ճակատ էր հասել, և կանանց ու աղջիկների ջերմեռանդությամբ նորից պատրաստվում էր հերթական բեռը։ Երևանի պարետ Արտո Շահիսթունին ու տարեց մի քանի սպաներ ինքնապաշտպանության համար աշխարհազորային խմբեր էին կազմակերպել։ Նրանք դիրքեր բռնեցին քաղաքի մատույցներում։ Երևանում տեղակայված միակ փոքրիկ զորամասը, հազիվ 300—320 զինվոր, որ Սարիղամիշի մարտերից հետո Կողբի վրայով նահանջել էր Արաքսի ձախափնյակը, ապա անգործության մատնված՝ Շահխաթունու «ռազմական» պահեստային ուժն էր համարվում, Ազգային խորհրդի կարգադրությամբ անմիջապես ուղարկվեց ճակատ, որպեսզի համալրի Մահապարտների գունդը։ Աշխարհազորային նոր խմբերի կազմակերպումը ևս ընթանում էր արագ ու բարձր կազմակերպվածությամբ և առավոտյան նրանք կազմ ու պատրաստ պետք է մեկնեին ճակատ։

Եղեգնուտ կայարանից արևմուտք, Սարդարապատ չհասած, ավտոմեքենայի լույսերի դեմ հանկարծ երևաց մի զորաջոկատ։ Երկաթգծի աջ կողքի հարթության վրա նստոտած էին զինվորները, և նրանց դեմ Գարեգին սրբազանն էր կանգնած։

Արամն իջավ մեքենայից, ողջագուրվեց սրբազանի հետ, հարցուփորձով իմացավ, որ իր դեմ օրվա հերոսներն են կանգնած, Հինգերորդ գնդի Երկրորդ գումարտակի մի ամբողջ վաշտ, շնորհավորեց նրանց, Ազգային խորհրդի ու Երևան քաղաքի հասարակության անունից շնորհակալություն հայտնեց անօրինակ հերոսության համար։

— Հայ ժողովուրդը հպարտությամբ պիտի հիշի ձեր սխրանքը, քաջ հայրենակիցներ,— ձեռքն առաջ պարզած, ոգևորությամբ խոսեց Երևանի ազգային խորհրդի նախագահը և հանկարծ խարույկի կրակից լուսավորվածների մեջ նկատեց բարձրահասակ Արշավիր Մելիքյանին։ Պատանիներ էին շրջապատել նրան։ Արամը հասկացավ, որ զրուցելիս են եղել, և ահա իր

հայտնվելով խանգարվել է զրույցը։ Ինչի՞ մասին էին խոսել,— մտածեց նա։— Դարձյա՞լ մեր ղեկավարների անճարակության, թե՞ այսօրվա հերոսության, որի մեջ իրենք էլ իրենց բաժինն են ունեցել։ Արամի խոսքը, որ ուրիշ պարագաներում աչքի էր ընկնում առողջ տրամաբանությամբ ու կառուցիկությամբ, այս անգամ կցկտուր էր։— Արարատյան երկրի բնակչությունը և ամբողջ հայ ազգը, ուր էլ որ կա,— ասաց նա,— սրտի թրթիռով հետևում է ձեր խիզախությանը՝ համոզված, որ շուտով թշնամին դուրս կշպրտվի մեր երկրի սահմաններից, և հայությունը ձեռք կբերի խաղաղ ու ապահով կյանք...

Մանուկյանը խոսում էր, իսկ վաշտի զինվորները ոչ այնքան նրան էին ունկնդիր, որքան նրա մասին փսփսոցով ասվող տեղեկություններին, որ իրար էին հաղորդում նրա կյանքին ու գործին իրազեկ վաշտակիցները։ Ասում էին՝ Վանի պաշտպանության կազմակերպիչներից է և առհասարակ օրինակ է արիության ու խոհեմության, բայց, ահա, վերջերս շատ է հավատում Թիֆլիսում նստած հայ մեծավորներին և դարձել է նրանց կամակատարը։ Մեկն էլ հերքում է վերջին տեղեկությունը և ասում՝ Արամը Թիֆլիսի ղեկավարների հետ ոչ մի կապ չունի. նրանց կարգադրություններն արհամարհում է և հենց սա՛ է, որ Դանիելբեկ Փիրումյանին կարգադրել է դեմ կանգնել թշնամուն ու Սարդարապատի դաշտը դարձնել թուրքի գերեզման...

Զրույցից հետո Արամն ու Մելիքյանը մոտեցան իրար։ Առաջինն Ազգային խորհրդի նախագահը ձեռքն առաջ մեկնեց։

— Ուրախ եմ, որ ձեզ այստեղ եմ տեսնում,— անկեղծ բարեկամությամբ նա սեղմեց Մելիքյանի ձեռքը։

— Այստեղ է լուծվում մեր ազգի լինել-չլինելու հարցը,— պատասխանեց Մելիքյանը և, ցույց տալով երիտասարդների խումբը, ոչ առանց հպարտության ավելացրեց,— սրանք էլ մեր երիտասարդ սպարտակյանն՛երը։

— Երանի՞ նրանց, որ այսպիսի քննությամբ են սկսում իրենց կյանքը։ Երկա՞ր ապրեն...

— Պատերազմ է, պարոն Արամ, ի՞նչ իմանաս՝ ո՛վ կհասնի ավարտին։ Պատերազմը զոհեր է կլանում և ծնում է հերոսներ...

Արամին դուր եկավ այս խոսքը և, հրաժեշտ տալով, նորից ջերմորեն սեղմեց զրուցակցի ձեռքը։

— Յտեսություն, բարեկամ։ Երանի՞ թե ամեն ինչ մեր ուզածի

պես լինի, և մենք նորից հանդիպենք ու շարունակենք մեր...

— Զրո՞ւյցը, թե՞ վեճը,— քթի տակ ժպտաց Մելիքյանը։

— Միևնույն է,— անորոշ ասաց Արամը և գնաց դեպի մեկուսի իրեն սպասող Գարեգին Հովսեփյանը։

— Երևանում ձեզ Ղևոնդ երեց են կոչում, սրբազան,— հասնելով նրան՝ ուրախությամբ հայտնեց Արամը։— Ասում են՝ Ղևոնդի պես իր հայրենասիրական խոսքով վառել է հայ զինվորների սրտերը։

— Իսկ ինչո՞ւ անպայման Ղևոնդ երեց։ Չնայած Ղևոնդը մեր մեծ սրբերից մեկն է, և ինձ նման մահկանացուների համար հպարտություն է նրա հետ համեմատվելը։— Մթան մեջ ժպտաց Գարեգին եպիսկոպոսը։— Մի՞թե իմ անունն արժանի չէ ինձ։

— Ձեր անունը երկար ապրի, ինչո՞ւ արժանի չէ,— լրջացավ Արամը։— Ասում են՝ ամեն մարդ ինքն է իր անունն ստեղծում և գեղեցկացնում...

— Է՛հ, պարոն Մանուկյան,— նրան ընդհատեց սրբազանը,— հիմա՞ մի՞թե մարդն է գալիս իր անունը կամ անձը։ Թուրքը եկել, ուզում է հայի անունը ջնջել։ Նրա այդ չարությունը խափանենք... Իսկ թե այսօրն ինչպես անցավ, դա պատմել չի լինի։ Ինչ որ եղավ այսօր, պարոն Արամ, դա կարգե դուրս բան էր, անսովոր, եթե կուզեք, նույնիսկ անտրամաբանական, իսկ ավելի ճիշտ՝ հրաշք։ Մինչև այսօր միշտ մեզ հաղթող, թվով գերակշիռ, շատ անգամ մեզանից ուժեղ թշնամուն հաղթեցինք... Ասում եմ հաղթեցինք, կարծես ես էլ հաղթեցի։ Պարզապես ամեն ինչ կատարվեց իմ աչքի առաջ, իմ ներկայությամբ։— Եվ հանկարծ սթափվեց սրբազանը, որովհետև գտել էր ասելիքը։— Պարոն Արամ, թանկագի՞ն իմ բարեկամ, ինձ այնպես է թվում, թե կարգե դուրս մի բան անելու համար, անհավատալին ու հրաշքը իրականություն դարձնելու համար մարդս պետք է մի քիչ խենթություն ունենա։ Առանց այդ խենթության հերոսություն չկա ու չի կարող լինել։ Առանց այդ խենթության չկա ու չես կարող սեսնել սխրանք, որտեղ էլ փնտրելու լինես՝ հող մշակելի՞ս, արհեստի ու արվեստի ոլորտներո՞ւմ, գիրք գրելի՞ս։ Այդ խենթության անհրաժեշտ պաշարից զուրկ մարդիկ շա՞տ են կարգապահ։ Կարգապահ լիներ Դանիելբեկ Փիրումյանը, պետք է լռելյայն ընդուներ վերին կարգադրողներիդ խոսքը և տեղի տար թշնամուն...

— Ուրեմն, կեցցե՞ անկարգապահությունը,— ինքն էլ չիմանալով ինչու՝ հակադրվեց Մանուկյանը, թեկուզ տարերային պոռթկումների պահերին նա ինքը հաճախ էր խախտում այն կարգը, որ կաշկանդում է մարդու բարի կամքն ու խիզախ նախաձեռնությունը։

— Քա՛վ լիցի, քա՛վ լիցի, պարոն Մանուկյան։ Ես ինքս կարգապահ մարդ եմ և սիրում եմ կարգն ամեն ինչում։ Իմ խոսքն այն խենթության մասին է, որ ժողովրդական զրույցներում սարեր է շուռ տալիս, իսկ իրականում ջարդում է նվաճողի մռութը։ Գուցե մեր նոր հայերենի «խենթություն» բառը դեռևս այն չէ, որ անհրաժեշտ չափով ընդգրկի երևույթը։ Սասունցիները հազար տարի «ծուռ» են ասվում։ Այդ ծռությունը չլիներ, արաբական տիեզերակալության դեմ կկռվեի՞նք երկու հարյուր տարի, որպեսզի վերջում էլ մի թագավորություն ստեղծեինք, որի հիշատակներն անգամ սրբազան ոգևորություն պարգևեն երախտագետ սերունդներին։

Վաշտին բարի գիշեր մաղթելով՝ Գարեգին սրբազանն ու Արամ Մանուկյանը քայլեցին դեպի մեքենան։ Նրանց ոտքերի տակ Սարդարապատյան դաշտի ժլատ կանաչն էր փռված, որ բուրում էր սուր, ռունգները գրգռելու չափ անսովոր։ Արամն առաջին անգամ չէր այս կողմերում, սակայն դաշտածաղիկների այս բույրերից զարմացած էր, որովհետև միշտ էլ այստեղ տեսել էր խանձված ու քարոտ մի տափաստան, որը երևի թե անհնար լիներ կենդանացնել։ Իսկ հիմա ծաղկաբույրեր կան։ Մեկ-մեկ լուսնելույսի տակ նշմարվում են թփեր, որոնցում ծղրիդներ են երգում։ Այս ի՞նչ է, ծղրիդները մրցման մե՞ջ են մտել Արարատյան երկրի զանգերի հետ,— մտածեց Մանուկյանը, որի սիրտը շատ էր ուրախ մայիսյան այդ երեկոյին։ Նա փորձում էր գնահատել անցած օրը, իսկ շուրջը զնգուն մի խաղաղություն էր, որը երևակայել անգամ անհնար էր վերջին ամիսների դաժան իրականության մեջ։ Հիշեց սրբազանի խոսքը Ղևոնդ երեցի անվան մասին, և նորից հոգում ծփաց երախտագիտությունն այս համեստ մտավորականի հանդեպ։ Հանկարծ նրան սկսեց անհանգստացնել մի հարց. ապագա սերունդները պիտի հիշե՞ն, որ եղել է այսպիսի մեկը՝ մարմնով նվազ, հոգու կրակով ու զորությամբ անսպառ, որ իր ետևից զինվորներ է տարել անհավասար մարտի։ Պիտի հիշե՞ն Դանիելբեկ Փիրումյանին, որ համա-

տարած դասալքումի ու անճարությանն առաջ կանգնեց իր զընդերի հետ մեկտեղ, ասաց՝ մենք պետք է կռվենք ու հաղթենք։ Նվ հաղթեց...

— Ի՞նչ եք մտածում, պարոն Արամ, ի՞նչ երանելի իրիկուն է, չէ՞,— հանկարծ ուղեկցի մտորումները կտրեց Գարեգին սրբազանը։

— Ապագայի մասին էի մտածում, սրբազան, գալիք սերունդների։ Ասում եմ, տեսնես կհիշե՞ն այսօրը...

— Է՛հ, սիրելիս, ապագան շատ է հեռու։ Լավ է մտածենք մեր ժամանակի ու ժամանակակիցների մասին։ Թե որ գնահատեցին ու գոհ եղան, կնշանակի՝ ապագայի համար էլ մի բան կմնա։

Գիշերանում էր։ Զանգերի զողանջներն ավելի բարձր էին հնչում, և հայոց հողի վրա այդ գիշեր քուն չպետք է իջներ։

* *
*

Հրամանատարներն ասել էին՝ հարձակման հրամանի են սպասում, և անհամբեր զորքը չէր դիմանում սպասումին։ Հաղթանակի համն առել էին մարդիկ, փախչող թշնամուն թիկունքից հարվածելու, առհասարակ թիկունք դիտելու հաճույք էին զգացել և հիմա արթուն թե քուն, այդ էր մտքներում։ Մի՞թե կարելի է սառեցնել կրակված հոգիները։ Կարելի՞ է թողնել, որ թշնամին հանգիստ շունչ քաշի, ուժ հավաքի և նորից հարձակման գա։

Խրամատները փորել էին առաջին գիշերը, մայիսի 22-ի տաք մարտին հաջորդած մի քանի ժամվա քնի դադարից հետո։ Համոզված էին, որ շուտով հարձակում է լինելու, պիտի թողնեն ու առաջ գնան։ Սակայն փորեցին խոր ու հիմնավոր։

Հետո զինվորները նորից գործի անցան և կրակակետերն այնպես ամրացրին ու քողարկեցին, պատերն այնպես կոկիկ տաշեցին կարճկոթ բահերով, ասես բնակարաններ էին սարքում, որոնց մեջ ամառ ու ձմեռ պիտի անցկացնեին, զավակներ ու թոռներ պիտի աճեցնեին։

Մայիսի 23-ի ճաշից հետո, երբ հայտնի դարձավ, որ այդ օրը ևս շարժում չի լինելու, առավել անհանգիստները խրամատների թիկունքներում կարճ ու երկար պատրհաններ փորեցին, կար-

ճերը՝ ուտելիք ու զանազան իրեր տեղավորելու համար, երկարները՝ իբրև քնելու տեղ։

Հողվոր մարդիկ էին այդ փորողները։ Փորում էին հողի բույրով արբեցած։ Իսկ հողն ամեն տեղ նույնն է, անգամ Սարդարապատի թիկունքում, ուր քարքարոտ էր, և մի բուռ հող իրար բերելու համար երկու-երեք բահի բերան քոռեճ պիտի քանդվեր։

Վարանդեցի Արշակը խրամատի թիկունքում իր քնատեղի հատակին կանաչ խոտ էր փռել, մի խորոմ էլ կապել, բարձի տեղ դրել էր անկյունում։ «Բարձի» մեջ լցրել էր խոռնխոտ ու վայրի դաղձ, և հողի ու այդ վայրի բույսերի սուր խառնաբույրի տակ պառկում էր, որ քնի, քունը չէր տանում։ Մտքերը պաշարում էին, քունը հեռու քշում։ Արշակը որտեղից էլ մի փունջ մուշկահամուկ էր քաղել, կախել գլխավերևը և հետը մտովի զրուցում էր։ «Էդ ո՞նց ես հասել Սարդարապատ, ա՛յ հրաշք ծաղիկ։ Դու միայն մեր շենի, հազարի մեջ ընտրած մեր Մուշկապատի քարածերպերին էիր բուսնում։ Դու միայն մեր նախշուն հարսների ու աղջիկների սնդուկներում էիր պահվում, որ քո անմահական հոտով տարին բոլոր խտուտ տայիր նրանց քիմքերը։ Քեզ ո՞վ է բերել էս կռվի դաշտը»։

Արշակը շուտ բաժանվեց իր մուշկահամուկից և ահա թե դա ինչպե՛ս պատահեց։

Մայիսի 23-ի վաղ առավոտվանից Երևանն ու Արարատյան դաշտի գյուղերն իրենց նյութական օգնությունը ճակատին էին հասցնում կազմակերպված, կանոնավոր շարասյուներով։ Ուտելիքով ու խմիչքով, զինամթերքով ու հագուստով բեռնված գրաստները բռնել էին Սարդարապատի գիծը տանող բոլոր ճանապարհները։ Կանայք ու աղջիկներ, ծերեր ու հաշմված տղամարդիկ, որոնք շալակով էին տանում իրենց նվերները, արտամիջյան կածաններով էին գնում, ավելի կարճ երթուղիներով։ Նրանցից շատերը կռվող յուրայինների տեղերը գիտեին և նրանց էին տանում իրենց պարենը, որից բաժին էր հասնում նաև հարևաններին, ծանոթ-անծանոթներին։ Կեսօրվա դեմ նվիրաբերողներն այնքան շատացան, որ ճակատի հրամանատարը կարգադրեց, որպեսզի մանր խմբերով, հերթապահ զինվորների ուղեկցությամբ նրանց հասցնեն ճակատի գիծը, հանդիպումներ կազմակերպեն խրամատավորված զորախմբերի հետ։ Հին զորականը գիտեր, թե կռվող զինվորին լրացուցիչ ինչպիսի լիցք ու

եռանդ կարող են հաղորդել անմիջական հանդիպումն ու սրտագին զրույցը՝ ունեցածից ու չունեցածից ճակատին նվեր բերող հայրենակցի հետ։

Մահապարտների գնդի սպաներն ու զինվորները համարյա ոչ ոք չունեին այս կողմերի գյուղերում և գլուխները կորցնում էին նման հանդիպումներից, Արարատյան երկրի խոսքաշեն ու սիրազեղ մարդկանց զրույցներից։ Լեռնական պարզ ու կոշտ մարդիկ, հարաբերությունների մեջ դուսպ և ծածկամտության չափ քչախոս՝ նրանք ե՞րբ են այդքան «ջան» ու «ազիզ» լսել, վայելել այդքան համեղ հոգեպահուստ և հոգեպահուստից էլ սրտագրավ խոսք ու զրույց։ Արցախական աշխարհում ասում են՝ թե ցորեն հաց չունես, գոնե ցորեն լեղու ունեցիր։ Արցախցիներն այստեղ տեսնում էին, որ ցորեն լեղու ունեին բոլորը՝ մեծ ու փոքր, կին ու տղամարդ, և՛ ցորեն հացով ու զարմանազան ուտեստի հարուստ նվերներով եկածները, և՛ նրանք, որ միայն գարի կամ կորեկ հաց էին բերում ու դաշտից քաղած կանաչի։

Արշակենց խրամատում նվիրաբերները հայտնվեցին ետմիջօրեի տապին, երբ արևը նայում էր զենիթից, և խոր ու երկար հողափոսի մեջ նստելն անգամ դարձել էր անտանելի։ Մի բարձրահասակ չորամարմին պառավ էր (Արշակենց գյուղում նրան կասեին լոբու սարի) և մանկամարդ մի կին։ Նրանց ուղեկցող զինվորը ետ գնաց՝ խոստանալով մի ժամ հետո հայտնվել։ Պառավն ասաց.

— Այտա՛, վախում ես կորչե՞նք,— հետո ձեռքի կապոցը վայր դնելով՝ սկսեց աչք ածել խրամատի երկարությամբ։ Մայրական գորովանքով ջահել զինվորներին էր տնտղում։

Իսկ մանկամարդ կինը խրամատի ծունկ տված տեղում կանգնել էր մոլորված և արևից, տոթից, երևի ամենից շատ՝ անսովոր միջավայրից, շիկնած ու շառագունած։ Արշակը տեսավ նրան ու կայծակը խփածի պես մեջքը դեմ տվեց խրամատի պատին։ «Վա՜յ, քո մերը չմեռնի, էս ի՞նչ արիր»,— անցավ Արշակի շվար մտքով։ Աչքերը տրորեց ու նայեց ընկերներին, որ տեսնի՝ նրանց բան չպատահե՞ց։ Ոչինչ էլ չէր պատահել. երիտասարդներն իրենց իրերն էին աջ ու ձախ գցում, որ նորեկներին նստելու տեղ հրամցնեն։ Իսկ զինվոր Զաքարը, գիշեցի այդ շատակերը, երկար ոտքերը չռած, պլշած աչքերով պառավի

կապոցներին էր նայում՝ կանխավայելելով նրանց պարունակությունը։

Շատակերների մեջ եթե մի տարօրինակը գտնեք, երևի Զաքարը պիտի լինի։ Չորրորդ տարին էր Արշակի հետ ծառայում, դեռ մի անգամ ուտելու վրա գանգատ արած չկար։ Ուտում էր ուղտի պես՝ ծամելիս ուտելիքը բերանում աջ ու ձախ գցելով։ Ուղտի պես էլ դիմացկուն էր. չլիներ՝ չէր ուտի-կդիմանար, լիներ՝ կուտեր, ինչքան որ տային։ Պահեստներում նրա հասակին հագուստ չէր լինում, հատուկ էին կարում, և ինքը մեծ-մեծ գրպաններ էր կարում հարմար ու անհարմար տեղերում։ Նրանցից մեկը հենց փորին էր՝ ոնց որ կենգուրուի պարկ, որի մեջ կարելի էր մի շաբաթվա պարեն տեղավորել։ Այդ գրպաններում միշտ էլ ուտելու մի բան կգտնվեր։ Կտար Արշակին. «Կե՛ր, հարևան» (գյուղերով հարևան են. Գիշու և Մուշկապատի հանդերը մի գետակ է բաժանում)։ Արշակը հրաժարվում էր. «Դու կեր,— ասում էր։— էգ հսկա բոյ-բուսաթիդ պահանջը շատ կլինի»։ «Ա՛ տղա, սա ինձ ի՞նչ անի, դո՛ւ կեր, մի տեղ կերևա»։

Արշակն ու Զաքարը նախապատերազմյան ծանոթներ էին։ Հանդիպում էին իրենց գյուղերն իրարից բաժանող գետակի վրա, Շրշռանի ձորում, երբ գյուղեգյուղ կովում էին։ Գետակի աջափնյակի թթենիների ու կեռասենիների տակ գիշեցիների բանակն էր դիրք բռնում, ձախափնյակի թթենիների տակ՝ մուշկապատցիների։ Վերջիններս Շրշռանի ձորում կեռասենիներ չունեին և պատերազմական այս նախապատրաստությունից առաջ անպայման ավերած էին լինում Գիշու կեռասի այգին։ Ուրեմն, պատերազմելու հիմնավոր պատճառ կար։ Բայց չլիներ էլ, կատարները տաք երիտասարդները կգտնեին, առանց որոնելու։

Եվ այսպես. ձորի երկու լանջերին դիրքավորվում էին թշնամի բանակները, որոնց մարտն սկսվում էր հայհոյանքի փոխհրաձգությամբ։ Այստեղ էլ դիպուկահարներ կային ու գնդացրային կրակահերթի վարպետներ։ Այո՛, էար հայհոյանք, որ դիպուկահարի գնդակի պես հակառակորդին խոցում էր տեղնուտեղը, և էար, որ գնդացրային կրակահերթի պես երկար էր, ծալ-ծալ, հարկ-հարկ։ Դրանց վարպետները դիշեցիք էին, մանավանդ, եթե իրենց հետ բերած էին լինում գյուղի ամառանոցավորներին, որոնք ինտերնացիոնալ տարր էին մտցնում կռվի մեջ. հայհոյում էին հայերեն-ռուսերեն-թուրքերեն... Եվ այն ժամանակ

Արշակը, որ երեխա էր դեռ, բայց պարսատիկով թռչուն կորսար թռիչքի մեջ, տալիս-շարքից հանում էր այդ «ինտերնացիոնալիստին»։ «Վա՜յ, մամա ջյա՜ն, ես մեռյա՜...»,— լսվում էր թշնամու դիրքերից, և մուշկապատցիները քարապրանուկով իջնում էին դեպի ձորը։

Զաքարը փորձված մարդ էր և գիտեր, թե քարապրանուկն ի՜նչ տեսակ աղետներ կարող է պատճառել, եթե նշանառության տակ իր նման մեկն է, որին կույրն էլ խփեր, չէր վրիպի։ Զաքարն իրենց դիրքերում կանգնում էր ամբողջ հասակով ու գոռում էր դեպի ձորը. «Ա՜ մուշկապատցիք,— ասում էր,— ես ձեզ մատաղ, դուք էդտեղից հայհոյեք, մենք՝ էստեղից, էդ առաջ գա՜ն ինչի է պետք»։

Այս կոչը հաճախ հաշտության դուռ էր բացում, և երկու հակառակ բանակները մերկացած թափվում էին գետակի մեջ, որպեսզի տաքացած կատարները հովացնեն նրա սառը ջրերում։

Այսպես, ուրեմն, Զաքարն ու Արշակը միմյանց գիտեին դեռևս մեծ պատերազմից առաջ, իրենց տեղական «պատերազմների» օրերից և երբ ճակատում հանդիպել էին, կարոտով ու երանությամբ էին հիշում անցյալ «պատերազմները»։

Ես հիմա այս վերհուշը կատարեցի, որպեսզի Արշակն ուշքի գա, հասնի ինքնատիրապետման։ Եվ, ի պատիվ իրեն, պետք է ասել, որ ինքնատիրապետումն ապահովվեց։ Զաքարը նայեց ընկերոջը, վիճակը հասկացավ։

— Արշակ տղա,— ասաց,— ինչքան էլ քնինք անես, տասի կեսը հինգ է։ Արի տեսնենք՝ ի՜նչ են բերել մեր խանում-խաթունները։

Իսկ խանում-խաթուններն արդեն Արշակի պատրհանում դասավորում էին բերածները։

— Էս ոնց որ քնելու տեղ է,— ամոթխած անհանգստացավ դեռատի կինը։

— Բան չկա, դասավորի, ա՜ քուր,— սիրտ առած խոսեց Արշակը։

«Ա քուրն» անսովո՞ր էր, թե՞ նրա բերանից անսովոր ու հարազատ հնչեց. դեռատի կինը նայեց նրա կողմը, ժպտաց՝ պարգևելով մի երջանկություն, որի նմանը երբեք չէր ունեցել մուշկապատցի զինվորը։ «Էս ի՞նչ է, անաստվածն ինձ տվեց, միանգամից շարքից հանե՞ց,— մտածեց Արշակը և որոշեց իրեն

տղամարդ պահել։— Արշակ տղա՛, քեզ ձեռքդ հավաքիր, բոլոր կողմերից նայում են»։

Դեռատի կինը ձեռքի կապոցը դատարկելուց հետո էլ գնաց՝ խրամատի մուտքի մոտ թողած փոքրիկ տոպրակը բերելու։ Զգույշ կողքի կռացավ, և երևացին սրունքները, որոնք ասես չարխաքաշ էին։ Հետո խրամատի հատակին քայլում էր, թվաց ոտքերը գետնին չէին առնում։ Նրա հագին չթե ծաղկավոր շրջազգեստ էր, որ գրկել էր համաչափորեն գիրգ կոնքերը, փարթամ կուրծքը, եկել-եզրով փակել ուսերն ու վիզը։

Արշակն աչքի տակով նայում էր, չէր կարող չնայել այդ հրաշքին, և մտածում էր, որ ահա այսպիսի կանանց տեսնողներն են տարածել, թե աշխարհում հուրի-փերիներ էլ են լինում, և հետո հավատացել են իրենց տարածած հեքիաթին։

Պարզվեց, որ պառավն այնքան էլ պառավ չէ. մազերն են շուտ ճերմակել վշտից։ Իսկ վիշտն այն է, որ Շուլավերից Փարաքար մարդու եկած այդ Շարմազը մի տարում կորցրել է ամուսնուն, երկու տղային ու երեք աղջկան։ Իրենց Փարաքարում տիֆի համաճարակ է եղել, շուլավերցու աղջկա ամբողջ ընտանիքը տարել է, իրեն թողել միայնակ, որ բվի նման կունչա դատարկ տանը։ Իսկ խրամատ մտնելուց այնպես աշխույժ էր, այնպես ասող-խոսող, որ Արշակին թվում էր, թե մեկն է այն երջանիկներից, որոնք փեշով էլ չեն քսվել դժբախտությանը և հարյուր տարի կապրեն՝ իրենց կատակն ու խնդությունն աշխարհում շաղ տալով։

Երբ սեղան էր բացված Արշակի պատրհանի երկարությամբ, և զինվորները ծալապատիկ նստել էին ճաշի՝ իրենց մեջ առած երկու հյուրերին, Շուլավերցու աղջիկը գինով լի բաժակը բարձրացրեց և հայացքով ընդգրկեց բոլոր նստածներին, ապա մեծավարի խոսեց.

— Տեսնում եմ, որ բոլորիդ էլ մայր կսազեմ, ուրեմս, խոսքը իմն է։— Կանգ առավ, մտածեց մի փոքր, նայեց դեռատի ընկերուհուն։— Աղջի, է՛յ, չասես՝ չանան չարխի կալավ։ Սիրտս լիքն է, էրվում է, խոսում եմ, հանգստանամ։— «Աղջին» անքեն ժպտաց, և դեմքն օծվեց մի այնպիսի վարդագույնով, կիսաբաց ճերմակափայլ ատամնաշարն այդ վարդագույնի մեջ այնպես շողաց լուսնի մահիկի պես, որ Արշակի գլուխը պտտվեց։ Շուլավերցու աղջիկը դիմեց զինվորներին.— Ձեր կենացը, ա՛յ տունու-

տեղից դադարգյուն եղած ջահելներ։ Դուք, որ եկել եք հայրենիքի փրկության համար ձեր կյանքն ու արյունը տալու, շա՜տ ապրեք։ Շատ ապրեք ու հասնեք ձեր մուրազներին։— Ապա չորացած, վշտակիր երեսը դեպի երկինք դարձնելով՝ վերացած ասաց.— Ա՜ երկնային, դու միակ ամենազոր ու հավերժական, դու հարեհաս լինես էս խեղճ անցավորներին։ Դու լավ ես տեսնում՝ ղրկված ու դժբախտ մայր եմ, ինձ սազական չի այս խոսքը, բայց որ չասեմ, սիրտս կտրաքվի. թող մեր աղգի տունը քանդող թշնամու մայրն իր մազե՜րը քանդի։— Մի շնչում խմեց լիք բաժակը, ափով սրբեց բերանը և նորից դարձավ զինվորներին.— Դե՛, խմեցեք ու կերեք, Շարմաղը ձեր օր ու ումբրին մատաղ։ Հա՜ զգուշացնեմ. կռիվը պրծնի թե չէ, եկեք Փարաքար, հարցրեք Շարմաղի տունը... Չէ՛, ասեք՝ Շուլավերցու աղջկա տունը ո՞րն է։ Ում էլ հարցնեք, ցույց կտա. Շուլավերցու աղջիկը ես եմ։ Կգաք։ Թաղած կարաս ունեմ, կբացեմ, երկու տարեկան ղոչ ունեմ, կմորթեմ...— Աչքերը տամկացան, ձայնը կոտրատվեց և թոսխոտալով ասաց.— Է՛, մեր հայրը, հոգին լո՜ւյս դառնա, ոսկի ձեռքեր ուներ։ Գործը քարի հետ էր. տուն կշիներ, խաչքար կկազմեր... Խաչքարի վրա նկարած մարդը հետդ կխոսեր... Ի՞նչ պատմեմ, պատմելո՞ւ բան է... Լիք տուն է թողել, ես ձեզ մատաղ, ամեն ինչ էլ ունեմ, ամեն ինչ... Կգաք-կտեսնեք... Աղջի Համեստ, մի բան էլ դո՛ւ խոսիր, էս անծանոթ ջահելները չասեն՝ Շուլավերցու աղջիկը դարդից խելքոռել է, լեզուն բուն չի մրտնում։

— Ես ի՞նչ խոսեմ, Շարմաղ հոքիր,— դարձյալ շառագունեց Համեստը և նայեց աջ կողմը նստած Արշակին։— Ես ի՞նչ խոսք ունեմ, որ ասեմ։

— Ինչի՞ չունես, ա՛յ Համեստ, ինձ նման մի դարդոտն էլ դու ես։

Ջաքարը, որ կավե գավաթով գինին խմել էր և խաշած հավն էր պատառոտում, զարմացած նայեց մեկ Շուլավերցու աղջկան, մեկ Համեստին։

— Դարդո՞տ։ Ինչի՞ պիտի դարդոտ լինի էս հուրի-մալաք աղջիկը։

Մյուս զինվորներն էլ զարմացած էին։ Իսկ Արշակն այլևս չէր հասկանում լսածը։

— Դարդոտ է, բա ի՞նչ է,— արդեն հանգիստ, լուրջ բացատ-

րեց Շուլավերցու աղջիկը, իսկ Համեստը շառագունած, տխրամած գլուխը թաքցնելու տեղ չէր գտնում։— Մարդը գնաց, զոհվեց Թուրքի կռվում։ Երկու տարի է արդեն։ Եվ խեղճի անունն երկու դառած՝ տանջում է իրեն։

— Բա՛-բա՛-բա՛, աղջի, էդ ի՞նչ մեծ դժբախտություն է էդ հասակում,— անկեղծ կարեկցեց Զաքարը։— Գոնե խոխա-բան թողե՞լ է։

Համեստը հարցական նայեց Շուլավերցու աղջկան, և նա բացատրեց.

— Ասում է. խոխա՛, այսինքն՝ երեխա թողե՞լ է։— Համեստը դժկամորեն ուսերը բարձրացրեց, և Շուլավերցու աղջիկն այդ էլ թարգմանեց.— Չէ՛, չի թողել, ա՛յ ախպեր։ Ո՞ւր է, թե թողած կլիներ... Հիմի ո՛չ հերանց գնացողն է, ո՛չ էլ...

— Է՛, Շարմաղ հոքիր, իրենց ցավը քի՞չ է, դու էլ եկել, մեր դարդերն ես պահ տալիս,— այլայլված դժգոհեց Համեստը և, որևէ բան անելու համար, կրծքին թափված մազերը ետ գցեց, ապա ուտելեղեն քաշեց Արշակի առաջ.— Ախր, դու իսկի բան չկերար։

— Ես ուտում եմ, ա՛ քուր...

Այս կողմերում ասում են՝ «քո՛ւր ջան», «հոգի՛ ջան»։ Արշակն ինչպե՞ս կասեր այդ «ջաներից» մեկը։ Սակայն սովոր չէր և ասեր, այդ միևնույն է, թե տկլորանար մարդկանց առաջ։ Միայն շնորհակալությամբ նայեց Համեստին, այնքան նայեց, որ նա ամոթխած ժպտաց ու հայացքը փախցրեց։

Ճաշի վերջում մեջտեղ եկավ գաթան՝ մեծածավալ, նախշազարդ մի խմորեղեն, որ Արցախական աշխարհում կոչվում է դովլաթ-կրկենի։ Կրկենին հենց այդ ծավալուն գաթան է, իսկ դովլաթը՝ նրա մեջ դրված խորհրդավոր կորիզը կամ ուրիշ որևէ նշան, որին արժանացողը ճանաչվում է գերդաստանի ընտրյալն ու սիրելին։ Այստեղ է՞լ նման սովորություն կար, թե՞ Համեստն ուրիշներից է սովորել կրկենի թխելը։ Պարզվեց, որ նա Ոսկեվազից է հարս եկել Փարաքար։ Եվ ոսկեվազցի Համեստը Փարաքարում կրկենի է թխում իր մորից սովորած եղանակով։

— Հաջորդ անդամին էջմիածնի կոլոլակ պիտի բերեմ,— ցածրաձայն խոստացավ Համեստը՝ տեսնելով, թե իր ոսկեվազյան կրկենին ինչպես ուրախացրեց զինվոր եղբայրներին։

— Հաջորդ անդամ որ գաս, մենք արդեն Կարսն անց կացած

կլինենք,— խոսեց զինվորներից մեկը, որ կուշտ կերել էր և գոտին էր թուլացնում։

— Աստված տա՝ անց կացած լինեք,— ուրախ արձագանքեց Շարմաղը։— Մինչև էլզուլում էլ կգանք, միայն թե ետ առած լինեք մեր հողերը։

— Էլզուլում չի, Շարմաղ հոքիր,— ժպտաց Համեստը։— Էրզրում է։

— Էլզուլում է, բա ի՞նչ է։ Քեզ համար զուլում եղավ, տեգրակնոջս համար եղավ, մեր քավոր Ապետնակի զույգ աղջկանց համար եղավ։ Քանի՞ մեկին հիշեմ։

Դովլաթ-կրկենին Արշակը պիտի կտրտեր։ Զաքարն ասաց.

— Միայն դու կարող ես տասնհինգ հավասար բաժին անել։

— Կտրտիր, հոգի ջան,— մայրաբար հորդորեց Շարմաղը։— Երեսկահատդ ասում է՝ արդար մարդ ես։ Քո արդար ձեռքով կտրիր։

— Արշա՞կն է արդար,— առանց հայացքն ուտելիքից կտրելու, հարցրեց Զաքարը և քմծիծաղեց, ասաց.— Դրա փեշի մեջ մեռոն կեփվի։

— Բա՞, ես մենակ իմ մեռնելու օրը չգիտեմ։

Արշակը գոտկին կապած պատյանից հանեց ծալովի դանակը, գոտկի վրա թավ տվեց, սրությունը փորձեց ձեռքի ափին և գործի անցավ։ Շարմաղը, որ նայում էր նրա այս արարողությանը, հիացումով խոսեց.

— Բա ասում էի, չէ՞։ Մեր ողորմածհոգին էլ էդպես էր, հա՞. ամեն ինչ տեղը-տեղին։ Գործիքները կարգին-սարքին։ Ձեռքի գործն էլ՝ թամաշա։ Զուտես-չխմես, նայես արած-թողածին... Փեշակիդ անունն ի՞նչ է, Արշակ ախպեր։

Մինչև Արշակը կպատասխաներ, զինվորներից մեկն ասաց.

— Սնայպեր է,— և բացատրեց.— Կարևոր թուրքերին վերացնում է։

— Բա գնդակը ո՞նց է կարևորին ջոկում անկարևորից։

— Գնդա՛կը չէ, ինքն է ջոկում. հեռադիտակով նայում է, տեսնում՝ սա հրամանատար է, մյուսը լավ դիրք ունի, շատ վնաս կտա մեզ... և մեկ-մեկ, դը՛մբ, ջահանդամն է ճանապարհում։

Շարմաղն ու Համեստը հիմա որ բացահայտ հիացումով էին

նայում Արշակին, որը կտրտել էր կրկենին և սկուտեղի վրա դրել Համեստի առաջ.

— Ա՛ քուր, դե՛, հիմի քո սուրբ ձեռքով բաժանիր, տեսնենք՝ դովլաթիդ ո՞վ պիտի արժանանա։

Համեստն սկուտեղը բարձրացրեց, պարզեց դեպի Արշակը.

— Դե՛, վերցրու,— և պարգևեց այն ժպիտը, որ այդ վայրկյանին Արշակ զինվորին դարձրեց աշխարհի տերը։

— Չէ՛, հրաժարվեց Արշակը,— քո՛ ձեռքով, ասացի, չէ՞, քո՛ սուրբ ձեռքով։

Համեստն անհամարձակ նայեց կտորներին, մեկն ընտրեց և արագ, կարծես ձեռքը վառում էր, դրեց Արշակի առաջ։ Հետո մյուսների բաժինները տվեց։ Զինվորներն սկսեցին զգուշորեն ուտել։ Զաքարն արագ-արագ իր կտորի հարցը լուծեց, վերադարձավ ուտելիքի մնացած տեսակներին։ Հարևաններն էլ լռությամբ կերան։ Համեստը և Շարմաղն իրենց բաժինների հասը բաց արին-ստուգեցին. ոչինչ չկար։ Չէր կերել միայն Արշակը. ուրեմն, կորիզը նրա բաժնում էր։ Համեստը հարցրեց.

— Ինչո՞ւ չես ուտում։

— Պահեմ... հիշատակ է,— համարձակվեց ասել Արշակը, և Համեստը, շփոթմունքը թաքցնելու համար, աննպատակ իրար բերեց «սեղանի» ուտելիքի մնացորդները։

Հրաժեշտ պիտի տային, և Զաքարը կարգադրեց, որ վերջին անգամ լցնեն բաժակները։ Շնորհակալության խոսքեր ասաց, ջոկատի անունից խոստացավ լավ կռվել և արժանի լինել այս հոգատարությանը...

Արշակը նայում էր նրան, սակայն չէր կարողանում լսել։ Մտքով ուրիշ տեղ էր։ Ուրիշ հոգս էր տակնուվրա արել նրա սիրտը։ Ուրիշ մի բաղձանք, երազում տեսած հրաշք թռչունի պես, նրան առել իր թևերին, տարել էր անիրական մի աշխարհ, որտեղ կռիվ չկար, արյուն չէր հեղվում, և համատարած սերն ու բարությունն էին թագավորում։ Երբ կտրվեց այդ երազից, բոլորն իրեն էին նայում։ Նրա աչքի առաջ, այնպես մոտիկ ու իրական, սակայն երազի պես անհավատալի, Համեստի լուսապայծառ, շիկնանքի քողով պարուրված գեմքն էր։ Ժպտում էր, և ճերմակ-ճերմակ ատամնաշարը լուսնի մահիկի պես ցոլում էր։ Նա ուզեց կենաց ասել և այդ կենաց խոսքի մեջ Համեստին շնորհակալություն հայտնել պարգևած մեկ ժամվա երջանկության համար,

ամաչեց այդ մտքից։ Սակայն հանկարծական մի մղումով խոսեց և այն, ինչ պիտի ուզղեր մեկին, ասաց երկուսին, ընդհանուր։ Ասաց՝ հուսալով, որ նա պիտի հասկանա. մի՞թե սուտ էին այն հայացքներն ու ժպիտները։

— Էս կովող տղերքին մայրեր են սպասում, հարսներ ու հարսնացուներ են սպասում։ Նրանց կենացը և ձեր կենացը, ա՛յ նոր բարեկամուհիներ։ Ձեր շա՜տ կենացը։ Որ պատերազմ չլիներ, մի ամբողջ կյանք էլ իրար կողքի ապրեինք, էսպես իրար չէինք ճանաչի... Ուզում եմ ասել՝ էսքան չէինք, ոնց ասեմ, է՜...

— Հարազատանա,— հուշեց Շարմաղը։

— Ա՛յ, շա՜տ ապրես։ Խոսքը լեզվիս ծերին էր, բայց չէր դալիս։ Մի ամբողջ կյանք էր պետք, որ էսքան հարազատանայինք։ Ձեր շա՜տ կենացը։ Եվ... երանի՜ ձեր հարևաններին։

Զաքարը, գլուխը նետ թեքած ծիծաղեց։

— Էդ հարևանների՞ն ինչի հիշեցիր, ա՛յ Արշակ ախպեր,— զարմացավ Շարմաղը, որ շուրջն էր աչք ածում՝ պատրաստվելով վեր կենալ, որովհետև ուղեկից զինվորը երևացել էր խրամատի ծայրին։

— Նրանք ամեն առավոտ առաջինը ձեր երեսն են տեսնում,— արդեն սիրտ առած՝ պատասխանեց Արշակը։— Իմացիր, որ դրանից է սկսվում նրանց ամեն մի օրը, որ չի կարող բարի չլինել։

— Է՜, քե մատաղ, երեսդ տեսնող ամենն էլ մեկ չի լինում,— բացատրեց Շարմաղը, որ կարծես հասկանում էր Արշակի խոսքի խորքը։— Մարդ կա, բարևդ առնում է, թթվում։

Զաքարն աչքով արեց Արշակին և մտքում ասաց. «Թե կարծում ես՝ սնայպերը միայն դու ես, մոլորված ես։ Էդ Շարմաղը քեզանից դիպուկ որ չկրակի, քեզ հետ հավասար կմրցի»։

Շարմաղն ու Համեստը լրիվ դատարկեցին իրենց կապոցները։ Ուտելիքի մնացածը դասավորեցին պատրհաններում՝ հանձնարարելով ինչպե՞ս պահել, որ ոչինչ չփչանա։

— Ա՛յ հեր օրհնած, մեզանից բան կպրծնի՞, որ փչանա,— կատակեց Զաքարը։

— Տեսա՜նք, Զաքար ախպեր, տեսա՜նք,— արձագանքեց Շարմաղը։— Հերս ասում էր. «Մարդ ոնց ուտում է, էնպես էլ կաշխատի»։

Երբ պիտի հրաժեշտ տային, Արշակն իրարով անցավ։

— Բա մե՞նք ինչ տանք—տանեք։ Ախր, էսպես հավասարություն կլինի։

Ջաքարը վերին փոքրիկ պատրհանից դուրս բերեց արկի պարկուճից պատրաստած մի շողշողուն ճրագ և մեկնեց Շարմաղին։

— Գոմ ունե՞ս, տա՛ր,— ասաց։— Արշակի ձեռքի գործն է։

Շարմաղն ուզում էր հրաժարվել, մեկ էլ մտածեց, որ կնեղանա, վերցրեց։

— Լույսի մեջ կենաք,— մաղթեց նա։— Ամեն վառելիս պիտի հիշեմ։

Արշակն էլ մուշկահամուկի փունջը պոկեց պատի մեխից և անհամարձակ գրեց Համեստի ձեռքում։ Նրանք իրար ոչինչ չասացին։ Խոսքերի փոխարեն հայացքներ փոխանակեցին, որոնց մեջ եթե խոստում կար, մշուշոտ էր, անորոշ և հեռավոր աստղի լույսի պես աղոտ...

Երբ հասան խրամատի մուտքի մոտ և կանգ առան, արդեն լսելի էին հեռավոր զանգերի զողանջները։ Նրանք խուլ, ծանրծանր հարվածում էին, և Արշակին թվում էր, թե դրանք իր սրտի հարվածներն են, որ լսելի պիտի լինեն նաև Համեստի համար։

Ջերմագին ձեռքսեղմումներից հետո Շարմաղը նորից հիշեցրեց.

— Փարաքարում ում էլ որ հարցնեք Շուլավերցու աղջկա տունը...

— Ողջ-առողջ մնաք, հաղթանակով դառնաք,— մաղթեց Համեստը։

Արշակը նրա լուսաճառագ աչքերում շողշողուն արտասուք տեսավ և ինքն իրեն ասաց. «Անաստվածը մթան մեջ լույս կտա»։

* *
*

Իսկ Բաթումում հայ պատգամավորները ոչինչ չգիտեին ռազմաճակատում տեղի ունեցած նոր դեպքերից և իրենց պահում էին իբրև պարտվող, ավելի ճիշտ՝ արդեն պարտված կողմի ներկայացուցիչներ, որոնց միակ պարտականությունն է հանձնվել հաղթանակած կողմի ողորմածությանը և գութ հայցել։ Նրանք գո՞ւթ պիտի հայցեին թուրքերից...

Ալեքսանդր Խատիսովը հյուրանոցի մուտքի մոտ հանդիպել էր ֆերիկ վեհիբին, որն իրեն ոչ միայն ուշադրություն չէր դարձ-

ռել, այլև ցուցադրական արհամարհանքով շրջվել էր ու շուլալվել գերմանական «Մերսեդեսի» մեջ ու շտապ հեռացել։ Եվ դա հիմնավոր պատճառ էր, որպեսզի հայկական պատվիրակության ղեկավարն իր գործընկերներին ներկայանար սգվորի կերպարանքով, ապա, մի ժամ խորհրդավոր, ողբերգական գաղտնիք պահպանողի խաղեր անելուց հետո, հաղորդեր, որ իրենք վերջնականապես կորած են։

— Կորած ենք, և ոչ մի փրկություն չկա։ Բա Վեհիբն ինձ տեսնի և չուզենա՞ էլ բարևս առնել։ Կնշանակի՝ իրենք նստած են Երևանում և կարող են մեզ շան տեղ չդնել։ Չե՞ք հիշում, մեկել օրը Խալիլն ասաց. «Հայերդ պարտված եք և խոհեմ կլինեք, եթե զենքը ցած դնեք ու վերջ տաք ավազակային գործողություններին»։

Թուրքերը հայկական «ավազակային գործողություններ» են կոչում արևմտահայ ազատագրական զորախմբերի մղած կռիվները։ «Դուք այդ ավազակապետ Անդրանիկին մեր ձեռքը պիտի տա՞ք, թե՞ ոչ»,— վերջում սպառնալից իր խոսքն այսպես էր փակել Խալիլ բեյը՝ երևի մտածելով, որ բավական է՝ Անդրանիկի զորախումբն էլ դադարի գործելուց, որպեսզի իրենք իրենց կրունկների տակ զգան մի ամբողջ դիակնացած Հայաստան և նրա վրա խաչ քաշեն որպես իրենց երբեմնի թշնամու, որը հողին է հանձնված և այլևս չի կարող գլխացավանք պատճառել։ Բայց Անդրանիկը դեռ գլխացավանք շատ էր պատճառում, որովհետև նման էր անիրական, արտասովոր ուժի, ալլահի ղրկած դիվային պատժի, որը մեկ հայտնվում էր Դիլմանում, մեկ Սարիղամիշի տակ, մեկ Ղարաքիլիսայի մոտ կարող էր փակել թուրքական զորքի ճանապարհը և հետո էլ պիտի հայտնվեր Նախիջևանում կամ Զանգեզուրում՝ հատկապես այն ճամփաների տիրակալի դերում, որոնք ամենից շատ էին անհրաժեշտ Թուրքական կայսրության արևելյան քաղաքականությունն ապահովելու գործին։

Շատ էր դժվարացել հայ դիվանախոսների գործը։ Այնքան էր դժվարացել, որ նույնիսկ ամենաճարպիկ ու ամենաձեռներեց գործիչ համարվող Ալեքսանդր Խատիսովը, անգործության մատնված, չգիտեր ի՞նչ պետք է անել ծուղակից դուրս գալու համար։ Նրան ամենից շատ հավասարակշռությունից հանել էին կովկասյան դաշնակիցները, որոնց հետ մի ամիս առաջ փայ-

փայում էին ոչ այնքան մռայլ երազներ և հույս ունեին, թե պիտի ստեղծեն համակովկասյան մի հզոր ընտանիք, որի համար այլևս սարսափելի չպետք է լինի հարավի գորշ գայլը։ Ի՞նչ եղան այդ երազներն ու հույսերը։ Պարզ է, թե Բաքվի մուսավաթականներն ինչո՛ւ այնքան շուտ և այնպես պատրաստակամ ընկան Թուրքերի գիրկը. Օսմանյան եռապետության ներկայացուցիչներին հաջողվեց նրանց գլուխները լցնել համաթուրքական ու համաիսլամական զառանցանքով։ Իսկ մենշևիկնե՞րը։ Նրա՞նք ինչու են փախչում հայերի համագործակցությունից։ Մի՞թե կարծում են՝ բավական է գերմանական հենակներով ոտքի կանգնեն և անմիջապես կկարողանան ինքնուրույն շարժվել, նույնիսկ հաջող քայլ գցել մեծ-մեծ տերությունների հետ։ Այնօր գեներալ Լոսովը վրացիների այցելությունից հետո մի քիչ բացսիրտ էր դարձել իրենց հետ և բաց արեց վիրա-գերմանական հնարավոր դաշնակցության եթե ո՛չ բոլոր խաղաքարտերը, ապա գոնե ամենահիմնականները։ Ասում էր. «Վրացիների հետ մենք տնտեսական մեծածավալ գործակցություն կունենանք. նրանց երկրի մանգանի հանքերն ու մերձարևադարձային այգեգործությունը Գերմանիային կտան այն, ինչ մենք ապարդյուն փնտրում ենք ուրիշ երկրներում... Իսկ Հայաստա՞ննինչ ունի։ Հայերը գերմանական օգնության համար ինչո՞վ կարող են վարձահատույց լինել»։ Գերմանացի զորավարը պատասխանի էր սպասում, իսկ Հայաստանի շահերի ու իրավունքների պաշտպանդիվանախոսը չգիտեր, թե իր «պաշտպանած» երկիրն իրապես ի՞նչ ունի և ինչո՞վ կարող է գայթակղիչ դառնալ շահամոլ եվրոպացու համար։ Իսկապես ի՞նչ ունի Հայաստանը, օգտակար հանածոներ կա՞ն այնտեղ, հողը կարո՞ղ է տալ այնքան բարիք, որ կարողանա կերակրել ոչ միայն իր վրա ապրողին, այլև լցնել գերմանացի շահամոլի անկուշտ աչքը։ Ի՞նչ Հայաստան էր մնացել Թուրքական բռնագրավումներից ու հարևանների սանձարձակ ոտնձգություններից հետո. մի Արարատյան նահանգ ու Սևանի չոր ափերը։

Խատիսովը խորհրդակցեց իր պատգամավորության մյուս անդամների հետ, և նրանք էլ չկարողացան շատ բան ավելացնել այն պատկերացումին, որ ինքն ուներ Հայաստան աշխարհի մասին։ Պապաշանովը զարմացավ Ֆոն Լոսովի տարօրինակ հետաքրքրասիրության վրա. «Հայաստանի չոր քարերից ի՞նչ պիտի

կորզի այդ ցնդած գերմանացին»։ Սիմոն Վրացյանը ծոցատետրում գրեց, որ Թիֆլիս վերադառնալուց իր «Հորիզոնում» անպայման հոդվածաշար կտպագրի Հայաստանի գյուղատնտեսական ու երկրաբանական առանձնահատկությունների մասին։ Հովհաննես Քաջազնունին հիշեց Շուստովի կոնյակը և զգուշացրեց միաժամանակ, թե դա տնտեսական փոքրածավալ միավոր է, և, ապա, դժվար թե կոնյակի մենաշնորհի տնօրեն Շուստովը համաձայնի ունենալ գերմանացի գործընկերներ։

Հովհաննես Քաջազնունին, բնավորությամբ ինքնամփոփ մարդ լինելով, ժամանակն անց էր կացնում օրվա դեպքերի վրա խորհրդածելով և մտորումներն էլ հաճախ գրի էր առնում մի ընդհանուր հաստափոր տետրում, որը դարձել էր նրա խոստովանությունների մատյանը։ Այնօր նա սրտի ցավով գրեց իրենց վերջին խորհրդակցության մասին։ Այս գրառումը նա փակում էր ցավագին հարցերի մի փնջով. «Եվ այս մե՞նք ենք, որ եկել ենք պաշտպանելու այն երկրի դատը, որի մասին նվազագույն պատկերացում իսկ չունենք։ Զգիտենք՝ ի՞նչ կա այնտեղ, ի՞նչն է կազմում նրա հարստությունը և ինչի՞ կարիքն ունի։ Իսկ ժողովրդի՞ մասին ինչ գիտենք. ի՞նչ է մտածում, ի՞նչ է ուզում, ո՞րն է նրա ցավը, ինչպե՞ս պիտի դարմանել։ Ինչո՞վ կարող ենք օգնել, որ նա ոտքի կանգնի և շարունակի իր պատմական ճանապարհը։ Ո՞վ դժբախտ իմ ազգ, դու ե՞րբ ես ունենալու քեզ արժանի առաջնորդներ»։

Հայ պատվիրակներն այսօրինակ անպտուղ մտորումներով էին սպանում իրենց օրը։ Իսկ Վեհիբ փաշան նախքան նրանց ղեկավար Ալեքսանդր Խատիսովին կռնակ ցույց տալը առել էր Սարդարապատում իր զորքի կրած պարտության բոթը և շտապում էր ռազմաճակատ։

Այդ ֆերիկ-մարշալը, որ վայելում էր երիտթուրք բռնապետության պարագլուխների վստահությունը, իսկապես փորձառու և գրագետ զորավար էր, որպեսզի կարողանար երեք-չորս տարիների պատերազմական առանձին դրվագներից գաղափար կազմել հայկական զորախմբերի ռազմական կարողությունների մասինև որևէ լուրջ դիմադրություն սպասեր նրանց կողմից։ Վասպուրականի ինքնապաշտպանական մարտերն ու Դիլմանի ճակատամարտը, Էրզրումի կռիվն ու կամավորական գնդերի հանկարծահաս հարվածները Վեհիբին ստիպում էին մտածել, որ

Հայկական զորքը մի տեղ պետք է ասի իր վճռական խոսքը։ Եթե այդ խոսքը չասվեց Երևանում, ապա կասվեր Սարիղամիշում։ Սարիղամիշում, անշուշտ, ռուսական հրամանատարությանը համակած խուճապը խանգարեց, բայց դեռ թիկունքում Կարսն էր՝ Անդրկովկասի նախաշեմի հզոր բերդամրոցը, որի տերը վիթխարի առավելություն պիտի ունենար հարձակվող բանակի համեմատությամբ։ Կարսն էլ ընկավ, և Վեհիբը գիտեր, որ դա հայ զորքի անճարակությունից չէր, այլ իր ու Ջեմալ-բեյի այն գործարքից, որի մասին հայերն իմացան բերդամրոցի անկումից հետո։ Ալեքսանդրապոլի հեշտ նվաճումը, ճիշտ է, Վեհիբին տոգորել էր մեծ ինքնագոհությամբ և, մանավանդ, արհամարհանքով հայոց զորքի հանդեպ։ Բայց նա գիտեր, որ կա ժողովուրդ, որի բեկորները երկրի տարբեր կողմերից հավաքվել են Արաքսի ձախափնյակը։ Հավաքվել են ոչ թե մեռնելու, այլ ապրելու համար։ Իսկ նա, ով որոշել է ապրել, դժվար թե հեշտությամբ հանձնվի թշնամուն։ Սակայն այսքանից հետո եթե ֆերիկ Վեհիբն սպասում էլ էր ժողովրդական ուժի մի պոռթկման, ապա ո՞չ Սարդարապատում, ուր իրենք մտել էին շքերթով, և բոլորովին չէր երևում, թե նրա թիկունքի բաց տարածություններից որևէ վտանգ է սպառնում։

Արդահանի վրայով գիշերը նա հասավ Ալեքսանդրապոլ և, վրայի փոշին անգամ չթոթափած, գլխին հավաքեց ճակատի սպայակույտն ու դիվիզիաների հրամանատարներին, նրանց գլխին էլ թափեց իր ցասումն ու հայհոյանքի տարափը։ Շևքի փաշան՝ Սարդարապատի դաշտում ջարդ կերած Երևանվեցերորդ դիվիզիայի հրամանատարը, կուչ էր եկել նրա առաջ և շախսեյ-վախսեյի հանձնված մոլեռանդի նման սպասում էր իր օրհասին։

Կովկասյան ճակատի հրամանատարի առաջ խեղճ-խեղճ կծկվել էին Կողբի ու Սուրմալվի կողմերում տեղակայված զորամասի հրամանատար Մյուրսալ փաշան, Շիրակում կազմ ու պատրաստ դեպի Ջուլֆա, իսկ այնտեղից էլ Բաքու գնալու համար նախատեսված դիվիզիաների հրամանատարներ Հիլմի փաշան ու Քյազիմ Կարաբեքիր բեյը, ինչպես նաև Թիֆլիսի վրա աշշավող զորքերի հրամանատար Ջավիդ փաշան։ Նրանք ամբողջ գիշեր անքուն էին անցկացրել, որովհետև կարգադրված էր եղել հավաքվել Ալեքսանդրապոլում և սպասել Վեհիբ փաշայի

ժամանումին։ Ալեքսանդրապոլում էլ իմացել էին՝ ինչի՞ համար է արված այդ կարգադրությունը և վայրկյան առ վայրկյան սպասել էին նրա հայտնվելուն։ Հիմա տեղները նստած ննջում էին և Վեհիբի յուրաքանչյուր գոռոցի վրա վեր էին թռչում, աչքները տրորում։ Մի անգամ էլ վեր թռան, տեսան՝ Վեհիբը կանգնել է Շեքի փաշայի քթի առաջ կատաղությունից եռում է.

— Ա՛յ հայվան, հայվա՛ն օղլու, հիմա աշխարհում հինգ դիվիզիա հայ չի մնացել,— զորավարն էր ասում՝ ցուցամատը տնկած Շեքի փաշայի աչքի առաջ։— Քո դիվիզիայի դեմ նրանք ինչպե՞ս կարող էին հինգ դիվիզիա հանել։

— Վալլա՛հ, ֆերիկ, այդքան զորք էին հանել մեր դեմ, և դեռ ետևից էլ անվերջ գալիս էին նորերը։ Գնացքը գնում-գալիս էր։ Գալիս նոր զորքն էր բերում, գնալիս էլ տանում էր կոտորվածներին ու վիրավորներին։ Մենք ջարդում էինք, նրանք նորերն էին բերում։

Այն ժամանակ Վեհիբը հեռացավ նրանից և արտասանեց իր հրամանը, որն անմիջապես գրի էր առնվում գրագիրների կողմից։

— Հրամայում եմ, որ Հինգերորդ դիվիզիան Բորչալուից ետ դառնա և, միանալով Տասնմեկերորդին, Ղարաքիլիսայի ուղղությամբ ավեր ու մահ սփռելով հասնի Երևան։ Կողքում ու Սուրմալվում արևկող անող մեր զորքը... Քեզ հետ եմ, Մյուրսալ փաշա, բավական է գլուխ պահես, ի՞թ օղլու... Զորքերդ անցկացրու և այդ գյավուրների թիկունքը կտրելով այնպես հարվածիր, որ կենդանի մարդ չմնա։ Գլխի՞ ընկա՞ր։

Մյուրսալ փաշան քնաթաթախ աչքերը տրորեց, վեր թռավ տեղից և խոնարհվեց.

— Աչքի՛ս վրա, ֆերիկ, գլխի՛ս վրա։

Ապա կարգադրեց, որ Հիլմի փաշան ու Քյազիմ Կարաբեքիրն իրենց զորքերը հանեն պահեստային վիճակից ու փոխադրեն Սարդարապատի ճակատը։

«Սարդարապատի ճակատ» գոյություն չէր ունեցել ո՛չ քարտեզներում, ո՛չ էլ կռվող կողմերի ծրագրերում։ Այն ծնվեց հանկարծ, միանգամից, մայիսի 22-ի կեսօրին, երբ հայերը թուրքական բռնակալության հայակործան ծրագրի դեմ հանեցին կռվելու և հաղթելու իրենց կամքը։

Սարդարապատի՞ ճակատ։ Ո՞նց թե։ Իսկ դա ի՞նչ ճակատ է,

որ պիտի կլանի Ատրպատականի ու Ադրբեջանի գրավման համար նախապատրաստած գիվիզիաները։ Հիլմի փաշան ու Քյազիմ Կարաբեքիրը, որ այդ օրերին կանխավայելում էին Բաքվում հաղթականորեն իրար հանդիպելու և այնտեղից իրենց կառավարությանը Ադրբեջանին տիրանալու մասին զեկույց հղելու երջանկությունը, մեկ-մեկու նայեցին տարակուսանքով։ Եվ այդ հայացքափոխանակությունը չվրիպեց Կովկասյան ռազմաճակատի հրամանատարի լարված ուշադրությունից։

— Ի՞նչ եք գլուխներդ օրորում ծուլ եղների նման,— գոռաց Վեհիբը։— Բավակա՞ն չէ՝ որքան թիկունք պահեցիք։

Քյազիմ Կարաբեքիրը համարձակվեց բացատրել իրենց տարակուսանքը։

— Ֆերիկ, իմ երեսը քո ոտի տակ,— ասաց,— առջևում Բաքու կա, մեծ կռիվներ պիտի լինեն Թավրիզից մինչև Դերբենդ։ Կառավարությունն ի՞նչ կասի, եթե մենք մեր լավագույն ուժերը խարշենք Սարդարապատի պես աննշան ճակատներում։

— Այդ խելքին եք, հա՜, որ մի բուռ գյավուրներ ձեր քթին տալիս են ու ետ շպրտում,— հեգնանքով պատասխանեց Ֆերիկ Վեհիբը։— Մենք Բաքու կարող ենք հասնել միայն Սարդարապատով ու Երևանով։ Ահա այստեղիս դեմ է առել Հայաստանը,— և Վեհիբը ցուցամատն անցկացրեց կոկորդի վրայով։— Մենք կամ պիտի հողին հավասարեցնենք մի թիզ մնացած այս Հայաստանը, կամ էլ չենք տեսնի Բաքվի երեսը։ Այս է մեր միակ ու իսկական ճանապարհը։ Հասկացա՞ք, ա՜յ անխելքներ։

Յաղուբ Շևքի փաշան ուրախ էր, որ Կովկասյան ճակատի թուրքական բոլոր ուժերն ուղղվում են Սարդարապատ-Երևան ճակատի վրա։ Սակայն ներքին մի վախ ուներ իր հաղորդած տեղեկությունների համար։ Գուցե իր ենթականերն ուռճեցրած էին ներկայացրել հայոց զորքի քանակը։ Իսկապես, նրանք որտեղի՞ց պիտի հինգ դիվիզիա հանեին Սարդարապատի ուղղությամբ։ Վախեցածի աչքին մեկը տասի տեղ է երևում։ Եվ այն ժամանակ ինքը խաղք ու խայտառակ կլինի կայսրության բանակների առաջ։

— Ձեզ երկու օր ժամանակ եմ տալիս,— կտրական հայտարարեց Վեհիբ փաշան։— Երկու օր, և դուք պատրաստ պիտի լինեք արյան մեջ խեղդելու գյավուրների հինգ դիվիզիաները։ Իսկ

դո՜ւք,— նա մատը տնկեց դեպի Հիլմի փաշան ու Քյազիմ Կարաբեքիրը,— ժամանակին զորքը տեղ հասցնելու համար կօգտվեք երկաթգծի ծառայությունից։

* *
*

Երեկոյան Միքայելն ու Հովսեփը հոր մոտ գնացին, երբ արդեն զորամասում համատարած հանգիստ էր, և լռել էին նույնիսկ այն հատուկենտ կրակոցները, որոնք դիրքերում պահում էին պատերազմի շնչառությունը։

Ռազմաճակատ գալուց հետո Հովսեփն առաջին անգամ էր այցելում հորը։ Միջնորդ էր դարձրել Միքայելին, որովհետև չգիտեր՝ հայրն ինչպե՜ս պիտի ընդուներ իր ինքնագլուխ վճիռը։ Չգիտեր ու անհանգստանում էր, չնայած Միքայելը փորձում էր համոզել, որ տարօրինակ ու սարսափելի ոչինչ չի պատահել, ընդհակառակը, հայրն ուրախ է, որ իր որդիները եկել են մասնակցելու հայրենիքի փրկության պատերազմին։

Դանիելբեկն ի՜նքը մոտեցավ վրանի մուտքի առաջ վարանոտ կանգնած Հովսեփին, ժպտալով գրկեց, սեղմեց կրծքին, համբուրեց ճակատը, ապա բաց թողեց և ճրագի աղոտ լույսի տակ տնտղեց նրա բոյ-բուսաթը։

— Կարդին տղա ես դարձել, հա՜,— շինծու անտարբերությամբ նկատեց հայրը։— Բեղ է՞լ ես թողել։

Հովսեփը, կարծես հոր բացակայությամբ շոշ տված հասակից ամաչելով, մի ոտից մյուսն էր հենվում, հայացքն աջ ու ձախ էր գցում։

— Դե, ի՞նչ ես քեզ կորցրել,— խոսեց կողքին կանգնած Միքայելը և ուսը հրեց։

Հայրն ուրախությունից խոսք չէր գտնում ասելու։ Տղան իսկ և իսկ Փիրումյան ծառի պտուղն է՝ բարձրահասակ, ուսերը լայն ու ամուր։ Երեսկահատը որ իրենցն է՝ թուխ ու կրակոտ։ Թե չէ, փոքրուց հասակ չէր գցում և կարծում էին՝ քեռոնց է քաշել։

— Լևո՞նն ինչպես է,— գորովանքով հարցրեց հայրը։— Մեծանո՞ւմ է։ Ո՞նց է սովորում։

— Լևոնը լավ է։ Մայրիկը գոհ է նրանից,— երեխայորեն պատասխանեց Հովսեփը։

«Մայրիկը գոհ է», ուրեմն լավ է սովորում։ Երանուհի Խալաթյանց-Փիրումյանի գոհունակությանն արժանանալու համար զավակները պետք է ձեռք բերեին ուսումնական հաստատության բոլոր գովեստներն ու բարձրագույն մեդալները։

— Դե, ի՞նչ եք կանգնել, նստե՛ք,— վրանի եզրով շարված ոռք քարերը ցույց տալով՝ առաջարկեց հայրը։— Սրանք են մեր աթոռներն ու բազկաթոռները։— Եվ ինքը նստեց նրանցից մեկի վրա։

— Երևի պիտի հանգստանաք, ուշ է,— ասաց Միքայելը և գլուխը Հովսեփի կողմը դարձրեց.— Ե՛վ ուզում էր տեսնել, և՛ անհանգստանում էր։ «Հայրիկը,— ասում է,— բարկացած կլինի վրաս, որ առանց հարցնելու վեր եմ կացել-եկել»։

— Հայրիկը բարկացած չէ։ Հայրիկն ինչո՞ւ պիտի բարկանա,— դժկամ խոսեց հայրը։— Բայց նման դեպքերում հարկ է խորհրդակցել ծնողների հետ։ Նրանք երբեք էլ ձեր վատը չեն ցանկանա և չեն տա այնպիսի խորհուրդ, որի համար դուք երբևէ ամաչեք։

— Մայրիկի հետ ենք որոշել, հայրիկ,— դարձյալ երեխայորեն արդարացավ Հովսեփը։— Իսկ դուք այսքան հեռու։ Մինչև նամակ գրեինք, մինչև պատասխան ստանայինք, որքա՜ն ժամանակ պիտի անցներ։

— Իսկ ինչպե՞ս որոշեցիք միանգամից ու այդպես կտրական։

— Բարեգործականը ժողով էր հրավիրել։ Խոսեցին ռազմաճակատի վիճակի մասին։ Կոչ արին, որ երիտասարդները մեկնեն ռազմաճակատ։ Մարիամն ու Սուփիկն էլ գթության քույրեր գրվեցին...

— Նրանք է՞լ են մեկնել,— անհանգստացավ Դանիելբեկը։

— Դեռ ոչ, հայրիկ։ Նրանք պետք է բժշկություն սովորեն, հեռո՛։ Իսկ տուն դառնալուց մտածեցինք, որ իմ տեղն այստեղ է։ Եկա Երևան, Ազգային խորհրդում իմացա հորեղբայր Պողոսբեկի հասցեն...

— Ուրեմն, մի ժողովն այդպես ամեն ինչ շուտ տվեց։

— Այն ժողովին Վահան Տերյանն էլ էր ներկա։ Մեզ տուն ուղեկցեց։ Ճանապարհին շատ խոսեց ճակատի մասին։— Հովսեփը հանկարծ հիշեց մի վաղեմի հանդիպում.— Միտս է, որ մի անգամ պրոֆեսոր Ադոնցի և քեռու հետ եկավ մեր տուն։

խոսում էիր, և ձեզ ասաց. «Մենք ի՞նչ ենք որ. ահա ծանր ժամանակներ են վրա հասնում, և մեր ազգին պետք են լինելու զինվորներ...»։ Այս հավաքին էլ մեկը բարձրագոչ խոսքեր ասաց մեծահարուստների նվիրատվությունների մասին։ Նա տեղից վեր կացավ և տխուր մոտեցավ ամբիոնին, երանի տվեց կամավորներին։ «Ահա նրա՞նք են,— ասաց,— արժանի բոլոր բարձր խոսքերին. գնում են աստծուց ստացած միակ կյանքը պարգևելու իրենց հայրենիքին... Իսկ մենք այստեղ տաք տեղերից ելնում, կուրծք ենք ծեծում։ Նախանձում եմ,— ասաց,— ճակատ մեկնող վերջին կամավորին։ Ցնայած նրանց շարքերում վերջինը չկա»։ Եվ պարզ երևում էր, որ հոգով նրանց հետ է։ Իսկ մարմինը... մարմի՞նը... այրվող մոմի պես սպառվում է։

Հայրն ինքնաբերաբար տղայի հետ ղրուլցի մեջ մտավ՝ նրան հավասարի տեղ դնելով, նույնիսկ զգուշանալով, որ հանկարծ այդ մեծացած փոքրի առաջ չխաթարվի իր հայրական մեծությունը։

— Իսկ քեզ ճանաչե՞ց Վահանը,— հարցրեց հայրը՝ ինքն էլ չիմանալով ինչո՞ւ անպայման ուզում էր, որ ճանաչած լինի, նույնիսկ խոսքեր փոխանակած։

— Ճանաչեց, այո՛,— ժպտուրախ պատասխանեց Հովսեփը։— Երբ ցուցակագրում էին, ազգանունս լսելուն պես տեղից վեր կացավ, հարցուփորձ արեց, ուրախացավ, որ Միքայելն էլ ճակատում է, ձեզ մոտ։ Իսկ Մարիամի ու Սոփիկի անուններից լսելուն պես երկար խոսեց, իհարկե, հիմնականում ձեր մասին։ Ժողովից հետո էլ մինչև տուն ուղեկցեց մեզ, մայրիկին էր սիրտ տալիս, որ չընկճվի։

Հայրն ու կրտսեր որդին խոսում էին այն երեկոյից, «մայրիկից» ու տնեցիներից։ Իսկ Միքայելը մտքով Վահան Տերյանի հետ էր, համալսարանական իր ընկերոջ, որը թեպետ հինգ-վեց տարով մեծ էր իրենից, Պետերբուրգի համալսարանում հանդիպելու առաջին իսկ օրը մտերմացավ, և այնուհետև միասին պիտի անքուն գիշերներ անցկացնեին հայագիտական դիսցիպլինների, արևելյան լեզուների ուսումնասիրության վրա։ Դասախոսները Մոսկվայից փոխադրված հասուն, սակայն արևելյան լեզուների բնագավառում համարյա անպատրաստ Վահանի համար երաշխավորել էին արդեն ճանաչված ուսանող Միքայել Փիրումյանին. «Նա ձեզ հետ կպարապի, և դուք կարճ ժամանակում

կտիրապետեք անհրաժեշտ լեզուների ազերին,— ասել էր Նիկողայոս Ագոնցը։— Եվ բոլորովին էլ մի անհանգստանաք. նա արդեն պատշաճ փորձ ունի, Կովկասից եկած մեր աղդակիցներին հաճախ է այդպիսի օգնություն ցույց տալիս»։

Վահան Տերյանը Միքայելի օգնությունն ընդունում էր անսքող բավականությամբ, մանավանդ, երբ զգում էր, որ ինքն էլ ավելորդ մարդ չէ Միքայելի ու նրա հարազատների համար։ Ցուրտ ու անհրապույր հյուսիսում մայրաքաղաքային անտարբերության մեջ նա գտել էր իր հայրենի եզերքի ջերմությունն առկայծող հոգիներ, որոնց հետ այնպես հաճելի էր շփվելը, այնպես մխիթարող ու պահպանող։ Անկասկած նա գիտեր, որ սկզբում իրեն ընդունել են որպես հայկական գրական ու ոչ գրական շրջաններում միանգամից անուն հանած բանաստեղծի, որի տխրաթախիծ երգերին է փարել հատկապես ժամանակի երիտասարդությունը։ Մարիամն ու Սոփիկն անգիր գիտեին իր առաջին գիրքը և հաճախ ընթրիքի սեղանի շուրջ կամ իր ու Միքայելի պարապմունքների ընդմիջումներին, իրար հերթ չտալով, արտասանում էին, քննում, արտահայտում իրենց կարծիքները։ Երանուհի Խալաթյան-Փիրումյանն իր հավասարակշիռ, բարեկիրթ մայրությամբ, նույնիսկ գիտական զրույցների մեջ ունեցած նուրբ ու ճշգրիտ դիտողություններով այնպիսի հարազատություն էր հաղորդում իրենց փոխհարաբերությունների մթնոլորտին, որ Վահանը մոռանում էր շրջապատի օտարությունը։ Այդ ընտանիքում, հատկապես Դանիելբեկի բացառիկ դարձած ներկայությամբ, նա հաճույքով տեսնում ու հասկանում էր, որ հայրենիքից հեռու, հայրենիքով ապրող մի ընտանիք է դա, որի ոլորտում մեղմանում է հայրենակարոտի տվայտանքը, և հոգու մեջ բորբոք է մնում այն կանթեղալույսը, որի հետ սարսափելի չէ ոչ մի խավար։

Իսկ Միքայելը, բարձր գնահատելով Տերյանի տաղանդը, զգալով նրա արվեստի աննախադեպ կատարելությունը, զմայլված էր նրա գիտական հետաքրքրություններով։ Չէ՞ որ այդպես հանկարծ ու միանգամից գրական փառքի տիրացած մեկ ուրիշը կարող էր վերևներից նայել գիտական ու հասարակական ոլորտներին, և դա ոչ ոքի զարմանալի չէր թվա։ Իսկ Տերյանը, այդ փառքին ու շուրջն ամենուր լսելի ծնծղաներին անհաղորդ, եկել, հայոց լեզվի պատմական ատաղձներն ու աղերսներն է ուսում-

նասիրում, հայոց պատմության խորքերն է հետախուզում՝ հեռավոր նախապատմական ժամանակներից մինչև այսօր, հարևան ու ոչ հարևան երկրների և ազգերի հետ ունեցած ամեն տեսակ առնչությունների մեջ։ Տերյանը պապակվածի պես խմում էր գիտության ակունքներից։ Երեկոյան միասին քննում էին գրաբարի ու հին մեռած լեզուների աղերսների հարցը, իսկ հաջորդ օրը նա ներկայանում էր այդ հարցի մեջ այնքան խորացած ու տարածուն հայացքով, որ Միքայելն ամաչում էր նախորդ օրվա իր ուսուցչական կեցվածքի համար։ Այդ պատճառով էլ հիմա ամեն անգամ նրա անունը տալիս հոգում ծփում էր նախ և առաջ հիացումի զգացումը...

Հայրն զգաց, որ Միքայելը մտքով բացակա է, անհաղորդ իրենց զրույցին և կատակով նկատեց.

— Հո քնա՞ծ չես։

— Քնած չեմ,— մեղավոր ժպտաց Միքայելը։— Վահանի հետ էի, համալսարանում, տանը։

— Մեզանից ողջույն հաղորդեցի՞ր։

— Հաջորդ անգամ անպայման կհաղորդեմ։

— Ուզում եմ իմանալ, թե ո՞նց է գնում Հովսեփի առուտուրը Պողոսբեկի հետ,— հայրը փորձեց զրույցի նյութը փոխել։— Գնդի հրամանատարը շա՞տ չի երես տալիս իր ազգականին։

— Երեսն իմ ինչի՞ն է պետք, հայրիկ,— փորձեց երեսը թաքցնել Հովսեփը։— Ես ուզում էի այնպես անել, որ գնդում չիմանան էլ, թե մենք հարազատներ ենք. ասում էի՝ ազգանունս չհայտնեմ։

— Ազգանունը թաքցնե՞լ... ինչպե՞ս կլինի։ Եվ առհասարակ ի՞նչ կարիք կա որևէ բան թաքցնելու։ Ազգանունից պիտի ամաչես այն ժամանակ, երբ անարժան քայլ կատարես։ Ա՛յ, Միքայելից օրինակ վերցրու. իմ զորամասում ամենապատասխանատու առաջադրանքներն ինքն է կատարում։ Իսկ դա երկուսիս համար էլ լավ է։

— Կարող եք վստահ լինել, որ անհարմար զգալու առիթ չեմ տա, հայրիկ,— ամոթխած, շիկնելով խոստացավ պատասխանին։— Հորեղբորն էլ եմ ասել։

Բաժանվելուց առաջ հայրը երկուսին էլ հանձնարարեց շուտ-շուտ նամակ գրել մորը, ապա նախկինում երբեք չբացահայտած, չցուցադրած ջերմությամբ գրկեց, մի քանի անգամ համբուրեց՝ նախ փոքրին, հետո մեծին։

«Պաշտոնական» այս բաժանումից հետո հայրը զավակների հետ վրանից ելավ, որոշ տեղ քայլեց նրանց հետ։

Արարատյան դաշտի երեկոն գիշերանում էր հանդարտ և այնպես խաղաղ, կարծես ցերեկը ոչ վառող է պայթում, ոչ հողն է տնքում արկերից ու գնդակներից խոցոտված։ Թփերի ու կանաչների մեջ կայծոռիկները հազիվ էին երևում, որովհետև լուսնկան վերից կաթնալույսով էր պարուրել աշխարհը։ Գարշ ու ընդգծուն երևում էր դաշտի անսահմանության մեջ վեհորեն բազմած Արարատը՝ ուսին լուսնյակի ճերմակ սկավառակը, գլխին՝ թարթռտվող աստղաբույլեր։

— Ուրիշ տեղ տեսե՞լ եք այսպիսի գեղեցկություն,— հայացքն Արարատի պատկերին, հուզված խոսեց հայրը։

— Ամեն անգամ ուրիշ տեսք է ունենում, ուրիշ հմայք. և՛ ինքն է, և՛ ինքը չէ,— արձագանքեց Միքայելը։

— Ինձ միշտ այնպես է թվացել, թե սա մեր ազգի, մեր գոյության, մեր նախնյաց ոգին է՝ այսպես ծանր, հավերժորեն կանգնած մեր բոլոր ճանապարհների վրա,— երազուն, որդիների համար արտասովոր ոգևորությամբ խոսեց հայրը։— Կարծես մեկ տխուր է, մեկ ուրախ։ Երբեմն ամպ է առնում վրան, ծածկվում աչքից. ասես շատ է վշտացած կամ էլ մռայլ մտքեր են պարուրել։ Երևի թե մեր ամեն քայլով ազդում ենք նրա վրա...

— Հայրիկ, բոլորովին էլ չանհանգստանաք մեզ համար,— երեխայի անկեղծությամբ խոսեց Հովսեփը։— Տեսնո՞ւմ եք՝ մենք այստեղ ենք։ Շուտով Մարիամն ու Սոփիկն էլ կգան։— Եվ հանկարծ նա հիշեց.— Հայրիկ, երեկ գնդով մենք երդում տվինք։ Եվ գիտե՞ք ով էր ընդունում մեր երդումը։

— Գարեգին եպիսկոպո՞սը։

— Վա՜յ, աստվա՜ծ, այդ ի՜նչ մարդ է։ Հորեղբայրն ասում է. «Սրան որ արկի բերանը տաս, ուղարկես թուրքերի վրա, այնտեղ կպայթի ու մի գունդ ասկյար կկոտորի»։

— Այսօր մենք երդվեցինք... Եվ դրանո՞վ պիտի հաղթենք, հայրիկ,— հարցրեց Միքայելը, հանկարծ էլ զգաց իր հարցի անմտությունը և զղջաց։

— Նաև դրանո՜վ,— պատասխանեց հայրը։— Երդվողը հաղորդվում է մի սրբության ու անմահ ոգու, մի մեծ խորհուրդի,

որը շատ բան է փոխում։ Եվ հետո էլ, այն ո՞վ է պարզել, թե ի՞նչն է հաղթանակն ապահովում։ Կարո՞ղ ես ասել, թե զորավարի ի՞նչն է հաղթում։ Խե՞լքը։ Այո՛, խելքը և էլի՛ ինչ-որ բան։ Ո՞րն է այդ ինչ-որ բանը։ Խիզախությո՞ւնը։ Խիզախությո՛ւնը և էլի՛ ինչ-որ բան։ Այս մի ինչ-որ բա՞նն ինչ է։ Երևի ճարպկությո՞ւնը։ Ճարպկությո՛ւնը և էլի՛ ինչ-որ բան։ Դարձյա՛լ ինչ-որ բան։ Առանց դրան անհնար է, որովհետև զորավարը պետք է ամեն ինչ ունենա։ Ամեն ինչ և էլի ինչ-որ բան։ Գուցե այս վերջին ինչ-որ բանն էլ բա՞խտն է։ Այո՛, բախտը ևս։ Մի քիչ էլ բախտը պիտի բերի։ Առանց դրան իսկապես անհնար է։

Մենակ մնալով՝ Դանիելբեկը խանդաղատանքով մտածեց Հովսեփի մասին։ Արդեն տղամարդ է, չնայած ասել-խոսելուց երևում է, որ դեռ կարգին հրաժեշտ չի տվել պատանությանը։ Եվ ինչպե՞ս կարող էր հրաժեշտ տալ, երբ լրիվ տասնութ էլ չկա։ Թե՞ կա։ Կասկածեց իր իմացածի վրա։ Հայտնի էր միայն, որ ծնվել է քսաներորդ դարի առաջին օրը, և ծննդյան առիթով խնջույքի հավաքված բարեկամները նրա համար գուշակում էին երկար կյանք ու մեծ երջանկություն։ Գտնում էին, որ դարը բացող Փիրումյանը կհասցնի նաև փակել այն։ Իսկ ինքն ասաց. «Դա մեր տոհմի տղայի համար մի առանձնակի դժվարություն չի ներկայացնում. մերոնցից շատերն ապրել են 120—130 տարի։ Դուք մաղթեցեք, որ բացվող դարը երջանիկ լինի։ Թող այս դարում ծաղկի ու խաղաղ բազմանա հայությունը, որ քանի դար մաշվում ու քրքրվում է»։ Այն ժամանակ սեղանի ծայրին նստած Աբիսողոմ հայրիկը, որ իր հեռու Նախիջևանիկից հյուր էր եկել որդուն, վեր կացավ տեղից, փառահեղ բեղերը սղալեց, իր բերած հուրհրան գինու գավաթը բարձրացրեց, թե. «Առաջ ու առաջ սաղ աշխարհինը լինի, հետո էլ մերը»։ Գինով էր նորածնի քեռի Գրիգոր Խալաթյանցը, փորձեց հակաճառել ծերունուն։ «Ա՛յ Աբիսողոմ հայրիկ, խոսք էր, էլի՛, ասացինք, հո «սաղ աշխարհիդ» չզրկեցինք իրեն պատկանող երջանկությունից»։ «Հա՛, քե մատաղ, խոսք էր, ասացինք,— իրենը պնդեց Աբիսողոմ հայրիկը։— Իսկ մարդս իր խոսքի մեջ է»։

Դանիելբեկը հիմա էլ չի հիշում՝ ինչպե՞ս մեծացավ Հովսեփ տղան։ Առաջնեկի վրա՞ էր սպառել իր ամբողջ սերն ու գորովանքը, թե՞ տևական բացակայություններն էին պատճառը. այնպես չկապվեց նրա հետ, ինչպես որ կուզենար, ինչպես եղել

էր Միքայելի ու Մարիամի հետ։ Սակայն Երանուհին իր նամակներում ամենից շատ նրա մասին էր գրում, նրա երեխայությունն էր նկարագրում, նրա շարաճճիությունները ու շարությունները։ Ամենանվազն էր եղել իրենց զավակների մեջ, սակայն նրանից հանգիստ չունեին բակի տարեկից երեխաները։ Առանձնակի սեր չուներ ուսման նկատմամբ, հարկադրանքով էին նստեցնում դասերը պատրաստելու, սակայն տուն էր բերում միայն բարձր հառաջադիմության վկայություններ։ Ուսուցիչը դասը պատմում էր, դա արդեն բավական էր նրան։ Դասախոսություն էր լսում, տուն գալուց կարող էր նույնը կարդալ բառ առ բառ։ Մոր ու քույրերի հետ գնացել էր Հայկական բարեգործականի կազմակերպած գրական երեկոյին, ուր Վալերի Բրյուսովն ու մյուս բանաստեղծները կարդում էին հայկական քնարերգության իրենց թարգմանությունները։ Տուն դարձան թե չէ, տնեցիների համար կրկնեց երեկոն՝ վերհիշելով բանաստեղծությունները, որոնցից յուրաքանչյուրը կարդում էր՝ կապկելով թարգմանչին։

Սակայն ինչպես վաղ մանկության օրերին, այնպես էլ երբ արդեն պատանի էր, նրան գրավում էին միայն հոր զենքերը։ Երեխա ժամանակ հագնում էր հոր զինվորական համազգեստը, թուրը կողքից քարշ տալով գնում-կանգնում մեծ հայելու առաջ և իրեն տեսնում էր այդ համազգեստով մեկ դարձած, կռվի դաշտում թշնամուն հալածելիս։

Մի անգամ Երանուհին գրել էր, թե Հովսեփն ուզում է ռազմական դպրոց մտնել։ Դանիելբեկը պատասխանեց. «Ո՛չ մի ռազմական դպրոց։ Թող գլխից հանի այդ պարապ ցանկությունը և սովորի, կրթություն ստանա։ Երբ զինվորական պարտքը տալու ժամանակը կգա, ծառայության կգնա և կվերադառնա տուն։ Իսկ եթե ուսումը շարունակել չի ցանկանում, թող որևէ մասնագիտություն սովորի. ռազմական գործը մասնագիտություն չէ, պարտականություն է»։

Այս նամակից հետո որոշեց ուսումն ավարտել ու գնալ գյուղ, Աբիսողոմ պապի մոտ։ Այդպես էլ գրեց հորը. «Հիշո՞ւմ եք, հայրիկ, ամառները մեզ գյուղ էիք ուղարկում և ասում էիք. «Գնացե՛ք, աշխա՛րհ տեսեք, մա՛րդ ճանաչեցեք»։ Գնացել եմ, տեսել, ճանաչել։ Եվ այսքան ժամանակ տանջվում էի ներքին մի ցանկությունից, որը չէի կարողանում ինքս ինձ բացատրել։ Կար-

ծում էի զինվորական ծառայությունն է ինձ քաշում։ Նոր եմ հասկանում, որ Նախիջևանիկն է կանչել, այնտեղ տեսած ու ճանաչած մարդիկ, մեր այգիները, նույնիսկ գերեզմանոցը, ուր շարքով կանգնած են մեր ապուպապերի համեստ շիրմաքարերն իրենց ժլատ, բայց պերճախոս գրերով...»։

Հայրը մտածեց, որ տղայի խենթ ժամանակն է, արյունը եռում է, և ինքն էլ չգիտի, թե ի՞նչ է ուզում, ի՞նչ պիտի անի, որտե՞ղ և ինչի՞ համար պիտի անցկացնի իրեն տրված մի բաժին կյանքը։ Իսկ եթե գյուղը կմնա նրա էության տերը, և նա իսկապես կգնա իր Աբիսողոմ պապի մոտ, ապա աստվա՞ծ իր հետ։ Մի՞թե ինքը՝ Դանիելբեկ Փիրումյանը, քիչ է տանջվել այն գիտակցությունից, որ իր մեջ օրեցօր խեղդվել ու մեռնում է մի հողվոր, իրենց գյուղի, նրա սակավ, բայց հրաշածին հողի տերը։

Հիմա իր ժառանգը, որի մեջ գլուխ է բարձրացրել հողվորը, հայոց ավանդական հողի տերը, ճանապարհը փոխել, պատերազմի դաշտ է եկել, վիզը դրել իր սրբազան պարտականության տակ։ Բախտը կժպտա՞ մեզ, որ մեր ազգը գտնի իր փրկությունը, լծվի խաղաղ կյանքի, որպեսզի նրա ամեն մի զավակը հնարավորություն ունենա գնալու իր հոգում արթնացած կանչի ու կոչման ետևից։

Հովսեփը Միքայելից բաժանվեց երկար զբոսնելուց հետո։ Հորը հրաժեշտ էին տվել ու չէին բաժանվում։ Լուռ քայլում էին կողք-կողքի։ Հերթապահ զինվորները քանիցս անհանգստացան, կանգնեցրին, սակայն ճանաչելով Միքայելին, սիրալիր բաժանվեցին՝ մտածելով, որ հրամանատարի տղան է, իրավունք ունի, կարող է զբոսնել։ Տուն ու տեղից, ընդհանուր ծանոթներից խոսել էին մինչև հոր մոտ գնալը։ Միքայելի հարսնացու Զվարթի մասին էլ այնքան թարմ տեղեկություններ չուներ, որքան ինքը՝ Միքայելը, որը, պատահում էր, օրական երկու նամակ էր ստանում։

Խոստացան շուտ-շուտ հանդիպել։ Բաժանումին էլ Միքայելն ասաց.

— Քեզ լա՞վ պահիր։

Եվ այս խորհրդի ուղղակի իմաստը չհասավ կրտսեր եղբորը։ Այսինքն՝ օրինա՞կ վերցնի իրենից, ինչպես հայրը հանձնարարեց, թե թշնամու գնդակի՞ց զգուշանա։

Քունը չէր տանում։ Մաքով հոր հետ էր, և ականջներում դեռ հնչում էր նրա հարազատ ձայնը։ Այնքան հարազատ, այնքան ծանոթ ու մտերիմ, որ հիշում էր այդ ձայնով իր լսած բոլոր բառերը, խոսքերը, զրույցները։ Ինչքան որ լսել էր իր գիտակցական կյանքում, ինչքան որ հնչել էր իրենց տանը։

Իսկ այսօր հայրը շատ էր ջերմ։ Արարատի մասին խոսելիս բանաստեղծ էր դարձել։ Երբեք այդպես չէր եղել։ Երևի այդ նրանից էր, որ դեմն Արարատն է։ Իսկ Արարատի դեմ եթե չես բանաստեղծացել, ապա պիտի ստուգեն՝ կրծքիդ տակ սիրտ կա՞ թե՞ ոչ։ Տերյանն իր բանաստեղծությունը գրել է, առանց Արարատը տեսած լինելու։ Մեկը հարցրեց. «Ինչպե՞ս եք գրել, պարոն Տերյան, եթե չեք տեսել»։ Ասաց. «Ամեն հայ ծնվում է՝ Արարատը սրտում։ Ես, իհարկե, երազում եմ այն օրը, որ տեսնելու եմ։ Դա լինելու է սրբազան վայրի այցելություն։ Բայց չեմ կարծում, թե իմ հոգում ունեցածը պակաս է նրանից, որ կանգնել է այնտեղ՝ իբրև մեր հազարամյա տառապանքի վկան»։ Հայրն այսպիսի խոսք չասաց։ Սակայն նրա ասածի մեջ կար մի շատ էական բան. «Նա տեսնո՞ւմ է ամեն ինչ, իր բոլոր զավակների լավ ու վատ արարքնե՞րն է տեսնում»։ Իսկ այս ճակատագրականը, որ մենք ենք տալու թշնամուն, այս ամենաճակատագրականը, նրա հայացքի տակ է։ Եվ ինչպե՞ս պիտի հուզվի նրա հայրական սիրտը։ Հուզվի՛, ուրախանա՛, տխրի ու հպարտանա՛։

Հանդիպումից առաջ կարոտը հոր հանդեպ կարծես նրա ձայնի կարոտն էր միայն, որովհետև ամենից շուտ նրա ձայնի հիշողությունն էր բորբոքված իր սրտում, հիշողության մեջ։ Զընգուն, պղնձե իրի պես տեսանելի ձայնը։ Ինչպե՞ս էր կարոտել այդ ձայնին։ Որքա՞ն ասելիք ուներ, որոնք այնպես էլ ետ բերեց իր հետ, որովհետև նախակրթարանի աշակերտի պես իրեն կորցրեց և միայն կցկտուր, անհամ պատասխաններ էր տալիս հոր հարցերին, մեկ էլ սիրահարվածի պես անկապ խոսքեր ասաց Վահան Տերյանի մասին։

Չէր մոռանում հոր խորհուրդը. «Միքայելից օրինա՞կ վերցրու»։ Ինչո՞ւ մարդիկ այդքան շատ են սիրում օրինակներ մատնացույց անել։ Դպրոցո՞ւմ, տա՞նը, զորամասո՞ւմ։ Ամենուրեք մատները տնկած օրինակ են ցույց տալիս։ Նմանվիր այսինչի՞ն, այնինչի՞ն։ Եվ կյանքում մի շատ կարևոր քայլ կատարելու համար պիտի կանգնես ու մտածես. այս կետում ի՞նչ կաներ, ո՞ր

քայլը կընտրեր այսինչը, որին դու պարտավորվել ես ընդօրինակել։ Հիշեց հինգ տարի առաջ գյուղում պատահած մի դեպք, որի վրա ինքը հաճախ է մտածել։ Ամառը գնացել էին Նախիջևանիկ, և երբ մայրը հարազատների ու հարևանների համար տարած նվերները բաժանեց, տակը մնացել էր մի նախշուն վերնաշապիկ։ Ինքն ասաց. «Մայրիկ, այդ էլ Վանեսին տուր»։ Վանեսն իր տարեկիցն ու խաղընկերն էր, գյուղի ամենաչունևոր ընտանիքներից մեկի զավակը։ Վերնաշապիկը տվին Վանեսին, և նա ուրախությունից աշխարհի տերը գարձավ։ Հետո միասին գնացին վերի այգիները՝ թութ ուտելու։ Ճանապարհին Վանեսն արագ-արագ ձեռքերը հագի նախշուն վերնաշապկին էր քսում, հայացքով շոյում-տնտղում էր, կարծես չէր հավատում, որ ինքն է նրա տերը։ Ասաց՝ կյանքում նոր շոր հագած չկա, միշտ էլ իրենց տան մեծերի հնոտին է եղել իր բաժինը։ «Տուն գառնամ թե չէ, կծալեմ, կդնեմ տատի սնդուկում, որ դպրոց գնալիս հագնեմ։ Վա՜յ, տեր Աբրահամի աչքերը չովելու են»,— ինքնամոռացությամբ խոսում էր Վանեսը։

Ժայռածերպերին թառած ծառերի ճյուղերի վրա միայն չամշած թթեր էին մնացել։ Վանեսը վերնաշապիկը հանեց, կախեց մի ծառի բնի չորուկից և ասաց. «Դու ցածում մնա, ես քաղեմ, քեզ տամ, կեր»։ Հովսեփը չհամաձայնեց, որովհետև համոզված էր, թե միայն այն թութն է քաղցր, որ ինքդ ես քաղում սեփական ձեռքով։ Բարձրացավ ծառը, սակայն ոչինչ բերանը տանել չկարողացավ, որովհետև թթերը ճյուղերի ծայրերին էին։ Փորձեց թաթ տալ մի ճյուղ, ուրքը սահեց, բռնած ճյուղն էլ կոտրվեց, և ինքը, թռ՜մփ, վայր ընկավ ցից-ցից քարերին։ Քունքը պատռվեց, աչ այտի մաշկը պլոկվեց, և արյունն այնպես էր հոսում, ասես ոչխար են մորթել։ Թռմփոցի վրա Վանեսը մյուս ծառից իրեն վայր նետեց, մեծավարի վազ-վիշ անելով, ծառն ու նրա տնկողին հայհոյելով մոտեցավ և արյունը տեսավ, ծընկներին գարկեց։ Սակայն դա մի վայրկյան էր միայն։ Հաջորդ պահին Վանեսը ձեռքն առավ նախշուն վերնաշապիկը, երկար զոլերով պատառոտեց և սկսեց վերքերը փաթաթել։ Հովսեփը տեսավ շապկի վերջին կտորտանքը և նոր գլխի ընկավ, թե ի՞նչ է կատարվել։ Սակայն ուշ էր արդեն... Հետո, երբ վերքերը խնամքով փաթաթված էին, ցավը մեղմացել էր, և ինքը նրան կշտամբում էր, թե ինչո՞ւ պատառոտեց վերնաշապիկը, Վանեսը,

երևի առանց ափսոսանքի, ասաց. «Ի՞նչ ես խոխա-խոխա խոսում»։

Իհարկե, մայրը Վանեսի համար նոր վերնաշապիկ ձևեցկարեց գյուղում, և նա դարձյալ շատ ուրախ էր այդ նվերի համար, թեպետ նախորդն ուրիշ տեսակ երջանկություն էր եղել, կյանքում առաջին անգամ նոր ու սիրած զգեստ հագնողի, անհասանելի վայելքին միանգամից տիրացածի երջանկությունը։ Եվ Հովսեփի աչքի առաջ էր միայն այդ երջանկության զոհաբերությունը, որ Վանեսը կատարեց առանց մտածելու, առանց ընդօրինակելու որևէ մեկին։

Իսկ Վանեսին երբևէ ցո՞ւց էին տվել որևէ օրինակ։ Կամ ասե՞լ էին, թե ահա այսպես ու այսպե՛ս, ընկերոջ համար պարտավոր ես զոհաբերել սեփական երջանկությունդ։ Ո՞վ պիտի ցույց տար, ո՞վ պիտի ասեր։ Ասելու, մատնացույց անելու փոխարեն նրա ծնողներն իրենք զոհաբերում են։ Եվ ինչո՞ւ միայն նրա ծնողները։ Գյուղում յուրաքանչյուրի ցավը բոլորինն է։ Ինչպես և երջանկությո՛ւնը։ Աբիսողոմ պապն ասում է. «Ցավը բաժանեցիր, կթեթևանա ու կփոքրանա, իսկ ուրախությունը, հակառակը, բաժանեցիր, կմեծանա, աշխարհով մեկ կդառնա»։

Այստեղ Հովսեփը վերստին դարձավ հոր խորհուրդին. «Միքայելից օրինակ վերցրու»։ «Հայրիկ ջան, սիրելի հայրիկ, դուք այդ խորհուրդն ինչո՞ւ տվիք։ Չէ՞ որ ես կատարել եմ ձեր ամենախիմաստուն խորհուրդը. ամառային արձակուրդներին միշտ գյուղ եմ գնացել, որպեսզի, ինչպես դուք էիք ասում, աշխարհ տեսնեմ ու մարդ ճանաչեմ։ Եվ այնտեղ տեսել եմ մեր նախնիների աշխարհը, որին եթե գեղեցիկ ասես, կվիրավորես, եթե բերրի ասես՝ կաղքատացնես։ Երբ առաջին անգամ Աբիսողոմ պապն իր ձիու թարքին առած տարավ Գանձասար, ես գլուխս կորցրել էի բնության շռայլությունից ու մեր պապերի ձեռքով բնությանը գումարած անմահականի առկայությունից։ Վանքի քանդակազարդերն աչքերիս առաջ իրենց շշմեցնող խաղերն էին անում։ Վիմագրերն այնպես խոսում էին ինձ հետ, ինչպես Աբիսողոմ պապը, երբ թոռները գլխին հավաքած՝ Խաչենի իշխանի ու թաթար Օշափի հեքիաթն էր պատմում։ Թևս առած տանում-կանգնեցնում էր տաճարի ամբողջ պատը բռնող վիմագրի առաջ և շուրջը նայելով ասում էր. «Թե կարում ես, կարդա, տեսնեմ, քե մատաղ...»։ Ես հեգելով կարդում էի մեր հեռավոր նախնու

գիրը, ինչպես տանն էլ ձեր ուղարկած նամակներն էի կարդում նրա համար։ «Այս գիր արձանի է, զոր տվի ես՝ նուաստ ծառա Աստուծո Ջալալ Դավլա Հասան, որդի Վախտանգա, բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի...»։ Եվ այսպես, երբ շնչահեղձ լինելով հասնում էի վերջին, ուր «բնակաւոր ինքնակալը» մեծահոգաբար պատարագներ է բաժանում իր անցյալ ու ներկա հարազատներին, բաժին հանելով նույնիսկ «Հովասաբ միակեցին», երբ ավարտվում էին բոլոր անունների հիշատակությունները, և նրանց մեջ Փիրումանց անցյալ մեծերից ոչ ոք չէր լինում, ես պապի դեմքին քանդակված էի տեսնում ափսոսանքի ու զարմանքի արտահայտությունը։ Եվ ինձ համար այնպես հասկանալի՜ էր նրա զարմանքը։ Չէ՞ որ նա մեզ պատմում էր, որ Փիրումանց քաջ ու ազնվական տոհմը գոյություն է ունեցել հին-հին ժամանակներից ի վեր. և թոռից թոռ անցնող նրա Փիրումներին են պատկանել մեր Վարանդան, Խաչեն գավառը։ Այդ ինչպե՞ս է, որ Հասան-Ջալալ բնակավորն ինքնակալ չի հիշում մի Փիրումի անուն, նրան արժանի չի անում որևէ պատարագի։

Սակայն շուտով իրեն ազատում էր այդ զարմանքի տիրապետությունից և, դառնալով ուխտավորներին, ինձ էր ցույց տալիս. «Տեսե՛ք, ա՛յ պատվական ժողովուրդ, տեսեք՝ մի մատ խոխան ո՞նց է ջուր անում էս քարի լեզուն, հա՜»։ Հետո տանում էր Գանձասարա վանքի թիկունքում, կաղնիների ու հաճարենիների տակից դուրս եկող աղբյուրը։ «Դե՛, կռաց, խմի, քե մատաղ,— ասում էր։— Չէ՜, էդպես չի։— Ինքը հսկա հասակով մեկ այնպես մեկնվում էր ակնի վրա, որ գետնին առնեն միայն տրեխների քթերն ու ձեռքերի թաթերը։ Շուրթերը հպում էր ակնին, երկար խմում էր, ապա վեր էր կենում, «ուխա՜յ» անում, բեղերը սղալում։— Ահա էսպես կխմեն, քե մատաղ։ Սա օրհնված ու անմահական ջուր է։ Էս ջուրը խմողին ո՛չ ցավը քար կանի, ո՛չ էլ թշնամու գնդակը կբռնի»։

Աբիսողոմ պապի ամենամեծ հոգսն այն էր, որ իր թոռներն ու ծոռները սովորեն հող մշակել։ Ամառանոց եկած փոքրիկներին անգամ իր հետ այգի ու դաշտ էր տանում, սովորեցնում ծառի մշակության և արտ խնամելու գաղտնիքները։ Հարևաններից մեկը դա համարել էր ավելորդ զբաղմունք։ «Դրանց շա՞տ պետքն է իրենց Պետերբուրգում ու Մոսկովում,— ասել

էր նա։— Ինչի՞ ես անհարկավորական բաներով գլուխները լցնում»։ Ծերունին իրենը պնդեց. «Անհարկավորականը, ա՛յ, էդ խոսքն է,— ասաց.— Մարդս հողից է սարքվել, և հողն է, որ նրան պահում է։ Ուրեմն՝ ամենից առաջ իմացիր հողի լեզուն և նրանից հետո կուզես լողմա՞ն դարձիր»։

* *
*

Վարանդեցի Արշակն առավոտյան վաղ էր վեր կացել և տրխուր էր։ Զաքարն իր սովորական պատրհանում հսկայական մարմինը կուչ ածած՝ աչքերը տրորեց, տեսավ նրա թթված դեմքը, և մտքով անցավ, որ պատճառն այն գաթայի կտորն է։ «Երեվի կերել է,— մտածեց գիշեցին,— և մեջը կորիզ չի գտել»։

— Էդ ո՞վ է էշիդ չու ասել, Արշակ։

Արշակը, պատասխանելու փոխարեն, շուրջն աչք ածեց և սկսեց պատրհանի իրերը վերադասավորել։

— Ոնց որ տափը ծակել, մեջն է մտել։

— Ի՞նչը, հո մկները գաթան չե՞ն տարել։

Եվ Արշակի դեմքը բացվեց.

— Արա՛, ճիշտ որ տարած կլինեն, հը՞։ Գիշերը մի կրթկրթոց լսեցի, ուշ չդարձրի։

— Բա՛։ Դե, աջ ու ձախ նայիր, գուցե մի տեղ գցած լինեն։

Արշակն աչք ածելով քայլում էր դեպի խրամատի ելքը, և Զաքարը տաբատի գրպանից հանեց հոնի կորիզը, նետեց նրա պատրհանի առաջ։ Երեկ իր բաժին գաթայի միջից էր հանել։ Տեսնելով, որ Արշակը հալվում է Համեստի հայացքներից, ինքը թաքցրել էր կորիզը։ «Որ չի ուտում, թող մտածի, թե իր բաժնի մեջ է,— այն ժամանակ մտածել էր Զաքարը, և փորձված հայացքից չվրիպեց, որ անտարբեր չէ նաև Համեստը։— Թող երկուսն էլ երջանկանան այդ խաբկանքով»։

— Արշա՛կ, Արշա՛կ, ետ եկ, էստեղ է,— կանչեց «գյուտ արած» Զաքարը։

Արշակն ուրախ-ուրախ վերադարձավ և ձեռքն առավ նրա մեկնած հոնի կորիզը։

— Էստեղ էր, տափին ընկած,— բացատրեց Զաքարը։— Երևի էն անպիտանները գաթան կերել են, կորիզը գցել։ Վա՛յ, ես ձեր

ինչն եմ ասել։ Դու էլ մի կարգին տեղ չէիր գտել դնելու, տնաշենի տղա,— կեղծ տրտնջաց Զաքարը։

Արշակի դեմքը շողում էր արտասովոր երջանկությունից։

— Է՜, գաթան հե՜չ, կարևորը սա է,— և կորիզը փեշով մաքրեց, սկսեց խանդավառ հետաքրքրությամբ տնտղել, ոնց որ գտնվել էր մի անգին թալիսման, որից կախված է իր կյանքը, այդ կյանքի հետագա ընթացքը։— Բա որտե՞ղ էր։

— Էդտեղ, պատրհանիդ առաջ,— անտարբեր պատասխանեց Զաքարը և հագի շորերը կարգի բերեց։— Քո բախտից է, դա էլ չեն կերել հա՜։ Թե չէ, մկները կորիզ շատ են սիրում։

Արշակը նորից փեշով մաքրեց կորիզը, թաշկինակը հանեց, եզրի մեջ կապեց ու դրեց գրպանում։ Այս արարողությունն աչքի պոչով նայող Զաքարին այնպես էր թվում, թե ընկերն իր հետ չէ այլևս, մտքով, սրտով, հույզերով ու երազներով գնացել է Փարաքար... Եվ ո՞նց էլ մի հանդիպում, կցկտուր մի զրույց բավական է լինում, որ մարդ գլուխը կորցնի, իսկ, որ ավելի ճիշտ կլինի ասել, գտնի իր իսկական կամ խաբուսիկ երջանկությունը։

Ի՞նչ պիտի անի Արշակն իր գտած երջանկությունը։ Պիտի վայելի՞։

Զաքարը տեղյակ էր նրա կենսագրությանը։ Ի՞նքն էր նրա ստացած նամակները կարդում և ուղարկելիքը գրում, որովհետև Արշակի գրաճանաչությունն այնքան էր, որ տառ-տառ մի կերպ նկարում էր իր անունը։ Մի անգամ կնոջից նամակ էր ստացել (երևի կինն էլ մեկ ուրիշին էր գրել տալիս), այնտեղ ասված էր. «Սիրելի և անմոռանալի Արշակ, մի շաբաթ առաջ վեր էինք կացել-գնացել Շուշվա-ղալա բժշկի։ Էս բժիշկս նայեց, քննեց, վերջն էլ էն ասաց, ինչ որ մեր տատմերը. որ ես, էսպես ու էսպես, ժառանգ չեմ ունենա... Էն բրիշակից եկել եմ ու աշխարհը գլխիս մթնած է։ Եվ քեզ էլ գրում եմ, որ քո համաձայնությունն առնեմ, ետ գնամ իմ հերանց տուն...»։

Զաքարը ծանոթացել էր այս նամակին և երկընտրանքի մեջ էր՝ կարդա՞ Արշակին, թե՞ նայի թղթին ու սովորական բարևագիր արտասանի։ Ըստ երևույթին, Արշակը նրա դեմքի վրա տեսել էր այս տարակուսանքը և ստիպեց կարդալ բառ առ բառ. «Թե վատ խաբար կա, մի՜ թաքցնի. ասված է ինձ ստուգել՝ դիմացկուն եմ»։ Եվ երբ իմացավ կնոջ նամակի բովանդակու-

թյունը, առանց ավելորդ հուզումների, հանգիստ ու անվրդով հուշեց իր պատասխանը. «Գրի, ասա՝ քեզ Շուշվա-դալա բժշկի տանողները թող իրենց գլուխներն իրար խփեն, որպեսզի ուրիշ անհարմար տեղերի չզարկեն։ Էդ մեկն էդպե՛ս։ Հետո էլ գրի, ասա՝ խելքդ գլուխդ հավաքած՝ նստիր մեր տանը, իմ հոր ու մոր, իմ եղբորց ու քվերանց հետ։ Թե որ մենք ժառանգի արժանի լինեինք, աստված չէր խնայի... Իսկ հիմի գրի, ասա, կռիվ է, Թուրքի հետ ճակատ ենք զարկում, որ մեր աղգի կյանքը փրկենք։ Գրի, ասա՝ գնա մեր Վարդան Զորավարի մատուռը, Ամարասի Սուրբ Գրիգորի դուռը գնա, թե կարողանաս, Գանձասարա հրաշագուն աթոռն էլ հասիր, մատաղ արա, որ աստված մեր հակին լինի և Թուրքի մեջքը կոտրի։ Գրեցի՞ր։ Դե՛, հետո էլ գրի, ասա՝ երեկ մեր Գարեգին սրբազանը խոսեց անցյալներում պատերազմի գնացած հայերի ազնիվ ու ազնվական կանանց վարքի մասին։ Էն ի՞նչ զրկանք ու զոհողություն են կրել էն խեղճերը, ի՞նչ տանջանք ու տառապանք և ինչպե՞ս են թև ու թիկունք եղել թշնամու դեմ կյանք ու արյուն տվող իրենց տըղամարդկանց համար։ Իսկ դու, ասա՛, վեր ես կացել, իմ համաձայնությունն ես ուզում, որ գնաս քո հերանց տուն։ Բա դա հայրենասեր հայ կնոջ արարմո՞ւնք է։ Բա լսողն ի՞նչ կասի։ Էդ բոլորը գրեցի՞ր, Զաքար։ Հա՛, դե՛, շա՞տ ապրես, հիմի էլ գրի, ասա՝ մենք որ ողջ ու առողջ ենք, գործներս էլ, ոչինչ, կուճի-կուճի աջողության ճամփան են մտնում։ Աստվածանից եմ ուզել, որ մեզ իրար տեսքի արժան անի»։

Այսքանից հետո էլ Արշակը, ուսերից մի ծանր բեռ վար բերած մարդու պես, դարձավ դեպի Զաքարը, թե.

— Դո՞ւ ինչ կասես, Զաքար, խելքդ ի՞նչ է կտրում էս գործից։

— Լավ նամակ գրեցինք, Արշակ,— ասաց,— հայ տղամարդու նամակ։

Հետո Արշակը հիշեց, որ կինը մի անգամ էլ տանն էր նույն առաջարկով դիմել իրեն։ Պատերազմի նախորդ տարին էր, իրենք արդեն երեք տարվա ամուսիններ էին։ Արշակն այն ժամանակ նրան ասաց. «Էդ խոսքը մեկ էլ չլսեմ։ Թե չէ, դու ինձ լավ ես ճանաչում, հա՞»։ Այն ժամանակ թվում էր՝ հարցը լուծվեց։ Բայց ահա հինգ տարի հետո գլուխ է բարձրացրել, դարձյալ անհանգստացնում է կնոջը։ Թերևս՝ ո՛չ միայն կնոջը, որովհետև

նրան ուրիշներն են Շուշի տարել, և չի կարող պատահել, որ այդ ուրիշները տեղյակ չլինեին նրա ապրումներին, նույնիսկ մասնակցած չլինեին նրա ճակատագրական որոշումն ընդունելուն։

Արշակի համար այն ժամանակ ամեն ինչ պարզ էր ու որոշակի,— մտածում էր Զաքարը։— Իսկ հիմա երևի խառնվել ու պղտորվել է հոգին։ Բայց մի՞թե բավական էր մի հանդիպում, սովորական մի զրույց, կանացի քնքշանքի մի ճառագայթում, որպեսզի շուտ դա ամեն ինչ, տակնուվրա լինի մարդուս հոգին, մոռացվի մարդկային ու տղամարդկային պարտականությունը, որ ուրիշ պարագաներում այնպես հաստատ ու անխախտելի էր թվում։ Թե՞ սովորական չէին այն հանդիպումն ու զրույցը, կանացի քնքշանքի այդ ճառագայթումն ու գիմացինին վառելը։ Չէ՛, Արշակը սովորական կամ պատահական դիպվածից գլուխը կորցնող մարդ չէ։ Եվ Համեստն էլ սովորական կին չէր։ Տնաշենի աղջիկը մտավ խրամատ, ոնց որ լուսավորեց։ Նայում էր, ասես պարգևում էր մի երանություն, որ քոնն է և քոնը չէ... Երևի թե նրա համար էլ Արշակն էր էդպես։ Ախր, անաստվածներն իրար տեսնելուն պես մի տեսակ եղան։ Ոնց որ կայծակ էր՝ խփեց, աստծու կրակն էր՝ տվեց, երկուսին էլ կտրեց էս աշխարհից... Դե՛, Համեստը կնիկ է, կարողանում էր իրեն զսպել ու պահել, կարծես ոչինչ էլ չէր պատահել, ուղղակի եկել են ռազմաճակատի գիծը և ուրախ է, որ հայ մարդկանց է հանդիպել, հայ զինվորների։ Չէ՛, կանայք իրենց պահել գիտեն. աստված էդ մեկը նրանց տվել է։ Իսկ Արշակը։ Վա՜յ, էդ ի՞նչ օրի էր Արշակը։ Խեղճը բոլորովին ձևանալ չէր կարողանում։ Ախր, սկի չէր էլ ուզում ձևանալ։ Հետո էլ ինչի՞ ձևանար. մի՞թե կյանքում մի անգամ էդ երջանկությունը տրվել էր իրեն, որպեսզի ձևացներ, թե ոչինչ էլ չի պատահել։

Չէ՛, էդ բանի մեջ հաստատ աստծո մատը խառն էր։

Եվ աստված բարի՞ն կատարի։

Իսկ Արշակն առավոտյան մարզանքի էր ելել հարևան զինվորների հետ, սակայն Զաքարի նրբանկատ հայացքից չվրիպեց, որ նա մի տեսակ բացակա էր. քայլերը նրանց հետ չէր դցում, վայրկյան առ վայրկյան դեմքը լուսավորվում էր մի տարօրինակ շող ու շափաղով, ասես ներսից լույս էր տալիս։ Մարզանքից հետո էլ ջոկը գլխին հավաքեց, ասաց.

— Փորձենք, տեսնենք՝ ով կարող է հրացանը ծայրից բռնած ձեռքի հետ ուղիղ բարձրացնել։

Պետք է փողի ծայրը բռան մեջ լիներ և չհենվեր ուրիշ որևէ տեղի։

Զինվորներից ոչ մեկն այդպես չկարողացավ բարձրացնել։ Հեռվից հեշտ էր երևում, համարձակ մոտենում էին, շարշարվում։ Ձենքի մարմինը տեղից չէր բարձրանում։ Արշակը ձեռքն առավ, ցույց տվեց, որ փողի ծայրը բռան մեջ է, նույնիսկ մի քիչ էլ կարելի է խոր բռնել, բայց չի անում։ Լարվեց, վզի մկանները ձգվեցին, դեմքը կարմրատակեց, ու հրացանն ուղիղ բարձրացավ։

Եվ այդ ժամանակ էր, որ խրամատի ելքի մոտ իր ամբողջ հասակով ու շքեղ կեցվածքով երևաց գնդապետ Պողոսբեկ Փիրումյանը՝ ետևից գումարտակի, վաշտի ու գասակի հրամանատարները։ Տղերքն իրարով անցան. կարծում էին գնդապետը պիտի պատժի կամ, լավագույն դեպքում, հանդիմանություն անի հրացանը խաղալիք դարձնելու համար։ Իսկ նա, երևում էր, կանգնել, դիտել էր Արշակին, որին անձամբ ճանաչում էր, հետո ժպտալով մոտեցավ, մտերմիկ բարևեց.

— Բարի լույս, տղերք, էս ի՞նչ լավ գործի եք։ Զինվորն ամեն օր իր ուժը պիտի փորձի,— և նայեց Զաքարին։— Դո՞ւ ոնց ես։ Կարողանո՞ւմ ես երկու մատով բարձրացնել։— Զաքարն ուսերը թոթվեց։— Է՛, դու պիտի՛ կարողանաս, ա՛յ, այսպե՛ս,— և հրացանը ձեռքը վերցնելով՝ փողի ծայրն առավ ցուցամատի ու բութ մատի արանքը, հանգիստ, առանց ճիգ ու ջանքի, բարձրացրեց։— Այսպե՛ս։ Եղա՞վ, Զաքար։ Քո բոյ-բուսաթի տերը պիտի բարձրացնի։

— Պարզ է, պարոն գնդապետ,— անհարմարությունից կանգնելու տեղ չէր գտնում Զաքարը։— Բայց դրա համար պիտի Փիրում ապոր ցեղից լինես։

— Է՛, բա՞ն ասացիր։ Փիրում ապերը հո երկնքից չէր իջել։ Մեզ նման մարդ է եղել։

Հետո գնդապետ Պողոսբեկ Փիրումյանը, ետևից քայլող հրամանատարների հետ միասին, ստուգում էր զինվորների զենքերն ու զինավառությունը։ Մեկին դիտողություն էր անում. «Դու սեփական երեսդ լվանո՞ւմ ես, ուրեմն, այդպես էլ հրացանդ մաքուր պիտի պահես»։ Մյուսին գովում էր. «Ա՛յ, քեզ մարտիկ եմ

ասել, հա՛։ Բայց իմացած եղիր, որ լավ զինվորի հարևանն էլ պիտի լավ լինի։ Դա իսկը լավ զինվորի առաջնակարգ պարտականություն է»։ Երրորդի զենքն ստուգելուց ուզում էր գլխին քարոզ կարդալ, մեկ էլ իմացավ, որ Մամնայից է, ուստի թփթփացրեց. «Ձեր շենից, որ էսքան էլ գոյացել ես, մեծ բան է։ Էլի՞ զինվոր ունեք, թե՞ մենակ դու ես։ Հա՛, բա ասում եմ, չէ՞. ուրեմն մենակ տեղովդ պիտի էն կորած-մոլորած գյուղիդ երեսը պարզ անես»։

— Տղերք, ձե՛զ մատաղ, այսօր թուրքերի հարձակում է սպասվում,— վերջում այսպես զգուշացրեց գնդապետը։— Պատրաստ եղեք։ Մենք տեղներիցս չպիտի շարժվենք, ո՛չ առաջ, ո՛չ ետ։ Մենք այսօր նրանց միայն զննելու ենք. տեսնենք՝ ի՛նչ ունեն, ի՛նչ ուժերով են հարձակվում։ Հասկանալի՞ է։ Այսօր խոսքը հրետանավորներինն է ու գնդացրորդներինը։— Այստեղ գնդապետը խրամատի երկարությամբ կանգ՛ած՝ների մեջ հայացքով փնտրեց դիպուկահարին և գտնելով կանգ առավ, հոր պես նայեց նրան.— Մեկ էլ քո՛նը, Արշակ տղա։ Ո՞նց ես, հո աչքդ չի՞ խաղում։

— Շա՛տ լավ եմ, պարոն գնդապետ,— ցնծաց Արշակը, որ գնդապետն իրեն չմոռացավ։— Հրամանքիդ միշտ պատրաստ եմ։

— Կեցցե՛ս, Արշակ. Գարեգին սրբազանը հիացած է քեզանով։

Արշակը՝ ոնց որ իրենց կարասի գինուց մի փարչ քաշեր գլխին. առարկաները երևացին կանաչ-կարմիր նախշած։

Զաքարը մտածեց, որ Արշակի օրերն են, և առհասարակ այդպես է. թե որ բարին մարդու փեշը բռնեց, էլ բաց չի թողնի։ Մտքում Արշակի համար աղոթեց, որ աստված շարը հեռու տանի, որովհետև Արշակն իսկապես արժանի էր ամեն տեսակ հարգ ու պատվի։

Գնդապետն ու իր շքախումբը գնացին։ Խրամատը մեկեն դատարկվածի նման էր թվում։ Զինվորներն իրար էին նայում ու չէին համարձակվում գնդապետի խոսքից հետո խախտել այն լռությունը, որ կոտրատվում էր հեռու-մոտիկ եկեղեցիներից ու վանքերից եկող կանչերից։ Այդօր զանգերն ավելի բարձր էին հնչում, այնպես տագնապոտ ու սպառնալից, ասես որոշել են կոտրատել իրենց կողերը։

Խրամատի պատերից այս ու այնտեղ հող էր թափվում։ Կա-

բելի էր կարծել, թե մողեսներն են մեղավոր, նրանք, որ չեն վախենում իրենց բներն ավերող մարդու մոտիկությունից։ Սակայն Զաքարի ականջը զանգերի ձայներին էր, և նա գիտեր, որ այդ ձայներից է թափվում հողը։ Ահա շուտով կխոսեն թնդանոթները, և այն ժամանակ հողապատնեշի կեսը կթափվի խրամուղու մեջ։

Նորեկներ երևացին խրամատի խորքում։ Նրանք անհանգիստ էին ու հետաքրքրասեր։ Ծանոթացան գնդի հնաբնակների հետ, աջ-ձախ նայելով գնում-գալիս էին և զարմացած էին, թե ինչո՞ւ հրամանատարությունն այսպես ձգձգում է վճռական մարտը։

Նախաճաշ կոչված կերուխումից հետո նորեկները հավաքվել էին Զաքարի մոտ, ուզում էին իմանալ՝ ո՞վ է այն Փիրում ապերը, որի մասին ինքը խոսեց գնդապետ Փիրումյանի հետ, և գնդապետը որևէ կապ ունի՞ այդ Փիրում ապոր հետ։

— Ունի՛, ունի՛, ո՞նց թե,— պատասխանեց Արշակը։— Փիրում ապերը հենց գնդապետի պապն է եղել, թե պապի պապը։ Այսինքն՝ մեր էս Փիրումյանների ամենահին մեծը։

— Եվ ասում են՝ շատ է ուժեղ եղել, հա՞։

— Բա չտեսա՞ր գնդապետին,— Արշակը ձեռքը բարձրացրեց՝ գնդապետի հասակը ցույց տալու համար։— Սա որ հիմի մեր այս անորակ մարդկանց շրջանում էսքան կա, նրա նախնիները ո՞նց պիտի լինեին։ Մեր շենում ասում են՝ Փիրում ապոր ժամանակներում ջաղացքարը կոնատակին տանողը ոչ ոքի էլ չի զարմացրել։ Ջաղացքար, հա՞։

— Իսկ էդ Փիրում ապերն ինչո՞վ էր նշանավոր,— հարցրեց նորեկը, որը նպատակ ուներ մինչև վերջ պարզելու գնդապետի ակունքները։

— Դե՛, Փիրում ապերը... Արա՛ Զաքար, դու էլ ի՞նչ ես պապանձվել,— Զաքարին դիմեց նեղը լծված Արշակը։

Իսկ Զաքարը կուշտ ուտելուց հետո, իր քնարան-պատրհանում կուչ եկած, ծխախոտի մի երկար ու հաստ գլանակ բերանին, աչքերը փակ ծխում էր, հազում։

— Ա՛յ տղերք, սրա լազաթը ո՞րն է, որ էնպես մեռնում-կտրվում են էս զահրումար խոտի համար։— Շուտ է գալիս, ոտերը կախում, ավելի ճիշտ՝ մորեխի պես ծնկները ցից-ցից նստում պատրհանի եզրին, գլանակը դնում հեռու, որ դառը ծուխը չհասնի իրեն։— Փիրում ապոր մասին էլ, դե, ի՞նչ ասեմ։ Նրա անունն

ու գործն ո՞վ չգիտեր։ Դաղստանից մինչև Հնդկաստան ուժի տեսակետից մի Փիրում ապեր է եղել, էլի՛։ Նրա բիլակը շուտ տա՞լ կլիներ։ Նրա բարձրացրած քարը տեղից շարժե՞լ կլիներ։ Բայց ժողովուրդը հիշում է մի դեպք, որ... Ադա՛, սպասեք, բերանս ջուր ողողեմ, էս զահար-զահրումարի լեղին գնա։

Արշակն խսկույն ջուր հասցրեց Զաքարին։ Նա բերանը ողողեց-թափեց խրամատի հատակին, ապա հաղալով սկսեց.

— Հա՛, էսպես է լինում. Պարսկաստանից մի աժդահա փահլևան է գալիս Շուշվա ղալա, մտնում խանի պալատը և խանի առաջ ասում է. «Ինձ շահն է ուղարկել քո տերությունը։ Կա՛մ ինձ հետ կոխ կենող մի արժանավոր հակառակորդ ես հանում մեյդան, կա՛մ էլ էսքան ու էսքան ոսկի պիտի տաս իրրև տուգանք։ Շուշվա խանը ոտ ու ձեռ է ընկնում, որ էդ աժդահա փահլևանին արժանի մի կոխ կենող ճարի։ Որի՞ն բերում է, համշարին տափին է տալիս, զկոտոցը գցում Թոփխանան։ Վերջը նաղիր-վեզիրներից մինը խանին լուր է տալիս, թե բա չես ասի Վարանդայի Նախիջևանիկ գյուղում մի Փիրում կա, թե որ համշարի փահլևանին մի բան անելու լինի, էն Փիրումը կանի։ Խանը հրաման է տալիս, ասում է. «Գնացե՛ք, թե որ գլուխը թրջած լինի, թող էստեղ լվանա»։ Գալիս են, տեսնում Փիրում ապերը՝ Փիրումանց մեծը, արտը հնձել, փանջաք է տվել, փանջաքի հովին մածնաբրդուճ է ուտում։ «Մածնաբրդուճդ անո՛ւշ,— ասում են,— Փիրում ապեր։ Քեզ նման իգիթին խորոված-խաշած գառը կվայելեր...»։ Բեղերը սղալում է Փիրում ապերը, «Հո՞ր ա, է՞,— ասում է,— դառ ունեք, բերեք, մածնաբրդուճը չի խանգարի»։ Բերում են, և սա մի նստելով ուտում է գառն իր կրճիկ-մրճիկներով, հետո մեկնվում փանջաքի հովին, թե «էսպես պինդ ուտելուց ետը թե որ աչքիդ որդը չկոտրեցիր, կերածդ վզիդ կելնի»։ Սա ուղում է իր ետճաշյա քունն առնի, խանի մարդիկ աղաչանք-պաղատանք են անում, թե բա չես ասի էսպես ու էսպե՛ս։ «Ադա, ո՞նց թե,— զարմանում է Փիրում ապերը։— Բա իմ բեղ ու մորուքիս կասզի՞, որ վեր կենամ, տը՞ռթ հա տը՞ռթ գնամ Շուշվա ղալա, թե հի՞նչ ա. հի՞նչ ա, էնտեղ մի համշարի պիտի թակեմ»։ Բացատրում են, ասում են՝ պայման կա. թե որ չգնացիր, խանն էսքան-էսքան ոսկի պիտի տա։ Դե, խանն էլ էդ ոսկին պիտի իր հպատակ հայերի՞ց հանի...

Էս որ ասում են, Փիրում ապերս մի փոքր քնինք է անում։ Քնինք է անում ու վեր է կենում, խուրջինից մի զույգ փաթա-

վաներ հանում, փաթաթում է բիլակներին։ Երևի մտածում է, թե մահակակոիվ է լինելու։ Իսկ մահակակռվում թե որ իր բի-լակներին վնաս չեղավ, ինքը մի պոկ համշարի առաջն արած կտանի, Խուդափիրինի կամուրջից դեն կքշի...

Էսպես, ահա, ձիանք նստած, ինչպես Փիրում ապերը կասեր, տը՛ռթ հա տը՛ռթ գնում, հասնում են Շուշվա ղալա։ Որ հաս-նում են Շուշվա ղալա, խանը հենց Գանձակա դարպասների մոտ Փիրում ապորն առոք-փառոք դիմավորում է, տանում իր ապա-բա՛քը, մի պինդ էլ կերցնում-խմեցնում, հետո ասում է. «Փիրում ապեր, դե՛, քեզ տեսնեմ, Ղարաբաղի երեսը դու պիտի պարզ անես»։

Ջրդրը դուզում մեյդան բաց արած են լինում, որ էս է, փահ-լևանները կոխ են բռնելու։ Ժողովուրդը թափվում է էնտեղ։ Մի բարձր տեղում էլ խանի թախտն են դնում, և էստեղից խանը հա՛մ թամաշա է անում, հա՛մ էլ Փիրում ապորն զգուշացնում է.

— Փիրում ապե՛ր, Փիրում ապե՛ր,— ասում է,— մուղայիտ կաց, հա՛. էդ համշարին փանդուփիլ շատ ունի։ Մուղայիտ կաց դրա փանդուփիլից։

Փիրում ապերն էլ մեյդանի մեջտեղը ոտերը չռել, կանգնել է իր մոթալ փափախով, բրդե չուխայով, տրեխ-տրեխատանով ու փորը պինդ սեղմած խոնջանով։ Փաթաթանները բիլակներին, ձեռքերը կրծքին խաչած՝ աչքի տակով նայում է համշարի փահ-լևանին, որ ուսերն ու մեջքը յուղոտած, թեթև-թեթև վեր-վեր է թռնում, աջ ու ձախ է ընկնում, մեկ էլ վազելով հեռվից գալիս, զա՛խկ, խփում է Փիրում ապոր մեջքին։ Նա խփում է, իսկ սա՝ իրենց անտառի հարյուր տարեկան կաղնին քեզ օրինա՛կ։ Ոնց որ արմատը խրել է անտակ հողի մեջ, թե օխտը գոմեշ էլ լծես, տեղից պոկ չի գալու։ Փահլևանը մեկ էլ թափ առած գալիս, նրա ուսին է խփում, գոտկատեղին է զարկում, ոտնամանի սուր տե-ղով կռաջիլին է տալիս... Խանը գոռում է, նորից է զգուշացնում. «Փիրում ապե՛ր, հա՛-ա՛, դրա՛ փանդուփի՛լը...»։

Մի անգամ էլ համշարին գազազած-շկկած գալիս է, որ կըրծ-քին զարկի, Փիրում ապերը սրա փորը ձեռն է գցում։ Փորը ձեռն է գցում պորտախառը, թափով բարձրացնում գլխից վեր և հոլի պես պտտեցնելով մոնչում է դեպի խանի կողմը։ Ասում է. «Խանն ապրած կենա, բա հո՞ր ա սրա փանդուփիլը։ Հիմի հի՞նչ

անեմ. տափին տամ, փուքսը նստի՞, թե՞ տանեմ, զցեմ Քարին տակի ձորը»։

Հետո հանգիստ ցած է դնում էս փահլևանին։ Ցած է դնում ու ձեռքով փորը սեղմում։ Որ սեղմում է, փահլևանը մի պինդ բաց է թողնում...

Ժողովուրդն էստեղ ծիծաղ-մասխարա է զցում, մի հո՞ւյ է անում, որ ձենը հասնում է Պարսկաստան։ Էսպես է մեր կարգը, շահ ու շահաստան. դե՛, եկե՛ք, ձեր մեռելը տարե՛ք։

Համշարին վեր է կենում, քոռ ու փոշման գնում է իր երկիրը։

Իսկ Շուշվա խանը տեսակ-տեսակ նվերներ է թափում Փիրում ապոր առաջ, հուրհրացող ակներ ու գոհարեղեն, ոսկի ու քահուրբար։ «Քոնն է,— ասում է,— հարստությանս կեսը։ Ասա, թե էլ ի՞նչ է սիրտդ ուզում, որ քո գլխին մատաղ անեմ»։ Փիրում ապերը ձեռքերը թափ է տալիս, ասում է. «Էս զիզի-բիզին իմ հինչի՞ն ա, խան։ Իմ սիրտն ուզում ա, որ ազգիս հարկուտուրքը թեթևացնես»։

Խանն էլ խոսք էր տվել, թեթևացրեց հայոց հարկուտուրքը։

Հետո էլ Փիրում ապորն օխտն օր-օխտը գիշեր պահեց իր ապարանքում։

Ասում են նաև, թե մի գիշեր էս անօրեն խանն իր կանանոցի ամենանախշուն օղլուշաղին բերում, թողնում է Փիրում ապոր հյուրասենյակում, ասում է. «Փառքդ շատ լինի, Փիրում ապեր, կատարիր նաև վերջին կամքս. զորավոր սերմդ պահ տուր էս հոգին...»։

Էստեղ խիստ նեղանում է Փիրում ապերը։ Երեսը շուռ է տալիս խանից ու նրա օղլուշաղից և ասում է. «Չէ՛ որ չէ՛։ Էդ լինելու բան չի, խա՛ն։ Մենք մեր սերմը,— ասում է,— օտար հող զցելու սովորություն չունենք։ Դրանից էլ զորավոր ա մեր սերմը»։

* *
*

Ֆերիկ Վեհիբ փաշայի ծրագրով մայիսի 24-ը պիտի դառնար ամենաճակատագրական օրը Սարդարապատյան Թուրք-հայկական ճակատում։ Այո՛, նա այդպես էլ կոչում էր՝ Թուրք-հայկական ճակատ։ Կովկասյան ճակատ չկար այլևս։ Վրաց մենշևիկները չէին կռվում և տիվ ու գիշեր բանակցություններ վարելով փորձում էին ոտքի կանգնեցնել իրենց կործանվող երկիրը։

Ադրբեջանի մուսավաթականները Նուրի փաշային ու Օսմանյան պետության մյուս բարձրաստիճան ներկայացուցիչներին ցնծությամբ դիմավորել էին Պարսկաստանի սահմանի մոտ, առաջնորդել երկրի խորքը։ Հիմա Բաքվի կոմունայի հարևանությամբ բարձրանում էր նրա հոգեառը։ Նուրի փաշան Աղդամից մինչև Գանձակի դռները քայլել է գորգերի վրա։ Ոտքի են կանգնել մահմեդականները և պատրաստ են սրբազան պատերազմի։ Ջիհադը՝ մահմեդական սրբազան պատերազմը կլուծի Օսմանյան կայսրության առաջ կանգնած մահու և կենաց խնդիրը. կա՞մ պետք է տիրանալ Բաքվին, ձեռք մեկնել անդրկասպյան հավատակիցներին և ստեղծել թուրք-թուրանական հզոր մի պետություն, որից հետո կայսրությունը վերից կխոսի հեռու-մոտիկ երկրների հետ, կա՞մ էլ Եվրոպայից դուրս մղված և փոքրասիական իր թերակղզու նեղ սահմանների ներսում կթոշնի ու կչորանա Օսմանյան կայսրության ուռճացած կաղնին։

Այնպես պարզ երևո՞ւմ էին վաղուց փայփայած երազի իրականացման հեռանկարները։ Արդեն խոսք էր գնում այն հարցի շուրջը, թե ովքե՞ր են լինելու Կովկասի ու Անդրկասպիայի կառավարիչները։ Ատրպատականի վրա աչք տնկած Ջյազիմ Կարաբեքիրը Արարատյան երկրի անկումին էր սպասում, որպեսզի զորքը Ջուլֆայի վրայով քշի դեպի արևելք, Թավրիզը դարձնի իր փայթախտ-շահաստանը, ապա շարժվի Բաքվի վրա։ Վեհիբն արդեն օրակարգի հարց էր համարում Բաքվի գլխին Օսմանյան կայսրության դրոշը տնկելու արարողությունը...

Եվ հանկարծ Սարդարապատի նման մի ողորմելի կետում իրենց հաղթական առաջշարժումը կասեցնում են, ովքե՞ր, հայե՞ր, Թուրքաց չորսուկես դարու հպատակները։ Նրանք, որ այս չորսուկես հարյուրամյակի ամբողջ ընթացքում ուր էլ որ եղել են, իրենցից միայն պարտվել են, ենթարկվել, դարձել հպատակ ու հլու հնազանդ։

Վեհիբը համոզված էր, որ իր զորքի ձախողանքի պատճառն իր իսկ ներսում է. այլասերվել է զորքը, ապիկարացել։ Կարսի ու Ալեքսանդրապոլի հեշտ հաղթանակը թմրեցրել է, և Սարդարապատի սառը լոգանքը կզգաստացնի, ուշքի կբերի նրան։ Զգաստացումն արագացնելու համար Վեհիբը լրացուցիչ միջոցառումներ էլ գործադրեց։ Մայիսի 23-ի լույս 24-ի գիշերը նրա շտաբից դուրս էին տարել կիսամեռ երկու բինբաշիների, որոնք

համարձակություն էին ունեցել ասելու՝ «Հայերն այստեղ լրջորեն կռվում են, և հաջողության համար մեզ նոր զորք ու զենքեր են պետք»։ Նոր զորքն, իհարկե, պիտի ժամաներ. Կարսից զանգել էին, թե Ալեքսանդրապոլից գնացք ուղարկեցե՛ք. գնդերը կազմ ու պատրաստ են։ Գնացքը եկել է, ուղևորվել Կարս և ահա ուր որ է կվերադառնա։ Ռազմաճակատի շտաբում այդ գնացքի բերելիք զորքն արդեն որոշակի առաջադրանք էր ստացել։ Բայց բինբաշին ո՞վ է կամ ի՞նչ, որ ֆերիկ-մարշալին է դաս տալիս և այն էլ խայտառակ ու աննամուս պարտություն կրելուց հետո, այսպես տմարդորեն օսմանյան բանակի անունը սարդարապատյան տափաստանում գետնով տալուց հետո։

Առավոտյան երբ եկավ ստուգայցի, բոլոր գնդերին արդեն հայտնի էր մահացու ծեծված երկու բինբաշիների վիճակը, և արդեն հրամանատարները ջանում էին այլևս չբորբոքել ֆերիկի զայրույթը։

Ոչ ոք այդպես գաղաղած չէր տեսել Վեհիբին, որն իր ծանոթների ու բարեկամների աչքում բարեկիրթ մարդու օրինակ էր և հեղինակություն։ Նույնիսկ պատահում էր, որ նրա քաղաքավարությունը համարում էին չափազանց. իբր, գերմանական կըրթությունը, քաղաքակիրթ Եվրոպայում անցկացրած տարիները նրան մոռացնել են տվել, որ ինքը պատրաստվել է գործելու ասիական կիսավայրենի միջավայրում։ Կառավարական հավաքների ու ռազմական միջոցառումների ժամանակ այդ միջավայրի ղեկավարների շրջանում նա երևում էր որպես ճերմակ ագռավն իր սև ցեղակիցների երամի մեջ։ Հիմա հանկարծ ու միանգամից վայրենացած եկել է Բաթումից և ոչ թե սև ագռավի, այլ գիշատիչ ուրուրի պես վրա է տալիս, կտցահարում ու հոշոտում։

Երեսունվեցերորդ հռչակավոր դիվիզիայի 108-րդ գնդի հրամանատարն արժանացավ այնպիսի պատժի, որպիսին հազվադեպ էր լինում նույնիսկ թուրքական բանակում։ Գունդը շարք-շարք ձգված, նոր ու շտապ համալրումներով կազդուրված, պատրաստ էր անմիջապես խոյանալու Սարդարապատի վրա։ Հենց այդ մասին էլ զեկուցեց գնդի հրամանատարը՝ սպասելով Կովկասյան ռազմաճակատի ղեկավարի խրախուսանքին։ Վեհիբն արտաքուստ հանգիստ էր, և միայն այտերի մկանների խաղերն էին

մատնում նրա ներսի չարությունը։ Այդ խաղը տեսնում էր գնդի հրամանատարը, որ սլաքի պես ձգված էր նրա առաջ։

— Դո՞ւ ես Դարդանելյան այս գունդը հայի կերակուր դարձրել երկու օր առաջ,— օձի պես ֆշշալով հարցրեց Վեհիբը և, պատասխանի չսպասելով, թքեց գնդի հրամանատարի երեսին։— Դավաճա՜ն, ես հիմա քեզ կախել կտամ այս զորքի առաջ...

Վեհիբը չհասցրեց իր սպառնալիքն իրականացնել, որովհետև հենց այդ պահին շտաբից աղետալի լուր ստացած նրա համհարզը մոտեցավ, ականջին ինչ-որ փսփսաց, և մայիսի 24-ի պարզ առավոտվա երկինքը կարծես փլվեց Կովկասյան ճակատի հրամանատարի գլխին։

Մի ժամ հետո ամբողջ Ալեքսանդրապոլն ու շրջակայքի գյուղերը, Ալեքսանդրապոլից դեպի հարավ, արևելք ու արևմուտք ձգվող գծերի կայարանները զրնգում էին անսովոր ու անսպասելի լուրից. Ալեքսանդրապոլի դեպոյի աշխատող Անդրեյ Վինոգրադովը, որ երեկ, իբրև ամենափորձված ու ամենավարպետ մեքենավար, պատասխանատու հանձնարարություն էր ստացել՝ իր գնացքով ուղևորվելու Կարս և այնտեղի կազմ ու պատրաստ զորքը փոխադրելու Ալեքսանդրապոլ, գնացել է, վերադարձել և Ալեքսանդրապոլ չհասած՝ գնացքը գահավեժ գլորել ձորը։ Սկզբում կարծել են՝ սովորական աղետ է, որի պատճառը երկաթգծի վնասվածքը կարող էր լինել կամ գնացքի անսարքությունը։ Սակայն անմիջապես վրա հասած ստուգողները կործանված գնացքի մեքենավարական խցիկում չէին գտել ո՛չ Վինոգրադովին, ո՛չ էլ աղետի ժամանակ նրա ներկայությունը հաստատող որևէ նշան։ Ուրեմն՝ գնացքը ձորի վրա բաց թողնելուց առաջ, նա իր խցիկից հեռացած է եղել։

Ալեքսանդրապոլի դեպոյում աղետի լուրը ոչ ոքի չզարմացրեց։ Սլաքավար Հարությունը, հին ու փորձառու աշխատող, յուրայիններին հանդիպելիս խորհուրդ էր տալիս ոչնչով չմատնել իրենց նախատեղյակությունը։

— Էդ ռուսը վերջին օրերին մի տեսակ էր երևում, ոնց որ խախտված լիներ։ Էսքան բա՜ն, էլ մենք ի՞նչ իմանանք, թե ի՜նչ է եղել, ո՜նց է պատահել,— խորհուրդ էր տալիս վարպետ Հարությունը։

Հաջորդ վթարը մեքենավար Սերոբի ձեռքով պիտի կատարվեր։ Բայց նա կարժանանա՞ր այդ բախտին։ Չէ՞ որ թուրքերն

այլևս չեն վստահի տեղացիներին կամ, հակառակ դեպքում, այնպիսի հսկողություն կսահմանեն, որ վթարի փորձ կատարելուց առաջ նրանք իրենց գլխից զրկվեն։ Ինչ էլ որ լինի, Սերոբն իրեն պատրաստ էր պահում զարհուրելի քննությանը և գիտեր, որ այն չի կարող ուշանալ. թուրքերը հիմա պիտի շտապեն։ Նրանք հիմա նման են քանդված մրջնանոցի բնակիչներին։

Հարությունն ասում էր.

— Դե՛, հիմի շներին կապեցեք, Վեհիբին բաց թողեք։

Աղետյալ գնացքի վագոնները ձորում իրար գլխի էին թափվել, և Վեհիբը հաշվում էր, որ մի քանի րոպեի ընթացքում, առանց կռվի ու փոխհատուցման, երկու կանոնավոր գունդ զինվոր է կորցրել։ Դա, անկասկած, էժան չի նստի իր վրա։ Եվ ֆերիկը ստույգ պատժի տակից դուրս գալու միակ ճանապարհը համարում էր ամենակարճ ժամանակում Երևան հասնելը։ Ամենակարճ ճանապարհով։ Այդ ճանապարհն Արաքսի վրայով պիտի անցներ այնտեղ, ուր, ամենայն հավանականությամբ, հակառակորդը ռազմական մեծ կուտակումներ չի կարող ունենալ և, ենթարկվելով հանկարծական ու կայծակնային հարձակման, ոչ մի դիմադրություն ցույց չի տա։

Սուրմարիում դարանած և այդ օրերին ամեն ժամ հարձակման հրամանի սպասող Մյուրսալ փաշան ուղիղ գծով Վեհիբից հրաման ստացավ անմիջապես իր Հինգերորդ դիվիզիայի բոլոր գնդերն Արաքսն անցկացնել և Ղամարլուի ու Զանգիբասարի վրայով արշավել դեպի Երևան։ Թիկունքից ստացած այսպիսի հարվածից հետո Աբարատյան դաշտի հայկական զորքը պիտի խուճապի ենթարկվեր և գլուխը կորցրած աջ ու ձախ ընկներ հարմար թաքստոցներ փնտրելու համար։ Թուրքական զորքերի գլխավոր հրամանատարը շատ որոշակի պատկերացնում էր կռվի այս ելքը և Շևքի փաշային, Քյազիմ Կարաբեքիրին ու Հիլմի փաշային էլ հանձնարարել էր Սարդարապատի ճակատում զորաշարժեր կատարել՝ պատրաստվելով գլխավոր ու կործանիչ հարվածին, մինչև որ Մյուրսալ փաշայի Հինգերորդ դիվիզիան հայերի թիկունքում հաջողությամբ իրականացներ իր խնդիրը։

* *
*

Պողոսբեկ Փիրումյանը հաստատ համոզված էր, որ կռվի հանգույցը լուծվելու է իր գնդի բռնած դիրքերի ուղղությամբ։ Թուրքերը պետք է հայոց ուժերն ու զգոնությունը փորձեն աջ և ձախ թևերում, նաև Արաքսն անցնելու փորձեր կատարելով։ Սակայն ամենուրեք նախապատրաստված հակահարվածների համն առնելով՝ նրանք ի վերջո կկուտակվեն Սարդարապատի ճակատի կենտրոնում և հենց այստեղից էլ կսկսեն իրենց նոր արշավը։ Այդպես էլ ճակատամարտը դարձյալ կփռվի Սարդարապատի դաշտում։ Նորից կարիք ու անհրաժեշտություն կլինի հենց այստե՛ղ ցույց տալու, թե ինչի՛ է ընդունակ հայ զինվորությունը, որ մնացել է իր ուժի ու բանականության հույսին։ Հատկապես բանակա՛նությա՛ն։

Բանականությունը գնդապետին հուշեց, որ գործը շատ կշահի, եթե այստեղ՝ Սարդարապատի դաշտում, ծուղակ սարքվի հակառակորդի համար։

Պատանեկան տարիներին Պողոսն իրենց գյուղի հանդ ու անտառում որսորդությամբ էր զբաղվում Դանիելի և տարեկից մյուս ազգականների հետ։ Այդ որսորդությունը ոչ այնքան համեղ մսի հայթայթում էր կամ ափերից դուրս հորդացող եռանդի պարպում, որքան սլայքար ու մենամարտ գյուղացու թշնամիների դեմ, որ գայլերն էին, Խաչենաձորից կամ Քիրսասարի անտառներից հայտնված արջերը։ Նրանք գիշերները, երբեմն էլ օրը ցերեկով, հարձակվում էին գյուղի նախրի ու ոչխարի վրա, պատառոտում էին խեղճ գյուղացու միակ ու վերջին կովը, հոշոտում էին ոչխարի ամբողջ հոտը, որպեսզի հարյուր տապալվածներից միայն մի քանիսին փախցնեն։ Դժվար էր հրացանով կռվել այդ ոնգեն զավթիչների դեմ, որովհետև միշտ չէ, որ նրանք մարդկանց մոտենում են մինչև մեկ գնդակընկեց տարածություն։ Իսկ այդ որսի հրացանի գնդակընկե՞ցն ինչ մի տարածություն էր. գայլը կարող էր մեկ ցատկով հաղթահարել։ Եվ այն ժամանակ իրենց անասուն թշնամիների դեմ կռվի ելած գյուղական պատանիները դիմում էին թակարդի՝ մարդու այդ ամենահնադույն զենքի օգնությանը։

Փիրում ապոր կամ Ասրիբեկի ժամանակներից մնացած ժան-

գոտ ահռելի թակարդներ կային՝ հատուկ արջերի ու գայլերի համար պատրաստված։ Դրանք լարելը մեծ ուժ էր պահանջում, որովհետև ամեն մահկանացուի գործ չէր պողպատե հզոր ծնոտն իրար բերել, որպեսզի թակարդի տափարակը բացվի։ Իսկ սովորական, նապաստակի և աղվեսի համար սարքված թակարդի վրա էլ ծիծաղում էին գայլերն ու արջերը։ Մի անգամ արջ էր ընկել Պողոսի այդօրինակ թակարդներից մեկի մեջ։ Առավոտյան Դանիելի հետ գնացել էին, տեսել՝ արջը ջարդոտել է թակարդը, ջարդոնի վրա էլ մի մեծ կարիք փռել ու հեռացել։ Պատահում էր, որ գայլերն ու արջերը հատուկ իրենց համար պատրաստված թակարդներից էլ էին փորձում ազատվել. արջը թակարդի մեջ մնացած իր թաթն էր ուտում-հեռանում, գայլը շարշարվում էր, ոտքը կտրում։ Սակայն ոտքի մեկը կամ թաթը կորցրած, արնաքամ գազանին հետապնդելն ու բռնելն ի՞նչ մի դժվար բան էր գյուղացի կտրիճների համար։ Արնաքամ գազանն էր մի տեղ ուժասպառ ընկած լինում, կամ արյան հետքով գտնում ու սպանում էին...

Սարդարապատի դաշտում թակարդ լարելու միտքը Պողոսբեկին հանգիստ չէր տալիս, և դեռևս քսաներեքի երեկոյան Դանիելբեկի հետ խոսելիս ասաց.

— Նման մի բան անենք։ Թուրքերը գլխի չեն ընկնի։

Ճակատի հրամանատարը, մի երկվայրկյան մտածելուց հետո, ուրախացավ այդ առաջարկության համար և գտավ, որ ամենահարմար թակարդ կարող է դառնալ կեղծ դիրքերի շարքը։

— Մեր գրաված գծից բավական հեռու, թուրքերի դիմաց դիրքեր փորենք, իբր, այդտեղ ենք խրամատավորված, բայց ինքներս դարանած սպասենք մեր հիմնական դիրքերում։ Միայն թե այդ սուտ գիծը պետք է ստի տպավորություն չթողնի,— խոսեց Դանիելբեկը։

— Դու այդ բոլորն ի՞նձ թող,— արդեն վճռաբար հանձն առավ գնդի հրամանատարը։— Առավոտյան դու ինքդ էլ կտեսնես ու կկարծես՝ իսկապես առաջ շարժվելով կանգ ենք առել թուրքի քթի տակ։

Լուսաբացին ճակատի հրամանատարը հեռադիտակով նայեց դեպի թուրքաց առաջապահների կողմը և նրանց դեմ, հազիվ 500—600 մետր հեռավորության վրա, տեսավ զիգզագաձև, ճակատի մի թևից մինչև մյուսը ձգված հողապատնեշը, որ, իբր,

քողարկված էր նորատունկ թփերով ու մացառներով։ Հողապատնեշի թիկունքից, այս ու այնտեղ ծխի հազիվ տեսանելի քուլաներ էին բարձրանում և ցնդում առավոտվա պարզ ու պսպղուն օդում։ Սա էլ էր քողարկման ձև՝ սուտն էր քողարկում։

Ճակատի հրամանատարը ռադիոյով բարի լույս մաղթեց Պողոսբեկին.

— Պո՛ղ, այս ո՞նց հասցրիր։

— Տղերքն ասում են՝ բա ափսո՞ս չէ այսքան առաջ գնանք ու մի կարգին չհիմնավորվենք։ Քակորի կրակն էլ այդպես պիտի ծխա մինչև իրիկուն։

— Թուրքերը պիտի մտածեն, որ այնտեղ մեզ համար խաղաղ սպասում ենք իրենց գրոհին։

— Եթե այսօր շարժվելու են, նախ հրետանային նախապատրաստությամբ հողին կհավասարեցնեն մեր դիրքերը, հետո էլ դուրս կգան հաղթական երթի։

— Ես ևս այդպես եմ մտածում։ Աստված բարի՞ն կատարի,— մաղթեց ճակատի հրամանատարը և շտաբի նեղ պատուհանից նայեց դեպի Արարատը։ Մեծ գագաթի ձյունը հուրհրատում էր վաղորդայնի շառափներից։— Դու մեզ հետ ես, ո՞վ սուրբ Արարատ։ Քո համառությունն է պետք այս դաշտը պաշտպանող զորքին։ Եվ դո՛ւ, ո՞վ սուրբ առավոտ, մեզ լավ օր խոստացիր։

Կապիտան Շնեուրը, շտաբի բաց դռնից ներս մտնելով, տեսավ հրամանատարի ոգեղինացած կերպարանքը, մտածեց, որ աղոթք է կարդում, անձայն ետ քայլեց և սպասեց, մինչև որ նա իր սրբազան ծեսը կատարի, դուրս գա։

* *
*

Թուրքական Հինգերորդ դիվիզիայի հարձակումը կատարվեց վաղ առավոտյան, Արաքսի վրա Գայլի դրունք (դռներ) կոչված հատվածում, որ գնում էր դեպի Ղամարլու և Յուվա բնակավայրերը։ Իգդիրի դաշտից արագորեն մոտենալով Արաքսին, կանգ էին առել նրա վարարած, պղտոր կոհակների առաջ։ Նախորդ օրերի հետախուզությամբ էլ պարզել էին, որ Կարակալայից մինչև Ղամարլուի մոտերքը ոչ մի կամուրջ չկա։ Սակայն Մյուրսալ փաշան՝ դիվիզիայի հրամանատարը, տեսել էր ֆերիկ Վեհիբի

արնակալած աչքերը և գիտեր, որ ձախողված ճակատի հրամանատարին հիմա քավության նոխազ է պետք, որպեսզի ամբողջ մեղքն ու մաղձը նրա գլխին թափի։ Կարգադրեց գետանցի համար գիշերով լաստեր սարքել և լույսը բացվելուն պես անցնել Արաքսի ձախ ափը։

Արաքսի վրա հսկողության կոչված հայկական զորաջոկատները մայիսի 21-ից էին սպասում թուրքերի հարձակմանը։ Այդ ընթացքում նրանք ոչ միայն հետազոտել և պարզել էին տեղանքի բոլոր մանրամասները, հնարավոր հարձակումը խափանելու միջոցները, այլև ստացել էին զինվորական ուժի ու զինամթերքի (հատկապես գնդացիրների) մեծ համալրումներ և աշալուրջ սպասում էին վճռական ժամին։ Կապիտան Երվանդ Մամաջանյանը՝ երիտասարդ, գրագետ մի սպա, օգնության հասած զորաջոկատներից յուրաքանչյուրի կազմում նշանակեց շրջակայքի գյուղերից հավաքված քաջահմուտ աշխարհազորայինների, որոնք հրաշալի գիտեին տեղանքը, ծանոթ էին արաքսամերձ տարածքի բոլոր գաղտնարաններին ու ելումուտներին։ Վանեցի գաղթականներից կազմված մի ամբողջ զորամաս, կադրային սպա Տիգրան Բաղդասարյանի գլխավորությամբ, բռնել էր Յուվայի դիմացի դիրքերը և սպասում էր թուրքերի հայտնվելուն։

Մամաջանյանն ու Տիգրան Բաղդասարյանը դիրքերի գիշերային ստուգայցերի ժամանակ նկատել էին աջափնյակի ամբողջ երկարությամբ վառվող կրակները և եկել այն եզրակացության, որ թուրքերը գետանցումի նախապատրաստության եռուզեռի մեջ են։ Հայ հրամանատարները եղան համարյա բոլոր դիրքերում և զորաջոկատներին կարգադրեցին պատրաստ լինել հակահարվածի, իսկ հրամանի դեպքում՝ առաջին իսկ հարվածը տալու։

Ամենակարևոր կետերում դարանած՝ թշնամուն սպասում էին իրենք՝ Մամաջանյանն ու Բաղդասարյանը։ Մամաջանյանի տրամադրության տակ գնդացիրներ կային, որոնք դասավորված էին գետի համեմատաբար ծանծաղ տեղերի դեմ և սպասում էին։ Բաղդասարյանին տվել էին թնդանոթային մի մարտկոց։ Սակայն փորձված զորականը ճշգրտորեն գուշակում էր, որ Արաքսի վրա հարյուր-հարյուր հիսուն մետր իրարից հեռու գտնվող հակառակորդների համար կարևորը լինելու է հրացանային ու գնդացրային կրակը, և իր դիպուկահարներին դասավորել էր այնպես, որ հայացքի տակ էր գետանցման ամբողջ երկարու-

թյունն իր յուրաքանչյուր մետր տարածությամբ։ Վանեցի սպան նույնիսկ մտածում էր, թե իրենց դիրքերի դեմ միայն խելագարները կարող են դուրս գալ մարտի։

Եվ, այդուհանդերձ, լուսադեմին թուրքերը հարձակման անցան։ Դա հարձակում էլ չէր։ Լաստերի վրա ջոկատ առ ջոկատ, գողեգող Արաքսն էին մտել և հույս ունեին, թե մինչև լույսը լրիվ բացվի, իրենք գետն անցած կլինեն ու ահա ձախափնյակում կհարձակվեն հայոց անպաշտպան գյուղերի վրա։

Ձախ ափին մոտեցած առաջին լաստի վրա գնդացրային կրակ բացեց կապիտան Մամաջանյանը։ Այդպիսի կրակից փրկվող չէր կարող լինել, որովհետև լաստը շարժման արագությունը կամ ուղղությունը փոխելու հնարավորություն չուներ, իսկ գընդակից փրկվելու համար հանձնվել մայիսյան Արաքսի կոհակներին՝ պիտի նշանակեր գնալ ստույգ մահվան։ Սակայն հնձող կրակահերթը ժամանակ էլ չտվեց ընտրություն կատարելու։ Մի քանի րոպե հետո Մամաջանյանը, առաջին լաստի հարցը լրիվ լուծված համարելով, կրակն ուղղեց երկրորդի վրա, որը հազիվ էր կտրել գետի հոսանքի կեսը և անկանոն կրակում էր դեպի հայոց դիրքերը։

Տիգրան Բաղդասարյանը տեսավ գետի կենտրոնում օրորվող լաստը, որի վրայից թուրքերը կրակում էին տարբեր կողմերի վրա։ Եվ, երբան էլ մտածել էր, թե կարիք չի լինի հրետանային մարտի մտնելու, ձեռքով նշան արեց մարտկոցի հրամանատարին, որ նշանակում էր՝ կրակել։ Որոտաց ահեղ մեքենան։ Լաստն ուղիղ նշանառության տակ էր ընկել, տաշեղներ դարձած օդ ելավ՝ իր հետ բարձրացնելով ջրի ահռելի ալիքներ, որոնց մեջ թալվում էին ասկյարները։

Բաղդասարյանը բռունցքն օդում թափահարեց հրանոթային մարտկոցի հրամանատարի համար, այսինքն՝ «Կեցցե՞ս»։

Կապիտան Մամաջանյանը վազեց դեպի վանեցի հրամանատարի դիրքը։

— Բարեկա՞մ,— ասաց,— այս տեսակ քոթակից հետո թուրքերը մեր դիմացից էլ չեն գա։ Բայց և այնպես դու լավ հետևիր, իսկ ես գնամ դեպի ներքև. այնտեղ ուժեղ հրաձգություն է։

— Հանգիստ եղի՛ր, պարոն կապիտան, ամեն ինչ լավ կլինի։

Ներքևում հայ զինվորներն ու աշխարհազորայինները, գետափի բլուրների թիկունքներում ու հեղեղատների հարմար տեղե-

ռում քողարկված, որսում էին ջրի մակերեսին հայտնվող ասկյարներին։ Լաստերի վրա կուտակված զորաջոկատների դեմ գընդացիրներն էին անխափան գործում։

Նահանջած թուրքերը, ըստ երևույթին, հասկանալով, որ իրենց ծրագրած հարձակումը կկործանի ամբողջ դիվիզիան, և անփառունակ այդ վախճանից լուր տանող էլ չի մնա, վերադարձել էին ելման կետերը, որպեսզի հրետանային կրակով բաց անեն հետագայում գնալիք ճանապարհը։

Գերմանական արտադրության թնդանոթներ էին կանգնած Արաքսի աջ ափին, այն օրերում ամբողջ աշխարհին հայտնի լավագույն թնդանոթները։ Մյուրսալ փաշան կարգադրեց արկերով ձախափնյակի հողը շուռ տալ, թշնամու զորամասերը վառել արկերի տարափով։ Սակայն մեկը մյուսից մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա դիրք բռնած և, մանավանդ, հմտորեն քողարկված, ամուր պատնեշների ու խոր փոսերի մեջ պաշտպանված հայ զինվորների համար անվտանգ էր արդեն այդ լավագույն գերմանական թնդանոթը։

Մի ժամվա դաժան կրակից հետո թուրքերը մտածում էին, որ ձախափնյակի մկներն էլ պիտի վառված ու փոշիացած լինեն, և նոր հարձակման անցան։ Նախորդ հարձակման վախը սրտներում, սակայն արտաքուստ հանգիստ ու անվախ լցվեցին լաստերի վրա ու քշեցին դեպի ձախ ափը... Եվ հանկարծ այդ խանձված ու մեռած ձախափնյակը կենդանացավ։ Նախկին դիրքերից կրակ էր տեղում հարձակվող թուրքերի վրա։

Մյուրսալ Փաշան իր բարձրադիր դիտակետից ամենայն պարզությամբ տեսնում էր Հինգերորդ հրաձգային դիվիզիայի աղետալի վիճակը և մտածում, որ այսօրինակ պատերազմով օրվա վերջում ինքը կմնա դիվիզիայի հրամանատար՝ առանց դիվիզիայի։ Բայց ի՞նչ աներ, երբ այնտեղ՝ Ալեքսանդրապոլում, Կովկասյան բանակի հարամանատար Վեհիբը ամբողջ ճակատով հարձակման անցնելու կարգադրություն է արել և սպասում է միայն հաղթական լուրերի։

Լուսադեմին ֆերիկ Վեհիբն անձամբ խոսել էր նրա հետ և հավաստիացրել, որ Հինգերորդի հաղթանակով է պայմանավորված ամբողջ ճակատի հաջողությունը։ Իսկ հիմա Հինգերորդը միայն ջարդվում էր ու ետ սողում։ Նա փորձեց իրավիճակի մասին հեռախոսով հաղորդում անել ֆերիկին։ Շտաբում ասացին.

— Մեքենայով գնացել է դեպի Սարդարապատ, շուտով կվերադառնա։— Շտաբի պետն էր, որի ձայնում Մյուրսալն զգաց մի անորոշ ցավ։— Բայց քեզ խորհուրդ կտայի նման տեղեկություն իրեն չհաղորդել։

— Իսկ ի՞նչ հաղորդեմ,— պայթեց դիվիզիայի հրամանատարը։— Ասեմ՝ հաղթում ենք, ջարդում-փշրո՞ւմ ենք հայերին, երբ այդ շեյթանի ծնունդները կառչել են իրենց դիրքերին և ալլահի կրակն են թափում մեզ վրա։

— Չգիտե՞մ, չգիտե՞մ, Մյուրսալ փաշա,— անմիջապես պատասխանեց շտաբի պետը և հայտնեց նաև մի գաղտնիք.— Ինձ կարգադրել էր Հինգերորդից կարևոր լուր ունենալուց անմիջապես հաղորդել իրեն։ Գտնել և հաղորդել։ Բայց այդպիսի լուրն ինչպե՞ս հաղորդեմ։ Չէ՞, բարեկամ, գլխիցս ձեռք չեմ վերցրել։ Նա հիմա այնպիսի հոգեվիճակում է, որ մեղավորներին բաց կթողնի ու թույնը կթափի իմ գլխին։

Մյուրսալ փաշան վախի ու կատաղության մեջ գլուխը կորցրել էր և չգիտեր՝ ի՞նչ անել, ի՞նչ խոսել։ Բայց ո՞նց թե «մեղավորներին բաց կթողնի»։ Ուրեմն, ինքը մեղավո՞ր է, որ չի կարողանում այդ անմիտ հրամանը կատարել։ Այն ո՞վ է ասել, թե կարելի է զորքը քշել հրաշալի քողարկված, իր դիրքերում հարված ստանալու պատրաստ հակառակորդի դեմ և սպասել, որ այդ հակառակորդը պիտի խոնարհաբար ասի. «Եկե՛ք, բարո՞վ եք գալիս, մեր աչքի, մեր գլխի վրա տեղ ունեք։ Եկե՛ք, մեզ հաղթեցե՛ք»։ Եվ նոյ շտաբի պետին խնդրեց, այնուամենայնիվ, գտնել վեհիր փաշային ու հաղորդել, որ ինքը, բավական կորուստներ տալուց հետո, դիվիզիայի մնացորդները ետ է քաշում, պիտի սպասի նոր կարգադրության։ Այլ խոսքով՝ այն, ինչ սպասում են իր դիվիզիայից, անհնար է իրականացնել։

— Ոնց կուզե՞ք, Մյուրսալ փաշա,— զրույցը փակեց շտաբի պետը։— Ես ձեր մասին էի մտածում, թե չէ, նրան գտնելն ինձ համար ի՞նչ մի դժվար բան է։

Ֆերիկ Վեհիբը շատ էլ հեռու չէր բանակի շտաբից. կայարան էր գնացել Կարսից սպասվող համալրումների խնդրով։ Այնտեղ ոչինչ չկարողացավ պարզել։ Կարծես բոլորը, խոսքները մեկ արած, որոշել են ձախողել իր ծրագրերը։ Մռայլ էր ու դաժան, շտաբում նստելու, նույնիսկ կանգնելու տեղ չէր գտնում որսը ճանկերից փախցրած վագրի նման։ Եվ շտաբի պետը չխնայեց

նրան, հաղորդեց՝ ինչ որ գիտեր Հինգերորդ հարվածային դիվիզիայի մասին։

— Զանգել էր Մյուրսալ փաշան,— անշտապ սկսեց նա։

— Հը՛մ-հը՛մ,— աչքերը չռած մռնչաց Վեհիբը։

— Դե՛, նա ապիկարի մեկն է, չէ։ Ես քանի անգամ եմ քեզ զգուշացրել։

— Հը, ի՞նչ էր ասում, ո՞ւր է հասել,— գլուխն առաջ տված գոռաց Վեհիբը, և շտաբի պետին այնպես թվաց, թե նա, տագնապի ձայն լսած նժույգի պես սրած ականջները վեր տնկեց.— Դե՛, ի՞նչ ես ձգում։

— Ասաց, որ մեծ կորուստներ է կրել...

— Բայց առա՞ջ է գնացել։

— Ո՛չ մի քայլ։ Առաջապահները ջարդվել են, և, հարձակման հետագա փորձերն անմիտ համարելով, դիվիզիայի մնացորդները ետ է քաշում...

— Վա՛յ, ես դրա... Վա՛յ, ես այդպիսի զորքի...,— և Վեհիբ փաշան՝ ֆերիկ-մարշալն ու Կովկասյան ճակատի հրամանատարը, Մյուրսալ փաշայի ու նրա զորքի յոթ պորտը նախշեց այնպիսի հիշոցներով, որոնցից կարող էին վառվել բարեկիրթ ամեն մի թուրքի ականջները։ Եթե, իհարկե, շրջապատում գտնվեր այդպիսի թուրք։

Իսկ այնուհետև հեռախոսով կապվեց Սարդարապատի դեմ կանգնած Երեսունվեցերորդ դիվիզիայի հրամանատար Շևքի փաշայի հետ, նախապես, որպես ոգեպնդիչ լիցք, հայհոյանքի հարմար տեղերում հիշեց նրա տոհմի մեռելներին ու ողջերին, նոր միայն նայելով գրպանի ոսկե ժամացույցին, գայտնեց, որ արդեն ժամը 12-ն է։

— Ժամը 12-ին, ուրեմն, դու հարձակման ես անցնում։ Հասկացա՞ր, ա՛յ յո՞խ դառնաս դու քո ազգուտակով։

— Հասկացա՛, ֆերիկ, հասկացա՛,— հեռախոսով թրթռում էր դիվիզիայի հրամանատարի դողացող ձայնը։— Բոլոր թնդանոթներից մի այնպիսի կրակ թափեմ, որ հայ զորքից մեկն էլ չմնա՝ խաբարը Երևան տանելու համար։

— Հա՛, այդպե՛ս։ Այս ճակատամարտով դու պիտի քավես նախանցյալ օրվա մեղքդ։ Դու գիտես, որ ես դեռ քեզ չեմ պատժել այն խայտառակության համար։ Ես... դու ձենդ կտրի՛ր ու լսիր ի՛նձ։ Միշտ չէ, որ մարդուն այդպիսի հնարավորություն է

ընձեռվում։ Պիտի հենց հիմա ցույց տաս՝ դու մի բան արժե՞ս, թե՞ ոչ։ Հակառակ դեպքում քեզ մի քոսոտ շան հետ կապած պիտի նետեմ աղբանոց։

* *
*

Փիրումյան զորապետները լավ էին գուշակել թուրքական հրամանատարության ռազմավարական հմտությունը։ Ժամը 12-ին սկսվեց հայոց ճակատի կեղծ գծի ռմբակոծությունը։ Երևվի էրզրումից մինչև Սարդարապատ հասնելը թուրքական հրանոթների փողերից այնքան արկ չէր ելել, որքան այստեղ մի ժամվա ընթացքում։ Կեղծ գիծն ամբողջ երկարությամբ հրանոթային չընդմիջվող, կենտրոնացված կրակի տակ էր։ Արկերի պայթյուններից հողի, խճաքարերի ու փոշու սյուներ էին բարձրանում, և այդ թիտ սյուներից հյուսված վարագույրի ետև ոչինչ չէր երևում՝ ո՛չ կեղծ գիծը, ո՛չ նրա թիկունքում ձգվող իսկական ճակատը։

Ի՞նչ էին մտածում թուրքերը, որ իրենց անապասելի ու ահավոր հրետանաձգությունից փրկվելու համար հայոց զորքը տապ է կացել ու խրամատներից չի՞ շարժվում, որ իրենք պիտի այնքան կրակեն, մինչև այդ զորքի վերջին զինվորն էլ դեանի տա՞կն անցնի։ Ի՞նչ էլ որ մտածելիս լինեին, ի՞նչ տեսակ ռազմագիտական տրամաբանությամբ էլ առաջնորդվելիս լինեին, կրակի տակ էին առել սուտ ճակատը և անպայման համոզված էին, որ հենց այստեղ է փակվում պատերազմը, այստեղ է վերջացման դրվում հայոց բանակը։

Սարդարապատ կայարանի ջրհան աշտարակը թուրքերից խլվելուց հետո դեռ չէր նորոգվել, որպեսզի ծառայեր իր իսկական նպատակին։ Դանիելբեկ Փիրումյանն այն դարձրել էր իր դիտակետը և Ալեքսանդր Շնեուրի հետ այդ բարձրությունից հայացքի տակ էր առել ամբողջ ռազմաճակատը։ Նա ուրախ էր, որ ամեն ինչ ընթանում է նախատեսվածի պես։ Գոհունակությամբ հիշեց Պողոսբեկին և հանկարծ շատ ցանկացավ իմանալ՝ նա դիտո՞ւմ է թուրքերի հրետանային կրակը։

— Հետաքրքիր է՝ գնդի հրամանատարն ի՞նչ է անում այս պահին,— ինքն իրեն հարցրեց նա։

Դաշտը բռնած դղրդոցի մեջ կապիտան Շնեուրը չլսեց նրան և մոտեցավ.

— Բա՞ն էիք ասում, պարոն հրամանատար։

— Ասում եմ՝ ո՞ւր է Պողոսբեկը, տեսնո՞ւմ է, թե թուրքերն ինչպես են կատարում իր գծած պլանը։

— Ռմբակոծությունից առաջ նա խրամատներում է եղել,— պատասխանեց Շնեուրը։— Երևի հենց այնտեղ էլ հրամանի է սպասում։

— Մենք պայմանավորվել էինք, որ, եթե ամեն ինչ լինի մեր ծրագրածի պես, լրացուցիչ ոչ մի հրամանի չսպասեն։

— Ճի՞շտ որ,— հիշեց Շնեուրը։— Երևի հիմա թուրքերն առաջ կշարժվեն։

— Թող շարժվե՞ն, թող շարժվե՞ն։ Չէ՞ որ մենք հենց դրան ենք սպասում։

Թուրքական հրանոթները շարունակում էին ռումբեր թափել հայոց «դիրքերի» վրա, որովհետև այնտեղ դեռ տեղ-տեղ ծխում էին աթարի կրակները։ Նույնիսկ ռումբերի փորած փոսերում էլ ցանուցիր եղած աթարի կտորներից մեղմ ծուխ էր բարձրանում, և թուրքերը շշմած էին այդ հրաշքից։

Վերջապես հրանոթների դղրդոցները սակավացան, և լսելի դարձան հայոց զանգերի ղողանջները, որոնք գալիս էին բոլոր կողմերից։ Շոգ էր, օդն այնպես խտացել էր, որ տեսանելի էր նրա թանձր շարժումը։ Այդ պատճառով էր, որ զանգերի ձայնը հեռացել էր, խլացել և թվում էր գետնի տակից ու երկնքի հեռավոր խորքերից եկող քառատրոփի արձագանք։ Մի շաբաթ էր, ինչ թուրքերը հանգիստ չունեին այդ զանգերի սարսռազդու ղողանջներից։ Մի շաբաթ էր, ինչ նրանք ուզում էին սպանել այդ ձայները, որ այնպես թափվում էին նրանց գլխներին՝ քուն թե արթմնի, կոկորդում մնացած ոսկորների պես խեղդում էին ու տանջում։

Իջնելով իրենց գրաված դիրքերից՝ թուրքերը հայոց ճակատը համարում էին հողին հավասարեցված և Սարդարապատի դաշտի ամայության, շոգի ու փոշու մեջ գլուխներն էին թափ տալիս, որպեսզի թոթափեն զանգերի ղողանջները։ Դաշտում ջուր չկար, որ իրենց նետեին ջրի խորքը, ժայռ չկար, որ ցած գլորվեին ու փրկվեին այդ ահավոր հետապնդումից։

Հարթ ու բաց դաշտը մեկեն լցվեց ասկյարներով։ Հիմա նրանց

հայացքները տնկված էին Էջմիածնին ու Երևանին։ Նրանց ասել են՝ Էջմիածնի Ուշքիլիսան (երեք վանքերը) նստած է գանձերի վրա, որովհետև աշխարհի ոսկու և գոհարեղենի կեսը հայոց վանքերում է ամբարված։ Նրանց ասել են՝ հայոց ամենանախշուն աղջիկները Երևանում են, մրահոն ու լուսնակերես, փափուկ-փափուկ, ոնց որ կանաչ արոտներում տրտինգ տվող երինջներ։ Նրանց ասել են՝ այդ բոլորը և էլի ինչ որ սրտներդ ուզեն, ձերն են, շո՜ւտ հասեք, որ չփախչեն ու չփախցնեն...

Թուրքերն առաջ էին շարժվում շղթա կազմած, վտառ-վտառ, և նրանց վրա կրակող չկար։ Նրանց անհանգստացնողը միայն զանգերն էին, որոնց ձայներն ավելի էին սաստկացել։ Բայց դա հիմա կարծես այնքան էլ վտանգավոր չէր, որովհետև գալիս էր քարուքանդ եղած դիրքերի ետևից, անմարդաբնակ, անշունչ թվացող հեռավոր գյուղերից ու ավաններից։ Թուրքերը սիրտ էին առել, մոռացել էին ամեն վտանգ ու զգուշություն, երգում էին։ Երգում էր մեկը, մյուսները նրա հետ մրմռում էին ու երգի ամեն տողի վերջում միահամուռ գոռում՝ հո՛պ-հո՛պ։

Հայոց դիրքերը լուռ էին, և դա կրակոցի պատրաստ հրազենի լռությունն էր։ Որքա՜ն դժվար է մատը հանգիստ պահել հրահանի վրա, երբ թշնամին նշանացույցի կենտրոնում է ու առաջ է գալիս։ Բայց պետք է հաղթահարել և ա՛յս դժվարությունը. չէ՞ որ գնդի հրամանատարն ատրճանակի կրակոցով հրահանգ չի տվել։

Վարանդեցի Արշակն արծվային հայացքով որոշեց իր առաջին զոհը։ Նա քայլում էր շարքերի առջևից՝ աջ ու ձախ դառնալով, ձեռքերը վեր ու վար շարժելով. երևում է՝ խոսում է, կարգադրություններ է անում, մեծավորն է երևի դիմացից եկող խառնամբոխի։ Ուսադիրները մատնում էին նրա բարձր աստիճանը, և Արշակի սիրտը թփթփում էր նշանացույցի մեջ վեր ու վար անոցի քայլերից։ Սպասումն ի՞նչ հիմար բան է։ Այդ ինքնազսպո՛ւմը։ Դիմացից թշնամին է գալիս, նա, որին պիտի սպանես և այդ ցանկությունից վառվում ես ահա ուղիղ չորս տարի։ Այդ չորս տարվա ընթացքում նա կոտորել է քո ազգի կեսը, ոչնչացրել է անպատիժ ու անսանձ։ Եվ հիմա էլ այստեղ է քայլում դեպի քո երկրի վերջին մի թիզ հողն ու մնացորդաց մի բուռը, որպեսզի նրանց էլ ոչնչացնի և հետո ասի՝ ահա՛, այսպես. կա՛ր հայ ազգ,

նա մեր թշնամին էր, ոչնչացրինք, էլ չկա, և մե՞նք ենք նրա տան ու հողի տերը։

Արշակն ամենից շատ մտահոգված էր մի բանից. վախենում էր՝ ինքն ուշացնի, և նշանացույցի մեջ քայլող ամբարտավանն ուրիշի գնդակին բաժին դառնա։ Իսկ որպեսզի իմանա՝ ի՞նչ գնդակն առավ, թե՞ ուրիշինը, ինքը նշան է բռնել ճակատին։ Տարածությունն այնքան փոքր է, որ ամեն ինչ պարզ կերևա։

Գնդապետ Պողոսբեկ Փիրումյանի ատրճանակի կրակոցը թուրքերի վրա պայթեց որպես ահավոր ամպրոպ այն պարզ ու տոթ կեսօրին։ Եվ Արշակի հրացանն էլ այնքան արագ արձագանքեց, որ կարելի էր կարծել, թե թուրք հրամանատարը հենց ատրճանակի գնդակից տապալվեց։ Շոգած էր, ֆեսը ետ էր տվել, տնկել ծոծրակին։ Շշմեց կանգնած տեղը, և մինչև ձեռքը կտաներ դեպի ճակատը, փայտի պես ընկավ առջևի վրա։

Խուճապը տվեց թուրք առաջապահներին։ Քողարկված հայկական դիրքերից հնձող կրակով գործում էին գնդացիրները։ Հրացանավորներից փրկություն չկար, որովհետև այդքան մոտիկից փակ աչքերով էլ կարելի էր անվրեպ կրակել։ Նույնիսկ ատրճանակի գնդակը հասնում էր նպատակին։ Եվ վար էին թափվում կարկտահար ասկյարները։ Հնձվողների հետ գետնին էին փռվում նաև նրանք, որ դեռևս գնդակ չէին առել, բայց հասկանում էին, որ շրջապատում պատսպարվելու տեղ չկա, և միակ փրկությունը մեռածի պես ընկնելն է կամ զոհված հարևանի թիկունքում թաքնվելը, եթե, իհարկե, այս տեղատարափը ժամանակավոր բնույթ պիտի ունենա։ Ետ փախչողներն ընկնում էին երկու քայլ չարած։ Սուտմեռուկի տվողները հույս ունեին, թե ալլահը կօգնի և «ալլահ աքբա՜ր» էին կանչում մտքներում։

Հայոց զորքին կարգադրված էր տեղից չշարժվել և, եթե զորաշարժի կարիք լինի, այսինքն՝ եթե թուրքերն սկսեն թնդանոթներով շոշափել կրակակետերը, ապա զգուշորեն ետ սողալ դեպի հիմնական խրամատները, որոնք լավ են քողարկված և հարմար ու ապահով են նույնիսկ հրետանային կենտրոնացված կրակի դեմ։

Գնդի հրամանատար Պողոսբեկ Փիրումյանը դիտակետում հետևում էր մարտին և ականջը ռադիոյի ձայնին էր. սպասում էր հրամանի, որովհետև արդեն թուրքերը հրետանային կրակի տակ էին առել կրակակետերը։ Աջում ուղիղ նշանառությամբ վնասվել էր գնդացիրներից մեկը։ Գնդի հրամանատարը տես-

նում էր, թե ինչպես գնդացրորդը քաշքշում է մեքենան ու չի կարողանում կրակել։ Նրան օգնող չկար, ուրեմն պարզ է, որ ընկերը ծանր վիրավորվել է կամ սպանվել։ Համհարզին կարգադրեց խրամատով վազել գնդացրորդի մոտ և, եթե լուրջ օգնություն է հարկավոր, գումարտակի հրամանատարին տեղեկացնել։ Իսկ ինքը փորձեց կապվել ճակատի շտաբի հետ։ Պատասխանեց կապիտան Շնեուրը.

— Պարոն գնդապետ,— ասաց,— կարգադրված է սպասել։ Երևի թուրքերը նոր հարձակում կձեռնարկեն։

— Իսկ եթե չձեռնարկեցի՞ն։

— Սպասել՝ բոլոր դեպքերում։ Պարոն Դանիելբեկ Փիրումյանի կարգադրությունն է։ Ասաց՝ ավելորդ կրակոցների կարիքն էլ չկա։ Հանձնարարեք, որ դիպուկահարները հետևեն դաշտում ընկածներին...

Պողոսբեկն արդեն նման կարգադրություն ինքն էր արել՝ վստահորեն ենթադրելով, որ ընկածների թիկունքներում պաշտպանվողներ կան, որոնք հարմար պահի են սպասում ետ փախչելու համար։ Բայց նրանց պատճառով չէր կարելի կրակով «սանրել» ընկածների շարքերը, այդքան զինամթերք չէր կարելի ծախսել։ Գնդապետն իր այս հրամանի ու Շնեուրի տված տեղեկության կապակցությամբ մտածեց, որ ինքն ու Դանիելբեկը, իրարից անկախ նույն ենթադրությունն են արել և, դրանից ելնելով էլ, կատարել նույն կարգադրությունը։ Նա մտքում ծիծաղեց այդ և նախորդ կրկնությունների վրա։ «Այս ի՞նչ է,— մտածեց,— Դանիելբեկի կրկնօրինա՞կն եմ դարձել։ Թե երկուսս էլ, աշխարհի բանից անտեղյակ, շարժվում ենք ամենատես ու ամենահաս երկնային կամքով։ Եթե ես իր նման պիտի մտածեմ ամեն տեղ ու ամեն ինչի մասին, եթե նա ինձ, ես իրեն պետք է հասկանանք կես խոսքից, երբեմն նույնիսկ առանց այդ կես խոսքն ասելու, կարիք կա՞, որ ես ստվերի պես քարշ գամ իր ենթակայության ներքո։ Բայց ո՞ւր գնամ, երբ մեր ազգը միայն մեկ ճակատ ունի իր թշնամու դեմ... Եվ, այսուհանդերձ, մտածելո՞ւ բան է։ Ա՛յ, այս պատերազմն ավարտվի, հենց իրեն՝ Դանիելբեկին, կասեմ. «Այս ո՞նց է լինում, որ ես միայն քեզ նման եմ մտածում, ինչո՞ւ դու խլել ես իմ ինքնուրույնությունը, այն, ինչ այսքան տարի աչք էր ծակում բոլոր այն զորամասերում, ուր ծառայելու բախտ եմ ունեցել։ Ամենուրեք բարձր

հրամանատարները, հատկապես ծեր գեներալները, դիտողություն էին անում. «Պավելբեկ Փիրումյանն, իհարկե, այլ կարծիքի է, դե՛, նա ուրիշ տեսակ է մտածում, մտածելու մի ուրիշ եղանակ ունի...»։ Եվ դա այնպես էին ասում, ինչ որ խոսքը վերաբերեր մի անկորմալ անուղղելիի, որի նկատմամբ ներողամիտ են միայն նրա համար, որ այդ անկորմալն ունի նաև արժանիքներ։

Գնդապետի դիտակետը խրամուղու կենտրոնում էր, կրակակետերի թիկունքում, և այնտեղից պարզ երևում էին դիրքավորված մարտիկների գործողությունները։ Պողոսբեկը հաճախ էր հայացքը դարձնում նորաթուխ զինվորներին, և ուրախ էր, որ նրանց հարևան փորձառուներն ամեն րոպե հետները խոսում էին, ցույց էին տալիս հրաձգության գաղտնիքները, բացատրում էին մարտավարության տարրական եղանակները։ Առաջին մարտից անմիջապես հետո նա գնդի բոլոր օղակները համալրել էր գոնե առաջին հայացքից ընդունակ թվացող աշխարհազորայիններով և կարգադրել, որպեսզի ջոկերում յուրաքանչյուրին կցեն մի փորձառու զինվորի։ Հիմա այս փորձառուն էլ յուրովի հանձնարարություն էր ստանում սովորեցնել նրա չիմացածը, ապա աչքը վրա պահել, որ նշանակում է անընդհատ հետևել ու օգնել։

* *
*

Երեկոյան դեմ կապիտան Շնեուրը համարյա վազելով ներկայացավ ճակատի հրամանատարին, որը ջրհան կայանի դիտակետում էր, և անսովոր ցնծությամբ զեկուցեց.

— Պարոն հրամանատար,— ասաց,— ուրախ լուր ունեմ հաղորդելու։

— Ի՞նչ է պատահել, կապիտան։— Փիրումյանն այդպես երջանիկ ու ժպտերես չէր տեսել իր օգնականին։— Ղարաքիլիսայի՞ց է լավ լուր եկել։

— Ո՛չ, պարոն հրամանատար։ Ձեզ պատկերացնի։ Ալեքսանդրապոլում մեծ աղետ է եղել. գնացք է գլորվել ձորը։

— Դա ի՞նչ ուրախալի բան է, կապիտան,— տխրեց Դանիելբեկ Փիրումյանը, մեկ էլ մտածեց, որ գնացք է՛լ կա, գնացք է՛լ և պայծառացավ։— Հո ռազմական գնա՞ցք չի եղել։

— Ասկյարներով լիքը,— ժպտում ու ծափ էր զարկում Շնեուրը

ը։— Կարսից օգնական ուժեր հասցնող գնացքն է եղել։ Ռուս մեքենավարը գնացքը բաց է թողել դեպի ձորը, ինքը փախել։ Չե՞ք պատկերացնի...

— Ռուս մեքենավա՞ր։

— Այո՛, ռո՛ւս։ Ազգանուն էլ Վինոգրադով է։ Վեհիբ փաշան ռադիոյով զեկուցում էր իր կառավարությանը։ Պատահաբար որսացի խոսքը։ Գերմաներեն էր զեկուցում, երևի, որպեսզի որսացողները բան չհասկանան։

— Գերմաներեն լավ գիտեն նրանք,— տնքաց Փիրումյանը։— Բոլորն էլ ձեր հայրենիքում են կրթվել ու դաստիարակվել։

Կապիտան Շնեուրը գլուխը կախ գցեց մեղավոր, կարծես ինքն էլ մեղավոր էր, որ թուրքերն իր հայրենիքում էին կրթվել ու դաստիարակվել։

— Ես էլ ասեմ՝ ինչո՞ւ չկրկնեցին հարձակումը,— կապիտանին անհարմար վիճակից հանելու նպատակով խոսքը փոխեց Փիրումյանը։— Նրանք այսօր պետք է ցույց տային, թե իրենք ինչի՛ են ընդունակ։

— Նրանք այդ ամեն օր էլ ցույց էին տալիս, պարոն հրամանատար,— բազմանշանակ ասաց Շնեուրը։

— Այո՛, ամեն օր էլ ցույց էին տալիս և դեռ կշարունակեն,— հանկարծ բռնկված մի զայրույթով՝ կապիտանի գցած խայծը բռնեց հրամանատարը։— Նրանք որոշել էին այսօր ոտքի տակ տալ էջմիածնի սրբությունները։ Ընկած մինչաշու պայուսակից օրագիր են հանել։ Այնտեղ գրված է, որ առավոտյան Վեհիբ փաշան այդպիսի հրաման է տվել։

—Ի դեպ, պարոն հրամանատար,— անհամարձակ խոսեց Շնեուրը,— զորամասերից անվերջ հարցնում են, թե ինչո՞ւ տեղից չենք շարժվում։ Մի քանի անգամ շտաբս կապիտան Վարդան... Ո՞նց է ազգանունը... Ջակոնյա՞ն, Ջակինյա՞ն...

— Վարդան Ջաղինյա՞նը։ Քաջ տղա է, ի՞նչ է ուզում։

— Անհագստանում է, որ դաշտում այսպիսի հաջողություն ունենալուց հետո տեղները նստած են։ Թե չէ, ասում է, հաջողությունը կարելի է զարգացնել հարձակվելով։

Դանիելբեկ Փիրումյանը ծիծաղեց քթի տակ։

— Իհարկե, լավ է, որ մեր ենթականերն այդպես վառվում են առաջ գնալու և թշնամուն ջարդելու կրակով,— հետո ծանր

հառաչեց ճակատի հրամանատարը։— Բայց պիտի հաշվի առնել, որ մեր դեմ հիմա կանգնած են Թուրքական երկու դիվիզիա։ Այդքան փորձված զինվորներ, որոնք մինչև ատամները զինված են,— և այստեղ հրամանատարը դարձյալ ձայնին ուրիշ երանգ տալով՝ շփեց զրուցակցի ցավող տեղը,— զինված են գերմանական ընտիր թնդանոթներով ու գնդացիրներով... Երկու դիվիզիա, նրանց թիկունքում էլ՝ առնվազն երկու ուրիշը... Իսկ մենք ինչո՞վ պետք է բաց դաշտում հարձակման անցնենք ու հաղթենք այդքանին։ Մեր անփորձ աշխարհազորայիններո՞վ, թե՞ թիկունքից պարեն բերող ավանակների շարասյուներով։

Ալեքսանդր Շնեուրը զարմացած էր իր հրամանատարի անեռանդ տրամադրությամբ, մտածում էր, թե ի՞նչ մեծ պատճառ է եղել այսօրինակ փոփոխության։ Երեկ-մյուս օրը խոսում էր այն մասին, որ պետք է, ի՞նչ գնով էլ լինի, կասեցնել Թուրքերի առաջխաղացումը, ապա հակահարձակման անցնել և հայրենի հողը մաքրել նրանցից։ Այսօր փոխվել է խոսքը, տրամադրությունն այն չէ այլևս...

Փիրումյանը Շնեուրի դեմքին կարդաց այդ հարցը և ջանաց պարզել նրա համար այն, ինչ իրեն դեռևս չէր պատկերանում ամբողջ որոշակիությամբ։

— Երևի մտածում եք, թե ո՞վ է այս խոսքերի տերը, ի՞նչ էր ասում երեկ և ինչ՝ այսօր։ Այդպես չէ՞։ Ա՛յ, ձեր դե՛մքն ինձ հուշեց։ Գուցե իրավացի եք, որ այդպես եք մտածում։ Իսկ դիրքերում ավելի շատ իրավունք ունեն. նրանք պարապությունից ձանձրանում են։ Ես փախչելիս չէին ձանձրանում, նստած տեղը ձանձրանում են։

— Պարոն հրամանատար,— անհամարձակ խոսեց Շնեուրը, երևի ներքուստ համոզված չլինելով՝ իրավունք ունի՞ ասելու այն, ինչ որ պետք է ասի։ Սակայն Փիրումյանի անկեղծ ու մարդամոտ վերաբերմունքը ոգևորում էր նրան։— Ես մտածում եմ, թե այսօր մեր դեմ երկու դիվիզիա են կանգնած, վաղը ևս կանգնած կլինեն այդ երկուսը՝ մեզ համար լավագույն պարագայում... Իսկ վատագույն պարագայում... չէ՞ որ ավելին կլինի...

— Մենք բաց դաշտում, ճակատ ճակատի զարկելով ո՛չ այդ երկու դիվիզիային կարող ենք հաղթել, ո՛չ էլ դրանից շա-

տին, որ իսկապես մեզ համար կլինի ամենավատագույն պարագան։ Երևի մտքում ասում եք՝ ապա ի՞նչ անենք։ Ես էլ այդ մասին եմ մտածում։— Փիրումյանը գլխարկը հանեց, քրտնած ճակատը շփեց թաշկինակով։ Ապա նստեց մոտիկ քարին, հայացքն Արարատի կողմ մտորեց մի պահ, հետո փորձեց շոշափել իր շտաբի պետի հետաքրքրասիրությունը.— Ա՛յ, եթե հարվածող մի կարգին ուժ ունենայինք, որ հասցներ վզակոթին... Այդ գնացքի աղետն, իհարկե, մեծ հարված է։ Բայց ես նկատի ունեմ այնպիսի հարված, որից գլուխները կորցնեին դիմացի երկու դիվիզիաները։ Ուժ չունենք, պատկերացնո՞ւմ եք։ Մեղանից այն կիսատ-պռատ դնդերը տարած չլինեին, էլի կկարողանայինք մի բան կազմակերպել։— Փիրումյանը հանկարծ զրույցի թեման փոխեց.— Իսկ մնացած ճակատներից ի՞նչ լուր կա. Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում ո՞չ մի փոփոխություն։

— Ղարաքիլիսայի ճակատը, կարելի է ասել, չկա այլևս,— համարյա անտարբեր պատասխանեց Շնեուրը։— Այնտեղ մեր զորքը նահանջել է գեներալի ետևից, գտնվում է Դիլիջանում։ Իսկ Բաշ-Ապարանում, կեսօրվա տվյալներով վատ չէ դրությունը։ Մերոնք հանկարծակի հարձակումով Քյուլլուջա գյուղում ոչընչացրել են երեք հարյուր ասկյար և հիմա նոր ստացած զորաջոկատներն են կարգի բերում՝ վճռական ճակատամարտ սկսելու համար։

— Այդ է՛լ հարված է թիկունքից,— ուրախացավ Փիրումյանը։— Սակայն կարևորը, ամենակարևորը պիտի կազմակերպել ուրի՞շ տեսակ։

Մի փոքր մտածելուց հետո նա տեղից վեր կացավ և հեռանալուց առաջ խնդրեց ռադիոյով հաղորդել Պողոսբեկին, որ ներկայանա շտաբ.

— Մի ժամից ես այնտեղ կլինեմ։

Դանիելբեկը սովորություն ուներ կարևոր վճիռ հանելուց առաջ մի կողմ քաշվել, ներանձնանալ, հիշել իր կյանքի հին ու նոր դրվագները։ Նրանց քննությունն օգնում էր անելիքի մեջ կողմնորոշվելու... Առհասարակ միայնության մեջ հեշտ էր լինում ընտրել, գոնե իր համոզմամբ, միակ ելքը։

Չէր հիշում ե՛րբ և որտե՛ղ է կարդացել, թե սուլթան Մոհամեդ Ֆաթիհը,— նա, որ Կոստանդնուպոլիսը նախ լողացրեց նրա բնիկ տերերի արյունով, ապա նվաճեց ու դարձրեց Օսման-

յան կայսրության մայրաքաղաքը,— իր ռազմական ծրագրերը գաղտնի էր պահում նույնիսկ այն զորավարներից, որոնց միջոցով պետք է իրականացներ հերթական նվաճումները։ Այդ նա էր ասել. «Եթե միրուքիս մի մազն անգամ իմացավ իմ նպատակները, իսկույն կպոկեմ այն ու դեն կնետեմ»։

Հիմա Մոհամեդ Ֆաթիհի ժառանգորդների դեմ կռվելիս նրա պես գաղտնապահ պիտի լինել։ Եվ ինչո՞ւ զորքն ու հրամանատարներն այդքան անհանգստանում են։ Չէ՞ որ ինքն այժմ «գաղտնապահ» էր դարձել ակամա, իսկ առհասարակ, միշտ ու ամենուր այն համոզմունքն է ունեցել, թե հաջողությամբ է պսակվում այն գրոհը, որի բոլոր մասնակիցները գիտեն և ընդունում են նրա ոչ միայն նպատակը, այլև այդ նպատակին հասնելու ճանապարհն ու եղանակը։

Այս մտորումը նրան տարավ դեպի Էրզրում, դեպի այն ճակատամարտը, որը դարձավ ռուսական բանակի կովկասյան ռազմարշավի ամենափայլուն դրվագներից մեկը։

Այդ օրերի հիշողությունը միշտ էլ թունդ էր հանում նրա սիրտը, մարմինը ձգվում-լարվում էր ինքնաբերաբար, կարծես վերստին հրաման էր ստացվել, աննահանջ առաջ գնալու, արյան, տառապանքի ու մահվան գնով թշնամուն հաղթելու հրաման։

Ցուրտ ձմեռ էր, Հայկական բարձրավանդակի այն անօրինակ սառնամանիքը, երբ լեռներում նստած ձյան շերտերի տակ անհետանում են մարդ ու անասուն, և քամին սառեցնում, ձյանն է գամում շաբ բախտով այդ կողմերն ընկած ճանապարհորդին։

Ռուսական բանակի զորամասերը հարձակման էին անցել թուրքական ճակատի բոլոր կետերում։ Առաջշարժումը դժվար էր ամենուրեք։ Սակայն այն դիմադրությունը, որ պիտի կոտրեր Կովկասյան Առաջին կորպուսի 153-րդ հետիոտն գունդն Էրզրումի ճակատի Դալան-գյոզ ամրոցի ուղղությամբ, երևի թե ամենածանրն էր հունվարյան այն օրերի բոլոր փորձությունների շարքում։

Դալան-գյոզը շրջապատի չորս կողմերի վրա իշխող դիրք ուներ, և այնտեղ ամրացած թուրքական զորամասի ուժեղ, չընդմիջվող գնդակոծության տակ էին գտնվում ռուսները՝ ո՛ր կողմից էլ փորձեին մոտենալ ամրոցին կամ առաջ շարժվեին դեպի Էրզրում։

153-րդ գունդը հունվարի լույս 30-ի գիշերը Դալան-գյոզ

ամրոցի վրա հարձակվեց հյուսիս-արևելքից։ Գնդապետ Դանիելբեկ Փիրումյանը կարգադրել էր, որ բոլոր մարտակարգերը բերդամրոցին մոտենան անաղմուկ, անթերի քողարկությամբ (ոչ ոք ծխելու փորձ էլ չպիտի աներ)։ Այնուհանդերձ, թուրքաց պահակակետերում նկատել էին գնդի տեղաշարժը և զանգվածային կրակ բացեցին զորաշարքերի վրա։ Այն ժամանակ Փիրումյանը հրամայեց կայծակնային արագությամբ առաջանալ և պահակազորայիններին սեղմել իրենց դիրքերին։ Երբ այս հրամանը կատարված էր համարյա առանց կորուստների, նա աջ զորասյան գլուխն անցած կտրուկ շրջանցում արեց և գրոհը փոխադրեց հյուսիսային ճակատ։ Զորասյան առջևից թրամերկ առաջ էր գնում ինքը՝ գնդի հրամանատարը, և նրա հնարամիտ վճռին տեղյակ էին բոլոր զինվորները։ Գրոհող վաշտերի հաղթական «ուռռա» շշմեցրեց թուրքերին, որոնք ամրոցի այդ կողմից հարձակում չէին սպասում։ Եվ մինչև նրանք ուշքի կգային, Փիրումյանի վաշտերը ճեղքեցին պաշտպանությունը, սվիններով ճանապարհ բացեցին դեպի բերդամրոցի կենտրոն։ Այստեղ էլ սկսվեց խուճապի մատնված թուրքերի այն կոտորածը, որը հպարտությամբ պիտի հիշեին նրա մասնակիցները։

Բերդը պաշտպանող թուրքական մեծաքանակ զորամասից մի քանի սպաներ միայն կարողացան փրկվել և ճողոպրել դեպի հարևան բերդերն ու զորամիավորումները։ Նրանք Քյոսա-Մամեդ, Զորան-դյադա, Ուզուն-Ահմադ և այլ կետերում գտնվող յուրայիններին տարան Դալան-գյոզի անկման բոթը, և թուրք հրամանատարությունն շտապեց կորցրածը ետ առնել։

Իսկ բերդին տիրացած Դանիելբեկ Փիրումյանն անմիջապես կարգի բերեց ծանր վնասներ կրած իր վաշտերը, դիտանոցներում ու հրակնատներում նշանակեց գնդի լավագույն զորականներին, ապա կարգադրեց շուտափույթ իրար բերել նվաճած զինամթերքն ու պարենը։

Եթե Դալան-գյոզի նվաճումը եղել էր դժվարագույն խնդիր, ապա այն պահելը պիտի լիներ անհնար, որովհետև թուրքերը դիտեին, որ այդ բերդ-ամրոցը բանալին է Էրզրումի։

Հունվարի 30-ի առավոտյան թուրքերը թարմ ուժերով գրոհի ելան ամրոցի վրա։ Գրոհող զորամասերին ուղեկցում էին ավելի քան հարյուր թնդանոթներ, որոնք անդադար կրակի տակ էին պահում Դալան-գյոզն ու նրա մատույցները։ Իսկ ամրոցին տի-

բացած գունդը կտրված էր ռուսական մյուս զորամասերից և ի՞նքը պիտ տնօրիներ իր բախտը։ Ո՞չ համալրում կարող էր ստանալ, ո՞չ զինամթերք։

Այն ժամանակ Փիրումյանը կարգադրեց. «Ապարգյուն և ո՞չ մի կրակոց»։ Թույլ էին տալիս, որ թուրքերը մոտենան, ապա բաց էին անում հրացանային ու գնդացրային այնպիսի կրակ, որից փրկվող չէր լինում։ Ցերեկվա ընթացքում թուրքերը ձեռնարկեցին այդպիսի յոթ հարձակում, յոթն էլ իրենց համար ողբերգական։ Ութերորդ հարձակումը տեղի ունեցավ իրիկնամուտին։ Այս անգամ պաշտպանվող մաղված զորամասը սպառեց ամբողջ զինամթերքը և պետք է առանց կրակոցի հանձնվեր թշնամուն, եթե դարձյալ չբռնկվեր հրամանատարի անօրինակ խիզախության կրակով։ Վերջին գնդակներն արձակած, հոգնած ու հուսահատ ջոկատների առաջ Փիրումյանը կանգնեց իր հաղթական հասակով մեկ և, մերկացրած թուրը գլխից վեր բարձրացնելով, գոռաց.

— Քաջե՞ր, իմ ետևից, ուռ-ռա՞։

— Ուռ-ռա՞,— միահամուռ գոչեցին ողջ մնացած երեք հարյուր զինվորները և սվիններն առաջ մեկնած հետևեցին տարեց զորապետին։

Թուրքերն սպասո՞ւմ էին այդպիսի հակահարձակում։

Ո՞չ։ Դալան-գյոզ ամրոցը բոլոր կողմերից կտրելով և նրա վրա ուղղելով իրենց թնդանոթների, գնդացիրների անդադրում կրակը, երևի մտածում էին, թե ներսինները կա՞մ հողին կհավասարվեն, կա՞մ էլ անհուսությունից կհանձնվեն իրենց ողորմածությանը։ Իսկ հիմա իրենց հետ ձյունահյուսեր վար թափող «գյավուրները» դղրդաձայն «ուռայով» թրատում ու սվինահարում էին աջ ու ձախ։ Խուճապահար ետ փախչող թուրքերը ոտնատակ էին տալիս իրար, կոխկրտում, տրորում։ Եվ նրանց այնպես էր թվում, թե իրենց ետևից ալլահի պատիժն է գալիս, ու չկա ոչ մի փրկություն։

Դալան-գյոզի առումն ու պաշտպանությունը ռազմաճակատի շտաբում գնահատվեցին իբրև ռուս-թուրքական պատերազմի՝ խիզախությամբ անօրինակ դրվագներից մեկը, որը փաստորեն բացեց ռուսների ճանապարհը դեպի Էրզրում, գարձավ կարևոր հաղթանակի սկիզբը։ Եվ պատահական չէ, որ Էրզրումյան հաղթարշավից հետո բանակում գնդապետ Դանիելբեկ Փիրում-

լանն ստացել էր մի երկրորդ, առավել գործածական անուն՝ Էրզրումի հերոս։

Հիմա դեռ հիշում են այդ երկրորդ անունը. երեկ Շնեուրն իր ապարատով բռնել էր Թիֆլիսից եկած մի հեռագիր, որ զորավար Լեբեդինսկին էր տվել՝ Կովկասյան ճակատի նախկին հրամանատարը։ Հիմա արդեն նախկին, որովհետև Անդրկովկասյան միացյալ կոչված կառավարությունն արդեն կտրականապես հրաժարվել էր նրա ծառայություններից։ «Շնորհավորում եմ ձեր խիզախ վճիռը,— այսպես էր գրել ռուս զորավարը։— Ես հավատում եմ Էրզրումի հերոսին ու նրա բախտավոր աստղին»։

«Բայց հիմա որքա՜ն հեռու ենք այն օրերից,— մտածում էր Էրզրումի հերոսը։— Այն ժամանակ մեզ հետ էր ռուսաց հզոր բանակը, և մեր թիկունքում ունեինք մի անհուն ու անեզերք Հայաստան։ Հիմա հայացքս ո՛ր կողմ դարձնում եմ, մեզնից խլված հողերն են, մեր ավերված քաղաքներն ու շենները... Հիմա ո՞վ է մեզ հետ միասին թշնամու դեմ կռվողը։ Թուրքերն առաջ են գալիս, մեր թիկունքում դավեր են նյութում նրա հավատակիցները, իսկ երեկվա մեր դաշնակիցներն այսօր պատրաստ են հոշոտելու Հայաստան աշխարհի վերջին պատառը»։

* *
*

Ներկայացան գնդապետ Պողոսբեկ Փիրումյանը և Գարեգին սրբազանը։ Տաք-տաք խոսում էին ճակատի մասին, և Շնեուրը մոտավորապես հասկացավ, թե նրանց ի՞նչն է անհանգստացնում, գաղտնիք հայտնողի խորհրդավորությամբ ասաց.

— Հիմա ինքը կգա և կասի՝ ինչո՞ւ է ձգձգում հարձակումը։

— Իսկ դուք ո՞նց իմացաք, որ մենք այդ մասին ենք խոսում,— գերմաներեն հարցրեց սրբազանը։

— Ես համարյա ամեն ինչ հասկանում եմ, սրբազան,— ժպտաց Շնեուրը։— Խոսել չեմ կարողանում. հնչյուններն աղավաղվում են կոկորդումս։

Շնեուրն ու սրբազանը մայիսի 22-ի ուշ երեկոյան էին ծանոթացել։ Զրուցեցին երկար։ Գերմանացի կապիտանն իր մայրենի լեզվին վաղուց ծարաված՝ խոսում էր նրա հետ, և աստիճանաբար զարմանքը փոխվում էր հիացումի ու սիրահարվա-

ծության, որովհետև խոսքից-խոսք հայ հոգևորականի գերմաներեն խոսքում զգում էր իր մայրենի լեզվի պերճաշուք ամրությունը։ Նա այն ժամանակ մտածում էր, որ մի լեզվի արժանիքները լրիվ գիտակցելու, նրա հմայքն ամբողջությամբ զգալու համար երևի պիտի կարողանաս կողքից նայել. ա՛յ, այսպե՛ս՝ մի հմուտ գիտակ իր օտար առոգանությամբ խոսի, և դու նրա խոսքի մեջ պարուրված բառերն ու արտահայտությունները, նախադասություններն ու կապակցությունները ոչ միայն լսես, այլև տեսնես (սրբազանն այնպես էր խոսում, որ բառերն ասես նաև երևում էին իրենց պատկերներով՝ հայի առոգանության թափանցիկ փաթեթների մեջ առնված)։ Բայց Շնեուրն, ամենից առաջ, հիացած էր Գարեգին եպիսկոպոսի տրամաբանությամբ, գիտելիքներով ու ճարտասանական վարպետությամբ։ Սրբազանը նրան թվում էր իսկապես սրբազան մի գոյություն, որի հետ ծանոթանալն ու ահա այսպես մոտիկից շփվելը համարում էր իր գերագույն երջանկություններից մեկը։ Այն գիշեր բաժանվելիս իր այս զգացումն էլ բացատրեց Գարեգին եպիսկոպոսին, ասաց. «Հայերեն ի՞նչ լավ էլ հնչում է ձեր աստիճանը՝ «սրբազան»։ Սրբազանը համեստորեն պատասխանեց, որ դա պաշտոնի անունն է, հագուստի նման մի բան, և միշտ չէ, որ հագնողը փայլում է իր սրբազանությամբ։ Այն ժամանակ գերմանացի կապիտանը պնդեց. «Ես ձեր մասի՞ն եմ խոսում. ձեր պարագային հագուստը շատ է հարմար ու համապատասխան հագնողին։ Եվ ես այսուհետ պետք է միշտ հիշեմ, որ կյանքում բախտ եմ ունեցել առնչվելու իսկական սրբազանության հետ»։

Ճակատի հրամանատարը եկավ, և չորս հոգով, դեմ-դիմաց նստած, իրար նայեցին այնպիսի բարեկամությամբ ու կարոտով, որ կարելի էր մտածել, թե վաղուց չէին հանդիպել։ Դանիելբեկը մտածեց, որ պիտի կանչեր նաև մնացած զորամասերի հրամանատարներին, մեկ էլ մտքում արդարացրեց իրեն. «Ի՞նչ կփոխվեր դրանից. նստում նայում են բերանիս, իսկ ինձ մտածող զրուցակից է պետք»։

— Երևում է, մտածում եք, թե ի՞նչ ենք խլուրդների նման խրամատներում թաքնվել և առաջ չենք շարժվում,— ասաց նա և ժպտուն հայացքը հառեց Գարեգին սրբազանին։

Հենց սրբազանն էլ նրա խոսքին պատասխանեց.

— Մեղքս ի՞նչ թաքցնեմ,— ասաց,— մտածում եմ, բայց

ինձ իրավունք չեմ վերապահում խառնվելու ձեր գործին։ Զորամասերում էլ քանի՞ անգամ զինվորներն են հարցրել։ Ես նրանց այսպես եմ պատասխանել. «Ձեզանից ամեն մեկը,— ասում եմ,— իր քթի թուշն է տեսնում, իսկ զորավարը տեսնում է ամբողջ ռազմաճակատը։ Կլինի՞, որ ձեր տեսածը ճիշտ լինի, նրանը՝ սխալ։ Նա բոլորից էլ ճիշտ ու լավ է տեսնում և գիտե, թե ի՞նչ և ինչպե՞ս պիտի անենք, որ լավ լինի ու պատերազմը շահենք»։

Ճակատի հրամանատարը քթի տակ ծիծաղեց.

— Ուրեմն, վիճակներս այնքան էլ լավ չէ, եթե Գարեգին սրբազանը ևս դիվանագետի պես է խոսում։

— Աստծո՞ւ սիրուն,— ձեռքերը բարձրացրեց, կրծքին դարսեց սրբազանը,— ի՞նչ դիվանագիտություն։ Ես մտածածս եմ ասում։

— Մտածածն ասելը մեզ կօգնի,— լրջացած խոսեց հրամանատարը և հիմա էլ գիմեց Պողոսբեկին.— Իսկ ի՞նչ է մտածում մեր Մահապարտների գնդի հրամանատարը։

— Ա՜խր, մեզ շուտ կողոպտեցին այդ...,— կոշտ ու փշոտ մի բառ պիտի գցեր Պողոսբեկ Փիրումյանը, սակայն պահեց, և հիմա էլ կարծես այդ բառն իր ներսն էր ծակծկում. դեմքը կընճռոտեց.— Մի կլոր ու ճկուն զորամաս կուղարկեինք, շրջանցումով կհարվածեր թիկունքից... Խուճապը որ ընկավ թուրքի բանակը, նրանից հետո մենք այստեղից մի այնպիսի հարված կհասցնեինք, որ էլ ուշքի չգար։ Իսկ հիմա վեր կենալ և այս բաց դաշտում մարտի բռնվել թվով ու զինավառությամբ գերակշիռ զորքի դեմ, կարծում եմ, ճիշտ չի լինի։ Սխալ արած կլինենք։ Իսկ մենք այլևս սխալվելու իրավունք չունենք։ Մինչև հիմա ուրիշ էր վիճակը։ Հիմա մի սխալը կարող է լինել վերջինը և վերջակետ կդնի ամեն ինչի վրա։ Հը՞, ի՞նչ եք զարմացած նայում։ Ես այսպես եմ տեսնում մեր վիճակը։ Ես այսպես եմ մտածում։

Դանիելբեկ Փիրումյանը նայեց կապիտան Շնեուրին, և երկուսով խորհրդավոր ժպտացին։ Հետո Փիրումյանը կապիտանին ասաց.

— Հիմա կարելի՞ է գտնել զորավար Սիլիկյանին։

— Բայց ի՞նչ է պատահել,— զարմացած հետաքրքրվեց գնդի հրամանատարը։— Դուք հարցրիք, թե ես ի՞նչ եմ մտածում։

Դանիելբեկ Փիրումյանը հայացքով սաստեց տոհմակցին։

— Մա՜րդ աստծո, դու էլ ի՞նչ ես իրարով անցնում։ Ճիշտ ես մտածում. ա՞յս էիր ուզում իմանալ։ Միանգամա՛յն ճիշտ։ Իհարկե, ի՛մ կարծիքով։ Մի երկու ժամ առաջ կապիտան Շնեուրի հետ խոսում էինք, և մեր եզրակացությունն էլ այդ էր. թիկունքից մի հզոր ու ցնցող հարված հասցնել և նո՛ր այստեղից սկսել հարձակումը։

Նա վեր կացավ, Շնեուրի ետևից գնաց դեպի ռադիոյի սարքը և ճանապարհին մտերմորեն սեղմեց Պողոսբեկի ուսը։ Իսկ վերջինիս դարձյալ խեղդում էր «ստվերի» գիտակցությունը։ «Էլի՞ նույնը. ստվերի պես հետևում եմ իրեն. «Մեր եզրակացությունն ա՜յդ էր»։ Իր եզրակացությունն այդպես էր, և ես նույնն եմ կրկնում թութակի պես։ Մի՞թե միշտ այսպես պիտի լինի. ինքն ասի, և ես հաստատեմ, կամ ես մի բան ասեմ, և պարզվի, որ դա այնքան էլ իմը չէ, որովհետև մի քանի ժամ առաջ ինքն է այդպիսի եզրակացության հանգել...»։

Մնացել էին երկուսով՝ Գարեգին սրբազանն ու Պողոսբեկը, և սրբազանը դարձավ նրան.

— Այդ մեկը լավ ասացիր. թիկունքից մի լա՜վ հարված...

— Բայց իրենք այդ կարծիքն արդեն ունեին։

Սրբազանը նրբանկատորեն զգաց նրա ներքին դժգոհության կայծը և փորձեց տեղնուտեղը մարել.

— Ի՞նչ կա որ. ինքն իր կարծիքն ուներ, ստուգեց-պարզեց, որ դու էլ իր պես ես մտածում... Հո չե՞ս նեղանում, որ քեզ հետ դու-ով եմ խոսում։

— Ի՞նչ եք խոսում, սրբազան, ես ուրախ եմ դրա համար։ Որքան ժամանակ է, միասին ենք, հա՛մ էլ դուք բոլորիս համար հոր պես եք։

— Դե՛, որ այդպես է, խոստովանահայր ընդունեցեք,— ժպտում է սրբազանը։— Հիշո՞ւմ ես, մենք երկու պանծալի զորապետներ ունեինք Զաքարյան տոհմից. Զաքարե ամիրսպասալարն ու Իվանե աթաբեկը։ Նրանց խոստովանահայրն էր Մխիթար Գոշը՝ գրող և իրավագետ։

— Կարծեմ, նա այնքան էլ չէր սիրում Իվանեին...

— Հա՜, չէր սիրում, որովհետև Իվանեն թողել էր մեր հավատը, հարում էր քաղկեդոնականության։

— Հիմա ես Իվանե՞ն պիտի լինեմ,— հարցրեց Պողոսբեկը։

— Օ՜, Իվանեն էլ քաջ ու խելոք մարդ էր։ Միայն այդ մոլորությունն էր ունեցել...

— Խոստովանանք լինի, սրբազան. ես երբեք ինձ մոլեռանդ հավատացյալ չեմ համարել։ Բայց միշտ էլ մեր հավատից երեց դարձնողներին նայել եմ որպես դավաճանների, որոնք երևի ընդունակ պիտի լինեն ամեն տեսակ ստորության։

— Իրականում էլ այդպես է. հավատափոխության գնում են շահի համար, պաշտոնի համար։ Իսկ շահամոլ-պաշտոնամոլն իր մորն էլ կծախի, որպեսզի նպատակին հասնի... Բայց մենք որտե՞ղ թողինք մեր զրույցի տուտը։ Հա, պարզվեց, որ քո ասածը նորություն չէ, քանի որ քեզանից առաջ քեզ պես է մտածել Դանիելբեկը։ Է՜, դրանից էլ լավ բա՞ն. երկու խելոք զորավար նույն հարցում նույն կարծիքն ունեն. կնշանակի՝ այդ միասնական կարծիքն ավելի ճիշտ է, քան եթե մեկը տեսակետ հայտներ, իսկ մյուսը կասկածեր նրա տեսակետի վրա։— Ապա սրբազանը սղալեց ցանցառ մորուքը, կկոցած աչքերով ժպտաց.— Մի քեռի ունեի, անունը՝ Սիրական։ Հոգին լո՜ւյս դառնա, անշահ-անշառ մարդ էր, ապրում էր մեր Մաղավուզ գյուղի վերի ծայրին։ Որ մի գործ բռնելու լիներ, տնեցուն ման կգար մինչև գյուղի մյուս ծայրը, կհարցներ բոլորի կարծիքը...

— Եվ հետո էլ կաներ այնպես, ինչպես ինքն էր մտածել սկզբում,— քահ-քահ ծիծաղեց Պողոսբեկը։

Քրքրջաց նաև սրբազանը և աչքերը սրբելով հարցրեց.

— Բա ո՞նց իմացար, հե՜ր օրհնած։

— Հետևել եմ, սրբազան. ով որ այդպես աջ ու ձախ է ընկնում, իր կարծիքն, իրր թե, ստուգելու համար, սովորաբար ոչ մի ուշադրություն էլ չի դարձնում լսածներին։

— Մեր հները «կարծիք» էին ասում կասկածելիին։ Իսկ հիմա տեղից վեր կացողն իր կարծիքը դարձնում է դրոշ։

Ուրախ-ուրախ վերադարձան Դանիելբեկն ու Շնեուրը և հայտնեցին, որ գեներալ Սիլիկյանից մի գումարտակ են պոկել։

— Ի՞նչ գումարտակ է, հրանոթներ ունի՞,— հետաքրքրվեց Պողոսբեկը։

— Ունի՜-ունի՜,— դեռ ժպտալով պատասխանեց Դանիելբեկը

և բացատրեց.— Գնդապետ Կարո Ղասաբբաշյանի գումարտակն է, որ վերակազմավորման համար կանգնած է Կոշում։

— Հա՞, գիտեմ, Ալեքսանդրապոլից փախել էր։

— Կարևորն այն է, որ փախչելիս իր հետ մի տասնյակ հրանոթ է տարել։

— Փա՞ռք աստծո, փա՞ռք աստծո,— երեսին խաչ հանեց սրբազանը։

Ճակատի հրամանատարը ձեռք բերածով ուրախ էր ու խանդավառ։ Կարծես նրան հենց այդ գնդապետ Ղասաբբաշյանի 250—300 զինվորներն էին պակասում, որպեսզի թուրքերին հասցնի այն հարվածը, որի համար պատեպատ էր զարկվում այսքան ժամանակ։ Անկասկած նա ճանաչում էր այդ երիտասարդ գնդապետին, հավատում էր նրա ռազմական կարողություններին և շատ ուրախացավ, երբ Սիլիկյանն իր պահեստի զորաջոկատներից հենց նրա գումարտակն առաջարկեց...

— Ասում է՝ ի՞նչ ես անում, կամ քո ունեցած գնդերին ի՞նչ կարող է ավելացնել այդ մի գումարտակը,— իր ռադիոզրույցն էր պատմում Դանիելբեկը։— Անկեղծ չեղա հետը։ Գուցե մեղավոր եմ։ Բայց վախենում էի՝ ծրագիրս իմանա ու մերժի։ Դրա համար էլ նպատակիս մասին ոչինչ չասացի... Հը, ի՞նչ ես քիթդ կախել, Պո՛ղ։

— Մտածում եմ տեղ հասցնելու ճանապարհի մասին։ Արաքսից մինչև Արագածի այս փեշերը ձգվում է թուրքաց ճակատը։ Թիկունք պիտի դուրս բերվի Արագած սարը շրջանցելով...

— Կեցցե՛ս, Պո՛ղ, ախպե՛րս,— և ճակատի հրամանատարը զրուցակիցների առաջ փռեց մաշված քարտեզը, որի վրա նշանակված կետերը հազիվ էին նշմարվում։— Ա՛յ, սա է Կոշը։ Ղասաբբաշյանն այստեղից դուրս գալով կբարձրանա դեպի հյուսիս, Ղազնաֆարի մոտով կշրջանցի սարը, կանցնի թուրքերի թիկունքը... Ինչքա՞ն ժամանակ է պետք։ Դե՛, հաշվեցե՛ք, հաշվեցե՛ք։ Ես չեմ կարող, գլուխս դժժում-բժժում է։

Եվ Պողոսբեկն ու Շնեուրը քարտեզի վրա կռացած հաշվումներ էին անում։

— Զորավարն արդեն կարգադրություն արե՞լ է գնդապետին,— հարցրեց սրբազանը։— Նա հենց հիմա՛ պիտի նախապատրաստվի, որ ժամանակ չկորչի։

— Կապ չունի հետը, հենց հիմա սուրհանդակ ուղարկեց,—

մտածկոտ պատասխանեց ճակատի հրամանատարը։— Ես էլ այստեղից պիտի իմ մարդուն ուղարկեմ՝ հանձնարարություններով։ Բայց ո՞վ կլինի այդ մարդը։

— Այդ մարդն ինձանի՛ց,— ետ շրջվելով՝ բացականչեց Պողոսբեկը։

— Դու հաշվի՛ր, հաշվի՛ր, մարդը հեշտ է գտնել։

— Չէ՛, ես այնպիսի մարդ տամ, որ գնա ու այդ Ղասաբաշյանի հետ գումարտակը կռվի տանի։

— Երևի նկատի ունես Միքայելին։

— Վա՜յ, ես քո ի՞նչն եմ ասել,— երկու թաթերն ազդրերին զարկեց Պողոսբեկը։

— Վատ բան չմտածես, կեսը քեզ կհասնի,— ժպտաց ճակատի հրամանատարը։

— Վատ ի՞նչ պիտի մտածեմ, մա՛րդ աստծո։ Ինչ էլ մտածեմ, ճակատիս կարդում ես։

— Իսկ ես ի՞նչ մեղք ունեմ, որ քո մտքերը ճակատիդ գրված են լինում։ Չկարծես՝ որևէ բան կարող ես թաքցնել ինձանից։

Պողոսբեկը զարմացած ու կեղծ դժգոհությամբ դարձավ Գարեգին եպիսկոպոսին.

— Տեսնո՞ւմ եք, սրբազան։ Իսկ դուք ասում եք՝ բա՛ն չկա։ Այսպես որ շարունակվի, սա ինձ կգժվեցնի։

Սրբազանը ժպտում էր բարի, ձեռքերը տարածեց հաշտարարի հովանավորությամբ.

— Փա՜ռք աստծո,— ասաց,— թող ճշմարիտ ու արդար մտքերդ կարդալով քեզ գժվեցնի։— Ապա հայացքով ուշադրության հրավիրեց։— Հին Հունաստանում Աստվածաշունչը յոթանասուն եպիսկոպոսներ են թարգմանել եբրայերենից։ Ամեն մեկը՝ սկզբից մինչև վերջ և բոլորը՝ առանձին-առանձին, իրարից հեռու։ Թարգմանությունն ավարտել են միաժամանակ, և երբ հավաքվել են, իրար հետ համեմատել, պարզվել է, որ բոլոր յոթանասուն թարգմանությունները բառացիորեն իրար համապատասխանում են սկզբից մինչև վերջ. ոնց որ արտագրած լինեն մեկի թարգմանությունից... Բա՜, արդար ճշմարտությունն այդպիսի բան է։ Իսկ դու զարմանում ես, որ քո և Դանիելբեկի մտքերն ու կարծիքներն իրար նման են լինում։ Երանի՜ չէր մեր ազգն ունենար մի հարյուր այնպիսի գործիչներ, որ միատեսակ մտա-

ծեին ու միատեսակ էլ գործեին։ Այն ժամանակ մեր «սարդարապատն» ինչո՞ւ Սարդարապատ հասներ, կկանգներ Էրզրումում կամ Մշո դաշտում, Սարիղամիշում կամ, հակառակ դեպքում, Կարսի պատերի տակ...

Շնեուրի ու Պողոսբեկի հաշիվներով՝ գնդապետ Ղասաբբաշյանի գումարտակը, Արագածի փեշերով հակառակորդի թիկունք պիտի հասներ մայիսի 26-ի միջօրեին, գուցե դրանից մի քիչ շուտ։ Եթե, իհարկե, ժամանակին համապատասխան հանձնարարություն տրվեր նրան։

* *
*

Կոշի գումարտակին հանձնարարություն տանելու համար հատուկ խումբ առանձնացվեց, որի ղեկավարն էր պորուչիկ Միքայել Փիրումյանը։ Խմբում կային տեղանքին քաջածանոթ զինվորներ՝ եղվարդցի վարպետ Գարուշը և ղաղնաֆարցի զինվոր (նախկին հովիվ) Պատվականը։ Գումարտակի հրամանատար Կարո Ղասաբբաշյանը ճանաչում էր Միքայելին, և կարիք չկար, որ հանձնարարությունը նրան ներկայացվեր գրավոր ձևով. ճակատի հրամանատարը ձեռք էր առել բոլոր միջոցները, որպեսզի գումարտակին տրվող հանձնարարության մանրամասներն իմանային միայն այն մարդիկ, որոնք պարտավոր էին իմանալ։

Զգուշության համար՝ Ղասաբբաշյանին հասցվելիք լուրը տանում էր նաև մի այլ զորաջոկ, որ առանձնացվել էր Սարդարապատի ու շրջակա գյուղերի աշխարհազոր հարյուրյակից։ Պողոսբեկն այս ջոկի ղեկավար նշանակեց մոլլաբայազետցի Մամիկոն Սաղաթելյանին, որը համագյուղացիների վրա ունեցած հեղինակությամբ անմիջապես գրավել էր գնդապետի ուշադրությունը։

— Քե մատաղ, հասկացա՞ր ջոկի խնդիրը,— հարցրեց գնդապետը։

— Հասկացա՛նք, պարոն գնդապետ,— հրամանատարի առաջ ձգվելով՝ հպարտ գոչեց զինվոր Մամիկոնը։— Ղուշի թևով լուրը տեղաց անենք, հետո էլ հարվածենք թշնամու թիկունքին։

— Ապրե՛ս,— մտերմաբար ժպտալով՝ նրա թիկունքը թփթփացրեց Պողոսբեկը։

— Բայց մի բան ասեմ, պարոն գնդապետ։

— Ասա՛, քե մատաղ։

Այդ «քե մատաղն» ավելի ոգևորեց աշխարհազորայինին։

— Թույլ տաս, որ ինձ հետ վերցնեմ միայն մերոնցից։— Եվ հենց միայն գնդապետի հայացքում կարդալով համաձայնությունը, ձեռքը մեկնեց դեպի մոլլաբայազետցիների խումբը.— Սաքո՛, Սիմո՛ն, Տիգրա՛ն, ադա՛ Ստեփանի՛ Տիգրան...

Հիմնական խումբն արդեն շարժվում էր, ճակատի հրամանատարը որդուն տվեց վերջին հանձնարարությունը, և հորից բաժանվելիս Միքայելը խնդրեց ուշադրություն դարձնել Հովսեփի վրա.

— Նա իրենից դուրս բաներ է անում։

— Իրենից դուրս ի՞նչ է անում, տղաս,— որդուն գրկելով, ականջի տակ, ցածրաձայն հարցրեց Դանիելբեկը։— Այստեղ ամեն մեկն էլ այն է անում, ինչ իր պարտքն է։

— Նախանցյալ օրը մեն-մենակ նետվել է Թուրքերի արանքը։ Նա ուզում է...

—Իսկ դու նրա տեղ չէի՞ր նետվի, քո տեղ չե՞ս նետվում։

— Հայրիկ, ես ուրի՛շ, ես փո՛րձ ունեմ, ես գիտեմ...

— Աչքաբաց մարդը պատերազմի դաշտում փորձված զինվոր է դառնում մի ժամում, տղա՛ս։ Հովսեփը խելոք տղա է։ Քաջությունն էլ հո պա՞րտք չպետք է վերցնի։ Թշնամու գնդակն ավելի շատ բռնում է վախկոտներին։ Իսկ պա՞րտքը... պարտքը սահման չունի. այստեղ երկնքից աստղ վար բերես, դարձյալ քո պարտքն ես կատարում։ Չէ՞ որ կյանքը զոհաբերելն էլ պարտքի հատուցո՛ւմ է... Պարզապես իրար մաղթենք, որ ողջ մնանք։ Ո՞րքա՛ն լավ կլինի, որ հաղթանակից հետո երեքով, ողջ-առողջ ներկայանանք քո մորը, քո պապին ու տատին... Դե՛, այդպես. չարից ու փորձանքից հեռու լինես։ Էլ ի՞նչ ասեմ, գնա՛ տղաս,— և պինդ գրկեց որդուն, համբույրներով ծածկեց ճակատը, մաքուր ածիլած այտերը։

Հայրը երբեք այդպես զգացմունքային չէր եղել։ Միքայելը նրանից բաժանվեց թաքուն վախով, սակայն հոր գրկից բաժանվելիս ժպտաց և աշխատեց անհոգ երևալ՝ մի երկվայրկյան միայն և վազեց, հասավ խմբի զինվորներին։

* *
*

Մնացել էր սպասումը, որ ամենածանրն է խրամատավորված զինվորի համար։

Մայիսի վերջն էր, և Արարատյան դաշտի տոթը, մանավանդ Սարդարապատի կողմերում, արդեն խեղդում էր ամեն շունչ ու կենդանություն։ Ղռերում աշխուժացել էին զեռուններն ու օձերը, և նրանք էլ մի կողմից էին փորձում դիրքերից դուրս քշել հայ զինվորներին։ Աշխարհազորային մի զինվորի օձը խայթել էր, ոտքն ուռած պայթում էր։ Գնացին, Խնուսի գնդի ավագ բժշկին բերին էջմիածնի մոտերքից։ Երիտասարդ էր բժիշկը, աշխարհազորայինի հարևանները քիթ վեր քաշեցին և չթաքցրին էլ իրենց թերահավատությունը նրա նկատմամբ։ «Չի՞ լինի,— ասացին, էս մոտիկ գյուղերից մի հնքիմ բերեիք, գուցե թե օգներ, մի ճար աներ»։

Բժիշկն ուշադրություն չդարձրեց նրանց քրթմնջոցին, քիթը կախ աշխատում էր նշտարով ու դեղերով։ Մտածեցին, որ այլազգի է, ու ավելի լարեցին լեզուները. «Դրա խելքն ի՞նչ պիտի կտրի, իրենց ռուսաստաններում օձ կա՞ որ...», «Դրան թողնես. իրենց բուժքույրերի փափուկ տեղերը կսմթի...»։ Քիչ էր մնում՝ բժիշկը փոթկացներ, զսպեց իրեն, գործն ավարտեց։ Եվ երբ վերջին սրսկումն էլ կատարեց ու սկսեց իրերը հավաքել, խայթվածը թոքերն ուռցրեց դարբնի փուքսերի պես, օդը բաց թողեց աղմուկով, թե՝ «Խուվա՛յ, սունչս տեղը եկավ»։

— Ի՞նչ տղացի ես, ախպեր,— ձեռքերը լվանալով հարցրեց բժիշկը, ոնց որ ծխեր հոգնատանջ աշխատանքից հետո։

Եվ հիվանդն ու շրջապատի փնթփնթանները քարացան։

— Բժիշկ, դու հա՞յ ես,— հարցրին այս ու այն կողմից։

— Բա ձեր կարծիքով ի՞նչ պիտի լինեի,— ժպտաց բժիշկը և կանգնեց իր գեղուղեշ հասակով մեկ, շտկեց զինվորական համազգեստը, որ կիպ գրկում էր առնական մարմինը։

Հևալով, եկավ, հասավ Գարեգին եպիսկոպոսը, կռացավ հիվանդի վրա, մտահոգ հարցուփորձ արեց, ապա դարձավ մեկուսի կանգնած բժշկին.

— Ну, как там, доктор, всё в порядке?

Բժիշկը, կարծես կարճահասակ ու նիհար հոգևորականի մոտ

անհարմար էր զգում իր բարձր ու թիկնեղ հասակի համար, մի փոքր այլայլվեց.

— Դուք ե՞լ ինձ այլազգու տեղ եք դնում, սրբազան։

— Հա՞յ ես, ուրեմն,— ուրախ զարմանք արտահայտեց սրբազանի բարի դեմքը։— Այ, շա՜տ ապրեն քո արարիչները,— և հիացած՝ վարից վեր չափեց երիտասարդ բժշկին.— Բա ո՞ր կողմերից ես։

— Նախիջևանիկից եմ, սրբազան,— բժիշկը պատասխանեց մի անփութությամբ, որ ասում էր՝ «Հո չպիտի՞ բացատրեմ, թե Նախիջևանիկն էլ որտե՞ղ է գտնվում»։

— Նախիջևանիկի՞ց,— սրբազանը հիմա էլ զարմանք էր արտահայտում ամբողջ մարմնով։— Ա՜յ տղա, ումանցի՞ց ես։ Հո դու ե՞լ Փիրումյան չես։

— Փիրումյան եմ, սրբազան, Փիրումյան Քրիստափոր Նիկոլայի

— Վա՜յ-վա՜յ-վա՜յ, տունգ բրնձով լցվի, բա խոսի՛, է՞,— սրբազանը մոտեցավ, սեղմեց նրա ձեռքը, թևերը շոյեց հայրաբար։— Մեր մեծերին ճանաչո՞ւմ ես, գիտե՞ք իրար։

— Ես ճանաչում եմ, գյուղում իրենց շատ եմ տեսել,— սրբազանի մտերմության ցույցին ամոթխած պատասխանեց երիտասարդ բժիշկը։ Իրենք էլ կհիշեն, կճանաչեն, որ ասեմ, թե ո՛ւմ տղան եմ։ Հայրս իրենց տարեկիցն է եղել։

— Հիմա չկա, հա՞։

— Չկա, վաղուց է մահացել...

Հիվանդի մերձավորներն ապուշ կտրած լսում էին երկուսի մտերմիկ զրույցը և ամաչեցին իրենց ասածների համար։ Մոտեցան, որ շնորհակալություն հայտնեն, լեզուները պատ չէին գալիս։ Սրբազանը նկատեց նրանց երկչոտ մոտ-մոտ անելը, փորձեց փարատել անհարմարությունը.

— Բա՞ն եք ուզում ասել, մոտ եկեք, ի՞նչ եք իրար առաջ տալիս։

Նրանց միջի տարեցը՝ ալեխառն բեղ-մորուքը երեսին չորացած, չոր ու ցամաք մի մարդ, հրացանը որպես մահակ գետնին դեմ տալով մոտեցավ սրբազանին ու չխոսկան հարսի պես գլխով բժշկին ցույց տվեց.

— Ասա՝ ներող լինի, էլի՞, տեր հայր, անգետ ենք, անվայել խոսքեր ասացինք։

Սրբազանը նայեց բժշկին, սա էլ ներողամիտ ժպտաց և սկսեց իրերը կապոտել սանիտարական պայուսակի մեջ։

— Կների, ի՞նչ պիտի անի, որ չների,— խոսեց սրբազանը։— Բայց անգիտությունից լռելն ավելի լավ է, քան թե անվայել խոսքեր ասելը։

— Հենց էդ է, որ չհասկացանք, է՞։

* *
*

Դանիելբեկ Փիրումյանը կարգադրել էր նախապատրաստվել վճռական ճակատամարտի։ Իսկ դա նշանակում էր՝ կադրային զինվորներն ու հրամանատարները պիտի աշխարհազորայինների հետ պարապեին, սովորեցնեին մարտական գործը, իրենք պիտի բարձրացնեին իրենց պատրաստականությունը։

Առաջիկա ճակատամարտը տեղի էր ունենալու համարյա բաց տարածության մեջ՝ Սարդարապատի արևմտյան թիկունքի դաշտում, որից դենը բարձրացած բլուրների վրա թուրքերն էին ամրացել։ Նրանց կրակի տակ էր դաշտը, և առաջ շարժվելու համար անհրաժեշտ պիտի լիներ հաղթահարել այդ կրակը, որովհետև դաշտը շրջանցելու ոչ մի տեղ չկար։

Ճակատի հրամանատարն ու զորամասերի պետերը գիտեին, որ թուրքերը սարսափում են սվինամարտից ու թրամարտից, և կռվի հենց այդ ձևերին էլ նախապատրաստում էին զորքը։ Ռուսական բանակում սովորած ու կոփված մարդիկ էին հրամանատարների մեծ մասը։ Նրանք հիմա հայոց զորքը վարժեցնում էին իրենց սովորած ձևերին, և խրամատներում ու թիկունքի բլուրների հետև ոչ միայն տեսական պարապմունքներ էին անցկացնում, այլև գործնական վարժություններ։ Թրեր էին բախվում իրար, սվիններ խոյանում միմյանց դեմ, և այս բոլորը՝ սարդարապատյան դաշտում, որը լիքն էր ամառնամուտի արևով ու տապով։

Դադարի կարճ պահերն անցնում էին աղմկոտ խոսքուզրույցով, համարյա առանց իսկական դադարի, որովհետև սովորողվարժվողները շարունակում էին լրացնել ձեռք բերածի պակասը, պարապմունքների ու ծնված հարցերի հետ էին լինում, կամ

ծնվում էին նոր հարցեր, որոնցից պիտի փրկվեին տեղնուտեղը, անմիջապես։

Զինվորներ կային, որոնց համար աշխարհում գոյություն ուներ միայն մի հարց. թե ե՞րբ է ավարտվելու այս անիրավ պատերազմը, որպեսզի գնան իրենց գործին, գտնեն կորցրած հարազատներին, խառնվեն իրենց հոտին կամ, եթե չունեն այդպիսիք, բնավորվեն մի տեղ, տունուտեղ դառնան, շարունակեն իրենց կորսվող տոհմատակի հոլովույթը։

Զինվոր Զաքարին վարժեցնելու էին տվել մի ջոկատ, որի զինվոր կոչվածները հավաքվել էին հայոց երկրի տարբեր նահանգներից և իրենց հետ պահում էին այդ նահանգների հոգս ու ցավերը։ Մշեցի քահանա Սաղաթելը, ամուսնա մի տղամարդ, գեղջուկ իր հոտը տարել-թողել էր Վերին Թալինի կողմերում և անհանգստանում էր՝ ո՞նց տեղավորվեցին, հող էին ստանալու, ստացա՞ն թե՞ ոչ, չէ՞ որ վարուցանքի ժամանակն անցնում է, գալ տարվա ապրուստը հիմիկվանից պիտի ապահովեն։ Ինչ վերաբերում էր ձեռնամարտին, ապա քահանան երկար ու փարթամ մորուքը կոխում էր շապկի տակ, որպեսզի չխանգարի և թուրն այնպես էր վրա բերում, որ եթե դեմը թուրք լիներ՝ վերից վար կկիսեր, հետո էլ կգնար գետինը խրվելու։

Կարսի մարզում Օրթաքիլիսա գյուղ է եղել։ Հիմա կա՞, թե՞ չկա՝ նախրապան Ապետը չգիտե, որովհետև ինքը մի օր դաշտից տավարը տուն է բերել, տեսել՝ գյուղը դատարկ։ Մինչև պարզեր, թե ի՞նչ է կատարվել իրենց գյուղի հետ, մինչև որոշեր, թե անտեր մնացած տավարի հետ ինչ պիտի անի, հարևան գյուղը թափվել է իրենց դաշտը՝ դեպի հյուսիս գաղթելու ճանապարհին։ Ստիպված ինքն էլ իր հոտն առած խառնվել է գաղթին... Էջմիածնի դաշտում ծովացած գաղթականների կամավորական խումբը կազմելիս ինքն էլ ցուցակագրվեց, թե՞ գրեցին, և հիմա չգիտե՝ ի՞նչ եղավ տավարը, ի՞նչ պատասխան պիտի տա տերերին. չէ՞ որ նրանք ապրում են, կան մի տեղ, և ինքն էլ կա ու պատասխան պիտի տա... Ապետը, որ չգիտե անգամ, թե ինչպես է գոյացել իր անունը՝ Աբեթնակի սկի՞զբն է, թե՞ Հայրապետի վերջը։ Եվ հիմա նա, պարապմունքի կարճ դադարներին աչքը փակում է թե չէ, երազում իր նախիրն է տեսնում։ Նարնջագույն բուղան յոթ անգամ իրար վրա բառաչում է, քնահարամ անում։ Արթնանում է, շռած աչքերով շուրջը

նայում, և պարզվում է, որ թուրքերի կողմում թնդանոթն է բառաչել ականջ պատռող ձայնով։

Ապետի հարևանն էլ Սևանի ափերից եկած հովիվ է և երազում իր ոչխարի հոտն է տեսնում ու արթնանալով կարոտից լաց է լինում։ Իսկ երրորդը՝ մի ուսուցիչ, տխուր-տխուր պատմում է, որ դպրոցում ժամանակից շուտ բաց են թողել երեխաներին, և չգիտե՝ ո՞ւր են հիմա, ի՞նչ եղան, երբ գյուղը դատարկվում էր թուրքի առաջ։

Բարով-խերով հրամանատար կամ վարժեցնող դարձած գիշեցի Զաքարը լսում էր իր զինվորներին, սիրտը պատառ-պատառ էր լինում։ Եվ նրանց համար լսելի անիծում էր.

— Անո՞ւնդ մնա, թորք, անո՞ւնդ մնա, որ էս խեղճ ու կրակ մարդկանց ստիպեցիր կորվել իրենց տունուտեղից, իրենց արդար բան ու գործից և կանգնել գնդակի առաջ, մահերախ թրի տակ...

Զաքարն էլ էր երազ տեսնում։ Զինվորը ո՞նց կարող էր ապրել առանց երազի։ Բայց նրա երազը միշտ էլ այնպիսին էր լինում, որ ամաչում էր պատմել։ Նրա տեսածը միշտ էլ համով ու հոտով, առատ-առատ ուտելիք էր լինում, և ինքն ուտում էր, ուտում ու չէր կշտանում։ Մի անգամ էլ նստած տեղը ննջել էր, արթնացավ տեսածի սարսափից. իբր թե անասուն է գալիս դեմից, մորթահան արած-խաշած մի եզ էր թե երինջ, որ լեզու առած էլ խոսում էր։ Ասաց. «Մեջս լիքը գինի է, գալիս եմ, որ ուտես-խմես, տրաքվես»։ Ասում էր ու պոզահարելու պատրաստ վրա էր տալիս...

Մի զինվոր էլ կար Զանգեզուրից, անվերջ ու անընդհատ երգեր էր ասում, պարապմունքին՝ քթի տակ, մեղմ մոմռալով, իսկ հանգստի պահերին՝ բարձրաձայն, ինքնամոռաց։ Հայերեն որքան երգ կար՝ գիտեր։ Միայն թե բոլոր երգերը՝ հարսանեկան թե աշխատանքային, սիրային թե պատերազմական, նրա բերանից հնչում էին տխուր ու սրտակեղեք։ Զաքարի սիրտը ճաքճքքում էր նրա երգից, մանավանդ, եթե մի քիչ էլ խմած էր լինում։ Իսկ այն օրերին Արարատյան դաշտի գյուղերից այնքան գինի ու օղի էին բերում, որ հրամանատարությունը ստիպված եղավ հատուկ հրահանգ անել խմիչքի օգտագործման մասին. կրտսեր հրամանատարները պարտավոր էին խմիչքը չափավոր բաց թողնել, որպեսզի անախորժություններ լինեին։

Բայց այդ շափավորից էլ էր ջրիկանում Զաքարը և զանգեզուրցու երգերից թոսխոտալով այնպես էր լալիս, ասես իր տոհմի անցյալ բոլոր հանգուցյալների դագաղները շարված են դիմացը։ Առաջին անգամ լացը եկավ, հենց որ Շափաղաթը (այսպես էր զանգեզուրցի երգչի անունը) ձայնը կորստյան վշտով շաղախած՝ Մասսի անունը տվեց երգի մեջ։ Սկզբում ոչինչ, տխուր-տխուր լսում էր.

Հայաստանից մեզ հանում են,
Խոսե՛ք, Հայաստանի՛ լեռներ,
Մորը որդուց բաժանում են,
Խոսե՛ք, Հայաստանի՛ լեռներ։

Շատ էր տխուր, իհարկե. «Հայաստանից մեզ հանում են», մանավանդ՝ «Մորը որդուց բաժանում են»։ Ինչքա՜ն ցավալի տեսարանների է ականատես եղել նահանջի ճանապարհին։ Զաքարը հիշում էր այդ բոլորը՝ տխուր ու մշուշոտ հայացքն ուղղած Մասսի ճերմակ գագաթին։ Եվ հենց որ Շափաղաթը երգեց.

Խոսե՛ք, լեռնե՛ր, ասե՛ք, լեռնե՛ր,
Առաջ Մասիս սարը մերն էր...

Կարծես խեղճ մարդու մեջքը կոտրվեց։ Նա փղձկաց երեխայի պես, բացվեցին արտասուքի կապերը, և սկսեց հեկեկալ։ Շափաղաթը լռեց, մոտեցավ ջոկի հրամանատարին, մեղավոր-մեղավոր խոսեց.

— Կուզես՝ էլ չերգեմ, հրամանատար, չգիտեի, որ սիրտդ բարակ է։

— Չէ՛, չէ՛, դու երգդ ասա, Շափաղաթ,— պոռոշ արած խոսեց Զաքարը։— Երգդ ասա, քե մատաղ։

Եվ Շափաղաթը շարունակեց ավելի հուզումնալից.

Ես հիշում եմ այն օրերը.
Պապս լծում էր արորը
Ու վարում էր դաշտն ու ձորը,
Խոսե՛ք, Հայաստանի՛ լեռներ։

Խոսե՛ք, լեռնե՛ր, ասե՛ք լեռնե՛ր,
Առաջ Մասիս սարը մե՛րն էր...

Աջից ու ձախից եկել, խրամատն էին լցվել և հառաչելով, ախուվիշ անելով լսում էին զանգեզուրցուն, որը հիմա էլ Արաքսից այն կողմ, Մասսից առաջ տված կորուստներն էր թվարկում.

Ո՞ւր է Մուշը, ո՞ւր է Վանը,
Ո՞ւր է հայոց Արդահանը,
Ո՞ւր են հայոց դաշտն ու ձորը,
Խոսե՛ք, Հայաստանի՜ լեռներ։

Խոսե՛ք, լեռնե՜ր, ասե՛ք լեռնե՜ր,
Առաջ Մասիս սարը մե՞րն էր...

Առաջինը խոսեց քահանա Սաղաթելը։

— Ձայնդ անուշ, շնորհքդ անպակաս լինի, որդիս,— ասաց նա։— Բայց Մասիս սարն առաջ մերն է եղել, միշտ էլ մերը կլինի, քանի մենք լինենք այս աշխարհում։— Եվ տեսնելով ունկնդիրների հարցական հայացքները, բացատրեց.— Մասիս սարը մեր սրտում է, մեզ հետ՝ ուր էլ որ գնանք։

— Է՜,— քիթը վեր քաշելով խոսեց Զաքարը։— Էդ էլ մի մխիթարություն է, տեր հայր, ասում ես, որ էրված-պապակված սրտներս հովանան։

— Քա՛վ լիցի, քա՛վ լիցի, պարոն հրամանատար։ Ես բոլորովին էլ մխիթարելու համար չեմ ասում։ Աշխարհում թե որ մեն մի մարդ էլ մնա, Մասիս-Արարատի անունը տալիս ասելու է՝ սա հայոց սարն է...

— Որ էդպես է, մի ուրախ երգ ասեմ,— վրա տվեց Շափաղաթը։

— Այ տնաշենի տղա, քո սրտում ո՞ւր է ուրախ երգը։

— Կա՛-կա՛,— ասաց երգիչը և անմիջապես էլ սկսեց.

Վանա ծփան ծովեն կուգաս,
Անդրանիկի քովեն կուգաս,
Վարագա սեգ սարեն կուգաս,
Շողշողուն զենքերի՞դ մատաղ...

* *
*

Բոլոր զորաջոկատներում սպասումը ծանր քարի պես ճնշում էր դիրքերին ու խրամատներին գամված զինվորների սրտերը։ Ամենուրեք վրդովված գանգատվում էին հրամանատարության «թուլակամության» դեմ։ Կային մարդիկ, որ նույնիսկ մտածում էին, թե ճակատի հրամանատարը վարակվել է վերադասների անձնատվական տրամադրությամբ և, թշնամուն հանգիստ թողնելով, դավաճանում է հայոց դատին։ Այս գանգատով էր բռնված նույնիսկ Հինգերորդ գնդի գումարտակներից մեկը, որի հրամանատարն էր շտաբս-կապիտան Վարդան Ջաղինյանը։

Առավոտյան դասակի հրամանատարին ներկայացավ կրտսեր սպա Արսեն Սարգսյանը՝ գանձակեցի մի կրակոտ երիտասարդ, և առաջարկեց բողոքի ցույց կազմակերպել հրամանատարության դեմ.

— Մեզ կնքեցին Մահապարտների գունդ, որպեսզի ձանձրույթից մեռնենք-կոտորվե՞նք,— վրդովված բողոքեց նա։— Սա ի՞նչ խայտառակություն է։

Եվ Ջաղինյանը, որ մինչ այդ էլ դժգոհ էր պարապությունից, տաքացավ, եռաց։ Սակայն ինչպե՞ս բողոքի դուրս գաս։ Գումարտակը ցույցի՞ ես տանելու ռազմաճակատի հրամանատարության դեմ։ Հրամանատարներով էլ վեր կենաք-դնաք շտաբ, կբռնեն, անունդ կդնեն խառնակիչ և կդատեն պատերազմական ժամանակի օրենքներով։

Պայմանավորվեցին լույսը բացվելուն պես հարձակման անցնել։

Ջաղինյանի գումարտակը գտնվում էր պայտաձև դասավորված ճակատի աջ եզրին, թշնամու դասավորության մերձավորագույն կետում։ Անմիջապես նրա թիկունքում էր դիրքավորվել Արարատյան դաշտի դյուղերից հավաքված աշխարհազորային մի զորաջոկատ՝ շուրջ երեքհարյուր մարդ, որը ևս կարևոր ուժ էր հանդիսանում, մանավանդ եթե նկատի առնվեր, որ նրա կազմի մեջ էին Կարսի ճակատը լքած մի ամբողջ դասակ փորձառու զինվորներ։ Հաջողության դեպքում հարձակվողներին անպայման կհետևեին հարևան զորամիավորումները, և, այդպիսով, տարերայնորեն մարտի մեջ կմտնի հայկական ամբողջ ռազ-

մաճակատը,— այսպես էր մտածում երազող շտաբս-կապիտանը։ Հաջողությունը կշնչի ռազմական կարգապահության խախտումը և այն կներկայանա իբրև հայրենիքի փրկության մտահոգությամբ թելադրված խիզախություն, ինչպես եղավ մայիսի 22-ին, երբ Փիրումյանները, հակառակ բարձր հրամանատարության կամքի, նետվեցին անհույս պատերազմի մեջ և կասեցրին թշնամու անարգել առաջխաղացումը։ Հաջողության դեպքո՞ւմ... Վերջապես, չէ՞ որ հաջողությունը հաղթանակն է, իսկ հաղթողներին, ինչպես հայտնի է, չեն դատում։

Իսկ անհաջողությա՞ն դեպքում...

Ջաղինյանն ու Արսեն Սարգսյանը համոզված էին, որ անհաջողությունը բացառվում է։ Չէ՞ որ մարտի էր ներքաշվելու ճակատի ամբողջ հայ զորքը՝ կանոնավոր թե աշխարհազոր։ Եվ այն ժամանակ կլինի մահ կամ հաղթանակ։ Կռվում մահ գրտնողներին ևս չեն դատում, ինչպես որ հաղթողներին։

Ամեն պարագայի՝ հարձակումը լավ է, քան խրամատներում պարապությունից ճանձ որսալը։

Եվ լույսը բացվելուն պես շտաբս-կապիտան Ջաղինյանի հրամանով գումարտակի բոլոր հրազեններից կրակ տեղաց հակառակորդի մոտակա դիրքերի վրա։ Հանկարծակիի եկած թուրքերը բավական զոհեր տվին, մանավանդ փախչելիս, երբ, կարծելով, թե հայերն ամբողջ ճակատով հարձակման են անցել, իրենց գիրքերը թողած, կռնակ էին դարձրել հարձակվողների առաջ։

Խիզախ չալալօղլեցի Վարդան Ջաղինյանը, ատրճանակը գլխից վեր բարձրացրած, տեղից պոկվելով նետվել էր առաջ.

— Քաջե՞ր, իմ ետևի՞ց։

Եվ գումարտակն ու աշխարհազորայինները նրա կոչով հարձակման անցան։ Զոկատները գլխավորում էին գանձակեցի Արսեն Սարգսյանը, Երվանդ Տեր-Սիմոնյանը՝ Արևմտյան Հայաստանից, իգդիրցի Շահենը, դամարլվեցի Հակոբ Սիմոնյանը և ուրիշ մտավորականներ, որոնք ավելի շատ իրենց գրագիտության, քան ռազմավարական հմտության շնորհիվ, դարձել էին ստորաբաժանումների պետեր և պարտավոր էին զորքը տանել վճռական արշավի։

Խիզախների մի խումբ, Ջաղինյանի գլխավորությամբ, մխրճվեց թուրքերի զորաշարքերի մեջ, և սվինամարտի բռնվեց փախչողների հետ։ Ինքը՝ գումարտակի հրամանատարը, ձախ ձեռ-

քում ատրճանակ, աջում՝ ռուսական երկար թուրը, աջ ու ձախ զարկվում էր թուրք ասկյարների հետ։ Նրա օրինակով խանդավառված զինվորները սվինահարում էին դիմացից եկողներին։ Հարվածողների ու տապալվողների մնքոցները խառնվել էին իրար...

Ղամարլվեցի ուսուցիչ Հակոբ Սիմոնյանը, որ հայոց շարքերը եզրափակողներից էր, տեսավ Վարդան Ջաղինյանի խմբի թրամարտը, հատկապես հրամանատարի խիզախ հարվածները և հեռվից գոռաց.

— Կեցցե՛ս, Վարդան, փառապանծ անունդ ես արդարացնում։ Փա՜ռք հին ու նոր Վարդաններին...

Թվում էր՝ խուճապահար կոտորվող թուրքական զորամասի վիճակը տագնապ կձգի նաև հարևան գնդերի մեջ։ Սակայն շուտով դրությունը փոխվեց ի վնաս հայ խիզախների։ Թուրքական հրամանատարությունը մահվան սպառնալիքով ետ դարձրեց խուճապահար նահանջողներին և, տեսնելով, որ հայ զորքի հարձակվող աջթևայինները պաշտպանություն չունեն ուրիշ ոչ մի տեղից, գնդացրային կրակի տակ առավ նրանց։ Ընկավ Վարդան Ջաղինյանը։ Գնդացրային մի կրակահերթով զոհվեցին Իգդիրցի Շահենն ու գանձակեցի Արսենը։

Անգլուխ մնացած գումարտակի զինվորները շրջվեցին ետ, սակայն քչերը հասան ելման դիրքերը։

Ճակատի շտաբից Դանիելբեկ Փիրումյանը ռադիոյով գնդի հրամանատարի հետ կապվեց այն ժամանակ, երբ նա դեպքի վայրում քննելով կատարվածը, վերադարձել էր այլայլված և չգիտեր, թե ի՛նչ պատասխան պիտի տա անօրինակ անկարգության համար։

— Կարգաղանցության ղեկավարները զոհվել են, պարոն հրամանատար,— պատասխանեց գնդապետ Պողոսբեկ Փիրումյանը։— Եվ հիմա չկա մեկը, որ բացատրի, թե ինչպե՛ս է սկսվել այս անկարգությունը։

— Հիմա ես քեզ ի՞նչ ասեմ, Պող,— վշտացած խոսեց ավագ Փիրումյանը։— Շա՜տ զորք ունենք, որ մի գումարտակ ձրի նվիրում ես թշնամուն։ Դա անելո՞ւ բան էր...

— Մեղավոր եմ, պարոն հրամանատար։ Դեռ երեկ էին ասել, որ Ջաղինյանը գանգատ ունի ճակատի սառեցման դեմ։ Մտա-

ծում էի, որ հասկացող մարդ է... Ի՞նչ իմանայի, թե վեր կկենա և ինքնագլուխ ճակատ կբացի։

—Քիչ հետո դու շտաբից ռադիոյով կստանաս քո թողտվության գնահատականը։ Կարդա-քննի՛ր հրամանատարներիդ հետ և աշխատիր։ Ամո՞թ է. ի՞նչ պատասխան պիտի տանք ազգին։

...Զրույցը վաղուց վերջացել էր, իսկ գնդի հրամանատարը չէր կարողանում պոկվել նրա ճնշումից։ Ի՞նչ պատասխան պիտի տանք ազգին։ Ո՛չ բարձր հրամանատարությանը, որի համար միևնույն է, թե ի՛նչ ենք կորցրել կամ ի՛նչ կարող ենք շահել, կարևորը զինադադարն է, թուրքի կամքին հանձնվելը։ Ո՛չ էլ կառավարությանը, որ չունենք և հայտնի չէ, թե ե՛րբ կունենանք, ու այն ինչպիսի՛ն կլինի... Ազգի՛ն...

* *
*

Միջօրեից հետո դիրքերում ու խրամատներում քննում էին Վարդան Ջաղինյանի և նրա համախոհների ինքնագլուխ հերոսությունը, որ կերավ ոչ միայն իրենց, այլև տասնյակ ու տասնյակ զինվորների և աշխարհազորայինների գլուխները։ Եվ որովհետև ամենուրեք բարձրանում էր նաև այն հարցը, թե, վերջապես, ի՞նչ է մտածում հրամանատարությունը՝ հարձակում լինելո՞ւ է, թե՞ ոչ, շտաբից լիազորված ճառախոսներն ստիպված էին գաղտնիքը ծածկող վարագույրի փեշը մի փոքր ետ գցել. հարձակումը, ինչպես արդեն ասվել է և անընդհատ կրկնվում է, անպայման լինելու է։ Իր երկրի վերջին կտորի վրա կուչ եկած զորքն ինչպե՞ս կարող է չհարձակվել երկիրը բռնագրաված, շարագործ թշնամու դեմ։ Հարձակումն ահա՛-ահա՛ պետք է լինի... Բայց համբերություն է պետք, սպասելու կամք և ուժ, որպեսզի... Նախապես կայուն հիմք դրվի այդ հարձակման հաջողության համար։ Եվ այդ հարցն էլ է լուծված. օգնական ուժ է գալիս, հենց որ տեղ հասավ, կհարձակվենք միասնական ճակատով, բռունցքի պես կիջնենք արնախում ու հղփացած թուրքի գլխին։ Իսկ ովքեր փորձում էին իմանալ, թե որտեղի՞ց է գալիս այդ օգնական լրացուցիչ ուժը, մի՞թե այս խեղճ Հայաստանում լրացուցիչ ուժ է մնացել, որ գա էլ և, մանավանդ, ե՞րբ

է տեղ հասնելու այդ օգնական լրացուցիչ ուժը,— չէ՞ որ հետաքրքրասիրությունն անկուշտ բան է. մարդուն հնարավորություն պիտի տաս գնալու մինչև գաղտնիքի խորքը,— ապա այդ պիսիների համար միայն մի խոսք էր պահված. «Շատ բան իմանաս, շուտ կծերանաս»։

Ինչպես առաջ, այնպես էլ այդ ժամանակ ամենադժվարը սպասումի պարապը լցնելն էր։ Եվ հրամանատարները դարձյալ ռազմագիտական ու գործնական պարապմունքներ էին անցկացնում։ Գարեգին Հովսեփյանի հոգևորական նանդոպշատների խումբը ցրվել էր զորաջոկատներում, քարոզներով ու հայրենասիրական ճառերով բարձրացնում էր զորքի տրամադրությունը։ Այս զրույցները մեծ մասամբ անցնում էին հետաքրքիր ու օգտակար, որովհետև նախօրոք սրբազանը նրանց տվել էր նաև զրույցի ուղղությունը՝ ոգեկոչել հայոց պատմության նշանավոր հերոսամարտերը, հատկապես Վարդանանց սխրագործությունը, որի տոնը պիտի նշվեր մայիսի 26-ին։ Ի՞նչ իմանանք, գուցե հենց այդ օրն էլ տրվելու է վճռական ճակատամարտը, և հայությունը Սարդարապատի դաշտում կրկնելու է Ավարայրի անմոռանալի դասը։

Սակայն ինչ էլ որ լիներ, քարոզների ու զրույցների համար հավաքված զորամասերը կրավորական զանգվածներ չէին։ Նրանք քարոզիչներին ստիպում էին շեղվել նախապես ծրագրված ընթացքից, հետևել իրենց տրամադրությանը, բարձրացրած հարցերի գլորվող կծիկի ընթացքին։ Նման դեպքերում Գարեգին սրբազանը հեշտությամբ դուրս էր գալիս ծանր բեռան տակից և զրույցը վերստին տանում նախապես ծրագրված հունով։ Սակայն եղան հոգևորականներ, որոնք խճճվեցին հունից հանված խոսքուզրույցի բավիղներում։

Արարատյան դաշտի գյուղերից եկած աշխարհազորայինների հետ զրույց անցկացնողը Զավեն Մահտեսի-Բարայան եպիսկոպոսն էր՝ Հռիփսիմեի վանահայրը՝ ծանրամարմին, պորտապարտ ու հանդարտախոս։ Նա մի քանի անգամ լսել էր Գարեգին սրբազանի զրույցները, գիտեր, թե ի՞նչն էր գրավում բարմաշերտ զորքի հետաքրքրությունը։ Սակայն ինքը չուներ նրա ճարտասանական ձիրքը և հույս ուներ գործը պլուխ բերել խոսքի խորքով ու էությամբ։ Ասավածաշնչյան իմաստություններ էր վկայակոչում, հիշում էր հայոց պատմության ուսանելի դեպ-

քերը, հայ ազգի և ուրիշ ժողովուրդների կենցաղի ու բարոյական բարձր նորմերն էր վկայակոչում։ Սակայն ցանկալի հետաքրքրությունը չկար։ Նրբանկատ մարդ լինելով, սրբազանը տեսնում էր, որ ունկնդիրների մի զգալի մասը քաղաքավարությունից է լսում, ուրիշներն էլ բացակա էին իրենց հայացքներով։ Իսկ երբ ինքն ասաց. «Աշխարհում չկա և ոչ մի ժողովուրդ, որ իր դավակներին օրորոցից սովորեցնի շարպգործության կամ դարգացնի նրանց վատ բնազդները»,— այդ անտարբեր ու անուշադիր թվացողներից ոմանք քրթմնջոցով արտահայտեցին իրենց անհամաձայնությունը։

Զավեն եպիսկոպոսը փորձեց բացատրություն ստանալ քրթմնջացողներից. հույս ուներ այդ միջոցով աշխուժություն մտցնել գրույց կոչված զրաղմունքի մեջ։

— Երևում է՝ բան եք ուզում ասել, զավակներս,— հաշտարար տոնով խոսք գցեց եպիսկոպոսը։— Գուցե այնպես անեք, որ ես էլ հասկանամ՝ ի՞նչ եք ուզում։

Եվ զինվորներից մեկը, որ հեռու նստած, մի չոփ ձեռքին առջևի հողն էր քչփորում, նստած տեղից էլ խոսեց.

— Զավեն սրբազան, ես շատ եմ հարգում ձեր աստիճանն ու գործը, բայց պիտի ներողություն խնդրեմ, որ համաձայն չեմ ձեր այդ վերջին խոսքի հետ։

Նա այսքանն ասաց անուշադիր, ծույլ-ծույլ, ոնց որ ձեռքի չոփի հետ լիներ խոսելիս։

Նստոտած աշխարհազորայինները մեկեն շրջվեցին, նայեցին նրա կողմը։ Անսպասելի հակաճառությունից իրեն չկորցրեց Զավեն եպիսկոպոսը, հակառակը, անհասկանալի կերպով հանկարծ նրան դուր եկավ մաղմորուքի միջից մի հաճելի դալկությամբ ճառագող, բոլորովին էլ ոչ զինվորական, նույնիսկ ոչ աշխարհական արտաքինի տեր երիտասարդն իր հանդարտ ու վճռական առարկությամբ։

Երիտասարդի հարևաններից մեկը, տարեց ու պատկառելի մի գյուղացի, մեծավարի խորհուրդ տվեց չվիճել «տեղ հոր» հետ։

— Այ տղա, ի՞նչ կասեն մեր մասին,— ցածրաձայն խոսեց նա։— Անհարմար է՝ հետը վեճի ես բռնվում։

Երիտասարդը, երևի խղճահարությամբ, հայացքն անց կաց-

բեց՝ հարևանի վրայով, չպատասխանեց։ Իսկ եպիսկոպոսը հետաքրքրությամբ սպասում էր նրա խոսքին.

— Բայց ո՞ր խոսքիս հետ չես համաձայն, երիտասարդ։ Կարելի՞ է պարզես, իմանանք։

Երիտասարդ զինվորականը ձեռքի շուրջն ուսի վրայով դեն գցեց և ոտքի ելավ։ Կանգնած նա ավելի համակրելի էր, մանավանդ դալուկ դեմքին շողացող թախծոտ հայացքով, որի մեջ սրբազանը կարդաց կյանքի հասցրած մի անուղղելի դժբախտություն։

— Պարզելու համար ի՞նչ ասեմ, սրբազան,— խոսեց նա։— Դուք ասացիք՝ չկա ոչ մի ժողովուրդ, որ իր զավակներին հենց ծննդյան օրից սովորեցնի շար գործերի և զարգացնի նրանց վատ բնազդները։ Սակայն հին ժամանակներից մինչև այսօր հայտնի են շատ ցեղեր ու նույնիսկ իրենց քաղաքակիրթ համարող ժողովուրդներ, որոնց համար ձեր ասածը սովորական երևույթ է...

— Նույնիսկ իրենց քաղաքակիրթ համարող ազգե՞ր,— բարձրաձայն իր զարմանքն արտահայտեց Զավեն եպիսկոպոսը։

— Ես ներողություն եմ խնդրում համարձակությանս համար, սրբազան,— հուզված՝ գլուխը խոնարհեց երիտասարդ զինվորականը։— Այո՛, նույնիսկ իրենց քաղաքակիրթ համարող ազգեր։ Նրանցից մեկի հետ հիմա մենք այսօր էլ գործ ունենք...

— Այո՛, այո՛,— հարեց Զավեն եպիսկոպոսը։— Հետո՞։

— Հետո էլ հիշենք մեր հին մատենագրության վկայությունները։ Այն մազքուտնե՛րը չէին, որ մեր երկիրը կողոպուտի էին գալիս, կոտորում ու ավերում էին և այսքանից հետո նաև մտածում, թե դա է ապրելու ճշմարիտ եղանակը։ Եվ երբ մեր հոգևորական Գրիգորիս եպիսկոպոսը՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի թոռը, նրանց փորձեց ցույց տալ արդար կյանքի իսկական, ճշմարիտ ուղին, նրանք գազազեցին ու սպանեցին արդար կյանքի քարոզչին։ Ի՞նչ տեսակ կյանք էր նրանց համար օրինակելի՝ սկսած օրորոցից, մինչև գերեզման իջնելը. «Զի ո՛չ յափշտակեսցուք, զի ո՛չ աւարեսցուք, զի ո՛չ առցուք զայլոյ, ի՞ւ կեցցուք այսչափ անչափ զորաց բազմութիւնք»*։

---

* «Թե որ չհափշտակենք, թե որ ավար չանենք, թե որ չխլենք ուրիշներից, ինչո՞վ պիտի պահենք այս անչափ-անքանակ զորաց բազմությունները»։

— Այո՛, այո՛, ճիշտ է,— հաստատեց սրբազանը։ Մեր արդարախոս Փավստոս պատմիչն է արձանագրել։

— Այո՛, Փավստոս պատմիչը։ Բայց այդպիսի պակա՞ս վկայություններ են պահպանվել ուշ դարերից։ Չէ՞ որ նույն խոսքերը դրոշ դարձրած էին մեր դեմ գալիս նաև բոլոր այն քոչվորները, որոնք ձիու վրա էին հայտնվում կամ իրենց ոչխարների ետևից...

— Եվ հիմա նրանք են մեր տուն ու տեղի տերը։ Նրանք խլում են մեր ինչքը, կոտորում են մեզ և գազազում են, երբ դիմադրություն ենք ցույց տալիս,— վրա՝ տվեց երիտասարդի մի հարևանը, որ խոսելով էլ կանգնեց ու բարեկամաբար թփթփացրեց երիտասարդի մեջքը.— Շա՛տ ապրես, Անուշավան եղբայր, իսկը Գարեգին սրբազանի նման խոսեցիր։

— Իմ խոսածն ի՞նչ, դու պատմիր ձեր հարևան Մուհամեդ Հասանի երեխայի դեպքը։

Եվ առանց սպասելու, որ Զավեն եպիսկոպոսն իրեն խոսելու իրավունք տա, զրույցին խառնված զինվորն սկսեց պատմել.

— Որտեղից որտե՛ղ մեր գյուղում հայտնվել էր էդ Մուհամեդ Հասանն իր ոչխարի հոտով և ոչխարի չափ էլ կանանցով ու երեխաներով։ Առավ մեր հարևանի տունը և դարձավ մեզ հարևան։ Մի օր դրա երեխաներից մեկը, երկու-երեք տարեկան չնդկհադի մի փսլնքոտ, մտել էր մեր հավանոցը և ձվերը լցրել ճտի ջրամանի մեջ, տանում էր։ Մայրս հասավ, դրա ձեռքից խլեց ջրամանը, մերկ տեղին էլ մի լավ տվեց, ասաց. «Ա՛յ անասողածի ժառանգ, ոտդ տափին ես դրել թե չէ, դողությո՞ւն ես անում»։ Էս էր ու էս։ Դու մի՛ ասա՝ էս գող մանուկի ծնողներն ու ծնողների ծնողները, բոլոր տնեցիները՝ մեծից փոքր. հետևելիս են եղել իրենց լակոտին։ Մորս խոսքի վրա մի էնպիսի աղմո՛ւկ են գցում, մի էն տեսակ շախսեյ-վախսեյ են սարքում, ասես նրանց տունը կրակ է ընկել... Հետո էս Մուհամեդ Հասանը գալիս է մեր տուն և լուրջ-լուրջ բացատրում է, ասում է. «Ա՛յ ազիզ քույրիկ, այ պատվական հարևանուհի, տղայիս առաջին գողությունն էր դա, և դու բռնեցիր։ Ախր, էդ էլ կդառնա նրա ճակատագիրը։ Ինչի՞ բռնեցիր ու նրա բախտի վրա քար գցեցիր։ Քեզ ի՞նչ էր պետք։ Էդ ձվերիդ կշռով մեկ ոսկի տայի քեզ, միայն թե երեխիս առաջին գործը չխափանեիր»։

Մայրս խելքը թոցրածի պես դրա խոսքերն էր լսում, դրա

ճաք ու պատառ լինելն էր դիտում, հետո էլ զարմացած հարց տվեց, թե՝ «Բա որ էդ ձվերի կշռով մեկ ոսկի ունեք, էլ ինչի՞ եք գողություն անում... Հիմի էս Մուհամեդ Հասանս՝ մատը վեր տնկած, բերանը ծռած՝ մորս է նայում ու խոսք չի գտնում ասելու։ Այսինքս՝ էս անհասկացողի մեկը որտեղի՞ց է աշխարհ եկել...

— Իսկ դուք, սրբազան, ասում եք՝ ո՞վ իր զավակին մանկուց վատ արարքներ կսովորեցնի։

— Այդպես էլ է լինում, որդյակ, այդպես էլ է լինում,— ծուլորեն համաձայնեց Զավեն եպիսկոպոսը։— Մարդու հոգու մեջ է չարի արմատը։ Եվ մեր պարտքն է այդ արմատը հանել այնտեղից։

— Մուհամեդ Հասանի հոգին էլ հետը դուրս կգա,— վրա տվեց Անուշավանը, և ընկերները համերաշխ քրքջացին։

— Խնդիրն էլ այն է, որ չարի արմատը հանես՝ առանց հոգուն վնաս հասցնելու,— այդ քրքիջի վրա ուշադրություն չդարձնելով՝ իրենը պնդեց եպիսկոպոսը։— Չի կարող պատահել, որ մարդն ապառաժ մնա բարու հանդեպ։ Չի կարող պատահել, որ չար ու դաժան լինի ամբողջ մի ազգ...

— Սրբազա՛ն...

— Այո՛, անհնար է, որ ամբողջ մի ազգ...

— Սրբազա՛ն, սիրտս կպայթի, որ խոսքս չասեմ,— դարձյալ Անուշավանն էր։— Սրբազան կյանքիդ մատաղ լինեմ, դու ինքդ բարի մարդ ես և բարի աչքով ես նայում քեզ նմաններին։ Ախր, աստված մեզ աչք է տվել, որ տեսնենք, և խելք, որ տեսածը հասկանանք։ Հիմի մեր աչքով տեսածներին ի՞նչ անուն տանք...

Զինվորներն աղմկեցին, և սրբազանն այդպես էլ չկարողացավ նրանց հասկացնել, որ չար ու դաժան ազգ չի լինում։

* *
*

Մայիսի 24-ի երեկոյան Երևան քաղաքի փողոցների խաչմերուկներում, վարչական ու հասարակական շենքերի մուտքերի ակնառու տեղերում ժրաջան պատանիները փակցնում էին Երևանյան զորամասի հրամանատարի կոչը հայ ժողովրդին։

Մարդիկ ոգևորված էին Սարդարապատի ճակատից ստացված լուրերով։ Այդօր ետ էր մղվել թուրքերի երկրորդ ու կատաղի հարձակումը։ Նախորդ օրը և հենց 24-ի առավոտից մինչև ետ-կեսօրյա աղմկոտ ժամը, երբ լուր տարածվեց, թե թուրքերը նորից հարձակման են անցել ամբողջ ճակատով, և մերոնք ջարդում են նրանց առաջապահներին,— ժողովուրդը ոտքի վրա էր. պատերազմի ընդունակներին ճակատ էր ճանապարհում, հավաքած զինամթերքն ու պարենն էր առաքում կռվողներին և, այսքանի հետ միասին, Արամի կոչով ու հորդորալից մասնակցությամբ քաղաքն էր պատրաստում պաշտպանության, եթե, աստված մի՛ արասցե, կարիք լիներ պաշտպանվելու ոչ որևէ ուրիշ տեղ, այլ հենց բուն Երևանում։ Եվ այսքանից հետո թվում էր, թե ժողովուրդը, հայրենապաշտպան ու օրհասական կռվի ելած հայ ժողովուրդը ո՛չ մի կոչի կարիք այլևս չունի։ Նա իր սրտի կոչով, մայիսի 22-ին անձնազոհ քաջերի օրինակի թելադրությամբ ոտքի էր ելել, պատրաստ էր կռվի, կռվո՛ւմ էր նաև, այդքանից հետո պարզապես անհրաժեշտ էր ուղղություն տալ նրա տարերային հոսքին, նրա ուժի ու եռանդի համար գտնել ամենահարմար,ամենանպատակասլաց գործադրությունը։

Սարդարապատի ճակատի շտաբում գեներալի կոչը Դանիելբեկ Փիրումյանին հանձնեց Ալեքսանդր Շնեուրը, որի հայացքում ուրախություն կար և հաղթանակ տարածի հպարտություն։

— Վերջապես մեզ հետ է նաև մեր վերին հրամանատարությունը,— կոչի թերթերը մեկնելով հոգնած մարմինը մի կերպ դաշտային չոր մահճակալի վրա նետած հրամանատարին՝ ասաց շտաբի պետը։

Փիրումյանը զարմանքով տնտղեց հայերեն գեղեցիկ ձեռագիրը։ Ստորագրված էր «Երևանի զորամասի հրամանատար գեներալ Սիլիկյան»։

— Այս դո՞ւք եք ընդունել հայերեն։ Ե՞րբ սովորեցիք,— և ժպտաց մտերմորեն։

— Մի քիչ էլ կռիվը երկարի, կսովորեմ,— աշխույժ պատասխանեց Շնեուրը։— Երևանից հայտնեցին, որ հայերեն կոչ կա, պետք է շտապ գրի առնել, կանչեցի իմ աշակերտ Մարտիրոսյանին...

— Իմ անվանակցի՞ն,— տեղյակ հարեց հրամանատարը։— Խելոք տղա է երևում։ Լավ էլ ձեռագիր ունի։ Նախշուն չէ, բայց

գեղեցիկ է։ Ձեռագրի վրա կարելի է մարդու հոգին կարդալ։

Եվ վայոցձորցի Մարտիրոսյանի ձեռագրով կարդաց Երևանյան զորամասի հրամանատարի կոչը հայ ժողովրդին։

«Հայե՛ր, շտապեցե՛ք հայրենիքն ազատելու,— այսպես կտրական սկսվում էր կոչը։

«Հասել է բոպեն, երբ յուրաքանչյուր հայ, մոռանալով իր անձնականը, հանուն մեծ գործի՝ հայրենիքի փրկության և իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտպանության, պիտի գործ դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար։

Մենք չէինք ուզում կռվել, հանուն խաղաղության և հաշտության մենք պատրաստ էինք ընդառաջ գնալու ամեն տեսակ զոհողությունների, սակայն մեր տմարդի թշնամին ընթանում է իր ծրագրած ուղիով, նա, ըստ երևույթին, ստրկացնել է ուզում մեզ, բայց իրոք ուզում է ոչնչացնել մեր բազմաչարչար ազգը։ Սակայն քանի որ պիտի ոչնչանանք, ավելի լավ չէ՞, որ զենքը ձեռքներիս փորձենք մեզ պաշտպանել։ Գուցե հաջողվում է մեզ կռվո՛վ ձեռք բերել ապրելու իրավունքը։

Իսկ որ մենք կարող ենք պաշտպանվել, դա ցույց տվին վերջին կռիվները մեր ճակատում, ուր մեզանից թվով գերազանց թշնամին նահանջի է դիմել մեր զորքի հերոսական հարձակման առաջ։

Հարկավոր է մի ճիգ ևս, և թշնամին վռնդված կլինի մեր երկրի սահմաններից, ուր մեր պապերն ու հայրերը երկար տարիներ արյուն-քրտինքով աշխատել են զեթ մի կերպ հայթայթել իրենց օրվա ապրուստը։

Հայե՛ր,

Ժամանակ չէ դանդաղելու։ Բոլոր մինչև հիսուն տարեկան հասակ ունեցողները պարտավոր են զենքի տակ գալու։ Ես պահանջում եմ բոլորից ներկայանալ իրենց զենքերով ու փամփուշտներով հայրենիքի պաշտպանության համար։

Հայուհինե՛ր,

Հիշեցե՛ք հինգերորդ դարու փափկասուն տիկնանց, որոնք ոգևորեցին իրենց ամուսիններին դեպի մեծ գործը՝ անմահ Վարդանի կռիվների ժամանակ, հետևեցե՛ք նրանց օրինակներին. եթե չեք ուզում, որ ձեր պատիվը ոտնակոխ լինի, խրախուսեցեք նրանց և արհամարհեցե՛ք այն վախկոտներին, որոնք զանազան պատրվակներով խուսափում են ճակատ գնալուց։

Հավաքեցե՛ք նրանց համար ռազմամթերք, հաց, շոր և ուրիշ մթերքներ...

Խորին կերպով համոզված եմ, որ այս իմ կոչը անարձագանք չի մնա և երկու-երեք օրվա ընթացքում կկազմակերպվի մի այնպիսի քաջարի զորաբանակ, որին կհաջողվի վռնդել թշնամուն հայրենի հողի սահմաններից և ապահովել հայ ժողովրդի գոյատևումը։

Հանուն բազմաչարչար հայ ժողովրդի ֆիզիկական գոյության,

Հանուն ոտնակոխ եղած ճշմարտության՝

Ոտքի՛ կանգնեցեք։ Դեպի գո՛րծ, դեպի սրբազան պատերա՛զմ։

Բոլոր զենքի ընդունակ տղամարդիկ պարտավոր են ներկայանալ Երևանում գեներալ Բեժանբեկին, իսկ բոլոր ժողոված մթերքները հանձնել տեղական Ազգային խորհուրդներին։

Երևանի զորամասի հրամանատար՝

գեներալ Սիլիկյան»։

Ընթերցանության ժամանակ Փիրումյանի դեմքը մռայլվում էր մեկ-մեկ, և գա զարմանալի էր Շնեուրի համար։ Մի՞թե ուրախ չէ, որ գեներալ Սիլիկյանն արդեն հրաժեշտ է տվել առաջին օրերի տրամադրությանը և կոչ է անում ոտքի ելնել, կռվել ու հաղթել թ-նամուն։ Չէ՞ որ դուք էլ այդ էիք ուզում,— մտածում էր կապիտանը, երբ ճակատի հրամանատարը, ընթերցանությունն ավարտելով, վեր կացավ տեղից, թղթե:ը սեղանին դնելով հարցրեց.

— Դուք մեր այն զեկույցը հաղորդե՞լ էիք մինչև այս կոչն ստանալը։

— Այո՛, հաղորդել էի, պարոն հրամանատար։ Իրեն՝ գեներալին և Ազգային խորհուրդ՝ Արամ Մանուկյանին։ Մանուկյանն անձամբ ընդունեց հաղորդումը և զարմացած էր, որ մենք այլևս աշխարհազորայիններ չենք ուզում։

— Աշխարհազորայիններից մենք չենք հրաժարվում,— լրացրեց Փիրումյանը։— Արարատյան դաշտում այլևս կանգնելու տեղ չկա։ Հիմա նրանց տարերային ուժը գլխավորող հրամանատարական կադրեր են պետք, ռազմական գործը հասկացող մարդիկ։

— Այդպես էլ զեկուցեցի, պարոն հրամանատար։

— Իսկ մեր գեներալը կոչի շեշտը դրել է մինչև հիսուն տարեկան մարդկանց վրա։ Չէ՞ որ երեկվա զորահավաքից հետո այսօր տներում այդպիսի մարդիկ չկան։

Շնեուրը նոր էր հասկանում իր հրամանատարի մռայլվելու պատճառը, փորձեց մեղմացնել նրան։

— Ես էլ հասկանում էի, որ դրա կարիքը չկա։ Բայց, այդուհանդերձ, լավ է, որ գեներալ Սիլիկյանը վերջնականապես հրաժեշտ է տվել կորպուսի հրամանատարի տրամադրությանը։

Փիրումյանը ժպտալով հասկացրեց շտաբի պետին, որ ինքն էլ ուրախ է Սիլիկյանի համար։ Բայց չէ՞ որ հրաժեշտը տեղի էր ունեցել ավելի վաղ, և այժմ լուծելու այլ խնդիրներ կան։

— Գեներալ Սիլիկյանն իրեն ճանաչողների աչքում միշտ էլ անձնվիրության օրինակ է եղել, պարոն կապիտան,— խոսեց Փիրումյանը։— Ռազմական գործի իմացության, սառն ու հավասարակշիռ հաշիվների մեջ քչերը կարող են չափվել նրա հետ։ Կարծում եք՝ մեր կորպուսի հրամանատա՞րը չունի այդ առավելությունները։ Թուրքական ճակատի մի քանի կետերում և հատկապես Դիլմանում գեներալ Նազարբեկովը ցույց է տվել զորավարի բարձր արժանավորություններ...

— Այն ժամանակ ռազմաճակատում գեներալ Նազարբեկովի անունը տալիս էին հիացումով։

— Այո՛, հիացումո՛վ,— հաստատեց Դանիելբեկ Փիրումյանը։— Բայց այն ժամանակ զորավարների և ամեն աստիճանի հրամանատարների ձեռքի տակ կանոնավոր զորամասեր կային, պատերազմը վարում էինք պատերազմական կարգուկանոնով։ Հիմա մեր կռիվն աշխարհին հայտնի բոլոր օրենքներից դուրս է, ենթակա միայն մեկ օրենքի՝ աստծու ստեղծած ազգը փրկելու օրենքին։ Գեներալ Նազարբեկովի տարիքում...

Ռադիոսարքը շտաբի անկյունում տզտզաց հանկարծ։ Շնեուրը մոտեցավ, լսափողը սեղմեց ականջին։

— Այո՛, պարոն Մանուկյան։ Բարի երեկո, ես եմ, կապիտան Շնեո՛ւրը։ Այստեղ է, այս րոպեին։— Ապա դիմեց Փիրումյանին.— Պարոն հրամանատար, պարոն Մանուկյանն է, ձեզ է ուզում։

— Լսում եմ, պարոն Արամ,— լսափողը ձեռքն առնելով՝ պատասխանեց Փիրումյանը։— Բարի երեկո, բարի երեկո, շնոր-

հակալ եմ, զգացված եմ։ Ինչպե՞ս չէ։ Շատ ուրախ եմ համա-
լրումների, պարենի և ամեն ինչի համար։ Չեք կարող երևակա-
յել, թե այդ ամենն ինչպես է բարձրացնում զինվորի ոգին։
Ստացե՞լ եք։ Այդպես է, իհարկե. հիմա մեզ գործիմաց հրա-
մանատարներ են պետք, մանավանդ որ, հավանական է, տնե-
րում զենք կրելու ընդունակ մարդ մնացած չպիտի լինի։ Կո՞ւրը։
Ընթերցելուց ինքս էլ այդպես էի մտածում։ Բայց խոսեցինք մեր
շտաբի պետի հետ, և հիմա կարծում եմ՝ լավ է, որ ժողովուրդն
արթուն են պահում։ Է՛, ինչ կարևոր է, մի՞թե կարևորը գնա-
հատականն է։ Մենք հաղթենք, թող նրանից հետո գրեն՝ ինչ
որ կուզեն։ Ծնված օրից գլուխներս են մտցնում, որ ահեղ դա-
տաստանի օր է լինելու։ Միայն թե այն օրվան գլխահակ ու
ամոթով չներակայանանք...

* *
*

Հինգերորդ գնդի առաջին գումարտակի հետ էր Գարեգին
եպիսկոպոս Հովսեփյանի այդ օրվա վերջին զրույցը։ Զինվոր-
ները դաշտային լարված ու երկար պարապմունքից հետո ան-
կանոն նստել էին կանաչ խոտերի մեջ, թիկունքներով դեպի
Արարատը և լսում էին սրբազանի ճառը։ Հոգնած էին նրանք,
սկզբում լսում էին անտրամադիր, ննջելով, հետո աստիճանա-
բար կապվեցին նրա խոսքի հետ և գնացին դեպի հայոց պատ-
մության խորքերը, տեսան հայ ազատամարտիկների քաջագործ-
ությունները, ոգևորվեցին նրանց անօրինակ հաղթանակներով։
Դժվար էին ձեռք բերվում այդ հաղթանակները, մեծ զոհաբե-
րություններ ու նահատակություններ գնով, արյամբ ու մա-
հերով, որոնք կռվողներին բերում էին անմահության դափնին և
սերունդների երախտագիտությունը։ Սրբազանի հայացքն ուղղը-
ված էր դեպի Արարատը, որի գագաթները մխրճվել էին վերջա-
լույսի շառագույնով ողողված երկնքի մեջ։ Գարեգին եպիսկո-
պոսի համար այդ պահին Արարատը կենդանի, շնչավոր ու ան-
մահ մի իրականություն էր, հայոց դժվար պատմության վկան
ու մասնակիցը, հայ ազգի անմահության ու հավերժության խա-
րիսխը։

Երկու արծիվ օդում հանդարտ սահում էին Արարատի գա-

գաթների ուղղությամբ։ Երևի վերից անքթիթ դիտում էին դաշտի անսահմանությունը՝ այն կետերը, որոնց վրա իշնելով պիտի հղփանային։

Ասում են՝ արծիվները հզոր են ու երկարակյաց, որովհետև հաճախ են կշտապնդվում քաջ նահատակների մասունքներով։

Սրբազանը, մտորուն հայացքն արծիվների վրա, խոսում էր.

— Ահա այսպես գեղեցիկ ու վեհորեն բազմել է մեր Հայաստան աշխարհի սրտում, մեր ազնիվ ցեղը սկզբնավորող Հայկի ինքնահաստատումի խիզախ մարտն է խրախուսել, նրա ժառանգների և հետագաների ազատասիրության կամքն ու խաղաղ, արգասավոր ոգորումները... Մինչև այսօր և հավիտյան։ Նայե՛ք նրան, զավակներս, լա՛վ տեսեք նրա ինքնավստահ հանդգնությունը։— Գումարտակը, ասես մարտական հրամանով, մեկեն շուռ եկավ դեպի սուրբ լեռը և միահամուռ, միաբերան «ա՜հ» արեց։ Դա հիացմունքի, սրբազան ոգեղինացման բացականչություն էր։ Եվ երբ նրանք մեկ էլ ետ նայեցին, իրենց ոգեշնչված ճառախոսը երևաց աչքներին ավելի մեծ, կարծես այլևս այն փոքրամարմին, նիհար ու մագաղաթյա վանականը չէ, այլ պատմական հեռուներից եկած, այս ճակատագրական օրերին հասած մի հսկա, որ հերոսության ու հաղթանակի պատգամն է բերել քաջ նախնիներից։ Սրբազանը սևազգեստ կանգնել էր հողաթմբի վրա և թևերը բարձրացրած՝ պատերազմի ոգու նման, թվում էր ահա ուր որ է սուրալու է դեպի բիբլիական լեռը։ Եվ օդի մեջ նրա խոսքերն էին թևածում։— Արարատը միշտ էլ տեսնում է իր զավակներին, որտե՞ղ էլ նրանք լինեն, ի՛նչ հեռուներում և բախտավոր ու ապաբախտ պայմաններում։ Տեսնում և ուժ ու համառություն է պարգևում։ Նայեցե՛ք նրան և դուք նոր ուժ կստանաք, ինչպես հունաց առասպելի դյուցազունը, որը երբ ոտքը կպցնում էր գետնին կամ մեր Արշակ թագավորը, երբ Պարսից դաժան արքայի պալատում կանգնում էր Հայաստանից տարած հողի վրա։ Վաղը, զավակներս, վաղը մեծագույն փորձությունը կլինի նրա համար։ Վաղը նրա պարգևված ուժով մենք պիտի հաղթենք թշնամուն։ Եվ այն ժամանակ նա բաց ճակատով կնայի երկնքին ու հանուր աշխարհին, կմնա հպարտ իր հավերժության մեջ, իբրև մեր գոյության ապավեն ու խարիսխ, մեր նորոգ կյանքի ու վերածնունդի անմեռ վկան...

Սրբազանի խոսքերը դեռ զնգում էին զինվորների ականջ-

ներում, երբ պատանի մի զինվոր, ոտքի ելնելով, խնդրեց թույլ տալ, որ ինքը բանաստեղծություն արտասանի։

— Քո՞նն է բանաստեղծությունը, ի՞նքդ ես գրել,— հարցրեց Գարեգին եպիսկոպոսը՝ ուրախանալով, որ իր խոսքը բանաստեղծական տրամադրություն է արթնացրել։

— Ո՛չ, ես չեմ գրել, սրբազան, բայց այնպես իմն է և այս պահին ձեր խոսքով այնպես է եռում իմ մեջ, որ ուզում եմ նվիրել բոլորին։

Պատանին կանգնած էր նստոտած ու կիսապառկած իր ընկերների արանքում։ Գլխաբաց էր, և ալիքավոր, թխափայլ մազերի հետ խաղում էր Արարատից եկող հովը։

— Ա՛,— սրբազանը հանկարծ ճանաչեց պատանուն և հայրական խանդաղատանք զգաց,— Հովսե՞փ, այդ դո՞ւ ես։ Խոսի՛ր, սիրելիս։

— Բանաստեղծությունը Վահան Տերյանն է գրել, կոչվում է «Արարատին»,— հայտարարեց պատանին և սկսեց կարդալ։ Ամոթխածությո՞ւնն էր, թե՞ հուզմունքը՝ առաջին պահ խաթարել էր ձայնը, և օդում թևածում էին միայն կցկտուր արտահայտություններ ու տողեր. «Երկնասլաց ու թեթև»... «Նյութեղեն չես դու երբեք»... «Հայոց արնոտ աշխարհի հոգին ես դու անարատ»։ Ապա նա գտավ, տիրապետեց իրեն, ձայնը դարձավ տիրական, յուրաքանչյուր բառը՝ հնչեղ ու մտքում կնքվող։

«Եվ ավերվող մեր սրտում
Եռա անմար ու առատ,
Դու պահապան միշտ արթուն,
Լուսակատար Արարատ...
Չեմ տեսել քեզ, բայց որպես
Անուշ ցնորք իմ հոգում,
Պայծառ ես դու, հրակեզ,
Հրապսակ ու կանգուն,
Արդար գրող հայության,
Սիրո սեղան հրառատ,
Դու իմ երկրի հարության
Անխաբ վկա—Արարատ։
Որքան մնանք մենք նկուն,
Որքան խավարն իշնի խոր,
Ծիրանավո՛ր մեր հոգուն
Դու պահապան զորավոր...

Որպես երազ լուսեղեն,
Ջյունապայծառ ու շողուն՝
Դո՛ւ անխորտակ ապավեն
Հրաճարակ մեր հոգուն։
Կանգնի՛ր, անկյալ ժողովուրդ,
Ե՛վ հավատա, և՛ տոկա.
Կա քո վշտում վեհ խորհուրդ,
Եվ խաչվածին մա՛հ չկա։
Պարզվիր պայծառ դեպի վեր,
Ցոլա՛ հրով անարատ,
Երկրիս մոխիր ու ավեր,
Դու անմահ սիրտ—Արարատ»։

Մի քանի վայրկյան լուռ էին գինվորները։ Առաջինը ծափ զարկեց սրբազանը, և նրան հետևեց գումարտակի որոտընդոստ ծափահարությունը։ Հիացական բացականչություններով լցրին օդը։ Եվ երբ լռեցին, Գարեգին եպիսկոպոսն իր հեղինակավոր խոսքն ասաց.

— Իսկապես որ այս պահի համար է գրված։ Աստված երկա՜ր կյանք տա Վահան Տերյանին։— Ապա դառնալով պատանուն՝ հարցրեց.— Հովսեփ, որդյակս, դու անձամբ տեսած կա՞ս Տերյանին. հիմա նա Ռուսաստանում է լինում, նոր կառավարության մեջ հայոց գործերով է զբաղված։

— Վահան Տերյանին շատ եմ տեսել, սրբազան,— հպարտությամբ պատասխանեց պատանի Փիրումյանը։— Երբ Միքայելի հետ սովորում էր համալսարանում, մեր տանը հաճախ էր լինում։ Վերջին անգամ հանդիպել եմ ժողովում, լսել եմ նրա խոսքը, բանաստեղծությունները, որոնց մեջ էր նաև «Արարատը»։ Դրանից հետո էր, որ ես եկա այստեղ...

Գարեգին սրբազանը ճանաչում էր Դանիելբեկ Փիրումյանի ավագ որդի Միքայելին, տեսել էր նաև աղջիկներին, որոնք երբեմն ամառն անց էին կացում Ալեքսանդրապոլում և մոր հետ հաճախ էին այցելում Անիի ավերակները, հետաքրքրվում հնագիտական արշավախմբի աշխատանքներով, մանավանդ որ Երանուհի Խալաթյանց-Փիրումյանը բարեկամություն ուներ Նիկողայոս Մառի, Հովսեփ Օրբելու և արշավախմբի մյուս աշխատակիցների հետ...

Սրբազանն ուզում էր կրտսեր Փիրումյանին իր գոհունակությունն արտահայտել տիկին Երանուհու կատարածի համար...

Սակայն այդ ժամանակ նրանց մոտեցավ Արշավիր Մելիքյանը, և զրույցը գնաց ուրիշ ուղղությամբ։

Մելիքյանին ծանոթ էր սրբազանը, գիտեր, որ տասնչորսին հենց Երևանում թերթ է հրատարակել և ըմբոստ գաղափարների համար բավականին տուժել։ Հետո էլ քանի՞ անգամ նրա ստորագրությամբ հոդվածներ է կարդացել, որոնք մի ուրիշ տեսակ են բացատրում աշխարհն ու այն վերափոխելու եղանակները։ Սակայն չգիտեր, թե այդ ամենն ինչքա՞ն նպաստավոր է հայ ազգի համար, որը տրորվում է իրար արյան ծարավի մեծ ու փոքր տերությունների գոտեմարտում։

Արշավիր Մելիքյանը հարգալից ողջունեց Գարեգին սրբազանին, ապա դարձավ Հովսեփին.

— Ապրե՞ս, երիտասարդ, դու հիացրիր բոլորին։

— Դրա համար Վահան Տերյանին էմ պարտական,— համեստ, շիկնած պատասխանեց Հովսեփը։

— Տերյանին մեր ամբողջ ժողովուրդն է պարտական,— հաստատեց Մելիքյանը և, առավելապես սրբազանին ի լուր, ավելացրեց.— Նախ և առաջ նրա համար, որ այս ճակատագրական օրերին նա մեր ազգը փրկելու ճանապարհ փնտրողների առաջին շարքում է։

— Ես գիտեմ, որ նա Ռուսաստանի նոր կառավարությունում պատասխանատու պաշտոն է զբաղեցնում,— Հովսեփը փորձեց ապացուցել իր քաջատեղյակությունը...

— Զբաղեցնելն ա՛յն խոսքը չէ,— դարձյալ ի լուր սրբազանի՝ ասաց Մելիքյանը։— Նա անհնարինն է կատարում, անհնարի՛նը՝ մեր ժողովուրդն այս արհավիրքից փրկելու համար։ Ռուսաստանի նոր կառավարության դեկրետը Արևմտյան Հայաստանի վերաբերյալ՝ նաև նրա՛ գործն է։ Արտաքին գործոց նախարարության հեռագրերն ու մյուս միջոցառումնե՛րը, որոնց նպատակն է մեծ տերություններին թույլ չտալ իրենց շահախնդրություններով պղտորելու հայոց հարցը։

Սրբազանն ուշադրությամբ լսում էր նրա խոսքը և, առանց երկար-բարակ մտածելու, ասաց.

— Իսկ ինչո՞ւ այդ ամենի մասին չեք խոսում զորքի առաջ, չեք պատմում, չեք բացատրում, որպեսզի մարդիկ իմանան, որ իրենք մենակ չեն, որ իրենց հոգսը քաշող մի կառավարություն կա այս աշխարհում։

— Քիչ առաջ ես ինքս էի ուզում առաջարկել։

— Կարծում եմ՝ հիմա էլ ուշ չէ,— ուրախացավ սրբազանը և, զորաջոկատի ղեկավարների հետ խոսելով, զինվորներին նորից հավաքել տվեց։— Ճիշտ է, նրանց հանգիստ է պետք, բայց դրանից ավելի անհրաժեշտ է այն գիտակցությունը, որ իրենք մենակ չեն այս աշխարհում։

Արշավիր Մելիքյանն իր զրույցն սկսեց Ռուսաստանի նորաստեղծ կառավարության դեկրետի հիշատակումով։

— Դա առաջին պետական փաստաթուղթն է, որով արևմտահայկական նահանգներին տրվում է ինքնորոշման իրավունք,— ասաց Մելիքյանը և հետո ուզում էր բնութագրել նաև փաստաթղթի պատմական ու քաղաքական նշանակությունը։ Սակայն հենց նրան մոտիկ նստած մի զինվոր բարձրաձայն տրտնջաց.

— Ի՞նչ ինքնորոշման իրավունք է դա, երբ դեկրետի հրապարակման հետ էլ ռուսական զորքը ետ քաշվեց՝ արևմտահայկական նահանգները թողնելով «գորշ գայլի» երախում...

— Ռուսական զորքը ետ քաշվեց ո՛չ իր կամքով։ Նրան հարկադրեցին Գերմանիան ու իր դաշնակիցները,— հանգիստ բացատրեց Մելիքյանը։— Հարկադրեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով։ Հասկանո՞ւմ եք։

— Իսկ Ռուսաստանն ինչո՞ւ ընդունեց այդպիսի պայմանագիրը։ Ընդունեց, չէ՞։ Բա դրա՞ն ինչ կասեք,— պոռաց զինվորը և հաղթական հպարտությամբ չորս կողմ նայեց։

Զինվորները հետաքրքրությամբ հետևում էին վեճին և չգիտեին՝ ի՞նչ պիտի պատասխանի ճառախոսը, որին կարծում էին, մնում էր ձեռքերը բարձրացնել։

— Ընդունեց՝ դիմադրելով,— արտաքուստ հանգիստ խոսեց Մելիքյանը։— Ընդունեց բողոքելով։— Ապա գրպանից թղթեր հանեց ու կարդաց.— Տեսեք՝ այդ ամենն ինչպես է արձանագրել դաշնագիրն ստորագրող ռուսական կողմը։— Ապա դառնալով ընդդիմախոսին՝ հարցրեց.— Լսո՞ւմ եք։ Դե՛, ահա. «Կովկասում ակնհայտորեն խախտելով հենց Գերմանական կառավարության կողմից փետրվարի 21-ի վերջնագրի պայմանները և հաշվի չընդունելով Արդահանի, Կարսի ու Բաթումի մարզերի բնակչության իսկական կամքի հետ, Գերմանիան Թուրքիայի օգտին է անջատում այդ մարզերը, որոնք ոչ մի անգամ նվաճված չեն եղել Թուրքական զորքերի կողմից»։ Հասկանալի՞ է, թե՞ նորից կար-

դամ։— Ընդդիմախոսը լուռ էր։ Ուշադիր լսում էին նաև զինվորները։— Նույն փաստաթղթում ասված է նաև. «Ապավինած միյան իր սեփական ուժերին՝ Ռուսական հանրապետության սովետական կառավարությունը ի վիճակի չէ դիմադրելու գերմանական իմպերիալիզմի զինված հարձակմանը և հանուն հեղափոխական Ռուսաստանի փրկության՝ հարկադրված է ընդունել իրեն ներկայացված պայմանները»։

— Այո՛, հարկադրված է ընդունել,— չհանձնվեց ընդդիմախոսը։— Հարկադրված եղավ նաև հրաժարվել հայոց հովանավորի պարտականությունից։

— Ահա այդտեղ էլ դուք շարաշար սխալվում եք,— արդեն ջղային շարունակեց Մելիքյանը։— Սակայն չգիտեմ՝ անտեղյակությունի՞ց, թե՞ պարզապես...

— Ի՞նչ անտեղյակություն, ուրիշ ի՞նչ կա, որին պետք է տեղյակ լինեմ։

— Հիմա ես ասեմ, թե ինչի՛ն պիտի տեղյակ լինեիք։— Եվ ձեռքի թղթերի արանքից հանեց մեկը, տակ ու գլխին նայեց, սկսեց կարդալ.— Բրեստ-Լիտովսկի պայմանագրից հետո, երբ թուրքերը Գերմանիայի հովանավորությամբ առաջ էին շարժվում մեր ճակատում, Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարությունը, Ջիչերինի ու հայազգի Կարախանի ստորագրությամբ, Գերմանիայի դիվանագիտական ներկայացուցչին հղել է այսպիսի հեռագիր. «Թուրքական բանակն առաջ է շարժվում դեպի Բաթում, Կարս, Արդահան՝ ավերելով երկիրը և ոչնչացնելով գյուղացիական բնակչությանը։ Հայերի հետագա ճակատագրի համար պատասխանատվությունն ընկնում է Գերմանիայի վրա, որովհետև հենց նրա պահանջով էլ ռուսական զորքերը դուրս բերվեցին հայկական մարզերից, և այժմ Գերմանիայից է կախված թուրքական բանակի ետպահումը վրեժի ու չարության հողի վրա ծագող իր համար սովորական աննկարագրելի դաժանություններից։ Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ մի այնպիսի կուլտուրական պետություն, ինչպիսին Գերմանիան է, որը հնարավորություն ունի ազդելու իր դաշնակից Թուրքիայի վրա, թույլ կտա, որ ակամա այս համաշխարհային պատերազմի մեջ քաշված հայ ժողովրդի համար Բրեստի հաշտության պայմանագիրն անհամար թշվառությունների աղբյուր ծառայի...»։ Եվ այսպես շարունակ։ Հիմա հասկանալի՞ է։

— Հետո՞,— իբր այդ բոլորը ոչ մի նշանակություն չունեցավ հարցը պարզելու համար, իբր դրանք դատարկ խոսքեր են, և կարևորն այն է, որ Ռուսաստանը հիմա իր հեռվից խոսում է, առանց վճռական միջամտության, և թուրքն էլ ահա գալիս է մեր վրա,— զինվորը ձեռքը թափ տվեց.— Իսկ այսո՞ր։ Այդ բոլոր դատարկ խոսքերից ի՞նչ օգուտ էս կոտորվող անմեղ ժողովրդին...

— Ըստ երևույթին ո՛չ մի օգուտ,— վճռաբար հայտարարեց Մելիքյանը,— քանի որ «էս կոտորվող անմեղ ժողովրդի» բախտը հանձնվել է Անդրկովկասյան սեյմին, և նա էլ ամեն կերպ աշխատում է երկրամասը հեռու պահել այն օգուտից, որ իրապես կարող էր լինել իմ բերած փաստաթղթերից ու փաստերից։

— Էդ մեկը չհասկացանք։

— Այդ մեկը հասկանալու համար էլ անհրաժեշտ էր տեղյակ լինել այն իրողություններին, որոնք սեյմի պարագլուխները թաքցնում են ժողովրդից։

— Էդ էլ մի ուրի՞շ նորություն։

— Նորություն չէ։ Ահա երկու շաբաթ է, ինչ Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարությունը գերմանիայի համապատասխան մինիստրության ներկայացուցիչ կոմս Միրբախի հետ բանակցություններ է վարում, որպեսզի Կովկասին վերաբերող հարցերն անհապաղ քննվեն, և քննությանն անպայման մասնակցի Ռուսաստանյան կողմը...

— Հետո՞ ինչ...

— Եվ այն ժամանակ, երբ Միրբախն ու նրա կառավարությունը համաձայնել էին և նպատակահարմար էին գտնում, որպեսզի Ռուսական ու Անդրկովկասյան կառավարությունները համատեղ մշակեին իրենց դիրքն ու պայմանները, այսօր հենց Չխենկելին Անդրկովկասյան կառավարության անունից հրաժարվել է ամեն տեսակ համաձայնությունից և ինչ-որ իշխան Մաշաբելու է լիազորել, որ սա գնա, Ռուսական կառավարության առաջ, երես առ երես հայտնի Անդրկովկասի անկախությունը։

— Հը՛մ,— զարմացած, գլուխը կորցրածի պես խոսեց զինվորը։— Եվ էդ բոլորը, ոնց որ ասում ես, էդպես էլ կա, հա՞։

— Այո՛, եղբայրս, դժբախտաբար, այս է ճշմարտությունը։

Եվ, որքան էլ ցավալի ու աղետաբեր, մեր ազգի գործերն այսպես են վարում Չխենկելին ու նրա հայ գործակիցները։

Զինվորներն աղմկեցին, իրարով անցան։ Հարցեր էին տալիս, իրար խանգարելով խոսում էին, հայհոյում ու աղմկում։ Գարեգին սրբազանն ստիպված եղավ միջամտել, որպեսզի խաղաղություն ստեղծվի։ Այն ժամանակ մի ծեր զորական ետին շարքերից առաջ գալով կանգնեց Արշավիր Մելիքյանի ու սրբազանի առաջ և այլայլված խոսեց.

— Շատ հարգելի պարոն, շնորհակա՜լ ենք հոգաչափ. լավ խոսքեր ասացիք։ Վնաս չունի, որ շատ բան չհասկացանք։ Ուսումը պակաս մարդիկ ենք։ Ներող կլինես։ Բայց հաստատ իմացանք, որ Ռուսաստանը կանգնած է մեր հակին ու չի թողնի, որ մեր ազգը ձեռից գնա... Իսկ վաղը պատերազմի դաշտում էդ չխենկալիներին ցույց կտանք, թե մենք ո՛ւմ կողմն ենք և ի՛նչ տեսակ ենք կռվում առանց իրենց նմանների ողորմածության։

* *
*

Արարատյան երկրի զանգերը ղողանջում էին անդադար։

Վանքերում ու եկեղեցիներում զանգահարները փոխարինում էին իրար, և լեզվակի պոչը բռնող ամեն մի հոգևորական,— վանահայր լիներ թե շարքային տերտեր, սարկավագ թե փակակալ,— գիտեր, հասկանում էր, որ ինքը մարտական դիրքում է գտնվում, հայրենիքի փրկության համար ահազանգի տակ պիտի պահի հող ու երկինք։

Զանգերի ղողանջներից թուրքերի արյունը սառչում էր երակներում, քունը փախչում էր աչքերից, արև օրվա երկինքը սևանում էր երևում, և լուսինը, թուրքի պաշտած լուսինը գառնում էր մահվան նշանակ։

Սարդարապատից ետ փախչելիս նրանք իրենց հետ քարշ էին տվել եկեղեցու մեծ զանգը, որ գյուղացիք երկլուծ սայլով մի կերպ Ալեքսանդրապոլից են բերած եղել տասը տարի առաջ։ Քարշ են տվել, հասցրել Թուլքի-թափա։ Այնտեղ, ասում են, կանգնեցրել են թնդանոթի դիմաց և կրակել։ Հայոց զանգերի դեմ թունդ կատաղած են եղել, կրակել են, որ զանգի փշուրները շաղ տան հայոց դիրքերի վրա։ Սակայն հսկա զանգն իր

հետ շաղ է տվել թնդանոթը, և կոտորվել են կրակողներն ու «թամաշայի» համար հավաքված ասկյարները։

Զանգի լուրը Ալեքսանդր Շնեուրին հասցրեց կապավոր Մարտիրոսը, որը գործով առաջավոր գիծ էր գնացել և այդ պատմությունն իմացել էր հետախույզներից։

Շնեուրը հիշեց, որ մինչև Սարդարապատ հասնելը թուրքերը միանգամայն հարգալից վերաբերմունք ունեին հայկական զանգերի նկատմամբ։

— Վար էին բերում զանգակատներից և մեջը ճաշ էին եփում զորքի համար,— ասաց շտաբի պետը։— Քանի անգամ աչքովս եմ տեսել, թե ինչպես խոհանոցի ետևից սայլի վրա տանում էին՝ արևի տակ փայլեցնելով ներսի համակ արծաթագույնը։

— Հիմա խոհանոցներում երևի ճաշերը չեն եռացնում, որպեսզի զանգերը ձայն չհանեն,— այսպես եզրակացրեց երիտասարդ կապավորը, որն առաջին օրերին գանգատվում էր, թե զորամասի ձայնը դժվար է լսվում, քանի որ օդը լցված է զանգերի զողանջներով։ Իսկ հիմա ուրախ էր, որ այդ զողանջներից թուրքերն են խելագարվում։

Մայիսի 25-ի լույս 26-ի գիշերը զանգերն արդեն խենթացել էին։ Իրար խլացնելու մոլուցքով բռնված՝ նրանք Արարատյան երկիրը լցրել էին սարսռազդու մի աղմուկով, որից երկինքը զարմացել-շշմել էր, աստղ-աչքերն էր թարթրտում։ Լիալուսինը լայնացել-պատռվում էր։ Թուրքերը թնդանոթներից կրակ էին տեղում չորս կողմերի վրա։ Իրենց իսկ կրակոցներից խլացած՝ մի պահ չէին լսում զանգերի ձայնը, կարծում էին սպանել են։ Սակայն խլությունն անցնում էր, և մեկ էլ զողանջները նրանց մարմիններն էին լցվում բոլոր կողմերից, նույնիսկ թիկունքից, Արարատի լուսաշող լանջերից։ Այնպես էր թվում, թե Արարատն էլ՝ վիթխարի մի զանգ, աշխարհը լցրել է հզոր ու աշխարհասփյուռ իր զողանջներով։

Այդ գիշեր արտակարգ բանուկ էին Արարատյան երկրի գյուղերից ու ավաններից, հատկապես Երևանից դեպի Սարդարապատի գիծը տանող ճանապարհները։ Պարենով ու ռազմամթերքով բեռնված սայլերը, ձիերը, ջորիներն ու ավանակները, հետիոտն շալակավորները, որոնք արդեն քանի օր այդ ճանապարհներին էին, շտապում էին դեպի ճակատ։ Ազգային խորհրդից էր

ելել գաղտնիքը. ոմանց հասկացրել էին, որ 26-ի առավոտյան սկսվելու է վճռական ճակատամարտը։ Գուցե չեն էլ հասկացրել. ասել են՝ 26-ի այգաբացին զորքը պետք է կուշտ պարենավորվի։ Եվ այս հասարակ նախազգուշացումն իրար տալով ուռճացրել են, դարձրել վճռական ճակատամարտի ահազանգ, որը զանգերի զողանջների հետ սփռվել է Արարատյան երկրում. մտել հայոց տները, թունդ հանել առանց այն էլ կրակված սրտերը։

Եվ կանայք՝ վաղո՜ւց այլևս ոչ փափկասուն հայ կանայք, իրենց հոգեպահուստներն ու դեղապետները հանեցին, կապոտեցին իբրև սրտի թանկագին նվերներ, ճանապարհեցին կամ հենց իրենք վերցրին, տարան ճակատ։

Արդեն մոտենում էր ճանապարհվելու ժամը։

«Շուլավերցու աղջիկ» Շարմադի կողքին կապոցը ձեռքին կանգնած էր Համեստը, որի կապոցում ամեն ինչ կար, բոլորն էլ ընտիր ու համեղ։ Էլ չամշացած խաղող, անուշաբույր խնձոր ու ծիրանի չիր, տապակած հավեր ու զանազան աղանդերներ... Եվ այս բոլորի վրա՝ խորհրդավոր գաթա-կրկենին, որ իր իսկ ձեռքով էր թխել և կապել նախորդ օրը բազմերանգ թելերով նախշած թաշկինակի մեջ։

Համեստը սրտով արդեն ռազմաճակատում էր, Արշակի կողքին։ Ականջում նրա ձայնն էր՝ «ա՜քուր», հայացքի առաջ՝ զինվորի կերպարանքը, փամփշտակալները խաչաձև կապոտած կրծքին։ Ուղեկցող զինվորն ասել էր՝ «էգ վարանդեցի Արշակի ամեն մի գնդակը մի թուրքի մահ է», և Համեստը հպարտությամբ, այո՜, հպարտությամբ՝ անվերջ մտածում էր, որ իր հետ այնպես հալվելով խոսող զինվորը, իր... այստեղ արդեն սիրտը նվազում էր... իր Արշակը թշնամու հոգեառն է։

Կնոջ հայացքը դիմացի տղամարդու դեմքին դիպուկահարի պես անվրեպ որսում է հոգում կատարվող աննշան շարժումը։ Համեստը տեսել էր, որ Արշակի սիրտն ալեկոծված է։ Տեսել էր, որ իր հետ խոսելիս ձայնը դողում է՝ մատնելով սրտի այդ անսովոր ու երջանիկ դողը։ Զգում էր, որ գաթա-կրկենու խորհրդավոր կտորն էլ բազմապատկել է նրա երջանկությունը... Եվ այդ բոլորը տեսնում ու զգում էին նաև Արշակի ընկերները։ Իսկ Շարմադ հոքիրը ճանապարհին հովանավոր տոնով ասել էր.

«Տղայի սիրտը ձեռքիդ է, մնում է որ էլ բաց չթողնես»։ «Ի՞նչ ես ասում, Շարմաղ հոքիր, էն օտար տղամարդու հետ ես ի՞նչ գործ ունեմ»։ «Նա օտար էր մինչև քեզ տեսնելը, հիմի օխտը տարվա հարազատի նման է, և էդքանը քոռ աչքով էլ կտեսնվի։ Իրար սիրտ եք մտել, պրծավ-գնաց»։

Համեստի համար այնպե՞ս հաճելի էր այս խոսքերը լսել։ Սակայն կանացի արժանապատվությունը ո՞նց կհանդուրժեր, որ մտածեն, թե ահա այսպես մի տեսնելով գժված են իրար համար։ Եվ նա ջանում էր համոզել, թե ինքը ոնց որ գնացել, այնպես էլ վերադառնում է, ու իր համար Արշակը՝ ոնց որ մյուսները... «Որ էդպես է, մի փունջ խոտ քաղի, դեմ արա, ուտեմ»,— խորամանկ նետեց Շարմաղը։ «Չե՞ս հավատում,— սիրտը լցված՝ ուզում էր լալ Համեստը։— Աստված իմ, էս ի՞նչ բախտ ես տվել ինձ...»։ «Սուս՜-ս՜, աստծու դեմ գանգատ չեն անի. նա թե մի դուռ փակում է, մի ուրիշն էլ բաց է անում։ Ա՜յ, էսօր կգնանք, կտեսնեք իրար...»։

Սակայն եթե ամեն ինչ աստծո կամքով էր կատարվում, այնօր նրանց չպիտի վիճակվեր իրար տեսնել։ Վերջին պահին Երևանի կողմից մի ձիավոր եկավ, Ազգային խորհրդի ներկայացուցչի հետ խոսեց, և սա էլ դումակի առաջ հայտարարեց, թե պետք է գնան դեպի հարավ։

— Զորամասերից,— ասաց,— մեզ բաժին են ընկել Մակեդոնի ու Հովսեփի հեծյալները, որոնք գտնվում են Սարդարապատի ուղղությամբ երկաթգծից ներքև։

Շարմաղը հուզված վազեց, կանգնեց ներկայացուցչի առաջ.

— Ա՜ տղա, էդ ի՞նչ նոր կարգադրություն է, մեզ ո՞ւր ես տանում։

— Քեզ համար միևնո՞ւյն չէ, ա՜յ մայրիկ ջան։

— Չէ՜, ջանի՜դ մատաղ, ինձ համար միևնույն չի։ Ինձ համար, մեկ էլ, ա՜յ, էն ջահել հարսի։ Մենք պիտի գնանք, էն. ո՞նց է անունը... հա՜, Մահացածների գունդը...

— Մահապարտների, ա՜յ հեր օրհնած...

— Հա՜, ցա՜վդ տանեմ, Մահապարտների գունդը։ Էնտեղ են մեր հարազատները,— ասեց Շարմաղը։— Թույլ տուր գնանք, բոյի՜դ մեռնեմ։

— Կարգադրված է, մայրիկ ջան, իրավունք չկա,— անդրդվելի էր Ազգային խորհրդի ներկայացուցիչը։— Մահապարտների

գնդի համար ուրիշ գյուղերի է հանձնարարված։ Իսկ մենք հենց հիմա կարգադրություն ստացանք... Ո՞վ է գլխից ձեռ քաշել, որ դեմ գնա Արամի հրամանին։

* *
*

Երեկոյան ուշ ժամին Շնեուրը ճակատի հրամանատարին զեկուցեց Հայկական կորպուսի շտաբից ստացված արտակարգ հեռախոսագրի մասին։ 5436-րդ հեռագրով ստացվել էր Հայոց սպարապետ Նազարբեկովի ու նրա շտաբի պետ Վիշինսկու ստորագրած կոչը հայ ժողովրդին։ Փիրումյանն առանց կարդալու էլ գիտեր, թե ի՛նչ պիտի ասեր այդ կոչը։ Նա գիտեր նաև, որ հայ ժողովուրդն ուշացած կոչերով չի գնում վճռական ճակատամարտի։ Սակայն, այդուհանդերձ, նստեց շտաբի միակ մաշված սեղանի կողքին և կարդաց.

«Հայե՛ր,— նախշուն, ասես միջնադարյան գրչի հրաշագեղ ձեռագրով շարված էր դժգույն թղթի վրա,— ծանր փորձություններ է ապրում մեր ժողովուրդը։ Տաճկական բազմադարյան ստրկությունից հետո մեր ժողովուրդը հասկացավ, որ այդպես շարունակել այլևս չի կարող և վճռեց՝ կա՛մ զենքը ձեռքին նվաճել իր ազատությունն ու ստեղծել իր համար երջանիկ ապագա, կա՛մ պատվով մեռնել։ Մեծ զոհողություններով ու ջանքերով ստեղծված մեր զորքը՝ շնորհիվ շատ անգիտակից տարրերի, շուտով կորցրեց իր ոգևորությունը, և դրա հետևանքը եղան մեր պատմական անհաջողությունները՝ մեկը մյուսից ծանր։

Տաճիկներն ամենաբարբարոս ձևով խախտեցին հաշտության բանակցություններն ու կնքված զինադադարը։ Նրանք օգտվելով զինադադարից, առանց նախազգուշացնելու, անսպասելի կերպով հարձակվեցին ու գրավեցին Ալեքսանդրապոլը։ Այս բանը վերջնականապես քայքայեց մեր զորքը, և զինվորները, ձգելով իրենց շարքերը՝ անկանոն խմբերով փախան իրենց տները թողնելով բախտի բերմունքին բոլոր մեր պահեստներն ու ամբողջ ռազմամթերքը։ Թվում էր, թե ամեն ինչ կորած է, և մեր նենգ թշնամուն մնում է միայն շարունակել իր հաղթական ընթացքը դեպի երկրի ներսը, ստիպելով դրանով հայ ազգաբնակ-

չությանը գաղթել իր բնակավայրերից և կորցնել իր ամբողջ ունեցվածքը։ Բայց մեծ է աստծո ողորմությունը։ Երևանի քաջարի զորամասը, որի դեմ նույնպես թշնամին շարժվել էր, շտատանվեց, ընդհակառակը, դիմադրելով նրա հարվածներին, ինքը հարձակման դիմեց, երկու օրվա կռվից հետո ետ մղեց թշնամուն և այժմ հետապնդում է նրան։ Երևանի զորամասի հաղթությունը ոգևորեց Ալեքսանդրապոլի զորամասի զինվորներին. սկսեցին կազմվել վաշտեր, գումարտակներ և գնդեր, որոնք արագությամբ դարձան դեպի թշնամին՝ ոգևորված մի ցանկությամբ և մի կամքով՝ հաղթել կամ մեռնել։ Բայց մինչ այդ, մենք արդեն դժբախտաբար կորցրել էինք մեր ամբողջ պաշարն ու ռազմամթերքը, այդ պաշարից մեծ քանակությամբ զենք ու փամփուշտ ընկավ ազգաբնակչության ձեռքը, մթերքների պահեստները կողոպտվեցին գաղթող ժողովրդի ձեռքով, զինվորներից շատերը փախան իրենց տները։ Հայ ժողովուրդը, այն զորքը, որ վճռել է կյանքի ու մահու կռիվ մղել թշնամու դեմ, պետք է լինի կուշտ և հագնված։

Եթե դուք ցանկանում եք ազատել ձեր ընտանիքները և ունեցվածքը, եթե դուք չեք ցանկանում ապրել ավելի վատթար ստրկության մեջ...»։

Ռազմաճակատի հրամանատարը, առանց վերջին էջն ընթերցելու, նայեց ստորագրություններին. «Հայկական կորպուսի հրամանատար՝ գեներալ Նազարբեկյան, Հայկական կորպուսի շտաբի պետ՝ գեներալ Վիշինսկի»։ Ազատ շունչ քաշեց և ժպտալից, մի քիչ հեգնական-անքեն հայացքը հառեց շտաբի պետին։ Նա մտածում էր, որ կորպուսի տնօրեններն ապագայի համար են փաստաթուղթ պատրաստել։ Գալիք սերունդները կկարդան ու կհպարտանան՝ ի՞նչ զորավարներ ենք ունեցել, ժողովրդական զանգվածներին ինչպե՞ս բարձրացրել են թշնամական հեղեղի դեմ...

Կապիտան Շնեուրը զարմացած էր իր հրամանատարի վերաբերմունքից։

— Ինչպե՞ս է, պարոն հրամանատար,— հարցրեց նա։— Լա՞վ է, ժամանակին տեղ են հասցրել, թե չէ, կարող էին սպասել՝ պատերազմից հետո...

— Լավ ձեռագիր է,— վեր կացավ Փիրումյանը։— Էլի Մար-

տիրոսների տոհմի ներկայացուցի՞չն է գրի առել։ Կցե՛ք շտաբի թղթերին։ Ապագայում ասելու են՝ ի՞նչ լավ ձեռագիր են ունեցել մեր նախնիները, ափսոս՝ անորակ թղթի վրա են գրել։

* *
*

Ռազմաճակատի հրամանատարը համարյա ամբողջ գիշերն անցկացրեց ոտքի վրա։

Երեկոյան հավաքվել էին թուրքիկ խորհրդակցության։ Ճշտեց, առանձնացրեց ու ընդգծեց յուրաքանչյուր հրամանատարի պարտականությունը, լսեց դիտողություններն ու առաջարկությունները և, առանց որևէ մանրամաս թաքցնելու, ասաց, որ այդ բոլորն սկսվելու են վաղը, մայիսի 26-ին, Վարդանանց սրբազան պատերազմի օրը։

Գարեգին Հովսեփյանն էլ ներկա էր խորհրդակցությանը։ «Վարդանանց պատերազմը» լսելուց մանր ականջները սրեց անհանգիստ նժույգի պես։ Դա չվրիպեց հրամանատարի աչքից։

— Այո՛, Վարդանանց ճակատամարտի օրը,— Դանիելբեկ Փիրումյանը նայեց սրբազանին, և նրանց հայացքները խոսեցին իրար հետ։— Պատահակա՞ն զուգադիպություն է դա, թե՞ նախախնամության կամքով ենք այդ նույն օրը նետվում ամենավճռական ճակատամարտի... Կարևոր չէ։ Կարևորն այն է, որ այս կռվում մեզ հետ կլինի Ավարայրի ոգ'ն, մեր ազգն ու ամեն ազգայինը փրկելու հաստատակամությունը։ Ինձ մնում է ամենայն հաջողություն մաղթել բոլորիդ և ասել բարի գիշեր։ Մինչև առավոտ։ Զգաստ ու պատրաստ եղեք...

— Իսկ ժա՞մը, պարոն հրամանատար,— տեղից վեր կենալիս հարցրեց գնդապետ Շահնազարյանը, որի համար, այդ ժամից բացի, ամեն ինչ պարզ էր ու հասկանալի։

— Ժամի մասին լրացուցիչ կարգադրություն կլինի,— պատասխանեց Փիրումյանը և նայեց շտաբի պետին։— Պարոն կապիտանի ջանքերով հուսալի կապ է ստեղծված յուրաքանչյուրիդ հետ։ Մնացած բոլոր հարցերը՝ այդ կապի միջոցով։

Բաժանվելիս նա մտերմորեն թևի տակ առավ Գարեգին սրբազանին և ականջին հարցրեց.

— Գուցե Ղևոնդ երեցը կցանկանա՞ առավոտյան բարեմաղթանքի խոսք ասել զորքին։

— Դա իմ հոգու պարտքն է, սիրելիս,— անմիջապես պատասխանեց սրբազանը՝ շոյված զորավարի վերաբերմունքից և Ղևոնդ երեցի անունից։— Սիրով կխոսեմ։ Բայց զորքին ինչպե՞ս մի տեղ կհավաքես։

— Դրա կարիքը չկա։ Դու շտաբում կխոսես, և ռադիոն ձայնդ կսփռի ամբողջ ճակատով մեկ։

— Այդ օրվան է՞լ հասանք, որ պատարագիչը չպիտի տեսնի իր հոտի երեսը։ Լույսը դեռ չբացված՝ ես այստեղ կլինեմ։

Զորապետը հանձնարարեց քնել-հանգստանալ, որ առավոտը դիմավորեն թարմ ուղեղով ու կայտառ մարմնով։ Հանձնարարեց, իսկ ինքը ո՞չ քուն ուներ, ո՞չ հանգիստ։ Ո՞վ է ասել, թե օձի կծածին էլ քուն կգա։ Քունն ամեն մի շունչ-կենդանու համար է, բայց ո՞չ այն զորավարի, որ սպասում է վճռական ճակատամարտին։ Վճռական ի՞նչ համար, իր ազգի ու նրա հայրենիքի համար։ Գուցե կային մարդիկ, որոնք հավատում էին, թե Սարդարապատում տանուլ տալով՝ հայ ժողովուրդը դեռևս հնարավորություն կունենա ուշքի գալու, ոտքի կանգնելու և քայլելու այն ճանապարհով, որ աստված է վերապահել նրա համար։ Գուցե կային մարդիկ, որոնք մտածում էին, թե այս վերջին պատերազմի դաշտում թուրքի առաջ կոնակ դարձնելով՝ հայը հնարավորություն կունենա դիվանագիտական կամ ուրիշ որևէ սեղանի շուրջը նստել և նույն թուրքից ստանալ ապրելու, գոյություն պահպանելու գոնե փոքրիկ մի հողակտոր։ Նա թուրքին լավ էր ճանաչում, որպեսզի իրեն չսփոփեր նման խաբկանքով։ Նա իր ազգի վիճակը լավ գիտեր, որպեսզի ուղեղը չցներ առատ հեռանկարի մշուշով...

Եվ հիմա, շտաբի շուրջը պտտելով, ինքն իր հետ նորից ու երերորդ անգամ քննում էր ճակատամարտի հնարավոր ծավալումները։

Իրիկնադեմին վերջապես ռադիոկապով խոսեց գնդապետ Կարո Ղասաբբաշյանը։ Արդեն ճանապարհին էր, Արագածի լանջին։ Ասաց՝ մի քանի օր առաջ Երզնկայի ու Մակվի ցաք ու ցրիվ գումարտակներից կազմել է կարգին մի զորաջոկատ, շուրջ յոթ հարյուր սվին, և ահա թնդանոթներն էլ առած շարժվում է դեպի թուրքերի թիկունքը։

— Ինչպես կարգադրել եք, պարոն զորավար,— զնգաց ախալցխացի գնդապետի երիտասարդ ձայնը։— Կարծում եմ՝ կեսօրվա դեմ կսկսենք գործը։ Անմիջապես էլ կհաղորդենք ռադիոյով։ Իսկ թե որ ռադիոն խափանված լինի, կհաղորդեն թնդանոթներով։

— Զգույշ եղեք, ձեր վիճակում ամենից առաջ զգուշությո՛ւն...

— Միքայելը կողքիս է, պարոն զորավար։ Միասին ենք...

— Երկու երիտասարդ ու տաքգլուխ միասին եք...

— Դրանից միայն թշնամու գլուխը պիտի ցավի։

— Զգո՛ւյշ եղեք, զգույշ, լսո՛ւմ եք։

Վատ էր լսվում. բոլոր բառերի հետ՝ կտկտոցներ, ոնց որ բարակ թիթեղի վրա բանջարբսուկ տեղար։ Եվ հանկարծ Ղասաբբաշյանի ձայնը պարզվեց.

— Պարոն զորավար, չէի՞ք ցանկանա խոսել Միքայելի հետ, կողքիս է, ինքն ուզում է...

Հետո ձայնը կորավ, և նույնիսկ կապիտան Շնեուրը չկարողացավ կապը վերականգնել։

Ուրեմն՝ վաղը, կեսօրվա դեմ։ Իսկ եթե ռադիոկապն այդպես խափանված էլ մնա։ Չէ, մի բան կանեն։ Հետո էլ թնդանոթները կան, նրանց որոտը կհաղորդի։ Թուրքե՛րն իրենք կհաղորդեն՝ գլուխները կորցնելով։ Եվ պատկերացնում էր, թե նրանք ինչպես պիտի խուճապի մատնվեն՝ թիկունքից բոլոր հրազենների ահարկու համազարկ առնելով։ Միայն թե չնախատեսված բան չպատահի։ Աստված մի՛ արասցե...

...Գիշերվանից բավական անց էր, սակայն քունը չէր տանում։ Ժամանակը կարծես կանգ էր առել, և յուրաքանչյուր վայրկյանը տառապանք էր իր համար։ Վեր կացավ, հրամանատարական վրանի ետև կրակ վառեց, ջուր տաքացրեց և լողացավ (Կրակի համար շոփ էր հավաքում, որ համհարզը մոտ վազեց. «Ի՞նչ է պատահել, պարոն հրամանատար. օգնելու բա՞ն կա»։ Նա սիրալիր շոյեց երիտասարդի ուսը, լուսնի լույսով հայրաբար տնտղեց երեսի երկար սպին, գլխով նշան արեց, որ գնա։ Համհարզը հեռացավ՝ հավատարիմ շան պես ուսի վրայից ետ-ետ նայելով)։ Լողանալիս մտածում էր, որ առավոտյան ամենավճռական մարտն է սկսվելու, և եթե որևէ շար պատահմունք լինի, ինքն իր վերջին ճանապարհը կգնա լողացած, այս աշխարհի կեղտերից մաքրված։ Մտածեց ու մտքում էլ ծիծաղեց

այդ հիմարության վրա. «Ազգի բախտն է որոշվելու, իսկ դու միտքդ ինչո՞վ ես զբաղեցրել...»։

«Այս աշխարհի կեղտերից մաքրված» պառկեց վրանի կողքի ընդարձակ խոտերի մեջ, հայացքը հառեց երկնքին։ Համատարած կապտասև անհուններից աստղերն առկայծում-պլպլում էին որպես գիշերը գործող անթիվ-անհամար հրակնատներ։ Երկնի անհունը, աստղերի այդ առկայծումները, ծղրիդների միալար երգը, որ լսելի էր անգամ զանգերի անլռելի ղողանջների մեջ, մի հաճելի թմրություն բերին նրա հոգնած մարմնին։ Նայեց գրպանի ժամացույցին, մեկն անց էր մի քանի րոպե։ Ննջեց, երազ տեսավ, տեսածից արթնացավ և նորից ժամացույցին նայեց, ապշեց. մի քանի րոպե էր անցել միայն, այդ մի քանի րոպեում ինչպե՞ս հասցրեց այդքան բան տեսնել։ Իբր, գյուղում էին, պապենական շենքի գլխատանը։ Հավաքվել էին համագյուղացիները, հարևան գյուղերի ազգականներն ու ծանոթները։ Հարսանիք էր, որի գլուխ նստած Աբիսողոմ ապերը կենաց-խոսք էր ասում և ստեպ-ստեպ աչքերից իջնող արտասուքն էր սրբում։ Տխուր-տրտում էին հարսանքավորները։ Հարսանքատան գլուխ, Աբիսողոմ ապոր կաղքին փեսա Հովսեփն էր նստած թուրք հարսնացուի կողքին։ Ա՜, նոր է հասկանում, որ պատճառն այս թուրք հարսնացուն է։ Նախ շատ է զարմանում, որ հարսանիք է, և ինքը նոր է իմանում այդ մասին։ Ապա մոտենում, տխուր ու դալկադեմ փեսային մի կողմ է քաշում. «Ա՛յ տղաս, բա սա էլ անելո՞ւ բան է, որ դու ես արել»։ Թե. «Հայրիկ, ուշքս կորցրել էի, գլխիս կապեցին...»։

Ի՞նչ կարող է նշանակել. հարսանի՞ք, թուրք... հարսնացո՞ւ և... «ուշքս կորցրել էի, գլխիս կապեցին»։

Տանն «էֆիմերտե» ունի, ոչ մի անգամ ուշադրություն չի դարձրել որ իմանա՝ երազներից ո՞րն ի՞նչ է նշանակում, որովհետև չի հավատում սուտ-փուտ բաներին։ Բայց հիմա, այս վայրկենական նինջի միջոցին, վճռական ճակատամարտից առաջ... Մի տխուր, անմխիթար վիշտ պարուրեց նրան։ Մի՞թե Հովսեփի գլխին աղետ պիտի գա, իր որդու և մատաղ զինվորի գլխին, որը դեռ մի կարգին զինվոր չի դարձել։

Ժամապահներն անհանգստանում էին զորավարի անքուն ու անդադար ներկայությունից։ Չէին համարձակվում խոսք ասել,

բան հարցնել, չնայած կարգադրված էր ստուգել յուրաքանչյուր հանդիպողի։

Մտամփոփ ու անհսկելի քայլերը նրան տարան դեպի Մահապարտների գնդի խրամատները։ Զարմացավ. մի՞թե այսքան քայլել է և ո՞ւր է գնում, չէ՞ որ ինքն է կարգադրել, որպեսզի քնեն-հանգիստ առնեն...

Քողարկված հրանոթների մոտ հանդիպեց գնդի հրամանատարին։

— Պո՛ղ, քունդ չի՞ տանում,— ուսը գրկելով՝ եղբայրորեն հարցրեց։

— Որ ասեմ՝ տանում է, կհավատա՞ս,— դառը ժպտաց Պողոսբեկը։— Բայց լավ կանեիր՝ ինքդ գոնե աչքիդ որդը կոտրեիր։ Վաղը բեռդ ծանր է լինելու։

Նրանք անխոս քայլեցին խրամատների կողքով։

Լիալուսինը բավականին բարձրացել էր Արարատի կողմերում, և ցերեկվա պես լուսավորված էր դաշտի անսահմանությունը։ Արաքսի եղեգնուտներից գիշերահավերն էին կանչում, խրամատների վրա կախված էր ծղիրդների անվերջանալի երգը, որ կտրտվում էր զանգերի զողանջներով։

Լուսնի լույսի տակ երևում էին զինվորները, որոնք քնել էին՝ որտեղ պատահել էր՝ խրամատների իրենց պատրհաններում, դուրսը, բացօթյա, և այստեղ մեկի ոտքը մյուսի համար բարձ էր, մի ուրիշը քնել էր ծնկները գրկած։ Երրորդը մեջքով հենվել էր հողապատնեշին, գլուխը ծռել կրծքի վրա և փուքս էր փչում։

Զորավարի սրտում քաղցր հուշեր արթնացրեց նրանց գեղջկական, աշխատավորական ու առողջ քունը։ Նա հիշեց իր մանկության ամառները, մտքի առաջ եկան գյուղի տոթ երեկոները, երբ իրենք՝ անհանգիստ երեխաներ, լուսնյակի լույսով այգիները գողության էին գնում, իսկ այգետերերը ցերեկվա խոնջենքից հետո խոմփոցով քնած էին լինում իրենց գոմերի կտուրներին կամ հենց այգիների մուտքերի մոտ։

— Երանի՜ սրանց,— կարծես զորապետի միտքը կռահելով՝ ցածրաձայն խոսեց Պողոսբեկը.— հանգիստ քնել են և երևի անուշ-անուշ երազներ են տեսնում։

— Երբ խիղճը հանգիստ է, կարող է հա՛մ քնել, հա՛մ էլ անուշ երազ տեսնել...

Պողոսբեկը մտածեց, որ հորեղբորորդուն հանգիստ չի տա-

լիս իր վրա վերցրած ահռելի պարտականությունը։ Փորձեց սփոփիչ խոսք ասել.

— Դու քո խղճի առաջ միշտ էլ պարզերես ես եղել, Դանիել։ Ինչի՞ց ես դժգոհ։

— Որդի պես ուղեղս կրծում է այն հարցը, թե ամեն ի՞նչ ենք արել, որ վաղվա մեր գործն աջողվի։ Չէ՞ որ դրանից է կախված բոլորը՝ այդ անուշ-անուշ երազներ տեսնող զինվորների կյանքից մինչև մեր թիկունքում կուչ եկած մի բուռ Հայաստանի ճակատագիրը։

— Դու այս ռազմաճակատի հրամանատարն ես...

— Ինքնակո՛չ, ինքնակա՛մ, ինքնավստա՛հ։

— Դա չի փոխում դրությունը,— այս անգամ մեծավարի խոսեց Պորոսբեկը։— Քո փոխարեն մի ուրի՛շը կարող էր լինել այդ ինքնակոչը։ Պե՞տք է լիներ։ Դրությո՛ւնն էր պահանջում։ Կարևորն այն է, որ դու և քեզ ենթակա մեծ ու փոքր հրամանատարները կատարել եք ձեր պարտքը...

— Արդեն կատարե՞լ ենք։

— Այո՛, արդեն կատարել եք, Դանիել։

— Իսկ ո՞րն է այդ պարտքը, որ կատարել ենք, երբ մեծ կռիվը դեռևս առջևում է։

— Ամեն զինվորի մեջ մի հերոս է քնած։ Հրամանատարի միակ ու սրբազան պարտքն է արթնացնել այդ հերոսին։

— Այդ մեկը լավ ասացիր, Պո՛ղ,— ուրախացավ Դանիելբեկը, կարծես սրտին ծանրացած քարը վայր գլորեցին։— Ամեն զինվորի մեջ մի հերոս է քնած... Հիմա ես էլ համոզված եմ, որ այսօր արթուն են նրանք և իրենց կատարելիք անօրինակ հերոսությանը պատրաստ։

— Ա՛յ, դա է ամենակարևորը։

Դանիելբեկը աջ ձեռքով գրկեց գնդապետի ուսը, սեղմվեց նրան.

— Դա՛, մեկ էլ այն, որ վաղը պիտի անենք։

* *
*

Ալեքսանդր Շնեուրը սկզբնապես կարծում էր՝ ինքը պիտի Գարեգին սրբազանին անակնկալի բերի ռադիոելությամբ։ Սակայն ռազմաճակատի հրամանատարը թռուցիկ խորհրդակցության ժա-

մանակ այդ անակնկալը հօդս էր ցնդեցրել իր հայտարարությամբ, և ինչ-որ չափով կապիտանի տրամադրությունն ընկավ։

Իսկ հիմա լույսը դեռ չբացված Գարեգին սրբազանը հայտնվեց շտաբում։ Անսովոր լուրջ էր ու մտամփոփ։ Զգարմացավ, որ Շնեուրն արդեն տեղում էր, կազմ ու պատրաստ։ Գերմաններեն ողջունեց, հարցրեց՝ կարևոր նորություն չկա՞, և տեղեկանալով, որ թուրքերն ստույգ պատրաստվում են հարձակման (գիշերը բռնած թուրք սպան էր հաղորդել, որ հարձակվելու են առավոտյան նամազից անմիջապես հետո), շտապեց խոսք ասել զորքին։

— Ո՞ւր է այդ սարքը, որով պիտի ճառախոսեմ։

Շնեուրն զգաստացավ.

— Այստե՛ղ է, սրբազան,— ասաց,— ինձ մոտ, ամեն ինչ այստե՛ղ է կատարվելու։

Գարեգին եպիսկոպոսն, անշուշտ, տեղյակ էր այդ ռադիո կոչված հրաշքին, լսել էր նրա մասին, կարդացել։ Սակայն առաջին անգամ պիտի առնչվեր և այն էլ այսպես անմիջական, մանավանդ այսքան ճակատագրական մի առիթով։

Կապիտանը սիրալիր բռնեց նրա թևը, տարավ նստեցրեց անկյունում տնկած սեղանի կողքին և, մեծաղահյուս, տանձանման մի բան դնելով առաջը, բացատրեց.

— Ա՛յ, այսպես նստած կխոսեք, և սա ձեր խոսքը կտանի, կսփռի զորամասերում։

— Աստված երկար կյանք շնորհի դրա ստեղծողին,— մրմնջաց սրբազանը և տեղը հարմարեցրեց, շտկեց իրեն, ինչպես ամենասրբազան պատարագից առաջ։

Ըստ երևույթին զորամասերն էլ էին զգուշացված. հրամանատարները գիտեին, որ սրբազանը ռադիոյով պիտի խոսի Վարդանանց ճակատամարտի մասին։ Հոգևորականները՝ եպիսկոպոսներ ու քահանաներ, տիրացուներ և հոգևոր ճեմարանի սաներ, գիտեին և զորաջոկատները նախապատրաստել էին։ Ամենուրեք սպասում էին հրաշքին։ Եվ երբ խրամատներում ու Սարդարապատյան դաշտի վրա, Արարատյան երկրի զանգերի զողանջների ուղեկցությամբ, տարածվեց Գարեգին սրբազանի երգեցիկ ձայնը՝ մի քիչ խոպոտած ռադիոալիքների խշրտոցով, բոլորը ծունկի իջան խոնարհ և երկյուղածությամբ հայացքները

դարձրին դեպի երկինք, կարծես այնտեղից էր, որ հորդում էր աստվածատաք ձայնը։

— ...Արդեն քանի՞ հարյուրամյակ հայ ժողովրդի ու նրա առաքելադիր եկեղեցու համար սրբազան է այս օրը՝ իրրև հայրենիքի, ազգի, մեր հավատի ու սուրբ մայրենիի համար ազգովին կռվելու և նահատակվելու օր։ Հայոց սպարապետ Վարդանն ու սրբազան ուխտին հավատարիմ նախարարները, հայոց հոգևորականներն ու ազատները, հայ ոստանիկն ու շինականը միակամ ու միահամուռ Ավարայրի դաշտ էին գնացել՝ իրենց հավատն ու ազգային ինքնությունը պաշտպանելու մազդեզանց մոխրամոլ բռնությունից։ Անհավասար էին ուժերը։ Պարսից անհամար զորքի և ռազմական փղերի դեմ՝ հայ փոքրաքանակ զորքը, նրա հետ էլ՝ գավազանազեն աշխարհազորը։ Սակայն հայությունը կռվեց մինչև վերջին շունչը, նահատակվեց Ավարայրի դաշտում, ապա ողջ մնացած փշրանքներով ամրացավ իր բերդերում ու անտառներում և ապրեց, դիմացավ... Թշնամին, որ պարսիկ ուժացնող կռապաշտն էր, տեսավ և համոզվեց, ապա ականջին օղ արեց, թե հայը կմեռնի-կնահատակվի, սակայն չի հրաժարվի իր հավատից ու ազգային ինքնությունից...

Եվ այսօր, Վարդանանց հերոսական պատերազմի ու սուրբ նահատակության օրը, երբ պիտի ոգեկոչենք մեր նախնյաց անթառամ հիշատակը, երբ պիտի մեր սրբարաններում խաղաղ ծխար նրանց փառքի համար վառված խունկը, մեր հայրենի եղերքը տնքում է նոր բռնակալի ոտքի տակ, մեր արևը մռայլվել է նրա բերած վառոդի ծխից, մեր գետերն ու աղբյուրները վարարել են նրա հեղած արյունից... Եթե պարսիկն Ավարայր էր հասել մեր հավատն ու ազգային ինքնությունը վերացնելու, այսօրվա թշնամին մեր ազգի կեսը կոտորել և մյուս կեսն է ուզում ոչնչացնել... Փոխվել են ժամանակները, փոխվել են ազգերն ու ցեղերը։ Ավարայրում մեր դեմ կանգնած էր թշնամին, որ միայն բռնակալ էր։ Ավարայրում մեր դեմ կանգնած բռնակալն ուզում էր ոչնչացնել մեր լեզուն ու հավատը։ Թուրքը մե՛զ է ոչնչացնում։ Ուրեմն, այստեղ նահատակությունն էլ չի կարող օգնել, որովհետև մեր նահատակությունից հետո ոչ մի հայ չի մնա, որպեսզի բարի հիշի սարդարապատյան նահատակությունը։ Պատմության դասերն այլևս անզոր են այսօրվա մեր ազգային աղետի առաջ։ Այսօր միայն հաղթանակն է, որ պիտի

հայությանը փրկի վերահաս կործանումից։ Ուրեմն, կռվենք ու՝ հաղթենք, հաղթենք ու ապրենք՝ ի հեճուկս դարավոր թշնամու...

Խրամատներում ծունկի իջած զինվորությունը համակ ուշադրություն էր, լարում և ոգեկոչում։ Օդը լիքն էր զանգերի զողանջներով ու սրբազանի խոսքերով, որոնք զինվորին էին հասնում ո՛չ միայն լսելիքով, ո՛չ միայն իբրև հնչյուններ, որոնք պետք է լսել, ընդունել կամ չընդունել։ Նրանք մարդկանց մարմիններն էին լցվում բոլոր զգայարաններով, դառնում էին հորդոր, սուրբ մղում, արյան եռը ու կրակ... Եվ հետո էլ զարմանալի էր, թե հարձակման հրամանն ինչո՞ւ է ուշանում...

— Կռվե՛նք ու հաղթե՛նք, հաղթենք ու ապրենք,— դարձյալ զնգաց սրբազանի ձայնը...

Գնդապետ Պողոսբեկ Փիրումյանը վախենում էր՝ լինեն անհամբերներ և, առանց սպասելու վերին հրամանի, կռվի նետվեն նախորդ օրվա պես։ Ուզում էր զգուշացնել... Եվ նրան կանխեց ինքը՝ սրբազանը, զինվորությանը կոչելով կարգապահության ու աշխատասիրության։ Սակայն վերջին խոսքը նույն հորդորն էր, որ սփռվեց, տարածվեց ճակատի վրա.

— Կռվենք ու հաղթենք, հաղթենք ու ապրենք։

Լույսը դժկամությամբ էր սփռվում Արարատյան դաշտի վրա։ Գեղարքունյաց լեռնապարի թիկունքից արեգակն արնոտ պռունկը հանեց, և Արարատի ձյունները ողողվեցին հուրհրատող շառագույնով։ Ռազմաճակատի ամբողջ գծի վրա, Արաքսի եղեգնուտներից մինչև Արագածի փեշերը, հայ զինվորությունը երդվում էր լուռ, հայացքն Արարատին, երդվում էր՝ կռվել և հաղթել, հաղթել և ապրել։ Երդվում էր ու հավատում... Այդ առավոտ առավել քան հավատավոր էր հայ մարդը։ Այդ առավոտ հայոց ճակատի վրա թափվում էր այն լույսը, որ ոչ թե արեգակից էր գալիս՝ այդ անխտրական, անտարբեր լուսատուից, այլ երկնքի անտես անհունություններից և լցվում էր հայ մարդու սիրտը, գիտակցությունը, դառնում հավատ ու հույս, ուժ ու վճռականություն։

— Առավո՞տ լուսո,— հայոց սուրբ լեռան ճաճանչները հայացքով գրկած՝ մրմնջում էին հոգևորականները, և նրանց հետ աղոթք էին կարդում հայ մարդիկ ռազմադաշտում ու թիկունքում, ամենուրեք, որ կային, ապրում էին և պիտի ապրեին... Առա-

Վո՜ւ լուսո և դո՜ւ, բացվող արդար օր, եղիր հայի՜ օր, հայի՜ օր։

— Հայի՜ օր, հայի՜ օր,— ասես մռնչում էին Արարատի խոր-բախոր անդունդները, որոնց արձագանքն էին զանգերի զողանջները, հավատավոր հայության հոգու խորքերից պոռթկացող ցասման վճիռը և հույսի ամենաճառագ լույսը։

* *
*

Թուրքական բանակի հարվածը նախագծված էր այնպես, որ հայ պաշտպանվողները չդիմանային առաջին իսկ ճնշմանը և, դիրքերից նահանջելով գերակշիռ հակառակորդի առաջ, չարդվեին բաց դաշտում։ Նրանց հետախուզությունը պարզել էր, որ հայկական ճակատի կենտրոնում կանգնած է հարվածող Հինգերորդ գունդը, միայն մի գունդ՝ համալրված աշխարհազորային ջոկատներով։ Եվ այդ գնդի դեմ նրանք կանգնեցրին իրենց լավագույն դիվիզիան, կոչված Գելիբոլու կամ Դարդանելյան։ Այն համալրվել, ամրապնդվել էր Թուրքաց Կովկասյան ճակատի մյուս դիվիզիաների գնդերից ու գումարտակներից քաղված թարմ ուժերով և բռնել էր Թուլքի թափա (Աղվեսի բլուր) ու Ջիմնի դրա (ռազմական քարտեզներում՝ թիվ 440 կոչված) բլուրները։ Դիվիզիայի հրամանատար Ցաղուբ Շևքի փաշան իր դիվիզիայի 106, 107 և 108-րդ գնդերին էր կցել նաև հրետանային երկու դիվիզիոն, սակրավորների մեկ գումարտակ և գնդացրային մեծ ուժեր, որոնց ուղեկցում էին կորպուսային մեկ հեծյալ գունդ և քրդական հեծելազորի մեկ ջոկատ, որն ուներ 1500 մարտիկ։

Թուրքերի աջ թևում, երկաթգծից հարավ արդեն տեղավորված էին 5-րդ և 12-րդ դիվիզիաների ուժերը՝ տեղաբնակ մահմեդական հրոսակներից կազմված խառնամբոխով, իսկ ձախ թևում առաջ էր շարժվում 9-րդ դիվիզիան, որի առանձին ղորաջոկատները, Բաշ-Ապարանում նախորդ օրերին ստացած լուրջ հակահարվածներից հետո, ելք էին որոնում՝ Աշտարակի ուղղությամբ շարժվելով Երևան հասնելու համար։

Հայոց ճակատի ձախ թևում, երկաթգծի մոտ կանգնած էին գնդապետներ Պերեկրյոստովի ու Սիլինի պարտիզանական ջոկատները՝ համալրված աշխարհազորայիններով, ընդամենը

2000 սվին, և ճակատի գծի ծայրին, Գեչիրլու, Ղուրդուղովի գյուղերից արևմուտք, իբրև պահեստային ուժեր, պահվում էին խմբապետ Մակեդոնի ու Թռուցիկ Հովսեփի հեծյալ ջոկատները։

Առավոտյան, լույսը բացվելուն պես, Թուրքական ճակատի կենտրոնը պատռվեց և Թուլքի թափայից ու Ջիմնի ղբռից սև հեղեղի պես վար հոսեցին հարվածող գնդերը, որոնք նախապես պաշտպանված էին բոլոր կողմերից տեղացող հրետանային կրակով։ Բլուրները հայկական դիրքերից հեռու էին 6—7 կիլոմետր, և այդ ամբողջ տարածությունը բաց էր, տեսանելի, ինչպես ափի վրա։

Դանիելբեկ Փիրումյանը Սարդարապատ կայարանի ջրհան աշտարակի բարձր դիտակետն էր փոխադրել ռադիոհանգույցը և կապիտան Շենեուրի ու ռադիոկապի պետի հետ այդ բարձրությունից պիտի դիկավարեր ճակատամարտը։ Հեռադիտակով պարզ երևում էր ճակատի գիծն իր բոլոր հատվածներով։ Եվ, չնայած հրամանատարն արդեն տեսել էր հակառակորդի առաջխաղացումը բլուրների ուղղությամբ, նրա հեռադիտակը դեռևս հանգիստ ուղղված էր Թուրքերի թիկունքին, Արագածի հարավարևելյան փեշերին։ «Երանի՜ թե ամեն ինչ լինի նախատեսվածի պես»,— մտքում փափագում էր Ջոկատի հրամանատարը՝ մերթ ընդ մերթ հայացքի տակ առնելով նաև առաջ շարժվող պղտոր հոսանքը։ Թուրքերը դեռ ճանապարհ ունեին մինչև այն գիծը, որից այս կողմ պիտի լիներ մեկ արկընկեց տարածություն, և այն ժամանակ պիտի սկսեին խոսել հայոց հրանոթները։ Քիչ էին նրանք, ընդամենը երկու մարտկոց, սակայն այնպես ճիշտ ու հարմար էին դասավորված, որ միանգամից կարող էին իրենց կրակի տակ առնել Թուրքական ամբողջ առաջխաղացումը հարավից հյուսիս։

Երևի թե երկու կիլոմետր տարածություն էր մնացել առաջ շարժվող Թուրքերի և հարվածելու պատրաստ հայ ուժերի միջև։ Թուրքերի թիկունքից հրանոթներն այլևս չէին կրակում. հիմա նրանք միայն յուրայիններին կարող էին կոտորել։ Կրակում էին իրենք՝ առաջ շարժվողները, որոնց թեթև ու ծանր գնդացիրները կարկտահարում էին աջ ու ձախ, առանց ուղիղ նշանառության։ Հրացաններն էլ էին խոսում։ Մեկ-մեկ ատրճանակները դեպի երկինք էին պարպում թխամոր պես զորախմբերն

իրենց ետևից տանող սպաները։ Եվ մեկ էլ դաշտի վրա փռվում էր ծկլթան քայլերգը.

Մենք գնում ենք դեպի Թուրան,
Ճամփա տվեք, սար ու ձորեր...

Երգի ծկլթոցը հանկարծ կտրվեց, որովհետև հայոց դիրքերից մեկեն խոսեցին դիպուկահարները։ Թնդանոթները որոտացին շուրջանակի, և թուրքաց շարքերը քամու բերանն ընկած լաթերի պես պատառոտվեցին։

«Սրանք որքա՜ն ինքնավստահ են շարժվում,— «Կրա՜կ» հրամանը տալուց հետո մտածում էր Դանիելբեկ Փիրումյանը։— Թե՞ կարծում են Հայաստանը ոտքի տակ տալու մի եղանակ կա միայն՝ շքերթային քա՜յլքը»։

Ողջ մնացած ասկյարները թափվել էին գետնին, անկանոն գնդակոծում էին հայոց կրակակետերը։ Սակայն նրանց վրա թափվող զանգվածային կրակը ողջ մնացածներին ստիպեց թողնել բաց դաշտը և ետ փախչել։ Շուտով դաշտում մնացին միայն սպանվածներն ու ծանր վիրավորները, որոնց օգնության աղաղակները հասնում էին հայոց դիրքերին։

Մի ժամ անց Ջիմնի ղրոից ու Թուլքի թափայից վերստին վար իջան թուրքերը։ Այս անգամ նրանք շարժվում էին աջ ու ձախ թևերի վրա՝ երևի մտածելով, որ այդ ուղղություններում հայերը պաշտպանություն չունեն։ Չէ՞ որ առաջին հարձակման ժամանակ իրենց վրա կրակ են տեղացել միայն կենտրոնում՝ աղեղնաձև դասավորված Մահապարտների դիրքերից։ Հայոց ճակատի ձախ թևում հարձակումն իր վրա վերցրեց գնդապետ Պերեկրյոստովի պարտիզանական զորախմբի ութերորդ վաշտը, որը խուռներամ առաջ հոսող թշնամու դեմ հանկարծ ելավ ոնց որ գետնի տակից և նրա վրա ուղղեց գնդացրային հնձող կրակը։

— Տեղից չշարժվե՞լ,— ռադիոկապով Պերեկրյոստովին կարգադրեց ճակատի հրամանատարը։— Ո՛չ մի քայլ առաջ։ Հարվածել դիրքերից և սպասել նոր կարգադրության։

Թուրքերը ձախ թևում ետ շպրտվեցին՝ տալով մի քանի տասնյակ զոհեր։ Բայց նրանք այդպես էլ չիմացան, թե իրենց դեմ ի՞նչ տեսակ զորություն է կանգնած։

Աջ թևում թուրքական զորքը բավական առաջացել էր։ Դա

Գելիբոլլու դիվիզիայի ամենամարտունակ գունդն էր՝ հոչակավոր 108-րդը։ Հայ աշխարհազորայինները, որ այս թևի հիմնական ուժն էին կազմում, մի պահ ընկրկեցին համառորեն առաջացող հակառակորդի դեմ։ Եվ, չնայելով ետ կամ առաջ ոչ մի քայլ չշարժվելու հրամանին, նրանք պիտի նահանջեին... եթե ժամանակին վրա չհասներ հրետանային կրակը։ Ահեղ ոռնոցով թուրքերի վրա էին թափվում հայոց դիրքերի թիկունքից արձակված արկերը։ Քաջահմուտ հրետանավորներն այնքան էին սպասել, մինչև որ հակառակորդը մտել էր իրենց նշանառության տակ... Եվ հիմա թուրքերը խուճապահար փախչում էին՝ դաշտում թողած սպանվածներին, վիրավորներին, նույնիսկ իրենց զենքն ու պարենամթերքը։

Մահապարտների գնդի հրամանատարը դիտակետից նայում էր ճակատի անցուդարձին՝ հաճախակի դիմելով հեռադիտակի օգնությանը։ Մի անգամ էլ նա հեռադիտակը մեկնեց կողքին կանգնած Գարեգին սրբազանին, որն անհամբեր դիտում էր շուրջը։

— Նայե՛ք, սրբազան, եթե ուզում եք տեսնել, թե ո՛նց է գետին տապալվում արնածարավ ասկյարը։

— Ես հեռատես եմ, քե մատաղ,— ձեռքով հեռադիտակը ետ մղեց սրբազանը։— Դրա կարիքը չունեմ։— Եվ աչքերը կկոցած նայելով դեպի Արագածի հարավային փեշերը՝ ոգևորված խոսեց.— Տեսնո՞ւմ ես, է՞, թուրքաց թիկունքում ոնց որ փոշի է երևում։

— Ի՞նչ փոշի, սրբազան,— բացականչեց Պողոսբեկ Փիրումյանը և հեռադիտակը սեղմեց աչքերին։

— Տեսա՞ր։

— Փոշու նման մի բան երևում է... Բայց գուցե ամպի քուլա՞ է։

— Մի քիչ էլ համբերենք, կպարզվի,— ասա սրբազանը հետաքրքրվեց.— Լա՛վ, այս թուրքերն ինչո՞ւ են իրենց մահու տալիս. առաջ են գալիս՝ կոտորվում, առաջ են գալիս՝ կոտորվում։

— Վա՞տ է, որ կոտորվում են,— ժպտաց գնդապետը։

— Վատ չէ, բայց անհասկանալի է. մի՞թե պիտի չեն ընկնում, որ այս բաց դաշտում տեղից շարժվողը պիտի կոտորվի։

— Է, սիրելի սրբազան, դուք աղնիվ մարդ եք, այս գողի խա-

դը չեք հասկանա. շանը գրգռում են, որ թաքստոցից դուրս գա, նույնիսկ համեղ պատառ են գցում... Իսկ մեր Դանիելբեկը, արևը կծե՞մ, գիտի, որ համբերությունը կյանք է։ Ա՛յ, ձեր նկատած փոշու քուլան մի քիչ մեծանա՞... Բայց ոնց որ մեծանում է, սրբազան,— հեռադիտակն աչքերից հեռացնելով, ժպտուրախ ասաց գնդապետը։ Ապա գրպանից հանեց ոսկեշղթա ժամացույցը.— Ժամը քանի՞սն է... Ահա՛, շուտով կլինի ժամը 12-ը։ Կարո Ղասաբբաշյանը ժամանակին կատարում է առաջադրանքը։

Իսկ ջրհան կայանի աշտարակի դիտակետում ռազմաճակատի հրամանատարն ու շտաբի պետը ռազմական քարտեզի վրա ո՞րերորդ անգամ ճշգրտում էին զորամասի ու նրա առանձին ջոկատների անելիքը։ Դանիելբեկ Փիրումյանն աշտարակի կողին խփած մեխից կախել էր ամառային կարմրաստառ վերարկուն ու արծաթապատյան թուրը, մատիտով նշումներ էր կատարում քարտեզին և յուրաքանչյուր նշումը հանգամանորեն բացատրում էր կապիտան Շնեուրին։ Աշտարակի շուրջը թանձր օրորվում էր սարդարապատյան քար ու ավազից բարձրացող շոգը։ Քրտնած ճակատն ու ճաղատը սրբելով՝ հրամանատարը բացատրում էր ամեն մի մանրամաս, կարծես ի՛նքը չէր վարելու պատերազմը։ Եվ դա անհանգստացնում էր նրբանկատ կապիտանին։

— Բայց ինչո՞ւ այդպես մանրամասնորեն, պարոն զորավար։ Չէ՞ որ դուք այստեղ եք, և ձեր ղեկավարությամբ էլ զորքը պիտի գրոհի գնա։

Մտահոգ շտկվեց Փիրումյանը, ձեռքերն աջ ու ձախ տարածելով «ջարդեց» մկանները։

— Մեզնից յուրաքանչյուրը պետք է պատրաստ լինի ամեն մի անակնկալի։ Պատերազմում ինչե՞ր չեն պատահում,— ասաց զորավարը, և կապիտանը հասկացավ նրան ու տխրեց. ուրեմն, մտածում է, որ իրեն մի չար բան կպատահի, և պատերազմը վարելու իր պլանը կմնա անկատար։

Շնեուրը սիրահարվածի նման՝ հայացքով չափեց հաղթահասակ զորավարին. շա՞տ էր հոգնած, թե՞ հոգսն էր շատացրել կնճիռները։ Ավելացել էր բեղերի ու քունքերի ճերմակը։ Խոշոր, խոհուն աչքերը կարմրած էին։ Կապիտանը շրջվեց ու աչքերը վեր, դեպի այրող արևը՝ մրմնջաց. «Աստվա՞ծ ամենակարող,

դո՛ւ պահիր, պաշտպանիր նրա կյանքը, դու գիտես, թե որքան պետք է անհավատների դեմ խեղճացած իր ազգին... Աստվա՜ծ ամենափրկիչ»։

— Այդ ի՞նչ է, աղո՞թք եք անում,— զարմացավ զորավարը։— Դրա համար ռազմաճակատում այնքա՜ն հոգևորականներ կան։

— Երանի՜, թե աստված նրանց բոլոր պաղատանքները լսի ու կատարի։

— Դրանք այնքան էլ շատ չեն, կապիտան. միայն մի հաղթանակ, որ չի կարող ձեռք չբերվել։

— Բայց ի՞նչ գնով։

— Է՛հ, մի՞թե հիմա էլ պիտի սակարկենք, սիրելիս։ Մեր ժողովուրդը պետք է հաղթի՝ ինչ գնով էլ լինի...

— Աստված բարին կատարի,— շշնջաց կապիտան Շնեուրը, մտածելով, որ իր զորավարն այսօր ուրիշ տեսակ է խոսում։ Առավոտյան հիշում էին հին ու անհուսալի պատերազմները, և, երբ խոսք եղավ Ավարայրի ճակատամարտի մասին, ասաց. «Ամեն ինչ լավ է, բացի այդ համընդհանուր նահատակությունից... Երբ մարդիկ պատերազմի դաշտ են գնում նահատակվելու համար»։ Եվ հիշեց պատմիչներին, որոնք վկայում են թե կռվի թեժ պահին ընկերն ընկերոջ երեսին նահատակի պսակն է տեսել... Գուցե հիմա իրե՞ն էլ այսպիսի տեսիլք է հայտնվել։

Կապիտանն սթափվեց իր անուրախ մտորումներից, իսկ զորավարը հեռադիտակով նայում էր դեպի արևմուտք, ուր անգեն աչքի համար անգամ պարզ ի պարզո երևում էր Կարո Ղասաբաշյանի գումարտակի երթը։ Այնտեղ, բլուրների ետևում փոշու ամպ էր բարձրացել և սահում էր դեպի հարավ-արևմուտք։ Մերթ-ընդմերթ ծխի քուլաներ էին պոռթկում, որ չէր կարող ուրիշ բան լինել, քան այդ գումարտակի թնդանոթաձգությունը։

Շնեուրը վրա վազեց և սկսեց ռադիոսարքը շարշրկել։ Նա անասելի հուզված էր և պայմանականշերով փորձում էր կապվել գումարտակի հետ։ Իսկ զորավարը հեռադիտակի մեջ տեսնում էր նաև թուրքաց թիկունքում ահագնացող խուճապը։ Նրա սիրտը ճխում էր մեծ երջանկությունից։ Առանց ետ շրջվելու գոչեց.

— Կապիտա՜ն, հրաման տվեք անցնել գրոհի։ Կապիտա՜ն, այլևս ոչ մի հապաղում։

Ալեքսանդր Շնեուրը, ոչ առանց ափսոսանքի, ընդհատեց իր

փնտրտուքը և, զորաջոկատների հետ միանալով, զգուշացրեց, որ ռադիոյի մոտ է զորավար Դանիելբեկ Աբիսողոմի Փիրումյանը։

Զորավարը հուզմունքից թեթևակի դողալով մոտեցավ ապարատին և զգաստ, ինչպես շարակարգված զորքի առաջ, խոսեց.

— Զո՜րք հայոց, հայրենիքի պաշտպաններ, երազած գրոհի ժամն է հասել։ Մեր դեմ կանգնած է բռնակալ թուրքը։ Թիկունքից նրան հարվահում է Մակուի ու Երզնկայի գնդերից կազմված զորաջոկատը, իսկ ճակատից մե՛նք պիտի հասցնենք մահացու հարվածը։ Ուրեմն, սրընթաց գրոհով հարձակվե՛լ թշնամու դիրքերի վրա՝ բոլո՛ր կողմերից։ Դե՛, հառա՛ջ, քաջե՛ր, դեպի հաղթանակ և փրկություն ազգի։

Ասես մեկեն պատռվեց գարնանային հեղեղի ընթացքի դեմ կանգնած պատնեշը, հայոց զորքն այդ հեղեղի պես խելահեղ դուրս հորդեց բոլոր դիրքերից ու գրոհեց թշնամու վրա։ Զախ թևում երկաթգիծն անցան ու սրընթաց առաջ շարժվեցին գնդապետներ Պերեկրյոստովի ու Սիլինի ջոկատները, որոնց միացել էին Մակեդոնի ու Թուրցիկ Հովսեփի հեծյալները։ Այս թևի հետ էր նաև սարդարապատցի սպա Եգոր Տեր-Մինասյանի հարյուրյակը, որ երիտասարդ հայրենասերը վերջին օրերին էր կազմել Սարդարապատի ու հարևան գյուղերի կամավորներից։ Թուրցիկ Հովսեփի փորձված պարտիզանների հետ միասին Տեր-Մինասյանի նորաթուխ զինվորները հմտորեն ապահովել էին ճակատի ձախ թևի հետախուզությունը և հիմա միայն իրենց հայտնի անցուղիներով գրոհի էին տանում ամբողջ թևը։

Ճակատի կենտրոնում Հինգերորդ գունդը համալրվել էր աշխարհազորայիններից ընտրված ջոկերով, որոնք առաջ էին գնում փորձված զինվորների ուղեկցությամբ, նրանց հսկողության տակ, ամեն ինչում նրանց ընդօրինակելով։ Շատ էին երիտասարդները ու պատանիները, որոնք եկել էին Էջմիածնի ճեմարանից։ Երևանի դպրոցներից, Արարատյան երկրի գյուղերից։ Գնդապետը խիստ պատվիրել էր ամենուրեք հետևել ջահելներին։ «Մի գլուխ իրենց կրակի մեջ են նետում,— ասել էր։— Հետևեցեք՝ զուր տեղը նահատակություն չլինի»։

Այս թևում էր գործում նաև երիտասարդ հրետանավոր կապիտան Կլիչը, որի հրամանատարության ներքո գործող չորս թնդանոթներն էլ կազմում էին հայոց զորքի առաջին մարտ-

կոցը։ Իլյիչի կողքին, նրա հրամանատարության տակ առաջ էին շարժվում երիտասարդ հրետանավորներ Իգիթխանյանը, Աթանեսյանը, Կարաքեշիշյանը։ Կլիչը նրանց իր հետ էր վերցրել Արևմտյան Հայաստանի կռիվներում։ Կարճ ժամանակում ինքն ու հույն Սակելյարին այդ հայ երիտասարդներին դարձրել էին իրենց գործի հմուտ վարպետները, վստահում էին ամեն ինչում և ամեն տեղ։ Սակայն ահա Սարդարապատի ամենավճռական պահին գեներալ Սիլիկյանը վերցրեց ու Սակելյարիին ուղարկեց Ապարանի ճակատը։ Ուղարկեց չորս թնդանոթով, որոնք այնպե՞ս անհրաժեշտ էին այս օրհասական կռվում։ Կլիչը հայերեն, Երևանի շուկայի բառապաշարով ու առանձնահատուկ հյուսվածքով մի քանի հիշոց ուղարկեց թուրքերի հասցեին։ Նրա հայ տղերանց ականջները խուտուտ եկան այդ հիշոցներից։ Երևանի փեսա Կլիչը, ենթակա երիտասարդներից ներողություն խնդրելով՝ ասաց. «Տղերք, սիրտս պատռվում էր, էսքանը չասեի, պիտի լեզուս փթեր։ Դե՛, հիմի դնանք, հանգիստ անենք մեր կռիվը։ Թուրքը կարոտով սպասում է մեր արկերին»։

Եվ, այսպես, հայոց ճակատի ձախ թևն առաջ էր շարժվում երկաթգծի ուղղությամբ՝ խնդիր ունենալով հարձակում գործելու թուրքաց աջ թևի վրա, ուր նրանց Դարդանելյան դիվիզիային օգնության եկած զորքերն էին, սրանց գործակցող տեղական մահմեդական անկանոն զորամիավորումները։ Սակայն Պերեկրյոստովին և խմբապետներ Մակեդոնին ու Թուցիկ Հովսեփին կարգադրված էր նաև մի աչքը պահել Արաքսի վրա. հարավից կատարվող ամեն մի ճեղքում կարող էր հարցականի տակ դնել հայերի ամենախոշոր հաջողությունը ճակատի գծում։

* *
*

Այն օրերին երիտասարդ կոռնետ Վանո-Հովհաննես Բաղրամյանը՝ ապագա փառաբանված զորահրամանատարն ու Խորհրդային Միության մարշալը, կատարում էր Սարդարապատյան զորաջոկատի աջ թևի պահեստային Հատուկ հեծյալ գնդի և Մահապարտների գնդի միջև կապն ապահովող սպայի պարտականությունը։ Իր աչքի առաջ և շատ հաճախ իր իսկ մասնակցությամբ կատարված դեպքերը տասնամյակներ հետո գրի առնելիս

Թուրքական «ընտիր զորաուժերին գլխավոր հարվածը հասցնող գնդապետ Պողոսբեկ Փիրումյանի Հայկական հինգերորդ հետեվակային գնդի» (Մահապարտների գունդ) մասին նա պիտի գրեր հիացումի ու երախտագիտության հետևյալ խոսքը, որը մեծ զորավարի ու արդարախոս հեղինակի արժանավոր տուրքն է սարդարապատյան հաղթանակը կռողներին։

«Մինչև այժմ ես չեմ կարողանում մոռանալ, թե այդ օրերին ինչպիսի՜ ծայրահեղ անբարենպաստ պայմաններում էին ստիպված անձնվիրաբար կռվել ամբողջովին ղարաբաղցիներից բաղկացած 5-րդ Հայկական գնդի մարտիկները,— գրել է մարշալ Բաղրամյանը։— Կռվի դաշտը, որտեղ արիաբար մարտնչում էին ղարաբաղցիները, իրենից ներկայացնում էր բուսականությունից զուրկ հարթավայր և միանգամայն տեսանելի փռված էր Թուրքերի գրված բարձունքների առջև։ Գտնվելով Հինգերորդ հրաձգային գնդի հրամանատարական կետում՝ ես բազմիցս ականատես եմ եղել, թե ինչպես բաց տեղանքով հարձակվող այդ գնդի գումարտակների հրաձգային շղթաներն ընկնում էին զանգվածային հրացանա-գնդացրային կրակի և բավական ուժեղ հրետանային գնդակոծության տակ։ Հինգերորդ գունդը պաշտպանվում էր ընդամենը մեկ հրետանային մարտկոցով, որն ի վիճակի չէր ճնշելու Թուրքերի վճռական դիրքերի բավական ամուր պաշտպանությունը։ Մինչդեռ Թուրքերն ունեին հրետանու ոչ պակաս 3—4 մարտկոց։ Երբեմն անվեհեր ղարաբաղցիների մարտակարգերը կործանիչ կրակի տակ փոշու այնպիսի խիտ շղարշով էին ծածկվում, որ թվում էր, թե կռվի դաշտում ոչ մի կենդանի շունչ չի մնացել։ Սակայն, չնայած դրան, հարձակումը նոր ուժով էր կրկնվում։ Այդ անմոռանալի օրերին ես սկսեցի հարգանք տածել դեպի ղարաբաղցի ռազմիկները՝ նրանց խիզախության, անվեհերության ու քաջության համար»։

Ջիմնի ղրը բլրի առաջ, Թուրքերի հրետանային, գնդացրային ու հրացանային համազարկերի տակ եռում էր փոքրիկ մի դաշտակտոր, որ ընկած էր երկու թշնամի բանակների միջև։ Դաշտակտոր, որ երկու օր առաջ Թուրքաց համար դարձել էր գերեզմանոց, անթաղ սպանվածների ու անհույս վիրավորների արյան հնձան։ Դաշտակտոր, որ այդ օրն էլ անհագ ու դաժանորեն կլանում էր բոլոր նրանց, ովքեր փորձում էին ոտք դնել...

Գնդապետ Պողոսբեկ Փիրումյանը համոզված էր, որ հակա-

ռակորդի ընտիր ուժերն են դիրքավորված Ջիմնի դրոում, գիտեր, որ այդ ուժերը ջախջախել կարելի է միայն ձեռնամարտով, քանի որ նրանց դիրքերը քարուքանդ անելու համար ո՛չ բավական հրանոթային արկեր ուներ, ո՛չ էլ ժամանակ ու այլ մի հնարավորություն։ Իսկ ձեռնամարտի բռնվելու համար դաշտակտորը պիտի անցնել։

Առաջին փորձը կատարեց երկրորդ գումարտակից առանձնացված փոքրիկ մի ջոկատ, որի վրա թուրքերն այնքան կրակ թափեցին, կարծես դրանով լուծում էին Օսմանյան կայսրության լինել-չլինելու հարցը։ Հրամանատարական դիտակետից պարզ երևում էր, որ դաշտակտորի վրա տեղացող կրակի ամենավտանգավոր փնջերը գալիս են ձախակողմյան հողապատնեշի թիկունքից։ Մի քանի մետր տարածության վրա թուրքերը դասավորել էին իրենց գնդացիրները, հարմար դիրք էին բռնել և հնձող կրակի տակ էին առնում դաշտակտորի յուրաքանչյուր մետր տարածությունը։ Հրանոթների արկերն ընկնում էին այս ու այնտեղ և բարձրացնում փոշու այնպիսի ամպեր, որոնց տակով կարելի էր ամբողջ մի բանակ անցկացնել։ Հրացաններն իրենց ընդհատ-ընդհատ հարվածներով չէին կարող դիմադրության պատնեշ ստեղծել։ Սակայն գնդացիրները,— անկասկած «Մաքսիմ» սիստեմի այդ հրեշները,— լափում էին դաշտը, թե ուզենային, մահվան շապիկ կկարեին նրա համար։

Սակայն պարզ երևում էր նաև, որ նրանք մի քանի հատ են, դրված մեկ գծի վրա, հողապատնեշի կենտրոնում։ Ո՞վ պիտի ոչնչացներ այդ գիծը, ինչո՞վ, ինչպե՞ս։ Գնդի հրանոթների միակ մարտկոցն այնքան են մոտեցրել թշնամու դիրքերին, որ այլևս անհնար է նշանառություն կատարել առաջավոր գծի դեմ։ Ձեռքի նռնակներով կարելի էր հողին հավասարեցնել, բայց նռնակներն ինչպե՞ս հասցնել այնտեղ։ Ո՞ւր են աներևույթ ոգիները, որ նռնակները տանեն, թափեն հողապատնեշի վրա և բացեն գրոհի ճանապարհը։

Առաջին գումարտակի երկու զինվոր՝ երկու անվեհեր երիտասարդ, ներկայացան իրենց հրամանատարին և նրա միջոցով գնդապետին առաջարկեցին իրենց նահատակությունը։ Այո՛, նահատակությունը, որովհետև նրանք գիտեին, որ դաշտակտորի պռնկին էլ իրենց կբռնեն այն գնդակները, որոնց ակունքը փակելու համար ուղում են մահվան գոտին կտրել-անցնել։

— Պարոն գնդապետ, մենք ուզում ենք փորձել,— ասաց նրանցից մեկը՝ բարձրահասակ, թխաչ ու նիհար մի երիտասարդ, որի գոտիներից կախված էին նռնակները։ Իսկ մյուսը, որ երևի տարիքով նրանից փոքր էր՝ երեսը դեռ ածելի չառած, գեղեցիկ, հպարտ կանգնել էր՝ ձեռքի գնդացիրը շալակին։

— Քե մատաղ, իսկ դուք գիտե՞ք, թե ուր եք գնում,— հարցրեց գնդի հրամանատարը, որի սիրտն այդ պահին լիքն էր հպարտությամբ ու հայրական գորովանքով։

— Լավ գիտենք, պարոն գնդապետ,— խոսեց մյուս զինվորը։— Ռուսն ասում է՝ փորձը փորձանք չի։

— Ճիշտ խոսք է, տղերք, բայց այս դեպքի համար չի ասվել,— թախծոտ մոտեցավ Պողոսբեկ Փիրումյանը և երկուսին էլ իր հաղթական թևերի մեջ առնելով՝ հարազատի, հոր պես սեղմեց իրեն։— Որտեղացի՞ եք, ձեզ մատաղ։

— Զանգեզուրից ենք, պարոն գնդապետ։ Խնձորեսկ գյուղ կա, լսած կլինեք։ Խնձորկեցի ենք, Աթաբեկյան տոհմից։ Սովորում էինք Ներսիսյան ճեմարանում... Թե չվերադառնանք, մեր փոխարեն ուրիշ խնձորկեցիներ կլինեն, հենց մեր Աթաբեկյաններից, կգնան-կսովորեն։ Ներսիսյանի նստարանները դատարկ չեն մնա...

Առաջին երիտասարդն էր, ասաց անհոգ-աներկյուղ, կարծես խոսքը մի հասարակ երթևեկի մասին էր։ Եվ գնդապետի սիրտը լցվեց. զգաց, որ չի կարողանա խոսել, շուռ եկավ, գնաց դեպի դիտակետի եզրը։ Հետո վերադարձավ, հանձնարարություններ տվեց նրանց, ապա առանձին-առանձին սեղմեց կրծքին, ճակատները համբուրեց.

— Գնացե՛ք, աստվա՜ծ ձեզ հետ,— խոնավացած ձայնով մաղթեց նա։ — Արկերը կընկնեն, փոշի կբարձրանա, առաջ կգնաք փոշի հագած։ Հետո նայեք՝ փոշին ո՞ր ուղղությամբ է նստում...

Խնձորեսկցի տոհմակիցները թուրքերին խաբեցին. ձևացրին, թե դաշտակտորն են մտնում, անմիջապես էլ ետ փախան։ Թընդանոթները մռնչացին, փոշու սյուներ բարձրացան, դաշտակտորը ծածկեցին։ Ո՞ւր մնացին նրանք, արդյոք մտա՞ն փոշու տակ։ Եթե մտել են, արագ վազքով մի քանի րոպեում կհասնեն հողապատնեշին և նրանից հետո... Նրանից հետո արդեն ամեն ինչ կանի հնարամտությունը։ Իսկ նրանք խելոք ու հնարամիտ երիտասարդներ էին երևում։

Երիտասարդ զինվորները չհասան թուրքական հողապատնեշին։ Դաշտակտորի ձախ եզրին էին, հանկարծ փոշու ծածկույթն իջավ, նստեց։ Թուրք դիպուկահարները նկատեցին նրանց, և դա նրանց վերջն էր։ Գնդակահար ընկան միաժամանակ, միասին։ Թուրք ասկյարները դրանով էլ չբավարարվեցին։ Նրանց վրա ուղղեցին գնդացրային մի քանի կրակահերթ։ Եվ երբ փոշին իջավ, դաշտում միայն երևում էին հայ խիզախների քրքրված ու անշունչ մարմինները։

Գնդի հրամանատարը խեղդվում էր ցավից ու ջղայնությունից։ Նա սոսկումով մտածում էր, որ ինքն էր երկու երիտասարդների մահվան պատճառը. չհամաձայներ, չէին գնա, և չէր կատարվի անմիտ նահատակությունը։ Չէ՞ որ ամեն ինչ պարզ էր. բաց դաշտում, թշնամու ամեն տեսակ հրաձգենների դեմ հրաշքն անդամ չէր կարող փրկել։ Բայց ի՞նչ անել։ Բլուրը պետք էր գրավել՝ ի՛նչ գնով էլ լինի։ Բլուրն էր թուրքերի ամենահզոր պաշտպանական կետը։ Այնտեղից նրանք իշխում էին բոլոր չորս կողմերի վրա և շարքից կհանեին իրենց դեմ շարժվող բոլոր ուժերը։

Խրամատներում հրամանատարներին ներկայացան ուրիշ զինվորներ։ Ամեն մեկը խնդրում էր իրեն ուղարկել գնդացիրների դեմ։ Կտրականապես մերժվում էին նրանք. ինչո՞ւ բռունցքով զարկել սրի բաց երախին։

Գնդացիրները ոչնչացնելու համար պետք է գտնել ամենաստույգ ու միակ միջոցը։ Ուրիշ ամեն մի ճանապարհ հղի է կործանումով։ Իր ջոկատի աչքի առաջ ինքնավստահ ու վճռական ներկայացավ նաև Հովսեփը և դիմեց հորեղբորը.

— Ի՞նձ ուղարկեցեք, պարոն գնդապետ։ Ես ուրիշ ճանապարհ գիտեմ։

— Ի՞նչ ճանապարհ, այ տղա, ի՞նչ ես խոսում,— փշաքաղված մարմնով նրան մոտեցավ Պողոսբեկ Փիրումյանը։— Գրժվե՞լ ես։ Որտեղի՞ց ուրիշ ճանապարհ...

— Նրանց ուշադրությունը հիմա դիմացի դաշտի վրա է։ Միայն այդտեղից են սպասում ճեղքումը,— բացատրեց կրտսեր Փիրումյանը, և նրա ձայնի մեջ կար մի այնպիսի վճռականություն, որի դեմ անզոր էր հարազատ գնդապետը։— Իսկ ես կշրջանցեմ և գնդացիրներին կմոտենամ թիկունքից։

— Բայց թիկունք դուրս գալու համար ինչքա՞ն ճանապարհ

պիտի կտրել,— հարցրեց գնդապետը։— Եվ հետո, թիկունք դուրս գալը, քո կարծիքով, ավելի անվտանգ է, քան դաշտով մոտենա՞լը։

— Ես ամեն ինչ հաշվել եմ, պարոն գնդապետ, խնդրում եմ,— գնդապետին կիպ մոտեցավ Հովսեփը և ականջի տակ ասաց.— Մերժեք, պիտի ասեն՝ հարազատն է, վտանգավոր առաջադրանքի են ուղարկում։ Հանգի՛ստ եղեք, հորեղբայր։ Թույլ տվեք և կտեսնեք, որ չեք սխալվել...

Խրամատի ամբողջ երկարությամբ զինվորները նայում էին երկու տոհմակիցներին, գիտեին՝ ինչի՛ մասին է խոսքը, սպասում էին ելք ու վճռին։ Եվ այդ գիտեր գնդապետը։ Ի՞նչ աներ։ Ի՞նչ պատասխան պիտի տար մորը... Հայրն այստեղ է և չի կարող չհասկանալ. չէ՞ որ ինքն էր պահանջում տաքուկ տեղ չապահովել հարազատների համար։

Գնդապետ Փիրումյանը վճիռը կայացրեց միանգամից ու ցավագնորեն։ Դրա համար էլ հարազատին ուսերը գրկած տարավ մինչև խրամատի ելքը, համբույրներով ծածկեց երեսը, ճակատը, արտասվալից աչքերը վերջին անգամ թաղեց նրա մազերի մեջ։

— Գնա՛, աստվա՛ծ պահապան։ Ուրիշ ոչ ոքի ուղարկելու իրավունք չունեմ։ Երկնայինն է տեսնում, որ ուրիշ ելք չկա։

Ջրհան կայանի վրայից դաշտը, ճակատի ամբողջ երկարությամբ, երևում էր ոնց որ ափի վրա։ Դանիելբեկ Փիրումյանը հեռադիտակով տեսել էր զանգեզուրցի երիտասարդների զոհվելը։

Նա ուզում էր ռադիոյի մոտ կանչել Պողոսբեկին և պայմանավորվել հաջորդ քայլի մասին։ Համոզված էր, որ զույգ երիտասարդի ճանապարհն անհուսալի է, ու մտմտում էր ուրիշ ելքի շուրջ։ Եվ հանկարծ տեսավ ու ճանաչեց Հովսեփին, որը խրամատներից ելնելով, անցավ հողապատնեշի ետևը, չորեքթաթ գնաց դեպի հարավ։ Բայց ի՞նչ պիտի անի այնտեղ։ Թե՞ ուզում է շրջանցել թշնամական առաջապահներին և անցնել գնդացիրների թիկունքը, մի՞թե հնարավոր չէր պայմանավորվել, որ այդ անեն Պերեկրյոստովի պարտիզանները։ Թե՞ Պողոսբեկն ուզում է բլուրը գրավել ի՛ր ուժերով։

Ռազմաճակատի հրամանատարի հեռադիտակը մեկ ուղղվում

էր Թուրքերի թիկունքին, ուր Ղասաբբաշյանի հրետանիներն արդեն փոշու ամպեր էին բարձրացրել, մեկ էլ իջնում էր Հովսեփի վրա, որը դանդաղ, բայց վստահորեն առաջ էր սողում Սարդարապատյան դաշտի եզրին բուսած նոսր խոտերի միջով, խղճուկ թփերի ետևով։ Նրա ընթացքն այնքան դանդաղ էր ու միապաղաղ, որ անտեղյակ աչքը չէր էլ նկատի։ Թող Թուրքերը քոռանան ու չնկատեն, քոռանան ու չնկատեն,— սրտի դողով մտածում էր հայրը։— Բայց մինչև ե՞րբ, մինչև ո՞ւր։ Հովսեփն ահա ձախից շուտով կմոտենա Թուրքական դիրքերին, ո՛չ թե կմոտենա, այլ գտնվում է այնտեղ... Բայց այն ի՞նչ է, հագուստափո՞խ է եղել. ասկյարի համազգեստով կուզեկուզ գնում է դեպի գնդացիրները։ Նրանց թիկունքից, հենց Թուրքական դիրքերից ելած ասկյար է, իբր, գնում է դեպի յուրայինները։ Եվ հանկարծ կայծակի արագությամբ նռնակները նետեց գնդացիրների վրա. մե՛կ, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս... Այս քանի՞ հատ էր վերցրել իր հետ։ Գնդացիրների ամբողջ շարքը ծայրից ծայր կորավ ծխի ու փոշու մեջ։ Ինքը՝ Հովսեփն էլ ծածկված էր այդ անթափանց վարագույրով։ Նետած նռնակներից ինքը չվնասվե՞ց։ Ինչպե՞ս կարելի էր այդքան մոտիկից... Մի՞թե նա չգիտեր, որ բեկորները շաղ են գալիս չորս կողմերի վրա, մանավանդ, եթե նռնակները նետել ես այդքան մոտիկ...

Ծուխն ու փոշին դեռ կանգնած էին մարտկոցի երկարությամբ, և մինչև նստեն, տեղանքը պարզվի, ռազմաճակատի հրամանատարի սիրտը պատառոտվում, պայթում էր այդ կարճ հավիտենության ծանրությունից... Եթե Հովսեփն անվնաս է մնացել, պիտի արդեն հեռացած լինի կործանված մարտկոցի մոտից։ Ինչո՞ւ ոչ մի կողմի վրա չի երևում։ Եվ մի՞թե մարտկոցի ամբողջ անձնակազմն էլ է ոչնչացել, որ Թուրքերից ոչ ոք չի շարժվում տեղից։

Երբ ծուխն ու փոշին իջան խրամատների վրա, նախկին մարտկոցից մնացել էին աղավաղված փոսեր ու սև, ծռմռված առարկաներ։ Նրանց կողքերին գոյացած թմբերի տակից դուրս եկան երեք ասկյարներ և վրա վազեցին դեպի այն տեղը, ուրկից Հովսեփը նռնակներն էր նետել։ Այնտեղ գոյացած փոքրիկ թումբը շարժվեց. Հովսեփն էր հողակոլոլ ու ծանրամարմին։ Երևի ուժեղ վնասվել էր։ Դեռ ոտքի չէր կանգնել, որ ասկյարները թափվեցին նրա գլխին և իրենց հետ առած բրեզենտի մեջ փաթաթե-

ցին, սկսեցին կապոտել։ Նա տակից ընդոստ շարժումներ էր անում, ֆափ էր տալիս իրեն, ցնցվում ու գալարվում։ Անօգուտ։ Թուրքերը կապկպել էին, հետո էլ կապերից բռնած քարշ տվին դեպի Ջիմնի դղյոի դիրքերը։

Ռաղմաճակատի հրամանատարի հեռադիտակի մեջ էր այս բոլորը, նրա աչքերի առաջ։ Երևի տեսնում էին նաև Հինգերորդ գնդի խրամատներից։ Գնդի հրամանատարական կետից ևս տեսանելի էր ամբողջ ճակատը, մանավանդ այն դաշտակտորի հարավային եզրը, դեպի ուր իրենցից պոկված Հովսեփ Փիրումյանն էր գնացել, իր մարտական առաջադրանքը հրաշալի կատարել և ահա, երբ կարող էր վերադառնալ ու զեկուցել հպարտությամբ, վիրավոր գերի է թուրքերի ձեռքում, տարվում է դեպի մի տխուր անհուսություն...

Ալեքսանդր Շնեուրն անտեղյակ էր ճակատի հարավային թևում կատարվածից։ Նա ապարդյուն ջանքեր էր անում ռադիոյով կապվելու Ղասաբբաշյանի գումարտակի հետ, չնայած նրա հրանոթների որոտներն ու թուրքական երերացող, իրար խառնված ճակատն ասում էին, որ թիկունքից ահեղ հարվածներ է հասցնում երիտասարդ ընդապետը։ Շնեուրն աչքով տեսածը պիտի հաստատեր ականջի լսածով, ուզում էր հրամանատարի առաջ մի փոքր էլ հպարտանալ իր ստեղծած կապի հուսալիությամբ, երբ այդ հրամանատարը, այլայլված ու ջղային, գնաց դեպի տախտակե ետնապատը, վար բերեց երկար թուրը, կապեց մեջքին, ապա ամառային վերարկուն շուռ տվեց, կարմիր աստառը դեպի դուրս հագավ և մոտենալով իրեն, կարգադրեց.

— Կապիտան, դուք արդեն ամեն ինչ գիտեք, մարտը վարեք՝ ինչպես ծրագրել ենք, ես գնացի։

Վարում հրեղեն զորավարին մոտեցավ համհարզը՝ Ճերմակի սանձը բռնած։ Նժույգն արտասովոր զգեստի մեջ էլ ճանաչեց տիրոջը, գլուխը բարձրացրեց, ականջները սրած, անհանգիստ խրխնջաց։

Զորավարը թուրը կողքին պահելով, թռավ Ճերմակի վրա և սուրաց դեպի ճակատի գիծը։

Երբ նա հասել էր Հինգերորդ գնդի խրամատներին և, թուրը դեպի թուրքական դիրքերը մեկնած, սուրացող Ճերմակի վրա ջողջողում էր իբրև կարմիր կրակ, կապիտան Շնեուրը շտաբի համհարզներին ուղարկեց դեպի աշխարհազորային ջոկատները,

և բանակային գումարտակների վրա ռադիոյով տարածվեց վաղուց սպասված հրամանը.

— Գրո՜հ։

Խրամատներից ու դիրքերից դուրս հորդացած հայ զորքն իր առաջ տեսավ հրակարմիր զորավարին, տեսավ ու վառվեց նրա բորբոքած կրակով։ Մահապարտները գնդակոծում էին թշնամու դիրքերը և առաջ վազում գոռալով.

— Ուռա՜։

Գարեգին սրբազանը Մահապարտների գնդի առաջին գումարտակի զինվորների հետ էր, ելավ խրամատների կողքի հողապատնեշի վրա, լանջախաչը բարձրացրեց, Արարատի դիմաց խաչակնքեց, սուրբ օրհնանք կարդաց, ապա, խաչը զորավարի կողմն ուղղելով, բացականչեց.

— Կարմիր Վարդա՜նը։ Կարմիր Վարդա՜նն է մեզ հետ։ Նրա հրաբորբ ոգին, նրա անմեռ կերպարը։ Առա՜ջ, հա՜յ զինվոր, քեզ սրբազան կռվի է տանում նոր օրերի Կարմիր Վարդա՜նը։ Կարմիր Վարդա՜նը...

«Կարմիր Վարդա՜նը...»,— այս էր, որ արձագանքելով, հորձանք տալով տարածվեց գրոհող շարքերի վրա, կամավորների, հրամանատարների և աշխարհազորային խանդավառների շուրթերին զնգալով, մեկմեկու անցնելով, սփռվեց ամբողջ Սարդարապատյան դաշտի վրա՝ Արաքսի եղեգնուտներից մինչև Արագածի փեշերը։

Իսկ հավատարիմ ու իմաստուն Ճերմակը, թուրքաց դիրքերի դեմ սուրալով, իր վրա տանում էր հրակարմիր զորավարին, որը նժույգի ականջը մտած գոռում էր.

— Առա՜ջ, առա՜ջ։

Մահապարտների հետիոտն քաջերը միացել էին նրան։ Կողքերից նորերն էին բարձրանում ու խոյանում առաջ։ Դա զորք չէր, այլ ժայռածերպերից իջնող քարահոսք, որ գնալով շատանում էր ու ահագնանում։ Բոլորի հայացքի առաջ կարմիր զորավարն էր, որի փեշերը թևերի պես տարածվել էին օդում, նրան տալիս էին հրեղեն մրրկահավի կերպարանք։ Եվ այդ մրրկահավն իր հետ փոթորիկ ու մահ էր տանում թուրքաց դիրքերին։

Հարձակման կարգադրությունն անելուց հետո Շնեուրը կանգնել էր աշտարակի հարթակի եզրին և չէր կարողանում հայացքը կտրել իր հրամանատարից։ «Աստված իմ, որտե՞ղ եմ տեսել

այս հրաշքը,— մրմնջում էին նրա շուրթերը։ Եվ հանկարծ հիշեց Պետերբուրգի սուրբ Գևորգ եկեղեցու հսկա որմնանկարը գմբեթատակի հարթության վրա։ Սուրբ Գևորգ, Գեորգիոս հաղթող, «Գեորգիոսի հրաշագործությունը վիշապի դեմ»։ Որտե՞ղ չէր տեսել Գևորգ նահատակի սրբապատկերը։ Իր ննջասենյակի պատի մանրիկ ոսկեղեն նկարների մե՞ջ, դպրոցական դասագրքերո՞ւմ, եկեղեցական շենքերի պատերի՞ն։ Բայց այն մե՞կը, պատի ամբողջ լայնությամբ ծալծլված էր հրեշ վիշապը, ժանիքները սրած պատրաստվում էր կլանել հերթական զոհին, որը վերջինն էր լինելու՝ արքայադո՞ւստրը... Եվ ահա հայտնվում է սուրբ Գևորգը ճերմակ նժույգի վրա, կարմիր թիկնոցը քամուն տված, կայծակնեղեն թուրը վիշապի դեմ պարզած...

— Սո՞ւրբ Գևորգ, Սո՞ւրբ Գևորգ հաղթող, դո՛ւ պաշտպանիր քեզ նմանին,— աղերսական հայացքը երկնքին հառած՝ խնդրեց կապիտանը, որ այդ պահին ավելի շատ մի հավատավոր աղոթողի էր նման, քան շտաբի պետի, որի կոչով մի քանի վայրկյան առաջ գրոհ էր տվել հայոց վրեժխնդիր զորքը։

Թուրքերի վրա ահարկու տպավորություն էր թողել դեպի իրենց դիրքերը սլացող կարմիր կրակը։ Ճերմակափրփուր նժույգը՝ կարմիր կրակե թևերով։ Իսկ մինչ այդ էլ իրենց պաշտպան գնդացրային ընտրանիի վրա էր հայտնվել շարաշուք աղետը, որը մի քանի վայրկյանում ջարդուխուրդ արեց գնդացիրները։ Թիկունքից կրակում էին իրենց թնդանոթները, այնտեղ բռնկված թունդուտոտից հողը ցնցվում էր, սակայն արկեր չէին հայտնվում հայոց դիրքերի վրա։ Նրանք այս բոլորն ընդունեցին իբրև ալլահի ուղարկած գեհենային պատժի նախանշաններ և, դիրքերից դուրս թափվելով, ուզում էին փախչել դեպի ետ։ Սակայն փախչելու փորձ անողների վրա սկսեցին կրակել հրամանատարները, որոնք անցել էին թիկունքը և գնդակահարում էին խուճապի մատնված ասկյարներին։ Ատրճանակները նրանց վրա ուղղած՝ հայհոյում էին, մտածելով, որ այդ զորքը ոչխարի պես բան է, թե որ գլուխը շուռ տվեց, մեկ էլ կանգ է առնելու իր փարախում։

Մահապարտների առաջավոր ջոկատները խառնվեցին թուրքերին և սկսվեց ձեռնամարտը։ Շաչում էին թրերը, և ընկնողները թավալվում էին ոտքերի տակ։ Սվինահարվածներ էին տե-

ղում, և յուրաքանչյուր հարվածն ուղեկցվում էր երկու տնքոցով՝ հարվածողի ու տապալվողի։

Պողոսբեկ Փիրումյանն առաջին գումարտակի վաշտերից մեկին հանձնարարեց չհեռանալ Թուրքաց շարքերի մեջ մխրճված զորավարից։

— Պաշտպանեցե՛ք նրան բոլոր կողմերից,— հանձնարարեց նա։— Տեսնո՞ւմ եք՝ ուր է հասել։

Իսկապես, ճակատի հրամանատարը, ինքնամոռաց կատաղությամբ զարկվելով թշնամու առաջապահների հետ, արդեն դուրս էր եկել Ջիմնի ղրե բլրի ստորոտը։ Նրա վիթխարի թրի հարվածներն աջ ու ձախ տապալում էին աղմուկ-աղաղակով իրեն մոտեցող ասկյարներին։ Վերից մեկը հրացանով նշան էր բռնել նրա վրա։ Վարանդեցի դիպուկահարը,— որ զորավարի թիկնապահ վաշտի զինվորներին էր խառնվել,— տեսավ նրան, և հաջորդ վայրկյանին Թուրքը դիտապաստ ընկավ ու ցած գլորվեց հրացանը գրկած։

— Ձաքա՞ր, դուք զորավարին հետևեցեք, զորավարի կողքից չհեռանաք,— առաջարկեց Արշակը։— Իմ գործը նշան բռնողների հետ է։

Հետո սրատես արծվի պես աչք էր ածում Թուրքաց դիրքերի վրա. հենց որ մեկն ու մեկը գող առնետի նման գլուխը հանում էր հողապատնեշի թիկունքից, նրա գնդակն առած ետ էր շուլալվում, որպեսզի այլևս գլուխը չբարձրացնի։

Գնդապետ Պողոսբեկը, երկրորդ գումարտակի գլուխն անցած, զարկվում էր Ջիմնի ղրեի հյուսիսային լանջն ի վար հորդացած լավայի դեմ։ Նա գիտեր, որ այդ կողմից հաջողություն ունենալու դեպքում Թուրքերը կարող են ռազմաճակատի հրամանատարին առնել շրջափակման մեջ։ Չի կարող պատահել, որ նրանք արդեն իմացած չլինեն, թե այն ի՞նչ կարմիր վերարկու էր, որ փրթում էր իրենց առաջապահներին։ Նրանք ամեն կերպ կջանան ողջ-ողջ ձեռք ձգել մի այդպիսի որս։

Նրանք շա՞տ բան կուզենային...

Բայց դա հայոց օրն էր։ Եվ այդ օրը հայերն էին, որ պետք է կարողանային, հայերն էին, որ պետք է կատարեին՝ ի՞նչ որ կամենային։

Պողոսբեկ Փիրումյանի երկրորդ գումարտակից մի վաշտ ճեղքել էր Թուրքերի շղթան, մտել նրանց դիրքերը, կատաղի սվի-

նամարտ էր տալիս։ Ձեղքը լայնացավ, մնացած զորքն էլ սկսեց բարձրանալ լանջն ի վեր։

— Առա՛ջ, քաջե՛ր, առա՛ջ,— երկարեց գնդապետի խրոխտ ձայնը։

Եվ այն է, շարժվում էին զորական խմբերը՝ արնոտված ու սարսափելի, սարսափն ու մահը մոռացած, երբ երիտասարդ կոռնետ Հովհաննես Բաղրամյանն իր հեծյալ հնգյակի հետ աջ թևից սրընթաց եկավ գնդապետի մոտ։ Քրտնաթոր նժույգները մեկեն մեխվեցին իրար կողքի։ Բաղրամյանը թեթևակի խթանեց իր ձիուն, կիպ մոտեցավ Պողոսբեկ Փիրումյանին և հնալով ինչ-որ շշնջաց նրա ականջի տակ։ Չէր կարելի կասկածել, որ շատ կարևոր ու ոգեպնդիչ լուր էր հաղորդում։ Փիրումյանը պայծառացավ, անմիջապես հայացքը դեպի աջ դարձնելով՝ հորիզոնում տեսավ փոշու ամպ, որը Թալինի կողմերից հոսում էր դեպի Զիմնի ղրոի հյուսիսային փեշերը։ Ապա շրջվեց, մի ձեռքով գրկեց կոռնետի մեջքը, սեղմեց իրեն։

— Կեցցե՛ս, տղա՛ս,— ասաց, հետո թուրը գլխից վեր բարձրացնելով՝ գոռաց.— Քաջեր, սասունցիներն են օգնության գալիս։ Հառա՛ջ։

Բաղրամյանի հեծյալները հետևեցին գնդի հրամանատարի թափորին և նրա օրինակով անմիջապես թրամարտի մտան թուրքերի հետ։ Հինգ հոգին ու ինքը՝ Բաղրամյանը, իրարից անբաժան, իրար թիկունք դարձրած՝ մխրճվել էին թշնամու շարքերի մեջ և թրատում էին աջ ու ձախ։

Սասունցիների հեծյալ երեք հարյուրյակն իրեն սպասեցնել չտվեց։ Պանդուխտ-Միքայել Սեֆերյանի գլխավորությամբ երեք հարյուր քաջեր՝ թևավոր նժույգների ականջները մտած, ճանապարհի փոշին երկինք հանած, դուրս եկան Զիմնի ղրոի հյուսիսային փեշերը։ Հետո այստեղից էլ Պանդուխտ-Միքայել Սեֆերյանի մշեցի քաջերը բլրի վրա ամրացած թուրքերի գլուխներին իջան որպես շշմեցնող հարված։ Իսկ թուրքերը, հարավից ու արևելքից հասնող հարվածներից խելակորույս, մշեցիներին դիմադրելը համարեցին անօգուտ ու կործանարար։ Հենց ինքը՝ Պանդուխտը, մի խումբ խիզախների գլուխն անցած, սպառնալից շրջապատեց Դարդանելյան դիվիզիայի 108-րդ գնդի շտաբը, որ մի ընդարձակ վրանում էր գտնվում։ Թուրքերը, զենքերը ցած գցելով, հանձնվեցին։ Գնդի հրամանատարը, գլխաբաց ու խո-

նարհ, ելավ վրանից, կաղալով (երևի խղճահարություն հարուցելու համար) ներկայացավ Պանդուխտին։

— Հանձնվում ենք, աղա՛,— իբր արժանապատվությամբ խոսեց նա։— Ձերոնցից էլ մեզ մոտ կան...

— Տարե՛ք բոլորին,— Թուրք բարձրաստիճան սպայի տեղեկության հանդեպ անտարբեր՝ յուրայիններին կարգադրեց հայ հրամանատարը։— Հանձնեցեք ռազմաճակատի հրամանատար Դանիելբեկ Փիրումյանին։

Ապա առյուծաքաշ նժույգին խթանեց, առաջ անցավ։ Բլրի գագաթին էր նա։ Շոգ էր, մի պահ գլխարկը հանեց։ Արարատից եկող հովը խաղաց ալիքավոր, թուխ մազերի հետ։ Ձին վրնջում էր անհանգիստ։ Բաշը շոյեց՝ ականջին ինչ-որ խոսելով, և նա սմբակներով հողը փորեց։

Խմբի զինվորները գրավել էին մի թնդանոթ, երկու գնդացիր և ահագին զինամթերք։ Գերի ասկյարների շալակը տված փամփուշտների արկղերը՝ բերին հրամանատարին ի տես։

Իսկ Ջիմնի-ղրից ու Թուլքի թափայից այն կողմ երիտասարդ Կարո Ղասաբբաշյանի գումարտակը դեռ գնդակոծում էր Թուրքերի թիկունքային ուժերին։ Դժվար էր գուշակել, թե ինչպիսին կլիներ ճակատի վիճակը, եթե այս գումարտակը հայտնըված չլիներ թշնամու թիկունքում, և Թուրքերն իրենց ուժերի կեսը շուռ տված չլինեին խոր թիկունքում հայտնված այդ անսպասելի ուժի դեմ։ Իսկ հիմա թիկունքից ու ձախ թևից անսպասելի հարվածներով խարխլված, ճակատում հիմնովին ջախջախված, անհույս ու անհեռանկար՝ Թուրք զորքն սկսեց նահանջել։

Նահանջի հրաման էր տվել Վեհիբը՝ Կովկասյան ճակատի հրամանատարը, և նահանջը կանոնավոր, պակաս զոհերով կազմակերպելու պարտականությունը դրված էր Շևքի փաշայի ու Քյազիմ Կարաբեքիրի վրա։ Թուրքաց զորքի մնացորդներին պետք էր միայն երանելի նահանջ բառը։ Նրանք թիկունք դարձրին ու անկանոն, անկազմակերպ, իրար կոխ տալով, վայր ընկնելով ու սողալով ետ փախան։ Թողած զենք ու զինամթերք, պաշարեղեն ու հագուստ-կապուստ՝ ամեն մեկն իր գլխի մասին էր մտածում... Չնայած գլուխ պրծացնելն էլ դյուրին բան չէր, որովհետև նախ թիկունք դարձրածներին թիրախ էին արել հայ հրացանաձիգները, ապա հետապնդելու հրաման ստացան

հեծյալ զորաջոկատները. աջից Պանդուխտի մշեցիներն էին հասնում ու կոտորում, ձախից Պերեկրյոստովի պարտիզանները, Մակեդոնի ու Թուրցիկ Հովսեփի մարտիկները, կենտրոնում՝ ճակատի գծի ամբողջ լայնությամբ՝ Պողոսբեկ Փիրումյանի գումարտակները, նրանք, որ Մահապարտ անվամբ էին ճակատամարտ մտել, բայց իրենք էին մահ տալիս ու տարածում, թշնամո՛ւ մահ, հայոց հողն ավերողի՛ մահ։

* *
*

Հայոց զորքն այդօր քիչ զոհեր էր տվել. միայն հարյուր տասը զինվոր և չորս թե հինգ ավագ ու կրտսեր սպա, սոսկ երկու անգամ ավել, քան նախորդ օրվա ինքնագլուխ հարձակման համար։ Զոհված զինվորների մեծ մասն էին կազմում տեղական աշխարհազորայիններն ու անփորձ պատանիները, որ հավաքվել էին Էջմիածնի ճեմարանից, Երևանի դպրոցներից։ Ռազմաճակատի հրամանատարը որոշել էր նրանց բոլորին հողին հանձնել մի տեղ, եղբայրական մեկ գերեզմանոցում։ Մտածում էր, որ լավ օրեր կգան, և երախտապարտ ազգն այդ սրբազան գերեզմանի վրա փառքի սյուն կկանգնեցնի, հավերժական հուշակոթող կամ տաճար կկառուցի, որովհետև զոհերը հիմնականում մոտակա գյուղերից էին, Վաղարշապատից ու Երևանից։ Սակայն գիշերը եկան նրանց հարազատները, մոմի լույսով գտան յուրայիններին և խնդրեցին՝ թույլ տալ, որ տանեն, իրենց պապենական գերեզմաններում պահ տան հողին։

Վիրավորները, շուրջ երկու հարյուր հոգի, նախ տեղափոխվել էին Սարդարապատ կայարան։ Կառամատույցի երկարությամբ շարված էին պատգարակների վրա, գետնին։ Շատերը նստել էին՝ վիրակապով ոտքը կամ թևը գրկած և տնքում էին ցավից, ետ ու առաջ օրորվում։ Զորամասի բժշկական աշխատողներն ու օգնության եկածները, նրանց առաջին օգնությունը ցույց տալուց հետո, սպասում էին գնացքի, որ տանեն Երևան։

Այստեղ էր նաև վարանդեցի Արշակը։ Եկել էր ճանապարհ դնելու իր ընկեր Զաքարին, որը ծանր վերք էր ստացել ուսից ու գոտկատեղից և լուռ, հայացքն աստղերին՝ տնքում էր։

Արշակն օրվա վերջում էր իմացել ընկերոջ վիրավորվելը։

Վազել էր մոտը և ողջ ու կենդանի տեսնելով՝ կատակի էր տվել։

— Ա՛յ տնաշենի տղա, մի կումի գնդակից էգ ահագին բոյդ ծալել ես, թեք ընկել...

Բայց հետո տեսավ, որ դրությունը լուրջ է, իրարով անցավ, վազեց բուժքույրերի ու բժշկի ետևից, նրանց կարծիքն իմացավ ու կոտրված վերադարձավ վիրավորի մոտ։

— Զաքա՛ր, ունքդ փոթ չգցես։ Կարևորն էն է, որ վերքերդ բուժեն, հասնես տուն։

— Կասկս կոտրած ես էլ ո՞ւմ եմ պետք, ա՛յ Արշակ,— ծանր տնքաց Զաքարը։— Կոնդ ապրելուց լավը մեռնե՞լը չի։

— Անհամ-անհամ մի խոսի։ Ես կգամ, քեզ կտանեմ, մեր դարբին Սիմոնի ձեռքը կտամ, մի շաբթում կշինի նոր մորից ելած...

— Է, կասկս երկաթից է, ծեծելով կարգի է բերելու, հա՞...

— Տղա՛, քո ի՞նչ գործն է, թե ի՛նչ է անելու. յախո՞ւ է դնելու, թեժ-թեժ խորոված դմակ է վրան կապելու... Ես շա՞տ եմ իմանում՝ ինչ աչքակապությամբ է քեզ ոտքի կանգնեցնելու։ Իմ աչքով եմ տեսել, թե ոնց սայլով բերում են իրեն պահ տալիս, մի շաբթից ոտքի է կանգնում, վերուվեր խաղալով գնում...

— Լավ հեքիաթ ես պատմում,— տնքալով դեմքը կնճռոտեց Զաքարը։ Բայց ընկերն զգում էր, որ նրա դեմքին արդեն հույսի շող կա, որ պետք է պահի իրեն։— Դու հիշիր իմ խոսքը, Արշակ,— հետո խաղաղված, ցածրաձայն ասաց վիրավորը։— Պարտական մնաս, թե չկատարես։— Ուրախ ձևացող Արշակն զգաստացավ՝ հո կատակ չի՞ անում։— Կռիվը պրծնի, թե չէ, ոտքդ գցիր Փարաքար...

— Զաքար, կռիվ ենք անում, և մեզ են սպասում Ալեքսանդրապոլն ու Ղարսը... Համ էլ կռվի բանը գիդվալ չի. դու ծրագիր ես քաշում, ինքը ջնջում է։ Կռվի աստվածը մեռնի...

— Է՛, ես քեզ կարգին բան եմ ասում, դու խոսքդ կտուրն ես գցում, ը՛հ,— տնքալով ու դժգոհ՝ երեսը շրջեց Զաքարը։

— Դե՛, լա՛վ, հրամանդ կատարված կլինի, պարոն ափիցեր,— քթի տակ ժպտալով, հիվանդի կողքին կկզած՝ աչը պատվի բռնեց Արշակը։

— Ա՛յ, էդպես խոսի, որ հանգիստ բաժանվենք։

Թուրք վիրավորներին հավաքող սանիտարական խմբերը ևս իրենց պարտականությունը կատարել էին մինչև մութն ընկնելը։

Նրանց էլ պիտի Երևանի հիվանդանոցները փոխադրեին և դարձյալ սպասում էին գնացքի, սակայն Սարդարապատից երկուերեք կիլոմետր արևմուտք, երկաթգծի կողքին, որովհետև բոլորն էլ ծանր վիրավորներ էին, և անհնար էր շալակով այդքան տարածություն կտրել, տանել ավելի քան երեք հարյուր հոգու։

Թուրք վիրավորներին հավաքող խմբերի ղեկավարը Խնուսի գնդի ավագ բժիշկ Քրիստափոր Փիրումյանն էր, որն այդօր ստիպված էր բաց դաշտում կատարել նաև բարդ վիրահատություններ, որովհետև կային այնպիսի վիրավորներ, որոնց ստացած վերքերը վայրկյան առ վայրկյան բարդանում էին, դառնում ավելի ծանր ու մահացու։ Նրա օգնականներից շատերը դժգոհությամբ ու տրտունջով էին կատարում իրենց պարտականությունը։

— Աչքներիս լո՞ւյսն են, հիմա էլ այսքան տեղը շալակած բերում ենք...

— Ի՞նչ էլ պինգ են ճակատները, հա՞. ջարդուխուրդ եղած էլ ապրում են...

Գանգատավորները տարեց կանայք էին։ Բժիշկն անհարմար էր զգում նրանց դիտողություն անել կամ որևէ խոսքով արձագանքել։ Մանավանդ որ ներքին մի ձայն հոգու խոր խորքերում համերաշխ էր նրանց հետ։ Սակայն պատահեց այնպես, որ ինքն էլ իրեն պարտադրված շրջանակից ելավ։ Ոտքից ու ձեռքից վիրավոր բարձրաստիճան մի սպա սկսեց գոռալ սանիտարների վրա։ Բժիշկ Փիրումյանը մոտեցավ, վերքերն ստուգեց։ Պարզվեց, որ սպան թևին թրի հարված է ստացել. ոսկորը հիմնովին ջարդված էր, և կապելն այլևս ավելորդ էր. թևը պիտի կտրվեր։ Նա իր իմացած կովկասյան թուրքերենով, որքան կարելի էր հանգիստ, վիրավորին բացատրեց անելիքը, որ չի կարելի ուշացնել։ Եվ այստեղ թուրքն ավելի հերոստվեց, նորից գոռգոռաց, հայհոյեց անհասցե։ Բժիշկը, իրեն զսպելով, ասաց.

— Տեսնողներն էլ կարող են կարծել, թե դուք այստեղ կուրորտ եք եկել, և այս հայերը ձեր նման պատվարժան մարդկանց վատ են սպասարկում։

— Եթե գիտես, թե ինչի՞ համար եմ եկել, էլ ինչի՞ մի գրնդակ չես մեխում ճակատիս։ Չէ՞ որ դրանից հեշտ բան չկա,

կոտրատված ոտք ու ձեռքով ընկած եմ առաջդ,— խեղդվելով գոռաց սպան։

— Չգիտե՞ք ինչի։

— Յո՛խ, բիլմանամ։

— Որովհետև մենք թուրք չենք,— սեղմած ատամների արանքից նետեց երիտասարդ բժիշկը և բուժքրոջը կարգադրեց սրբսկել, որ թուրքը հանգստանա։— Հետո էլ պատրաստեք վիրահատության։

* *
*

Երևանյան ռազմաճակատի հրամանատար զորավար Սիլիկյանը Երևան ու Թիֆլիս էր հեռագրել՝ հաղորդելով Սարդարապատյան գծի փառավոր հաղթանակի մանրամասները. «Վարդանանց ճակատամարտի սրբազան օրը հայոց զորքը պսակեց թուրքերի չեղած-չտեսնված ջարդով։ Թուրքերը գլխապատառ նահանջում են՝ պատերազմի դաշտում թողած իրենց անհամար մեռելներին ու վիրավորներին, իրենց պաշարակիր սայլերն ու տեսակ-տեսակ ռազմամթերքը։ Մենք փոքրաթիվ զոհեր ենք տվել՝ մի քանի տասնյակ զինվոր և տասնինն սպա։ Մանր ու թեթև վիրավորների թիվը չի անցնում երկու հարյուրից։ Եվ հեռու չէ այն օրը, երբ մենք ետ կառնենք թուրքերի կողմից նենգորեն գրավված Ալեքսանդրապոլը»։

Հենց այդ օրվա երեկոյան էլ Վաղարշապատի ու Երևանի խանդավառ բնակչությունը ծանոթացավ Սիլիկյանի նոր կոչին, որը փակցված էր մարդաշատ փողոցների ակնառու տեղերում, մեծ շենքերի մուտքերին ու գարպասներին։ «Հայե՛ր,— գրում էր վերջին երեք օրերում ոգևորված ու հաղթանակի հավատին լծված զորավարը,— մեր քաջարի զորքերի հերոսական գործունեությունը շարունակվում է, և տաճիկ զորքերը նահանջում են։

Մենք պետք է ետ վերցնենք Ալեքսանդրապոլը, որն այնպես նենգորեն գրավեցին տաճիկները։

Մեր բոլորիս մտքերը ամբողջովին պետք է ուղղված լինեն դեպի Ալեքսանդրապոլը, մենք պետք է ետ վերցնենք այն և հետո՛ միայն բանակցության մեջ մտնենք տաճիկների հետ խաղաղություն կնքելու։

Մեզ բոլորիս շատ լավ պետք է հայտնի լինի, թե ո՞ր աստիճան գրգռվել է անկուշտ և միևնույն ժամանակ թույլ տաճիկ կառավարության ախորժակը։ Նա պահանջում է ամբողջ Ախալցխայի, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառները՝ Էջմիածնի վանքի հետ միասին և Երևանի, Նախիջևանի գավառների մեծ մասը։

Մի՞թե մենք պիտի տանենք այդպիսի անարգանքը։ Մի՞թե հեշտ ու հանգիստ սրտով պիտի տանք թշնամուն մեր հայրենի հողերը, որ կերակրել, կերակրում են և պիտի կերակրեն մեզ և մեր սրբատեղին՝ սուրբ Էջմիածինը։

Ո՞չ, երբե՞ք, հայ ժողովուրդ, դու չպիտի թույլ տաս այդպիսի անարգանք։

Եվ այդ անարգանքը տեղի չի ունենա, եթե մենք հասնենք մինչև Ալեքսանդրապոլ։

Քիչ է մնացել մինչև Ալեքսանդրապոլը, հարկավոր է միայն օգնել խրամատներում գտնվող մեր քաջերին և մի 3—4 օրից հետո մենք կհասնենք մեր նպատակին։

Ուրեմն, մի՛ դանդաղեք, հայե՛ր, շտապով խմբվեցեք խիտ և համերաշխ շարքերով, վռնդեցե՛ք թշնամուն մեր հայրենի արյունաներկ հողերից, և թող ձեզ հետ լինի ձեր հետնորդների օրհնությունը։

Բոլորդ դեպի զե՛նք։

Դեպի Ալեքսանդրապո՛լ։

Երևանի զորամասի հրամանատար՝
Գեներալ Սիլիկյան»։

* *
*

Իսկ բուն ռազմաճակատում օրվա ահռելի տառապանքից խոնջացած ու անօրինակ հաղթանակից գինով հայ զորքը ժամանակավոր ու ծանծաղ փորած խրամատներում, իբր թե, հանգստանում էր՝ առավոտյան թշնամու հետապնդումը շարունակելու համար։ Սակայն հանդստանալ չկար, որովհետև մարդիկ շատ էին հոգնած, ջղերը ծայրաստիճան լարված էին, հաղթա-

նակի երջանկության ու կորուստների ցավի ստեղծած հակոտնյա զգացումներից պայթում էին սրտերը։ Ամենուրեք ափսոսանքով ու կսկիծով էին խոսում կամ լռում ճակատի հրամանատարի որդու մասին։ Իսկ Հինգերորդ գնդի մահապարտներն իրենց պահում էին սգվորների պես, որովհետև նրանց աչքի առաջ էր, որ Հովսեփը գնաց անկարելի ու անհնար սխրագործության. հողմացրիվ արեց գնդի ճանապարհը մահվամբ գոցող գնդացիրները։ Հողմացրիվ արեց, ապա վիրավոր ու հոշոտված ընկավ թշնամի մարդակերների ձեռքը։

Ինչ եղավ նրա վիճակը հետագայում։ Թուրքերը ո՞ղջ թողեցին իրենց մեջքը կոտրողին, թե՞ թուրքավարի հաշվեհարդար տեսան հետը։ Գուցե իմացել են, թե ո՛վ է նա և հիմա գեհենային տառապանքներ են պատրաստում հոր ու որդու համար՝ իրենց սարդարապատյան խայտառակ ջարդին ի տրիտուր։

Զիմնի ղբռ բլրի ուղղությամբ թուրքերին հետապնդող մահապարտներն իրենց գնդապետից հանձնարարություն էին ստացել փնտրել ու գտնել Հովսեփին։ Հետախույզ ընտիր հեծյալների մի խումբ հատուկ առաջադրանքով իր փնտրտուքն սկսել էր դեպքի վայրից և, ճանապարհին թուրքական գիծը սանրելով, խոշոր կուտակումների վրա կայծակի պես իջնելով, բավական մխրճվել էր թշնամու զորաշարքերի մեջ, հասել Կարա-բուրուն բլրի մոտերքը, այնտեղից էլ իջել Արաքսի ափը՝ հասել Կարաղուլա կիսակայարանի մոտերքը,— ո՛չ մի արդյունք։ Մնում էր մտածել, որ գերի վերցնողներն իմացել են նրա ով լինելը, անմիջապես փոխադրել են խոր թիկունք, գուցեև Ալեքսանդրապոլ, ուր որ իրենց գլխավոր հրամանատարության շտաբն էր, և պիտի թանկ ծախեն գերիների փոխանակության ժամանակ։ Սատանա՜ն իրենց հետ,— հոգեմաշ մտածումների մեջ ինքն իրեն ասում էր Պողոսբեկ Փիրումյանը,— ինչ գնով կուզեն, թող ծախեն, միայն թե ո՛ղջ լինի, միայն թե ո՛ղջ լինի...

Պատանի Հովսեփ Փիրումյանի կսկծալից ճակատագիրը տիրում էր զորքին զբաղեցնող բոլոր հարցերի ու ապրումների վրա։ Սակայն երևի թե ամենից շատ այդ ցավով տառապում էր Գարեգին սրբազանը։ Այդ անխոնջ ու անդադրում մարդն ամբողջ օրը պատերազմի դաշտում էր, զինվորների հետ, հրամանատարական կետերում։ Մայիսյան արևի տակ, ճառագայթների

փնջեր արձակող լանջախաչը ձեռքին, օրհնում էր ու խրախուսում, ոգևորում էր ու ատելություն բորբոքում։ Նախընթաց օրերի զրույցներից ու հանդիպումներից նա դարձել էլ բոլորի մտերիմը։ Սիրում ու հավատում էին՝ որպես իսկական սրբի։ Նրա հայտնությունը մի նոր ուժ էր տալիս մարդկանց։

Եվ, այսպե՛ս, հաղթական օրվա բոլոր ժամերն ու վայրկյաններն անցել էին նրա աչքի առջևով ու նրա սրտի միջով։ Հաղթանակը լուր չէր նրա համար, որ պիտի բերեին ուրիշները, հաղորդեին իբրև սրտապարար երջանկություն։ Հաղթանակը նրա մասնակցությամբ ծնված, հասունացած ու ավարտված օրն էր, որի երջանկությունը սիրտն էր լցվում լուսաբացից սկսած, վայրկյան առ վայրկյան, և այդ պատճառով էլ սիրտը դիմանում էր։ Օրվա ընթացքում նա հազար անգամ մտածել էր ռազմաճակատի հրամանատարի մասին։ Չէր պատահում, որ հիշեր և օրհնանքի խոսք չասեր, արևշատություն չմաղթեր... Եվ չմրտածեր նաև, թե նա՝ այդ մեծ մարդը, այդ օրվա հաղթանակի մտմտողը, արարիչն ու կոռողը, իր սրտում ինչպե՞ս է պարտակելու այսպիսի մի երջանկություն, այս հաղթանակի երջանկությո՞ւնը...

Եվ երբ դիրքերից մեկում նրան հայտնեցին, թե Զիմնի ղրոի ձախ փեշին զորավարի տղան գերի է ընկել, ու պատմեցին նաև մանրամասները, նա կայծակնահարի պես եղավ. ծնկները ծալվեցին, և ծնկաչոք, աչքերն անտարբեր երկնքին հառած, դողացող շուրթերով ցավի ու մրմուռի անհոդաբաշխ կանչեր էր արտաբերում։ Կայծակի պատճառած շլացումն անցնելուց հետո էր, որ նա ուշքի եկավ և մտածեց, թե իսկ հիմա՞ ինչպես պիտի դիմանա, երբ երկուսն էլ ահռելի են՝ և՛ հաղթանակի երջանկությունը, և՛ խիզախ որդու ողբերգությունը։

Նա շտապեց հրամանատարական կետը։ Չգիտեր՝ ինչո՞վ կարող էր սփոփել որդեկորույս հոր սիրտը, ի՛նչ խոսքեր պիտի ասեր նրան, և լեզուն ի վիճակի պիտի լինե՞ր նրան ասելու այդ խոսքերը։ Գնում էր՝ մտքում անիծելով հայի բախտը։

Սրբազանը Դանիելբեկ Փիրումյանին գտավ հրամանատարական ուժերով շրջապատված, հաջորդ օրվա անելիքների մասին խոսելիս։ Մոմի դեղին ու աղոտ լույսը նրա հոգնած ու կնճռոտված դեմքի վրա փռել էր մի խորունկ թախիծ։ Խոշոր աչ-

քերը երևում էին ավելի խոր ընկած։ Քունքերի ու բեղերի ճերմակն ավելի էր շատացել։ Աչքերը խոնավ էին ու կարմրած։

Սրբազանն ընդառաջ գնալով փարվեց նրան, ուզեց ասել մխիթարանքի խոսքեր, սակայն առաջինը նա ի՛նքը խոսեց։

— Աստվա՜ծ է արել, սրբազան, աստվա՜ծ,— խռպոտ ձայնով ասաց նա։— Չէ՞ որ ես ինքս երեկոյան ծունկի էի եկել Արարատի առաջ, խնդրել էի այս հաղթանակը։ Հատուցման համար ես երեքիս կյա՜նքն էի խոստացել. միայն այդքա՜ն է ունեցածս...

* *
*

Բաթումում խոնավ ու մշուշոտ օրերին հաջորդեց արևոտ, պայծառ եղանակը։ Սակայն բանակցությունների վրա իջած մշուշն այդպես էլ չէր ցրվում։ Ծանր էր հատկապես հայերի վիճակը։ Նրանք ասես դատապարտված էին անշարժության, որի մեջ պարտավոր էին լուռ ականատեսները լինելու հարևանների կասկածելի շարժումների։ Մուսավաթական Հաջինսկին ու Ռասուլզադեն մեկ-մեկ անհետանում էին, և հետո պարզվում էր, որ Տրապիզոն են գնացել ու վարել են սեպարատ խորհրդակցություններ թուրքական եռապետության բանագնացների հետ։ Խան-Խոյսկին էլ Վեհիբ փաշայի սիրալիր ընդունելությանն էր արժանանում, և միասին գծում էին ռազմական պլաններ, որոնցով Կովկասը պիտի իր լեռների վրա տնկեր իսլամաթուրքական դրոշը։

Անգործ չէին նաև մենշևիկ պատվիրակները։ Չխենկելին, օրինակ, օգտվելով Անդրկովկասյան ընդհանուր պատվիրակության ղեկավարի իր պաշտոնից, միայնակ ու ինքնագլուխ հանդիպումների էր գնում թուրքերի մոտ, տեսակցում էր գերմանական ներկայացուցիչ Ֆոն Լոսովի հետ, այդ հանդիպումներում քննում էր բացառապես Վրաստանի ճակատագրին վերաբերող հարցեր և արդյունքները Փոթիից հեռախոսով հաղորդում իր կառավարությանը, հանձնարարություններ էր ստանում հետագա գործնական քայլերի համար։

Փոթին վրացիների ձեռքին էր և հեռախոսային ուղիղ գծով կապված էր Թիֆլիսի հետ։ Թիֆլիսում էն գտնվում Հայոց երկ-

բի բախտն իրենց ուսերին առած կազմակերպությունները։ Նրանց ղեկավարների հետ կարելի էր գոնե հեռախոսով կապվել Փոթիից, խորհրդակցել, որոշակի գործ կատարելու և անհեռանկար փակուղուց ելնելու համար։ Սակայն նրանք այդպիսի փորձ իսկ չէին անում, որովհետև, երևի, մտածում էին, թե դաշնակիցների կողմից դա կարող է համարվել անպարկեշտություն։

Եվ ահա այս ժամանակ էլ Հովհաննես Քաջազնունին հիշեց իր մի բարեկամի խոսքը հայոց պատվիրակության ղեկավարի մասին։

Դեռ Թիֆլիսում էին և պատրաստվում էին Բաթում ճանապարհվելու, երբ այդ բարեկամի հետ հանդիպեց ու հաղորդեց, որ Բաթումում թուրքերի հետ բանակցություններ վարելու են գնում, և հայկական պատվիրակության ղեկավար է նշանակված Ալեքսանդր Խատիսովը։

— Ալեքսանդր Իվա՞նովիչը,— մռայլվելով իսկույն հարցրել էր այդ բարեկամը։

— Այո՛, Ալեքսանդր Խատիսովը։ Բյուրոյի անդամները գտան, որ...

— Ի՞նչ գտան,— հիմա բորբոքված դժգոհեց մտերիմը։— Քաղաքական այդ մոցիկուլը հիմա էլ ձեր դրո՞շն է ձեռքը վերցրել։

— Գտան, որ բանիմաց ու ձեռներեց մարդ է, և հարմար է, որ նա՛ ղեկավարի պատվիրակության հայկական մասը,— հանգիստ բացատրեց Քաջազնունին։

— Բոլոր մոցիկուլներն էլ ձեռներեց են լինում, այլապես կտապալվեն առաջին իսկ ձեռնարկի մեջ։

— Բայց ի՞նչ վատ է, որ այդ ձեռներեց գործիչը ծառայելու է մեր դատին։

— Գիտե՞ս ինչ, Հովհաննես,— հիմա էլ մտերիմն սկսեց հանգիստ բացատրել Քաջազնունուն,— մոցիկուլի հետ գործ ունեցող երկու կողմերից յուրաքանչյուրն էլ համոզված է լինում, թե նա ի՛ր մարդն է...

— Հետո՞։

— Հետո էլ այն, որ մոցիկուլը միշտ և ամեն տեղ միայն իրեն է ծառայում, իր փորին ու գրպանին և թքած ունի երկու կողմե-

րից յուրաքանչյուրի վրա՝ միասին վերցրած ու առանձին-առանձին։

Առաջին օրերի ապարդյուն վաղվռտուքից, ստացած սուտ խոստումներից ու տված հեղհեղուկ հավաստիացումներից հետո կատարյալ անգործության էր մատնվել հայոց դիվանագիտության ղեկավարը։ Նա հենց այն գլխից չէր հավատում թուրքերին, սակայն բանակցում էր հետները՝ մտածելով, որ ինքն էլ նրա՞նց կխաբի, և արդյունքում կհավասարվեն։ Սակայն շատ շուտով համոզվեց, որ թուրքերի խաբելն իսկապես խաբել է ու կործանարար, իսկ իրենը՝ մկան կատակ, որը միայն կատվի ախորժակն է գրգռում։ Չէր հավատում նաև անդրկովկասյան դաշնակիցներին։ Բայց և չէր կարծում, թե նրանց խաբելը էական որևէ նշանակություն կունենա գործերի ընթացքի համար, մանավանդ, չէր էլ կարծում, թե նրանց կհաջողվի խաբել իրեն՝ հենց այդ դաշնակից կոչվածներից ավելի խելոք, ավելի ձեռներեց, տասնապատիկ խորամանկ գործչին։ Բաթում ճանապարհվելիս Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահը նրան զգուշացրել էր. «Խորամանկ են մեր գործակիցները,— ասել էր։— Այնպես արեք՝ մեր թիկունքում սև գործ չտեսնեն»։ Քմծիծաղել էր Խատիսովը. «Թե որ տեղը եկավ, նրանք մեզանի՛ց պիտի խորամանկություն սովորեն,— պատասխանել էր նա և մի փոքր ընդմիջումից հետո ավելացրել էր.— Դրանց բոլորի կաշին դաբաղխանից եմ ճանաչում»։

Ալեքսանդր Խատիսովը, հավանաբար, իր ուժերը գերագնահատել էր այն ժամանակ կամ պարզապես նկատի չէր ունեցել, որ եթե ինքն ու դաշնակիցները դաբաղխանայում հանդիպել են, ապա նրանք էլ իր կաշին պիտի ուսումնասիրած լինեն, գուցե շատ ավելի հանգամանորեն, քան ինքը, որ նրանց կաշվի տակի մասին ոչ մի պատկերացում չուներ։

Այսպես թե այնպես, Ալեքսանդր Խատիսովն իր հաշիվների մեջ խիստ սխալվել էր։ Հայտնի չէ՝ նրան լիազորողներն այդ հասկանում էին թե ոչ, սակայն անմիջական գործակիցները՝ Մ. Պապաջանովը, Հ. Քաջազնունին ու Ս. Վրացյանը, հասկանում էին, որ իրենց խարխուլ նավի ղեկը հանձնված է մի մարդու, որը, օվկիանոսային հեռաստանների համար հնարավորություն և ուժ չունենալով, ելել է ծանծաղուտները և անհուսալիորեն խրվել ցեխի մեջ։ Հասկանում էր հատկապես Քաջազնու-

նին՝ չորսից ամենաաշալուրջն ու ամենալրջմիտը, որն այն օրերին վերջնականապես համոզվել էր իրենց առաքելության սնանկության մեջ և տեսնում էր, որ գնալով իրենց խնդիրներն առավել խճճվում են ու բարդանում։ Նա, բարեբախտաբար, իրենց համար ստեղծված իրադրության մեջ նշմարում էր նաև միակ ելքն ու փրկության հեռանկարը և ցավում էր, հոգեկան մեծագույն տվայտանքով գոնե ինքն իրեն խոստովանում, որ իրենց յուրաքանչյուր նոր քայլ ավելի ու ավելի է հեռացնում այդ մշուշոտ հեռանկարից։

Հովհաննես Քաջազնունին մասնագիտությամբ ճարտարապետ էր, և նրան մոտիկից ճանաչողները գիտեին, որ դա նրա համար միայն մասնագիտություն չէ, այլև բնավորություն, մտածողության եղանակ, գործունեության կերպ։ Նա, առանց ավելորդ ճիգերի, մտածում ու խոսում էր այնպես, որ բառերը շարվեշար կանգնում էին խոսքի ամբողջական շենքի մեջ, իսկ շենքը հիմք ուներ, ավարտուն կառուցիկություն, ներքին ու արտաքին ամբողջականություն։ Մի անգամ Խատիսովին ասաց.

— Մենք եկանք Բաթում՝ նախօրոք չունենալով նախագիծն այն շենքի, որը, իբր, կառուցելու ենք, բայց հայտնի չէ՝ որտե՞ղ և ի՞նչ նյութերից։

— Ասում են՝ քոռ մոշահավի բունն աստված է շինում։ Այս էր մեր հույսը,— իբր թե կատակով պատասխանեց հայոց պատվիրակության ղեկավարը։

— Իսկ երբ համոզվեցինք, որ աստված ինքն է քոռ մեր ճակատագրի հանդե՞պ։

— Է՛, ի՞նչ անենք, սիրելիս, ծո՞վը թափվենք,— ժպիտով, անհոգ հարցրեց Խատիսովը՝ վիճելու անտրամադիր, ամեն մի լուրջ խոսքի պատասխանը կտուրը գցելու հակամետ։— Ի դեպ, այսօր Պոնտոսը կախարդական է։ Խորհուրդ կտայի վայելել նրա ծոցի հրապույրները։ Մի ժամ առաջ ես ու Սիմոնը մտել էինք և չէինք ուզում ելնել։

Նույն օրը մոտավորապես նման, չկպչող, չծավալվող մի զրույց էլ ունեցավ Վրացյանի հետ։ Հետո ավելորդ համարեց Պապաջանովի հետ խոսելը և մտածեց, որ սրանք իրենց նետել են հոսանքի բերանը, սպասում են երջանիկ պատահականության, որին ևս չեն հավատում։ Վրացյանն ասել էր. «Բարեկամ, մեր այս վիճակում, միջազգային քաղաքական ու ռազմական այս

իրադրության մեջ մենք ի՞նչ կարող ենք անել։ Լավագույն դեպքում մենք միայն կարող ենք պատվով մեռնել, բայց ոչ հաղթել ու փրկվել»։

Ընթրիքի չգնացին։ Ուտելու, նույնիսկ խոսելու տրամադրություն չունեին (անտարբերություն խաղացողները հարկադրված էին խոստովանել)։ Եվ այն ժամանակ Քաջազնունին նրանց հարցրեց.

— Էլ այստեղ ի՞նչ ունենք անելու։ Ինչո՞ւ վեր չկենանք, գնանք մեր երկիրը, ազգի հետ վայ տանք մեր գլխին, կամ այնտեղ գտնենք այն ճարը որով գուցե թե հնար լինի փրկվել մահացու տառապանքից։

Սիմոն Վրացյանն ասաց.

— Մենք այստեղ ներկայացնում ենք մեր կուսակցությունը։ Եվ ձեռնունայն վերադառնալ, կնշանակի՝ ժողովրդի աչքում գցել նրա պատիվն ու հեղինակությունը, որոնք ձեռք են բերվել տասնամյակների տքնությամբ, մեծագույն զոհողությունների գնով։

Հետո զրույցը զարգացավ այնպես, որ երեքն էլ խոսում էին միայն իրենց կուսակցության մասին։ Հայ հեղափոխական դաշնակցությունն այն երեկո շատ հոլովվեց երեքի բերանում։

Ուշ գիշեր էր արդեն, և Քաջազնունու քունը չէր տանում։ Վերջին ամիսներին նա տառապում էր անքնությունից և գիշերվա մեծ մասն անց էր կացնում իր օրագիր-տետրի հետ։ Իսկ Բաթումում գրելիք շատ կար։ Գրում էր, վիճում ընկերների հետ, պարպում անորոշ հույզերով ու տարտամ ապրումներով ալեկոծված սիրտը։ Այդպես էր վրեժ լուծում իր ու դասակիցների պարապությունից։ Եվ որքան էլ հուզված, ցավերն ու ապրումները որքան էլ ալեկոծ, նա չէր կորցնում սեփական ձեռքին ու գրչին տիրապետելու հավասարակշիռ ուժը, գրառումները շարվում էին հարթ ու կոկիկ, ոչ նախշուն, բայց համաչափ ու գեղեցիկ այն ձեռագրով, որին տիրապետում էր հոգեկան ամեն տեսակ ապրումների ժամանակ։

«Այսօր Սիմոնն ու Խատիսովը երկար խոսեցին մեր կուսակցության մասին,— մայիսի 24-ի գիշերն էր գրել։— Առաջինի համար կուսակցությունից դուրս ոչինչ չկա և ինքն էլ ոնց որ ծնվել է միայն նրան ծնրադիր երկրպագելու համար։ Երկրորդի մասին նույնը չէի ասի։ Ալեքսանդր Խատիսովը նման է այն վաճառականին, որն իր ապրանքը հեռավոր երկրներ է

առաքում այս կամ այն հուսատու ընկերության նավերով։ Վաղը կհայտնվի առավել վստահելի մի ընկերություն, շուտ կգա այդ կողմի վրա։ Առևտո՞ւրն է կարևորը նրա համար։ Այդ էլ չէի ասի։ Վաղը հնարավոր լինի լծվելու առավել շահութաբեր մի գործի, թեկուզ և հնակարկատություն կամ այգեգործություն, առանց որևէ դժվարության այդ գործը կանի։ Մոտավորապես այդպես էլ բնութագրեցի իրենց (դառնացած էի, խոսեցի անվերապահ և թերևս մի քիչ դաժան)։ Ասացի.

— Սիմոն, քեզ համար գործիքն ավելի կարևոր է, քան գործը։

— Ինչպե՞ս հասկանալ. գործի՞քս որն է, ենթադրենք, թե գործ ասելով, պիտի հասկանալ մեր նպատակը։

— Այո՛, մեր նպատակը՝ հայ ազգի ազատագրությունը։ Թող որ մի քիչ բարձր հնչի։ Գործիքն էլ կուսակցությունն է, որը պետք է ծառայի նպատակին, եթե իսկապես պիտի ծառայի...

— Իսկ չի՞ լինի, որ ասես, թե դու ինքդ ինչպես ես վերաբերվում այդ գործիքին (ի՞նչ էլ վիրավորական անուն ես մտածել)։

Եվ այստեղ ես շարադրեցի իմ հավատամքը, որին հավատարիմ եմ եղել երեկ, հավատարիմ եմ այսօր և կլինեմ վաղը, մինչև որ կնքեմ իմ մահկանացուն։

— Մեր այս կուսակցությունը,— ասացի,— ինձ համար արժեք ունի այնչափ միայն, որչափով ընդունակ է վարել մի որոշ դատ, ո՛չ ավելին։ Ինքնըստինքյան պաշտամունքի առարկա չէ կուսակցությունը։ Ուրիշ խոսքով. շաբաթն է ստեղծված մարդու համար, ոչ թե մարդը՝ շաբաթի։ Իհարկե,— ասացի,— այնքան էլ հեշտ բան չէ լինել կուսակցության մեջ և ազատ մնալ կուսակցության կաշկանդումներից։ Երկարամյա կյանքը մարդու հոգին առնում է կուսակցական կաղապարի մեջ, մարդն սկսում է ամեն ինչին մոտենալ կուսակցականորեն, կուսակցականորեն է ըմբռնում և կուսակցականորեն է լուծում խնդիրները։ Ավելին. կուսակցությունը սոսկ միջոց լինելուց բարձրանում, կամաց-կամաց դառնում է ինքնանպատակ ու ինքնագո մեծություն, այսպիսով՝ դատը ստորադասվում է նրա համար ծնված մարմնին կամ գործիքին, և կուսակցության գործունեությունը կուսակցականի համար դառնում է ինքնանպատակ (եթե չասենք՝

միայն իմ գործած մոլորությունների համար, այլև բոլոր այն մեղքերի, որ չկարողացա կանխել։

Եվ հիմա ես չգիտեմ՝ ազգիս ներողամտություն խնդրելիս լոկ սեփական մոլորություններո՞վս պիտի ներկայանամ, թե՞ նաև այն սխալներով ու մեղքերով, որոնց տերն իմ ընկերներն էին, իմ գործակիցներն ու կուսակիցները»։

Մեկ-մեկ պատահում էր՝ Քաջազնունին մի կողմ էր հրում իր օրագիր-հիշատակարանը, մտածելով, թե նրա վրա զուր տեղը ժամանակ է վատնել... Սակայն հետո վերադառնում էր, նորից գրիչը ձեռքն առնում, որովհետև գրի չառնված, չարտանետված մտքերը ներսում եռում էին և ելք էին փնտրում։

Պապաջանովն ասել էր. «Ռուսական ժամանակավոր կառավարությունը խոստացած է եղել հայերին պետություն պարգևել։ Ուրեմն, ափսո՞ս, որ այն ժամանակավոր կառավարություն էր, թե չէ, արդեն իր խոստումը կատարած կլիներ։ Բայց մի՞թե իսպառ բացառված է այդպիսի պետության ստեղծումը...»։

Եվ հիմա մեր հիշատակագիրն իրեն տանջում էր այն մտքով, թե ինչպե՞ս պիտի պահվի այդ հայկական պետությունը։

«Ազգային լիահուն կյանքով ապրելու համար մենք պետք է ունենանք մեր պետությունը,— գրեց Քաջազնունին։— Իսկ այս պետության գոյությունն ապահովելու համար էլ պետք է դաշնակցենք ուրիշ պետությունների կամ գոնե որևէ հզոր պետության հետ։ Հայաստանն այսօր թույլ է և չի բացառված, որ միշտ էլ լինելու է թույլ պետություն։ Հետևապես նրա համար ապրելը բոլոր ժամանակներում պիտի նշանակի դաշնակցել։ Բայց դաշնակցել թուրքի՞ հետ։ Այս արդեն ուրիշ բան չէ, քան ազգի վերջին մնացորդներին առաջնորդել դեպի այն սպանդանոցը, որտեղ հայոց կառափներից նրա դարավոր թշնամի թուրքը սովոր է սարքել իր քմայքների շենքը։ Ուրեմն՝ ի՞նչ, այդպես էլ անհնա՞ր պիտի լինի սեփական պետության ստեղծումն ու պահպանությունը»։

Եվ այստեղ նա հիշում էր Թիֆլիսի իր զրույցները բարեկամների ու հակառակորդների հետ, ամփոփում իր մտորումները.

«Մեր գաղափարական նախնիները, որ շատ ավելի իրատես մարդիկ էին, քան այսօրվա պարագլուխները, հայ ժողովրդի բախտը կապում էին Ռուսաստանի հետ։ Նրանք տեսնում ու

աննպատակ) փեշակ։ Ների՛ր այս կոպիտ արտահայտությունս, ուրիշ ավելի հարմար բառ չեմ գտնում։

— Եվ դու վեր ես այդ բոլորից, դու մեր կուսակցության մեջ ես, բայց նրանից վե՞ր, ինքնուրո՞ւյն...

— Ո՛չ, այդպես չպետք է հասկանալ ասածս. չեմ ասում՝ վեր եմ։ Բայց անհամեստություն մի համարիր, եթե ասեմ, որ ինքս ազատ եմ այդ կարգի թուլություններից։ Ես կուսակցական մարդ չեմ՝ բառիս նեղ իմաստով ու երբեք էլ չեմ եղել։ Եվ այդ է պատճառը, որ այսքան տարի մեկուսի եմ մնացել կուսակցության շարքերում։ Պարզապես մի հայ մարդ եմ ես, հայ հայրենասեր... Հայրենասե՛ր... Ահա մի վարկաբեկված բառ, որ ենթարկված է եղել այնքան անարգանքների, այնքան ծաղր ու ծանակի։ Որովհետև, ինչպես ռուս վիպասանն է գրել, հայրենասիրությունը երբեմն մի նպաստավոր հանգրվան է, ուր կյանքի վերջում իրենց վրանն են զարկում բոլոր սրիկաներն ու շառլատանները։ Տարբերությունն այն է լոկ, որ ես այն գլխից ինձ նվիրած եմ եղել ազգիս գործին, և այդ է իմ էությունը։ Ես սիրում եմ հայ հայրենիքը և հայ ժողովուրդը՝ այդ աղքատ, ավեր, անհամբույր, դաժան երկիրը, և այդ խեղճ, տգետ, ծածկամիտ, ետամոլ, շահասեր ժողովուրդը, որ ներսում ամբարած ունի չնաշխարհիկ արժանավորություններ։ Բայց սիրում եմ ո՛չ նրա առաքինությունների համար, այլ սիրում եմ իրեն՝ իր բոլոր թուլություններով ու թերություններով հանդերձ։ Սիրում եմ, որովհետև ինքս նրա անբաժան մասնիկն եմ զգում ինձ՝ ոսկորը ոսկորից, արյունն արյունից և իմ անձնական բախտն ամբողջովին ու անխախտ կապել եմ նրա հավաքական բախտի հետ։

. . . . . .

Երբ ես տեսնում եմ, որ Հայաստանն ու հայ ժողովուրդը, այո՛, այդ Հայաստանն ու իր հազար անգամ նահատակված և, այդուհանդերձ, ապրող ու ապրելիք ժողովուրդը դարձել են առուծախի առարկա, փառք ու պատիվ վաստակելու միջոց,— իբրև հայ ես ինձ խիստ վարկաբեկված եմ համարում։ Վարկաբեկված, որովհետև այսպես են վարվում իմ կուսակիցներից ոմանք, իմ ազգակիցները, այսինքն՝ այն ամբողջության մասնիկները, որի ծնունդն եմ ես ու արդյունքը։ Իմ եղբայրներն են նրանք։ Նրաց մեղքի տերն եմ ինքս։ Եվ սիրտս քրքրվում է ոչ

հասկանում էին ռուսական միապետության նվաճողական քաղաքականությունը, գիտեին, որ դա մեծ չարիք է հայերի համար, բայց և համոզված էին, որ հայն ուրիշ ելք չունի, քան ռուսի հովանու տակ լինելը։ Բայց այսօր մեր վիճակն ավելի վատ է, իսկ Ռուսաստանի ներկայությունը՝ ավելի անհաղթահարելի...»։

* *
*

Պատահական մի դիպվածով ես բախտ եմ ունեցել ծանոթանալու Սարդարապատի ճակատամարտի վերջին երկու օրվա վիճակը ցույց տվող ռազմական քարտեզի երկու տարբերակի՝ գծված, ի՞նչ եք կարծում, ո՞ւմ ձեռքով։ Հակոբ Կոջոյանի՛։ Մեր այն մեծ նկարչի, որին ռուս մի լավ բանաստեղծ ոգեշունչ բանաստեղծություն է նվիրել՝ ասելով. աղքատ է աշխարհի ամեն մի պատկերասրահ կամ թանգարան, որ Հակոբ Կոջոյանից նկար չունի։

Հարուստ է մեր ազգային-պետական պատմական արխիվը։ Նրա կուտակած ու մշակած, բարեխղճությամբ հետազոտողների տրամադրության տակ դրվող վավերական գանձերի առատությունը կշարժի շատ ավելի հին ու հռչակավոր նմանատիպ հաստատությունների նախանձը... Բայց մեր հարազատ արխիվն ինձ կրկնակի է հարազատացել, կրկնակի հարուստ ու թանկագին է դարձել այդ երկու քարտեզներով։ Մեր գեղանկարչության մեծ վարպետի անզուգական ձեռքի տակից ելած երկու անօրինակ ու աննախադեպ ստեղծագործությամբ։ Չէ՞ որ այդ քարտեզները ոչ միայն մեծ վարպետի ձեռքով գծված ռազմագիտական վավերականներ են, այլև մի անհերքելի վկայություն այն մասին, որ երիտասարդ Հակոբ Կոջոյանը սերտ առնչություն է ունեցել հայ ժողովրդի Սարդարապատյան հերոսամարտին։

Կոջոյանն անմիջապես մասնակցե՞լ է ճակատամարտին։ Այս հարցն անպատասխան պիտի մնա այնքան ժամանակ, քանի դեռ այդ մասնակցությունը հաստատող աներկբայելի տվյալներ չկան։ Մեծ նկարչի կենսագիրներն այնքան գիտեն, որ նա 1915—17 թվականներին որպես զինվոր եղել է Արևմտյան Հայաստանում, ապա՝ 18-ին մասնակցել է Անիի ավերակները հետազոտող

արշավախմբին։ Սակայն այս վերջինը կարող էր լինել միայն Անին թուրքերից ետ խլելուց հետո, ուրեմն՝ նաև Սարդարապատյան ճակատամարտից հետո։ Իսկ ի՞նչ էր անում ճակատամարտի օրերին, ինչո՞ւ մեծ մարդու կենսագրության մեկ տարին սպրդել է կենսագիրների աչքից։

Կար ժամանակ, տխուր ու անփառունակ ժամանակ, երբ առնվազն կասկածելի անցյալ էր համարվում հայ մարդու մասնակցությունն այդ ճակատամարտին։ Հայ ժողովուրդն իր պետականության կորստից հետո, դարերի մեջ բազմաթիվ թշնամիների դեմ ունեցած մեծ ու փոքր բախումներից միայն մեկում տարել է իսկական հաղթանակ, հաղթանակ, որը և դարձել է նրա ապագա պետականության հիմքն ու ինքնուրույն գոյության հզոր խարիսխը... Եվ մարդիկ զգուշանում էին այդ հաղթանակի մասին խոսելուց, առավել ևս՝ թաքցնում էին իրենց ունեցած կարևոր կամ վճռական մասնակցությունն այդ ճակատամարտին...

Քարտեզների վրա նկարչի ինքնությունը վկայված է այսպես. «Чертил чиновник в [оенного] в [едомства] Я. Коджоянцъ» («Գծագրել է ռազմական գերատեսչության աստիճանավոր Հ. Կոջոյանցը»)։

Քարտեզների ճշգրտությունը հաստատում է «Հայկական դիվիզիայի ավագ ադյուտանտ պոդպորուչիկ Ահարոնյանը»։

Առաջին քարտեզում ներկայացված է պատերազմող կողմերի դասավորությունը մայիսի 27-ի ժամը 15-ին։ Այստեղ երկաթգծի ուղղությամբ պատերազմական գիծը գտնվում էր Արաքս կայարանից արևելք, քանի որ կայարանը դեռևս թուրքերի ձեռքին էր։ Կայարանից հարավ, մինչև Արաքս գետի եղեգնուտները, համարյա ուղիղ գծով, դասավորված էին թուրքական երկու գնդեր՝ ամրացված քրդական հեծելազորով ու տեղական մահմեդական բաշիբոզուկներով։ Կարա-բուրուն կայարանում, Արաքսի թիկունքում, պահեստային ուժեր կային, որոնք օգնության պիտի հասնեին արաքսցիներին, եթե սրանք չդիմանային հայկական զորքերի ճնշմանը։ Երկաթգծից հյուսիս, մինչև Արագածի փեշերը, Գելիպոլու կամ Դարդանելյան դիվիզիայի գնդերն էին զբաղեցնում։ Այստեղ էին՝ հարավից հյուսիս՝ 106-րդ, 107-րդ և 108-րդ գնդերը, որոնք աջից ու ձախից օժանդակ ուժեր էին ստացել Կարաբեքիր փաշայի դիվիզիայից։ Վերջինիս

մեկ զորագունդն էլ Թալիշից հարավ-արևմուտք գտնված Ներքին Քալակուտ գյուղից արևելք բավական երկար դիրք բռնած սպասում էր Մակուի գնդից մնացած հայկական գումարտակին։ Նրանից հարավ նորից շրջանցումով դեպի Թշնամու թիկունքն էր շտապում Երզնկայի գնդից կազմված գումարտակը՝ Խնուսի գնդի մնացորդների հետ։ Գրավոր աղբյուրներն ու փաստաթղթերը ոչինչ չեն ասում, և ականատեսներ էլ չկան, որ պատմեն, Բե ինչպես է պատահել, որ գնդապետ Կարո Ղասաբբաշյանը (նույն ինքը՝ Հասան Փաշայանը) իր 600—700 հոգիանոց գումարտակը, նախորդ օրվա հերոսական զորաշարժից հետո, նորից բաժանել է երկու մասի։ Չէ՞ որ Կոշի և Խզնաուզի մոտ Երզնկայի ու Մակվի գնդերի մնացորդներից կազմված զորաջոկատո՛վ կատարեց զորաշարժը։ Նրա հետ էր ռազմաճակատի հրամանատար Դանիելբեկ Փիրումյանի ավագ որդին՝ պոդպորուչիկ Միքայելը։ Նրանք երկուսով գումարտակը տարան վճռական հարձակման և թշնամուն այնպիսի հարված հասցրին թիկունքից, որ նրա շարքերը երերացին, ասկյարները, խուճապի մատնված, չգիտեին դեպի ո՛ւր դարձնեն իրենց հրազենների փողերը, երբ թիկունքից հանկարծական համազարկերով Հասան Փաշայանի քաջերն էին շշմեցրել, ճակատից էլ, ճանապարհին ամեն ինչ ջարդելով, առաջ էին շարժվում Պողոսբեկ Փիրումյանի մահապարտները։

Ներքին Քալակուտից արևելք հայտնված թուրքական զորագունդն ու Մակվի գնդի մնացորդներից կազմված հայկական ջոկատը բախվել են անպայման։ Եվ պետք է ենթադրել, որ հայկական ջոկատն այստեղ անհաջողություն է կրել մեծաքանակ թշնամուց։ Թերևս այդ ջոկատի հրամանատարն է եղել Միքայել Փիրումյանը։ Իր նորակազմ գումարտակի մի փոքրիկ մասը նրան տրամադրելով՝ գնդապետ Հասան Փաշայան-Ղասաբբաշյանը գումարտակի հիմնական ուժերով առաջ է գնացել՝ նպատակ ունենալով նորից անցնել նահանջող թշնամու թիկունքը և կրկնել մայիսի 26-ի ավերածությունը։

Ներքին Քալակուտի մոտ հաջողության հասած թուրքերը շրջապատել ու գերի էին վերցրել հայկական ջոկատի առաջապահներին, որոնք խիզախորեն դիմադրեցին մինչև վերջին հնարավորությունը։

Գերիների մեջ էր նաև ջոկատի հրամանատար պոդպորուչիկ Միքայել Փիրումյանը։

Մայիսի 27-ի ցերեկվա ժամը 3-ին (15-ին), ըստ առաջին քարտեզի, Մակեդոնի ու Հովսեփի հեծյալ ջոկատները նորից դիրքեր էին գրավել Արաքսի ափին, Կարա-բուբյանդ բլրի մոտերքում, Ղուրդուղուլիից հարավ-արևմուտք։ Հավանաբար նրանք այդ օրը խնդիր են ունեցել կասեցնելու թշնամու առաջխաղացումը գետափով։ Արաքս կայարանից արևելք նոր հարձակման անցած թուրքերի դեմ կանգնած էին Պերեկրյոստովի պարտիզանները։ Իսկ նրանից հյուսիս ամբողջ ճակատով, թուրքական 36-րդ դիվիզիայի դեմ ճակատում էին Պողոսբեկ Փիրումյանի գնդի գումարտակները, առաջինը՝ հյուսիսում, երկրորդը՝ կենտրոնում, երրորդը՝ հարավային եզրում։ Նրանց թիկունքում պահեստի ուժերն էին դասավորված՝ մի վաշտ Իգդիրի գընդից, մյուսը՝ Կարսի գնդից։

Այսքանը՝ մայիսի 27-ի ժամը 15-ին։

Երկրորդ քարտեզը ներկայացնում է հակառակորդ ուժերի, ավելի ճիշտ՝ հայոց զորքի դասավորությունը մայիսի 27—28-ի գիշերվա առումով։ Ասում եմ՝ հայոց զորքի, որովհետև այնտեղ, քարտեզի սահմաններում, այլևս թուրքեր չկան. նրանք խուճապահար, կոտորվելով ու գերի ընկնելով մեջտեղից վերացել էին, և քարտեզագիր-նկարիչը հարմար է գտել ցույց տալու միայն հաղթանակած, հայրենի հողը կիլոմետր առ կիլոմետր ազատագրած հայ զորքի դասավորությունը։ Այնտեղ զորքի մի մասը պահեստային է՝ Մակվի գնդի մնացորդները Թալիշում, Երզնկայի գնդից կազմված գումարտակն ու Հինգերորդ գնդի երկրորդ գումարտակը՝ Ջիմնի ղրի ու Թուլքի թափայի ստորոտներում։ Ճակատի կենտրոնական մասում Մահապարտների (Հինգերորդ գնդի) առաջին ու երրորդ գումարտակները թուրքերի Դարդանելյան դիվիզիայի սնափառ գնդերին հալածելով հասել են Ղարա-բուրուն գյուղի ու Ղարա-բուրուն բլրի մոտերքը։ Աջ թևում Պանդուխտի հեծյալ ջոկատը, Ներքին Թալիշն անցնելով, թուրքերին հետապնդում է Քյուլ-թափայի արևմտյան ստորոտներում։ Ձախ թևում գնդապետ Պերեկրյոստովի պարտիզաններն են առաջ գնում՝ արդեն նվաճած Մաստարա և Կարա-բուրուն կայարանները։ Թուրքերը ոչ թե նահանջում, այլ ճողոպ-

ղում են՝ լքելով իրենց դիրքերը, զենքերն ու զինամթերքը, պարենն ու կողոպուտով կուտակած հարստությունները։

Մայիսի 29-ի երեկոյան Թիֆլիս հասավ Երևանյան ռազմաճակատի հրամանատար Մովսես Սիլիկյանի հեռագիր-զեկույցն այն մասին, որ «Եռօրյա համառ մարտերից հետո Սարդարապատի ուղղությամբ թուրքերը, թևերից շրջանցված ու ջարդված, ետ են շպրտվել բոլոր դիրքերից։ Մեր զորքերը հետապնդում են և արդեն հասել են Ղարաղուլա կայարանի ու Սոգութլու գյուղի գիծը։ Թուրքերի կորուստները նշանակալից են...»։

Զորավարը Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահի տեղակալ Կարմիկյանին հաղորդելու բարի լուր ուներ նաև Երևանյան ճակատի մյուս ուղղության՝ Բաշ-Ապարանի վերաբերյալ. «Միաժամանակ Բաշ-Ապարանի ուղղությամբ երկու գունդ զորք ու թնդանոթներ ունեցող հակառակորդը, որ նեղել էր մեր առաջապահ հեծյալ ջոկատներին Կաբափոր գյուղ-Ղարաքիլիսա գծի վրա, երկօրյա համառ մարտերից հետո, մայիսի 29-ի երեկոյան դեմ, գլխովին ջարդված ետ է շպրտվել դեպի Թանագեր-Մազսաթիս բլուրները՝ կուվի վայրում թողնելով 200 դիակ (հեռագրում հիշատակվող Կաբափոր, Թանագեր և Մազսաթիս տեղանունները պարզել հնարավոր չեղավ.— Բ. Ու.)։ Մենք գրավել ենք երկու գնդացիր, հարյուրից ավելի հրացան և ուրիշ շատ ռազմավար։ Այդ մարտերում մեր կորուստներն աննշան են։ Զորքի ոգին հրաշալի է։ Այս պահին մեր զորաջոկատներն ոչնչացնում են ուժեղ դիրքեր և սահմանազատման գիծն են հաստատում։ Գեներալ Սիլիկյան»։

Հայոց զորքը հետապնդում էր խուճապահար թշնամուն։

Սարդարապատյան ռազմաճակատի հաղթանակով ոգևորված հայ ժողովուրդը,— տեղացի ու գաղթական, կին ու տղամարդ, ծեր ու երեխա,— ապրում էր այն ցնծությունը, որ չէր տեսել դարեր ի վեր։ Չէ՞ որ պետական ինքնուրույնությունը կորցնելուց հետո առաջին անգամ հայը հաղթել է իր թշնամուն, հաղթել է թուրքին՝ բոլոր հին ու նոր թշնամիներից ամենադաժանին ու ամենաերդվյալին։

Թուրքը ջարդվել էր Սարդարապատում և գլխապատառ փախչում էր հետապնդող Դանիելբեկ Փիրումյանի գնդերի առաջ։ Հաղթանակի մեծ երջանկության ու անձնական վշտի կրակնե-

ռում տապակվող զորավարի արտասվալից հայացքն արդեն շոյում էր Ալեքսանդրապոլի բերդի աշտարակները։ Իսկ դենը հայոց բզկտված հողերն էին՝ Իգդիրն ու Սուրմարին, Կարսն ու Սարիղամիշը, հայոց կիսավեր ավաններն ու շեները...

* *
*

Մայիսի 26-ին Հովհաննես Քաջազնունին օրվա իր տպավորությունները հանձնեց թղթին, և նրա գրառումների մեջ ցավ կար ու հիասթափություն։

«Մենք ամեն ինչ իմանում ենք բոլորից վերջը,— գրել է նա։— Նույնիսկ մեր կողքին, մեր քթի տակ տեղի ունեցող դեպքերը մեզ հայտնի են դառնում այն ժամանակ, երբ նրանք այլևս գաղտնիք չեն ոչ ոքի համար։ Այսօր ժամը 7-ին մենք գերմանական ներկայացուցիչ Ֆոն Լոսովից ստացանք նամակ, որով զորավարը հաղորդում է, թե արդեն հայտնի ու անհերքելի տեղեկություններից իր համար պարզ է դարձել, որ լուծարկվում է Անդրկովկասյան միացյալ կառավարությունը։ Եվ քանի որ Գերմանական կառավարությունն իրեն Բաթում էր ուղարկել հետևելու Անդրկովկասյան միացյալ հանրապետության շահերին, իսկ հիմա այդ հանրապետության գոյությունն այլևս հարց էլ չէ, ուրեմն ինքն ավելորդ է համարում Բաթումում ժամանակ վատնել և հեռանում է այստեղից։

Ոնց որ սառ ջուր լցնեն մեր ոչ տաք-ոչ պաղ գլուխներին։ Ինչպե՞ս թե լուծարկվում է Անդրկովկասյան միացյալ հանրապետությունը։ Բայց չէ՞ որ մենք էլ այդ հանրապետության հավասարիրավ մասն ենք և նրա կառավարության գործնական անդամները։ Այդ ինչպե՞ս է լուծարկվում ամբողջը, երբ մենք նրա մասը, անտեղյակ ենք։ Մենք, որ, իբր, նրա անունից այստեղ շաբաթներով բանակցություններ ենք վարում։ Մե՛նք չգիտենք, իսկ ի՞նչ բանի են թիֆլիսյան մեր հայ գործակիցները։

Ալեքսանդր Խատիսովի հետ վազեցինք նավահանգիստ։ Գերմանական «Միննա Խորի» նավով էր մեկնում գեներալ Լոսովը։ Նա մեզ ընդունեց իր նավախցիկում և, մեր պաղատանքներն ուշադիր ունկնդրելով, խոստացավ իր կառավարության առաջ պաշտպանել մեր նվազագույն արդար պահանջները։ Դրա հա-

մար նա խորհուրդ տվեց նաև, որ մենք մեր Ազգային խորհրդի ներկայացուցիչներին ուղարկենք Բեռլին։

Նավից հյուրանոց վերադարձանք գիշերվա ժամը 12-ին։ Այստեղ էլ իմացանք, որ միացյալ հանրապետության լուծարկումը կատարված իրողություն է, և Բաթում է ժամանել Վրաց Ազգային խորհրդի նախագահ Նոյ Ժորդանիան։ Վաղը, մայիսի 26-ին, Վրաստանը հռչակելու է իր անկախությունը։ Ժորդանիան եկել է Չխենկելիի հետ այդ առթիվ պայմանավորվելու մի քանի կարևոր հարցերի շուրջ։

Խատիսովը վաղուց հանաչում էր Ժորդանիային, նույնիսկ իր լավ բարեկամն էր համարում նրան և համոզված էր, որ, հանուն հին ու անկեղծ մտերմության, նա իրեն կարող է անել ամեն տեսակ դիջումներ։ Հուսավառ վազեց նրա մոտ և կես ժամ հետո վերադարձավ՝ հուսահատորեն հաղորդելով հետևյալը.

«Ժորդանիան պատմեց Թիֆլիսում իշխող տրամադրությունների մասին, ասաց, որ հայերը շարունակում են պատերազմել թուրքերի դեմ, որ թուրքերը սանձարձակորեն շարունակում են իենց առաջխաղացումը և՝ որ այդպիսի պայմանների մեջ վրացիներին ուրիշ բան չի մնում, քան հայտարարել Վրաստանի անկախությունը։

— Ինչպե՞ս,— բացականչեցի ես,— չէ՞ որ մենք և դուք միասին պատերազմի մեջ ենք, ընդհանուր պատերազմի մեջ՝ ընդհանուր թշնամու դեմ։ Դուք ինչպե՞ս կարող եք լքել մեզ, երբ թափվում է մեր արյունը։ Մի՞թե դա ազնիվ բան է։

— Ազնիվ բան է այն, ինչ օգտակար է ժողովրդին,— պատասխանեց Ժորդանիան։

— Այո։ Բայց մե՞նք։ Մենք ժողովուրդ չե՞նք։

— Մենք չենք կարող խեղդվել ձեզ հետ միասին,— հանգիստ խոսեց Ժորդանիան։— Մեր ժողովուրդն ուզում է փրկել այն, ինչ որ հնարավոր է փրկել։ Դուք էլ պարտավոր եք համաձայնության գալ, լեզու գտնել թուրքերի հետ։ Ուրիշ ելք չունեք»։

Մի ժամ հետո Ժորդանիան մեկնեց Թիֆլիս՝ արդեն բացվող օրը հայտարարելու որպես իր երկրի մեկուսացման ու անկախության օր։

Ես ու Խատիսովը միասին անցկացրինք անքուն գիշերվա մնացած մասը։ Մենք խոսում էինք մեր անելիքների մասին և որոշակի հարցերի վրա կանգ չէինք կարող առնել, որովհետև չգի-

տեինք, թե ի՞նչ են մտածում մերոնք Թիֆլիսում։ Կամ մտածո՞ւմ են, արդյոք, որևէ լուրջ քայլ կատարելու մասին։ Չէ՞ որ նրանք այսքան ժամանակ մի կարգին զգացնել չտվին անգամ իրենց գոյությունը։ Իսկ Վրաստանի անկախության կողքին եթե որևէ անելիք ունեցող կա, դա էլ մենք ենք։ Մենք՝ լքված բոլորի կողմից, թշնամու բաց երախի դեմ։

Զրույցի ժամանակ ես հիշեցի Անդրկովկասյան կառավարության ծննդի օրերի մեր հուզումները։ Այն ժամանակ մենք մեր կուսակցության մեջ միաձայն ու համերաշխ էինք՝ համոզված, որ մեր ժողովրդի փրկությունը նոր ստեղծվող Անդրկովկասյան միացյալ կառավարության ու Անդրկովկասի անկախության մեջ է։ Անդրկովկասի անկախությունն այն ժամանակ և այսօր էլ ոչ այլ ինչ է, քան ամեն տեսակ հարաբերության խզումը Ռուսաստանի հետ։ Այո՛, մենք միահամուռ ու համերաշխ էինք մեր կուսակցության կենտրոնական կորիզի մեջ։ Որովհետև այդ կորիզը կազմվել էր համախոհներից և խնամքով ու վարպետորեն նրանից դուրս էինք արել կամ դուրս էինք թողել ուրիշ կերպ մտածողներին։ Իսկ, ա՛յ, մեր հարևան վրացիները ճակատ ճակատի էին զարկում՝ երկու հոսանքի վերածված, և թվում էր, թե նրանց պայքարին վերջ կամ հաշտություն չի լինելու։ Նոյ Ժորդանիան ու Գեգեչկորին գլխավորում էին այն հոսանքը, որը պահանջում էր շարունակել պատերազմը Թուրքիայի դեմ և պաշտպանել կապը Ռուսաստանի հետ։ Նոյ Ռամիշվիլին ու Ակակի Չխենկելին, ընդհակառակը, պահանջում էին հաշտություն կնքել Թուրքիայի հետ և անջատվել Ռուսաստանից, հայտարարել անկախություն։ Սեյմում երկու օր տաք վեճեր էին գնում այս երկու հոսանքների միջև։ Մենք դիտում էինք նրանց կռիվը և հպարտանում, որ ինքներս չենք կռվում։ Մեկն էլ չկար, որ հարցներ, թե դուք ինչի՞ վրա պիտի կռվեք։ Չէ՞ որ դուք սեփական կարծիքներ չունեք, որ հանեք իրար դեմ, քննեք և մեկը հավանեք ու մերժեք մյուսը։ Չէ՞ որ մենք պարզապես հոսանքի բերանն էինք ընկել և գնում էինք ակամա. Թուրքիան մեզ հետ հաշտության բանակցություններ վարելու համար պահանջում էր կտրվել Ռուսաստանից, հայտարարել Անդրկովկասի անկախություն, և մենք ենթարկվել էինք մեր դարավոր թշնամու այդ պահանջին ու չէինք էլ ուզում հասկանալ, թե մեզ համար ի՞նչ աղետ է «անկախությունը»։

Իսկ երկփեղկված վրացիները վիճում էին։

Երբ հաղթեց անկախության ու Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության կողմնակից հոսանքը, մենք մտածում էին, թե մյուս թևը պիտի լքի քաղաքական կյանքի ասպարեզը, հեռանա։ Այդպես չեղավ։ Նոյ Ժորդանիան եկավ համագործակցելու Նոյ Ռամիշվիլու և Ակակի Չխենկելու հետ։ Մեր սրամիտներից մեկն այն ժամանակ ասում էր. «Հիմա երկու Նոյ (Նոյ Ժորդանիա և Նոյ Ռամիշվիլի) ո՞նց պիտի համակերպվեն ու համատեղվեն մեկ տապանում։ Հետագա դեպքերը եկան ապացուցելու, որ նրանք՝ հակառակորդներ, նույնիսկ գաղափարական թշնամիներ, անպայման համակերպվում ու համատեղվում են, եթե հարցը վերաբերում է իրենց ազգի փրկությանը։ Իսկ մենք աշնանը Թիֆլիս եկած Ստեփան Շահումյանի հետ չկամեցանք նստել բանակցությունների սեղանի շուրջ, չնայած մեր շարքում կային աշքաբաց ու մտածող մարդիկ, որոնք պահանջում էին դաշնակցել այդ իմաստուն հայի հետ, որն արդեն ուներ Ռուսական նոր կառավարության արտակարգ լիազորությունը։

Խատիսովը կարծես կորցրել էր դատելու ընդունակությունը, միայն երբեմն-երբեմն գլուխն էր օրորում՝ հայհոյելով մեր ցածհոգի դաշնակիցներին, որոնք ահա այսպես լքում են մեզ, երբ հայ ժողովուրդը գտնվում է կործանարար հեղեղի բերանին։

— Պատմությունը մեր նախահորն է ընծայում մարդկային ցեղը համաշխարհային ջրհեղեղից փրկելու պատիվը,— ասացի ես։— Իսկ մենք այդպես էլ մի Նոյ չունեցանք, որ այս ջրհեղեղի մեջ հասկանար միակ ճշմարիտ անելիքը և ազգը տաներ դեպի փրկության եզերք։

— Է՜,— քնկոտ հորանջեց Ալեքսանդր Խատիսովը,— Նոյ կգտնվի, տապա՞ն չկա, տապա՞ն։

Եվ գնաց քնելու՝ երևի իբրև Նոյ, որին մնում է միայն տապանի հոգսը քաշել։

Նախաճաշին Խատիսիսովն ինձ, իբրև գաղտնիք, հայտնեց, որ երեք օր առաջ ինքը զրույց է ունեցել գերմանացի կոմս Շուլենբերգի հետ։ Այդ ձեռներեց ու ճարպիկ մարդը, իբր, գերմանական ռազմաքաղաքական հանձնախմբի կազմում եկել է Կովկաս և կարող է օգնել հայերիս, եթե մենք խոստանանք պահանջվող արտոնություններ տալ և օժանդակել Լոռիի շրջանում գործող գերմանացի գործարանատերերին ու պանրագործներին։

Ես անտեղյակ չեմ Շուլենբերգի արկածախնդրություններից։ Պատերազմից առաջ Թիֆլիսում գերմանական հյուպատոսն էր և, ասում են, բարձր հասարակության հավաքներին միշտ էլ իր սերն ու հիացմունքն էր արտահայտում Կովկասի ու Ռուսաստանի հանդեպ։ 1914-ին Էնվերի ու Էհսան փաշայի հետ, իբրև խորհրդատու սպա, թուրքական բանակն էր բերել Կովկասի վրա։ Զախողված պատերազմից հետո անհետացավ ասպարեզից և հիմա վերստին հայտնվել է քաղաքական շառլատանության ասպարեզում։ Հայ ժողովրդի փրկությո՞ւնը կազմակերպելու նպատակով։

— Իսկ ինչո՞ւ հիշեցիր դրան,— հարցրի ես։— Գուցե գիշերվա զրույցից հետո ուզում ես դրան կառչել իբրև նոյան տապանի՞։

Հարցս տվել էի կատակի տոնով, սակայն ինքը չէր կարող չըզգալ խորքում եղած արհամարհանքը։ Թողեց, հեռացավ։

Այսօր թուրքաց պատվիրակությունը մեզ հանձնեց իր կառավարության վերջնագիրը, որով երեք օր ժամանակ է տրվում՝ պատասխանելու իրենց այն պահանջներին, որոնք մեզ էին ներկայացվել բանակցությունների առաջին իսկ նիստին։

Ի՞նչ պատասխան պիտի տանք։ Ի՞նչ գիտենք ճակատի վիճակից, ազգի տրամադրությունից։ Ազգային խորհուրդն ինչպե՞ս է ընդունել վրաց անկախության հռչակումը։

Այսօր երեկոյան ուղևորվում ենք Թիֆլիս»։

* *
*

Իսկ Թիֆլիսում ու Բաթումում հայոց դրամայի վերջին արարն էր բեմադրվում։

Նույնն էին գործող անձերը։ Նույնը չէր, սակայն, վիճակը։ Նույնը չէին փոխհարաբերությունները գործող անձերի միջև։

Մայիսի 26-ի երեկոյան Բաթումի խորհրդաժողովի թուրքական պատվիրակության ղեկավար Խալիլ բեյն Անդրկովկասյան պատվիրակությանն էր ներկայացրել իր կառավարության վերջնագիրը, որին պատասխան պիտի տրվեր երեք օրվա ժամկետում։ Թուրքական պատվիրակությունը դեռևս թարմ տեղեկություն չուներ ռազմաճակատի վիճակից, ներքուստ այն համոզ-

մանն էր, թե իրենց զորքերը ջարդելով առաջ են շարժվում, և հարկ է, որ իրենք էլ վերջնագրի մեջ հակառակորդ-դրուցակիցների հետ խոսեն ջարդող-հաղթողի տոնով։

Երեկոյան ժամը 8 և 45 րոպեին ստացած վերջնագրի հետ Զիեննկելին անմիջապես ծանոթացրեց իր հայ ու ադրբեջանցի գործակիցներին։ Նրանք էլ, իրենց հերթին, անտեղյակ ռազմաճակատի վիճակին, ավելի ճիշտ՝ համոզված, որ այնտեղ թուրքերն իսկապես ջարդելով առաջ են գնում ու այստեղ՝ դիվանագիտության ոլորտում, իրենց այդ առաջխաղացումն են արդարացնում, կարդացին սպառնալից վերջնագիրը և առաջին պահ մնացին քարացած։ Ահա այդ փաստաթուղթն իր մի երկու այն կարևոր մասերով, որոնք վերաբերում են Հայաստանին։

Ասում է՝ հարյուր հազարավոր թուրքեր ու մահմեդականներ Բաքվում ու շրջակայքում գտնվում են հեղափոխական կոչվող իշխանության տիրապետության տակ և, իբր, դա ծանրագույն աղետ է, որն սպառնում է նաև հարևան ու ոչ հարևան երկրամասերի մահմեդականությանը։

Կովկասի մյուս մասերում, ուր հեղափոխական կոչվող իշխանությունը դեռևս ոտք չի դրել, դարձյալ տագնապալի է վիճակը, քանի որ այդ վայրերում էլ ավազակախմբերն են մոլեգնել, և թուրք խաղաղ բնակչության բախտն առավելապես արժանի է ուշադրության։

Այնուհետև այս ամենի համար «տագնապած» թուրքական կողմն անցնում է հիմնականին. «Դուք պիտի ընդունեք, սակայն, պարոն նախագահ, որ ոչ մի կառավարություն, որ արժանի է այդ անվան, չէր կարող անտարբեր դիտել իր երկրի սահմանակից հողում անպատիժ կերպով կատարվող նման ոճրագործությունները, և դուք ընդունում եք, իհարկե, որ Օսմանյան կայսերական կառավարության դրությունը հատկապես փափուկ է Կովկասը քայքայող անիշխանության հարցում, որովհետև դա, մի կողմից, վերաբերում է նույնպես ու հիմնականում կայսրության ազգաբնակչության հետ ցեղային ու կրոնական ամենասերտ կապեր ունեցող մահմեդական բնակչության անվտանգությանը, մյուս կողմից՝ ընդհանուր պատերազմի պահանջները կայսերական կառավարությանը դնում են նրա զորքերը Կովկասի վրայով անցկացնելու և երկաթուղիով ըստ հնարա-

վորին արագորեն մյուս ռազմաբեմը փոխադրելու անհրաժեշտության առաջ...»։

Ինչպես երևում է վերջնագրի այս հատվածից, Օսմանյան կայսերական կառավարությունը, իր կոչման նկատմամբ ունեցած հարգանքից, իր պատվախնդրությունից և կովկասյան հավատակիցների ու ցեղակիցների բախտի նկատմամբ տածած մտահոգությունից չէր կարողանում հանգիստ նստել և ստիպված էր իր զորքերը շտապ կարգով փոխադրել մյուս ռազմաբեմը։ Ուստի և՝ «Այս վերջնագրով Թուրքիան պահանջում է իր օգտին անջատել հետևյալ երկրամասերը՝ Նախիջևանի նահանգը (Օրդուբադի ու նրան կից աննշան շերտի բացառությամբ), Շարուր-Դարալագյազի գավառի կեսը, Երևանի նահանգի կեսը (Երևան քաղաքը մնում է Հայաստանի սահմաններում), ամբողջ Սուրմարիի գավառը, գրեթե ամբողջ Էջմիածնի գավառը՝ Էջմիածին քաղաքով, Ալեքսանդրապոլի գավառի մեծ մասը Ալեքսանդրապոլ քաղաքով, և Ախալքալաքի ու Ախալցխայի գավառներն ամբողջովին։ Պահանջում է նաև իր զորքերի ազատ փոխադրությունը բոլոր երկաթուղիներով»։

Հիմա՛ որ հայ պատվիրակները կարող էին ուրախանալ. առայժմ Երևանը պիտի մնա Հայաստանին։ «Առայժմ» եմ ասում, որովհետև Թուրքերին առժամանակ անհանգստացնում էր «մյուս ռազմաբեմը», որ տարածված էր Ատրպատականից մինչև Հյուսիսային Կովկաս՝ «կայսրության հետ ցեղային ու կրոնական ամենասերտ կապեր ունեցող իր բնակչությամբ»։ Նրանք գնում էին այդ բնակչությանն իրենց հետ միացնելու, և այդ միջոցառումը շուտափույթ իրականացնելու համար այդոր իրենց պետք էին Անդրկովկասի բոլոր երկաթգծերն ու մնացած ճանապարհները։ Վաղն արդեն կհայտարարեն, թե դուք, հայե՛ր, գտնվում եք մեր և «կայսրության հետ ցեղային ու կրոնական ամենասերտ կապեր ունեցող բնակչության» արանքում, դուք խանգարում եք մեր միությանը և պարտավոր եք հեռանալ մեր արանքից, քանի մենք ձեզ հետ չենք վարվել այնպես, ինչպես 1915-ին վարվեցինք ձեզ հետ «ցեղային ու կրոնական ամենասերտ կապեր ունեցող» արևմտահայության հանդեպ։

Այժմ արդեն միայն ձևականորեն Անդրկովկասյան կոչվող պատվիրակությունը գնացք նստեց Թիֆլիս գնալու համար. պատվիրակության ազգային յուրաքանչյուր մասը պիտի իր աղ-

գակից զեկավարների հետ խորհրդակցեր ու որոշեր Թուրքերի վերջնագրին տալիք պատասխանի իր բաժինը։

Թիֆլիս հասնելուն պես նրանք իմացան, որ մայիսի 26-ի կեսօրվա դեմ վրացիները հռչակել են իրենց անկախությունը և ազգային կառավարություն կազմելու եռուզեռի մեջ են։

Թերթերը հայտարարում էին, որ Գերմանիան ճանաչել է Վրաստանի անկախությունը, երաշխավորում է նրա անձեռնմխելիությունը և հանձն է առնում միջնորդի դերը Թուրքիայի ու Ռուսաստանի հետ վարելիք բանակցություններում։

Թիֆլիս էին ժամանում Գերմանիայի ներկայացուցիչները։ Նրանք չէին կարող ժամանակը փախցնել. գեղջկական խոսքով ասած՝ ժամը տարի պիտի կերակրի։ Կոմս Շուլենբերգը Բաթումում խատիսովին իր ծառայությունն առաջարկած այդ բախտախնդիրը, գերմանական զինվորական միսիայի գլուխն անցած, այցելեց Վրաց ազգային խորհրդի նախագահ Չխեիձեին, և սկսվեց երկու դաշնակից երկրների դիվանագիտական կյանքի մեղրամիսը։ Առաջին իսկ բանակցությունից հետո Վրաստանի ապագա կառավարության հավանական անդամներից մեկը՝ Ի. Ծերեթելին, նրբանկատ մի մարդ, մամուլի համար տված հայտարարության մեջ ասում էր. «Գերմանիայի ծրագիրն է Ռուսաստանի ծայրերկրներից ստեղծել անկախ պետություններ, որոնք անջատ-անջատ ընդունակ լինեն ապրելու, բայց անզոր՝ հաղթելու»։

* *
*

Վեհիբ Փաշան Ալեքսանդրապոլից Բաթում հասավ մայիսի 27-ին՝ իր հետ տանելով Սարդարապատի դաշտում Թուրքական բանակի կրած խայտառակ պարտության բոթը։ Ամենայն հավանականությամբ մայիսի 26-ը նրան համոզել էր, որ հայերն արդեն վճռական ճակատամարտի նետված՝ անպայման պիտի հանեն նախորդ բոլոր պատերազմների ու զրկանքների վրեժը, և նրանց հաղթական առաջընթացին Թուրքական բանակն անզոր պիտի լինի դիմակայելու պատերազմի դաշտում։ Հակառակ պարագայում դժվար թե գլխավոր հրամանատարն իր բանակը թող-

ներ խուճապահար ու գլխապատառ փախչելիս և ինքը վազեր Բաթում։

Վեհիբն շտապեց Բաթում՝ պատերազմի դաշտում ճաշակած պարտության խայտառակ շարունակությունը դիվանագիտական սեղանի շուրջ կանխելու համար։

Վեհիբ փաշան ու Խալիլ բեյը մայիսի 27-ի իրենց ապրումները գաղտնի չեն պահել։ «Ջումհուրրիեթի» էջերում Խալիլն այդ օրվա մասին իր հուշերն է տպագրել և այնտեղ Օսմանյան խորհրդարանի նախարարը՝ նույն ինքը Բաթումի խորհրդաժողովի թուրքական պատվիրակության ղեկավար Խալիլ բեյը, հաղորդում է, որ ինքն ու Վեհիբը եթե ուրիշ ոչինչ էլ արած չլինեին Բաթումում, բավական էր, որ հաջողացրին Ադրբեջանի իրենց ցեղակից-հավատակիցների օժանդակությամբ հայերին ու վրացիներին իրարից բաժանելը։ Ապա, դառնալով մայիսի 26-ի ճակատամարտից հետո Վեհիբի Բաթում ժամանելուն, ասում է՝ «Վեհիբն այլայլված էր ու ջղային»։

— Ամա՜ն, Խալիլ բեյ,— ասաց ինձ,— ո՞ւր են այդ հայ պատվիրակները. հետներն ավարտենք բանակցությունները, հաշտություն կնքենք։

— Ի՞նչ է պատահել, այ Վեհիբ փաշա, ի՞նչ ես քեզ կորցրել։ Թե.

— Գիտե՞ս, հերիֆները ոնց են կռվում։ Սարդարապատում ջարդեցին մերոնց։ Տասներկու հազարանոց մեր բանակն առաջներն արած քշում են, և պահեստի ուժ չունենք այլևս։ Իսկ դու պիտի լավ իմանաս, որ Մահամեդի նահանջի տամարը բռնել է, մեկ էլ շունչ է առնելու Էրզրումում։

Ես հանգստացրի նրան, ասացի.

— Փաշա, սիրելիս, այս վիճակով հայերին թե երևաս, նրանք հաշտության չեն գա։ Գնա՛, լվացվի՛ր, հանգչի՛ր մի քիչ, քեզ կարգի՛ բեր... Եվ մենք նրանց Սարդարապատի մասին ոչ մի խոսք էլ չենք ասի»։

Հետագայում Վեհիբ փաշան էլ Եգիպտոսում, մի սրտաբաց զրույցի ժամանակ, խոստովանել է, որ ինքն ու Խալիլ բեյը հայերի հետ բանակցելուց առաջ պատրաստ են եղել նրանց զիջելու Ալեքսանդրապոլը, քանի որ հայոց զորքի ճնշումին դիմադրելու ոչ մի ուժ չեն ունեցել։

Եվ ահա այսպես վհատ ու գլխակորույս Վեհիբը՝ թուրքաց

Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատարը, պատրաստվում էր հանդիպելու հայ պատվիրակների հետ։ Խալիլը նրան նորից հիշեցրեց, որ Սարդարապատի խայտառակության մասին ոչինչ չասի։

— Կամ այնպես խոսիր, որ բան էլ չհասկանան,— խորամանկ զգուշացրել էր նա։

Եվ ֆերիկ-մարշալ Վեհիբը, որ քնելու-հանգստանալու փոխարեն մտածել-որոշել էր անելիք-ասելիքը, լեզվի ծայրով ծըլթացրել էր, այսինքն՝ հին աղվեսին խորամանկության դասե՞ր ես տալիս։

Նրանք սպասյակներից մեկին ուղարկել էին հայ պատվիրակներին իրենց մոտ հրավիրելու, և սպասյակը մի քանի րոպե հետո վերադառնալով զեկուցեց.

— Հենց հիմա այստեղ կլինեն։

Խալիլը հետաքրքրվեց.

— Ո՞վ կար հետները, ի՞նչ էին անում։ Քեզ չե՞մ ասել, որ աչքերդ չորս արած հետևես այդ գյավուրներին։

— Բալի՜, աղա՜, մեղավոր եմ,— սպասյակը բռունցքով զարկեց գլխին։— Երկուսով էին, հրավերի համար ուրախացան։ Հատկապես քաչալը, որը հետո էլ շատ էր ուզում իմանալ, թե ինչի՞ համար եք շնորհ անում։ Ասացի՝ «Մեզ նման մահկանացուները ո՞ւց կարող են իմանալ»։

— Դե՜, լա՜վ, գնա՜, ականջներդ ու աչքներդ սուր պահեցեք,— հանձնարարեց Խալիլը։— Դրանց ու գյուրջիների համար։ Գլխի ընկա՞ր։

Սպասյակը մինչև գետին խոնարհվելով՝ ետ-ետ գնաց և անհետացավ թանձր ու ծանր վարագույրներով ծածկված դռների ետևում։

— Իսկ որ իրենք ճակատի վիճակին տեղյակ լինե՞ն,— մտահոգ հարցրեց Խալիլը։

Վեհիբը նորից լեզվով ծլթացրեց.

— Մի քանի անորոշ տեղեկություններ կհաղորդեմ, և իրենց գեմքներին կերևա՝ ինչքան են տեղյակ։

1918 թ. մայիսի 27-ին, երկուշաբթի օրը Ալեքսանդր Խատիսովն ու Հովհաննես Քաջազնունին շատ կարևոր հանդիպում ունեցան Խալիլ բեյի ու Վեհիբ փաշայի հետ։

Այս հանդիպման մասին տպավորությունները գրի է առել

Քաջազնունին, որի ձեռագիրը սովորաբար գեղեցիկ է, ընթեռնելի, մտքերը՝ պարզ։ Այստեղ, սակայն, տառերն ասես փախչում են իրարից։ Շարադրանքի բովանդակությունը ևս մատնում է գրիչ-հիշատակագրողի ջղային վիճակը։

«Նրանք էին մեզ կանչել։ Վեհիբն ասաց՝ ուզում է տեսնել մեզ, որպեսզի Ալեքսանդրապոլից տեղեկություններ հաղորդի։ Ինչպես քաղաքի, այնպես էլ գյուղերի բնակչության մեծ մասը մնացել է տեղերում։ Ասաց՝ ինքը քաղաքի ներկայացուցիչներին հավաքել ու հարց է տվել, թե գանգատներ չունե՞ն բանակի վարքի վերաբերյալ։ Նրանք պատասխանել են, որ զինվորներն իրենց պահում են միանգամայն քաղաքավարի, և որ տեղական մահմեդական մի քանի գյուղացիների կողմից եղել են բռնություններ հայերի հանդեպ։ Ինքը կարգադրել է գտնել մեղավորներին։ Եվ հետո գտել է այդ սրիկաներին ու տասնմեկ հոգու մահապատժի է ենթարկել։ Նա մեզ խնդրեց հավատալ իրեն կամ ստուգել և պարզել՝ ինչպե՞ս և որտե՞ղ այդ անհրաժեշտ կհամարենք ինքներս, քանի որ իր բանակը թույլ չի տա ոչ մի կամայականություն հայերի նկատմամբ։ Այդ կապակցությամբ ինքն արել է ամենախիստ կարգադրություններ, որոնց խախտողները պատասխան կտան իրենց գլուխներով։ Ասաց, որ քաղաքականության հարցերն իրեն չեն վերաբերում։ Ինքը բանակի հրամանատարն է և իր զորքի վարքը համարում է իր անձնական պատվի խնդիրը։ Դրա համար էլ պատասխանատու է իր յուրաքանչյուր զինվորի արարքի համար։

Զրույցի հետագա ընթացքում նա հաղորդեց հետևյալ տեղեկությունները. իրենց զորքերի առաջխաղացումը Երևանի նահանգի սահմաններում նպատակ ունի գրավել այն անհրաժեշտ կետերը, որոնց շնորհիվ կապահովվի զորքերի անվտանգ տեղափոխումը Պարսկաստան։ Այստեղ մեր պատվիրակության բռնած անորոշ դիրքի պատճառով ինքը պարտավոր է ձեռք առնել բոլոր այն միջոցները, որոնք կապահովեն իրենց հնարավոր հարձակումներից։ Ղարաքիլիսան հավանաբար գրավված կլինի այսօր։ Ամեն պարագայի՝ այդ կետն իրենք անպայման պիտի նվաճեն։ Այդ գծով իրենք այլևս դենը չեն շարժվի։ Բորչալուի նահանգում իրենց առաջապահ զորամասը կանգնած է ոչ թե Վորոնցովկայում, այլ Ջալալ-օղլիում։ Երևանյան ճյուղում էլ իրենց զորքերը հասել են մինչև Սարդարապատ կայարանը։

Զորքերը փոխադրելուն դեռ չեն ձեռնարկել, քանի որ թիկունքը հիմնավորապես ապահովված չեն համարում»։

Խալիլն ու Վեհիբը կարճ ժամանակում հարցը պարզեցին, ինչ որ հաղորդվում էր, նորություն էր այս հայերի համար։ Քաշալը, այսինքն՝ հայ պատվիրակության ղեկավարը, գլուխը վերից վար ածիլած Ալեքսանդր Խատիսովը, որ համակ ուշադրություն էր Վեհիբի հաղորդած «նորությունների» նկատմամբ, նույնիսկ նշումներ էր անում ծնկանը դրած հատուկ տետրի մեջ։ Իսկ մյուսի մռայլ դեմքը, հոնքերի, բեղ ու մորուքի մացառները թեպետ արտահայտում էին անվստահության պես մի բան, աչքերից երևում էր, որ նա ևս ուրիշ տեղեկություններ չունի։ Այդ սֆինքսի պես մարդը նստել էր ընդարձակ հյուրադահլիճի այն պատի տակ, որի կենտրոնում, հենց իր գլխավերևը, կախված էր Եվրոպայի ու Ասիայի ռազմական քարտեզը։ Վեհիբի խոսելու պահերին հաճախ էր ծռվում դեպի քարտեզը, հայացքով փնտրում հիշատակվող կետերը։ Մի՞թե կարելի էր կասկածել նրա անտեղյակության վրա։ Բայց ինչո՞ւ է դժգոհ, ինչի՞ց է դժգոհ,— մտածում էր Խալիլը։— Դիվանագիտության համար նրա դիմակը բոլորովին էլ հարմար գործիք չէ։

Եվ այստեղից սկսած՝ զրույցը վարում էր Խալիլ բեյը, որն իր առաջ տեսնում էր երկու հայկական գլուխ, մեկը՝ ողորկ, առանց որևէ հարցի ու հարցականի («Սրան սուտ-փուտ խոստումներով կարելի է հարբեցնել, հետո քիթը բռնած տանել՝ ուր որ կամենաս»,— մտածում էր թուրքական պատվիրակության ղեկավարը), մյուսը՝ քրմապետի պես մռայլ ու բարդ, գագաթից մինչև կզակը սև ու ճերմակ մազերի խառնուրդի պես խճճված-մճճված մտքերից մոլոր։ Սրան ցույց տուր, թե կան դեպքերի իրական ընթացք և իրերի որոշակի վիճակ, որոնք դու չես ընդունում, սակայն պարտավոր ես ենթարկվել... և քեզ կհավատա։ Բայց կհավատա՞, թե՞ դարձյալ այսպես աչքերիդ մեջ կխորվի իր փշոտ հայացքով,— մտածեց Խալիլը և գործի անցավ։

«Դրանից հետո զրույցի մեջ մտավ Խալիլ բեյը,— շարունակում է Հովհաննես Քաջազնունին։— Ասաց, որ ինքը վերջնագիր է ներկայացրել Անդրկովկասյան կառավարությանը։ Եթե այդ կառավարությունն այժմ գոյություն չունի, որովհետև քայքայվել է, ապա վերջնագիրը վերաբերում է նրա մասերին առանձին-առանձին։ Վերջնագրի էությունը դրանով բոլորովին էլ չի

փոխվում։ Ինչ վերաբերում է սահմաններին, այստեղ էլ յուրաքանչյուր պետության համար ստիպված կլինենք խոսել նրա համապատասխան սահմանային գծի շուրջ։ Օսմանյան կայսրության սահմաններն էլ կլինեն նրանք, որ նշված են վերջնագրի մեջ։

«Խալիլն ասաց, որ Օսմանյան կայսրությունը ոչինչ չունի Անդրկովկասի սահմաններում, Թուրքիայի կողմից բռնագրավված տարածքից դուրս կազմակերպվելիք առանձին հայկական պետության դեմ։

Անդրկովկասյան պետությունների միջև սահմանները կգծեն իրենք՝ անդրկովկասցիները։ Թուրքիան մտածում է առհասարակ չխառնվել այդ հարցին։

Խալիլ բեյն անձամբ անդրկովկասյան թաթարներին խորհուրդ է տվել, որ նրանք մի քիչ ետ քաշվեն՝ հայերին զիջելով իրենց տարածքից գոնե մի քիչ, որպեսզի սրանք կարողանան կազմել իրենց պետությունը։

Թուրքիան պիտի ապրի բարեկամության ու խաղաղության մեջ Հայաստանի հետ, եթե այդպիսին կազմավորվի։

«— Կարծում եմ՝ դուք վստահում եք մեր խոսքերին ու հավաստիացումներին։ Ուրեմն, հանուն մեր ստեղծելիք բարեկամության ու համագործակցության, բարի եղեք ստորագրել պայմանագիրը։ Դրանով դուք հրաշալի օրինակ կտաք ձեր հարևաններին, որոնց կողքին,— մենք հավատացած ենք լիովին,— դուք այս անգամ էլ աչքի կընկնեք ձեր ազգային հեռատեսությամբ»։

Հայ պատվիրակները (այսինքն՝ նույնիսկ մոայլ ու բարդ Քաջազնունին), բնականաբար, թեթևացած հոգով ժպտացել են բարեկամ Թուրքերին, աշխարհով մեկ են եղել նրանց հաճոյախոսությունից։ Եվ սրանից հետո էլ դժվար չպետք է լիներ նրանց հայացքներից եղրակացնել, որ ստորագրությունն արդեն ապահովված է։ Մնում է շնչել անվստահության կամ թերահավատության վերջին մշուշը, որը և Խալիլը կատարել է իրեն հատուկ վարպետությամբ։

«— Վստահ եմ՝ ձեր հարգարժան պատվիրակությունն ավելորդ չի համարի իր այցելությունը Կոստանդնուպոլիս, հենց որ ստորագրված կլինի պայմանագիրը... Մենք ձեզ այնտեղ ցույց կտանք մի ընդունելություն, որից մեր թշնամիները կտրաքվեն։ ...Խաղաղության դաշինքը կնքվելուց հետո կրքերը կհանգստա-

նան, հասարակական կարծիքը կհավասարակշռվի, և այն ժամանակ գուցե Թուրքիան ձեզ կանի նաև այնպիսի զիջումներ, որոնք վայելում են իսկական բարեկամներին»։

Ահա այս խորհրդակցությունից հետո էլ Բաթումի խորհրդաժողովի հայ պատվիրակներն շտապեցին Թիֆլիս, որպեսզի Ազգային կենտրոնական խորհրդի պարագլուխներին ծանոթացնեն Թուրքական կողմի պահանջներին ու պայմաններին, խելք խելքի տան դաշնագիրը կնքելու համար։

Վերջապես ձյան տակ շատ կարճ ժամանակով ծրարված աղտեղությունը բացվեց, չնայած այն առաջ էլ երևում էր բոլոր կողմերից. Անդրկովկասյան սեյմն ինքն իրեն լուծարքի ենթարկեց։ Երբ Թուրքերը թեթև զորաշարժով և հատկապես սեյմի պարագլուխ վրացիների բացահայտ օժանդակությամբ տիրել էին Սարիղամիշին ու Կարսին և Արաքսն անցնելով նվաճելով Ալեքսանդրապոլը, ապա շարժվում էին Էջմիածնի ու Երևանի վրա, Հայաստանի ներկայի ու ապագայի ամբողջ պատկերը պարզված էր, այլևս ոչ մի հարց չկար։ Վրացիները հայտարարեցին, թե հայերն արդեն պարտված են և բնականորեն խաղից դուրս պիտի գան։ Եվ քանի որ մուսավաթական ադրբեջանցիներն էլ միշտ հոգով Թուրքերի հետ էին եղել ու հիմա երազում էին նրանց տիրապետության հաստատումն Անդրկովկասում, ուրեմն՝ նրանք ևս չէին կարող լիարժեք դաշնակից լինել։ Ուստի վրաց մենշևիկներին մնում էր քաշվել մի կողմ և միայնակ տնօրինել իրենց բախտը՝ դառնալ անջատ ու անկախ պետություն։

Անդրկովկասյան սեյմը լուծարքի ենթարկվեց մայիսի 26-ի ցերեկվա ժամը երեքին։ Նույն օրն էլ հռչակվեց Վրաստանի անկախությունը, որը մայիսյան ամպրոպի տպավորություն էր թողել սեյմի անդամ ու ոչ անդամ հայերի վրա։ Ո՞նց թե Վրաստանն անկախ ու անջատ է, երբ հայոց գնդերն Արաքսի ափին ու Ղարաքիլիսայի լեռներում արյուն են տալիս ոչ միայն իրենց հողի համար, այլև փակում են Թուրքի ճանապարհը դեպի Թիֆլիս։

Վրացի մենշևիկները, որ երևութական միասնության օրերին էլ սեյմը միայն իրենց շահերին էին ծառայեցնում և անպարկեշտություն էին համարում իրենց ազգային գերազանցությունը չցուցադրելը, այս անգամ արդեն շատ էին սրտաբաց։ Անջատ ու

անկախ Վրաստանի հոգսերով ծանրաբեռ Զխենկելին հայ դաշնակիցների երեսին ուղղակի ասաց.

— Երբ ծովում երկու հոգուց մեկը խեղդվում է, մյուսը խոհեմ կլինի, որ իրեն փրկի։

Ո՛չ ավել, ո՛չ պակաս։

Նույն օրը ևեթ անջատ-անկախության վարակը տվեց նաև Հայոց ազգային խորհրդի անդամներին։ Այդ օրը Թիֆլիսի ամբողջ հայությունն իր ներկայացուցիչներով հավաքվել էր քաղաքի կոնսերվատորիայի դահլիճը, որպեսզի որոշի, թե ի՛նչ պիտի անել վրաց անկախության պայմաններում։ Դուրսը, քաղաքում ամենուրեք տիրում էր խառնիճաղանջ մի դրություն, որ այդ բազմացեղ ու բազմատարր կենտրոնի ոգին էր եղել միշտ ու առհասարակ։ Սակայն հիմա առավել ցայտուն, առավել աղմկոտ ու երփներանգ մի կողմից զնգում էր վրաց խանդավառությունը, որ ճառագել էր անջատ ու անկախ հանրապետության հռչակումից, իսկ մյուս կողմից՝ դեպի Հյուսիսային Կովկաս, դեպի Ռուսաստան շարժվող հայոց գաղթականությունն էր, որ բռնել էր քաղաքի թաղամասերը և կանգնելու, հանգիստ առնելու տեղ չէր գտնում, քանի որ ետևից գալիս էր անկանգ հոսանքը տեղահանված ու խելակորույս ցնդակիցների։

Այո՛, դուրսը մեկի ցնծությունն էր, թեկուզ հայտնի չէր՝ որքա՞ն հիմնավոր, և մյուսի ողբերգությունը՝ հաստատ, հիմնավոր ու անպայման անկասեցնելի։ Կոնսերվատորիայի դահլիճում հավաքված մարդիկ իրենց հետ բերել էին դրսի հակոտնյա տրամադրությունները, ցավերի, կրքերի, ամբաստանության ու առաջարկությունների մի փոթորիկ էին բարձրացրել և այդ փոթորկի մեջ ուզում էին հայ ազգի փրկության ելքը գտնել։

Դահլիճն իր ներկայացուցիչներին հերթով կամ անհերթ ամբիոն էր բարձրացնում, և ամեն մի խոսող կոկորդ պատռելով հասարակությանն էր ներկայացնում ազգի փրկության իր գեղատոմսը։ Հզոր արմունկներով իր համար ճանապարհ բացեց դեպի ամբիոն և մեկուսի կանգնեց նաև հայոց պատմաբան Լեոնն։ Հաղթահասակ էր նա, բայց անշուք ակնոցների տակից նայող խամրած աչքերը մատնում էին պատմաբան-հրապարակախոսի հոգնությունն ու տառապանքը։ Շատերն էին ճանաչում նրան, որի կրակոտ ու իմաստուն խոսքին ժողովուրդն սպասում էր ամեն օր։ Անունն իրար տալով դահլիճին իմաց արին, և մի

քանի վայրկյան հետո այնպիսի լռություն էր տիրում, որ դրսի ձայները լսվում էին տարբերակված։ Ազգի պատմաբանը վիթխարի ձեռքերը դեպի դուրս տարածած, խոսեց ցածրաձայն։

— Դուք տեսաք, թե ի՞նչ է կատարվում ձեր շուրջը, մեծ փոդոցում,— ասաց, հառաչեց։— Այս հին Կովկասում այսօր ուր էլ որ գնաս, մերոնց կտեսնես, որոնք կամ մեռնում են, կամ քայլում են դեպի կորստյան դուռը։ Այդ աղետի պատճառն այն է, որ մենք մոռացել ենք մեր պատմական ճակատագիրը։— Դահլիճը ցավից տնքում էր ու օրորվում լայնատարած մի մարմնի պես։— Այսօր մեր ժողովրդի խղճուկ մնացորդները փախչում են Ռուսաստան։ Բայց ինչո՞ւ։ Մի՞թե այստեղ Ռուսաստան չէր։ Ինչո՞ւ բաժանվեցինք։ Ինչո՞ւ կարճամիտների կուսակցական հաշիվներին ենթարկվեցինք։ Փոքր ենք և տկար ու հենց այդ պատճառով էլ խաղալիք ենք դարձել թուրք փաշաների ձեռքին։ Ինչո՞ւ չենք հայտարարում, թե մենք մի մասն ենք կազմում այն պետության, որը կնքել է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը։ Թող այդ պետությունն ինքն էլ կատարի իր ստորագրած պարտավորությունը, և այն ժամանակ մենք ապահով կլինենք, որ թուրքերը կվերցնեն միայն Բաթումը, Կարսը և այլևս չեն համարձակվի իրենց թաթը դնել նաև Ալեքսանդրապոլի, Երևանի, Թիֆլիսի վրա։

— Ճի՞շտ է, ճի՞շտ է,— այս ու այնտեղից ճաքճքում էր դահլիճը։

Սակայն բեմառաջքից մեկը, որ, երևում էր, վրացի է ու եկել է հայոց ժողովից լուր հասցնելու իր մենշևիկ ղեկավարներին, ձեռքն առաջ մեկնած գոռաց ճառախոսի վրա.

— Էդ քեզ ո՞վ է իրավունք տվել վրաց քաղաքները թուրքին բախշիշ տալու։ Բաթումը...

Լեոն շեղ նայեց նրան, սակայն լռեցրին հարևանները։

— Ես վրաց Բաթումն ու հայոց Կարսը բախշիշ չեմ տալիս թուրքին։ Ես ասում եմ՝ այսօրվա մեր վիճակից դուրս գալու լավագույն միջոցն է դա։ Եվ, միաժամանակ,— այստեղ ձայնը բարձրացրեց Լեոն,— այո՛, միաժամանակ, հասկանալի՞ է, հարգելի պարոն։— Դահլիճը նորից հավանության բացականչություններ էր անում։ Վրացին ընկրկեց, ավելի ճիշտ՝ ստիպված էր լռել, սակայն անհանգիստ շարժումները մատնում էին նրա անհամաձայնությունը։ Հավանաբար անջատ ու անկախ

Վրաստանի գաղափարը նրա հոգում այդ վայրկյանին ստեղծել էր ռոմանտիկ մի քաոս, որի վերջում պարզ երևում է միջնադարյան անպարտելի թագավորությունը՝ Պոնտոսի ծովից մինչև Կասպիականի ափերը և Կովկասյան լեռներից մինչև Խլաթ։— Մենք ինքներս, բաժան-բաժան «անկախանալով», որ նշանակում է՝ թուրքի համար հեշտ կլանելու կեր դառնալով, մանրացնում ու թուլացնում ենք մեզ, ընկնում մեր հավիտենական թշնամու բերանը և հետո էլ տրտնջում, թե՝ կործանվո՞ւմ ենք, օգնությո՞ւն... Հիմա դուրս եկեք, նայեցեք իրենց պապենական վայրերից փախչող այն աղետյալներին։ Դրանք մեր ժողովուրդն են, մեր ազգը, որ ոչնչանում է չընդմիջվող փախուստների ճամփաներին... Մինչև ե՞րբ ոչնչանա։ Մի՞թե սրան վերջ չպետք է լինի։ Մի՞թե մենք, որ կոչված ենք նրան ցույց տալու լավ օրվա ճամփան, միշտ էլ այսպես խուլ ու կույր պիտի մնանք։

Այդ օրերին կարևոր ժողովներ էին գումարվում նաև Թիֆլիսի Գոլովինյան ու Բարյատինսկայա փողոցների անկյունում բարձրացած շենքում՝ հայտնի արդյունաբերող Արամյանցի տանը, որը մի քանի ամիս առաջ էր տիրոջից խլվել, որպեսզի ծառայեցվի հայոց ազգային-քաղաքական գործերին։ Ամենակարևորը ժողովներն էին, և գումարողն էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը։

Մայիսի 27-ին հայկական բոլոր կուսակցությունների մասնակցությամբ Ազգային խորհուրդը քննեց ազգի վիճակը՝ Անդրկովկասյան սեյմի լուծարկման պայմաններում։ Հռետորները, իրար հերթ չտալով, խոսում էին վրաց մենշևիկների ու ադրբեջանցի մուսավաթականների անդրկուլիսյան խարդավանքներից։ Նրանք նոր էին պարզել, որ Թիֆլիսում ու Բաթումում իրենցից թաքուն մենշևիկներն ու մուսավաթականներն անընդհատ գտնվել են սեպարատ բանակցությունների մեջ։ Առաջինները Գերմանիայի ներկայացուցիչների ականջներն էին տաք պահում, երկրորդները՝ թուրքերի։ Եվ մայիսի 26-ին, Վրաստանի անկախության հայտարարության հետ, Թիֆլիսում ու վրաց ծովեզրյա քաղաքներում հանկարծակի հայտնվեցին գերման զորաջոկատներ, վրաց սահմանի վրա ու Թիֆլիսի կայարանի գմբեթին բարձրացավ գերմանական պետական դրոշը։ Այսպիսով Վրաստանն իրեն ապահովեց թրքական բռնագրավումից։

Ադրբեջանի մուսավաթականները որոշել էին մայիսի 28-ին

հայտարարել իրենց անկախությունը, սակայն դրանից տասն օր առաջ Պարսկաստանի վրայով Գանձակ էր հասել թուրքական յոթհազարանոց մի զորաբանակ Նազըմ փաշայի գլխավորությամբ, որը գորգերի վրայով էր քայլել Աղդամից մինչև Եվլախ։ Եվլախից էլ Գանձակ գնալով՝ կոնկրետ գործի էր անցել. զինում էր տեղական մահմեդականներին և փորձում զինաթափել հայերին, որոնք համառորեն դիմադրում էին։ Հիմա էլ մուսավաթական պարագլուխներից մեկը՝ քուրդ Խոսրովբեկ Սուլթանովը, որ Բաթումի բանակցությունների ամբողջ ընթացքում կապ էր պաշտպանում իր գործընկերների ու Օսմանյան կառավարության միջև՝ Կոստանդնուպոլիս գնալ-գալով, Թիֆլիսի փողոցներում հայտնվել էր թուրքական սպայի համազգեստով և յուրայիններին փորձում էր համոզել, որ պատրաստ լինեն թուրքերին դիմավորելու Վրաստանի մայրաքաղաքում։ Այդ մասին իմացել էին մենշևիկները, և Բանվորական ու զինվորական պատգամավորների խորհրդի գործկոմը որոշել էր 24 ժամվա ընթացքում քաղաքից քշել այդ արկածախնդրին։

Մայիսի 28-ի առավոտվանից Անդրկովկասյան սեյմի վերջին, ավելի ճիշտ՝ ետմահու նիստն էր գնում, և նրա անդամները միմյանց դեմ հարուցած մեղադրանքներով կարծես ուզում էին ապացուցել, որ իրենց միությունը ոչ թե մեռել է երկու օր առաջ, Վրաստանի անկախության օրը, այլ դրանից շատ առաջ կամ գուցե այն ծնվել էր մեռած։

Ռամիշվիլին զեկուցեց Բաթումի խորհրդաժողովի մասին և նրա արդյունավետության պակասը բացատրում էր Բաքվի մուսավաթականների անհավատարմությամբ։

— Մեր պատգամավորության վիճակը խիստ ծանր էր հենց խորհրդաժողովի սկզբից,— ասաց Ռամիշվիլին։— Պաշտոնապես այն եղել է անդրկովկասյան բոլոր ժողովուրդների պահանջներն արտահայտող, սակայն իրականում նրա կողքին գործում էին ոչ պաշտոնական ուղիներով Բաթում հասած առանձին մարդիկ ու խմբեր, որոնք իրենց մեկուսի դիմումներով ու խլրտումներով, հայտարարություններով ու պահանջներով խանգարում էին մեզ, նույնիսկ ի չիք էին դարձնում մեր պատվիրակության ջանքերը։

Դիտողությունը շատ էր թափանցիկ, և ժողովականները մռայլ ու խայթող հայացքներով նայում էին մուսավաթականներին,

որոնք նստոտել էին դահլիճի ետին շարքերում, քսփսոցով իրար հասկացնում էին, որ իրենք այլևս գործ չունեն այս պարապ դալմաղալի հետ, լավ կանեն՝ գնան իրենց քաղաքական ու ազգային անկախությունը հռչակեն։ Ուսուբ-բեկովը՝ Բաթումի պատգամավորության մուսավաթական թևի ղեկավարը, հանկարծ ոտքի կանգնեց և, հարվածը յուրայինների վրա առնելով, պահանջեց պարզ խոսել, չանել հայտարարություններ, որոնք իրականությանը չեն համապատասխանում և միայն շուր պղտորելու նպատակ ունեն։

— Ես կարծում եմ՝ սրանից էլ պարզ անհնար է խոսել, պարոն Ուսուբ-բեկով,— ամբիոնից նրան պատասխանեց Ռամիշվիլին, որը ջղայնությունից կարմրել էր, և ճաղատը կապտակարմիր ցոլքեր էր արձակում։— Բժիշկ Սուլթանովն ո՞ւմ անունից էր բանակցություններ վարում Թուրք պաշտոնյաների հետ։ Նաղըմ փաշայի բանակն ո՞ւմ հրավերով է հասել Գանձակ։ Ի՞նչ համաձայնության մասին կարող է խոսք լինել, երբ այս երկրի բնակչության մի մասը կռվում է թշնամու դեմ, իսկ մյուս մասը համակրանքի ցույցեր անելով՝ աջակցում է թշնամու ներխուժմանը։ Հաճախ էլ բացահայտորեն կռվում է մեր դեմ, այդ նույն թշնամու զորքերի կողքին...

— Դուք դարձյալ անհիմն ու անպատասխանատու հայտարարություններ եք անում։ Վե՛րջ տվեք, ապա թե ոչ...

— Ի՞նչ «ապա թե ոչ», պարոն Ուսուբ-բեկով, էլ ինչ պիտի անեք, որ չեք արել,— տեղից վեր թռչելով, դահլիճից բեմ վազեց և ճառախոսի կողքին հայտնվեց Թիֆլիսում տեղակայված հայոց, այսպես կոչված, պահեստային զորքի հրամանատար, գնդապետ Հովսեփյանը։ Կանգնեց ու հրամանատարական իր շքահագուստը շոյելով խոսեց.— Ձեր զորքը, այսինքն՝ մուսավաթական զորքը, Ղազախի դաշտից բա-ձրանալով մերոնց հարվածում է թիկունքից։ Թիկունքի՞ց, հասկանո՞ւմ եք։ Իսկ մենք, իբր թե, դաշնակիցներ ենք... Թիկունքից հարվածելով գեներալ Նազարբեկովին նեղն է գցում, հետո էլ գնում, խառնվում Ղարաքիլիսայի վրա գրոհող թուրքերին... Ես թքել եմ այսպիսի դաշնակցության վրա։

— Թուրդ պահիր, գնդապետ,— արհամարհոտ խոսեց Ուսուբ-բեկովը։— Շուտով ավելի հարմար ու արժանավոր տեղ է լինելու դրա համար։

— Ի՞նչ տեղ, ի՞նչ տեղ է լինելու։

— Ձեր վիճա՞կը, երբ աջից ու ձախից բաժանվենք ձեղանից։

Դահլիճում մի փոթորիկ բարձրացավ, որի մեջ խլացել էր գնդապետի ծղրտոցը, և կուչ էր եկել տարբեր տեղերից սպառնալիքների տարափի տակ ընկած Ուսուբ-բեկովը։

Նախագահը մի կերպ լռեցրեց աղմուկը և հռետորին խնդրեց խոսել օրվա հոգսերից։ Գնդապետ Հովսեփյանը, կեղտաջրի միջից դուրս եկածի պես, նորից շքազգեստն էր թափ տալիս, ցնցում էր ուսերը, շոյում կուրծքը զարդարող միակ երկաթե խաչը։

— Էլ ի՞նչ խոսեմ օրվա հոգսերից, որ այնքան շատ են,— անճարացած ասաց նա։— Օրինակի համար՝ իմ իրավասությանը հանձնված հայկական պահեստային բրիգադը, որ տեղակայված է Թիֆլիսում, բոլորովին կտրված է կորպուսից և առ այսօր զուրկ է պարենից։ Ես անձամբ շատ կխնդրեի պարոն Լոմտատիձեից, որպեսզի այս հարցը դառնա հատուկ քննության առարկա։

Նախագահողն անզոր թոթվեց ուսերը.

— Ես՝ Լոմտատիձես, ի՞նչ կարող եմ անել, պարոն գնդապետ։ Ի՞նչ կա այսօրվա նախագահի ձեռքին...

Դահլիճում ոտքի կանգնեց մի ծեր հայ և, ակնոցները սրբելով, ոչ առանց զայրույթի ու արհամարհանքի, հայերեն դիմեց գնդապետին.

— Այդ ի՞նչ հայկական պահեստային բրիգադ է, պարոն գընդապետ, ի՞նչ հայ զորք է, որ Թիֆլիսի փողոցներն է չափում, երբ որ իր ազգը հոգեվարքի մեջ թուրքի դեմ կռվում է վերջին ուժերով։— Գնդապետը փորձում էր պատասխանել։ Սերունին ձեռքը բարձրացրած լռեցրեց նրան։— Մի ամիս առաջ մենք ձեր նյութական բոլոր կարիքները հոգացինք, որպեսզի անմիջապես գնաք ճակատ։ Մի ամիս առա՞ջ։ Իսկ այսօր դուք դեռ պարեն եք մուրում այդ անարժան դասալիքների համար...

Նախագահող Լոմտատիձեն, ըստ երևույթին, լավ էր ճանաչում խոսող ծերունուն, ձեռքերով ու հայացքով նրան հրավիրեց ամբիոն.

— Համեցե՛ք, այստեղի՛ց խոսեք, պարոն Բաբայանց,— հարգալիր առաջարկեց նա և ձեռքով նշան արեց, որ գնդապետը թողնի բեմը։— Համեցե՛ք, համեցե՛ք, պարոն Բաբայանց։

Թիֆլիսի ականավոր մեծահարուստ Համբաղձում Բաբա-

յանցը, որ տարիների անխոնջ գործունեությամբ և անխտրական բարեգործություններով հավասարապես հարգված էր ինչպես ազգակիցներից, այնպես էլ վրացիներից ու մահմեդական բնակչությունից, այդ պահին ուրիշ ասելիք չուներ և չէր էլ ուզում ամբիոն բարձրանալ։ Սակայն նախագահի հորդորով ու դահլիճի համակրական բացականչությունների տակ բարձրացավ և, ամբիոնի կողքից առաջանալով, կանգնեց բեմի եզրին՝ ծերունական ու իմաստուն հայացքը ներկաների վրա։

— Մի հարգելի մարդ է մեռել,— խաղաղված դահլիճի հետ հանգիստ խոսեց հայ մեծահարուստը։— Բժիշկը, որ չէր հասել մարդու վերջին շնչին, հարազատներին հարց է տալիս. «Հանգուցյալը քրտնե՞ց մեռնելուց առաջ»։ Հարազատները գլխով են անում. «Այո՛, լա՛վ քրտնեց, պարոն բժիշկ»։ «Այդ լա՛վ է, շա՛տ լավ է»,— եզրակացնում է բժիշկը։— Դահլիճն աշխուժանում է։ Մարդիկ ժպտում են, նույնիսկ քրքիջներ են լսվում։ Ծերունին քաջալերված փոխբմբռնողությունից, շարունակում է խոսել.— Մեր հանգուցյալը, որ սեյմն է, մեռնելուց առաջ չէր քրտնել։ Դա վա՛տ է... Սակայն մեր հանգուցյալը, որքան գիտեմ, մեռնելուց առաջ մի կարգին չէր էլ ապրել։ Ա՛յ, սա որ շա՛տ վատ է։ Բայց, իմ կարծիքով, այսօր մեզ պիտի անհանգստացնի մի ուրիշ հարց. թե ո՞նց անենք, որ այսուհետ, գոնե այսուհետ մեր ազգերը չլծենք մեռած մարմինների սայլին։ Ո՞նց անենք, որ այսուհետ կարողանանք ապահովել ազգամիջյան համերաշխությունը։ Ես չեմ կարծում, թե երկրագնդի վրա լինի ուրիշ մի անկյուն, որտեղ այնքան շատ ազգերի ու տարբեր կրոնների հաշիվները հանգուցավորված ու բարդված լինեն, որքան մեր հայրենի Կովկասում։ Մեզանից ոչ ոք չի լքելու իր հայրենիքը։ Ուրեմն,՝ մտածենք իմաստուն ու համերաշխ համակեցություն ստեղծելու մասին։ Մտածենք փոխադարձ վստահության ու համագործակցության մթնոլորտ ստեղծելու մասին։

Խոսելու համար իրավունք խնդրեց նաև նախկին սեյմի ակնառու անդամներից մեկը՝ ռուս Կ. Դ. Սեմյոնովը։ Սակայն խոսելուց առաջ ուզում էր իմանալ, թե ո՞րն է անկախ Վրաստանի քաղաքական կողմնորոշումը։

— Դրա հետ է կապված,— ասաց,— զանազան ազգերի վերաբերմունքը անկախ Վրաստանի հանդեպ, դրանով են պայ-

մանավորվելու Վրաստանում ապրող ազգերի փոխհարաբերությունները։

Չխենկելին, որ նստած էր նախագահության սեղանի ետև ու մինչև այդ միայն լուռ հետևում էր ճառախոսներին, նախագահողի ականջին ինչ-որ փսփսաց և ծանրորեն վեր կացավ տեղից, խոսեց հատ-հատ բառերով.

— Պարոն Սեմյոնովին շատ է հետաքրքրում անկախ Վրաստանի օրինականացիան։ Մենք այդ առթիվ առայժմ հաստատ մի բան կարող ենք ասել. այն լինելու է ո՛չ բոլշևիկյան Ռուսաստանի կողմը, ո՛չ էլ Օսմանյան Թուրքիայի։ Կան մոլորյալներ, որոնք մտածում են թե մենք ստիպված կլինենք ընտրել դրանցից մեկին։ Ասված մի՛ արասցե։ Մենք հեռու կմնանք երկուսից էլ հավասարապես, որովհետև դրանք, ըստ էության նույն մեդալի երկու երեսներն են։ Գոնե մեզ համար։ Պա՞րզ է։ Առայժմ այսքան բան,— և ծանր-ծանր նստեց։

— Ինձ համար պարզ է, պարոն Չխենկելի,— վրդովված խոսեց Սեմյոնովը։— Սակայն չգիտեմ՝ դուք ինքներդ պարզ պատկերացնո՞ւմ եք ձեր քաղաքականության հեռանկարը։— Կռիվը դեռևս շարունակվում է արտաքին թշնամու դեմ։ Հայկական դորամասերը շարունակում են անհավասար ճակատամարտը թշնամու դեմ։

— Իսկապես անհավասար, բայց նաև անհուսալի,— գոռաց Չխենկելին։

Ռուս հռետորն ուշադրություն չդարձրեց նրան։

— Հայերը մենակ են մնացել։ Նրանք օգնության են կանչում։ Նրանք դաշնակիցներ են որոնում... Եվ կգան այդ դաշնակիցները...

— Ի՞նչ ճանապարհով պիտի գան այդ դաշնակիցները,— դարձյալ Չխենկելին էր, որի ձայնը խղվել էր գոռոցից,— ասացե՛ք, խնդրեմ։

— Միակ և ուղիղ ճանապարհը միությունն է ռուսական դեմոկրատիայի հետ, որն այժմ հավաքում է իր ուժերը։ Ռուսական բանակն այսօր արդեն շտկում է իր առնական հասակը...

Նախագահությունում նստած Մելիք Ասլանովը՝ սեյմի օրերի միացյալ հանրապետության հաղորդակցության նախարարը, ցուցադրաբար հռհռաց, ապա ձեռքերը խաղացնելով հեգնեց.

— Օլմա, էշագ, յազ գյալար, յոնջա բիթար*։

Յուրայինները ծափահարեցին, ծիծաղեցին, ծիծաղից թուլացած՝ իրար հրմշտեցին։ Նորից էին ծափահարում։ Ռուսները զարմացած, հարցական աջ ու ձախ էին նայում, այսինքն՝ այս ի՞նչ իմաստուն բան ասաց մուսավաթական նախարարը, որ սրանք այսպես ցնծություն են ցուցադրում...

Հարևաններից մեկը թարգմանեց Սեմյոնովի համար, և սա ինքն էլ ծափահարեց և, ձեռքը դեպի Մելիք-Ասլանովի կողմը մեկնած, ասաց.

— Նոր հասկացա, թե ձեր նմանները հեղափոխությունից ի՞նչ էին սպասում. առվո՞ւյտ, առվո՞ւյտ։ Հավատացա՛ծ եղեք, պարոն Մելիք-Ասլանով, հեղափոխությունն ամեն ինչ կանի և առվույտի կարոտյալներին էլ կապահովի առվույտով։

* *
*

Նույն օրվա ժամը 12-ին Ադամյանցի տան դահլիճում Հայոց ազգային խորհուրդը հրապարակեց Ավ. Ահարոնյանի, Նիկոլ Աղբալյանի, Ալ. Խատիսովի ու Հովհ. Քաջազնունու կազմած հետևյալ հայտարարությունը. «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը։ Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմելու Հայոց ազգային կառավարություն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարության բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական ու վարչական ղեկը վարելու համար»։

Երբ Ազգային խորհրդի նշանավոր անդամները՝ հայության կյանքում տեղի ունեցած աննախադեպ իրադարձության հեղինակները, իրենց կատարածի գիտակցությամբ հպարտ, վեր էին կացել, որ հեռանան դահլիճից, Ավետիս Ահարոնյանը կանգնեց իր բարձր ու գեղուղեշ հասակի ամբողջ շքեղությամբ և ձեռքերը

* Ադրբ.՝ «Մի սատկիր, իշուկ, գարունը դա, առվույտ կբռնի»։

վեր կարկառեց։ Աչքերից կայծեր էին թռչում, հոգին յոթերորդ երկնքում էր։ Թվում էր՝ թևերը շարժեր, ինքն էլ կհասներ հոգու ետևից։

— Պարոնա՜յք, գիտե՞ք, թե ինչ կատարվեց այստեղ, այս ճակատագրական պահին։ Պարոնա՜յք, անհնար է բառերով արտահայտել մեր խանդավառությունը... Պարոնա՜յք, վայրկյաններ առաջ մենք ծնունդ տվինք մեր նոր պետականությանը։ Պարոնա՜յք, այս պահից մեր հին ու տանջահար ազգն էլ մտնում է անկախ ու ինքնուրույն պետություն ունեցող ազգերի շարքը... Պարոնա՜յք, պատկերացնո՞ւմ եք այս պահի վեհությունը...

— Կեցցե՜ հայ ազգի անկախ պետությունը,— դռների մոտից ետ դարձած բացականչեց Ահարոնյանի տեղակալ Խաչատուր Կարճիկյանը։

— Ուռա՜-ա՜,— որոտաց դահլիճը։

Ոմանք նորից նստել և ոտքերով հատակը ծեծում էին։

— Փա՜ռք մեր նոր պետականությանը, փա՜ռք։

— Փա՜ռք և անմահությո՜ւն,— վերստին թնդաց դահլիճը։

Երբ թողնում էին հայոց նոր պետականության ծննդավայրը, խանդավառ Ալեքսանդր Խատիսովն ի միջի այլոց դարձավ դեպի Ազգային խորհրդի նախագահ Ահարոնյանը, հարցրեց.

— Ի՞նչ լուրեր կան ճակատից։ Հուսանք՝ Երևանը դեռ մերն է։ Երեկ գիշեր Վեհիբն ասում էր՝ «Այսօր մերոնք Ղարաքիլիսան կվերցնեն»։

— Լուրերը մեծ դժվարությամբ են հասնում,— հառաչեց Ահարոնյանը։— Սակայն, կարծիք, քիչ առաջ Կարճիկյանն է ստացել գեներալ Սիլիկյանի հեռագիրը։ Էլի փամփուշտ է ուզում...

— Այդքան բա՞ն։

— Բա էլ ի՞նչ։ Խեղճ ազգն արնաքամ եղավ, էլ ուժ ու շունչ չի մնացել,— ավելի ծանր հառաչեց Ազգային խորհրդի նախագահը։

«Այդքան բանը» պինդ մեխվեց Ալեքսանդր Խատիսովի հիշողության մեջ։ Նա, իհարկե, այդպես էլ բախտ չունեցավ ծանոթանալու Երևանյան ռազմաճակատի հրամանատարի հեռագրի իսկական բովանդակությանը։ Վերջին շաբաթվա ընթացքում գեներալ Սիլիկյանը քանի՜-քանի՜ տագնապոտ հեռագրեր ու ռադիոզեկույցներ էր հղել Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի

նախագահ Ավետիս Ահարոնյանին։ Ոչ մեկի պատասխանը չըստանալով՝ վերջինը գրել-ուղարկել էր Ահարոնյանի տեղակալ Խաչատուր Կարճիկյանի հասցեով։ Այս հեռագրում, ինչպես իր տեղում էինք տեսել, ո՛չ տագնապի նշան կար, ո՛չ որևէ պահանջ։ Այնտեղ հայոց համաժողովրդական պատերազմում տարած հաղթանակի ավետիսն էր միայն. «Երօրյա համառ մարտերից հետո Սարդարապատի ուղղությամբ թուրքերը, թևերից շրջապատված ու ջարդված, ետ են շպրտվել ու հետապնդվում են մեր զորքերի կողմից», «Ղարաքիլիսայի գծի վրա երկօրյա մարտերից հետո հակառակորդը գլխովին ջարդված ետ է շպրտվել...», «Զորքի ոգին հրաշալի է»։

Ալեքսանդր Խատիսովը, այս հեռագրի բուն էությանն անտեղյակ, պիտի հիշեր միայն Ահարոնյանի թյուր տեղեկությունը նրա մասին, որպեսզի տարիներ հետո իր հայտնի գրքում հրապարակեր, թե «Թիֆլիս հասնելով Քաջազնունին ու ես... Ճիշտ նույն առավոտյան, մայիսի 27-ին, զորավար Սիլիկյանեն ստացանք հեռագիր մը, որով կաղաչեր փամփուշտ ղրկել»։

Այս անիրական, «աղավաղված» փամփուշտը թող պայթի սուտ ասողի գլխին, որ գոնե փորթափ անի... Սակայն Քաջազնունին ու Խատիսովն ինչպե՞ս կարող էին մայիսի 27-ի առավոտյան լինել Թիֆլիսում, երբ Հովհաննես Քաջազնունու՝ վերը մեջբերված հիշատակագրության համաձայն՝ Քաջազնունին ու Խատիսովը մայիսի 27-ին դեռևս պիտի պատասխանատու և կարևոր հանդիպում ունենային Խալիլ բեյի ու Վեհիբ փաշայի հետ...

Դժվար է, երբ մարդիկ, սովորության ուժով, սուտ են ասում նաև այնտեղ, ուր իրենք էլ անձամբ դրա կարիքը չունեն։

Այստեղ ես պետք է հաղորդեմ ներփակագծային մի քանի տեղեկություններ ու փաստեր, որոնք, հուսով եմ, կօգնեն ավելի պարզ պատկերացում կազմելու այն օրերի մեր գործիչների մտավոր, մանավանդ բարոյական կարողությունների մասին։

Չի կարելի կարծել, թե ճակատի վիճակից միանգամայն անտեղյակ էին Թիֆլիսում բնավորված հայ գործիչները։ Նրա՞նք, որ իրենցն էին համարում հայ ազգի ճակատագրի տնօրինության պատիվը։ Ճակատից հեռագրեր էին գնում Թիֆլիս, և սրանք միշտ երկու հասցե ունեին՝ Անդրկովկասյան հանրապետության ռազմական նախարարին, մեկ էլ՝ Հայոց Ազգային խոր-

հրդի նախագահին։ Նախարարն ու նախագահը ծանոթանո՞ւմ էին հեռագրերին, ուշադրություն դարձնո՞ւմ էին նրանցում եղած տեղեկություններին, հիմա դժվար է պարզել, որովհետև գրավոր տվյալներ չկան։ «Փամփուշտի» նման փաստերը կարող են միայն մոլորեցնել հետաքրքրվողներին։ Իսկ մեր գործիչները նման փաստերի օգնությանն էին դիմում ոչ միայն այն օրերին, այլև հետագա ժամանակներում... հենց որ կարիք էին զգում պղտորելու պարզ իրադրությունները։ Եթե մտածենք, թե Ալ. Խատիսովը ժամանակին ոչ մի պատկերացում չի ունեցել Սարդարապատի ճակատամարտի իրական վիճակի ու նրա շարժիչ ուժերի մասին, բնական ու բանական պիտի համարենք, որ նա հետագայում օգտվեր աղբյուրներից ու ականատեսների վկայություններից և գոնե ետին թվով ճշտեր իր պատկերացումը։ Հատկապես, երբ գրիչ պիտի վերցներ այդ ճակատամարտի մասին իր խոսքն ասելու։ Սակայն և այնպես տարիներ հետո նա իր գրքում հաղորդում էր, որ «Սարդարապատի հերոսներն էին Դրոն և զորավար Սիլիկյանը», ապա՝ «հայկական հեծելազորքը հալածեց թուրքերը մինչև Ալեքսանդրապոլի բարձունքները։ Միմիայն ռազմամթերքի պակասն էր, որ կանգնեցուց այդ հետապնդումը»։

Նախ, դեպքերի ընթացքից պարզ երևում է, թե Սիլիկյանը ո՞ր չափով էր առնչվել բուն Սարդարապատյան հերոսամարտին, իսկ Դրոն, որն այն ժամանակ Բաշ-Ապարանում է կռվել, առհասարակ ոտք էլ չի դրել Սարդարապատում։ Ապա. Սարդարապատի ճակատում հայ զորքը ոչ ռազմամթերքի պակաս ուներ, ոչ պարենի։ Եվ նրա առաջխաղացումն էլ (թուրքերին հետապնդելը) կանգնեցվեց միայն Խատիսովի ու նրա դասակիցների անկասեցնելի հրահանգներով, որոնց մենք պիտի ծանոթանանք ըստ հերթականության։

Սակայն դժվար է մտածել նաև, թե ճակատագրական օրերին մեր գործիչները բացարձակապես անտեղյակ էին ռազմաճակատի վիճակից։ Բաթումի խորհրդաժողովի հայ պատվիրակության խորհրդական Սիմոն Վրացյանը, որ պատվիրակության հետ մայիսի 27-ին կամ 28-ին ժամանել էր Թիֆլիս, որպեսզի 29-ին էլ վերադառնա և մասնակցի խորհրդաժողովի վճռական փուլին, իր խմբագրած «Հորիզոն» թերթի մայիսի 29-ի համարում հրապարակել է մի խմբագրական հոդված, որը հարցի լուծման համար էական նշանակություն ունի։

Այդ հոդվածը հաստատում է, որ Թիֆլիսի հայ պարագլուխներն ամեն ինչ գիտեին և, միաժամանակ, որ այդ ամեն ինչը ոչինչ չէր նշանակում, ոչ մի արժեք չուներ, քանի որ նրանք էլ զորավար Նազարբեկովի նման, սկզբից ևեթ որոշած են եղել ընդունել Թուրքաց տիրապետությունը, հայ ազգի վերջին բեկորները հանձնել հայակեր երիտԹուրքերի ողորմածությանը։

Ահա Սիմոն Գրուզինյան-Վրացյանի հրապարակած խմբագրական հոդվածը, որը, անշուշտ ու անկասկած, Թիֆլիսյան հայ պարագլուխների տրամադրությունն ու տրամաբանությունն էր արտացոլում։

Հոդվածը վերնագրված է «Մեր կացությունը» և սկսվում է այսպես.

«Հայկական ճակատից ստացված վերջին օրերի պաշտոնական հաղորդագրություններն ու մասնավոր տեղեկությունները պատերազմական գործողությունների մասին աներկբայելի կերպով ասում են, որ լիակատար հաջողությունը մեր կողմն է։ Երևանի զորաբանակի հաղԹությունը միանգամայն հեղաշրջել է գրությունը, և մեր այլ զորամասերի, ինչպես և բնագավառի ամբողջ հայության ռազմական ոգին բարձրացել է»։

Սրանից էլ լավ բա՞ն։ Իր ազատագրության համար սրբազան կռվի ելած հայ ժողովուրդը և նրա կռվի առաջնորդներ դարձած անհատները է՞լ ինչ պիտի ցանկանային։ «Լիակատար հաջողությունը մեր կողմն է»։ Հետո՞։

Մի՞թե տրամաբանական չպիտի լինի վճռական հարվածի կոչը. մե՛կ էլ, մե՛կ էլ մի զարկ տվեք անարգ Թուրքին։ Չէ՞ որ այդպես պիտի գար ազգի փրկությունը, այդպես պիտի հիմք ստեղծվեր նրա ազատ ու անկախ գոյության համար։

Ո՛չ, այն օրերի հայ ազգի գլուխ կանգնած գործիչները չէին ուզում կռվել, չէին ուզում գլխավորել ժողովրդի կռիվն իր ազատության ու անկախության համար։ Նրանք՝ դեռ ոչինչ չարած, հոգնել էին։ Նրանք որոշել էին նախ ազգին թեաթափ անել, չափազանցված սարսափներով, անելանելիության ու դատապարտվածության առասպելներով նրան հաշտեցնել «ամենահավոր վիճակի» հետ, որպեսզի հնարավոր լինի կորզել նրա համաձայնությունը ամեն տեսակ ստորացուցիչ պայմանագրի հետ։ Դրա համար էլ գաղափարական առաջնորդ ու հեղինակավոր խորհրդական Գրուզինյան-Վրացյանը շարունակում է հիպնոսացնել

իր ընթերցողին, որ հայ ժողովուրդն է։ «Սակայն որքան էլ ծանր լինի խոստովանել,— գրել է նա,— որքան էլ դժվար լինի ասել մանավանդ այս օրերում, մենք այնուամենայնիվ պարտք ենք զգում ասելու այն դառն ճշմարտությունը, թե մենք հաղթված ենք...»։

Հասկանո՞ւմ եք. «...տեղեկությունները պատերազմական գործողությունների մասին աներկբայելի կերպով ասում են, որ լիակատար հաղթությունը մեր կողմն է», և, այդուհանդերձ, «մենք հաղթված ենք»։ Այսինքն՝ պարտված ենք, քանի որ ձեռքից տվել ենք Կարսը և այն էլ, ո՞վ ցուցադրական անտեղյակություն, «մեր կամքին հակառակ, առանց մեր ղեկավար մարմինների թեկուզ անուղղակի համաձայնության, առանց նույնիսկ նրանց գիտության, տրվել է թշնամուն մեր ամենազորեղ ամրությունը՝ Կարսը»։

Բայց, ամո՞թ չլինի հարցնելը, այդ ի՞նչ «ղեկավար մարմիններ» են, էլ ինչի՞ ղեկավար են, կամ ինչպե՞ս են ղեկավար կոչվում, որ տեղեկություն անգամ չունեն, թե ինչո՞ւ և ինչպե՞ս է հայոց ամենազորեղ ամրությունն Կարսը ոտով-ձեռով հանձնվել թշնամուն։

«Հաղթված ենք, որովհետև անակնկալ դավադրությամբ, զինադադարի ժամանակ, հաշտության բանակցությունների ընթացքում, թուրքերը հափշտակել են, խլել են մեր ձեռքից Ալեքսանդրապոլը իր մեծ պաշարով»։

Այսպես շարունակ. բոլորը նենգել ու դավել են, խաբել ու ձեռքից խլել... «Վերջապես, հաղթված ենք և այն պատճառով,— շարունակում է ազգի գաղափարական առաջնորդի գերն ստանձնած Վրացյանը,— որ մեր թիկունքում անկախ Ադրբեջանն է իր թուրքական օրիենտացիայով, եթե ավելին չասենք («ավելին» էլ այն է, որ Ադրբեջանի սիրտը գտնվում էր Ստեփան Շահումյանի գլխավորած խորհրդային իշխանության ձեռքում— Բ. Ու.), և մեր կողքին է անկախ Վրաստանը, որը, ըստ կառավարական պաշտոնական հաղորդագրության, կամենում է թուրքի հետ իր հաշիվը վերջացնել հաշտության ճանապարհով և, ուրեմն, մեր կռվելու դեպքում ստիպված պիտի լինի նեյտրալիտետ պահպանել։ Եվ այսպես մենակ ու կտրված, ոչ մի իրական հույս չունենալով արտաքին միջամտության վրա, մեր սեփական ուժերով, մեր տանջված ու սևաբախտ ժողովրդի հերոսական ջան-

քերով, այո՛, մենք կարող ենք միայն պատվով մեռնել, բայց ո՛չ հաղթել ու փրկվել...»։

Ահա այս տրամադրությամբ ու այսօրինակ տրամաբանությամբ էր, որ Հայոց կենտրոնական ազգային խորհուրդն իր պատվիրակությունն ուղարկեց Բաթում։ Գնա՛, ասաց նա, և ստորագրիր ամեն տեսակ պայմանագիր, որի հիմքում կլինի զինադադարը, հաշտությունը թուրքի հետ։ Չէ՞ որ մենք, հակառակ դեպքում, «կարող ենք միայն պատվով մեռնել, բայց ոչ հաղթել ու փրկվել»։

Ուզում ենք հարցնել, թե ապա ինչի՞ համար էր առաջին տողերի հուսադրող հաղորդումը. «լիակատար հաջողությունը մեր կողմն է»։ Չէ՞ որ այդ հաջողությունը մերոնք ձեռք էին բերել բոլորովին մեկուսացած, առանց մուսավաթական Ադրբեջանի ու մենշևիկյան Վրաստանի օժանդակության, առանց որևէ «արտաքին միջամտության», իսկ եթե կուզեք ճշմարտությունն իմանալ՝ ի հեճուկս այդ բոլորի... Սրա պատասխանն էլ մեկն է. սողանցք էր պետք ապագայի առաջ արդարանալու համար։ Չէ՞ որ կարող են մեղադրել, թե դուք անտեղյակ էիք հայոց ճակատի հաջողություններից... Ո՛չ, մենք անտեղյակ չէինք։ Մենք գիտեինք այդ հաջողությունների մասին, բայց և այնքան հեռատես էինք, որ զգում ու տեսնում էինք, թե ինչպես «մենք կարող ենք միայն պատվով մեռնել, բայց ոչ հաղթել ու փրկվել»։

Մայիսի 29-ի եռամիջօրեին հայոց պատվիրակությունը, խատիստովի նախագահությամբ, ժամանեց Բաթում՝ այս անգամ արդեն հաշտության խորհրդաժողովին։ Չէ՞ որ այստեղ, վերջապես, մի քանի ամիս զուր տեղը ջուր ծեծելուց հետո, կռվող կողմերը պետք է հաշտության պայմանագիր կնքեին։ Հայկական պատգամավորությունն այդ ժողովին էր ներկայացել որպես ինքնուրույն միավոր, որը պիտի ներկայացներ ու պաշտպաներ հայ ազգի նորաստեղծ կառավարության շահերը։ Ճիշտ է, ո՛չ Թիֆլիսի ազգային խորհուրդը, ո՛չ էլ ուրիշ որևէ կազմակերպություն դեռևս չէր ընդունվում իբրև հայոց պետական մարմին, հայոց կառավարություն։ Սակայն կար կարևորը. Ազգային խորհուրդը հայտարարել էր, թե ինքը «ժամանակավորապես ստանձնում է կառավարության բոլոր ֆունկցիաները»։

Եվ «կառավարության բոլոր ֆունկցիաներն» ստանձնած

Ազգային խորհրդի «ճերմակ թղթով» հայկական պատգամավորությունը հասել էր Բաթում։

Խատիսովն ու գործակիցները գիտեի՞ն, արդյոք, թե Բաթումից ի՞նչ են բերելու հայ ազգի համար՝ դժվար է ասել, քանի որ «ճերմակ թուղթն» արդեն ապացույցն էր անորոշ հեռանկարի...

Երբ կռվող կողմերը նստում են հաշտության սեղանի շուրջ, սովորաբար հաղթողն է, որ պայմաններ է թելադրում հաստատելիք հարաբերությունների համար։ Սարդարապատում ու Բաշ-Ապարանում հայերը ջարդել էին թուրքերին և շարունակում էին նրանց հալածել։ Մայիսի 27—28-ին փրկվել էր նաև Ղարաքիլիսայի ճակատի դրությունը. այնտեղ ևս հայոց զորքն զգալի հաջողություններ ուներ։ Ուրեմն, հաշտության սեղանի շուրջ հարկ էր, որ հաղթող հայոց կողմի պատվիրակությո՛ւնը թելադրեր իր կամքը, ներկայացներ իր պահանջները։ Գոնե արդար ու օրինական պահանջները։

Սակայն Ալ. Խատիսովի պատվիրակությունը Բաթում էր հասել թուրքերի ողորմածությունը խնդրելու, հայ ազգի մնացորդների համար գոյության իրավունք մուրալու, որովհետև «անտեղյակ էր» ռազմաճակատի վիճակից։ Անտեղյակ էր եղել Բաթումում, երբ ֆերիկ Վեհիբը խուճապահար փախչող թուրքաց զորքի աղետալի վիճակը քողարկել էր նրանից, «անտեղյակ» մնաց նաև Թիֆլիսում, ուր Հայոց ազգային խորհրդի ղեկավարները չէին էլ բացում ռազմաճակատից եկող հեռագրերն ու նամակները՝ կարծելով, թե նրանցում սոսկ աղերսանք է՝ փամփուշտ ուղարկելու համար։

1967 թ. Ֆրեզնոյում հայերեն թարգմանությամբ լույս են տեսել Սարդարապատի ճակատի շտաբի պետ Ալ. Կ. Շնեուրի հուշերը հայոց զորքի մեծ հաղթանակի մանրամասների մասին։ Այս հրատարակության համար առաջաբան է գրել Ա. Ամուրյանը, որն իրեն ներկայացրել է այն օրերի հայոց գործերից քաջատեղյակ մարդ և արել է հայտարարություններ, որոնցից ջուրն ավելի է պղտորվում։ Ա. Ամուրյանը, օրինակ, գրել է, թե «Դժբախտաբար հայ ներկայացուցիչները Բաթումի խաղաղության ժողովին լուր չունեին հայերի փայլուն հաղթանակի մասին՝ Սարդարապատի տակ, ապա թե ոչ, խաղաղության պայմանները թեթև կլինեին Հայաստանի համար»։

Սա մի հայտարարություն է, որի ճիշտ կամ սխալ լինելը հավասարապես դատապարտելի է «Բաթումի խաղաղության ժողովի» հայ ամբողջ պատվիրակության համար։ «Հայ ներկայացուցիչները... լուր չունեին հայերի փայլուն հաղթանակի մասին»։ Իսկ ինչո՞ւ չունեին։ Եվ եթե չունեին, որտեղի՞ց գիտեին, թե ի՞նչ դիրքի վրա պիտի կանգնեին ու ի՞նչ պիտի պահանջեին։ Կամ եթե «հայերի փայլուն հաղթանակի մասին» չգիտեին, նրանք էլ ո՞ւմ էին ներկայացնում, ո՞ւմ կամքն ու պահանջներն էին արտահայտում։ Այդ ո՞վ էր նրանց օժտել իր լիազորություններով...

Սակայն միանգամայն այլ էր իրականությունը։ Բաթումի խորհրդաժողովի հայ մասնակիցները գիտեին «հայերի փայլուն հաղթանակի մասին»։ Համենայն դեպս՝ հայ պատվիրակության խորհրդական Սիմոն Վրացյանը շատ լավ տեղյակ էր հայոց հաղթանակին։ Ինչպես վերը տեսանք, այդ նա էր հայ-թուրքական խայտառակ դաշնագրի կնքումից մի քանի օր առաջ գրել և իր «Հորիզոնում» հրապարակել, թե «Հայկական ճակատից ստացված վերջին օրերի պաշտոնական հաղորդագրություններն ու մասնավոր տեղեկությունները պատերազմական գործողությունների մասին աներկբայելի կերպով ասում են, որ լիակատար հաջողությունը մեր կողմն է։ Երևանի զորաբանակի հաջողությունը միանգամայն հեղաշրջել է դրությունը...»։ Այո՛, հայ զինվորության և ժողովրդի սարդարապատյան հաղթանակը հեղաշրջել էր դրությունը ճակատում ու թիկունքում, Հայաստանի բախտի համար կռվող ու մտահոգված բոլոր շրջաններում, բացի Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդից ու նրա պատվիրակությունից։ Նրանց, ըստ երևույթին, ձեռնտու էր անտեղյակությունը. պիտի ցույց տային, թե մի խաղի մեջ են, որի պայմանն է աչքերը կապած առաջ գնալը... Ուստի անտեղյակություն էին խաղում և՛ խորհրդաժողովի օրերին, և՛ տասնամյակներ հետո։

Մինչև «հայոց ներկայացուցիչները» կժամանեին Բաթում, Թուրքիայի պատվիրակությունը խորհրդակցել էր իր կառավարության հետ, մշակել ու հիմնովին պատրաստել սեփական դիրքորոշումը։ Այս բոլորը կատարվել էր հույժ գաղտնի, խնամքով, հետևողականորեն։ Բայց հետագայում հենց իրենք՝ թուրքական կառավարության անդամներն ու Բաթումի թուրք պատվիրակու-

թյան ներկայացուցիչները, տարբեր առիթներով ամեն ինչ հրապարակել են, և հիմա արդեն ամենքին հայտնի են հայոց հարցի այն օրերի թուրքական լուծման բոլոր վարժությունները։

Բաթումի խորհրդաժողովին եկած թուրք դիվանագետները գիտեին, որ իրենց կառավարության մեջ հայկական հարցի լուծման երկու եղանակ էր առաջ քաշված։ Մեկի կողմնակիցները գտնում էին, որ հարցը պիտի լուծել հայերին ամենուրեք ոչնչացնելով, իսկ մյուս թևը, այսօրինակ լուծման անհնարինությունը գիտակցելով, առաջարկում էր Անդրկովկասում, Երևանի շուրջ հայերի համար մի փոքրիկ ինքնավարություն երաշխավորել և դրանով իսկ համաշխարհային կարծիքի առաջ գլուխ պրծացնել՝ հակահայկական ա՛յն չարագործությունների դիմաց, որ կատարել են, և նրա՛նց համար, որ դեռևս պիտի կատարեին։

Բաթումում Խալիլ բեյն ու Վեհիբ փաշան, չքմեղության քղամիդ հագած, ճակատի իրենց գործերն աջողակ ներկայացնելով, հայ պատվիրակներին անընդհատ հիշեցնում էին իրենց, իբր թե, չափավոր քաղաքականությունը։ Ալ. Խատիսովը հետագայում պիտի գրեր, թե Խալիլն ասում էր. «Հասկացե՛ք իրերու դրությունը։ Ես և Վեհիպ փաշան կներկայացնենք կոմիտեի մեջ չափավոր, հաշտարար հոսանքը։ Թալեաթ և Էնվեր փաշաները կուզեն իսպառ ոչնչացնել հայկական հողը։ Օգնեցեք մեզ՝ մեր դիրքը ուժեղացնելու. ըրե՛ք բոլոր զիջումները... Մենք ձեզ կօգնենք արտագային։ Իսկ ձեր դիմադրությունն այսօր միայն պիտի վնասե ձեզ և նոր արյունհեղությանց պատճառ դառնա»։

Ուրեմն, Էնվերն ու Թալեաթն էին, որ ուզում էին «իսպառ ոչնչացնել հայկական հողը»։ Սակայն, ահա մեկ էլ Թալեաթն է խոսում Խատիսովի հետ և դրությունն այնպես է ներկայացնում, թե ինքը՝ այդ հայակեր գազանն է չափավոր թևը ղեկավարում։ «Էնվեր փաշան կգտներ,— ասել է Թալեաթը,— թե քանի որ հայերը եղած են ու պետք է միշտ ըլլան մեր թշնամիները ու հանգիստ պիտի չթողուն մեր Անատոլուի նահանգները, ավելի լավ է, որ հիմնապես բնաջնջվեն անոնք նաև Կովկասի մեջ, ինչպես եղած են Թուրքիո մեջ։ Իսկ փոքրիկ Հայաստան մը Կովկասի մեջ պատճառ պիտի դառնա, որ միշտ ձգտի ընդարձակելու իր սահմանները և դառնա հավիտենական վտանգ Թուրքիո համար։ Իսկ ես,— շարունակել է Թալեաթը,— պատասխանեցի, որ

այդ ծրագիրը անկարելի ծրագիր մըն է թեկուզ այն պատճառով, որ այսպես թե այնպես երկու միլիոնի չափ ողջ մնացած հայեր կան այժմ, և անհնար է զանոնք բոլորն ալ ոչնչացնել, ուստի ավելի լավ է, որ անոնց գոհացում տրվի, որովհետև, եթե նույնիսկ 100.000 հայ էլ մնան աշխարհի երեսին, մեզի հանգիստ պիտի չտան երբեք։ Եվ, վերջապես, փոքրիկ Հայաստան մը ստեղծելով՝ մենք լուծած կըլլանք Հայկական հարցը և այդպես կներկայանանք հաշտության միջազգային խորհրդաժողովին»։

Հետագայում էնվեր փաշան էլ պիտի պարծենար այսպես. «Ես լուծեցի շատ դժվար խնդիր մը. ստեղծեցի Հայաստանը, գոհացում տվի հայերու ազգային պահանջներուն, բայց այդ ըրի այնպիսի ձևով մը, որ չգոհեցի Թրքական հողերեն ոչ մեկ թիզ խսկ»։

Ուրեմն, հայե՞րը չէին, որ ռազմաճակատում ցույց տված անօրինակ տոկունությամբ ու քաջությամբ, Թուրքերին հասցրած կործանիչ հարվածներով ստիպեցին հապշտապ կնքել հաշտության պայմանագիրը, հայե՞րը Թուրքերին չստիպեցին հասկանալ, որ եթե աշխարհի երեսին մնան ոչ թե երկու միլիոն, նույնիսկ ոչ թե 100.000, այլ միայն մի բուռ հայեր, նրանք էլ իրենց թշնամիներին «Հանգիստ պիտի չտան երբեք»։ Հայե՞րը չէին, որ հարկադրեցին... Այլ իրենք՝ Թուրք մեծավորները, հայ ժողովրդի դահիճներն էին, որ մեծահոգաբար ընդառաջեցին, գոհացում տվին «հայերու ազգային պահանջներուն»։ Եվ այս ամենն էլ՝ իբրև պատասխան Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ղեկավարների մուրացողության...

Հետագա դեպքերը դասավորվեցին ու զարգացան հենց այս ոգով, ըստ օսմանյան պատվիրակության նախագծած ու վարած պլանի։

Մայիսի 29-ի երեկոյան դեմ, ժամը 7-ին, պայմանաժամից նույնիսկ մեկ ժամ առաջ, հայոց պատվիրակությունը հատուկ նամակով Թուրքերին հայտնեց, որ ժամանել է Թիֆլիսից, արդեն ներկայացնում է Հայաստանի անկախ հանրապետությունը և այդ հանրապետության անունից ընդունում է Թուրքական կառավարության վերջնագիրը։

Վրացի մենշևիկները, որ ավելի վաղ էին հայտարարել իրենց անկախությունն ու նոր կառավարության կազմումը և, հատկա-

պես, ապահովել էին այդ անկախության հովանավորությունը Գերմանիայի թևի տակ, նրանք, որոնց ազգային ու պետական շահերը համարյա չէին տուժել թուրքաց պատերազմից և չէին տուժելու հաշտության պայմանագրից, կարծես չէին էլ մտածում վերջնագիրն ընդունելու կամ չընդունելու մասին։ Մուսավաթականները, որոնք երազելով երազում էին թուրքաց տիրապետությունը Կովկասի վրա և նրանց ամեն մի խոսքով պատրաստ էին կանգնել ետևի թաթերի վրա ու պոչ խաղացնել երջանկությունից, այդ մուսավաթականները քաշվել էին «Բելվյու» հյուրանոցի իրենց կացարանները և վարագույրների ճեղքերից ուշի ուշով հետևում էին, թե ի՞նչ է կատարվում իրենց բացակայությամբ, որպեսզի հետո դուրս թափվեն և իրենց առատ բաժինը փախցնեն վերջնագրից ու վերջնահաշվից...

Իսկ, ահա՛, հայ պատվիրակությունը, սնդիկի պես աջ ու ձախ գլորվող, սնդիկի պես կանգնած տեղն էլ անվերջ թրթռացող Ալեքսանդր Խատիսովի գլխավորությամբ, Բաթում հասնելուն պես գլխապատառ իրեն նետեց հորձանուտը, որ թուրք պատվիրակության գիրկն էր. մենք անկա՞խ ենք արդեն, մենք ինքնուրո՞ւյն ու ինքնագլո՞ւխ ենք, մենք ընդունո՞ւմ ենք ձեր վերջնագիրը։

Ուղիղ մեկ ժամ էր մնացել մինչև թուրքական պատվիրակության նշանակած ժամկետը լրանար։ Խատիսովը գրավոր հաղորդեց, որ Հայկական անկախ հանրապետությունն ընդունում է թուրքաց կառավարության վերջնագիրը և պատրաստ է հաշտության պայմանագիր կնքել Հայկական անկախ հանրապետության անունից։ Այդպես էլ գրել էր՝ «Հայկական անկախ հանրապետություն», չնայած այդպիսի վարչաքաղաքական միավոր չկար դեռևս, և Հայաստանն անկախ հայտարարողները գրել էին միայն, թե «Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել Հայոց ազգային կառավարություն...»։

Պատվիրակության անդամ Հովհաննես Քաջազնունուն տարօրինակ թվաց Խատիսովի ինքնագործունեությունը։

— Բայց որքա՞ն հարմար է գոյություն չունեցող պետության անունից խոսելը,— անհամարձակ հարցրեց նա։— Այս փաստաթղթերը պիտի մնան, պատմություն պիտի ստեղծվի...

Խատիսովը չքմեղ ժպտաց գործակցի միամտության վրա։

— Չէ՞ որ մենք իսկապես անկախություն հայտարարեցինք՝

ազգային կառավարության ստեղծումը հետաձգելով ամենամոտիկ ապագային։— Ժպիտը ծաղկել էր նրա կլոր դեմքին։ Կարճատես աչքերում խորամանկության կայծեր կային, որոնք ասում էին՝ «Բարեկամ, սա դիվանագիտություն է, ձեռնածության պես մի բան, և պարտվում է նա, ով չի խաբում»։— Մենք միայն մի փոքր առաջ ենք ընկնում դեպքերից... Հը՞, դո՞ւ ինչ կասես,— և ծիծաղկուն, ծակող հայացքը հառեց Պապաջանովին՝ պատվիրակության երրորդ անդամին։

Պապաջանովը թոթվեց հաստ ուսերը. այսինքն՝ чёрт побери!, ինչ կուզեք՝ արեք, իմ դերը կրավորական է։

Քիչ անց Խալիլն ու Վեհիբը Խատիսովին հրավիրեցին զրույցի։ Հայոց պատվիրակության ղեկավարը գերազանցության զգացումով բաժանվեց ընկերներից, առանց պայմանավորվելու առաջիկա զրույցի ժամանակ իրենց և հենց իր բռնելիք դիրքի մասին։

Քաջազնունին մռայլ քաշվել էր ծովահայաց պատշգամբի անկյունը, թանձր մազ-մորուքի միջից դիտում էր Պոնտոսի կապույտ խաղերը։ Մտքում Խատիսովն էր՝ ամեն օր մի նոր կողմից բացվող իր կերպարանքով, եսակենտրոն գործունեությամբ, նպատակին հասնելու համար գործադրած ամեն տեսակ ընդունելի ու անսուրբ միջոցներով։ Նպատակին հասնելու... Բայց ի՞նչ էր նպատակը, գոնե երևար։ Ո՞նց կարելի է այսպես պատեպատ զարկվել, կաշվից դուրս գալ, սուտն ու ճշմարիտն իրար խառնել։ Ինչպե՞ս էլ կարողանում է, առանց երկնչելու, առանց զգուշանալու։

Երեկոյան ժամաժամքին Խատիսովը ներկայացավ բարձր տրամադրությամբ, հաղորդեց, որ թուրքերն իրեն ընդունել են բարեկամաբար և պայմանավորվել են հաշտության նիստն սկսել վաղը ժամը 12-ին։ Ասաց և գնաց, փակվեց իր սենյակում։

Պապաջանովին դա էլ չանհանգստացրեց։ Իսկ Հովհաննես Քաջազնունին մտածեց, որ այս անգամ էլ Խատիսովը կատարել է մի այնպիսի քայլ, որի համար երես չունի խոսելու, բացատրություն տալու։ «Ժողովուրդն ասում է՝ ագռավի հետ ընկերացել ես, պատրաստ եղիր ամեն տեսակ աղտեղություն ուտելու»,— մտածեց Քաջազնունին և նստեց գրասեղանի առաջ, բացեց օրագիրը։ Հայացքը դեպի սեփական հոգու խորքն արած՝ նա շշնջ-

ջաց իր համար. «Երանի՜ թե սուտ չլիներ արդար դատաստանը, և յուրաքանչյուր մահկանացու ահեղ դատին ներկայանար միայն սեփական մեղքերով»։

* *
*

Հետո պիտի պարզվեր, որ Վեհիբն ու Խալիլը Խատիսովի հետ վճռել են զինադադար հայտարարել և անմիջապես նրան հնարավորություն են տվել լիակատար զինադադարի մասին հրահանգ հաղորդելու յուրայիններին։ Խալիլ բեյի համար ի՞նչ մեծ դժվարություն էր հեռախոսով պահանջել Կարսը, հեռախոսի մոտ հրավիրել գեներալ Կորգանովին, ապա, լսափողը հանձնելով հայկական պատվիրակության ղեկավարին, բարեհոգությամբ ասել.

— Բույուրուն, ջանաբ Խաթիսով։

Քանի՜ օր էր, կորած էր համարվում գեներալ Կորգանովը։ Որտեղի՞ց և ինչպե՞ս հայտնվեց Կարսում։ Խատիսովը շշմած էր առաջին պահ. կարծում էր՝ շար խաղ են անում իր հետ։ Սակայն իսկապես գեներալն էր խոսում էր անդրշիրիմյան ձայնով։ Նա էլ էր զարմացած, թե թուրքերն այդ ինչպես իրեն անակնկալներ են մատուցում իրար ետևից. երեկ ազատեցին քուրդ խաժամուժի ձեռքից, գիշերը բժշկական արտակարգ օգնություն ցույց տվին, այսօր էլ, խնդրե՛մ, խոսիր Բաթումի հայ պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Խատիսովի հետ։

— Ալեքսանդր Իվանովիչ,— ուրախությունից լաց լինելով խոսեց գեներալը,— Ալեքսանդր Իվանովիչ, այս ի՞նչ երջանկություն է, որ ձեր նման բարեկամի ձայնն եմ լսում։ Ի՞նչ երջանկություն ... Աստված որ մեկ էլ ձեզ տեսնելու բախտին արժանացնի, կպատմեմ, թե ի՞նչ տեսակ տառապանքներ եմ քաշել այս մի քանի օրվա գերության մեջ։ Թշնամուս էլ չէի ցանկանա։ Հոգեկան վիճա՞կս, էլ մի՜ հարցնեք։ Լավ է, որ ուշքս վրաս է։ Աստվա՜ծ տա, աստվա՜ծ տա, Ալեքսանդր Իվանովիչ։ Բաթումի՞ց եք խոսում։ Հաշտությո՞ւն։ Օ՜, ի՞նչ եք խոսում։ Մեր խեղճ ժողովրդի փրկության համար դուք ինչե՞ր արիք։ Ի՞նչ գերմարդկային ուժ էր պետք։

— Ուրեմն, այդպես, պարոն գեներալ,— ինքնավստահ, սե-

փական արժանապատվության բարձր գիտակցությամբ զրույցն առաջ տարավ Խատիսովը,— հիմա ճակատի գլխավոր հրամանատար մարշալ Վեհիբ փաշան կկարգադրի, որպեսզի ամենայն օգնություն ցույց տրվի ձեզ։ Բժշկական, նյութական... մի խոսքով՝ շատ շուտով կազդուրված կգաք Բաթում։ Իսկ առայժմ ամենաշտապ կարգով այդտեղից Արամին ու Նազարբեկովին հաղորդեցեք, որ հաշտության բանակցությունները բարեհաջող են ընթանում, և այս րոպեին մենք պայմանավորվեցինք զինադադարի մասին։ Ես կաշխատեմ հենց հիմա էլ կապվել Թիֆլիս, Ահարոնյանի հետ, որպեսզի զինադադարի կարգադրություն անի։ Սակայն մինչ այդ, որպեսզի զուր տեղն արյուն չթափվի, իմ անունից կարգադրեցեք, որպեսզի դադարեցվեն պատերազմական գործողությունները։ Ինչպե՞ս։ Ինչո՞ւ միակողմանի։ Ահա այստեղ է մարշալ Վեհիբը և նա էլ իր ենթականերին կանի նման կարգադրություն...

Խատիսովն ու գեներալը ռուսերեն էին խոսում իրար հետ, թուրքերի համար հեռավոր, անհասկանալի լեզվով։ Սակայն վերջին նախադասությունն ասելիս հայ դիվանախոսը նայեց թուրք զորավարի կողմ, սա հասկացավ խոսքն ինչին է վերաբերում և, ի նշան համերաշխության, գլխով արեց։

— Ձերոնք ինչպե՞ս էին կռվում Ղարաքիլիսայի ճակատում,— խոսեց Վեհիբը, հենց որ հայ դիվանագետն ավարտեց հեռախոսազրույցը և ոտը ոտին գցելով, շատ կարևոր գործ կատարած մարդու հանգստությամբ ընկղմվեց փափուկ գահավորակի մեջ։— Ա՜յ, դրան զորք եմ ասել, հա՜։ Մինչև վերջին շունչը, մինչև վերջին գնդակը... Պատերազմների պատմությունն այդպիսի անձնազոհության օրինակներ քիչ գիտի։ Իսկ առաջ որ ասում էին՝ հայերը լավ կռվող են, չէի հավատում։— Խատիսովը հպարտացավ, ուռավ նստած տեղը, կարծես իրեն էր վերաբերում գովասանքը։ Վեհիբն զգաց այդ և, ասես գլխին բամփելու նման ասաց.— Այսօր մենք Ղարաքիլիսան կառնենք,— նայեց ժամացույցին,— հա՜, արդեն առել ենք։ Բայց դենը չենք շարժվի, մինչև որ այստեղ հարցերը չպարզվեն...

Ոչ մի խոսք Սարդարապատի մասին։ Վեհիբի համար, իբր, այդպիսի ճակատ չկա, հայերն անձնազոհության գեղեցիկ օրինակներ են ցույց տալիս միայն Ղարաքիլիսայում, որն այն ժամին արդեն իրենց ձեռքում էր։ Նա հայ դիվանագետի դեմքին

կարդաց երանելի անտեղյակության արտահայտությունը և աչքի պոչով նայեց Խալիլին. «Ո՞նց էլ գուշակում էիր։ Հիմա սրան կթելադրենք մեր կամքը, հաղթող-ողորմածի կամքը»։

— Դենն ո՞ւր գնանք,— իբր անտարբեր, խոսեց Խալիլ բեյը։— Հաշտության սեղան նստողն անմիջապես պիտի կրակը դադարեցնի։ Երկուսդ էլ կարգադրեցեք, որ այլևս ոչ մի գնդակ չարձակվի և ո՛չ մի քայլ ետ կամ առաջ... Մինչև որ այստեղ որոշենք յուրաքանչյուրի սահմանները։

* *
*

Մայիսի 30-ի ժամը տասին պիտի սկսվեին հայ-թուրքական բանակցությունները, և մի ժամ առաջ Խատիսովը նորափեսայի պես զուգված-զարդարված ներկայացավ գործակիցներին։ Տրամադրությունը բարձր էր։ Պիտի պայմանավորվեին իրենց դիրքի մանրամասների համար, և Քաջազնունին սառ ջուր լցրեց նրա տաք գլխին։

— Ախր, ի՞նչ է պատահել, ա՛յ Ալեքսանդր Իվանովիչ, դեռ տեղ չհասած՝ մերկացել-նետվում ես հորձանուտը։ Կարծես մեզ համար միևնույն է. ո՛չ կորուստներ ենք ունեցել, ո՛չ էլ կորցնելու բան ունենք... Սպասենք, տեսնենք՝ ի՛նչ պիտի անեն մեր հարևանները։ Մտածենք, խելք-խելքի տանք...

Խատիսովն աշխատեց չվիրավորվել, չընկճվել նրա խոսքի ոչ այնքան պատշաճ տոնից։ Նույնիսկ փորձեց կատակի տալ.

— Սիրելիս, ինչքան էլ մտածես, երկու անգամ երկուսը չորս է։ Այս՝ առաջին։ Եվ երկրորդը. մեր հարևանների բռնած դիրքից խիստ անգոհ են Վեհիբն ու Խալիլը։ Այդ պատճառով էլ որոշել են զորք ուղարկել Թիֆլիսի վրա։

— Հայաստանից կշտացե՞լ են արդեն։

— Հայաստանի հետ ուզում են բարեկամանալ։ Եվ մենք պետք է օգտվենք բարեպատեհ առիթից։ Գոնե մի անգամ դիվանագետ լինենք, բարեկամս։ Մեզ ուղարկել են դիվանագիտական խորհրդաժողովի ո՛չ նրա համար, որ խռովկան երեխայի գեր խաղանք։

Այս «խռովկան երեխան» ազդեց Քաջազնունու վրա։ Նա մտածում էր, թե գուցե իսկապե՛ս ինքն այս դիվանագիտությու-

նից այնքան բան չի հասկանում, որ ուղղություն տա պատվիրակության անելիքներին։ Ուրեմն, էլ ինչո՞ւ չհետևել այն մարդուն, որն ի պաշտոնե և գործնականորեն գլխավորում է այդ աշխատանքը։ Հետևիր նրան և, եթե կարող ես, օգնիր, որ շրջանցվեն սխալներն ու թյուրատեսությունները... Սակայն հենց որ բանակցությունների սկզբից Խալիլը սեղանի վրա փռեց քարտեզը, Քաջազնունու աչքերը թռան ճակատին։ Այնտեղ Հայաստանի հարավ-արևմտյան սահմանն անցնում էր Էջմիածնի տակով։ Վեհիբն զգաց, որ այդ միշտ մռայլ մարդու հայացքը քարացավ սահմանի վրա, շտապեց հանգստացնել։ Մատն իրենց գծած սահմանի վրայով անցկացրեց. արնագույն կիսաօղակի մեջ էր առնված Ամենայն հայոց մայր սրբությունը։

— Էջմիածինը ձեզ է մնում, է՞լ ինչ եք ուզում,— դիվային ժպիտի միջից ասաց նա։— Ձեր հանրապետությունը կընդգրկի Սևանից մինչև Էջմիածին...

«Ահա թե սրանք ի՞նչ Հայաստանի հետ են ուզում բարեկամանալ, — դառնացած մտածեց Քաջազնունին, և աչքերի առջև սևացավ։ — Աստված իմ, այս ո՞ւր հասցրիր մեզ։ Բրեստ-Լիտովսկում հայերին էին թողնում Արաքսից հյուսիս ընկած ամբողջ տարածքը։ Եվ հայոց պատմաբանն ասաց՝ այսքանն այս ժողովրդին կարող է բավականանալ միայն իբրև գերեզման, բայց ո՛չ ապրելու տեղ... Իսկ հիմա՞։ Հիմա գերեզմանատեղն էլ կիսվել է։ Ո՛չ, կեսն է՛լ չկա, կեսն է՛լ չկա»։

...Թե ի՞նչ կատարվեց, ի՞նչ խոսեցին, ինչի՞ վրա կանգ առան, այլևս չէր հիշում, որովհետև այդ կրճատված, կիսված ու խեղված գերեզմանոցի միտքը պարուրել էր նրան, ահավոր մրոտ ձավանջի նման առել գիրկը և բաց չէր թողնում... Մեկ էլ հիշում էր, թե ինչպես Խալիլը վերջում խոսեց հայոց պետության մասին, այն պետության, որն, իբր, իրենց ողորմածությամբ ստեղծվում է այս երկրի վրա։ Հայոց պետությո՞ւն։

— Փոքր է,— ասաց,— շա՞տ փոքր։ Բայց հիշեցեք, որ ամեն ինչ փոքրից է սկսվում։ Փոքրից սկսվում է և կամաց-կամաց, համառորեն մեծանում։ Մենք կօգնենք, որ դուք մեծանաք ձեր երկու հարևանների հաշվին։ Մուսավաթականներն աչք են դրել Երևանի վրա։ Ասում են՝ «Այնտեղ մենք մեծամասնություն ենք կազմում, մուսուլմանները»։ Շա՞տ էլ մուսուլմաններդ մեծա-

մասնություն եք կազմում, հո աշխարհը մորեխ չի՞ կերել։ Մենք նրանց ախորժակի վրա քացախ կլցնենք, թույլ չենք տա...

Այդպես. ուրեմն, մուսավաթականներն էլ Երևա՞նն են պահանջել։ Եվ պահանջել են թուրքերից։ Բայց ինչո՞ւ թուրքերից։ Մի՞թե թուրքերն արդեն Երևանն առել են, դարձրել իրենցը։ Եվ ո՞վ է ասել, թե Երևանում մուսուլմաններն ավելի շատ են, քան հայերը։ Ո՞վ է ասել, որ թուրքերն էլ հավատացել են, բայց, այդուհանդերձ, հայերի իրավունքն են պաշտպանում, քանի որ մորեխը դեռևս չի կերել աշխարհը...

«Ահա թե ի՞նչ խաղեր են բեմադրում թուրքերն այդ մուսավաթականների հետ,— հանկարծ փայլատակեց Քաջազնունու մշուշված, մղձավանջոտ ուղեղում։— Թուրքերը նրանց սովորեցրել են, ուղղակի հրահրել։ Ասել են՝ եթե ուզում եք Սևանի արևելյան ափերը, Նախիջևանը, Զանգեզուրն ու Ղարաբաղը, ապա պահանջեցե՛ք Երևանը։ Այո՛, պահանջեցե՛ք Երևանը։ Մենք կմերժենք ձեր այդ պահանջը, և տեր կթողնենք մնացածին։ Այդպես են նվաճում նոր հողերն ու երկրամասերը. երկու քայլ առաջ, մի քայլ ետ...

Իրեն դիվանագիտական տաղանդից զուրկ մարդ էր համարում Հովհաննես Քաջազնունին։ Բայց այսքանը հասկացավ։

Կուսակիցները դիվանագիտության մեջ Սողոմոն իմաստունի պսակը կտային Ալեքսանդր Խատիսովին։ Եվ այդ Խատիսովը հիմա, թուրքաց «հոգատարության» ու «բարյացակամության» առաջ, կարկամած, քիչ էր մնում լիզեր Խալիլի ու Վեհիբի ձեռքերը... Նա արտասվելու չափ հուզված էր, մանավանդ Ֆերիկ Վեհիբի անկեղծությունի՞ց։

— Դուք չի՞ք տեսնում,— ասաց անկեղծ ու բացսիրտ Ֆերիկը,— ճակատագիրը Թուրքիային արևմուտքից քշում է դեպի արևելք։ Մենք հեռացանք Բալկաններից, պիտի հեռանանք նաև Աֆրիկայից։ Բայց պետք է տարածվենք դեպի արևելք. այնտեղ են մեր արյունը, կրոնն ու լեզուն, որոնք տարերային ձգողության ուժ ունեն։ Մեր եղբայրները Բաքվում են, Դաղստանում, Ատրպատականում ու Միջին Ասիայում։ Մենք պետք է ճամփա ունենանք դեպի այդ երկրները, մենք պետք է կապվենք նրանց հետ։ Եվ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր այդ ճամփի վրա։ Վանում դուք փակում էիք մեր ելքն ու ճանապարհը դեպի Ատրպատական։ Նախիջևանում, Զանգեզուրում ու Ղարաբաղում

դուք մեզ արգելում եք իջնել դեպի Կուրի ու Արաքսի հովիտները և գնալ դեպի Բաքու։ Կարսն ու Ալեքսանդրապոլը նվաճեցինք, որ հորիզոն բացենք դեպի Բորչալու, Ղազախ, Դաղստան և Հյուսիսային Կովկաս։ Ուրիշ ճար չկա. դուք պարտավոր եք մի կողմ քաշվել և բացել մեր ճամփաները։ Ահա թե որտեղ է մեր վեճը։ Հասկանո՞ւմ եք։ Պետք է մի կողմ քաշվեք։

Մի կողմ քաշվեք, այսինքն՝ առայժմ գուցե թառեք Սևանի արևմտյան ափերի բարձունքներին, որպեսզի մեր ոտքերի տակ չընկնեք, մինչև մենք հասնենք մեր համաթուրանական բաղձանքներին,— մի ոտքով Պոլսում, մյուսով՝ Կասպիականի ափերին,— և նրանից հետո արդեն ձեզ հետ կխոսենք, հարաբերություններ կճշգրտենք։

Այստեղ Քաջազնունու մշուշված ուղեղի ծալքերում խլրտացին, վերականգնվեցին ոչ հեռու անցյալի հուշերը։ Նա հիշեց Երիտասարդ Թուրքերի զառանցալի ծրագրերը Մեծ Թուրանի Թուրքական կայսրություն ստեղծելու վերաբերյալ... Բայց ինչո՞ւ սրանք այսօր հրաժարվում են աֆրիկյան մուսուլմանությունից ու «Գորշ գայլի» հայրենիք Սինց-ցզյանի անապատներից։ Մի՞թե պիտի գոհանան իրենց նախկին նվազագույն ծրագրով՝ Բալկաններից մինչև Բայկալ Փոքր Թուրան ստեղծելով... Ինչ էլ որ լինի, մենք անհարմար կերպով կանգնած ենք իրենց համաթուրանական, համաիսլամական, համաթուրքական մեծ կամ փոքր ծրագրի իրականացման ճանապարհին։

— Պատկերացնո՞ւմ եք,— այս էլ խալիլն էր, որ քիչ էր խառնվում զրույցին, սակայն ասում էր խոսքեր, որոնք համերաշխ էին Վեհիբի պնդումների հետ, երբեմն էլ ստվեր էին ձգում նրանց սուր անկյունների վրա,— շուտով կավարտենք այս պատերազմը և կգնանք խաղաղության մեծ վեհաժողովին... Ի՜նչ երջանկություն, երբ այդ վեհաժողովին ներկայանանք երկուստեք պարզերես. դուք՝ ձեր, թեկուզ և փոքրիկ, բայց սեփական, անկախ պետության փաստով, մենք՝ այդ պետությունը ձեզ տված։ Այն ժամանակ մենք ծեփած կլինենք այն բերանները, որոնք աշխարհը լցրել են հայերի ու թուրքերի թշնամության մասին սարքած աղմուկով։ Հիշեցե՛ք, ազիզ բարեկամներ, մենք ենք, որ իրար կողքի ենք ապրելու, իրար հարևան, և ոչ թե նրանք, որ բերան են պատռում հայի կամ թուրքի իրավունք-

ների մասին ճառելիս։ Մենք պետք է իրար զիջումներ անենք և ապրենք իբրև ազնիվ բարեկամներ, եթե ուզում ենք ապրել...

«Եթե ուզում ենք ապրել»։ Քաջազնունին իրեն անճարակ դիվանագետ էր համարում։ Սակայն այս կոչի խորքն էլ հասկացավ. եթե հայերդ ուզո՞ւմ եք ապրել...

Խալիլը մանվածապատ էր խոսում, բայց, վերջին հաշվով, ասում էր ամեն ինչ, առանց որևէ մութ հարց թողնելու։ Եվ երբ նա վերջնականապես հասկացրել էր, որ իրենք հայ «ազիզ բարեկամներին» պարգևում են «թեկուզ և փոքրիկ, բայց սեփական, անկախ պետություն», և պետք է գնային հանգստի, Վեհիբը վեր կացավ տեղից, գնաց դեպի միջանցքի կախարանը, այնտեղ իր ֆրենչի գրպանից մի ճերմակ փալաս հանեց, բերեց, գցեց Խատիսովի առաջը՝ սեղանի վրա։

— Այդ էլ ձեր պետական դրոշի իմ նախագիծը,— անորոշ ժպտալով ասաց նա։— Դուք խաչապաշտ եք և միշտ պարծենում եք այդ խորհրդանիշով։

Խատիսովը առանց դժկամության չանթեց ճերմակ փալասը, ցուցադրաբար բացեց. ճերմակ փալասի վրա սև խաչ էր պատկերված։

Քաջազնունին մտածեց, որ թուրքերն իրենց հովանավորության տակ մտնող հայերի ճակատագրի պատկերն անթերի դարձրին. եթե պատկերում են մի անձուկ գերեզմանոց, հարկ է, որ նրանից վեր էլ ծփա մի այդպիսի դրոշակ՝ սև խաչը վրան։

* *
*

Հ. Քաջազնունու օրագրից.

«Այսօր Թիֆլիսից եկան մեր պարագլուխները...

«Պարագլո՞ւխ»։ Ինչպե՞ս է կառուցվել այս բարդ բառը, «պար» և «գլուխ» մասերից։ «Պարը» կարծեմ պիտի նշանակի «կլոր»։ Այս պարագային շատ էլ համապատասխանում է. կլորգլուխնե՞ր։ Կլո՞ր, հեշտ գլորվելու ընդունակ գլուխները միայն կարող էին կանգնել ու այսօրվա ողորմելի, ոտքի վրա կանգնելու համար անգամ անզոր Հայաստանը հայտարարել անկախ պետություն։ Եվ ես նրանց հետ եմ։ Հո՞ղն այսպիսի գլուխներիս։

Հայոց վերջին արյան ծարավ Թուրքը միշտ էլ երազել է մի այսպիսի Հայաստան՝ ոչ ոքից կախում չունեցող, ավելի ճիշտ՝ ոչ ոքի հետ կապ չունեցող Հայաստան, որպեսզի հեշտ առնի իր ճիրանների մեջ ու խժռի։

Եթե մի քիչ փիլիսոփայորեն ընկալելու կարողություն ունենայինք, կտեսնեինք, որ աշխարհում առհասարակ անկախ պետություն չկա և այդպիսին չի էլ կարելի պատկերացնել։ Ամենավիթխարի պետություններն իրենց քաղաքականությունը պայմանավորում են իրարով։ Մի մեծը, նույնիսկ գերագահը՝ կախված է ոչ միայն ուրիշ մեծերից, այլև իր ենթականներից, ենթարկվում է նրանց շահերի թելադրանքին, այլապես իր կործանումը պիտի արագացնի։ Եվ որովհետև անկախ պետություններ չկան, իսկ Հայաստանի անկախությունն այս օրերին կարող են տեսնել միայն անուղղելի ցնդածները, ապա մենք, ուզածչուզած՝ իրականում՝ կլոր-գլուխներիս ուզածով, պետք է ապավինենք Թուրքիային։ Ասացի.

— Գառը գայլին պահ ենք տալիս։

Ասում են.

— Մենք պետք է լեզու գտնենք Թուրքի հետ։ Չէ՞ որ Թուրքերը տեր են դրության, անհրաժեշտ է հասկացողության գալ նրանց հետ, անուշի կապել։

— Հետաքրքիր մարդի՞կ եք,— ասացի։— Գիտեք, որ ամբողջ պատմության ընթացքին Թուրքը ձեզ հետ խոսել է մի անփոփոխելի լեզվով՝ բռնադատողի, հավատափոխ անողի, սպանողի լեզվով, և հույս ունեք, թե նա կբանեցնի ուրի՞շ լեզու, երբ որ դուք կռնակ եք դարձրել ձեր միակ ու հզոր բարեկամին և մերկ ու անպաշտպան ընկած եք իր ոտքերի տակ։ Դուք հույս ունեք, թե մեզ կհաջողվի հասկացողությա՞ն գալ Թուրքի հետ։ Ի՞նչ հասկացողություն, ի՞նչ փոխըմբռնում։ Թուրքի հետ փոխըմբռնո՞ւմ աջողեցնել։ Բայց այդ ի՞նչ հիմքով պիտի աջողեցնեք, երբ Թուրքը իր հավատի մոլեռանդությամբ ու չարագործի իր բնազդներով մեզ հիմնահատակ ոչնչացնել և աշխարհի երեսից ջնջել էր ուզում դեռ այն ժամանակ, երբ կարծում էր, թե մենք մի խեղճ ու անճար հպատակ ենք, իսկ այժմ գիտե ու համոզված է, որ մենք բոլորովին էլ խեղճ չենք և հատկապես անճար չենք, այլ գիտենք ու պահանջում ենք մեր պատմական

իրավունքները, կռվում ենք նրանց հաստատման համար, և մեր այդ կռվին էլ սատար ենք կանգնեցրել ամբողջ աշխարհի արդարամիտ մարդկանց կարծիքը։ Ճիշտ է, դա դեռևս հզորների՝ կարծիքը չէ, քանի որ այսօր, դժբախտաբար, արդարությունն ու հզորությունը համանիշներ չեն։ Բայց չէ՞ որ Թուրքն այնքան էլ հիմար չէ, որ մտածի, թե արդարությունը, մանավանդ, աշխարհի զանազան մասերում բարձրացած իր աղաղակով, դատարկ բան է՝ անարժան ուշադրության առնելու։ Վերջապես, չէ՞ որ մենք ենք եղել, որ մեր ամբողջ կյանքի ընթացքում կռվել ենք Թուրքերի դեմ... Մենք ի՞նչ վստահություն կարող ենք ներշնչել Թուրքերին, ինչո՞ւ պիտի նրանք ավելի ցանկանան բանակցել մեզ հետ, քան ոտքի տակ տալ ու անցնել՝ միավորվելու իրենց ցեղակիցների հետ։ Թերևս հաշվի առնելով մեր ո՞ւժը։ Բայց Թուրքերը տեսան այդ ուժը և, կարծեմ, առանձնապես պատկառելու պատճառ չունեն։

Եվ հետո էլ, Թո՞ւրքն է միայն, որի հետ մենք հին վեճ ունենք, և այն անհնար է լուծել, կամ գոնե մենք՝ մեր կուսակցությամբ հանդերձ, չենք կարողանում լուծել։ Երանի՜, թե այդպես լիներ։

Վրաց ժողովուրդը մեր հին ու վստահելի բարեկամն է։ Նրա հետ մենք դարեր շարունակ ապրել ենք իբրև բարեկամ հարևաններ և կապրենք անվերջ ու հավիտյան՝ առանց ետ նայելու։ Սակայն այսօր նրա ղեկավար մենշևիկներն ուրիշ հովերով են առաջնորդվում. նրանք ուզում են ամեն կերպ ապահովել իրենց գերիշխող դիրքն Անդրկովկասում, իրենց սահմաններն ընդարձակել համեմատաբար թույլ մրցակցի՝ Հայաստանի հաշվին և Գերմանիայի հովանավորությամբ ու Թուրքերի աջակցությամբ կազմել մի պետություն, որի համար սարսափելի չլինի ո՛չ անկախ առանձնությունը, ո՛չ էլ դաշնակցելը որևէ հզոր տերության հետ։ Մուսավաթի Ադրբեջանն էլ բնականորեն ձգտում է մերձենալ Թուրքիային, կապվել նրա հետ Հայաստանի վրայով, Հայաստանի դիակի կամ գոնե հայկական այն մարզերի՝ Նախիջևանի, Զանգեզուրի, Ղարաբաղի ու հին Ուտիքի վրայով, որոնց կորստից հետո էլ, պարզ է, շնչահեղձ պիտի արվի Հայաստան կոչված այն խրտվիլակը, որ կուչ եկած է լինելու Վեհիբի ու Խալիլի գծած խղճուկ տարածքի վրա՝ Արարատյան դաշտի կեսում ու Սևանի արևմտյան ափին։

Ահա ա՛յս է իրականությունը։ Եվ մենք համարձակվում ենք այս դաժան իրականության մեջ մեր ազգի բախտի տնօրենը դառնալ։ Իրավասո՞ւ ենք դրա համար։ Ո՞ւժ ունենք այդ պատասխանատու, ճակատագրական դերը ոչ միայն ստանձնելու, այլև հաջողությամբ իրականացնելու։

Ցավալի ու ամոթալի է խոստովանել, բայց փաստն այն է, որ մենք դեռևս չենք հասունացած մեր վեճերը հարթելու համար։ Դեռևս անհրաժեշտ է մի արտաքին ուժ, արտաքին հեղինակություն, որպեսզի գա ու Անդրկովկասում ազգամիջյան խաղաղություն ապահովի։

Ես հասկանում էի վրաց մենշևիկներին, առավել ևս ադրբեջանական մուսավաթականներին, երբ նրանք ճակատի զոռով փորձում էին կտրվել Ռուսաստանից։ Նրանք ինձ չափ խելք ունեն, իհարկե, և գիտեին, որ ռուսական ազդեցությունից դուրս եկած Անդրկովկասում խոսքը պատկանելու է Թուրքիային։ Գիտեին, մանավանդ որ նրանց անդադար այդ քայլին է մղում հենց Թուրքիան։ Գիտեին, սակայն չէին վախենում։ Պարզապես պատճառ չունեին վախենալու։ Ազգայնական ադրբեջանցիների համար դա ամենից հրապուրիչ, ամենաերանելի հեռանկարն է։ Վրաստանը, թերևս հրաժարվելով Զաքաթալայից՝ հօգուտ Ադրբեջանի և Աջարիայից՝ հօգուտ Թուրքիայի, բայց միաժամանակ կլորացնելով իր սահմանները ի հաշիվ Հայաստանի, կարող է կազմել մի շատ կոկիկ պետություն և, շնորհիվ հաջող աշխարհագրական դիրքի, լեռներին ու ծովին հենված, ազգայնորեն ամփոփված իր մեջ, ապրել ու զարգանալ Թուրքիայի կողքին, առանց նրան վնասելու, հետևապես և առանց նրանից լրջորեն վտանգված լինելու։ Իսկ Հայաստա՞նը։ Նույնը կարելի՞ է ասել Հայաստանի մասին, որը խրված է հայակուլ Թուրքիայի ու մուսավաթական Ադրբեջանի միջև, խանգարում է թե՛ մեկին, թե՛ մյուսին և որ այնքա՞ն հեշտությամբ կարող է վերացվել մեջտեղից...

Այն օրը, երբ Անդրկովկասյան միացյալ հորջորջված կառավարությունն իրեն կտրեց Ռուսաստանից, և ռուսական զորքերն ու վարչական մարմիններն սկսեցին ետ քաշվել Անդրկովկասից, այն օրը հայ ժողովրդի և ապագա Հայաստանի գոյությունը վտանգի տակ դրվեց մեծապես։

Նրանք ասում են.

— Դու միշտ երազող ես եղել և ռուսական պետության հետ ես կապում քո բոլոր երազները։ Այդ ռուսական պաշտոնեությո՞ւնը չէր, որ մի քանի տասնամյակ առաջ փակել էր մեր դպրոցները և ուզում էր գերեզման դնել մեր ազգային կյանքի ինքնուրույնությունը։

Իսկ ես ասում եմ.

— Ո՛չ և հազար անգամ ո՛չ. ես՝ երազողս, Ռուսաստանի հետ կապում եմ իմ ո՛չ բոլոր երազները. որովհետև դա կլիներ պորտաբուծություն։ Ես Ռուսաստանի գոյության հետ կապում եմ իմ ազգի ֆիզիկական գոյության ապահովությունը։ Եվ ձե՛զ չէ, որ պիտի հիշեցնեմ. այսպես էին մտածում մեր ազգի բոլոր իսկական մեծերը։ Աբովյանն օրհնում էր այն ժամը, երբ ռուսն իր ոտքը դրեց հայոց հողի վրա։ Որովհետև այդ ժամից սկսած հայ ազգի գոյության հարցը դադարեց հարց լինելուց։ Հովհաննես Թումանյանը՝ մեկն ամենապայծառ այն մտածողներից, որոնք ծնվել են հայ մոր արգանդից, համոզված է, որ հայը միայն ռուսի ու Ռուսաստանի հետ կարող է ապրել իբրև ինքնուրույն ազգություն և ամենասքանչելի բաներն է մաղթում Ռուսաստանին, քանի որ համոզված է նաև, թե որքան ազատ ու լուսավոր լինի Ռուսաստանը, այնքան լավ նրա բարեկամի համար, այնքան լավ ու բարի նաև աշխարհի համար, որովհետև այդ մեծ մարգարեն տեսնում է, որ Ռուսաստանն աշխարհին ևս ասելիք ունի... Դուք կարող եք ասել՝ Աբովյանը չգիտեր մեր կուսակցության ու նրա ազատագրական ծրագրերի մասին։ Իսկ Թումանյա՞նը... Հետո էլ, չէ՞ որ մեր կուսակցության մեջ ևս կային ու կան գործիչներ, որոնց մտահոգությունն է՝ ազգի ճակատագիրը կապել Ռուսաստանի հետ։ Նրանք ամեն ջանք գործ էին դնում, որ նոր Ռուսաստանն իր ձեռքը վերցնի հայոց բախտի տնօրինությունը։ Կարծում եք, որ Արամին մեր համազգային ղեկավարության շարքից հանեցիք և գավառապետական իրավունքներով ուղարկեցիք Երևան, դրանով ձեր շարքերը մեկընդմիշտ մաքրեցի՞ք այլախոհներից։

Ինչ վերաբերում է դպրոցներին, այստեղ էլ ցարական կառավարության ազգահալած քաղաքականությունը փնովելիս եկեք չմոռանանք նաև մեր ապիկարությունը։ Ցարի գործակալները ոչ թե հայկական դպրոցները փակեցին, այլ բաց արին ռուսա-

կան դպրոցներ։ Եթե մենք չէինք ցանկանում այդ դպրոցները, մեր երեխաներին չպիտի կտրեինք մեր ազգային դպրոցից։ Եվ, եկեք նաև ազնիվ լինենք, անկախ ու ինքնուրույն գոյության թմբկահարներդ երբ ձախողվում եք, պետք է քաջություն ունենաք ձեր վիճակի վրա բաց աչքերով նայելու, չվախենաք նրա մասին ճշմարտությունը լսելուց, եթե ինքներդ ի վիճակի չեք այդ ճշմարտությունն ասելու։

Դուք համոզված եք, որ Ռուսաստանի ներկայությունն Անդրկովկասում կարող է շատ զիջումներ պահանջել մեր քաղաքական ու ազգային ինքնուրույնությունից։ Ես ձեզ հավատացնում եմ, որ մոլորություն է այդպես մտածելը։ Ոչ մի տեղ ազգերի դաշնակցությունը, որ միջազգային հարաբերություններում կոչվում է ֆեդերացիա, չի նսեմացնում դաշնակիցների ինքնուրույնությունը։ Իսկ չունեցած քաղաքական ինքնուրույնության մի մասի կորստի վախը մեզ չպետք է խրտնեցնի՝ թույլ չտալով որևէ լուրջ քայլ ձգելու այդ բնագավառում։ Մի՞թե մենք երբեք էլ չպետք է փորձենք հասկանալ շատ կարևոր մի ճշմարտություն. պատմությունն ունի իր տրամաբանությունը, որ մենք անզոր ենք փոխելու։ Ամենաշատը, որ կարող ենք անել ու պետք է անենք, դա այն է, որ հասկանանք, հաշվի առնենք ու օգտագործենք կարելին։ Անհնարին ցանկալիի ետևից վազելով՝ չկորցնենք հնարավոր իրականը ձեռք բերելու և նրանով մեր ազգային կյանքը կազմակերպելու շոշափելի հնարավորությունը։

Ասում են.

— Ռուսաստանն այսօր ինքը խարխափում է լինելության բավիղներում, և միայն անխոհեմ քաղաքագետը կարող է նրա հետ կապել շատ թե քիչ կարևորություն ունեցող որևէ հեռանկար։

Իսկ ես համոզված եմ, որ այսօր չէ վաղը ոտքի է կանգնելու Ռուսաստանը և վերստին դառնալու է մեր միջավայրի (ես նկատի ունեմ Անդրկովկասն ու հարակից երկրները) հարցերի համար ամենավճռական խոսքի տերը։ Դուք չե՞ք տեսնում այդ օրը, ուրեմն լավ չեք ճանաչում այս աշխարհի շարժիչ ուժերն ու նրանց շարժման ուղղությունը։ Դուք սարսափում եք այսօրվա Ռուսաստանում գլուխ բարձրացրած ուժերից։ Ավելի վատ ձե՛զ համար։ Կեշանակի՝ դուք, դարձյալ գործը թողած՝ գործիքին եք ծառայում։ Ե՞ս եմ մոլորվել, ե՞ս եմ հավատափոխու-

թյան ենթարկվել։ Բայց ես այսօր ուրիշ բան չասացի, քան ասում ու մտածում էի երեկ։ Այն հիմնական գաղափարը, որ ղեկավարել է ինձ երկար տարիներ, ղեկավարում է նաև այսօր։ Ես չունեմ նոր պաշտամունք, չեմ կառուցել նոր կուռքեր, մնում եմ հավատարիմ իմ դավանած «հին աստվածներին»։ Այն, որ նոր է թվում ձեզ, ինձ համար նույն հինն է, հնի շարունակությունը, զարգացումը։

Իսկ եթե այնպես պատահեր, որ ես այսօր ստիպված լինեի ասելու ուրիշ բան, քան երեկ եմ ասել, մի՞թե այդ քայլս էլ պետք է ենթակա լիներ դատապարտության։ Մենք կյանքի մեծ ճանապարհ ենք բռնել և անցել ենք նրա ոչ քիչ մասը, որը երևի թե ամենադժվարն էր, ամենասարսափելին, հատկապես մեր ազգի համար։ Եվ ինչո՞ւ այսքանը մեզ չպետք է մի բան սովորեցներ։ Թեթևամտություն կամ փոփոխամտությո՞ւն է, արդյոք, խրատվել, դասեր առնել անցյալից, ճանաչել իրականությունը և ըստ այնմ վարվել։ Եվ ի՞նչ մի առաքինություն է պնդել, թե այսօր իրավունք չունենք այսպես մտածելու, որովհետև երեկ այլ կերպ ենք մտածել։ Այդ ի՞նչ անձեռնմխելի ու սրբազան արժեք է ներկայացնում մեր երեկվա մտածածը, որ չի կարող վերաքննահատել կամ տեղի տալ նոր, ավելի լուրջ ու հավասարակշիռ մտածումների։

Երբեք էլ մեղք չէ, ոչ էլ ամոթալի, եթե մեկը, բարեխղճորեն ու անկեղծորեն վերաքննելով նույնիսկ իր հավատը, տեսնի, որ իր պաշտած աստվածները կուռքեր են եղել, և գնա պաշտելու նոր աստվածների։ Եթե ինձ հետ պատահեր այդ բանը, ես չէի վախենա կրոնափոխի անունից ու բացահայտորեն կերթայի աղոթելու իմ նոր եկեղեցում։ Սակայն հաճախ այնպես է պատահում, որ փոխում են ոչ թե եկեղեցին, այլ միայն քահանաներին ու ժամկոչներին, որոնք եկեղեցու հասարակ սպասավորներն են և ուրիշ ոչինչ։

Նրանք ինձ կոչեցին համառ մարդ և ձեռք թափ տվին՝ մտածելով, որ ես ծուռ ճանապարհ եմ բռնել և ետ պիտի կանգնեմ միայն այն դեպքում, երբ քիթս դեմ առնի որևէ անհարմար տեղի։

Ա՜յ, սա՜ որ մոլորություն է։ Ես ոչ միայն համառ չեմ, այլև շատ ենթարկվող, ուրիշներին լսող ու շրջվող, եթե նվազագույն կասկած կա մեջս իմ բռնած դիրքի վերաբերմամբ։ Փորձով դի-

տեմ, թե որքան դժվար է ըմբռնել իրականության գաղտնիքները և միշտ հակված եմ ենթադրելու, թե ընկերս ինձանից շատ բան գիտե, ինձանից ավելի լավ է հասկանում մեր անելիքը։ Բայց եթե համոզված եմ, որ սխալվողը ոչ թե ես եմ, այլ դիմացինս, այստեղ այլևս ի՞նչ զիջեմ։ Համառություն չէ սա, այլ պարտաճանաչության ու սկզբունքայնության այն պարտադիր որակը, որի հակառակը պետք է կոչվի անբարոյականություն»։

* *
*

Հովհաննես Քաջազնունու նման մարդիկ բնավորության կամ տրամադրության մեծ տատանումներ չեն ունենում։ Ասենք եթե երեկ իրենց երջանիկ են զգացել, ապա այսօր պարուրվեն թախծությամբ։ Առավել ևս՝ նրանք այսօր չեն մերժի այն գաղափարը, որին նախապատվություն են տվել երեկ ու մեկել օրը։ Նրան այդպես էին ճանաչում կուսակիցներն ու բարեկամները։ Նրան վստահում էին, որովհետև ամեն պարագայի վստահելի են հոգու և ոգու ողնաշար ունեցող մարդիկ։

Սակայն վերջին օրերին նա նույնիսկ իր համար էլ դարձել էր անճանաչելի։ Մայիսի 28-ի ժամը 12-ին, երբ Թիֆլիսում հռչակում էին Ավետիս Ահարոնյանի, Նիկոլ Աղբալյանի, Ալեքսանդր Խատիսյանի և իր գրած բանաձևը Հայաստանի կառավարություն ստեղծելու մասին, նա Ահարոնյանից ո՛չ պակաս ոգևորված էր, խանդավառ ու, մանավանդ, ռոմանտիկ։ Եվ այնպես էր կարծում, թե արդեն գտնվել է հայ ազգը փրկելու միակ ու անբեկանելի ճանապարհը։ Իրավ է, որ շուրջը դեռ խեղճություն է, գաղթականների անորոշ վիճակ, մի բուռ դարձած երկրից գալիս են միայն տագնապալից լուրեր։ Սակայն ստեղծվող կառավարության, այսինքն՝ նոր պետության պատկերի հետ հնարավոր էր համարում կապել առավել կամ պակաս անմշուշ մի հեռանկար, համազգային կյանքի ստեղծման, նրա զարգացման ու բարգավաճման հնարավորություններ։ «Թե մեզ չվիճակվի էլ այսքանը տեսնել, հույսն ու վճիռը պահ կտանք հաջորդ սերնդին,— մտածում էր նա և իբրև ճարտարապետ էլ գտավ մի հարմարագույն տարբերակ։— Մենք այդ սերնդ-

դին ժառանգություն կթողնենք շքեղ ուրվագիծն ու հանգամանալից նախագիծն ազգային կյանքի այն շինության, որը կկառուցվի, անպայմա՛ն կկառուցվի, որովհետև մենք պետություն կունենանք մեր փոքրիկ երկրում, մեր վերածնված սեփական պետությո՛ւնը մեր ավանդական հողի վրա»։

Սակայն եկավ Բաթում, տեսավ թուրքերի հայատյաց մռութները, ծանոթացավ հարևանների զգուշավոր, մեծ մասամբ գաղտնի, ծուռ-ծուռ քայլերին, և նախօրեի խանդավառությունը հօդս ցնդեց, սրտին իջավ մի ծանր մտատանջություն, որից փրկվելը թվում էր անհնար... Պատկերն իր լրումին հասավ Ֆերիկ Վեհիբի ու Խալիլ փաշայի մոտ, երբ, իբրև իրենց հետ ունեցած անդուր զրույցի եզրափակում, այդ անպատկառներն ապագա Հայաստանի համար ցույց տվին անձուկ, գերեզմանային մի սահմանագիծ և առաջարկեցին նրա վրա կանգնեցնել սև խաչով զրոշակ...

Ի՞նչ ահավոր ժամեր ապրեց դրանից հետո, ինչպիսի՜ հիասթափություն։ Ասենք, դա հիասթափություն էլ չէր, քանի որ նման զգացում ունենում են նրա՛նք միայն, ովքեր ավելի վաղ ապրել են հիացումի անխառն բերկրանքը։ Նա նման էր այն մարդուն, որ կործանումից հետո ոտքի է կանգնել, գտել հավասարակշռությունը և պիտի քայլ գցի դեպի առաջ և հանկարծ մեջքին նոր մի հարված առնելով՝ վայր է ընկնում ու թվում է, թե պիտի խառնվի հարյուր տարվա մեռելներին...

Եվ եղավ նոր արտասովորն ու անսպասելին։

Առավոտյան, հենց Խատիսովի ավելորդ պատեպատ զարկվելու, հարևանների խուսափուկ ու մութ գործողությունների և նույնիսկ թուրքերի հյուսած մղձավանջի պայմաններում իր հողին պարզվեց, ասես հորիզոնում բացվեց մի փոքրիկ արև, որ մաղում էր սրբազան լույս ու սրտապատար ջերմություն... Եվ ո՞րն էր ակունքը, ի՞նչը դարձավ սկիզբն այս վճռական, այս անպայման վճռաբեկ շրջադարձի։ Ա՛յն, որ հուսահատության ծանրագույն պահին ներսում ծառս եղավ ընդդիմադիր ոգին և իրեն այսպիսի հարց տվեց. «Իսկ դու ի՞նչ էիր սպասում։ Ի՞նչ էին սպասում նրանք, որ քեզանից առաջ ու ամենքից առաջ իրենց կյանքը դրել էին հայրենյաց սրբազան զոհասեղանին։ Քանի՞ տասնյակ տարիներ հեղվում էր նրանց արյունը, աղատագրական կռվի զնացած կամավորների, ֆիդայիների ու հայ-

դուկների արյունը։ Մի՞թե աշխարհի այդ ամենասուրբ նահատակները, նրանց առաջնորդներն ու շարքայինները բռնության ու խավարի թագավորության մեջ ավելին էին երազում, քան սեփական պետականությունն այս արևի տակի, մեր հին ու դրժբախտ հայրենիքի որևէ մասում։ Ավելին չէի՞ն երազում։ Չէին՞ է՛լ կարող, որովհետև, որքան էլ անուղղելի երազողներ, նրանք բաց աչքերով էին նայում աշխարհին և տեսնում էին, թե ինչպես աշխարհի տերերից յուրաքանչյուրը լոկ իր շահն է փնտրում պատերազմի դաշտերում ու քաղաքական շուկաներում։ Իսկ մեր ազգի լացն ու օգնության կանչը լավագույն դեպքում ոչինչ չպարտադրող ցավակցության էին արժանանում, ուրիշ ոչնչի։

Ուրեմն, եթե ծնվում է պետականությունը, և դու էլ մասնակցություն պիտի ունենաս նրան ոտքի կանգնեցնելու, նրա առաջին քայլերը կատարելու երազելի գործի, ուրա՞խ եղիր հենց դրա համար։ Դա քո մեծագույն երջանկությունն է, այնպիսի մի բախտ, որ ազգի պատմության մեջ վիճակվում է շատ քչերին։ Երևի ճակատագրի ընտրյալնե՞ր։

Պապաջանովը կարող էր զարմանալ Հովհաննես Քաջազնունու զարմանալի վերափոխության վրա։

Բանազնացության մեջ արդեն իրեն ուսուցչապետի դերում պահող խատիսովը թերևս իր ծառայությո՛ւնը համարեր գործընկերոջ վերածնունդը և կենտրոնական ղեկավարությանը գրեր, թե իրենց տրամադրությունը շատ բարձր է, և մանավանդ ինքն ու Քաջազնունին թուրքերի բարյացակամությամբ վարձատրված են ու նրանցից շնորհակալ...

Իսկ ինքը՝ Քաջազնունին, ներքնապես համոզված էր, որ իր վերածնունդով պարտական է կուսակցական նախնիների, կամավորական շարժման, ֆիդայական արյան ոգեկոչումին։ Ի հեճուկս թուրքա՛ց, ի հեճուկս հարևանների՛, ի հեճուկս աշխարհի չարությա՛ն ու ամեն տեսակ խարդավանքների՛։

* *
*

Միջօրեից հետո Արարատյան երկրի բոլոր կողմերից, գյուղերից ու ավաններից, վանքերից ու եկեղեցիներից հայ ժողովուրդն առու-առու հոսում էր դեպի Վաղարշապատ՝ հինավուրց

Նոր-քաղաքը։ Բազմությունները հորդում էին դեպի Մայր տաճարը, որն այլևս անզոր էր տեղ տալու նորեկներին, և ալիքները կուտակվում էին տաճարի շուրջը, Սուրբ Գայանեի ու Սուրբ Հռիփսիմեի վանքերի բակերում, դրանք իրար միացնող փողոցներում ու հրապարակներում։ Զանգահարները դեռևս առավոտյան մի փոքր դադար տալով յոթնօրյա անդադրում զողանջին, հայտնել էին, որ իրիկնադեմին էջմիածնի Մայր տաճարում պատարագի արարողություն է լինելու ի պատիվ հայ ազգի մեծ հաղթանակի։ Այդ ավետիս-հայտարարության վերջին բառերը խառնվել են վերստին նորոգված զանգաղողանջներին, որոնք այլևս չպետք է թողնեին, որ մարդիկ հանգիստ առնեն սեփական օջախներում։

Ետճաշյա ժամը չորսին պատարագամատույց հոգևորական խումբը ելավ վեհարանից և շարժվեց դեպի Մայր տաճար՝ ճանապարհի կուտակ-կուտակ դարձած բազմությունը ճեղքելով։ Օրերաց բակն ու այդին ափեափ հեղեղած ժողովուրդը։ Այս ու այնտեղ «ողջո՜ւյն» և «կեցցե՜» կանչեցին Գևորգ Տփղիսեցի կաթողիկոսի պատվին։

— Փա՜ռք Ամենայն հայոց վեհափառ և սուրբ հայրապետին։

— Կեցցե՜ մեր հայրենյաց պաշտպանը...

Սակայն որքան թափորն առաջ էր շարժվում, այնքան պաղում էր կաթողիկոսի անունը։ Մարդիկ իրար տալով բազմության խորքերին հասցրին, որ վեհափառը տկար է, և պատարագի արարողապետն է լինելու Գարեգին սրբազան Հովսեփյանը։ Հիմա էլ համատացյալ ծովի ալիքների վրա սրբազանի նոր անունն էր թևածում.

— Փա՜ռք ու պատիվ մեր օրերի սուրբ Ղևոնդին։

— Կեցցե՜ Ղևոնդ-Գարեգին սրբազանը, հայ ազգի պարծանքը։

Սրբազանը, փոքրամարմին ու վտիտ, շրջապատված հոգևոր դասի տարբերաստիճան ներկայացուցիչներով, մոայլ զանգվածի մեջ վեհարանից գնում էր դեպի մայր աթոռը։ Տրդատա դռան կամարի տակ թափորը կանգ առավ մի երկվայրկյան, որպեսզի ժողովուրդը ճանապարհ տա։ Սրբազանը, վեղարի ճակատամասը բարձրացնելով, նայեց աջ ու ձախ, ետ ու առաջ, տեղից շարժվեց, և նրա դեմ, իրար հրելով, մարդիկ մի նեղ ակոս բացեցին։

Գարնան վերջն էր, սակայն Վաղարշապատի վրա տարածվել էր ամառային տոթը։ Իրար սեղմված մարդիկ հևում էին։ Քրտնած ու փոշեթաթախ էին, քաղցից ու անցյալ դժնի դեպքերից հյուծված։ Սակայն հաղթանակը կյանք էր ներարկել նրանց ուժասպառ մարմինները։ Գաղթական մեռնող խլյակները լցվել էին նոր ավյունով, իրար աչքալուսանք էին տալիս, երազում էին այն օրը, որ շարժվելու են դեպի հարավ, դեպի լքած հարազատ օջախները։

Ցնծում էր ժողովուրդը։ Տեղացի ու գաղթական խառնվել էին իրար, մոռացել դժգոհություն ու տրտունջ, կորստյան ցավ ու գալիքի անորոշություն... Իսկ սրբազանը քայլում էր գլխահակ՝ առայժմ սոսկ իրեն հայտնի լուրից զարկված և չգիտեր, թե ի՞նչ պիտի պատասխանի այս խաբված բազմություններին, եթե հանկարծ... Օ՜, ո՜չ, աստված թող չարը խափանի։

Երկու ժամ առաջ գնացել էր Գևորգյան ճեմարան։ Ուզում էր գոնե թռուցիկ հայացքով ստուգել այդ ուսումնական հաստատության շենքի վիճակը։ Չէ՞ որ հույս ուներ, թե շուտով, թեկուզև մեկ-երկու ամիս հետո հաղթանակած ժողովուրդը կվերադառնա իր խաղաղ կյանքին, կսկսի մշակել իր դաշտերն ու այգիները, կբացվեն մեծ ու փոքր դպրոցների դռները... Կբացվի նաև իր տնօրինությանը հանձնված Գևորգյան ճեմարանը։ Եվ անհանգիստ, հոգու հայացքը միշտ վազվան հառած մարդն ուզում էր իմանալ, թե շենքն ի՞նչ վիճակում է զորանոց ու ռազմաճակատի շտաբ դառնալուց հետո, ինչի՞ կարիք ունի, որպեսզի պատրաստ լինի տարտղնված իր սաներին վերստին գիրկն ընդունելու։ Բակում հանդիպեց Երևանյան ռազմաճակատի շտաբի պետ Վեքիլյանին։ Մռայլ էր ծերունազարդ գնդապետը, որ ուրիշ պարագաներում սրբազանին դիմավորում էր սրտագին խոսքով ու անշինծու աշխույժով։ Ճերմակ հոնքերը կախ՝ ողջունեց գլխի թեթև շարժումով և անշտապ հեռանում էր։ Սրբազանը զարմացավ։

— Աչքներս լո՜ւյս, գնդապետ, մեր ազգի հոնքամեջն էլ կբացվի,— ետևից կանչեց նա, և գնդապետը կանգնեց, տխուր, խորհրդավոր տմբտմբացրեց գլուխը։— Ի՞նչ է պատահել, գնդապետ մի՞թե ազգի ուրախությունը ձեզ չի վարակել։

— Ազգն անժամանակ է ուրախանում, սրբազան։

— Ինչու՞,— սրբազանը չհավատաց ականջին և փորձեց կա-

տակել։— Հիմա էլ հո նոր առաջարկությո՞ւն չունեք Մայր տաճարը տեղահանելու։

Վեքիլյանը մոտեցավ համրաքայլ. նրա զինվորական ծանր կոշիկները հողաթափների նման քսքստացնում էին միայն։ Մոտիկից զառամյալ ծերունի էր գնդապետը, այտերի մաշկը կախ ու թորշոմած։ Ձայնն ավելի էր մատնում ծերությունը։

— Կարգադրված է մոռանալ հաղթանակը։

— Իսկ ո՞վ է այդ խելագար կարգադրության տերը։

— Ազգի իմաստունն է՛ր։

— Բան չհասկացա։

— Մի ժամ առաջ Ահարոնյանի հեռագիրը հայտնեց, որ զինադադարակությունը ճանապարհվել է Բաթումի՝ զինադադար ու հաշտություն կնքելու։ Հիմա էլ Կարսից հեռախոսեցին, որպեսզի դադարեցնենք պատերազմական գործողությունները։

— Կա՞րսը մեր ինչ ցավն է։ Կարսի՞ց ով կարող է այդպիսի թշնամություն անել։

— Գեներալ Կորգանովն էր խոսում Ալեքսանդր Խատիսովի անունից։ Ասաց՝ Խատիսովը Բաթումից է զանգահարել, և խնդրեց այդ կարգադրությունը հասցնել Արամին, գեներալ Նազարբեկովին ու բոլոր հրամանատարներին։

Գնդապետին կանչեցին շտաբից։ Սրբազանը ճեմարանի բակից հեռացավ կոտրված սրտով, և ահա երկու ժամից ավելի է, չի կարողանում ուշքի գալ, գտնել իրեն հատուկ ինքնատիրապետումի ուժը։ Զգիտեր՝ ո՛վ և ինչպե՛ս պիտի կանգնի այդ անձնատվական կարգադրության դեմ, շարունակի հաղթական պատերազմը, մինչև որ ամբարտավան թուրքը ճանաչի հայի իրավունքը, մինչև որ հայոց աշխարհն ազատ շունչ քաշի, իր տաբագիր զավակների համար վերստին դառնա տուն ու օջախ...

Տրդատա դռան տակով անցնելիս սրբազանը նայեց հազարամյա կամարին, մտքում ինքնասփոփանքի խոսքեր մրմնջաց և միտքը շարունակեց բարձրաձայն.

— Ո՞վ սուրբ ամենակարող, դո՞ւ խափանես չարը...

Մայր տաճարը թնդում էր խուռներամ բազմության խոսք ու աղմուկից։ Կաթողիկոսական տեղապահ Տիրայր արքեպիսկոպոսը բեմառաջք դուրս գալով՝ ադամանդազարդ խաչը բարձրացրեց, որպեսզի լռություն հաստատվի։ Ժողովուրդը շարունակում էր աղմկել։

— Ա՜զգ հայոց։— Աղոթասրահում կարդուկանոն հաստատող կամավորներ հայտնվեցին, որոնք այս ու այն կողմ նկատողություն էին անում, սաստում ու խրատում։— Եղբայրք սիրեցյալք,— խոսել սկսեց մեծափարթամ արքեպիսկոպոսը,— տասն օր է ընդամենը, որ մահահոտ տագնապը լցվեց Արարատյան երկիր, և Ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ Տփղիսեցին հենց այստեղից, մեր տեր ու ամենափրկիչ Հիսուս Քրիստոսի աստվածային լույսի Իշման տեղից պատգամեց ազգովին կռվել թշնամու դեմ... Տասն օր, որ ձգվեց տաս դարու պես՝ փորձելով մեր հավատն ու կամքը, մեր ուժն ու հայրենասիրությունը։ Եվ ահա մենք ամենեքյան, մեր հավատացյալ ամբողջ ազգով ապրում ենք հաղթանակի բերկրանքը։ Փրկված է Արարատյան երկրի այն մի բուռ ամբողջությունը, որ դարեր առաջ մտել է համայն քրիստոնեից աշխարհի Աստվածաշունչ մատյանը՝ իբրև մեր ազգի ավանդական ու սուրբ հայրենիքի անկորնչելի կորիզը։

Երիտասարդ ու եռանդուն մի վարդապետ առաջ եկավ և ձեռքերը կրծքին խաչեց, նորից տարածեց։

— Ա՜զգ հայոց,—հասարակությանը դիմելով՝ խոսեց նա,— սուրբ սրտիւ և անհողդողդ հաւատով կացցուք միաբան յաղօթս և փառաւորեսցուք զամենափրկիչ Աստուած։ Փա՜ռք ամենայն զորաւարաց մերոց, և զօրաց, և զինուորեալ աշխարհականաց։ որք միակամ եդին զանձինս իւրեանց պատարագ կամաւոր ի սեղանի փրկութեան ազգի մերոյ...

Երիտասարդ վարդապետը մի քանի քայլ ետ գնաց, և սուրբ սեղանին մոտեցավ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը։ Անզուսպ ժողովուրդը ծփում էր, ալիք տալիս։ Աղոթասրահում որոտաց միահամուռ ու միակամ գոչյունը.

— Կեցցե՜ Գարեգին սրբազանը։

Սրբազանը երկու ձեռքերը վեր պարզած՝ խնդրեց լռություն պահպանել։

— Փա՜ռք Գարեգին Հովսեփյանին, փա՜ռք, փա՜ռք,— հանկերգում էր հասարակությունը սրահում և նրանից դուրս։

Սրբազանի դալուկ դեմքին անհանգստություն կար ու անանձնական մի տագնապ։

Աղոթասրահը լռեց վերջապես։ Այնպիսի անդորր էր, որ լսելի էին արդեն դրսինների քրթմնջոցները։

Հնչեց Գարեգին սրբազանի երգեցիկ ու տիրական ձայնը.

— Փա՜ռք քեզ, հայր ամենակալ, որ պարգևեցէր մեզ զհաղթական զօրս զայս տեսանել բարեաւ և խաղաղութեամբ։

Դպիրների խումբը երգեց.

— Օրհնեա՜լ է Աստված...

— Տե՜ր աստուած մեր, — նորից խոսեց Գարեգին սրբազանը, և դեմքը, հայացքը, ամբողջ կեցվածքը արտահայտում էին ցավ ու տառապանք։—Դու Ամենափրկիչ, յիշեա՜ ողորմութեամբ քո զհոգիս բազմերամ նահատակաց մերոց՝ ազնվականաց և հասարակաց, որք եղին զանձինս իւրեանց ի սեղան փրկութեան ազգին, լուսեղէն և երկրային պսակացն արժանի՜ս արա զնոցա։

— Յիշեա՜, տէր, և ողորմեա՜,— պաղատագին երգեցին դպիրները։

Ապա երկու քայլ առաջանալով՝ սրբազանը բազմությանը դիմեց հայրենասիրական մի ճառով, որի մեջ հառնում էին հին ու նոր ժամանակների մեր հայրենապաշտպան հերոսների կերպարները՝ Հայկ և Արամ, Վաղարշակ և Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան և Բագրատունյաց ասպետները, Կիլիկյան իշխանապետության գահակալները և ուշմիջնադարյան մեր ազատամարտերի անվանի հերոսներն ու անանուն նահատակները։

—Եկել էր ժամը՝ ապացուցելու, որ մենք մեր ազատասեր ու հերոսական նախնիների ժառանգներն ենք հարազատ,— այսպես իր խոսքն էր շարունակում Գարեգին սրբազանը։— Եկել էր ժամը՝ ապացուցելու, որ մենք, թեպետ և կիսով չափ զոհ գնացած թուրքի յաթաղանին, մյուս կիսով՝ ենթակա նույն դժխեմ բախտին, կարող ենք ոտքի կանգնել ազգովին՝ զորավար ու զինվոր, մտավորական ու եկեղեցական, կին ու տղամարդ, ծեր ու մանուկ և կասեցնել անարգ թշնամու առաջխաղացումը։ Մենք ոչ միայն կասեցրինք, այլև ետ մղեցինք։ Հիմա թշնամին խուճապահար փախչում է մեր հերոսացած զորքի առաջ, և հեռու չէ այն օրը, երբ ետ խլած կլինենք մեր Ալեքսանդրապոլը, մեր Կարսը, մեր մնացած ավաններն ու շեները, գավառներն ու նահանգները։ Պատմությունը գիտի՞ նման ուրիշ օրինակ, որ մահվան դուռը հասած փոքրաքանակ մի ազգ հանկարծ ոտքի կանգնի, հաղթի մեծաթիվ ու զինավառ թշնամուն, նրանից ետ խլի իր գոյատևելու իրավունքը։ Ավարա՞յրը։ Ավարայրի դաշտում հայ ազգն աշխարհին ցույց տվեց, որ ինքը պատրաստ է նահա-

տակվելու իր լեզվի ու հավատի համար, իր ազգային ինքնությունը պաշտպանելու համար։ Սարդարապատում կատարվեց հաջորդ քայլը։ Սարդարապատի դաշտում թշնամու դեմ ելած հայությունն ապացուցեց, որ կարող է հաղթել անցյալ հաղթանակներով հղփացած թշնամուն։ Հաղթել՝ ո՛չ թե նահատակվելով, այլ հաղթությամբ պաշտպանել իր կյանքը, իր լեզուն ու հավատը, իր գոյության իրավունքն ու զարթոնքի հեռանկարը... Այս է Սարդարապատը, ա՜զգ հայոց...

—Փա՜ռք Սարդարապատի հերոսներին,— դահլիճում գոչեց տարեց մի մարդ, և հավաքվածներն այնպես արձագանքեցին, որ թվաց, թե Մայր տաճարը վերուվար է անում նրանց բարձրացրած փոթորկից։

* *
*

Մահապարտների գնդի գումարտակները զինադադարի հրամանն ստացել էին այն ժամանակ, երբ իրենք, դիրքավորված Աղին ու Ալագյազ կայարանների գծի վրա, պատրաստվում էին սրընթաց գրոհով ետ նվաճել Ալեքսանդրապոլը։ Զորքը նման էր ամռան երկար ճանապարհին պապակված նժույգի, որը հասել է լեռնային աղբյուրին, փոնչոցով դունչը մեկնել նրա զուլալ ու սառնորակ ջրին... Սակայն հեծյալը, անխելքությունից թե չարությունից, սանձն իրեն է քաշում, չի թողնում, որ դունչը խրվի ջրի մեջ։ Նժույգը կարող է վրնջալ կատաղած, սանձը կկտրտի... Զորքը չի կարող։ Զորքն իրավունք չունի։ Զորքը պարտավոր է անմռունչ ու անտրտունջ ենթարկվել վերին հրամանին։

Առաջապահները հետախուզության նպատակով բավական առաջացել էին, հասել Բայանդուր կայարան և նրանից էլ դեն։ Ոչ մի թուրքի չէին հանդիպել։ Հավաքել էին խուճապահար փախածների զենքերն ու զինամթերքի առատ պաշարները։

Վարանդեցի Արշակն էլ էր հետախուզության գնացածների մեջ։ Խաչակապ արած փամփշտակալների քանի՜ շերտով էր ծածկել մարմինը, հավաքել էր մի փունջ հրացան, ընտիր, գործարանային յուղը վրան, անշուշտ այն մոսիններից, որոնք թուրքերին բաժին էին ընկել Կարսի ու Ալեքսանդրապոլի ռուսական

պահեստներից։ Թուրքերն էլ իրենց հերթին էին լքել՝ առանց գոնե սրտհովության համար մեկ անգամ կրակելու։ Երբ Արշակն այս հրացանների ու փամփշտակալների տակ ճռռալով ու տնքալով բարձրացավ, կանգնեց, կարծում էր ոտքերը պիտի գետնի մեջ խրվեն։

Հավաքած զենքերն ու զինամթերքը բերին դիրքերը։ Գլորելով այնտեղ հացրին նաև երկու հրանոթ, դաշտային ծանր գնդացիրներ։ Արշակն իր բերածը խնամքով դասավորեց խրամատի պատրհաններում, որ փորել էր վերջին օրը, զինադադարի անմիտ կարգադրությունից հետո։ Դասավորում էր ու մտածում, թե այս ի՞նչ եղավ, ո՞նց պատահեց։ Ինչպե՞ս թե զինադադար է և ո՛չ մի քայլ առաջ։ Բայց չէ՞ որ կռիվը Թուրքի հետ է, իսկ նա Էրզրումից մինչև Սարդարապատ հա՜ զինադադար էր հայտարարում, հա՜ շարժվում առաջ։ Առաջ էր շարժվում հայոց երկրում։ Շարժվում էր ու անխնա ջարդում, ավերում, տունուտեղից զրկում հարյուր հազարավոր անմեղ մարդկանց, որոնք կոտորվել են գաղթի ու սովի, տառապանքի ու համաճարակների ճանապարհներին, կամ սփռվել են օտար երկինքների տակ և սպասում են իրենց օրհասին։ Հիմա ո՞նց թե զինադադար է և ո՛չ մի քայլ առաջ։ Բայց չէ՞ որ մենք առաջ պիտի գնանք մեր սեփական երկրում, մեր ազգի արցունքով ու արյունով շաղախված հողում։ Չէ՜, այստեղ անպայման մի դավաճանություն կա,— մտածում էր Արշակը։— Երևի Թուրքը կաշառել է վերին հրամանատարությանը կամ այն խորհրդին, որ ազգական են ասում թե ազգային։ Բայց այս դեպքում մեր հրամանատարների՞ն ինչ է պատահել։ Նրա՞նք ինչու են ենթարկվում դավաճանական կարգադրությանը։ Մի՞թե կատաղած Թուրքի մռութը ջարդողը չի կարող տանու դավաճանին մի ջվալի մեջ կապել ու տանել։ Արարատի քերծերից վար գլորել։

Արշակին ասացին՝ այս զինադադարի վերջը գուցե թե հաշտություն դառնա, այսինքն՝ մենք մնանք մեր դիրքերի սահմանում, Թուրքերն էլ՝ իրենց գրաված հողերի տերը։ Եվ նա վեր կացավ, գնաց ուղիղ գնդապետի խրամատը։ Արդեն հայտնի դեմք էր ժամապահների ու կրտսեր հրամանատարների աչքում։ Գնդում ո՞վ չէր ծանոթ Վարանդեցի Արշակի հունարներին։ «Հազար քայլի վրա գնդակով մազը միջից կիսում է»,— նրա մասին էին ասել։ Գիտեին և նրա աշխույժ ու կատակասեր բնա-

վորությունը։ Բայց հիմա մտահոգ էր, գլուխը տարտամորեն կախ և ծանոթներին միայն բարև էր տալիս այդ կախ գլխով։

Գնդապետի համհարզն էլ էր ճանաչում և նրա խնդիրքին ընդառաջեց, ասաց.

— Քեֆը տեղը չի։ Բայց քեզ համար պիտի զեկուցեմ։

Պողոսբեկ Փիրումյանն անմիջապես ընդունեց իր զինվորին։ Արշակը նրա թեթևակի ժպտացող դեմքին տեսավ մեծ վիշտ, որ անհնար էր քողարկել։ Գնդապետի խոշոր, սևորակ աչքերը կարմրած էին։ Հոգնա՞ծ էր, թե՞... լաց էր եղել։ Զինվորին այնպես անհեթեթ ու հիմար թվաց իր ենթադրությունն այդ ժայռեղեն մարդու մասին։ Ի՞նչ է պատահել, որ լաց լինի։ Զորավարի տղանե՞րը... Բայց ասում են՝ գերության մեջ են, հիմա էլ զինադադար է, կսկսեն գերիներ փոխանակել։ Թե՞ զինադադարն իր սրտով չի։ Հիշեց ամոան երկար ճանապարհին պապակված նժույգի վիճակը և մտածեց, որ գնդապետը հիմա երկաթե լկամներն է կրծում, իրեն աջ ու ձախ է գցում և, եթե կարողանա, նաև ապիկար հեծյալին վայր կգցի... Բայց վա՞յր կըգցի։ Մարտական, խելոք ու հավատարիմ նժո՞ւյգը։ Ո՛չ, այդպիսի բան չի պատահում։ Հիշեց իր պատանությունը. մի կատաղի յորղա ձի ունեին, պատահում էր՝ քամի էր մտնում հուրհրան բաշի մեջ, դուրս էր գալիս ճանապարհից, սանձակոտոր սուրում էր այծի կածաններով ու քարկապներով։ Թվում էր՝ պողպատե շղթաներով էլ չես կարող կասեցնել խելագար ընթացքը... Մի անգամ իրեն՝ Արշակին, վայր գցեց Վերին քարկապի սալերին և նույն վայրկյանին տեղում մեխվածի պես կանգնեց կողքին, սկսեց աղիողորմ վրնջալ...

— Հը՞, ոնց ես, քե՞ մատաղ,— հարցրեց գնդապետը։— Մոտարի, տեսնեմ։

Արշակը տեղում շարժվեց, սակայն առաջ չգնաց։

— Դե՛, ո՞նց պիտի լինենք, պարոն գնդապետ։ Մինչև Ալեքսանդրապոլի տակը գնացել էինք, թուրքի հետքն ու փետուրը չերևացին։ Ետ ենք եկել, մեր ծակերում նստած ենք։

Գնդապետը գառաչեց ծանր, երկար.

— Վերին կարգադրություն է, քե մատաղ, ուրիշ ճար չունենք։

Արշակը սիրտ առավ, բողոքեց, ինչպես իր հորը.

— Ախր, էդ ի՞նչ կարգադրություն է,— ասաց։— Էնքան տեղ

առաջ ենք գնացել, հեռվից էլ մի թուրք չերևաց, որ տայի, գընդակով տրեխատանը կտրեի...

Գնդապետն աշխուժացավ, տխրամած դեմքին ծաղկեց դալուկ ժպիտը։

— Գիտեմ՝ աչքդ սուր է, սիրելիս, ուզես թշնամու տրեխատանն էլ կկտրես, իսկ կարգադրություն անողները... նրանք հավկուրություն ունեն։

— Եվ մենք էլ էն ծակերին կպած պիտի մնա՞նք։

— Այո՛,— տնքաց գնդապետը։— Պիտի սպասենք, մինչև նոր կարգադրություն լինի։ Գուցեև դաշնագիր կնքեն ու ձեզ էլ ասեն՝ գնացեք ձեր տները։

— Նոր-նոր առաջ ենք շարժվում, և քթներիս տան, ասեն՝ գնացեք ձեր տնե՞ը։

Պողոսբեկ Փիրումյանն ուզում էր ասել՝ «Ազդիդ կուշտ դեկավարների շա՞տ հոգսն է, թե դու՝ քաջ զինվորդ, առաջ ես չարժվում»։ Մեկ էլ զսպեց ներքին մրրիկը, ասաց.

— Իբր թե չեն ուզում ազգի վերջին մնացորդների կյանքը վտանգի ենթարկել։

Այդ վայրկյանին Արշակի ուղեղում փայլատակեց մեղավոր մի ծրագիր, և նա, առանց երկար-բարակ մտածելու, դիմեց գընդապետին.

— Էն ժամանակ, պարոն գնդապետ, էս մոտիկ գյուղերից մեկում բարեկամ ունեմ...

— Ո՞ր գյուղում,— հոգատար հարցրեց Փիրումյանը։— Ասենք՝ միևնո՞ւյն չէ։ Ուզում ես գնալ-տեսնե՞լ։

— Թե որ թույլ կտաս։

— Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ,— տեղից վեր կացավ գնդապետը և համհարզին կարգադրեց երկու օրվա ազատման թուղթ գրել։— Կարծում եմ՝ երկու օրը բավական է։ Երկու օրում այստեղ էլ ամեծ փոփոխություն չի լինի։ Վաղը և մեկել օրը։

* *
*

Արշակին հենց այդ օրն էլ մի առեղծվածային անակնկալ էր սպասում։ Երբ խրամատ հասավ, նոր հարևանն ասաց.

— Նամակ ունես։

— Հի՞նչ նամակ։

— Հրե՛ն,— և ցույց տվեց պատրհանը, ուր ընկած էր չսպասված ու այդ պահին այնքան անընդգրկելի անակնկալը։

— Բա հո՞ւ բերավ,— կարծես դա էլ կարող էր որևէ բացատրություն տալ առեղծվածին,— հարցրեց և դժկամ մոտեցավ պատուհանին։

— Տնաշենի՛ տղա, կարծում էինք՝ պիտի պարես ուրախությունից, իսկ դու հարցնում էլ ես՝ «Բա հո՞ւ բերավ»։ Շտաբից էր եկել, շատ սպասեց, որ աչքալուսանքի վարձն առնի։ Չեկար, թողեց-գնաց։

Արշակը հիմա հիշեց Զաքարին, և ցավի, ափսոսանքի, անճարության զգացումներից սիրտը կծկվեց։ Ախր, ինչի՞ վիրավորվեց է՛ն... է՛ն... է՛ն... «Ես քու հի՞նչն եմ ասել»։ Եվ ճարահատյալ հենց լրատու հարևանին էլ դիմեց.

— Անունդ հո՞ւնց ա, ախպերացու։

— Իմ անո՞ւնը։ Առաքել է, Համբարձումյան Առաքել։

— Ա՛յ, շատ ապրած կենաս, Առաքել ախպեր։ Դե արի՛, արի՛ տեսնենք հի՛նչ են գրում էս նամակում։ Հա՜-հա՜, արի՛։ Ես դեռ կարդալը չեմ սովորել։

— Ես էլ չորսը հինգ անող չեմ, բայց դե, մութ տեղը ծպուլի եմ անում,— և նամակն առավ, ծրարը պատռեց։

— Նստի՛, նստի՛, էդ տեսակ գործը ոտի վրա չեն անի,— խորհուրդ տվեց Արշակը և մեծ պատրհանի խոտը ետ-ետ արեց, հարմարեցրեց.— Ա՛յ, էսպե՛ս, դե նստի՛։

Նստոտեցին, և Առաքելն սկսեց.

— «Մեր հեռավոր, մեր կարոտալի, մեր հույս ու ապավեն, հազարների միջից ընտրած Արշակ։ Որ իմանաս, մենք բոլորս ողջ և առողջ ենք, գործով աջողակ, նույնն էլ քեզ ենք մաղթում...»։

— Մաղթո՞ւմ,— արձագանքեց Արշակը,— հի՛նչ էլ գրաբար խոսքեր են մեջտեղ գցել։

— Է՛դպես էլ գրած է, ա՛յ, տե՛ս,— արդարացավ Առաքելը։

— Դու կարդա՛, կարդա՛, խոսքի օրինակ եմ ասում։

— Ուրեմն, էստեղ էի մնացել. «Մենք բոլորս ողջ և առողջ ենք, գործով աջողակ...»։ Չէ՛, էստե՛ղ. «Օսեփ ապերը մի շաբաթ առաջ մեռավ, առոք-փառոք հողին հանձնեցինք։ Աստված հոգին լուսավորի...»։

— Արա՜, էդ իմ պապն է, վա՜յ-վա՜յ-վա՜յ...

— Աստված հոգին լուսավորի, շա՜տ լուսավորի,— ինքն էլ իր հերթին օրհնեց Առաքելը։

— Արա՜, մի քանի տարի առաջ էր հարյուրն անցկացրել։ Բա էդ ո՞ւց եղավ, հը՞։ Աստծու աչքը չէր վերցնում,— բողոքեց Արշակը, և ձայնը կերկերաց։

— Լսել ենք, որ թուրքի ոեխը ետ եք տվել,— հարևանը շարունակեց ընթերցել,— և հիմա էլ պիտի քշեք մինչև Սարիղամիշ ու Երզնկա։ Էջմիածնա զորությունը միշտ ձեզ հետ լինի, և աստված էդ հայակեր թուրքի գլխին քարի կարկուտ թափի։

Սիրելի և անմոռանալի Արշակ։

Որ իմանաս, այդ նեռի զավակներն այստեղ էլ են հասել։ Ասում են՝ արդեն եկել-լցվել են Շոշու-ղալան և մեկ-մեկ դուրս են գալիս, հարձակվում հարևան գյուղերի վրա, ասպատակ անում ու կողոպտում»։ Վա՜յ սրանց տունն աստված քանդի, մեր շենն էլ հասած կլինեն։

— Ո՞ր շենից էս, Առաքել ախպեր։

— Ավետարանոցի՞ց։ Ավետարանոց լսած կա՞ս։

— Բա՜, էդ էլ խո՞սք էր, որ ասացիր. Ավետարանոցի անունը չլսած ղարաբաղցին քառ պիտի լինի...

— «Քանի օր էր, տեղական թուրքերն սպասում էին Նուրի փաշային՝ արնախում էնվեր փաշայի եղբորը,— Առաքելը շարունակեց կարդալ.— Եվ Նուրի փաշան եկավ Հորադիզի կողմից, Աղդամն ու Գանձակը լցրեց իր օսմանլուի զորքով։ Ասում են՝ գնալու է Շուշվա ու Բաքվա հայության դեմ։ Բա ո՞նց պիտի լինի մեր անպաշտպան երկրի վիճակը։ Դուք ե՞րբ կավարտեք Արարատյան երկրի ազատագրությունը, որ հետո էլ գաք, օգնեք այս կողմերի հայ քրիստոնյային...

Դեհ, մնանք աչքներս ճամփիդ սպասող՝ քո հայր Հակոբ, քո մայր Վարդիթեր և քո ամենայն հարազատներ։

Այս նամակը սիրահոժար գրեց ձեր հաղթական վերադարձին սպասող տեր Զավեն քահանան, որն աստուծո ամեն օրն աղոթում է ձեզ համար և հեռակա օրհննում է ձեր սրբազան սուրը, որ պատյան չպիտի մտնի, քանի վերջնականապես ու ամբողջովին ազատ չէ Հայոց հողը»։

— «Տեր Զավե՞ն» ասացիր,— մտամոլոր հարցրեց Արշակը և անմիջապես աչքերի առաջ պատկերացրեց իրենց գյուղի

բարեպաշտ ու բարերար քահանային, նրան, որ տարիներ առաջ էջմիածնից գալով՝ գյուղում դպրոց հիմնեց, մեղվանոց ստեղծեց և հայտարարեցր թե «Վե՞րջ հետամնացությանը, կարճ ժամանակում մեր Մուշկապատ գյուղն այնպես պիտի ծաղկի, որ մատով ցույց տան ամբողջ Վարանդայում»։

— Ուրեմս, օսմանցիներն Աղդամն ու Գանձակը զորք են հասցրել,— մտահոգ խոսեց Առաքելը։— Դու հասկանո՞ւմ ես՝ սա ի՞նչ աղետ է, ա՛յ Արշակ։

— Հասկանում եմ, բայց մեր նմանի ձեռքից ի՞նչ է գալիս։ Մեզ կապել են էս... ի՞նչ են ասում, փորամատին...

— Խրամատի՞ն։

— Հի՞նչ էլ անդուր խոսք է... Կապել են էստեղ, թե բա չես ասի՝ պայմանագի՞ր կա, խաղաղությո՞ւն է։ Ա՛յ, ձեր տունը չքանդվի, էդ ի՞նչ խաղաղություն պիտի լինի, երբ որ քո տանն ու դռանը թուրքն է նստած։

— Թե որ Աղդամում էլ օսմանլու կա, աշխարհի բանը բուրդ է,— եղրակացրեց Առաքելը և սկսեց բացատրել.— Շուշիում նրանք անգլիացիների հովանավորությունն են վայելում, իսկ Աղդամում ու Գանձակում էլ մուսավաթի զորքի գլուխը կանգնեն և կդառնան Ղարաբաղի հոգեառները։

— Բա հի՞նչ։ Անպաշտպան երկրում հինչ ուզեն՝ կանեն։

— Էն ո՞վ է ասել, թե Ղարաբաղն անառիկ է։ Ղարաբաղն անառիկ է էն ժամանակ, երբ նրա զենք բռնող տղամարդն իր սեփական տանն է։ Հիմի որ թուրքը հարձակվի, էդ անառիկ Ղարաբաղին ո՞վ է պաշտպան կանգնելու, ո՞վ է թուրքի ուխին տալու։

— Բա էդ ասա, է՞...

— Մելիք Շահնազարը խո՞ր խորանա, Ղարաբաղ անառիկ բերդն էնպե՞ս է խարխլել...

— Մելիք Շահնազարն ի՞նչ ցավդ է,— հարցրեց Արշակը՝ մտածելով, թե դա էլ մի նորություն է, որի մասին իր նմանակն անփութորեն մոռացավ հաղորդել։

— Մելիք Շահնազարն, էլի՛, մեր Ավետարանոցի տերը։ Էնօր Գարեգին սրբազա՛նը պատմեց։ Ասում էր՝ էս Շահնազարս կռվի հաշիվ է ունենում հարևան Ջրաբերդի ու Գյուլիստանի մելիքների հետ։ Իբր թե, թիկունքն ամրացնելու համար գնում, Հարամու տափաստանից մի քոչվոր Փանահ է բերում, բնա-

կեցնում Շոշու-զալումը։ Էս Փանահս շատ խորամանկ է լինում, Շոշու-զալան ամրացնում, տերն է դառնում, համ էլ մեր մելիքներին է իրար վրա լարում, կռվեցնում-թուլացնում... Հետո էլ մի օր մեր անհեռատես մելիքներն աչքները բաց են անում, տեսնում՝ Փանահն իրենց վրա ավագ է կարգված Պարսից շահի կողմից...

— Վա՜յ-վա՜յ-վա՜յ, արա՜, էդ հո տնաքանդությո՜ւն է։ Ես էլ մտածում եմ, թե էս Շոշու-զալի թուրքը հի՞նչ տեղից է եկել և հո՞ւնց է բնավորվել։

— Ա՜յ, էդպե՜ս։ Եվ մեր էսօրվա ամենամեծ դժբախտությունը մեր անմիաբանությունից է ծնունդ առել։

— Անմիաբանություն ստեղծողի աչքը դուրս գա։ Էն հանգուցյալ Օսեփ պապս սերտած իմաստուն խոսք ուներ, կասեր՝ «Անմիաբանությունն է արմատ ամենայն չարյաց»։ Էդպես էլ ասում էր, հա՜... Մի ուրիշ խոսք էլ ուներ։ Ասում էր. «Շոշի-զալան հայու պարծանքն է»։ Հիմի ինձ համար պարզվում է, որ հայու համ պարծանքն է, համ էլ ամոթ-խայտառակությունը։

Առաքելն ուշադիր չէր, Արշակի այս խոսքից զարմացավ.

— Ո՞նց թե Շուշին մեր ամոթն է ու խայտառակությունը։

— Դե բա հի՞նչ. թե որ էդտեսակ դավաճանություն է եղել ու ստեղծման օրից էլ...

— Ա՜յ Արշակ, ի՜նչ ստեղծման օրից։ Սրբազանն ասում էր՝ էն մեր աշխարհի ամենահին բերդերից մեկն է եղել։ Էնտեղ ամրացած՝ մեր ապուպապերը կռիվ են տվել արաբների ու թաթար-մոնղոլների դեմ, է՜, ո՜ր դարերում...

— Էն սրբազանը քեզ հի՞բ ասաց, որ ես խլացած էի, լսեցի...

— Էն որ նոր եկել էինք, պիտի խառնվեինք ձեր գնդին, ա՜յ, է՜ն ժամանակ։ Սրբազանն իմացավ, որ մենք գնացած պիտի լինեինք Շուշին փրկելու, դրա վրա խոսեց... Մեր գնդապետ Շահնազարյանին էլ հիմնավոր ամաչացրեց...

— Իսկ գնդապետ Շահնազարյանը հի՞նչ կապ ունի։

— Մե՜ծ կապ. մեր գնդապետն էն դավաճան մելիք Շահնազարի զարմից է, չէ՞։ Վեր կացավ-ասաց. «Սրբազան, երդվում եմ՝ մեր տոհմի վրայից էդ կեղտն իմ արյամբ կմաքրեմ...

— Էհ, էդքան հին կեղտը...

— Հարյուր հիսուն տարեկան է, հա՞։

— Բա հարյուր հիսուն տարեկան խայտառակությունը, էն էլ էդքան մեծ ու...

— Հա՞, Շուշին թե չմաքրվի,— եզրակացրեց ավետարանոց ցի Առաքելը։— Հա՞ կմնա, հա՞ չարիք կբերի մեր գլխին։

Առաքելը երկար մնաց Արշակի մոտ։ Խոսում էին նամակի հաղորդած տեղեկությունների շուրջ, Թիֆլիսից ու Երևանից եկած հրամաններն էին քննադատում։ Հետո էլ Շոշի-ղալի պարծանք-ամոթը մեջ ընկավ... Խոսելու այնքա՞ն նյութ կար, քննելու այնքա՞ն հարցեր։

Բայց վերջում Արշակն այդ բոլորի քննությանը մասնակցում էր ակամա և շատ էր ուզում, որ Առաքելն իրեն մենակ թողնի, մենակ և այդ պահին հոգին ափեափ լցրած, փոթորկող մտքերի հետ։

«Է, Զաքա՞ր, Զաքա՞ր, մեջքդ կոտրվելո՞ւ էր, որ կոտրվեց՝ իմն էլ հետը»,— Առաքելի վերջին խոսքերը բացակա մի ուշադրությամբ հազիվ որսալով՝ իր բախտն էր անիծում Արշակը և մտածում էր, թե, ճիշտ է, Առաքելը լավ տղա է երևվում, ամեն բանի տեղյակ և աչքաբաց։ Բայց դե, այն ի՞նչ երանություն էր Զաքարի ներկայությունը։ Ոնց որ քո կեսը լիներ, քո մի ավելի խելոք, ավելի քաջատեղյակ և ավելի սրատես կեսը, որի հետ կազմում էիք մի հրաշալի ամբողջություն, և այդ անթերի ամբողջության համար անլուծելի խնդիր չկար, անհաղթահարելի դժվարություն ու բարդություններ չկային։

Առաքելը գնաց, և մենակ մնալով՝ Արշակը նոր միայն հիշեց, որ նամակում հարսից ոչ մի խոսք չկար։ Իր կնոջ անունից կամ նրա վերաբերյալ։ «Վեր է կացել, հերանց տո՞ւն գնացել»,— փայլատակեց Արշակի ուղեղում, և նա առաջին պահ չիմացավ՝ ուրախանա, թե՞ տխրի դրա համար։ Համենայն դեպս շատ էլ չտխրեց, նույնիսկ չմտահոգվեց, գուցե նրա՞ համար, որ մարդուն այդ պահին տանջում էին Շոշու-ղալի ցավը և Աղդամ լցված օսմանլուն։ Օսմանլու թուրքն ու մուսավաթն այն տեղերում տիրություն են անում, և Ղարաբաղի Հայը պարտավոր է համբերել..., եթե ուզում է ապրել, եթե չի կարող իր հողը մաքրել այդ տեսակ աղտեղություններից։ Արշակի մտքով անցավ վեր կենալ-գնալ գնդապետի մոտ, ասել՝

էս հի՞նչ եղավ, ա՛յ քեզ մատաղ։ Էն Շահնազարյանցի խումբը որ եկավ, մեզ խառնվեց, ասացիք՝ է՛ս ա, օսմանլվին էլ կողմերում մի լավ դաս տանք, շուտ կգանք մուսավաթի վրա, նրան էլ մեր պապերի հողից դուրս կքշենք։ Հիմի ո՛չ մեկն արինք, ո՛չ էլ մյուսի մասին ենք մտածում։ Բա էս հո՞ւնց կլինի, է՛, հո՞ւնց կլինի։

Բայց, դե՛, խեղճ գնդապետն ի՞նչ անի. իրավունքն ի՞նչ ձեռքին է, որ վեր կենա, թուրը քաշը, ասի՝ հայո՞ց զորք, Արցախակա՞ն աշխարհ...

Արցախակա՞ն աշխարհ։ Ի՞նչ էլ անուն է, հա՞, արյունդ տաս, կյանքդ նվիրես և իմանաս՝ ինչի՞ համար ես տալիս, ո՞ր սուրբ անվանն ես նվիրում... Արցախակա՞ն աշխարհ, Արցախակա՞ն աշխարհ, Արցա՞խ...

Արշակը չիմացավ, թե նինջն ինչպես հաղթեց, հետո էլ գարձավ պղտոր քուն և խառնիխուռն երազ՝ իրեն փոխադրելով հայրենի եզերքը, օսմանլուի ու մուսավաթի «Ղարաբաղ» դարձրած Արցախական աշխարհը։

* *
*

Գնդապետ Պողոսբեկ Փիրումյանի կարգադրության թուղթը դասակի հրամանատարին ցույց տալուց հետո Արշակը խրամատում պահած հրացաններից ընտրեց չորսը, կապոտեց մի տեղ, փաթաթեց շորով, փամփուշտի պաշարից էլ պայուսակները լցրեց՝ որքան կարող էր շալակած տանել և բռնեց Փարաքարի ճամփան։ Դասակի հրամանատարը, խրամատային հարևանները, նույնիսկ հարևան դասակի մի քանի զինվորներ հավաքվել էին ճանապարհ դնելու նրան։ Մոտովորապես գիտեին՝ ո՞ւր է գնում, ի՞նչ հանդիպում է սպասվում, և պատրաստ էին կարգին նվերներով ճանապարհելու։ Չէ՞ որ խուճապահար փախած թուրքերի գիրքերից նրանք այնքան ապրանք էին հավաքել, տնային իրեր, կանացի հագուստ ու զարդարանք, որ խրամատների պատուհանները մանրավաճառի խանութի դարակներ էին դարձել։ Սակայն ինքը հրաժարվեց նրանց բոլոր առաջարկություններից, գունավոր մի կտոր կոխեց շալվարի աջ գրպանը, մի գլխաշոր էլ՝ ձախը, մտավ իր կանխակապած բեռան տակ

և ծանրորեն ելավ խրամատից։ Նրա մտքով իսկ չէր անցնում, որ զենքը ճակատից թիկունք տեղափոխելը կարող է դիտվել որպես ռազմական կարգապահության կոպիտ խախտում։ Իսկ ճանապարհողների զգոնությունն էլ բթացել էր գնդապետի տված թղթից։ Դասակի հրամանատարը նույնիսկ մտածում էր, թե գնդապետն այդ զենք ու զինամթերքով նրան ուղարկում է հատուկ առաջադրանքի, որի առթիվ իրենք պարտավոր են լուռ մնալ։

Սարգարապատի տակ Արշակի ոտքերն այլևս առաջ չէին գնում։ Կարծես հոգնած էլ չէր, դեռ ուժ ուներ, շնչառությունը տեղն էր։ Սակայն ոտքերն անասելի ծանրացել էին և թմրածի պես այլևս չէին ենթարկվում տիրոջը։ Բեռը շալակին նստեց ճամփեզրի մի քարի վրա, և ականջին հասան ոտնաձայներ, որոնք գնալով մոտենում էին։ Ահա և հայտնվեց ոտնաձայների տերը՝ փոքրիկ մի ավանակ, որի վրա բազմած ալևոր գյուղացին, նրան տեսնելուն պես, վար իջավ և սիրալիր առաջարկեց.

— Բեռդ բեր, դիր վրան, ա՛յ շահել։ Դի՛ր, դի՛ր։ Մենք էլ զրուցելով հետևից կգնանք։

Ալևորը բարձրահասակ, մարմնեղ մարդ էր, և Արշակը զարմացավ, թե փոքրամարմին իշուկը ոնց էր նրա տակ շարժվում։ «Խեղճ անասունը փրկվե՞ց»,— մտածեց՝ իր բեռը նրա վրա հարմարեցնելիս, մեկ էլ գտավ, որ իր շալակի համար ևս ուրախ չպիտի լինի դժբախտ անասունը։

Ծանոթացան. ալևորը վաղարշապատցի էր, էշով պարեն էր տարել ռազմաճակատին և հիմա տուն էր գնում։ Ուրեմն, Արշակի բեռը համարյա տեղ էր հասցնելու։

— Վաղարշապատից մինչև Փարաքար ի՞նչ է մնում։ Ուժեղ թքեմ, կընկնի իմ աներոջ կտուրը,— ասաց Պատվականը (այդպես էր ներկայացել) և ինքն էլ քթի տակ ծիծաղեց իր ասածի վրա։— Բայց էսօր դժվար թե հասնես։ Գիշերը կմնաս մեր տանը, առավոտ գուցե թե միասին գնանք։ Թե չէ, տեսնում եմ՝ բեռդ շալակով տանելո՞ւ չէ...

Պատվական քեռին ասող-խոսող մարդ էր, աշխարհի տակ ու գլխին տեղյակ և հենց զրույցի սկզբից էլ փորձեց Արշակին քաշել ամենակարևոր հարցի մեջ։

— Բա զո՞րքն ինչ է մտածում, որ մեծավորները գնացել, թուրքի հետ սիրի-սիրի են խաղում։

— Դե՛, զորքն ի՞նչ պիտի մտածի, Պատվական քեռի։ Զորքը մտածելու իրավունք ե՞րբ է ունեցել։

— Վա՛յ, քո բալան աստված պահի,— իբր զարմացավ ծերունին։— Բա կռվողը զո՛րքն է, հաղթողը զո՛րքն է, աղգի փրկիչը զո՛րքն է և մտածելու իրավունք է՞լ չունենա...

— Զորքին ասում են՝ էդ մեծավորները գնացել են Բաթում, թուրքաց հետ զրույցի են նստել...

— Որ ի՞նչ լինի։

— Ես ի՞նչ գիտեմ։ Զրույցի ժամանակ ի՞նչ է լինում։ Հաշտության պիտի գան, թուրքի բերանից բարեկամության խոսք պիտի պոկեն։

— Հայի համա՞ր, թուրքի բերանից հաշտության խո՞սք,— փոթկացրեց Պատվական քեռին։— էդ միևնույն է, որ սպասես, թե շան քամակից անուշ թրս է դուրս գալու։

Փոթկացրեց, կուշտ ծիծաղեց նաև Արշակը, և հետո ինչի՛ մասին էլ խոսեին, ինքը հիշում էր այդ շան քամակից դուրս գալիքը։

Հետո Պատվական քեռին պատմեց պատերազմին մասնակցած համաքաղաքացիների, էջմիածնի ճեմարանի սաների և նրանց կրած վնասների մասին։ Ճեմարանը համեմատաբար ավելի շատ զոհեր է տվել։ Արշակն էլ հիշեց, որ պատանի տաներն իսկապես վիրավորվելուց հետո նորից նետվում էին կռվի թեժ տեղը։

— Ասես վերքի ցավ չէին զգում,— հիացմունքով խոսեց նա։— Իսկ փորձված զինվոր կա, որ մի աննշան քերծվածքն առնում է բերանը ու ցավից բառաչում...

Եվ դրանից հետո էր, որ ծերունին ասաց իր հեղինակավոր խոսքը ցավի մասին։

— Ցավի լավը չկա,— ասաց,— դրա ստեղծողի հերը շան պես կլանչի։ Մարդ ցավի տեր դարձավ թե չէ, կոնդանում, մի քոռ կոպեկանոց է դառնում։ Միայն մի ցավ կա, որ մարդուս մեջը մտնելուց նրան դարձնում է հերոս։ Անդրանիկ զորավարը քեզ օրինակ։ Ջահել ժամանակ ի՞նչ ցավեր է ունեցել. հոդացա՛վ, մկանների ցա՛վ ու չգիտեմ էլ ի՞նչ զահրումար։ Կռանար՝ չէր կարենա ուղղվել, նստեր՝ վեր կենալ չկար։ Աղգի ցավը մտավ

մեջը, մնացածներին դուրս արեց և էն կոնդ շահելին գարձրեց ապուժ... Բա նրա նմանին էլ ցավ կամ գնդակ կբռնի՞։ Ա՛ռ-թոբա՛։

* *
*

Առավոտյան Փարաքար ճանապարհվելուց առաջ, Պատվական քեռին իր հյուրի հետ նախաճաշի նստեց պատշգամբի անկյունում և, օղու բաժակը ձեռքն առնելով, խմեց հայ ազգի, նրա զորքի ու զորավարների, նրա մեծի ու փոքրի կենացը։ Արշակի համար անսովոր էր ամեն ինչ. և՛ տան պատշգամբում նախաճաշի նստելը, և՛ ընտանեկան մտերմիկ մթնոլորտն իր տարբ ու կարգով, և՛ բուխարիկի մոտ իրարով անցած պատմվածքը, որն ամուսնու կարգադրությունները կատարում էր անմռունչ, հարցերին պատասխանում անխոս, ջիթիկալը բերանին իջեցրած։ Զինվորական կյանքի չորս տարիներն այս բոլորը տարել, թաքցրել էին հոգու հեռավոր, նվիրական անկյուններում և վարժեցրել դաժան մի առօրյայի, որ լիքն էր տխուր ու հոգեմաշ պատկերներով՝ մահ ու սպանություն, ազգակիցների տեղահանություն ու գաղթ, թշնամու բերած ահավոր արհավիրքներ ու անհուսություն։ Հիմա խաղաղ գերդաստանում է, ուր մանկամարդ հարսներն անխոս բանում են տանն ու դուռը։ Մեկը բակն է ավլում, մյուս երկուսը կովերն են կթում։ Իսկ մանուկները մուշ-մուշ քնած են գլխատանը։ Երեք տղան (նրանց միասնական նկարը կախված էր այն մահճակալից վեր, որի վրա գիշերը քնած էր Արշակը)՝ երեք արծիվ, հիմա կռվում են Բաշ-Ապարանի ճակատում։ Մեծ հրամանատարը գոհ է նրանցից և խոստացել է ներկայացնել շքանշանների։ Նա անձամբ այդ մասին ասել է Պատվական քեռուն, երբ ու երկու օր առաջ պարեն էր տարել զավակների համար։

Պատվական քեռու տունը քաղաքավանի ծայրին էր և պատշգամբից երևում էին հացահատիկի արտերը՝ բազմագույն կտրոններով փռված դաշտի հարթության վրա։ Ցեղ-տեղ գեղին քառակուսիներ էին շողում վաղորդայնի մշուշում։ Աշնանային գարին էր հասել, և այդ կտրոններից մի քանիսի եզրերին երևում էին տղամարդիկ ու կանայք, որոնք առանց արտաքանքի

պիտի սկսեին հունձը՝ հողվոր հայի համար ամենասրբազան ու ամենաերջանիկ արարողություններից մեկը։ Արտույտների երգը կախվել էր հասած ու չհասած արտերի վրա։ Ճամփեզրերի թփերը լիքն էին հազարաձայն ճռվողյուններով։ Բայց ո՞ւր էին առաջին ճանկակապի ու առաջին կիտակի խնդությունները...

Պատվական քեռին կարծես գուշակել էր Արշակի տխուր մտորումը, բաժակը նորից բարձրացրեց... Սակայն Արշակը կենաց խոսք ասելու խոսք խնդրեց, և նա լուռ գլխով արեց, այսինքն՝ խոսի՛ր, խոսի՛ր։

— Ուզում եմ իմ շնորհակալությունը հայտնել, Պատվական քեռի։ Տափից մինչև երկինք շնորհակալ եմ։ Աստված էլ քո զինվոր-զավակներին օգնության հասնի։ Ողջ-առողջ գան, արժանի դառնան իրենց հարսներին ու որդիներին, իրենց հարեհաս ծնողներին...

Պատվական քեռու աչքերը խոնավացան, քիթը թսսաց.

— Շատ ապրես, որդիս,— ասաց։— Ես քո բոյ-բուսաթից էի ենթադրել, որ զարաբաղցի ես։— Եվ բաժակը դրեց սեղանին, բեղերը սղալեց։— Տեր-Ղուկասովի կովին ես զարաբաղցիների հետ էի և էն ժամանակ իմ սեփական աչքերով եմ տեսել, թե դուք ի՞նչ տեսակ կովող եք, ի՞նչ սրտի տեր։ Հիմի էլ Սարդարապատում ձեր հունարը ցույց տվիք... Ազգը ձեր արածը չի մոռանա։ Ո՞չ ազգը, ո՞չ էլ վերևից նայող ամենահասը։

— Է՛հ, Պատվական քեռի, «չի մոռանա» էլ ասում ես, ոնց որ օտարներ լինենք։ Բա մի ա՞զգ չենք, մեր հոգու պա՞տրքը չենք կատարում։ Ես կուզենայի, որ ազգն ուրի՞շ բան չմոռանա։

— Ի՞նչը չմոռանա, գլխիդ ղուրբան,— անմիջապես անհանգստացավ արդեն տամկած տանտերը։

— Չմոռանա, որ մենք էլ իրենն ենք։ Ի՛ր զավակը, ի՛ր մարմնից պոկածը։ Ու թե որ մենք էլ նեղ օրի լինենք, ի՛նքը ծնողի պես իր հոգատար ձեռքը մեզ վրա պահի... Էսօր և հավիտյան, հո՞ւր հավիտյան։

Պատվական քեռին Արշակի բեռն իր իշուկով հասցրեց Փաքաքար, իջեցրեց Շուլավերցու աղջկա բակում և վերադառնալուց առաջ պատվիրեց, որ չմոռանա իրենց.

— Էսօրվանից ետ պիտի հաշվեմ, որ իմ տղերքը երեքը չեն, չորսն են,— անկեղծորեն ասաց նա։— Պարտական մնաս, թե

որ ինքդ էլ չհաշվես, որ Վաղարշապատում մի հարազատ օջախ ունես։

Ծերունու ներկայությամբ իրեն զսպած Շարմաղը նրա գնալուց հետո բացվեց, գիրկն առավ Արշակին, ճակատը համբուրեց։

— Վա՜յ, ես քո եկած ճանապարհին մատաղ, Արշակ տղա։ Էն օրվանից, որ եկանք, տեսանք, ծանոթացանք, սիրտս կրակի վրա վառվում է... Համեստի մասին էլ չե՞մ խոսում... Բա մեր հարազատը կովի բերանին ու էսքան մոտիկ լինի...

— Ես էլ ձեր մասին էի մտածում, Շարմաղ աքեր։ Երազումս քանի՜ անգամ եմ տեսել,— շիկնած, քրտնած բացատրեց Արշակը։

— Է՜, մի օր էլ էն տեսակ պատրաստություն էինք տեսել։ Առավոտ, որ պիտի ճանապարհվեինք, գլուխներս շուռ տվին, թե՝ պիտի գնաք դեպի Արաքսի կողմը։ Ես հե՜չ, խեղճ Համեստը աչքերով էնքան արտասուք չափեց, էլ ասելու չէ...

— Բա ինքն ո՞ւր է,— ամոթխած հարցրեց Արշակը։

— Ի՞նքը,— հանկարծակիի եկավ Շարմաղ հոքիրը։— Վա՜յ, վարսս կտրեմ, էնօր ասում էր՝ հերանց պիտի գնա, վատ երազ է տեսել։ Հո գնացա՞ծ չլինի։ Թե չէ, առտու կանուխ կերևար... Դու կաց, ես վազ տամ, տեսնեմ։

Արշակին թվաց, թե Շարմաղն ինչ-որ բան թաքցնում է։ Համեստն ինչո՞ւ հենց այսօր պիտի գնար հերանց։ Եթե չի ուզում իր երեսը տեսնել, այդպես էլ ասի, պրծնի։ Չէ՜, պարզ է, որ չի ուզում, բայց չի կարող միանգամից սիրտը կոտրել։ Այս միտքն այնպես հիմնավոր նստեց նրա հոգում, որ միանգամից աշխարհը մթնեց իր համար, և իր Փարաքար գալը թվաց խայտառակության հավասար մի հիմարություն։

Շարմաղը հենց տան շեմքից չոր ազդրին զարկեց՝ ողբաձայն անիծելով իրենց բախտը։

— Քոռանամ ես, է՜, քոռանամ,— ասաց։— Առտու կանուխ է ճանապարհվել։ Բա ի՞նչ անենք, ցավդ տանեմ։

Արշակի համար վերջնականապես պարզ դարձավ, որ Համեստն իրեն չի ուզում տեսնել, և կտրական վեր կացավ տեղից։

— Դե՛լ ես գնամ, Շարմաղ աքեր։

— Ադա՛, ո՞նց թե գնաս,— պայթեց տանտիրուհին,— կրակի՞ ես եկել, ի՞նչ է։

— Մնամ, ի՞նչ անեմ, էդ է քեզ տեսա, լավ ես, ես էլ՝ կեռած-խմած, երեկոյան հազիվ տեղ հասնեմ։— Հիշեց, որ գրպաններում բան է բերել, հանեց։— Հա՛, սրանք էլ ձեզ համար էի վերցրել։

— Ադա՛, լավ, է՛, ամոթ է կրնկիդ վրա ետ դառնաս։ էն իշարեռն ի՞նչ է, երկաթ-մերկաթի նման էր...

— Հա՛,— հիշեց ու միանգամից փոխվեց Արշակը։— Ապահով տեղ ունե՞ս, տեղավորենք։ Կովից հետո կգամ, կտանեմ։

Երբ հրացանները տեղավորում էին գետնահարկի ցորնի ամբարում, Շարմաղը հարցրեց.

— Էսքանն ի՞նչ պիտի անես, ջուխտ ու կե՞նտ ես խաղալու։

— Ինձ ու Զաքարին։ Տանը երկու եղբայր ունեմ, երկուսն էլ՝ նրանց։

— Կռիվը պրծնում է, դուք նո՞ր պիտի զինվեք։

— Կռիվը ո՞նց է պրծնում, ա՛յ Շարմաղ աքեր,— ծանր տընքաց Արշակը։— Թուրքը մեր վզակոթին նստած՝ կռիվը պրծնո՞ւմ է։

— Բա էն ի՞նչ է, ասում են՝ Բաթումում արդեն հաշտություն են կնքել։

— Հաշտություն կնքողի ի՞նչ ցավն է, թե ազգը սեղմված է պատին, և թշնամին էլ՝ նրա թիկունքը կտրած...

— Բա էդպես ո՞նց են հաշտվում, է՛, մոխիրս նրանց գլխի՞ն։

— Շարմաղ աքեր, ես քեզ ասեմ, դու լավ միտդ պահի։ Օսման թուրքի փորացավն էն է, որ էս արևի տակ էլ հայ չմնա։ Եվ մենք, եթե ուզում ենք ապրել, պիտի կռվենք։ Կռվենք ու հաղթենք, հաղթենք ու ապրենք։ էս է մեր հաշիվը։ Ուրիշ հաշիվ ո՛չ կա, ո՛չ էլ կարող է լինել։ Եվ մե՛կ էլ. թե էսքան պարզ հաշիվը չհասկացող մեկը կա, անունն էլ մեծավոր, էդպիսի մեծավորին պիտի կապես ախոռում։

— Դե՛, լա՛վ, բարձրանանք վերև, ջուր դնեմ, գլուխդ լվանամ...

— Բա՛-հա՛, է՞դ ինչ ես ասում, ա՛յ Շարմաղ աքեր։

— Ադա՛, ի՞նչ է լինելու, քո մոր տեղ մայր եմ,— Արշակի ուսը հրեց Շարմաղը։

— Չէ՞, ժամանակի տեսակետից եմ հրաժարվում,— բացատրեց Արշակը։— Էսօր պիտի ճակատում լինեմ։ Լավ է՝ ամեհաթը տեղաց արի, տեղավորեցինք։ Մեկ էլ, որ ձեզ էի կարոտել, ուզում էի տեսնել։ Դե՞, ի՞նչ անեմ, որ առաված էրքանին է արժանի համարում...

— Լավ, է՞, դու էլ բան ես ասում,— նրա խոսքը յուրովի հասկանալով՝ տանտիրուհին խորհրդավոր ասաց.— Քեզ համար մեռնում են, կտրվում, իսկ դու լաչ արած պիտի գնաս...

Արշակի բեռը դարձյալ ծանրացավ։ Մի խուրջին լիք ուտելեղեն էր ու խմիչք, և դրան էլ անվերջ գումարվում էին նորերը։ Ամեն անգամ որևէ բան ավելացնելիս Շարմաղը, հերսոավածի կեցվածք ընդունելով, սպառնալիք էր տալիս.

— Տե՛ս, բրիշակ կանեմ էս տունը... Լուցկին կդնեմ տակը, կվառեմ...

— Ա՛յ Շարմաղ աքեր, շալակով պիտի տանեմ, չէ՞։

— Բա էն սև սանդաքարերը ո՞նց ես բերել։

— Ես չեմ բերել, Պատվական քեռու է՛շն ապրած կենա,— ժպտում է Արշակը։

— Մի Պատվականի էշ էլ գնալիս կճարես, շալակդ կտանի։

Գնալիս ոչ մի Պատվականի էշ էլ չհանդիպեց։ Բայց պատվական մարդիկ շատ էին հանդիպում. դաշտային աշխատանքի մարդիկ, որ զինվորին ծանրաբեռ տեսնելով՝ խորհրդավոր ժպտում էին, հեռանում։ Գաղթական խմբեր, որ դուրս էին եկել արտեզրերը հասկացրած, ուրիշնե՛րը, որ երևի արդեն փորների հարցը լուծել, անցել էին սանիտարական վիճակի բարելավմանը և թփերի ետևն անցած քթիվ էին անում ինքնամոռաց կամ մի քանի հոգով խարույկ էին վառել, իրենց վրայից հագուստները հանում, մեկ-մեկ թափ էին տալիս և ճարճատյունի հետ ուրախուրախ քրքջում էին։ Միայն մի տեղ տեսավ, թե ինչպես արտատերը հայհոյելով հալածում է կմախքացած կանանց, որոնք գրկների երեխաներին գրել էին ճամփեզրին և խորացել արտի մեջ։ Անխիղճ արտատերը նրանց մինչև երեխաների մոտ հալածելով էլ չբավարարվեց, կոշտացած հող էր շպրտում նրանց ետևից և հայհոյում։

— Ա՛յ, ես ձե՞ր... մորեխից բեթար եք։

Արշակը մոտեցավ հալածված կանանց, որոնք ճանապարհի եզրի մարդաբոյ խոտերի մեջ կանգնել էին շվար, վշտակոծ։

Գրեի ուզում էին լաց լինել, բայց այդքան ուժ չունեին, և աչքերից արտասուք չէր գալիս։ Գրկների երեխաների վզներն այնքան բարակ էին, որ չէին կարողանում գլուխներն ուղիղ պահել, թեքել էին մայրերի չոր կրծքերին և չռած աչքերը հառել Արշակի խորհրդավոր խուրջինի վրա։

Նա լուռ մոտեցավ, խուրջինն ու կապոցները վար բերեց ուսերից։ Կարծում էր՝ կարիք պիտի լինի զոռով հյուրասիրել, բաժանել ուտելիքը. չէ՞ որ հայ կանայք են՝ ամոթխած ու պարկեշտ։ Սակայն կանայք առանց հրավերի շրջապատեցին և վրա վազելով սովատանջ հայացքներով մտան կապոցների մեջ ու խուրջինի հակները։ Հաշված վայրկյաններ պետք եղան Արշակին լրիվ բեռնաթափելու համար։ Երեխաներին ցած էին դրել և գործում էին երկու ձեռքով, գոմռալով և ուրիշ անմարդկային ձայներ հանելով։ Ջիրի ու սուշուխի կապոցներն իրարից խլխլելիս խոտերի մեջ ցրիվ տվին ամեն ինչ և հետո էլ իրար կոխ տալով սկսեցին հավաքել, լցնել ուր որ կարող էին... Իսկ երբ այլևս ոչինչ չէր մնացել, սկսեցին փախչել տարբեր ուղղություններով։ Փախչում էին ետ-ետ նայելով։ Ետ նայելիս փորձում էին ժպտալ, և դեմքները ծռմռվում էին, այլանդակվում։

Նրանց անհետանալուց հետո շվար հայացքը վար իջեցրեց և տեսավ՝ դատարկ խուրջինի կողքին երկու շիշ օղին է մնացել ու գինու կուլան, որը կողքի ընկած, բերանը բաց՝ կիսով չափ դատարկվել է։ Նախ մտածեց, որ լավ էր՝ Շուլավերցու աղջիկը համառորեն լցնում էր շալակը։ Մեկ էլ հանկարծ հիշեց գաղթական կանանց անմարդկային կերպարանքները, ուտելեղենի մնացորդների խլխլոցն ու գազանային գզվռտոցը, և միանգամից պայթեց, փոթորկվեց։ Անզոր ձեռքերը ծնկներին զարկելով գոռաց.

— Թո՛ր, ես քու անո՛ւշը..., քու հավա՛տը..., քու օխտա պո՛ղտը... էս ի՞նչ ես արել, ա՛ թորը։

Հետո ծնկի իջավ, գինու կուլան վեր առավ, քաշեց գլխին և մի շնչում ծրծունքեց։

Ճանապարհին, թեև լրիվ բեռնաթափված, ոտքերը կամացկամաց ծանրանում էին։ Դաշտի գույները խառնվում էին իրար։ Արտերի մեջ ու ճամփեզրերին թռսխած փշատենիները զորաշարական վրանների պես շողշողում էին արծաթափայլ ծածկոցներով։

Մի տեղ կանգ առավ, նստեց և ինքն էլ չիմացավ՝ քունն ինչպես հաղթեց։ Մեկ էլ երազ տեսավ, մի հրաշք երազ. իբր պատերազմն ավարտվել է, որովհետև իրենք Թուրքին քշել են մինչև Երզնկա։ Հայոց երկիրն ազատագրել են ու տուն են գնում։ Տուն են գնում, և ինքն ուսերին նստեցրած տանում է Համեստին։ Ուսերին նստեցրա՜ծ։ Ո՛չ հոգնել կա, ո՛չ էլ նույնիսկ ամաչել։ Մարդիկ տեսնում են ու ներողամիտ ժպտում։ Ասում են. «Տնաշենի՜ տղա, ուրիշները թշնամու երկիրն ավարել, տանում են իրենց տները, գո՞ւ ինչ ես տանում»։ «Աշխարհի ամենամեծ գանձը»,— պատասխանում է ինքը և այդ գանձն ավելի է սեղմում իրեն։ Համեստը վերից շշուկով խոսում, պաղատում է, որ վար բերի։ Ասում է. «Ցա՜ծ դիր, Արշակ ջան, ցա՜ծ դիր, ոտերս թմբրել են»։ Ցած է դնում, պառկում ծաղիկների ու խոտերի մեջ և աչքերը փակում է երանությունից։ Իսկ Համեստը կողքին նստած, սիրո խոսքեր է շշնջում, ձեռքերը քսում է մազոտ երեսը։ Քսում է ու երգեցիկ, մեղմանուշ ասում է. «Իմ հերո՜ս, իմ փրկարա՜ր, իմ...»։ Այդ շոյանքի գրգիռ-կրակը տալիս է ամբողջ մարմնին։ Ձեռքերը բարձրացնում է, որ շոյող թաթերը բռնի... և արթնանում է։ Շաղված աչքերով չորս կողմն է նայում, Համեստ չկա։ Նստում է, ծնկները գրկած ուզում է որոշել, թե որտե՞ղ է գտնվում, ինչպե՞ս եղավ այս բոլորը, և ի՞նչ պիտի անի վերջապես...

— Փառքդ շա՜տ լինի, ասված,— մրմնջաց լացակումած,— լավ է՝ մարդուն երազ ես տվել, որ տեսնի, մխիթարվի։ Թե չէ, սիրտը կտրաքվեր։

* *
*

Ալեքսանդր Խատիսովը հունիսի 2-ին հատուկ գրություն ուղարկեց Հայոց սպարապետ Նազարբեկովին. «Հաղորդում եմ Ձեզ,— գրել էր նա,— որ երեկ մենք ստորագրեցինք խաղաղության պայմանագիրը Թուրքիայի հետ...»։ Շարադրել էր պայմանագրի կետերը՝ իրենց համառոտ գծերով և հպարտությամբ նշել. «Էջմիածինն էլ մերն է»։ Եվ ինչպե՞ս չհպարտանալ, երբ Թուրքիայի ու Հայաստանի սահմանը պիտի անցնի Էջմիածնի տակով՝ հայոց հոգևոր կենտրոնը շնորհելով հայերին։

Վերջում հայ պատվիրակության նախագահն իր սրբազան պարտականությունն էր համարում Հայոց սպարապետին հայտնելու իր երախտագիտությունը նրա անձնական ղեկավարությամբ Ղարաքիլիսայի կողմերում տեղի ունեցած ճակատամարտերի համար. «Ջերմորեն շնորհավորում եմ Ղարաքիլիսայի մոտ ձեր տված ճակատամարտի առթիվ, որը գերագույն հրամանատար Վեհիբի կողմից արժանացել է՝ խրախուսանքի ու ջերմ գովասանքի՝ իբրև հայ զինվորների փայլուն գործողություն։

Պայմանագիրը մենք ստորագրել ենք Հայաստանի անկախ Հանրապետության անունից։

Խաղաղության պատգամավորության նախագահ՝
Ալ. Խատիսով,
անդամներ՝ Պապաջանով, Քաջազնունի»։

* *
*

Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանին գրած նամակն ավելի ընդարձակ էր, հանգամանալից, հատկապես՝ հոխորտալից (չէ՞ որ անհնարինն է ձեռք բերվել, հայոց տարաբախտ ժողովրդի համար երկնքից աստղեր են իջեցրել)։

Ահա այդ նամակից ես կատարում եմ քաղվածքներ, որոնք մոտավոր գաղափար կարող են տալ խատիսովյան տրամաբանության մասին։

Բաթում, 1918 թ. հունիսի 2։

Թանկագին Ավետիս, Բաթում ժամանելուց 2 ժամ հետո (հասել ենք ցերեկվա ժ. 3-ին) մենք բոլորս եղանք Խալիլի մոտ և պատրաստեցինք պատասխանի երեք տարբերակ... Զրույցից հետո Խալիլ բեյը մեզ հասկացրեց, որ հետագա բանակցությունների համար ամենալավն է տալ լիակատար համաձայնություն, իսկ հետո բարեկամաբար ճշգրտել պայմանագիրը։ Մենք քննեցինք վիճակը, և ժ. 7-ին ես միայնակ նրան բերի պատասխանը...

Հաջորդ օրվա առավոտյան ժ. 10-ին սկսվեց Խալիլի, Վե-

հիբի ու մեր առանձին խորհրդակցությունը։ Զրույցից պարզվեց, որ վերջնագրի վերաբերյալ մեր համաձայնությունը (վերջնագրի ժամկետին Վրաստանի պահպանած լռության կողքին) Կոստանդնուպոլսում գործել է շատ լավ տպավորություն»։

Ուրեմն, վրացիներն էին պայմանագրից շահողը, նրանք չէի՞ն շտապել, իսկ Խատիսովը, առանց ժամանակ վատնելու, ոտ ու ձեռ էր ընկնում Հայաստանն ինը հազար քառակուսի կիլոմետր տարածության մեջ պարտակելու համար։

«Ապա երեկ մենք խմբագրեցինք պայմանագիրը,— շարունակում է հայոց սպատվիրակության ղեկավարը,— իսկ ճաշից հետո Նաթանեբի գնացինք ձեզ հետ հեռախոսելու համար։

Պայմանագիրն այսօր մաքրագրվում է։ Այս ընթացքում ես հեռախոսել եմ Կարս՝ գեներալ Կորգանովի հետ և իրեն եմ հաղորդել վերը շարադրածները, որպեսզի նա էլ դրանք հաղորդի Արամին, Նազարբեկովին և Ալեքսանդրապոլ։ Գեներալն անվնաս է, և նրան ավտոմոբիլով կբերեն Բաթում։ Նա շատ է ցնցված նյարդորեն։ Անկախ այս բոլորից, ես Կարսով պառլամենտյոր եմ ուղարկել Նազարբեկովին, [հետն էլ] պայմանագրի հիմնական կետերը՝ խնդրելով կատարել մի շարք կարգադրություններ՝ դադարեցնելու ռազմական գործողությունները։ Ձեզ էլ խնդրում եմ ձեր կողմից ևս անել նույն կարգադրությունները։

Մենք մտածում ենք ճանապարհվել վաղը չէ մյուս օրը։

Ես այսօր եղել եմ Վեհիբի մոտ (իրականում հարցերը նա է լուծում և ոչ թե Խալիլը), և մենք ունեցել ենք լուրջ զրույց Թուրքիայի ու Հայաստանի այն հարաբերությունների մասին, որ թուրքերն են պատկերացնում։ Նա որոշակիորեն հայտարարեց, որ Հայկական (թեկուզև փոքրիկ պետություն կազմելուն Թուրքիայի կողմից տրվող համաձայնությունը շրջադարձային կետ է Թուրքիայի պատմության մեջ, որ դա հայերի հետ հաշտության տանող առաջին քայլն է, և որ դրանից հետո հեշտ պիտի լինի լուծել հայկական մի շարք ուրիշ հարցեր։ Իրենց այդպիսի տրամադրությանը նպաստել են.

ա) Հայերի քաղաքականության պարզությունը (նախապես՝ թշնամական, իսկ այժմ՝ հաշտվողական),

բ) Համաձայնությունն ու խաղաղության դաշինքն Ադրբեջանի հետ,

գ) Ճշգրիտ պատասխանը նաև վերջնագրի ժամանակ,

գ) Ղարաքիլիսայում հայրենիքը պաշտպանող զինվորների հերոսությունը, որը նրանց հարգանքով է լցրել [իրենց նկատմամբ]։

Մի քանի օր հետո էնվեր փաշան կգա Ալեքսանդրապոլ, ուրեմն պիտի գնա Ելիզավետպոլ, իսկ հետո՝ Բաթում։ [Վեհիբը հույժ երաշխավորեց մեզ, հատկապես ինձ՝ իբրև պատգամավորության նախագահի] գալ Ալեքսանդրապոլ՝ հանդիպելու նրա հետ, և տալիս է գլխավոր շտաբի մի սպայի, որն այնտեղից մեզ հետ պիտի գնա Թիֆլիս և ուղեկցի մինչև Ալեքսանդրապոլ։

Քննեցե՛ք հարցը։ Մեր կարծիքով՝ գնալն օգտակար պիտի լինի»։

Հետո էլ Խատիսովը պատմում է այն բացառիկ վստահության մասին, որ ինքն է ձեռք բերել թուրքական պատվիրակության աչքում. բանն այնտեղ է հասել, որ ինքը միջնորդություններ է անում թուրքերի ու վրաց մենշևիկների միջև և վերջիններիս տալիս է իմաստուն խորհուրդներ։ «Ռամիշվիլին եկավ ինձ մոտ խորհուրդի,— գրում է միջնորդի դեր ստանձնած դիվանախոսը։— Ես էլ խորհուրդ տվի պատերազմը չշարունակել և ստորագրել պայմանագիրը։ Նա ինձ խնդրեց, որ Թիֆլիսում, եթե իրեն մեղադրելու լինեն զիջողականության մեջ, ես պաշտպանեմ իրեն և ասեմ, որ ինքս գիտեի ամբողջ իրավիճակը, ինքս էլ պայմանագիրն ստորագրելու խորհուրդ եմ տվել։ Հիմա, երեկոյան ժ. 11-ին, ես տեղեկացա, որ նրանք ավարտել են և ստորագրում են»։

Իբր թե Վեհիբն իրեն ազնվորեն խոստովանել է, «որ հայերը Ղարաքիլիսայի մոտ ցույց են տվել, թե իրենք լինելու են աշխարհի լավագույն կռվողները»։

Նազարբեկովը պիտի մտածեր, որ աշխարհում եթե մի իրական ու արդար բան կա, դա էլ Քաջ Նազարի բախտն է... Եթե իհարկե, Վեհիբը չի ծիծաղել քամի կուլ տված հայ պատվիրակի վրա՝ Սարգարապատի համար բերանը շուր առած՝ Ղարաքիլիսայի նահատակությունը գովելով։

Եվ ահա «աշխարհի լավագույն կռվողներին» վիճակված ինը հազար քառակուսի կիլոմետր տարածքի տերերն էլ պարտավորվել են իրենց երկիրը փռել թուրքերի առաջ։ «Մեր պայմանագրի համաձայն՝ թուրքերն անցուդարձի իրավունք ունեն մեր երկրի տարածքով,— կարծես դա էլ մի հպարտանալու բան է՝ հա-

ղորդում էր Խատիսովը։— Այսօր միայն գնում են դեպի Ղազախ-Աղստաֆա։ Դաղտնի կերպով նրանք ցանկանում են Ադրբեջանի համար երկաթգիծ ապահովել...»։

«Մենք պայմանագիրն ստորագրել ենք անկախ Հայաստանի անունից։— Նամակի վերջում այս կարևոր հանգամանքը ևս շեշտում է հայոց պատվիրակության ղեկավարը։ Եվ այս «անկախը»՝ հատկապես Նրանի՛ց հետո, երբ չքմեղանքով նշել էր, թե «Թուրքերն անցուդարձի իրավունք ունեն մեր երկրի տարածքով»։ Իսկ հայը լավ էր իմանում, թե ի՛նչ է նշանակում Թուրքի անցուդարձը։ Այո՛, «անկախ Հայաստանի անունից,— գոնե անուն պե՞տք էր ունենալ։— Այլապես գործն անիմաստ կլիներ։ Դրա համար էլ մենք բոլորս գտնում ենք, որ այդ գործը պետք է ավարտին հասցնել։ Չի կարելի խոսել ինչ-որ «Հայկական նահանգների» մասին, կարծես մենք մի տձև կտոր ենք, անտեր ու անանուն։ Անհրաժեշտ է պատրաստել ակտը, համեստորեն այն հրապարակել, ընտրել կառավարություն, շտապ այն Երևան ուղարկել, սկսել բոլոր այն գործողությունները, որոնք բխում են պայմանագրից, օգտվել նրա ընձեռած իրավունքներից [հյուպատոս, որը սարսափելիորեն կարևոր է բռնագրավված տեղերում], պատգամավորություն ուղարկել Կոստանդնուպոլիս և սկսել երկրի կազմակերպումը։

Մենք խոսել ենք նաև երկաթգծով գնալն արտոնյալ ձևակով անելու մասին։ Մի խոսքով, գուցե նրանից, որ այստեղ խաղաղ ու հանգիստ է, ապագան էլ մեզ այժմ երևում է ցայտուն և Թուրքերի հանդեպ վարելիք քաղաքականությունը՝ որոշակի։ Հիմա պարզ է, որ առայժմ Թուրքիան միայնակ է տիրություն անում։ Գերմանիան չի երևում, և իրեն էլ զգալ չի տալիս։ Թուրքերը հույս ունեն, թե խաղաղությունը կդատարկի Բաքուն։ Սակայն, եթե այդ չկատարվի, ապա նրանք այնտեղ զորքեր կուղարկեն։ Երեկ նրանք այդ մասին ասացին հաստատորեն։ Մենք խնդրում ենք, որ սպասեն, մտածելով, որ կարելի կլինի հայերին այնտեղից ուղարկել իրենց տները։ Թուրքերն Ադրբեջանի շրջանում շատ շուտով ճանապարհը բանուկ կդարձնեն։

Եվ այսպես, ընկերս, պարզ է, որ ձեր որոշումը հաշտության վերաբերյալ՝ լիովին ճիշտ է։ Դուք միայն ուշացել եք, անհրաժեշտ էր հաշտվել Տրապիզոնում։ Բայց մեծ է հայոց հողի ոգին։ Մենք բերինք խաղաղության վատ պայմանագիր, սակայն բե-

բինք նաև անկախ Հայաստան՝ տուն, բույն, ուր պետք է փթթի ժողովրդական միտքը։ Այս բոլորը կձուլի, կմիավորի, կբարձացնի ոգին։ Եվ դա կարևոր է։ Ես հավատում եմ մեր պետությանը։

Պատգամավորությունը գործում է միանգամայն համերաշխ ու բարեկամությամբ (Սա էլ Քաջազնունու պոռթկումն ի չիք դարձնելու համար .— Բ. Ու.)։

Ա. Խատիսով»։

* *
*

Հայոց Ազգային կենտրոնական խորհրդի պարագլուխները դեռ մի կարգին չէին պատկերացնում Ավետիս Ահարոնյանի և Այեքսանդր Խատիսովի հռչակած անկախությունը, երբ մտածեցին այն պահելու մասին և եկան այն եզրակացության, թե դա համարյա անհնար պիտի լինի։ Նոր միայն հիշեցին, որ անկախացած մուսավաթի ու մենշևիկի աքցանի մեջ, հայակուլ թուրքի զորքի առաջ հայոց անկախությունը կարող է դառնալ վերացական խոսք, եթե նրա համար չապահովվի մի ամուր թիկունք։ Այն ժամանակ խելք խելքի տվին և որոշեցին իրենց հորինած անկախ Հայաստանը կախել որևէ ազդեցիկ շնքից։ Հիշեցին Ալբիոնի երկիրը՝ Մեծն Բրիտանիան։ Նրա բարեկամության հին ցույցերն ու շռայլ խոստումները հիշեցին, այդ խոստումներով ոգևորված հայ ազատամարտիկների նահատակությունները, արդուլ-համիդյան ջանգվածային կոտորածները։ Հիշեցին, որ, երբ ջարդվող հայության աղաղակները հասել էին Եվրոպա, Մեծն Բրիտանիան խոսեց ամբողջ ձայնով և ասաց. «Շատ եմ ցավում, բայց ինչպե՞ս օգնեմ. ես միայն հզոր նավատորմիզ ունեմ, որը դեռ չի հաղորդել լեռները ջարձրանալ, որպեսզի գա ու ձեզ փրկի»։

Հետո հիշեցին Գերմանիան։ Չէին կարող մոռացած լինել, որ հայության Մեծ Եղեռնը եթե թուրքաց ձեռքերի գործն է, ապա այդ ձեռքերն ազատ գործել էին կայսերական Գերմանիայի թողտվությամբ ու հորդորով... Իհարկե, մոռացած չէին լինի։ Սակայն ուրիշ հար չկար։ Հո չպիտի՞ դիմեին Ռուսաստանին,

որն ինքն էր մի ամիս առաջ իր հովանավորությունն առաջարկել, և Անդրկովկասյան հանրապետություն կոչված մեռյալ հոգին արժանապատվությամբ պատասխանել էր, թե Ռուսաստանից հեռու որևէ չեզոք գոտի կուղարկի իր ներկայացուցչին, որպեսզի սա հաղորդի և Ռուսաստանի քթին սեղմի Անդրկովկասի անջատ անկախությունը։

Հասկանալի է, որ հայոց պարագլուխները պիտի կանգ առնեին Գերմանիայի վրա։ Որոշեցին կազմել մի հեղինակավոր պատվիրակություն՝ նրա կազմի մեջ մտցնելով բժիշկ Համո Օհանջանյանին, Հովհաննես Քաջազնունուն և ուրիշ որևէ հեղինակավոր ու գործունյա մարդու։ Այդպիսին ճանաչվեց սոցիալ-դեմոկրատ Արշակ Զուրաբյանը։ Պատվիրակությունը Եվրոպա պիտի անցներ Բաթումով, մանավանդ որ Օհանջանյանն ու Զուրաբյանը այնտեղից էլ իրենց ընկերակից պիտի դարձնեին Քաջազնունուն։

Համո Օհանջանյանը, ըստ երևույթին, հասցրել էր զրույց ունենալ Բաթումին դեռևս իր հրաժեշտը չտված գերմանացի զորավար Ֆոն Լոսովի հետ։ Դրանից առաջ էլ, ինչպես վերը տեսանք, զորավարի հետ նավում հանդիպել էին Խատիսովն ու Քաջազնունին, և սրանց հետ ունեցած զրույցի ժամանակ էր, որ Լոսովը հայերին խորհուրդ էր տվել նման մի պատվիրակություն ուղարկել Բեռլին։ Բոլորն էլ հույս ունեին կայզերական Գերմանիայի հեղինակավոր ճնշումով չափավորել թուրքաց հակահայկական սանձարձակությունները։

Հիմնականում բժշկական գործունեությամբ իր համար անուն ձեռք բերած Համո Օհանջանյանը, որին բախտ պիտի վիճակվեր նաև դառնալու դաշնակցական հանրապետության վերջին վարչապետը, ո՛չ խանդավառված էր եղել Անդրկովկասյան հանրապետության օրապակաս անկախությամբ, ո՛չ էլ կարծում էր, թե պիտի ապրի նրան փոխարինելու եկած հայոց անկախությունը։ Համոն բժիշկը ակնհայտ ախտանշաններից ժամանակին հաստատապես որոշել էր, որ մենշևիկների, մուսավաթականների ու դաշնակների միությունն անհնար է եղել ի սկզբանե, որովհետև նրանք ի ծնե ախտահարված էին անհամատեղելիությամբ։ Բժիշկը Հայաստանի անկախությունն էլ էր համարում ոչ այնքան անվտանգ հիվանդություն, որից զգուշացնում էր՝ հետևելով գերմանացի զորավարի խորհուրդին։ Բայց լավ է այստեղ խոսքը

տամ իրեն՝ բժիշկ Համո Օհանջանյանին, որը մայիսի 28-ի ժամը 4-ին Բաթումից նամակ է հղել Թիֆլիս՝ Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանին կամ նրա տեղակալ Եաշատուր Կարճիկյանին։ Այդ նամակում բժիշկը, ի միջի այլոց, գրել է. «Խոսեցի նորից Լոսովի հետ, վրացիների հետ արդեն խոսել է, և դրանից հետո է, որ նա հիմա ավելացնում է, թե ինքը չի կարող վճռողական կերպով մեզ խորհուրդ տալ անկախություն հայտարարել, քանի որ ինքը լավ ծանոթ չէ տեղական պայմաններին, կարող է պատահել, որ դա շատ օգտակար չլինի մեզ համար, որովհետև Թուրքիան կարող է ասել, թե քանի որ սա անկախ երկիր է, ես կարող եմ հետը վարվել այնպես, ինչպես ուզում եմ, ոչ ոք գործ չունի և չի կարող միջամտել։ Այդ պատճառով էլ նա ասում է, որ այդ խնդիրը պետք է մի քիչ կշռադատել։ Համենայն դեպս, խորհուրդ է տալիս մտածել, նախքան այդ անելը...»։

Լավ խորհուրդ է. պետք է կշռադատել, մտածել, նախքան մի բան անելը։ Ժողովուրդն ասում է՝ յոթ չափիր, մեկ կտրիր։

Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի ղեկավարները նախ կըտրել էին, նոր սկսեցին մտածել։

Հովհաննես Քաջազնունին՝ Բաթումի խորհրդաժողովի հայ պատվիրակության անդամն ու ապագա անկախ հանրապետության առաջին վարչապետը, Բաթումում հասկացավ, որ ա՛յն գնացքը չի նստել, մանավանդ՝ ա՛յն չեն իր ուղեկիցները։ Եվ նա էլ Ազգային խորհրդի ղեկավարներին Բաթումից նամակով հաղորդեց իր դժկամությունը. «Ես իմ կողմից ասում եմ՝ թե որևէ ընկեր կա, աղաչեցեք ինձ այն անտանելի տանջանքից, որ կրել եմ Տրապիզոնում, կրում եմ Բաթումում և անկասկած կրելու կլինեմ Բեռլինում»։

Քաջազնունին Բեռլին գնալուց հրաժարվեց այնպես, ինչպես մեկուսի էր մնացել դաշնագրի խատիսովյան տարբերակի ծնընդի արարողություններից։

Սակայն դաշնագիրն արդեն ընդունված էր, և Հայոց տարաբախտ երկրի վրա վերստին կախված էին մնում սև ու մահաբեր ամպերը։

* *
*

Հաշտության գույժը հայկական ամենատարբեր շրջանների վրա թողել էր նույն տխուր տպավորությունը և բորբոքել նույն զզվանքն ու զայրույթը։ Ի՞նչ հաշտություն, երբ թշնամին ծնկել է կրծքիդ և կոկորդդ է կրծում։ Ի՞նչ հաշտություն, երբ հայոց զորքը, առաջին հաղթանակներով խանդավառված, հալածում և իր երկրից դուրս է շպրտում թշնամու բանակները, իսկ դուք ի չիք եք դարձնում նրա հույսերը։

Զինվորությունը հաշտության բոթն ընդունեց որպես իր մեջքին հասցված ամենաստոր դավաճանական հարվածը։ Հրամանատարությունն առաջին հերթին բռունցք դարձավ, որպեսզի ծայր չառնի դասալքությունը, ստորաբաժանումներում տեղի չունենան կամայականություններ, որոնք սովորաբար ժանտախտի դեր են ունենում ամեն մի բանակի համար։ Իսկ հետո սկսեց հեռագրերով ոմբակոծել բոլոր վերադասներին. պահանջում էր թույլ տալ շարունակելու հաղթական պատերազմը, երկիրը մաքրելու բռնագրավիչներից և հասնելու Կարս։ Գոնե Կա՞րս...

Հայկական կորպուսի օրագրի մեջ գրված է, թե դեռևս հունիսի 1-ին «Անդրանիկն ստացել է թուրքական դիվիզիայի պետի գրությունն այն մասին, որ Թուրքիան պայմանագիր է կնքել Հայաստանի հետ։ Թուրքերը (հայկական) կորպուսի հրամանատարին զինադադար են առաջարկել։ Գեներալ Նազարբեկովը համաձայնություն է տվել»։ Զորավար Անդրանիկն այդ գրությունն օգտագործել է «հոտած ճանապարհին» և իր զորագունդը քշել Ղարաքիլիսայում անպաշտպան հայերին հոշոտող թուրք զորքի վրա։ Սակայն, որովհետև թիկունքից անդադար հնչում էին Նազարբեկովի զինադադարի կոչը և կարգադրությունը չկատարողներին պատժելու սպառնալիքը, հայոց ազատագրության քաջ զորավարը հունիսի 4-ին ընդունեց անկասեցնելի վճիռ։ Այդ օրը կորպուսի օրագրում նշվել էր հետևյալը. «Անդրանիկը հաղորդում է, թե քանի որ կնքվել է ստորացուցիչ պայմանագիր, ինքը հեռանում է ճակատից»։

Այս առթիվ Անդրանիկն ինքը ևս թողել է իր գրավոր խոսքը, որն անկարելի է չհիշել այստեղ։

Պատերազմի վերջին օրերին ոչինչ մխիթարական չկար Դա-

բաքիլիսա-Դիլիջան գծի վրա, այն ճակատամարտում, որի մասին այնպես բարձր գովասանական խոսքեր էր շռայլել Վեհիբ փաշան, և որի խոսքերն էլ հալած յուղի տեղ էր ընդունել Ալ. Խատիսովը։ Ղարաքիլիսայից Դիլիջան նահանջող սպարապետը վերջին այս հանդիպմանում չկարողացավ երկար մնալ։ Բեկ Մամիկոնյանի ու նրա դասակիցների տագնապալից հեռագրերը խեղճ զորավարի առաջ պատկերացրել են մի ծանր հեռանկար, որից փախչելը սպարապետի կողմից գիտակցվել է որպես միակ խելացի քայլը։

Լոռու կողմերից քսան հազար գաղթականներին ապահով մի տեղ տանող Անդրանիկի զորամասը երբ հասավ Դիլիջան, այնտեղ այլևս ո՛չ սպարապետ կար, ո՛չ զորք։ Այս մասին ինքը՝ զորավար Անդրանիկն է գրել, թե «հասա Դիլիջան, ուր տեսա, թե ոչ ոք կա, բոլորն ալ փախած են։ Գտա Մեսրոպ եպիսկոպոսը հազարե ավելի որբերով... Փախչողները գետը թափած էին 12 գնդացիր, 2 թնդանոթ, միլիոնավոր փամփուշտ և քանի մը հազար թնդանոթի ռումբ»։

Այստեղ զորավարը դիրքեր է ամրացնում, իր զորամասը դիրքավորում։ Ապա վերականգնել է տալիս հեռախոսի ու հեռագրի գծերը, կապվում Ելենովկայի և Երևանի հետ։ Դրանից հետո էլ հայտնի է դառնում Հայոց սպարապետի նոր, նշանակալից հանձնարարությունը։ Այդ մասին Անդրանիկ զորավարը հեգնանքով գրել է. «Զորավար Նազարբեկյան կը հեռագրեր ինձ. «Ի սեր աստծո և ազգության, Տիլիճանը պահե՛»։ Պատասխանեցի, թե քանի մեկ հատ փամփուշտ ունիմ, Տիլիճանը չե՛մ ձգեր»։

Անդրանիկը պահում էր Դիլիջանը։ Սակայն ստացավ թուրքերի հետ կնքված «ստորացուցիչ դաշնագիրը» և որոշեց հեռանալ այդպիսի դաշնագիրն ստորագրողների հետ գործակցելուց։ Այդ մասին էլ նա դարձյալ թողել է իր հիշատակագրությունը։ «Հաշտության պայմանագիրը կարդալես ետք,— գրել է Անդրանիկ զորավարը,— Տիլիճանեն հեռագրեցի Նազարբեկյանին հետևյալը. «Վեց հարյուր տարվան ստրկության շղթան դարձյալ ձեր վիզն ու ոտքը կանցընեք ձեր ձեռքով։ Չեմ կրնար այս պայմաններուն հանդուրժել՝ մոռնալով մեր երեսուն տարվան զոհերը և մեկ միլիոն նահատակները։ Ստացեք ինձմե Տիլիճանը, որպեսզի ես մեկնիմ՝ ուր որ կուզեմ»։

Արարատյան երկրում կուտակված հայությունը, տեղացի թե գաղթական, եռում էր գիշեր-ցերեկ, բողոքում էր ու ալեկոծվում. ո՞ւմ անունից են հաշտություն կնքել այդ շառլատանները, երբ մենք ենք զարկվածն ու զրկվածը և մենք պետք է որոշենք մեր բախտն ու անելիքը։ Էջմիածնի գավառի գյուղերից խումբ-խումբ մարդիկ էին գալիս Երևան, ծեծում էին Ազգային խորհրդի դռները և հաշիվ էին պահանջում։ Հաշտության պայմանագրով այդ գյուղերի մի մասն անցնում էր Թուրքերին, և գերության վաճառվող գյուղերի ներկայացուցիչները լուտանք էին թափում ազգի դավաճանների հասցեին։

Նույն պայմանագրի համաձայն՝ սահման էր դառնալու երկաթգիծը, և Ղամարլուն անցնելու էր Թուրքերին։ Ղամարլվեցիները, որ Դանիելբեկ Փիրումյանի առաջին իսկ հորդորով ոտքի էին կանգնել և զինավառ դիրքավորվել Արաքսի ափին, հիմա էլ գունդ կազմած, մարտական շարքերով հասան Երևան, ցույց արին քաղաքային այգում, բողոքի ճառերով ու հրացանային համազարկով ազդարարեցին իրենց վճիռը՝ չհանձնվելու Թուրքին, ապա թաղման թափորի պես անցան Ազգային խորհրդի շենքի տակով։ Որոշել էին ձայն-ծպտուն չհանել, իբր թաղում են Ազգային խորհրդի ողորմելի պարագլուխներին։ Սակայն զորասյուներին ուղեկցող կանայք չդիմացան, շենքի պատուհանների տակ դրոշների պես թափահարեցին իրենց լաչակները և ծվծվացին։

— Առե՛ք, դրանցով ծածկեք էդ աննամուս գլուխներդ, դուք իրավունք չունեք տղամարդու գդակ դնելու։

Ահարոնյանը, խատիսովն ու համախոհները հույս էին դրել իրենց կուսակցության վրա, սակայն այստեղ էլ համաձայնություն ու պաշտպանություն չգտան։ Հակառակը, դաշնակցական կուսակցության կազմակերպությունները Երևանում, Բաքվում և հայկական ու հայաշատ մյուս կենտրոններում դատապարտեցին իրենց պարագլուխների արարքը՝ այն գնահատելով որպես հանցանք ու դավաճանություն։ Արևմտահայ դաշնակցականների «Աշխատանք» թերթը Երևանից իր խմբագրական հոդվածում ընթերցողներին հաղորդում էր, որ եթե Բաթումում արդեն կընքվել է հաշտության պայմանագիրը, ընդունված է Թուրքիո վերջնագիրը, զիջված են այդ հողամասերն առանց հայության կամքի

ու կարծիքի, ապա ուրեմն «գործված է հանցանքներու ամենասեր, դավաճանության ամենասոսկալին, որոնց նմանը հայկական տարեգրության մեջ չէ եղած դեռ»։

Ամենասոսկալի դավաճանության մասին իմացել էին Բաքվի դաշնակցականները և նրանք էլ անմիջապես իրենց «Արև» թերթում հայտարարեցին, թե «հաշտության այն պայմանը, որ կապել է Թուրքիայի հետ Թիֆլիսի Ազգային խորհուրդը, մատնության մի նոր ակտ է հանդիսանում, որի նպատակն է խորտակել կովկասյան ողջ դեմոկրատիայի միությունը և մեր երկիրը սրի ու հրի մատնել»։

Մայիսի 29-ին Բաքվի Սովետի ընդլայնված նիստում Անդրկովկասի դրության հարցն էր քննվում, և Ստեփան Շահումյանը, հաշտության դաշնագրի ստորացուցիչ պայմաններին իրազեկ, Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի պարագլուխների գործարքները գնահատեց որպես մեծագույն ազգադավություն։ «Նրանց ձեռքին կար մոտ 30 հազար հայ ճակատային զինվոր,— ասել է Շահումյանը։— Այդ ուժով հրաշքներ կարելի էր կատարել։ Ես էլ չեմ խոսում զինված գյուղացիության հայկական զանգվածի մասին, որը միայնակ կարող էր հաշիվ տեսնել թե՛ Թուրքերի և թե՛ Անդրկովկասի բոլոր հակահեղափոխական ուժերի հետ։ Եթե հայ գյուղացիների գլուխ անցած չլինեին Ջխենկելիից ու Ժորդանիայից ոչնչով չտարբերվող դավաճաններ, այլ իսկական հեղափոխականներ, ապա ժողովուրդը նման խայտառակ վիճակի չէր հասնի»։

Նույն նիստում Ստեփան Շահումյանն ասաց նաև եզրափակիչ խոսք, որի մեջ վերստին խարանիչ գնահատականով «պատվեց» հայության բախտի անկոչ, անճարակ տնօրեններին։ Ահա այդ խոսքը. «Նրանք ասում են՝ հարկադրված էին կապիտուլացիայի ենթարկվել Թուրքերի առաջ, իսկ ես ասել եմ ու կրկնում եմ, թե իրական պայմաններն այնպես էին դասավորված, որ Անդրկովկասում կար հսկայական զինական ուժ, որը պատրաստ էր ելնելու թույլ Թուրքիայի դեմ։ Միմիայն հայկական ուժերը բավական էին Թուրքերի հետ հաշիվ տեսնելու համար։ Սակայն դուք մենշևիկների ու մուսաֆաթականների հետ կազմալուծեցիք զորքերի շարքերը, ոչ թե այն զորքերի, որոնք երեք տարվա պատերազմից հետո ծարավի էին հաշտության, այլ այն հայկական զորքերի, որոնք պատրաստ էին մեռնելու

գնով պահելու իրենց երկիրը։ Դուք այլասերեցիք այդ զորքերը։ Ահա թե ո՛րն է ձեր մեղքը, ահա թե ո՛րն է ձեր ոճրագործությունը»։

* *
*

Սարդարապատի ճակատի զորքը, Ալեքսանդրապոլի մատույցներին հասած հայ զինվորությունը, որ առել էր հաղթանակի համը և ծարավի էր նոր հաղթանակների, կանգ առավ նվաճված բարձունքների վրա։ Կանգ առավ՝ հայացքն ակամա ետ դարձնելով, որ տեսնի՝ ի՞նչ է հրամայում իր սիրելի զորավարը։ Կային նրբանկատ զինվորներ, որոնք մտածում էին, թե հաշտությունը զորավարի սրտով պիտի լինի։ Չէ՞ որ հաշտության պայմանագրով են կատարվում գերիների փոխանակությունն ու տունդարձը։ Իսկ զորավարի երկու տղաները գերի են թուրքին... Իրար դեմ կկանգնեն հայրն ու հայրենիքի զինվորը, կկանգնեն, կտան ու կառնեն, և հայրը կհաղթի։

Այսպես էին մտածում։ Այսպես մտածողներ կային, երբ նա Մահապարտների գունդը հավաքեց Կարա-բուրուն կայարանից հյուսիս, Ղզլթափա բարձունքի տակ և ասաց իր խոսքը։

Տխուր էր զորավարը։ Բծախնդրորեն մաքրակենցաղ մարդ՝ երեսը սափրել էր մաքուր։ Հագի զգեստներն այնպես նստած էին վրան, ասես հենց քիչ առաջ էին ձուլել ու հագցրել։ Դեմքը, սակայն, ծածկված էր վշտի այնպիսի մշուշով, որ անհնար էր թաքցնել, և կտեսներ նույնիսկ անծանոթը։ Եվ ձայնը խռպոտ էր. մատնում էր հոգնությունն ու տառապանքը։

— Զո՞րք հայոց,— տխուր հնչեց զորավարի ձայնը և մի կարճ պահ դադար առնելուց հետո նորից, ավելի բարձր ու հզոր ղողանջեց.— Արցախական քաջե՞ր...։— Գունդը մեկ միասնական մարմնի պես շարժվեց, ձգվեց և սարսռաց. կարծես հեռավոր կարոտալի եզերքների բոլոր ձայները միախառնված մտան սրտերը, ալեկոծեցին։— Ճակատամարտի նախօրեին մենք վճռել էինք այնպես կռվել, որ մեր Քիրսա սարն ամոթով չմնա իր հայր Արարատի առաջ։ Եվ կռվեցինք, ինչպես պե՞տք էր, ինչպես կարո՞ղ էինք։ Սակայն մեր կռիվը դեռ չի ավարտվել։ Մենք զենք

վայր գնելու իրավունք չունենք, քանի դեռ թուրքը ոտնակոխ է անում մեր հողն ու մեր պատիվը...

Զորքը հանգստացած շունչ քաշեց։ Նրանք, որ թերահավատ էին, միանգամից ուժ առան, լցվեցին նոր ոգևորությամբ ու ավյունով։

Գնդապետ Շահնազարյանը հանկարծ պոկվեց իր գումարտակից, մի քիչ առաջ գնաց, կիսաշրջվեց և դեպի զորաշարքերը գոռաց.

— Կեցցե՞ մեր զորավարը, ո՞ւռ-ռա՞։

— Ուռա՞, ուռա՞, ո՞ւռ-ռա՞,— գունդը որոտաց երեք անգամ։

Ապա դառնալով դեպի Փիրումյանը, գումարտակի հրամանատարը գոչեց.

— Տա՞ր մեզ նոր ճակատամարտի և հաղթության, սիրելի զորավար, տա՞ր։

— Տա՞ր,— նորից գնդապետի կոչը որոտընդոստ արձագանք տվեց զորաշարքերի վրա։

— Շնորհակալ եմ հավատի ու վստահության համար,— խորապես զգացված, հուզումնալից խոսեց զորավարը։— Ես հավատում եմ ձեզ, վստահ եմ ձեր կամքի ու քաջության վրա...

Զորավարն այստեղ լռեց, մոայլ հայացքը վար պահեց։ Եվ երբ գլուխը բարձրացրեց, աչքերում թախծի փոխարեն բարկության կայծեր էին շողում։ Քիչ առաջ նրան հաղորդել էին, թե զորավար Անդրանիկը հեռացել է ռազմաճակատից, հենց որ լսել է ամոթալի պայմանագրի մասին։ Առել է իր փառապանծ հայրենասերների գունդը և հեռացել։ Ուզեց այդ մասին խոսել, մեկ էլ զսպեց։ Ասես սիրտը բռան մեջ սեղմած, ցավագնորեն խեղդեց իրեն։ Թե դրա փոխարեն ի՞նչ ասաց և ինչպե՞ս խնայեց մեծ զորավարին ու քաջին, հետո չպիտի հիշեր։ Կարևորն այն էր, որ չասաց, անունը չտվեց, այլ պարպեց իր փոթորկված սիրտը, անանձնական ցավի կրակի մեջ փոթոթվելով ասաց իր հավատամքը.

— Մենք ազգի ու հայրենիքի զինվորն ենք։ Մե՛կն է մեր ազգը, և ուրիշ հայրենիք չունենք։ Թե որ դժոխք էլ դառնա ու մեզ կլանի, սա է մեր հայրենիքը, միակն ու ամենաթանկը։ Կկռվենք նրա համար, կապրենք կամ կտանջվենք նրա հետ, որ նրա մի բուռ հողին արժանի լինենք... Երանի՞ թե արժանի դառնանք։

Բաթումում կնքված հաշտության դաշինքի պայմանները զորավարը գրի էր առել մի թղթի վրա, որը գրպանում էր։ Կարող էր կարդալ, և այն ժամանակ հայ զինվորությունը կտեսներ, թե ինչպե՛ս է վարկաբեկվում իր թափած արյունը, ինչպե՛ս է անգոսնվում իր տված զոհերի հիշատակը, և ի՞նչ տեսակ դժոխքի մեջ են նետվում ազգի վերջին մնացորդները։ Սակայն չկարդաց։

— Թիֆլիսի ազգային խորհրդի պատվիրակները Բաթումում, թուրքերի հետ միասին,— ասաց նա,— ամբողջ հայության համար մի բնակավայր են սահմանել, որն իբրև գերեզման էլ նեղ է։ Այդ պայմանագրի համաձայն՝ պետք է թուրքին զիջենք մեր արդար արյամբ ազատագրած այս հողերը։ Որովհետև նրանց խոստացած Հայաստանի արևմտյան սահմանն էջմիածնի պատն է, արևելյանը՝ Սևանի ափը։ Մենք զորք պահելու իրավունք չունենք։ Մենք զենքերս պետք է հանձնենք թուրքին և վզներս երկարենք, որ նա կտրի... Մեր երկաթգծին ու մնացած ճանապարհներին այսուհետև տիրություն է անելու թուրքը, որպեսզի արագ ու հանգիստ հասնի Բաքու և բնում խեղդի Ստեփան Շահումյանի բերած ժողովրդական իշխանությունը... Ահա թե Բաթումից ի՞նչ պայմանագիր են բերում հայ ազգի համար...

— Կորչի՞ ստորացուցիչ պայմանագիրը։— բացականչեց գնդապետ Շահնազարյանը, և ամբողջ գունդը մի քանի անգամ կրկնեց նրա կոչը։

Այնուհետև խոսեցին գումարտակների հրամանատարները։ Կարճ, բայց վճռաբար՝ հաղթական պատերազմը շարունակելու և իրենց համար ձեռնտու ավարտի հասցնելու օգտին խոսեց նաև գնդի հրամանատար Պողոսբեկ Փիրումյանը։ Իսկ երիտասարդ մի զինվորական, որ հանդես եկավ որպես Ջրաբերդ գավառի Կուսապատ գյուղի ներկայացուցիչ, այնքան հուզված էր, որ առաջին պահ չկարողացավ ասելիքի տուտը բռնել, սակայն կամաց-կամաց տիրապետեց իրեն, տամկացած աչքերը ռազմաճակատի հրամանատարին հառած՝ ասաց.

— Պարոն զորավար, մեր գյուղից վեց հոգի էինք էստեղ։ Երկուսը զոհվեցին Սարդարապատի համար։ Երրորդը՝ իմ մեծ եղբայր Սամսոնը, հետախուզության գնաց... և ընկերները նրա մահվան լուրը բերին։ Սամսոնը... Սամսոնը, պարոն զորավար,

հետախուզության գնալուց առաջ երեքիս կանչել էր, ասել. «Տղերք, սա կռիվ է, կռվում չիր ու չամիչ չեն բաժանում։ Ով որ ողջ մնաց, պարտական մնա, թե որ չկռվի մինչև վերջ, մինչև թուրքին մեր աշխարհից դուրս քշելը»։ Էսպես ասաց ու գնաց։ Սա՛ էր նրա կտակը։ Եվ նույն այդ խոսքն էին կտակել մեր բոլոր նահատակները։ Հիմի մենք, որ նրանց եղբայրներն ենք ու արյունակիցները, մենք, որ ողջ ենք ու կռվի պատրաստ, ինչպե՞ս կարող ենք դավաճանել նրանց սուրբ հիշատակին։ Այդ ովքե՞ր են, որ մեզ մղում են դավաճանության...

Կուսապատցի երիտասարդը վերջին նախադասությունն ասաց գոռոցով, և գունդը, իրրև պատասխան, նորից որոտաց, հորձանք տվեց։

— Դավաճանությո՞ւն է զինադադարը։

— Հաշտություն կնքողները թուրքացած են։

Աղմուկ-աղաղակը ծանրացավ զորքի վրա։

Պողոսբեկ Փիրումյանը, ճակատի հրամանատարի ականջի տակ ինչ-որ խոսելուց հետո, կտրուկ շրջվեց նորից, ձեռքն առաջ մեկնած լռեցրեց գունդը և գրպանից մի թուղթ հանելով ասաց.

— Քիչ առաջ գնդի շտաբում պայմանավորվել էինք հայտարարություն հրապարակել։ Խոսեցինք ճակատի պարոն հրամանատարի հետ, և նա էլ է երաշխավորում մեր հայտարարությունը։ Հիմա ես ընթերցում եմ մեր հայտարարության նախագիծը։ «Տեղեկանալով Բաթումում կնքված հաշտության պայմանագրի մասին, մենք՝ Սարդարապատի ռազմաճակատում գործող գնդի զինվորներս ու հրամանատարներս, հայտարարում ենք. ո՛չ Թիֆլիսը, ո՛չ Բաթումը լիազորված չեն հայության անունից վերջնական բանակցություններ վարելու թուրքերի հետ։ Բաթումում կնքված հաշտության պայմանագիրը ստորացուցիչ ու աղետաբեր է հայ ազգի համար։

Ինչ որոշում էլ ընդունելու լինեն ազգային այս կամ այն կազմակերպությունները, քանի դեռ հայ ժողովրդի ֆիզիկական գոյության վրա կախված է թուրքական սպառնալիքը, մենք զենքներս ցած չենք դնի և կկռվենք մինչև մեր վերջին շունչը։

Կորչի՛ ամոթալի հաշտությունը։

Հանուն հայ ժողովրդի ազատագրությա՛ն»։

* *
*

Դանիելբեկ Փիրումյանը Երևանյան ճակատի հրամանատար գեներալ Սիլիկյանին ու Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանին՝ հորդորում էր գնալ Երևան և Արամի հետ պայմանավորվել, որպեսզի պատերազմը շարունակեն։ Սակայն Սիլիկյանը համոզված էր, որ Նազարբեկովը թույլ չի տա։

— Ես հեռագրերն ստանալուն պես կապվել էի հետը,— հաղորդեց գեներալը։— Ասում էր՝ «Միայն դիակիս վրայով»։

— Բայց մի՞թե չկարողացաք համոզել,— բորբոքվեց Փիրումյանը։— Չէ՞ որ հայ զինվորությունն ու ժողովուրդն ապացուցեցին...

— Նա մտածում է, թե պետք է փրկել՝ ի՛նչ որ մնացել է, ի՛նչ որ իսկապես կարելի է պահպանել։

— Իսկ չի՞ լինի՝ իր այդ անվստահությամբ մի կողմ քաշվի, որ մեր գործն ինքներս տեսնենք։

— Ինչպե՞ս մի կողմ քաշվի,— Փիրումյանի խոսքի տակ մի երկրորդ, ավելի կարևոր շերտ զուշակելով՝ հարցրեց Մովսես Սիլիկյանը։— Գուցե ստանձնե՞ք կորպուսի հրամանատարությունը։

— Ի՞նչ եք ասում, մարդ աստծու։ Մի՞թե վտանգավոր է անկեղծ խոսք ասել։ Ետևում անպայման մի թղարկված միտք եք փնտրում։

— Բա ի՞նչ անենք։

— Ինքնե՛րդ ստանձնեք, եթե դա է միակ փրկությունը։

— Ո՞նց ստանձնեմ,— ոսկրոտ, վտիտ ուսերը թոթվեց գեներալը։— Գնամ, ասեմ՝ կորպուսի հրամանատարությունը Նազարբեկովից խլեցեք, ի՞նձ տվեք։ Ձեզ համար կարող է առաջարկություն անել։ Կասեի՝ Սարդարապատում նա ապացուցել է, որ արժանի է։ Մեզ պետք են վճռական, խիզախ և հնարամիտ ղեկավարներ...

— Լա՛վ, լա՛վ։

— Ես ինքս կառաջարկեմ,— խոսեց Գարեգին սրբազանը։— Կասեմ՝ պարոն Սիլիկյանին հանձնեք սպարապետությունը և թույլ տվեք, որ զորավար Փիրումյանն էլ շարունակի իր ճակատամարտը։

* *
*

Գեներալ Սիլիկյանի շտաբից ելնելով՝ Գարեգին սրբազանն ու Դանիել-բեկ Փիրումյանը մտան Գևորգյան ճեմարանի այն սենյակը, ուր փոխադրել էին տեսչական առանձնասենյակի գրասեղանն ու մնացած պիտույքները, և նրանց միջև տեղի ունեցավ մի կարճ զրույց, որը երկու կողմին էլ ոչինչ նոր բան չտալով, պարզեց, սակայն, կարևոր մի հանգամանք. որ մի՛ տեսակ են մտածում հայ զինվորության ներկայացուցիչն ու հայոց հոգևոր առաջնորդը։

— Ազգային կառավարություն են ստեղծել Թիֆլիսում,— այսպես խոսեց ռազմաճակատի հրամանատարը։— Աչքներիս լո՞ւյս։ Գնամ, իմ զորքով բերեմ հայրենի երկիր, նստեցնեմ դարերով թափուր մնացած մեր արքայական դահին... Բայց ինչո՞ւ, ա՞խր, ինչո՞ւ այդ կառավարությունն իր ծնունդը նշանավորի անխելք հրահանգով։ Ո՞նց թե դաշնագիր ես կնքում, երբ որ թուրքը նստած է քո տանը...

— Եվ, մանավանդ, գիտես էլ, հինգ հարյուր տարվա փորձն է քեզ ասում, թե ի՞նչ է նշանակում թուրքի ներկայությունը,— զորավարի խոսքին արձագանքեց Գարեգին սրբազանը և նրա ուշադրությունը հրավիրեց պատին փակցված քարտեզի վրա։— Ահա այսքան հող պիտի ունենա մեր նոր տերությունը,— և ձեռքով ցույց տվեց Վաղարշապատից մինչև Սևանի արևելյան ափը։— Այսքան խղճուկ մի տարածություն..., որի վրա չգիտես ի՞նչ ու ո՞նց պիտի անես ազգ պահելու համար։

Տոթ էր սենյակում։ Զորավարը բացեց պատուհանը, սակայն ո՞չ մի տարբերություն, դրսից էլ նույն տոթն էր ներխուժում։

— Շոգերը շուտ վրա հասան,— մի բան ասելու համար խոսեց սրբազանը։— Երևի չոր ամառ կլինի։

— Մտածում էինք, թե այս չարիքը դուրս կվանենք Արարատյան աշխարհից, շուտով կհասնենք Կարս, այն է՛լ մերը կդարձնենք։ Եվ դրանից հետո թող զինադադար կնքեն... Գյուղացին կգնա իր բան ու գործին, և ազգը կապրի։

Սրբազանն ուզում էր զորավարի տղաների մասին խոսել, ասել մխիթարանքի այն խոսքը, որի կարիքը երևի թե նա շատ

պիտի զգա։ Սակայն նրբազգաց մարդ լինելով, տեսնում էր, որ նա ի՛նքն է իրենց հեռու պահում նման խոսք ու զրույցից։

— Ասում են՝ գեներալ Նազարբեկովն ուզում է զորքը ցրել,— ասաց սրբազանը։— Թուրքաց շտաբից են պահանջել՝ իրրև զինադադարի պայման։

Փիրումյանը տագնապած շտկեց իրեն, գոտին ուղղեց.

— Դժվե՞լ է ծերուկը։

— Քիչ առաջ Սիլիկյանի շտաբի պետ Վեքիլյանը հաղորդեց։ Ասում էր՝ գիշերը հեռախոսով Նազարբեկովը խորհրդակցում էր Սիլիկյանի հետ, հասկացրեց, որ Թուրքերն արդեն նման պահանջ են ներկայացրել։

— Որտե՞ղ են ներկայացրել։ Ճակատո՞ւմ, թե Բաթումի խորհրդաժողովում։

— Իբր, Բաթումից էլ Խատիսովն է հայտնել, թե այսպե՛ս ու այսպե՛ս...

— Վա՜յ, դրանց աստվածը գլխներից փախչի. ճիշտ որ խելքները թոցրե՛լ են։ Բա քիչ առաջ սա ինչո՞ւ չէր ասում,— գլխով Սիլիկյանի կողմը ցույց տալով՝ հարցրեց զորավարը։— Թե՞ մեզ արժանի չէր համարում նման տեղեկության։

— Գուցե դեռ չեն որոշել իրենց անելիքը,— խուսափուկ պատասխանեց սրբազանը՝ ներքնապես համոզված, որ անհերելի է նման գաղտնապահությունը։ Այդ ումի՞ց են թաքցնում հայոց զորքին վերաբերող ամենակարևոր խնդիրը։ Սարդարապատի հերոսական ճակատամարտի կազմակերպչի՞ց։ Բայց չէ՞ որ, համատարած հուսալքության ու ձախողանքների պայմաններում, նա ի՛նքը կանգնեց Թուրքի դեմ, ձեռք բերեց այն հաղթանակը, որի շնորհիվ հիմա քիթը ջարդված Թուրքը ձեզ հետ բանակցության է նստում։

— Չէ՞, սրբազան, դա խելագարությո՞ւն է։

— Բայց գուցե նման բան չկա էլ...,— Գարեգին սրբազանը զղջաց, որ առանց այն էլ պաշտոնական ու անձնական ցավերի մեջ տապակվող զորավարին նոր մի ցավ պատճառեց այդ անախորժ տեղեկությամբ։— Գուցե միայն դատարկ խոսակցությո՛ւն է։

— Ի՞նչ դատարկ խոսակցություն, ա՛յ սրբազան։ Վեքիլյանը լուրջ մարդ է։ Նրա նմանն անստույգ տեղեկություն կհաղորդե՞ր...

— Համենայն դեպս, այս նեղ վիճակում այդ չէ մեր ամենամեծ հոգսը։ Հետո էլ, հայոց զորքի ընտիր մասը քո կարգադրության տակ է։ Կուզես՝ չես զորացրի։

— Ի՞նչ ես ասում, ա՛յ սրբազան. ո՞նց չես զորացրի, երբ կառավարություն են ստեղծել և այսուհետ ամեն ինչ պիտի ասեն ու անեն կառավարության անունից։

— Հա՜, դա ուրի՜շ բան։

— Կառավարության որոշումը չկատարողի գլուխը չեն շոյում։ Այդ մեկը քեզ հայտնի՞ է, սրբազան։

— Ա՛յ քո տոհմի անցյալները լույս դառնան, սրբազանը ե՞րբ է կառավարություն տեսել, որ իմանա, թե նրա հրամաններին ինչպե՛ս պիտի վերաբերվել,— ժպտալով խոսեց Գարեգին Հովսեփյանը և անհանգստացավ։— Ա՛յ, կունենանք, կիմանանք...

— Բա՜, այդպիսի բանե՞ր։

— Այնուամենայնիվ, ես գնամ Արամի մոտ։

— Գնա՛։ Ցնայած, այսօրինակ խաղերից հետո, դժվար է որևէ լավ բան հուսալ...

Նրանք բաժանվեցին, և Դանիելբեկ Փիրումյանն ուղևորվեց դեպի ճակատ, որ այլևս ճակատ չէր, այլ խաղաղ մի զորակայան։

Ճանապարհին ծերմակը, այն քանի՜ օր պարապ ու հանգիստ մնացած, երևի ուզում էր վազել, սկսեց լկամն անհանգիստ ծամել ու քաշել։ Սակայն մեկ էլ զգալով տիրոջ անտարբերությունը, իրեն հանձնեց նրա կամքին։ Իսկ նա մոայլ էր, տխուր, զգում էր մի այնպիսի դժբախտություն, ասես երկինքը փուլ էր եկել և այն էլ հենց իր վրա։

Երբ զորքի հետ էր լինում, հրամանատարական պարտականություններով զբաղված, առժամանակ մոռացության էր տալիս որդիների վիճակը։ Ավելի ճիշտ՝ անպայման իրեն հանգստացնում էր նրանով, որ ժամանակը կկարգավորի ամեն ինչ։ Իսկ առավել հաստատ՝ որ պատերազմ է եղել, հայ ազգի ճակատագրի համար ամենավճռական ճակատամա՜րտը։ Իսկ այդ ճակատամարտի հաղթական ելքի համար ինքը երդում էր տվել Արարատին, խոստացել էր իր կյանքը և թե որ հարկ լինի, նաև ամենաթանկն ու անփոխարինելին՝ զույգ զավակներինը...

Այս տեսակ պատճառաբանությունը, հոգեկան փոթորիկը մեղմացնելու այս եղանակը երևի թե ամենաճիշտն է,— մտածում էր զորավարը։— Մանավանդ, որ միշտ աչքի առաջ է Արարատը և կարող ես խոսել հետը, հաղորդվել նրա հավերժության խորհրդին, նրա հաստատ ու փառապանծ վեհության։

* *
*

Իրիկնամուտին, երբ Արարատի կողմերից եկած քամին խուժել էր Երևանի այգիները և ծառերին խուտուտ էր տալիս, Գարեգին սրբազանը մտավ քաղաք։ Տակի ջորին քնձռոտ ու պառավ էր, թե չէ, տեսնողը կասեր՝ Քրիստոսը մտավ Երուսաղեմ։

Հայտնի չէ Քրիստոսը համոզվա՞ծ էր, թե իր մուտքով, իր հետքերով պիտի տասնապատիկ փառավորվի սուրբ երկրի գլխավոր քաղաքը։ Բայց Գարեգին սրբազանը հույս ուներ և նույնիսկ համոզված էր, որ Երևանում իր առաջ պիտի բացվի հայ ազգի փրկության դուռը, որ ուզում են փակել Թուրքերը և նրանց հետ հաշտության եկած հայ ղեկավարները։ Պիտի բացվի Արամի ձեռքով։ Նա կարծում էր՝ Արամը կարող է անել և կանի այդ բանը։ Պարզապես մի հրահրող է պետք, վճռականության մղող մի մարդ, և այդ քաջակորով, հայրենասեր գործիչը կկանգնի ազգային ու անձնական արժանապատվությունից զուրկ կենտրոնական ղեկավարության դեմ, կասի՝ ո՛չ, ազգը չպետք է կծկվի իր տան վերջին օճորքում և սպասի պատրաստվող օրհասին։ Մենք թշնամուն հաղթել ենք և պետք է շարունակենք հաղթական պատերազմը, մինչև որ ազատագրվի մեր հողը, և ազգը հնարավորություն ստանա շարունակելու իր բնական կյանքը։ Վերջապես էլ ո՞վ, եթե ո՛չ Արամը։ Արարատյան երկրում նա դիկտատոր է նշանակված։ Էլ ի՞նչ դիկտատոր, եթե չպետք է կանգնի համազգային շարիքի դեմ և չպետք է թելադրի իր արդար կամքը։ Չէ՛, Արամը չի կարող չանել այս վճռական քայլը, երբ հայրենիքն ու ազգը կանգնած են վերջին ու մեծագույն քննության առաջ։

Սրբազանը ջորին քշեց Ցարսկայա փողոցը, Արամի բնակարանի վրա, ուր մի քանի անգամ եղել էր և փակ աչքերով էլ կգտներ։ Դուռը փակ էր, և հարևանը թոնթորալով ասաց.

— Տուն ե՞րբ է տեսնում։ Գիշերվա կեսին երևա թե ոչ...

Բայց երևալս ո՞րն է, երբ աշխատում է մի փողոց այն կողմ պպզած երկհարկանի շենքում, և այնտեղից իր բնակարանը կարելի էր շքռել-անցնել։ Մանավանդ, եթե անցնողն էլ Արամի պես հաղթահասակ մեկն է և ոչ թե սրբազանի նման մի կեսմարդ։

Ազգային խորհրդի շենքը, որ Աստաֆյանի ծայրին էր, քաղաքային այգուց վերև, Նազարյան և Բեյբութիվյան փողոցների միջև, պաշարված էր աղմկոտ ամբոխի կողմից։ Իրարով անցած, խլվլացող մարդկային զանգվածը եռում էր։ Սրբազանը հասկացավ, որ ճեղքելն անհնար պիտի լինի, ջորին կապեց հեռվում կանգնած մենավոր թթենուց և այն է ուզում էր ծանոթ փնտրել, երբ հայտնվեց քաղաքի պարետ Արշո Շահխաթունին։

— Գարեգին սրբազան, ո՞ր քամին...,— անհուն ուրախություն ցուցադրելով՝ վտիտ հոգևորականի գլխավերևը ձգվեց նախկին դերասանն իր շողշողուն զգեստներով։

Երևի Արամն սպասում էր այս կարևոր այցելությանը։ Սրբազանին այդպես թվաց, որովհետև Արամ Մանուկյանի առաջ, դրասեղանի կենտրոնում, իրար վրա դարսած հեռագրերն ու գրությունները մտնում էին այցելուի աչքը։ Արամը բռան մեջ առավ դրանք, բարձրացրեց ու թափ տվեց։

— Դե, արի, ինքնուրո՞ւյն եղիր,— վրդովված խոսեց նա։— Բոլոր կողմերից կարգադրում են, պահանջում...

— Ովքե՞ր են այդ կարգադրողները,— խոսակցությունը շարունակելու համար հարցրեց սրբազանը։

— Հայոց նորաստեղծ կառավարության ներկայացուցիչները։— «Հայոց նորաստեղծ կառավարությո՞ւն»։ Ուրիշ պարագաներում հենց միայն այս անունը հպարտությամբ կլցներ սրբազանի հոգին։ Կա՛, վերջապես, այդ կառավարությունը, հայն է՛լ արժանացավ նման բախտի։ Բայց այդ ի՞նչ հայկական կառավարություն է, որ իր կյանքն սկսում է հակահայկական կարգադրություններով ու պահանջներով։— Բոլորը միակամ ու միաբերան նո՛ւյնն են ասում. զինադադա՞րն է ազգի փրկությունը։ Պետք է դադարեցնե՞լ պատերազմը և ենթարկվե՞լ Բաթումի դաշնագրին։

— Իսկ եթե այդ դաշնագրով ծախվել է նույնիսկ մեր վերջին մի բռաչափ հողի կե՞սը,— թնդաց Գարեգին եպիսկոպո-

սը։— Ի՞նչ է, այն է՞լ տանք թուրքին։ Բա ամոթ չունե՞ն այդ «հայոց նորաստեղծ կառավարության ներկայացուցիչները», չե՞ն վախենում ազգի դատաստանից...

— Նրանք գտնում են, որ դա է միակ փրկությունը։

— Նրանք գտնո՜ւմ են,— ափերից ելավ սրբազանը։— Նրանք իրենց սեփական գլուխները թող պատերին զարկեն։ Նրանք, ահա՛, այդքան բան կարող են անել։ Իսկ ի՞նչ է մտածում Արարատյան երկրի միանձնյա տերը։ Արամ Մանուկյանն էլ խոնարհաբար սլիտի ենթարկվի՞ նրանց ազգակործան կարգադրությանը։

— Է՜, սրբազա՜ն, սրբազա՜ն,— հուսահատ խոսեց Արարատյան երկրի Ազգային խորհրդի նախագահը։ Թղթերը ճմռթվել էին նրա ջղաձգված բռան մեջ։— Որպես հայ մարդ որոշումներ եմ հանում, անխախտ ու անսասան վճիռներ, և հետո կուսակցական գործիչը գլուխ է բարձրացնում ներսս ու ոտքի տակ է տալիս ամեն ինչ...

Սրբազանի մանր ու բարի աչքերը կլորացան, թռան ճակատին։ Ինչպե՞ս թե «որպես հայ մարդ»... ապա «կուսակցական գործիչ»... Ուրեմն, սրանք տարբե՞ր բաներ են, հակոտնյա՞, իրար մերժո՞ղ... Ի՞նչ նորություն է, որ եկավ իբրև պատիժ և դարձյալ տնկվեց այս չարչրկված ու տանջահար հայ ազգի ճանապարհին։

— Եվ այդ քեզանի՞ց եմ լսում, Արամ Մանուկյան,— զարմանքից շվարած խոսեց Գարեգին սրբազանը։— Այն էլ մի ժամանակ, երբ քո վճռականությունի՛ց է կախված ազգի բախտը։— Ուզես, կասես՝ շարունակեցե՛ք հաղթական պատերազմը, թուլացած ու նահանջող թշնամուն դո՛ւրս քշեցեք մեր հողից... Եվ ուզես, կասես՝ ենթարկվեցե՛ք Բաթումի խայտառակությանը, վզներդ պահեցե՛ք թշնամու յաթաղանի տակ...

— Բայց ես ի՞նչ անեմ, սրբազան. ահա նրանք՝ իմ կուսակցական ղեկավարները, կառավարությունը և սպարապետը, բոլորը միաբերան ու միակամ նույն կարգադրություններն են անում,— և նորից բռան մեջ ճմռթած թափ տվեց հեռագրերի ու գրությունների կապը։— Դու իմ փոխարեն ի՞նչ պիտի անեիր։ Իմ կուսակցության...

— Դե՛, բավակա՛ն է այդ կուսակցության անունով բերանս փակես,— գոռաց սրբազանը, մեկ էլ հասկացավ, որ դա ավե-

լորդ էր. վերջապես, չորրորդ դարո՞ւմ չեն հանդիպել մի հոգևորական գործիչ ու մի աշխարհիկ իշխանավոր, որպեսզի անիծեն իրար, և այդ անեծքը դաշվի հայոց հետագա ամբողջ պատմության ճակատին։

Արամն ավելի խեղճացավ, քան զարմացավ իր համար շատ հարգելի մարդու պոռթկումի վրա։ Նա համոզված էր, որ այդպիսի մարդիկ զուր տեղը դուրս չեն գալիս հավասարակշռության ու պատշաճի սահմաններից։ Եվ փորձեց մեղմել, հանգրստացնել նրան։

Սրբազանը մեղմացած խոսեց, և Արամը հասկացավ, որ նրա խոսքն ուղղված է ոչ միայն իրեն՝ իբրև կուսակցության շարքային կամ ոչ շարքային մի անդամի։

— Ես չգիտեմ՝ դուք ձեր կուսակցության ո՞ր գործով պիտի հպարտանաք և որի՞ համար ամաչեք,— հանդարտ ասաց միանգամից իրեն տիրապետած հոգևորականը։— Բայց կա մի պարագա, որը հիշելիս ամեն անգամ ինքս ամաչում եմ որպես հայ։

— Ո՞րն է այդ պարագան։

— Ձեր համագործակցությունը երիտասարդ թուրքերի հետ։ Դուք նրանց օգնեցիք ոտքի կանգնելու, քայլել սովորեցրիք՝ ոչ մի տեղ չխնայելով ձեր բարոյական, քաղաքական ու նյութական օժանդակությունը։ Նրանց օգնեցիք՝ դառնան երկրի տերը, որպեսզի այդ երկրում օրը ցերեկով, աշխարհի անպատկառ աչքի առաջ կոտորեն մեր ազգը։

— Նրանք խաբեցին մեզ, սրբազան,— դողացող ձայնով փորձեց արդարանալ Արամը։— Նրանք նենգորեն մեզ խաբեցին՝ խոստանալով ամեն տեսակ բարեփոխություն մեր ազգի համար։

— Այո՛, նրանք այդպիսի խոստումներ տալիս էին ամեն քայլափոխին՝ միաժամանակ չմոռանալով իրենց համար ամենակարևոր պայմանը. որ մեր ազգն այդ բարեփոխությունները վայելելուց առաջ դառնա օսման, մոռանա իր ազգն ու հավատը։ Սա հո գաղտնի՞ք չէր։ Եվ այսօր նրանց պայմանագիրն էլ այդ է նշանակում։ Իսկ դուք ստորագրել եք այդպիսի պայմանագրի տակ և ազգը քշում եք նոր ստրկության։ Ա՞յս չէ բո հին կուսակցության ու նոր կառավարության գործը։ Եվ հետո էլ սպարապետի անունն ես տալիս։ Հասարակ մարդու ողորմելիությունը կարելի է բացատրել։ Նույնիսկ հոգևորականի ու ամեն

տեսակ պաշտոնյայի... Բայց զորավա՜ըը մորթապաշտ։ Էլ ինչո՞ւ զարմանալ, որ վարակն անցել է Ազգային խորհրդին։

Ասաց ու թողեց, մեծաքայլ հեռացավ։ Կարճ ոտքերի մեծ-մեծ քայլերով։ Եվ այդ պահին նա հսկայի էր նման։ Իսկ մեծամարմին Արամ Մանուկյանը կծկվել-փոքրացել էր։ Փոքրացել էր հսկայակերպ այն մարդը, որին առյուծ էին համարում իր դասակիցներն ու ճանաչողները։ Կուսակցական կաղապարի մեջ կո՞ւչ էր եկել հայ մարդը։

Սրբազանի գնալուց հետո Արամը փակվեց իր առանձնասենյակում և տրվեց դառը մտածումներին։ Ամենից առաջ նրան տանջում էին սրբազանի խոսքերն իր կուսակցության մասին։ «Այս ո՞ւր ենք հասել, որ հայրենիքի դատին ու ճակատագրին նվիրված գիտունը անարգված է համարում մեր գործն ու վարքագիծը,— ինքնաքննումի ցավերի մեջ տապակվում էր Արամը՝ իր կուսակցության հին գործիչը։— Մի՞թե ծերացել ենք որպես ապրող մարմին, և հնացել են մեր նպատակներն ու երազանքները։ Բայց ինչո՞ւ այսպես շուտ և այսպես անուղղելիորեն։ Գուցե ամբողջ մարմինը մեղք չունի, և նրա առանձին բջիջնե՞րն են մեղավոր...»։

Այստեղ նա հիշեց զավեշտական թե ողբերգական մի դեպք։ Թիֆլիսից Ալեքսանդրապոլ էր ժամանել նորաթուխ քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսովը և, ըստ երևույթին, կենտրոնական Ազգային խորհրդի հանձնարարությամբ, եկավ նաև Երևան՝ տեղի գործերին ծանոթանալու։ Արամը հասկանում էր, որ ասել են՝ գնա՛, տես Արարատյան երկրում ի՞նչ է անում այդ ինքնագլուխ դիկտատորը։ Խատիսովը միայն մեկ օր ներսուդուրս արեց թասոց-փասոցով ու խուլ տրտունջներով, և երբ Արամը փորձեց իմանալ այդ խուլ դժգոհության պատճառը, նա պարզասրտորեն բացատրեց.

— Տնաշե՞ն,— ասաց,— ո՞նց եք յոլա գնում այս անդրջրրհեղեղյան պայմաններում. կոյուղի չկա ո՛չ այստեղ, ո՛չ այն ջրի տարած Ալեքսանդրապոլում։

Լուրջ, ծանրությունեծ, մոայլադեմ Արամը հանկարծ բռնվեց քրքիջի վարակով, գլուխը ետ նետած, վեր-վեր անելով ծիծաղեց-ծիծաղեց և երբ դադարեց, աչքերից արտասուք էր հոսում։ Իսկական արտասուք։

— Է՞, ես լուրջ բան եմ ասում, դու էլ քեզ քրքիջի ես տալիս։

Հառաչեց Արամը և ձեռքերն իրար ագուցելով՝ դրեց ծունկների արանքում, մարմնով օրորվեց...

— Նոր եմ հիշում, իսկապե՞ս չկա,— առավել ծանր հառաչեց։— Իսկ նկատե՞լ ես, որ մարդիկ բան չեն ուտում, և այդ կոյուղու կարիքը համարյա չկա։ Մարդիկ անոթի են առավոտից իրիկուն։ Ոչ միայն գաղթականները, այլև տեղացի հասարակ, աշխատավոր մարդիկ... Եվ գալուս օրից նրանք են իմ ուշքն ու միտքը։ Կոյուղու բացակայությունը չեմ նկատել. ես ի՞նչ հիմարն եմ եղել...

* *
*

Երեկոյան ընդհանուր ժողովի էին հավաքվել Ազգային խորհուրդը, Հատուկ կոմիտեն ու Զինվորական հանձնաժողովը և գործող բանակի ներկայացուցիչներին պիտի տային իրենց պատասխանը՝ շարունակե՞լ հաղթական կռիվը, թե՞ ետ քաշվել հայ զինվորության արյամբ նվաճված դիրքերից, որպեսզի թուրքը նորից ոտքի տակ տա Արարատյան երկրի հողն ու պատիվը։

Այնտեղ ես կաղապարը խեղդել էր հայ մարդուն։

Սարդարապատի ռազմաճակատի հրամանատարը գլխաբաց աղերսում էր թույլ տալ, որ զորքն առաջ շարժվի։

— Թուրքերը դատարկում են Ալեքսանդրապոլը։ Նրանք չեն կարող դիմադրել։ Բարձր է հայ զինվորության ոգին։ Առանց մեծ դժվարություններ հաղթահարելու, մենք շուտով Կարս կհասնենք, և մերը կլինեն Արա՞քսը, Արարա՞տը...,— բացատրում էր Դանիելբեկ Փիրումյանը։

Սակայն ոչ ոք չէր ուզում լսել։ Նրա մարտական ձայնը չէր թափանցում կաղապարները, որպեսզի հասներ հայ մարդկանց։ Մանավանդ, որ այդ կաղապարները հիմա զրահավորված էին պահպանիչ թղթերով, որոնք եկել էին Թիֆլիսից, Բաթումից և Հայոց անհասցե սպարապետից։

— Հարգե՞նք մեր նորաստեղծ կառավարության հրահանգը,— դահլիճն էր գոռում։

Իսկ քաղաքային դումայի նախագահ Արմենակ Թոշյանը,

իբր, Սարդարապատի հերոսի նկատմամբ տածած անհուն հարգանքից ու հոգատարությունից, գտնում էր, որ խաղաղությունը ձեռնտու է նաև իրեն՝ Դանիելբեկ Փիրումյանին։

— Մենք մտահոգված ենք նաև ձեր երկու որդիների ճակատագրով, զորավար,— ասաց նա։— Բաթումի դաշնագիրն է, որ նրանց ձեր գիրկն է վերադարձնելու։

— Իսկապե՞ս, ձեր զավակնե՞րը,— Թոշյանին արձագանքեցին տարբեր շարքերից, և այն տպավորությունն ստացվեց, թե այդ րոպեին բոլորը մի հոգս ունեն միայն՝ զորավարի երկու զավակներին տեսնել իրենց հոր սիրասուն գրկում...

Եվ զորավարը, որ եկել էր, որպեսզի ճակատի կռվելու պատրաստակամությունը հաղորդի հայոց բախտի տերը դարձած այս դահլիճին, դառնացավ, դիվոտվեց այդ սուտ բարեպաշտության դեմ։

— Ես ցնցված եմ ձեր... ձեր այդ... հոգատարությունի՞ց,— ասաց խեղդվելով, ցավից ու սիրտը փոթոթող զայրույթից եռալով։— Խե՞ղճ մարդիկ,— ասաց,— խղճո՞ւկ արարածներ։ Դուք ազգը մատնում եք թուրքին ի կեր և ուզում եք հավատամ, թե մտածո՞ւմ եք իմ զավակների մասին։

Հետո նա արգահատանքով հայացքն անցկացրեց նստածների վրա, վերջին անգամ նույն հայացքով շանթահարեց գլուխն առջևի թղթերին խոնարհած Արամ Մանուկյանին և դուրս եկավ։ Չէր հիշում՝ ո՞ւր էր թողել Ճերմակին։ Փորձեց հիշել և իզուր հիշողությունը չարչարելով քաղաքից դուրս եկավ։

Հունիսյան պայծառ գիշեր էր։ Ճանապարհին հանդիպում էին մարդիկ, որոնք սայլերով ու գրաստներով բեռներ էին փոխադրում։ Ճամփեզրերի արտերում հնձվորներ կային, որ լուսնյակի լույսով հունձ էին անում։ Երևի վստահ չէին, թե պատերազմը հեռացել է, և հասած արտերն այլևս չեն տրորվի կռվողների ոտքերի տակ։

Մինչև հրամանատարական կետը երկար ճանապարհ կար, և որքան էլ քայլերն արագացներ, առավոտյան հազիվ էր տեղ հասնելու։ Մտածելու, ստեղծված վիճակը քննելու և անելիքը որոշելու ժամանակ շատ ուներ։ Հաճախ դուրս էր գալիս բանուկ ճանապարհից և քայլում էր արտամիջյան կածաններով, խիտ ու ցանցառ թփերի միջով։ Այդպիսի դեպքերում նրա համար կողմնացույց էր Արարատը, որ աստղալույսով ողողված՝ կանգ-

նել էր հորիզոնում և իր հպարտ հանգստությամբ տրամադրում էր լրջության, խոհեմ քայլերի։ Եվ նա աստիճանաբար մոռացավ, ավելի ճիշտ՝ անթափանցիկ մի քող քաշեց այն ամենի դեմ, որ թողել էր ետև, Երևանում, ազգային կոչվող, բայց ապազգային ու վատշվեր այն դահլիճում։ Նա հիմա պահպանիչ նշանաձողեր էր փնտրում ուրիշ տեղ, իր ապրած կյանքում, իր անցած ճամփաներին։ Սակայն դիմացը վեհորեն կանգնած Արարատը թույլ չէր տալիս հայացքն ու միտքը հեռացնելու իրենից։ Եվ նա հիշեց առաջին հանդիպումը, առաջին այն խոհն ու երազանքը, որ պարուրել էին իր մանկական հոգին։ Թեմականում առաջին տարին էր սովորում։ Օդը լիքն էր ազգային ցավերի ու տառապանքների մրմուռով, որի դեմ բարձրացել էր Բաֆֆու և Դամատ Քաթիպայի ազատատենչ ոգին.

«Արդյոք գալո՞ւ է մի օր, ժամանակ՝
Տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ,
Որ ամեն կողմից պանդուխտ հայազգիք
Դիմեն դեպ յուրյանց սիրուն հայրենիք»։

Կրակված արտասանում էր տեր Համազասպ վարժապետը։ Աշակերտները կլանում էին նրա բառերը, երազում էին և գիտեին, համոզված էին, որ իրե՛նք պիտի մոտեցնեին այդ օրը, այդ ժամանակը։

Տարինե՞ր են անցել, տասնամյակնե՞ր։ Բայց ի՞նչ է փոխվել։ Ո՞ւր է այն դրոշակը, որ պիտի ծածանվեր Մասիս-Արարատի գագաթին և աշխարհի մոլոր ճամփաներով տուն հրավիրեր իր տարաբախտ ու պանդուխտ զավակներին։

Առավոտը բացվում էր արդեն։ Հուրհրատում էին Արարատի գագաթները։

Նա հոգնած, մշուշոտ աչքերով նայեց առաջ, նայեց վեր, և Մեծ Արարատի գագաթը ճեղքված ու թեք հարթությամբ հանկարծ նրան երևաց իբրև մի վիթխարի նահատակ, որի վրա ոտից-գլուխ լայնածիր ու ոսկեհուռ ծածկոց են փռել։

Տրորեց աչքերը, նորից ու զգաստ նայեց։ «Աստվա՞ծ իմ, այս ի՞նչ եմ տեսնում։ Մի՞թե Արարատն էլ...»։ Եվ փղձկաց, ափերով ծածկեց անզսպելի արտասուքից այրվող երեսը։

Երբ ձեռքերը ետ տարավ, ուրիշ պատկեր էր արդեն. հզոր ու հպարտ, ազատ ու սիգապանծ կանգնել էր հայոց ծննդի, հազարամյա դժվար կենսագրության վկան, հայոց հարատևումի ապավենն ու խրախույսը։

— Օ՜, մեղա՜, լեռնացած մեր սրբություն,— բարձրաձայն, արդեն ոգեպինդ խոսեց զորավարը։— Դու կաս, և մենք պիտի ապրենք քեզ հետ։

Գրական-գեղարվեստական հրատարակություն
ԲԱԳՐԱՏ ԱՐՇԱԿԻ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ
ՍԱՐԴԱՐԱՊԱՏ
Վեպ

Баграт Аршакович Улубабян
САРДАРАПАТ
Роман
Издательство «Советакан грох»
(На армянском языке)
Ереван, 1988

Խմբ. վարիչ՝ Հ. Թ. Կարճիկյան
Խմբագիր՝ Մ. Ս. Թերզյան
Նկարիչ՝ Ֆր. Դ. Աֆրիկյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Վ. Ազատյան

Գիրքը լուսապատճենվել և համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «Գրքամոլ»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.